
BSB Bayerische StaatsBibliothek
MDZ Münchener DigitalisierungsZentrum Digitale Bibliothek

Matt'êos <Ark'episkopos>

Bari mard ew bari k'ristoneay

Kostandnowpôlis 1856
A.or. 7880 p
urn:nbn:de:bvb:12-bsb10251982-4



10251982

10251982

10251982

10251962

Bayerische Staatsbibliothek
<36646352570010

ԲԱՐԻ.ՄԱՐԴ

ԵՒ

ԲԱՐԻ ԿՐԻՍՏՈՆԵՈՒԹԻՒՆ

ԾՕՐԻՆԵԱՑ

ՏԷՐ ՄԱՏԹԷՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՆԱԽԿԻՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍՈՑ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Տ. Տ. ՆԵՐՍԻՍԻ ԱՅՏՈՒԱԾԱՐԵԱԼ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

ԵՒ Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ Ս. ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

Տ. ՅՈՎՀԱՆՆՈՒ ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ՀՐԱՄԱՆԱՒ

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍՈՑ

Տ. ՅԱԿՈԲԱՑ ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ
Ի ՏՊԱՐԱՆԻ Յ. ՄԻՒՀԷՆՏԻՍԵԱՆ
= 1856 =

10251962

A. or. 7550 f

Bayerische
Staatsbibliothek
München

24/02/14058

10251982

Վերատեսիչ Սրբոյն Եղբոյր.

Ընդհանուր գրասեր վաստակից Սրբոյ Հեռանդ ԲԱՐՒ ՄԱՐԴ ԵՒ ԲԱՐՒ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ առ ձայնեալ, այսօր ՚ի հանդէս ածեալ քըն նութեան Հոգեւորական ժողովոյս, հաճ ՃՕՅ և ընդունելի ամենեցուն մեզ Հրաւէր եցաւ, և արժանաւոր ՚ի տալ ոգեւ նայուցանել զայն ՚ի մշտնջենաւոր վաստա Հերինակութեան Հմտոյ։

Վ առաքոյ և վսեմագոյն աւանդիկ տալ Սրբոհոգեանդ Հմտութեամբ զվիպագիրս հա նութեան մերոյ ՚ի տարագրութենն յայն, ընդ նմին յայտնեմք զուարթ և զմե ծոյս Հոգեւոր ժողովականաց միաբերան օրհնութիւնն և գնահատականս յա զապս բարեյօժար ձեռնտուութեան ընդ նուաստիս և Բարեպաշտուհի նորոգու հի տիկնոջ ՚ի տէր հանգուցեալ Հրաժա նայիշատակ Մահտեսի Ղանիկ Ղևոնդայ, որ բարեհաճեալ է նպաստել ՚ի ծախս տպագրութեան մատենիս, առ ՚ի լոյս ընծ ծայել զարդասիս գրատուր եպիսկոպոսու թեան Հեռ. Սրբազնութեան։

10251962

Տէր յայտնեցէք ՚ի բարին, և առաջնորդութեան բարեբար Տիկնոջն առաքեցէք երջանիկ կեանս մինչ ցկատարման ժամանակի, և անվնասելի պահպանեցէք զպայծառութիւն հառնօրէն օրհնեալ տանս և զերդաստանի նորին, Ամէն։

Ողջ լինել ըզձանօք

Ծառայական Խոնարհութեամբ



1857 Օգոստոս 27։

Ի Պատրիարքարանի Հայոց։

10251982

ՆԵՄԵՏՈՒԹԻՒՆ.

Մարդկային բնութեան բնական բերմանց բաղձալին յաւէտ՝ է առանց զանուն բարի և համբաւել բարեաւք և բարեգոյժ ։

Ոչ ասի ոչ ոք՝ ի մարդկանէ հաճի զանուն ինչ չարաճճութեան և չարագործութեան բնիկ յանձին և վատահամբաւել՝ իակ եթէ ընդունեսցի ոք չար գործով իւիք ։ աւա՛ ո՞րչափ չանահնար լինի և գուն գործէ արդարանալ ձայիւով և ժխտելով զչարութիւն իւր յայտնական ։

Բայց երանի է այնմ՝ որ ոչ միայն առաքինի վարուք բարեգործեալ բարեյաւկան հանդիսացեալ զանձն իւր ։ այլ և կարողանայ շնորհեան առաւել ուրշել և ընտրել զանհատաւոտ և զանցաւոտ բարին ՝ի հատուցումն և ՝ի յաւիտենական բարւոյն ։ զանկեցուածն մերժել՝ և ՝ի յաւիտենականն սկզբանաբիլ ։ վնասաբուսիկն և զապականիկն արհամարհել՝ և ՝ի ճշմարիտն և յերկնականաբոյսն թեւակոխել ։ և այս իակ է ճանաչել և սիրել զԱստուած ինքնաբուխն բարութիւնն և մերժել արհամարհել զկենցաղայս զանցաւորն վայելչութիւն ։ և մի՛ բնաւ անմտանալ և կապիլ ՝ի սէր յոտնոտի մեծութիւն և անհատատաւ հարստութիւն իբրև անմիտն այն մեծատուն ։ որ առակի պարծանօք ասէր ։ “Անձն՝ ունիս բազում բարութիւնս հանդարեալ առանց բազմաց ։ հանգիր ։ կեր ։ սիրէ ։ և ուրախ լեր ։” Բայց յիմարութիւնն յանդիմանի առ գուարս հասանել մահուն յիշատակութեամբ ։ “Անո՛ւ միտ՝ յայսմ գիշերի զոգիդ ՝ի քէն ՝ի բաց պահանջեցեն ։ իակ զոր պատրաստուեցեր ։ ո՞ւմ լինիցի ։” Ղուկ ։ ԺԲ ։ 19—20 ։

Իակ նոքա կշիռն և անուանին սկզբանէ իմաստութիւնք ։ ոչ այնքան առաքինի մարդկան՝ որքան առաքինի Աստուծոյ ։ Ա։ կրն ։ Ա։ 25 ։ գ ։ 19 ։ Որք քրիստոնէական ուղղափառ հաւատոյ երկնաձիր և անսպառ լուսով ճանաչին զկերպացոյն և զյաւիտենական բարին զաստուած ։ և հատատուն յաւուրս անկեալսս լինին անեղբարոյ առ ՝ի ժառանգել և ՝ի վայելել զհանդիսեալ զերանեալս բարիս երկնից արքայութեան ։ և անկիղճ կատարեալ աստուածսիրութեամբ հեաեին առ ՝ի առանել և արդիւնաւորել զարարչապաշտական և զառաքինական գործս աստուածահաճոյս ։ ըստ այնմ ։ “Իմաստութեն արա զվես և քննեցից զօրէնս քո ։ և պահեցից զնա բազմով սրտիւ իմով ։” Սաղ ։ ճԺԸ ։ 34 ։ Անդ ։ 125 ։ “Եւ արդ ՝ի ձեզ ուրախ եմ ։ բայց կամիմ զձեզ իմաստունս լինել ՝ի բարին՝ և անմեղս ՝ի չարին ։” Հռոմ ։ ԺԶ ։ 19 ։ “Ո՞վ իցէ իմաստուն և հանճարեալ ՝ի ձեզ ։ ցուցցէ ՝ի բարուք գնացից իւրոց զգործս իւր ՝ի զուարթութեան իմաստութեանն ։” Յակ ։ գ ։ 13 ։ Ա։ կորն ։ Դ ։ 10 ։

ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. ՔԱՐԱՄԵԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ՀԱՄԱՐ ՀԱՅՐԱՊԵՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՅԵՂԵՑՈՒ

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԲՆԱԿԱՆ ԲԱՐՈՒԹԵԱՆ

ԳԼՈՒԽ Ա.

Ա՛ՐԴԻԿ *բնականապէս բարի ստեղծուած են Ա՛ստուծոյ, վասնորոյ իրենց բնութեանը մէջ ֆիզիքապէս բարութեան տրամադրութիւն ունին և ընդունակութիւն բարին խորհելու և գործելու և առաքինի ըլլալու։*

Որովհետև կը հաւատամք, որ Տէր Ա՛ստուած մեր՝ ամենաբարի արարիչ է երկնի և երկրի։ Սաղ. ճԺԵ. 1։ Մոպ. ԺԹ. 17։ Ղ–կ. ԺԸ. 19։ «Տէր իմ ասէր, ասիչ » պարզեւաց ինքնաբուն բարի, ամենից սիրող հա» ւասարապէս, միայն արարիչ ըզնաւս յոչէից »։ Նա՛ռէկ. ԳԼ. Գ։ Վասնորոյ ամենայն արարածք նորա են բարի, ըստ այնմ «Ամենայն արարածք Ա՛ստուծոյ բարի » են, և չիք ինչ խոտան »։ Ա. Տի՛մ. Դ. 4։ Իսկ մարդն է արարած Ա՛ստուծոյ, ապա ուրեմն մարդն է բարի, ըստ այնմ «Ո՛վ Ա՛ստուած հաստատեաց զմարդն յա» նեղծութիւն, և՝ ի պատկեր իւրոյ բարեերարութեան » արար զնա »։ Իմաստ. Բ. 23։

Ա՛յս ուղիղ դրութիւնով կ՛եղծանի ազանդաւորնե՛ր՝ որ չարաչար մոլութիւնը, որ կը բարբանջէին հա՛ կառակ աստուածային միութեան և բարեերար ստեղ

ծագործութեանն ասելով թէ՝ երկու են արարիչ ըստ
ուղղութեան, մինն է բարիներուն արարիչ, և միւսն
չարերուն։

Այս մոլորութիւն աղանդին հետեւողք եղան և իբ-
րեւ չարաբեսեաց հերձուածողք անուանեցան Մարկիոն
և Մանի. այս երկուքին աղանդապետութիւնը, և
ասկալի մոլորութիւնը Սուրբ Յօհան Ոսկեբերան՝
ըստ ամենայնի կը հերքէ և կը մերժէ. Նաև Ը. որ կը
բանդագուշէին ասելով թէ՝ որ բարի է, բարի ա-
րարչին է ստեղծուած, իսկ եթէ չար է, չար արարչին
է ստեղծուած։

Հետանոսական էր այս մոլորութիւնը, և կռա-
պաշտութեան խորհուրդը և անաստուածութեան
ցնորմունք, ինչպէս կը տեսնաս այն չարաբոյն կռա-
մը Ինդիներսահին կողմանէ մոգպետներուն գրած ա-
մենաթշուառ նամակին մէջ մոլորական մտօք հնա-
րուած կռապաշտական շաղակրատութիւնը, որ գրե-
ցին մեր Հայոց սուրբ Նախնիքներուն, որոց պա-
տասխան էր Յովհէի սուրբ Նախնյաց Ա. արարա-
տոս։ Ահա այս գրին մէջ երկու արարիչ կը դնեն ի-
րենց խօսքին ցնորին բարբանջելով, մէկուն անունը
կռոտան Արմիզդ, այս է կ'ըսեն բարիներուն արարիչը,
և միւսին անունը կռոտան Ահրմն, այս է կ'ըսեն չա-
րերուն արարիչը։ "Որոնցմէ բարիք՝ որ յերկինից և
"այսր լինին՝ Արմիզդի են, և ամենայն վնասք՝ որ անդ-
"ի և այսր գործին՝ զայն Ահրմն արար։ Այնպէս
"յերկինս որ ինչ բարիք է՝ զայն Արմիզդն արար, և
"ոչն է բարի՝ զայն Ահրմն արար "։ Եղիշ. 42։

Վասն որոյ մեր սուրբ Հայրապետները, որք
ժողովուած էին քրիստոնէական ճշմարտութիւնը հաս-
տատուն պահելու, և Հայաստանեայց սուրբ Եկե-
ղեցին պաշտպանելու համար իբրեւ ախոյեան քաջա-
մարտիկ ընդդէմ կռապաշտութեան Պարսից

անապատին գրահին, անոնց դիւաշունչ գրութեանցը
պատասխանի գրելու արիացան, քանզի սուրբ հոգ-
ւոյն Աստուծոյ զօրութեամբը և ազդու շնորհալի խօս-
քերով ամէն մէկ մնըրտիւ զրաբանութիւնը մերժե-
ցին, և մանաւանդ հերքեցին անոնց կռամոլ շաղա-
կրատութեամբ բոլոր արարիչ անուանած Աստիղը,
և երեց արարիչ կարծած Արհին՝ օրինակաւ ևս պը-
րելով այսպէս։ "Տի՛ ծն անդր Թողէք պիմարութեան
" բարբանջմունդ։ Մինչ աշխարհի երկու դեհապետք
" ոչ լինին, և ոչ միոյ արարածոյ երկու աստուածք.
" եթէ ժպրհեացին և լինիցին երկու Թագաւորք միոյ
" աշխարհի, աշխարհն եղծանի և Թագաւորու-
" թիւնքն խանդարին։ . . . . Եւ արդար դատաւո-
" րօք վրէժ առնուն մահու չափ, իբր ոչ եթէ բա-
" րի Աստուծոյ դատաւորք նոցն բարեգործ, և չարին
" չարագործ. պի բազում՝ անգամ է՝ պի՛ ի բարի մարդ-
" կանէ չարք լինին. և յեռոյ՛ ի չարագունից անան՝
" կատարեալգոյն բարիք"։ Եղիշէ. էրէ". 55—62։

Արդ՝ Թողունք ըստ ամենայնի եղծուած հեթանո-
սական խաւարամոլար շաւղաց քննութիւնը, և մեր
քրիստոնէական ճշմարիտ հաւատոյ լուսով սեանդիք
մարդոյն բնականապէս բարի ըլլալը. Թող բարբանջեն
Անդիքեցիք, եթէ մարդիկնեուէն ոմանք բնութեամբ
բարի են, և ոմանք բնութեամբ չար։ Աստիսկ մըտ-
րութիւնները կ'եղծէ մեր Տէրնիկ Կողբացի սուրբ Ա-
պիսկոպոսն Ադրեասնդոյ, իբր պրանչելի վարդապե-
տութեանցը մէջ գրելով։ "Ի բարերար արարչէն չար
" ինչ չիք եղեալ. և չիք ինչ չար, որ բնութեամբ չար
" իցէ, և ոչ է արարիչ չարաց իրաց, այլ բարեաց"։
Եւ անդանօր կը գրէ. "Արդ՝ բնութիւն բարեաց
" ցանկացող է, և ոչ չարեաց"։ Եղիկ. 10—61։

Տեսաբէն այն մեր առաջին մեծ և գլխաւոր մտան
հաւատոյ, որ հաստատուն հիմն է ուղղափառ խոս-

ոսվանուԹեան մերոյ, կարի լիմն կը յանդիմանէ և կ՚ա-
նարգէ կռապաշտներուն զանազան մոլորուԹիւնը,
ոյք ոեւսակ ոեւսակ բազում ասուածներ կը հնարէին
և կը պաշտէին. այլ և կը հեգնէ կը մերժէ մոլորամիտ
Աանկերեցիներուն չարագոյն ազանդը, որք երկու աս-
ուած կ՚ընդունէին. մին արարիչ բարիներուն, և
միւսն արարիչ չարերուն: Ասոնց համար հաւատոյ
հանդանակին սկիզբը՝ սահմանեցին հոգեգումար երեք
հարիւր տասն և ուԹ սրբազան Հայրապետաց Նիկիոյ
տիեզերական ասրբ ժողովին մէջ այս խոստովանու-
Թիւնը: “ Հաւատամք ի մի աստուած ի հայրն ամե-
»նակալ յարարիչն երկնի և երկրի երեւելեաց և ա-
»ներեւութից »:

Տեսնը ուղղափառ խոստովանուԹիւնը աստու-
ծային անճառելի միուԹեանը վրայով, որ և նոյն աս-
ուածային էուԹիւնն է միայն արարիչ ամեն էակնե-
րուն, ինչպէս սրբ գիրքն ալ կը վկայէ: “ Լսեր իսրա-
»յէլ Հաւատաց մեր տէր մի է »: Բ. Օրին. Զ. 4:
“ Տէր աբրահամ Հաստաց իսրայէլի որ նախ ի
»քրովբէս, դու ես միայն ամենայն թագաւորուԹիւն
»ունելոց, դու արարեր զերկինն և զերկիր »: Եսայ.
ԼԷ. 16: “ Այս են յաւիտենական կեանք. զի ծանիցեն
»զքեզ միայն ճշմարիտ աստուած և զոր առաքեցեր
»զՅիսուս Քրիստոս »: Յօհ. ԺԷ. 3: “ Այլ մի է աս-
»տուած հայր, յորմէ ամենայն, և մեք ի նա, և մի
»տէր Յիսուս Քրիստոս, որով ամենայն և մեք նո-
»վաւ »: Ա. Կորն. Ը. 16: “ Մի է բնուԹիւն աստու-
»ծուԹեանն և անփոփոխ իշխուԹեանն, մի արարչու-
»Թիւն է, և մի բարերարուԹիւն. մի տէրուԹիւն և
»մի զօրուԹիւն »: Յաճախ. ՃՈՈ. Ր:

Թէպէտ աստուածային անձինք կը զանազանին ա-
նուններով, որ կը խոստովանինք Հայր, Որդի, և Հոգի
սուրբ, բայց աստուածային երեք անձինք մի են, “ Ո-

» րեք են որ վկայեն յերկինս՝ Հայր, Բան և Հոգին
սուրբ և երեքին մի են »: Ա. Յով. ե. 7: “Երեք
» անձինք . . . մի իշխութիւն, մի էութիւն, մի Աստ-
» ուածութիւն: Գր. Լուս. յԱգաթ: “Խոստովանիմք
» հաւատով և անեղ զաներևոյթսըբ վերստին
» յերիս անճնաւորութիւնս բաժանեալ, և ի մի բնու-
» թիւն և ի մի Աստուածութիւն միաւորեալ »: Ներ.
Շնորհ. ի Թղ. ա՜ Մանուէլ կայսրն: “Անհաւորութիւնն
» երկրպագեալ, և երևոյթսըսրութեամբն
» թիւնն ի միաւորութիւնն գլխաւորեալ »: Գր. Ասք-
ոածաբ. Յաղագս հաւատոյ. ճա՜ Բ. յԱ՜որս:

Ահա այս անժխտելի վկայութեամբ և ճշմարտու-
թեամբ եղծուեցաւ մերժեցաւ թէ կատարելութեան
բազմաստուածութիւնը և թէ Անանիքեցւոց մոլորու-
թիւնը. զի ամենայն արարածք ի միոյ ամենակարող
և ամենաբարի Աստուծէն գոյացեալ և ստեղծեալ են,
և ամէնքը բարի են բնութեամբ: Նայց չարը ոչ այլ
ինչ է, եթէ ոչ միայն պակասութիւն բարւոյն: Աւա-
ոիկ երբեմն մարդս երեն անձնիշխանն կամքը կը դատա-
րի և կամ կը պակասի բարի գործելէն և կը հակի կը
պակասի չարագործութեան, այն ժամանակը կ'ըլլայ
բնութեամբ բարի մարդը՝ չար գործով մեղաւոր և չար
մարդ: “Ապա ի պտղոց նոցա ծանիջիք զնոսա: » Մաթ.
է. 20:

Տես արքային Պօղոս առաքեալը իր անձին վրայ
խօսելով յայտնի կ'ընէ մարդոյս բնութեամբ բարի ըլ-
լալը, որովհետեւ կ'ըսէ, այն չար գործը՝ որ մեղք
կ'ըսուի, ես որ կը գործեմ, ոչ գիտեմ, բնական բա-
րութեանս հակառակ ըլլալով չեմ գիտեր չեմ ճանա-
չեր, վասն զի բնականապէս բնութեանս մէջը մի կայ
չարը սիրել և բարին ատել, անանկ է նէ չէ թէ բա-
րին, որ կը կամիմ՝ զանի կը գործեմ, այլ չարը՝ որ կ'ա-
տեմ նէ, զայն կը գործեմ, իմին բնականիս յարմար է

բարին խորհիլ և գործել, դիւրաւ պիտի յաժարիմ բարին գործելու։ Այնպէս է նէ մարմնաւոր բաղձանքներուս խաբեութեամբ՝ և կամք տալով չար գործերու կը հետեւիմ. իսկ բարութեան էհետեւիլս բնութեանս հակառակ է, որովհետեւ բարի ստեղծուած եմ, Աստուծոյ բարերարութեանը հարկ է ինձ յանկալ։ "Օ՛ի զոր գործեմն ոչ գիտեմ. ոչ եթէ զոր կամիմն զայն առնեմ. այլ զոր ատեամն զայն գործեմ... "Ա՛յլ արդ ոչ եթէ ես գործեմ զայն՝ այլ բնակեալ "յիս մեղքն, գիտեմ զի ոչ բնակեալ է յիս, այսինքն "՛ի մարմնի իմում, բարի լինել, զի կամքն առաջի կան "ինձ. և առնել զբարին ոչ։ Օ՛ի ոչ եթէ՝ զոր կամիմ "զբարին՝ առնեմ, այլ զոր ոչն կամիմ զչարն, զայն գործեմ"։ Հռով. է. 15—19։

Այսպէն այս խօսքերով և անժխտելի վկայութեամբ ներով յայտնի կ՛ելլայ, որ ամենակարող արարիչն Աստուած անձնիշխանական ազատութիւնը մարդկան ժխտ պարգեւ տուած է, անխնայելի անմահ և բանական հոգիով զարդարելով, որ և այս անձնիշխանական ազատ կամաց տէր ըլլալնիս յայտնի ապացոյց մըն է մեզի, որ մեր բանական անմահ հոգին պատկեր Աստուծոյ է. ըստ այնմ։ "Եւ արար Աստուած զմարդն "՛ի պատկեր իւր"։ ծն. ա. 27։ Այսու համար սուրբն Ղևոնեսիոս Արիսպագացին ալ կը վկայէ. "Ի բաց բարձ "՛ի մէնջ զանձնիշխանականն և ոչ պատկեր ելոյսք "(Աստուծոյ)"։ Յաղագս Ապուածային Անուանդրութեան։

Մարդուկ ամենայն ղէտութեամբ ինքզինքնին կատարելու համար այս անձնիշխանական ազատ կամքը երեք իրենք իրենց զեկավար պիտի ըլլան, մանաւանդ մտաւոր խոհականութեամբ բարւոյն ու չարին, լաւին ու վատթարին ընտրութիւն պիտի ունենան, բարին և օգտակարը սիրելով և ընդունելով, իսկ չարը և վնասակարը ատելով և մերժելով։ Այս

ատոր համար է որ սուրբ գիրքը բարւոյն ու չարին, ճշմարտութեան և սուտ թեան, օգտակարին և վնասակարին ընտրութիւնը մարդոյ անձնիշխան կամացը կը յանձնէ, ինչպէս գրուած է: "Ահնիմ ձեզ վկայ "այսօր զերկինս և զերկիր. զկեանս և զմահ եւտու աւաջի երեսաց ձերոց: զօրհնութիւնս և զանէծս, և "ընտրեա զկեանս, զի կեցցես դու և զաւակ քո": Բ. Օրի. Լ. 19:

Յետու որպէն Նաւեայ իւր իսրայէլացի ժողովուրդներէն այս ազատ անձնիշխանութեան կամաց ընտրութիւնը կը պահանջէր ըսելով": Ընտրեցէք այսօր թէ "ով պաշտիցէք, զաստուածս հարցն ձերոց՝ որք յայն "կոյս գետոյն էին, թէ զաստուածս Ամորհացւոցն, "յորոց դուք բնակեալ էք յերկրի նոցա, այլ ես և "տուն իմ պաշտեմք զտէր՝ զի սուրբ է": Յեսու. Իդ. 15: "Ես Աստուած՝ ի բնէ հաս "տատեաց զմարդն. և եթող գնա՝ ի ձեռն խոհման "իւրոյ . . . հակառակեաց քեզ զջուր և զհուր, առ որ "կամիս մեռա՝ զձեռն քո: Առաջի մարդոյ կեանք և "մահ, բարի և չար. որ հաճոյացի նմա, տացի նմա": Ժէ. 14—17—18:

Տես բարեմիտ ընթերցող, Յիսուս փրկիչն մեր անանկները երեն փրկարար շնորհքներուն հաղորդ կ'ընէր, որոնք որ իրենց հոգեւոր բարեմասնութիւնը և երկնից արքայութեան լուսաշաւիղ ճանապարհը իրենց անձնիշխան կամքովնին ընտրեցին, ատոր համար կը հրամայէր. "Եթէ ոք կամի զկնի իմ գալ, ուրացցի "զանձն և առցէ զխաչ իւր և եկեսցէ զկնի իմ": Մտթ. ԺԶ. 24:

Անանկ ալ այն պատանին՝ որ կը խնդրէր երկնից արքայութեան յաւիտենական կեանքը ժառանգել և կատարեալ սուրբ ըլլալու՝ կ'ըսէր Յիսուս: "Վար "դասիս բարի՝ զի՞նչ գործեցից, զի ընդունիցիմ զկ

» կեանս յաւիտենական » : Եւ թէ " ով որ իւր անձն պա-
» կասեցեմ » : Յիսուս ալ երեն ազատ կամքին յանձ-
նեց ըսելով : " Ոչ թէ կամիս կատարեալ լինիլ, երթ վա-
» ճառեա զինչս քո և տուր աղքատաց, և ունիցիս
» գանձս յերկինս » : Մատ. ԺԹ. 16—20—21 :

Նայե մեր զգայարանքները փարիսեցիները և կեղծաւորները, որ երեն մօտ եկած փրկութեան ընարհք աստուածային փառաց լոյս Յիսուս Քրիստոսը անձնիշխան կամօք չէին ընտրեր և չընդունեցին . ինչու որ երենց հոգեկորոյս կամակորութեան և չարաչար մոլորութեան մէջ յամառեալ անզգօն մնացած էին ու կը մնային . վասնորոյ Յիսուս Քրիստոսէն յանդիմանեցան : " Կեղծաւորք , զերեսս երկնի և երկրի գիտէք
» փորձել . իսկ զժամանակս զայս զինչո՞ւ ոչ փորձէք .
» ընդէր և յանձանց իսկ ոչ ընտրէք զարժանն » : Ղ—կ . ԺԲ . 56 : " Եւ դուք ոչ կամիք գալ առ իս . զի կեանն
» յաւիտենական ունիցիք . . . Եւ եկի յանուն Հօր
» իմոյ և ոչ ընդունիք զիս » : Յօհ . Ե . 41—43 :

Ասկէց յայտնի կ'ըլլայ որ Աստուծոյ արտաքին և ներքին նախախնամութեան ընարհքները անշուշտ մեզ մէ կը պահանջէ մեր անձնիշխան ազատ կամքը երեն մարդասիրական կամացը հետևիլ . անոր երանաւէտ բարութիւնները ճանաչել և սրտի մօք մեր Հոգւոյ փրկութիւնը և երկնից արքայութեան ժառանգութիւնը լանդրել . չմոլորելով ուղղափառ Հաւատոյ ճըշմարտութենէն , և չծուլանալով առաքինական բարեգործութիւններէն :

Այս տեղս յիշենք աստուածաբաններուն այն ասացը , " որ յոչ գոյից արար զքեզ առանց քո , ոչ
» փրկեսցէ արդ , և ոչ օգնեսցէ քեզ առանց քո » :
Այս ճշմարտութիւնը Արքային Պօղոս առաքեալը երեն վրայով յայտնի կ'ընէ , որ Աստուած երեն նախաժաման ընտրելը ի քարոզութեան աւետարանին և

Ի պաշտօն առաքելութեան կոչելու համեր է, և ինքն ալ իրեն անձնիշխան կամօքը այն ձրիական ընտրեքին հրաժարելով անպարծ և ընդունայն չէ համեր Աստուծոյ ձրիական ընտրեքը, այլ վաստակելով աշխատելով և ճշդելով այն աստուածային ընտրեացը համեմատ՝ Աստուծոյ համելի գործ և արդիւնք ունեցեր է. “Ընտրօք Աստուծոյ եմ, զինչ և լցեմ, և ընտրեք նորա որ չիս ընդունայն ինչ ոչ եղեն»: Ա. կրն. ԺԵ. 10: Աստուծոյ արուաքին և ներքին ընտրեքներուն վրայով բաս կարի առեղեկութիւն տուած եմք ամենուն բաժանմունքովը: “Խորհրդածութիւն ընտրեաց» անուանեալ գրքուկնուս մէջ, աւր, կարդայ:

Ուրեմն Աստուծոյ ձրիական և գործադիր ընտրեքները մեզի կը պարտաւորեն մեր ազատ կամքը հնազանդիլ առաքինական գործով և հետեւիլ մեր փրկութեանը և յաւիտենական երկնային փառաց ժառանգութեանը. ինչպէս հետեւեալ վկայութիւններնիս կը հաստատեն: “Պատրաստ արարէք զճանապարհս տեառն, և ուղիղ արարէք զշաւիղս նորա: Մաթ. գ. 1: “Արդէն ալ ծառաւի կայ, եկեալ առ իս և արբցէ. որ հաւատայ յիս՝ որպէս ասեն գիրք, գետք յորովայնէ նորա բղխեսցեն ջուց կենդանութեան. զայս ասէր վասն Հոգւոյն զոր ընդունելոց էին, որ հաւատային ի նա»: Յով. է. 37: Ահա այս գրոց համեմատ քաջալերեց մեզի բազմերախտ Հայրապետնիս աւրը Վրիպարտ Աստուածային մեր այսպէս: “Ով ի անձնիշխան կամս ատացան ի տեառնէ երկնաւոր զօրութիւնքն և երկրաւորքս որդիք մարդկան, զի հաղորդ լեցին բարեբար կամաց արարչին, խորհիլ միշտ զբարին, և առնել ի կամարար մտաց բուռ բարի կամացն Աստուծոյ, զի հեծցին զօգտակարն անձանց»:

Այս վկայութիւններէն յայտնի կ’ըլլայ, որ մարդս իւրեն անձնիշխան կամքը Աստուծոյ բարեբար կամացը

հետեւելով առաքինական գործք եւ արդիւնք ուն նենալով, ոչ միայն այս աշխարհի մէջ Աստուծոյ հաճելի կեանք ունեցած կ՚ըլլայ, այլ յարկաւ Աստուծոյ ար դարութենէն երկնից արքայութեան մէջ յաւիտենա կան երանաւէտ վարձուց եւ աստուածային փառաց հաստատուն պիտի ընդունի։ Նայց այս երջանիկ ընտ րութեանը եւ բարեմասնութեանը հակառակ՝ երբոր մարդս անձնիշխան կամքը մոլորեալ ու մոլի ըլլայ, կամակորութեամբ հակառակելով աստուածային բա րեպար կամացը, եւ չարախառնուկ կիրքերով մոլու թեան ու անկրաւութեան գործքերու մէջ շաղախեալ եւ անզեղջ մնայ, յարկաւ աստուածային շնորհքներէն զրկուելով՝ աստուածային արդարութենէն յաւիտե նական պատիժով պիտի դատապարտուի. ասոր հա մար գրուած է։ "Իսկ որովհետեւ զայս աւետիս ու "նիմք սկրեալք՝ սրբեացուք զանձինս մեր յամենայն "պղծութենէ մարմնոյ եւ հոգւոյ, կատարեացուք զս "սրբութիւն ահիւն Աստուծոյ"։ Բ. Կոր. է. 1։ "Որ ամբարշտեալցն է ամբարշտեացի եւ որ պղտեղանա "լցն է պղտեղացի, եւ որ արդարանալոցն է արդա "րացի, եւ որ սրբեալցն է սրբեացի։ Ահա գամ վաղ "վաղակի՝ եւ վարձք իմ ընդ իս, հատուցանել իւրա "քանչիւր ըստ գործս իւրեանց"։ Յայտ. ԻԲ. 11—12։

Նպաքէն ջրհոսի առաւել ողբալի եւ ողորմելի վիճակ կի եւ հոգեւոր թշուառութեան մէջ ինկած կ՚ըլլայ մարդս, երբոր չարաւետ եւ աստղատուկ մոլորութեան ու մոլութեան գաղափարներէ յափշտակուած ըլլալ՝ իրեն Հոգւոյն գլխաւոր զօրութիւնը եւ մտաց կա րողութիւնը կը խանգարէ, ա՛լ այնուհետեւ ճշմա րիտ եւ բարի ընտրութիւն ընելու անզօր ու անկարող կը մնայ, եւ հետեւաբար կամքն ալ անձնիշխանու թեամբը սանձարձակ մոլորելու, եւ կամակար հոգեկա նայս պրպտիչներու մէջ խնդալու, եւ անխիղճ մոլորու

թիւններու և չարագործութիւններու հետեւելու կը հակաճիտի։ Ընդհակառակն ասոնց ապարդիւն բնական կատարելութիւնը և հոգւոյն սիրական փառքը ու պատիւը կը կորնչցունէ, և առանց ուղիղ կանոնի բանականութեան և սահմանի միտքով՝ անբան կենդանիներուն պէս ակռի միշտ իրեն զպայտան բաղձանքը հետեւիլ և անոնցմով բերկրիլ, ժամանակաւորին անցաւորին և մարմնաւորին խաբուիլ, յաւիտենական մշանջենաւորը և հոգեւորը կորնչցունել։ Ընդունելուն համար է որ կ'ըսէ Դաւիթ մարգարէն։ "Մարդ՝ ի պատուի էր՝ և ոչ իմացաւ, հաւասարեցաւ անասնոց անբանից և նմանեցաւ նոցա։" Սաղ. խԸ. 11։

Որբ միաց մարդոյս մտաց ղեկանութեան զօրութիւնը, որբ միաց բարւոյն և չարին աւտուածապարգեւ ընտրութիւնը, հաւասարեցաւ անմիտ և անբան անասնոց։ Ասոր համար աւրը Դերեսս ջնջհալին կը գրէ։ "Ոգիք բնբռնեալք ի չարէն, ի մտաց և ան-կանին։" Մէկ. Մոփ. գ. 2։

Դիտեմ ինչ փիլիսոփայն ասանկ բանականութեան ուղիղ կանոնը կորնչցունող կամակոր մտածմունքները անբան կենդանեաց կարգը կը դասէր։ Ասանոր մէկ օր մը ցերեկ ժամանակ մարդկան բազմութեան մէջ ձեռքը վառած լապտեր մը առած՝ ասդին անդին կը ջոջէր, երբոր հարցուցին իրեն Թէ ինչ կը փնտռես, որ այս ցերեկ ժամանակ լապտերով կը ջոջես, պատասխանեց, կը խնդրեմ՝ մարդ բանական. ըսին՝ մարդկան այսքան բազմութիւնը չես տեսներ, ան Թէ ասանք մարդ չէն. պատասխանեց, այո՛ մարդ են՝ և մարդոյ կերպարանք ունին, բայց մտօք և գործով անբան անասուններուն նմանութիւնը ունին։

Ընդհատել երեք սկզբունք կը դնէ մարդկային գործոցութեան, որք են պատուիրան, իմացականութիւն և կամք. և ասոնցմէ յառաջ կուգայ մարդկային

գործողութիւնը : Այլ իմացականութեանը նոր ի նորոյ գաղափար տուողը զգայութիւն է . ինչ որ իմացականութիւննիս կ'իմանայ՝ զգայութիւններէն կ'ընդունի և արտաքին գաղափարները կ'առնէ , և իմացականութիւննիս շատ անգամ զգայական բաղձանաց և հաճութեանը կը խաբուի՝ և թելադիր կ'ըլլայ կամքին . և կամքն ալ ազատութեամբը կ'ակի գործելու զգայական բաղձանաց ախորժելի երեւցածը :

Այսանկ չեղա՞ Նախահարց մերոց Ադամայ և Եւային մեղանչելը , վասն զի սատանայն նախ զգայական բաղձանացը հաճելի ցուցուց այն արգելեալ պտուղը . ապա հաւանեցոյց զգայական բաղձանքը իմացականութեանը՝ մերձենալու այն ծառին և ուտելու անոր պըտուղէն . ապա և ազատ կամքը թելադրեցաւ իսկ գարուած չիմացուած իմացականութենէն , ուստի մայրն մեր մերձեցաւ այն ծառին և առաւ պտուղէն ու կերաւ , նոյնպէս և նախահայրն մեր Ադամ. վասն որոյ կը գրէ տուրբ գիրքը : " Եւ եռես կինն , զի բարի " էր ծառն ՚ի կերակուր , և հաճոյ աչաց հայելոյ , և " գեղեցիկ ՚ի տեսանել , և էառ ՚ի պտղոյ նորա և ե" կեր , և ետ առն իւրում ընդ իւր , և կերին " : Ծ.ՇՇ. Գ. 6 :

Այս զգայութեան միջոցաւ խաբեց խանգարեց չիմացեալ սատանայն նախահօր մեր և նախամօր իմացականութիւնը , և չիմացուած իմացականութիւնովը բռնադատեալ թելադրեց անոնց ազատ կամքը՝ ուտելու Աստուծոյ արգելած պտուղը . և ասով եղան Աստուծոյ անժխտելի պատուիրանացը անհնազանդ և պարտաւոր աստուածային դատապարտութեանը . կրնայն մարդկային արդարութեան պատիւը և անկան պատուիրանազանցութեան և անհնազանդութեան մեղայ ակ : Իմացականութեան բնական լոյսը աղօտեցին զգայական բաղձանաց հետևելով , և ասով անբան

կենդանիներուն նմանեցան, որք միայն զգայութեան կը ծառայեն և չունին իմացականութեան զաւռւմն և ընտրութիւն բարւոյն և չարին։

Ասյս ապացոյցներով յայանի եղաւ, որ մարդս եթէ իրեն զգայութեանցը առջեւը բարի առարկաներ ուներայ՝ բարի գաղափարներ կուտայ իրեն մտաց իմացականութեանը, և իմացականութիւնը անոցմէ սաւոր և ուղիղ դատումներ ընելով՝ բարի թելադրութիւն կուտայ իրեն ազատ կամացը՝ հետեւիլ նոյն բարի առարկաներուն։

Որ օրինակ սուրբ գրքին մէջ կը կարդանք, որ Նաբուզոդոնոսոր ամբարշտ հզօր զօրութեամբ բռնացեր էր Իսրայէլացւոց աղքին վրայ և խրոխտ գոռոզութիւնովը իրեն մեծամեծ թագաւորական փառքերուն վրայ նայելով՝ շատ մը կը հպարտանար. մինչեւ անգամ ուզեց որ իրեն պատկերը աստուածացուն. և Բաբիլոնի Դէերայ բուռած ընդարձակ դաշտին մէջ ամէն ազգաց և ազանց պաշտել տայ իրեն հպատակ եղողներուն երկրպագութիւն ընել տալով իրեն ոսկիէ շինած պատկերին, և ով որ չի պաշտէ այն իրեն նորահնար կռամոլութիւնը և երկրպագութիւն չընէ այն ոսկեղէն պատկերին, պատրաստուած մեծ հնոց մը կար. որ սաստիկ բորբոքուած վառուած էր, որուն մէջ ձգելու և խոպան այրելու և մոխիր դարձնելու ուժգին հրաման հանած էր, և մարնեաւիկները կը քարոզէին, որ երբ հրաւիրանաց երգերը լսէք՝ արնգի՝ Թմբկի՝ քնարի և տաւղի մէկ բերան հնչուելը լսեն՝ ամեն ազգ ու ազինք իրեն հպատակները մէկէն ի մէկ գան իրեն այս ոսկիէ շինուած պատկերը պաշտեն երկրպագութիւն ընելով. ինչպէս գրուած է Դանիէլի մարգարէութեան մէջ։ "Ու քարոզ կար» "դայր զօրութեամբ՝ և ասէր. ձեզ ասի ազգք՝ և ա» "զինք և լեզուք։ Յորժամ լսիցէք զձայն փողոյ՝ արնգի

» Թմբկի և քնարի՝ տաւղն և երգոց միաբանութեան
» և ամենայն ազգաց արուեստականաց, անկանիլք և
» երկիրպագանիլք պատկերին՝ զոր կանգնեաց Նաբու-
» գոդոնոսոր արքայ։ Այլ որ ոչ անկեալ երկիրպագա-
» նիցէ՝ ի նմին ժամու ընկեսցի ի հնոց հրոյն բոր-
» բոքեալ։

Այն տեղ գտնուեցան երեք անձինք աստուածա-պաշտք Մեդրաք, Միսաք և Աբեդնագով. որ բռնելով սրտիւ և իրենց անձին և զօրութենէն առաւել քան փառաց աստուածատուր էին և հնազանդ ըստ ամենայնի աստուածային հին օրինաց և պաշտպանող։ Այնք երբոր յանձնառու չեղան բնաւ այն Նաբուգոդոնոսորայ ոսկեղէն պատկերին երկրպագութի՛ն ընելու և պաշտելու, սկսան կռանիլ Քաղդէացիները մատնելու Իսրայելիները Նաբուգոդոնոսորին անագորոյն բռնութեանը, չարախօսելով որ՝ այս երեք անձինքը չեն հնազանդիր հրամանիդ մէ՛ արքայ, և այս ոսկեղէն պատկերիդ ոչ երկրպագութիւն կ՚ընեն և ոչ ալ կը պաշտեն։ Այն ալ առջեւը կանչեց զանոնք ու հարցուց. ստոյգ իրա՞ւ է գուք Մեդրաք, Միսաք և Աբեդնագով, իմ ոսկեղէն պատկերիս չէ՞ք երկրպագաներ և չէ՞ք պաշտեր. պիտի որ երբ չէք հնազանդիր իմ հրամանիս և չէք պաշտեր երկրպագանելով պատկերիս՝ պիտի իյնաք հնոցին բորբոքուած կրակին մէջ, և ձեր Աստուածը մի՛ է որ կարող պիտի ըլլայ զձեզ իմ ձեռքէս ազատելու։

Հիմա քննե՛ իմացիր կռանիլ Նաբուգոդոնոսորին այս ամենավատթար չարութիւնը, տես թէ քրքան չարաչար գոյն է մտացը խորհուրդը, ամենաչար է գործը, և ան չարագոյն է իւր բարբանջմանց խօսքերը. վասն զի խորհեցաւ նոր ոսկեղէն կուռք մը շինելով նոր տեսակ կռապաշտութիւն մը հնարել, ահա չարագոյն խորհուրդ չարախոսական մտաց, կանգնեց Նաբխոնի

Վահէրայ կոչուած մեծ դաշտին մէջ այն տակաւին պատ-
հեցաւ, որուն երկրպագութիւն ընել տուաւ, ու զանկ
պաշտել բոլոր աւետուն հրամայեց. և ով որ իրեն
հնազանդ չըլլայ՝ հնոցին բորբոքեալ կրակին մէջ ձգե-
լու բռնաւթիւն բանեցուց։ Ինչ չարագործ կռամո-
լութիւն և բարբարոսութիւն. և ոչ միայն այսչա-
փազին խորհուրդներով և աննկարագրելի գործերով
բաւականացաւ, այլ և առաւել ևս աննկարագրելին
դիւաշունչ խօսքեր խօսեցաւ, ուրանալով աստուա-
ծային ամենահնար և ամենաբաւական կարողութիւնը՝
ըսելով այն երեք աստուածապաշտ մանկանց։ «Վե՛հ
»Աստուած որ փրկեսցէ զձեզ՝ ի ձեռաց իմոց»։ գ. 15։

Ո՞նչ ըսենք այս չարաչար մոլորութեանց խորխոր-
ման մէջ չարաչար գահավիժեալ անձը. այլ ևս զգօնու-
թեան նոր ոգիով մը պիտի պզտաւանայ իրեն խորա-
գոյն ոգեկոյտյս Թմրութենէն. արդեօք այս չար՝ նա-
բուգոնոսորին վրայ պիտի առնուի բարի ըլլալու-
նշոյլ մը, այս մոլորեալը կռապաշտութեան մէջ՝ վե-
րսին պիտի առնայ յանկարծ աստուածապաշտու-
թեան զգացմունք։

Այ՛, կարելի և հնարաւոր եղաւ արժանահայց
ազօթիւք այն երեք մանկունքներուն, վասն զի երբոր
առնք ձգուեցան այն սաստիկ բորբոքուած հնոցին
մէջը, իրենց հաւատքը և յոյսը հաստատուն ունենա-
լով Աստուծոյ ամենակարողութեանը վրայ, այն եօթն
պատիկ զայրացեալ և բորբոքեալ հնոցին սաստիկ բո-
ցերուն այրող լափող զօրութիւնը իբրեւ հանդարտ
և զուարթարար հովի նման եղաւ և հրոյն ամէն մէկ
կայծակը՝ որպէս զովացուցիչ ցօղ երեւեցան։ Վասն
ոչ բնաւ այրեցան այն երեք մանկունքը և ոչ իսկ
խանձոտեցան անոնց հանդերձքը, մանաւանդ յաստուա
հրեշտակ մը խրկեց Աստուած անոնց քովը հնոցին
մէջ, որ զանոնք ազատէ և ընկերանայ անոնց։ Ես ա-

նանք այս աստուածային խնամքներէն քաջալերեալ և զօրացեալ աղօթքի կանգնեցան նոյն հնոցին մէջը, և Աստուծոյ փառք տալով երկու բան կը խնդրէին։ Մէկ մը իրենց փրկութիւնը, և մէկմ՚ալ իրենց Թշնամիին կռամոլ Նաբուգոդոնոսորին դատի գալը։ Ինչպէս գրուած է։ "Ու երեքին նոքա՝ Մեդրաք՝ Աշնաք՝ և
" Աբեդնագով անկան ի մէջ հնոցին կապեալք։ Ու
" գնացին ի մէջ հրոյն օրհնէին և գովէին զտէր Աս
" տուած։ Յարեաւ Ազարիա և եկաց յաղօթս այս
" պէս. երբոյ զբերան իւր ի մէջ հրոյն՝ և ասէ։
" Օրհնեալ ես տէր Աստուած հարցն մերոց օրհնեալ
" և փառաւորեալ է անուն քո յաւիտեան։ ։ ։ Ի
" յամօթ առներ զմեզ, այլ արա ընդ մեզ ըստ հեզու
" թեան քում և ըստ բազում ողորմութեան քում։
" Ու փրկեա զմեզ վասն սքանչելեաց քոց, և տուր
" փառս անուան քում Տէր։ Ու յամօթ լինին ամե
" նեքեան՝ որք ցուցանեն չարիս ծառայից քոց, և ա
" մաչեսցեն յամենայն զօրութենէ իւրեանց, և զօ
" րութիւն նոցա խորտակեսցի։ Ու ծանիցեն զի դու
" ես տէր Աստուած միայն, և փառաւորեալ ի վերայ
" ամենայն տիեզերաց "։ գ. 23—12—45։

Այս աղօթքին ընդունելի եղաւ առաջի Աստուծոյ. վասնորոյ Նաբուգոդոնոսոր արքայն ուշաբերուած սթափեցաւ, անոնց աղօթքին ձայնը հնոցին մէջէն առնելով գնաց մօտեցաւ սքանչելիքը տեսնելու համար։ Երբ երեք անձինքը տեսաւ որ ջրոս եղեր են, և այն չորրորդին ահարկուքիւնը տեսնելով՝ իրեն քովը եղած նախարարներուն ըսաւ. չէ՞ որ մենք երեք անձինք ձգեցինք այս հրոյն մէջը, հիմակ ջրոս կը տեսնանք, և ատոնց այն մեր բորբոքած հուրը բնաւ վնաս մը չէ տուած։ Նորոյ այս աստուածային սքանչելի հրաշքը հնոցին մէջը յայտնուած, և այն երեք մանկունքը անվնաս փրկուած տեսաւ իրեն աջոյ ըլլ

գայութիւնով, նոյնժամայն նոր լոյս հրաշալի բարի առարկայ աստուածպաշտութեան եղաւ իրեն աչաց զգայութեան առջև. և այս նոր հրաշալի գաղափարը Նաբուգոդոնոսորայ իմացականութիւնը ստանալով՝ իսկոյն կռամոլութեան խաւարը մերժեցաւ անկէց. նոր զգաստութեան և արթնութեան լուսատու զգացմունք մը ունեցաւ. անով Թեղատրեց իրեն կռապաշտութեան Թիւրեալ և հակամիտեալ կամքը, հեռեւելու և պաշտելու աստուածգիտութեան բարեվախճան ճշմարտութիւնը: Ինոր համար դրուած է, մօտեցաւ Նաբուգոդոնոսոր բորբոքեալ հնոցին դրանը քով, ու լսաւ Մեդրաքին Միսաքին և Աբեդնագովին, Ով բարձրելոյն աստուծոյ ծառաները, ելէք ու եկէք հնոցէդ դուրս: Նւ երբոր տեսաւ անոնք ամենքը առաւել ուրախ զուարթ և անվտանգ այն ցայտացեալ բորբոքեալ հնոցին հրոյն մէջէն դուրս ելած, իրեն չար խորհուրդներէն, գործքերէն ու բռնաւորութենէն դարձի գալը և բարիի դառնալը յայտնի լրաւ առաջի ամենայն բազմութեան և առաջի երից մանկանց. վասն զի երեսի վրայ ինկած երկրպագութիւն լրաւ Տեառն Աստուծոյ ըսելով, օրհնեալ է Աստուած Մեդրաքայ, Միսաքայ և Աբեդնագովի, որ և առաքեց իրեն հրեշտակը և փրկեց իրեն ծառաները, որ յուսացած էին իրեն, չկամեցան անանկ մեկ Աստուած մ՚ալ որ կարող ըլլայ սանկ փրկութիւն մը ընելու:

Տեսար մի, յաւաջ չարաչար կամքովը կ՚ըսէր թէ, "Ով է աստուած՝ որ փրկեսցէ զձեզ ի ձեռաց իմոյ": Նայց երբոր սաոր աչաց զգայութիւնը աստուածպաշտութեան գաղափար տուաւ իրեն նեղբին խմացականութեանը, իսկոյն զգաստացաւ արթնցաւ, և թիւրեալ ու կռամոլ կամքը ուղեց ի բարեմտանութիւն աստուածպաշտութեան: Ի՝նչպէս նոյն ալատ կամքը սկսաւ առաջի ամենեցուն քարոզել: "Օ՛ի ոչ գոյ

» այլ Աստուած որ կարող լիցէ այնպէս վրկել » :

Հասկցանք մի արդեօք այս օրինակովը որ մարդս բնութեամբ չար չէ , այլ բարի ստեղծուած Աստուծոյ . բայց երբեմն զգայական չար բաղձանաց գաղափարովով կը հմտի և կ'այլայլի և կ'աղօտանայ իմացական կանուխ գիտութիւնը ուղիղ և ճշմարիտ գատելի ընելէն , և կամքին Թոյլտուութիւն կուտայ զգայութեանը տեսած ու բռնած առարկային հաճեմատ գործելու . որով կ'ըլլայ բնութեամբ բարի մարդը՝ իրեն չար գործքովը չար մարդ : Նայց երբ զգայութեան տեսած ու բռնած առարկայն բարի և աստուածահաճոյ ըլլայ՝ հարկաւ իմացականութեանը տուած գաղափարը բարի և Աստուծոյ հաճելի եղած կ'ըլլայ , և կամքն ալ կը շարժի և կ'ուխտուի իմացականութեանը բարեյօժար Թելադրութենէն հարկաւ բարի և աստուածահաճոյ գործքերու և պաշտօններու վրչ գլուխ նուիլ , որով կ'ըլլայ մարդս բարի և արդար :

Տեսանք որ մարդս շատ պիտի զգուշանայ իրեն ըզգայութիւնները ամէն մէկ մտախոհ և չարաչարքիս մտրեցուցիչ առարկաներէն ազատ պահելու , և շատ աղօթիւք պիտի խնդրեմք Աստուծոյ , որ իրեն խնամատար երկնելովն պատսպարէ մեր զգայութիւնները տրտիլելով չար առիթներէն , ինչպէս Տէրն մեր « Հաւատով խոստովանիմ » աղօթքին ինքերտրդ տուինն վրչ կը խնդրէր . « Մեզ նախանձ Տէր դիր պահապան » աչաց իմոյ՝ զերկիւղ քո տուր ոչ ևս հայել յարատո , » և ականջաց իմոց՝ ոչ ախորժել լսել զբանս չարու- » թեան , և բերանոյ իմոյ՝ ոչ խօսիլ զստութիւն , և » սրտի իմոյ՝ ոչ խորհիլ զչարութիւն , և ձեռաց իմոց՝ » ոչ գործել զանիրաւութիւն , և ոտից իմոց՝ ոչ գը- » նալ ՚ի ճանապարհս անօրէնութեան , այլ ուղեա զչարժուածիս սոցա լինիլ միշտ ըստ պատուիրանաց » քոց յաւիտեանի » :

Նաց ասելը Աբեսաղոմը կարդայ, որ մեր սէր Յիսուս Քրիստոսը մեր բերանին խօսելութեան շար ա ռարկայն խափան մերժելու. համար և իմացականու թիւննիս խոհեմութեան և առելութեան գաղափարը ներէն ազատ պահելու համար, մանաւանդ կամքը նիս եղբայրասիրութեան գործով զարդարելու համար պատուիրեց իրեն անաչառ դատաստանին ահեղ ա ռեննին երկիւղը տալով։ "Ումեմն որ բարկանայ եղ "բօր իւրում ստրապարտուց՝ պարտաւոր լինի դա "տաստանի. և որ ասիցէ ցեղբայր իւր յիմար՝ պար "տաւոր լինի առենի. և որ ասիցէ ցեղբայր իւր մո "րա՝ պարտաւոր լինի ՚ի գեհենն հրոյն»։ Մաթ. Ե. 22։

Տեսանք մի, բանակուիս առելութեան խօսքերը բե րանին շար առարկայ ըլլալով՝ իմացականութեանը այնինքն մտացը խոհութեան և կռուի շար գաղա փարներ կռուայ, և իմացականութիւնը չփոթելով շար զգացմունքէն՝ կամքը կը թեւարդէ կը շարժէ զա նազան վնասմանդրութիւններու, սակայն մարմնելու, մինչեւ մահաւիժ գործքերու ձեռնամուխ ըլլալ։ Ա սոր համար է որ Պօղոս առաքեալը կը գրէ Տիմոթէոս հաւատարիմ աշակերտին, որ քրիստոնեայները համո զէ զգուշացուցանէ, որպէս զի մեկմեկու հետ բանա կռուութիւն չընեն, մեկմեկ վար չբզարնեն ու չան գռանեն։ "Ո՛յայս յուշ արասջիք վկայութիւն եդեալ "առաջի Աստուծոյ, մի բանակուիս լինել չօչինչ պէտս ՚ի կործանումն լսողաց»։ Բ. Տիմ. Բ. 14։

Այլ և յիշէ այս տեղս մեր վրկչին Յիսուսի այն ամենաբարի զգուշութիւնը որ կռուայ մեր աչքին, որպէս զի չըլլայ որ աչաց սեսութիւնը չնութեան սակալը առարկայ ունենալով՝ իմացականութիւնը խանգարէ ու պղտորէ, անով կամքն ալ համապատե լով անկիրճ և անպատկառ Աստուծոյ և ՚ի մարդ կանէ չարաչար գործով չնութեան։ Աստ

համան է որ չարախաոսելոտ գործոյն ըստ ամենայնի
չարագրուխս պատճառը կ'արգիլէ ։ "Ի ուսարուք զի
"ասացաւ ամի չնար ։ Այլ ես ասեմ ձեզ. թէ ա-
"մենայն որ հայի ի կին մարդ առ ի ցանկանալոյ նը-
"մա, անդէն չնացաւ ընդ նմա ի սրտի իւրում" ։
Մատ. Ե. 27—28 ։

Յիշէ վերոյին սէրունական խրատը զգուշա-
Թեան. երբ մելրեալք խաբէական մեկնաբանութիւններով
սուրբ գրքին միտքը իբր թէ բացատրելով՝ հաւատոյ
ճշմարտութիւնը կը խանգարեն և մեր լսողութեանը
չար առարկայ մը կ'ըլլան. որ և մեր խնացականու-
Թեան աղտպատառ հաւատոյ ճշմարտութիւնը կ'աղ-
լայլեն. և կ'ակամ կամքերնիս պակասիլ ի գործոյ
ճշմարիտ հաւատոյ և մելրիլ ի մէջ Թերահաւատու-
Թեան. վասնորոյ կը հրամայէ ։ "Ո՛գոյշ լերուք ի
"սուտ մարգարէիցն, որ գան առ ձեզ հանդերձիւք
"ոչխարաց, և ի ներքոյ են գայլք յափշտակողք" ։
Մատ. է. 15 ։

Ուսանիլ առանձնայատիս խորհուրդներէն և չարա-
հնար որոգայթներէն ազգատիս քրիստոնեայները ազատ
մնալու համար պատուիրեց աննուճշմարիտ վարդա-
պետ ուր Նազովրեցի մեր Յիսուս Քրիստոս ։ "Յայն-
"ժամ եթէ ոք ասիցէ ձեզ եթէ ահաւասիկ ի քրիս-
"տոս՝ կամ ասանիկ, մի հաւատայցէք ։ Ո՛ի յարիցեն
"սուտ քրիստոսք և սուտ մարգարէք, և տացեն նը-
"շանս և արուեստս՝ առ ի մելրեցուցանելոյ եթէ
"հնար ինչ իցէ և զընտրեալսն ։ Այլ դուք զգոյշ
"լերուք՝ ահաւասիկ յառաջագոյն ասացի ձեզ զամե-
"նայն" ։ Մարկ. ԺԳ. 21—25 ։

Սուրբ գիրքերէն պիտի իմանանք, որ անանկ ամ-
բարշտութեան խոսքերը և Թերահաւատութեան
վարդապետութիւնները և մելրաշահիլ չարահնար
գիրքերը չէ Թէ միայն բարոյական վնասներնուս մահա

քեզ ժանտախտ մըն է, այլ և անշուշտ ճշմարիտ հա-
ւատոյ արբսական կրօնիդ խոտոր վերժտլ է ի սրտէ։
Ասոր համար է որ առաքեալ կը պատուիրէ Պօղոս առա-
քեալը Տիմոթէոս սիրել աշակերտին։ "Այլ ի պըճոյ
" և ի մեռած խօսից վերժեալդիր. զի առաւել յառաջ
" գայցեն յամբարշտութիւնս, և բանք նոցա իբրեւ
" գքաղցկեղ ձարակ գոտանեն "։ Բ. Տիմ. Բ. 16—17։

Ահա յայտնի կը տեսնանք ու կը լսենք ճարտարա-
հիւս և վսեմ ոճով գրուած այնպէս գիրքեր, որ ոչ
միայն բարոյականը կը խանգարեն ընթերցողներուն,
այլ միանգամայն կը քանդեն խոտոր. վերջ ու վար
կ'ընեն հաւատոյ ճշմարտութեան հիմը, առաքելա-
նութեան սէրը կը խանգարի, և յաւերժութիւն
կը վոխարկի, մանաւանդ քրիստոնեայ մը հաւատոյ
լուսաշաւիղ ճանապարհէն կը խոտորի, և մոլորու-
թեան խորխորատին մէջ կը գահավիժի։ Ասոր համար
է որ արբսական առաքելոյ ժամանակը արդիլուած էին
այնպիսի մոլորական գրուածները. և ընդհակառակ քրիստո-
նէական ճշմարտութեան և բարեպաշտութեան եղած
գիրքերը կ'այրէին. ինչպէս գրուած է։ "Եւ բազում-
" ի կախարդութեանցն բերէին զգիրսն, այրէին առաջի
" ամենեցուն, և համարեցան զգինս նոցա և գտա-
" նէին արծաթոյ բիւրս հինգ։ Եւ այսպէս բանն Աս-
" տուծոյ աճէր և զօրանայր։ Գործ. ԺԹ. 19—20։

Աստուածպաշտութեան և բարոյականութեան ջա-
տագովութիւն ընծայները քաջալերել իրաւունք ունին
բողքերուս անանձ գրուածներու համար, որոնք որ
ուղիղ աստուածպաշտութեան արբսական կրօնքը խան-
գարելով եղծելով դիւրութեամբ միտքերը կը յափշտա-
կեն, և բարի վարքերը թիւրելու և բաղմապատիկ
մոլորութեան մէջ համարձակ ըրթանալու կը թելադ-
րեն, և աստուածպաշտութեան ու բարեպաշտու-
թեան լուսաշաւիղ ճանապարհէն կը մոլորեցունեն,

ինչպէս այս հարկաւոր նիւթին վրայով խրատամբ կը
բողոքէր ժամանակակից անբարի գրեանց Նդամնեդա
Ալիսըն Նանուն եպիսկոպոսը իր Նվե-ահանին մէջ
ըսելով. "Նոյն ինչ ժամանակն հասած եմք եղբայր-
"ներ. որ անանձ ազատութիւնով կը խորհին կը գլ-
"րեն և կը տպագրեն. և ազատ ընթերցութիւնով
"վերծանութիւն կ'ըլլայ: Նոչ խոյտառակ անուրբ
"և անբարի գիրքեր են առանք, որոնց անունը միայն
"երկիւղ և սոսկում կը բերէ մարդուս: Նշմարի որ-
"գայթներ շարուած են այդ գիրքերուն մէջ անմեղաս-
"թեան հակառակ. բանի հայհոյութիւններ աստուա-
"ծութեան դէմ, և պղծութեան ծաղրածութիւններ կը
"գտնանք առանց մէջ գրուած նաև աստուածա-
"թեան դէմ. ինձի այնպէս կը թուի թէ մեր այս
"մարդասէր Նընտանը այն անբարի գրեանց վաճա-
"ռուելուն ու առնուելուն մէջ առաւել գերազանց
"գտնուեցաւ քան զմիւս քաղաքներուն բնակիչները. և
"գրեթէ հաստատակաց անկրօնութեանը վաճառատեղի
"հռոմայեցի մը եղաւ այս քաղաքը. աստ շատ սուղ
"թանկագին կը գնեն կ'առնեն քաղաքացի անձի մը
"բարի վարքը ապականելու մերժելի և հերքելի ար-
"հեստը: Նվասն, որ ահա համարձակեցանք աստ
"մէջ. երբեմն փորձով կը տեսանք, որ աս մարդիկ
"վայելուչ եղած ակնածութիւնը վերցուած է. և
"ինչպէ՞ս չըլլայ, երբոր այն աստիճանը հասանք, որ
"աս աստուած անգամ ակնածութիւն չի կայ: Նա-
"ւական չեն համարիր միայն իրենց անձը մոլորե-
"ցունելը, այլ և ուրիշներուն բարեպաշտութիւնը եղծե-
"լու և մոլորեցունելու կը ջանան: Նայս կը փութան
"յայտնի երեւան հանելու անհամբերութեան առելի
"և արհամարհելի սեռպութիւնները, պատկառանաց ա-
"ծծխութեան կապը բոլոր ամենայնի խզել, և
"ծաղրել արհամարհել յանդգնութեամբ սերտ-

» Թեան օրէնքները և սահմանադրութիւնները : Ինչ-
» ասիկ այդ անթիւ գրեանց մահաւիթ պատուիները,
» որոնք անխոնիր կը տպագրուին և կը վաճառուին ու-
» կը կարդացուին . ահաւասիկ այն սահմանը այն վէ-
» ճակը՝ որուն մէջ այսօր այս տարաբաղդ կղզիս կը
» գտնուի այդ գիրքերուն պատճառաւը » :

Ընդ այսուհետեւ չի զարմանանք , ընդվայր հարցու-
փորձ չընենք , չըսենք ինչո՞ւ համար այս մարդը կամ
այն մարդը յաւաջ բարի էին , կատարեալ ուղղա-
փառ քրիստոնեայ էին , ջերմեռանդ բարեպաշտու-
թիւն ունէին . և հիմա բարեպաշտական աստուա-
ծահաճոյ գործքերէն Թուլացան , և մոլորեցան :
Ինչ յայտնի եղաւ , որ լսողութիւնին անկրօնութեան
և չարութեան , զեղխութեան և մոլորութեան առար-
կաներ ունեցան . կամ մոլորեցուցիչ և կամ խանգա-
րիչ բարի վարուց գիրքեր կարդալով , և կամ մոլո-
րեան կամ մոլորութեան խրատներ խօսքեր լսելով
ասկէց անկէց՝ իմացականութիւններնուն չար գաղա-
փարներ տուած են . անկէց ալ կամքերնին համոզ-
ուեր է չարաշուք գործքերու մէջ գեղլիլ և զանա-
զան մոլորութեանց մէջ գահավիժիլ :

Ընանկ չար ժամանակներուն համար , և գայթակ-
ղութիւն տուող մարդկանց համար և անոնց մոլորա-
կան վարդապետութեանը համար արբազան Պօղոս ա-
ռաքեալը մարգարէանալով կը գրէր Տիմոթէոս սիրե-
լի աշակերտին : “Ո՛յայ գիտացիր՝ եթէ յաւուրս ե-
» ւին եկեսցեն ժամանակք չարք , զի եղիցին մարդիկ
» անձնասէրք արծաթասէրք հպարտք ամբարտաւանք
» հայհոյիչք՝ անհաւանք ծնողաց , անշնորհք անսուրբք ,
» անսէրք անդուլք բանսարկուք անժոյժք , վէպք
» անբարեսէրք , մատնիչք յանդուգնք , ամբարհաւաճք ,
» սիրելին զկերպարանս աստուածպաշտութեան և՝ զո-

» զօրութենէ անոի նորա՝ ուրացեալ լիցեն, և խոչընդո-
» ջիր՝ ի նոցանէ։ Քանզի՝ ի նոցանէ են՝ որ մտանեն
» տանէ՝ ի տուն, և գերեն զկանայս հեղգակուտեալս
» մեղօք վարեալք՝ ի պէս պէս ցանկութիւնս, և յա-
» մենայն ժամ ուսանին և երբէք՝ ի գիտութիւն ճըշ-
» մարտութեան ոչ հասանեն։ Այլ որպէս Յանէս և
» Յամբրէս հակառակ կացին Մովսէսի, նոյնպէս և սոքա
» հակառակ կան ճշմարտութեան, մարդք ապակա-
» նեալք միօք՝ անպիտանք՝ ի հաւատս։ Այլ ոչ երբէք
» գայցեն յաւելջ՝ ի լաւ անդր. քանզի անմտութիւն
» սոցա յայտնի լինիցի ամենեցուն, որպէս և նոցայն
» էակ եղև » ։ Բ։ Տիմ. գ. 1—9։

Այսր համար է որ երբ կը մտնաս ուղղափառ ա-
զգայ տաճարը Սկեղեցւոյ մէջ, տեսութեանդ առջևը կ՚ե-
րևան աստուածային հրաշազարդ և փրկարար սնօրէ-
նութիւններուն և մարդասիրական յայտնութեան կեն-
դանագիր պատկերները, ևս և երանելի տեսրեերուն,
որ գործով և քարոզութիւններով առաջնորդ եղան
մարդկանց, քրիստոնէական ճշմարտութիւնը և քարի
վարուց լուսաշաւիղ ճանապարհին մէջ բարւոք ընթա-
նալու. տեսողական կարողութիւնդ կ՚ստանայ նոր՝ ի
նոյց առարկաներ ջերմեռանդութեան հաւատոյ և
սրբութեան վարուց։ Այս պատկերաց յարգութիւն
տալուն վրայով “ Յանդիսարան ուղղափառութեան
Հայոց Եկեղեցւոյ » խառած գրքին մէջը ճշմարտաբեր
ոգեով կարդայ, որուն մէջ ընդարձակ գրած եմ. (տես
երես 451) և այս տեսութեան աչաց բարի առարկա-
ներով միտքերնուս իմացականութիւնը կ՚ունենայ աս-
տուածահաճոյ կրօնասիրութեան և բարեպաշտու-
թեան գաղափարներ։ Նոյնպէս տեսրը եկեղեցւոյ մէջ
կը կարդացուի տեսրը Վեռատան առաքելական և
մարգարէական ընթերցմունքներըը, ևս և ողջամիտ քա-
րոզիչներուն աստուածաբանութիւնները, որոնցմով

ղողական կարողութիւնիս կ՚ունենայ ողջամիտ ապաստուածպաշտութեան և կատարեալ բարեպաշտութեան նիւթեր. և այն նիւթերուն ծանօթարար գաղափարները կուտայ իմացական զօրութեան մտաց. և անոր թելադրութեամբը կը համոզուի կամքը կատարեալ ջերմեռանդութիւն ունենալ աստուածպաշտութեան մէջ՝ և անսայթաք վարք ստանալ: Ըստ այս բարի միջոցներով կ՚ըլլամք Նարի Մարդ և Նարի Կը-րիստոնեայ, և առաքինի և կատարեալ հաւատով և բարի գործով յաւիտենական երջանիկ կեանց արժանաւոր:

ԳԼՈՒԽ Ա.

ՊԻՏԵՄ որ իրաւունք ունին ընթերցող բարեմիտ անձինք յիշելու այս տեղս այն աստուածային երկու անժխտելի վկայութիւնները՝ որ մարդկանց համար եղած է: Նախ՝ երբ «Անոք մարգոյ հաստատեալ է՝ ի խնամս չարին՝ ի մանկութենէ իւրմէ»: ծն. Ը. 11: Եւ երկրորդ՝ թէ «Չկը ոք բարի, բայց մի Աստուած»: Ղ-կ. ԺԸ. 19: Այս երկրորդ վկայութիւնը Քրոջունք յետագայ գլխոյն մէջ խօսելու:

Առ՝ առաջին վկայութիւնը Աստուծոյ՝ յայտնի կ՚ընէ, որ մարդիկ իրենց ազատ կամքով զգայական մարմնաւոր բաղձանքներուին փոյթ և ջանք կ՚ունենան յառաջ տանելու, միտքերնուն իմացական կարողութիւնը շուտով կը խաբուի արտաքին զգայութիւնե ներնուն տուած զգալի չար գաղափարներուն և կամքին ալ թոյլտուութիւն կուտայ գործով կատարելու: Եթէ ասոր փորձը կ՚ուզես իմանալ՝ անչափահաս մանկանց վրայ նայէ, երբոր կը տեսնան իրենց աչքերնուն

հաճելի բան մը, իսկոյն ձեռք կը զարնեն զանի բռնե-
լու և իւրացուներլու։ Ինչպէս կը տեսնան կրակին փայ-
լուն կարմրութիւնը, ինամք կ'ունենան և փոյթ՝ իւ-
կոյն ձեռքերնին մօտիկցուներլու և կրակը բռնելու.
նոյնպէս երբ կը տեսնան աւազանի մը կամ լճի մը ջու-
րին ծածանիլը, իսկոյն կը յափշտակին աչքերնուն տե-
սած իրենց բաղձալի երևցած պարզ ջուրին մէջ նե-
տուելու, և կամ նոյն ջուրով խաղալու։ Այս համար
է որ անխելահաս մանկունքները որդեաբեր ծնողք մի-
այնակ Թող չեն իսաբ մնալու ուր և իցէ։ Այլ զի
մանկունք առաւել պատուհեան բաղձանաց հետա-
մուտ կ'ըլլան՝ չունենալով բան ամենայնի կատարելու-
Թիւն իմացական ընտրութեան. չունին բնաւ զգու-
շութիւն հեռանալու իրենց ջնաւակար առիթներէն,
միայն իրենց հաճելի երևցած բաներուն կը խաբուին։
Ինա այս ոչսյոց անմտութիւնը օրինակ բերելով Պօ-
ղոս առաքեալը՝ խրատ կուտայ հաւատացեալներուն,
որ ոչսյական դիւրախաբ մտաց պէս չըլլայ որ իրենց
հոգևոր վտանգը չճանաչեն և ջնաւակար չար բաներու
ձեռնամուխ չըլլան. "Նզբարք մի լինիք ոչսյք մտօք,
" այլ Ի չարեաց տղայացարուք "։ Ա. Կրն. ԺԴ. 20։

Յիշեմք այս տեղս այն մանկան խղճալի դիպուածը
որ անզգուշութենէ ծնողացն հանդիպեցաւ։ Այս ան-
մեղիկ մանուկը օր մը միայնակ կը ջրէր իրենց տանը
պարտիզին մէջ, կը տեսնար որ գեղեցիկ փայլուն թռ-
չնիկները կը թռչէին ծաղիկներուն վրայ, իրեն ա-
ջացը հաճելի երևցան, վանորոյ հետևեցաւ անոնցմէ
բռնելու. բայց անոնց հետը կար մեղուներ ալ, որ
ծաղիկներուն հիւթը կը ծծէին, թիթեռները բռնե-
լուը մեղու մ'ալ բռնեց, չորշելով իրեն տղայամուտ
թեամբը, վանորոյ մեղուն իսկոյն չարաչար խայթեց
ոլորելի տղային ձեռքը. և սաստիկ ցաւէն սկսաւ լալ
ու պոչել, և ծնողքը հասան դէպ ըրին ձեռքին։ Ա-

այնուհետև որքան ատեղ կ'երևար իրեն ոչ թէ միայն ընտանական մեղուները, այլ և անվնաս գեղեցիկ թիթեռնիկները անգամ կ'սուէր և չէր ուզեր սպանել։

Ահա այս մանկական բնաւորութեան նման դիւրաւ կը խաբուի արուաքին զգայութեան քաղցանքներուն մարդոյս մտաց կարողութիւնը շուտով մը զգայութենէն առած գաղափարին և զգայմունքին վրայով, ուզիղ դատմամբ որոշում չընելով չզգաստելով էարը բաներին, այլ մեկէն ի մէկ հաճութիւն և հաւանութիւն կուտայ զգայական քաղցանքը կատարելու իրեն ազատ կամքը։ Ասոր համար վճիռ ըրաւ Աստուած։ "Անոնք մարդոյ հաւատացեալ է ի լինաս չարին ի "մանկութենէ իւրմէ "։

Այսպիսի մտախաբ անզգուշութենէ և մարմնաւոր չարաչար քաղցանքներէ, այսինքն պոռնկութենէ, շնութենէ, զաղրադործութենէ, արբեցութենէ, որկրամոլութենէ, զեղխութենէ և ամէն տեսակ մոլեկան կիրքերէն ու գործերէն հեռացունելու համար կը համոզէ Պօղոս սրբազան առաքեալը ամէն մէկ քրիստոնեաները, համեմատ աստուածային վճռոյն առելով։ "Անարգոյ լինամք մի տանիք ի ցանկութիւնս "։ Հռով. ԺԳ. 14։

Այս թէ որ մարդս պիտի արթուն ըլլայ մտօք և վնասուն իրեն արուաքին զգայութեանը աստուած տուած բանիւք քաղցանքներուն, և չհետեւի չյօժարի ազատ կամքը գործով ալ կատարելու՝ իրեն բնական բարութեանը նեմութիւն մը կամ խանգարում մը չբերեր, այլ կը մնայ Աստուծմէ իրեն շնորհուած բնական բարութեան մէջ։ Արդեհետեւ ամէն մէկ էակ՝ որ ունի գոյ էակութիւն՝ հարկաւ բարի է, ինչպես վնասակարէն աւազն ևս կը վկայէ։ "Բարութիւն էակին "իւր գոյն է, այդ մարդիկ ունին գոյ և էակութիւն. "ուրեմն մարդիկ լաւ էակութեան իւրմանց բարի

„ են „ : Արտէս և Պօղոս առաքեալն ալ կը վկայէ :
“ Ընծեռայն արարածք Ընտուծոյ բարւոյ են „ : Ա. Տիմ :
Դ . 4 :

Թողլ այս տեղս մարգարէներըը ողբան և վայ կարճ
դան մոլորեալ մեղաշատ ազգին Իսրայէլեան ազգին
վրայ , ինչպէս Ընտի մարգարէն Իսրայէլեան ազգին
վրայ վայ կուտայ . որոնք որ Ընտուծոյ անհնազանդ
գտնուեցան և կռամոլութեան հետեւելով բարեա
ցուցին զԸնտուած և իրենց բարութիւննին կորուսին
իրենց ամենապարշելի մոլութիւնովը : “ Վայ ազգի մե-
„ ղաւորի , ժողովուրդ՝ որ լի է մեղօք , սերմն ժանտ , որ-
„ դիք անօրէնք . Թողին զտէր՝ բարկացուցին զսուրբն
„ իսրայէլի . օտարացան և յետս կացին „ : Եսայի . Ա. 4 :
“ Վայ անօրինին , չարիք ըստ գործոց իւրոց անցցեն ընդ
„ նա „ : Անդ . գ . 11 : Ընտ և ասյն մարգարէն վայ կուտայ
արբեցութիւն և զեղխութիւն սիրողներուն : “ Վայ
„ այնոցիկ որք յառնեն ընդ առաւօտս՝ և զհետ լինին
„ ցբուցն . որք երեկոյեան ՚ի նմին . զի գինին անդէն
„ իսկ զնոսին այրէ : Փողով և Թմբկաւ և քնարաւ և
„ երգովք զգինին ըմպեն , և ՚ի գործս տեառն ոչ հա-
„ յին . և զգործս ձեռաց նորա ոչ առնուն ՚ի միտ „ :
Անդ . ե . 11—12 :

Ընանկ ալ Երեմիա մարգարէն կ՚ողբայ , այն նեղ
գութեան , աղտութեան և խաբէութեան հետեւողը
չարագործ ժողովուրդը՝ որ աստուածպաշտութեան
հաւատքը խափանեցին իրենց կռապաշտութեան չա-
րիքներնին չաղցունելով , ըստ այնմ : “ Ո՛տար զգը-
„ լուխս իմ ՚ի ջուր . և զաչս իմ յաղբիւր արտասուաց .
„ և լայի զժողովուրդս այս : . . . Ո՛տար ինձ յանա-
„ պատի դոյզն օթեւանս՝ և Թողուի զժողովուրդ իմ .
„ և գնայի ՚ի դոյանէ , զի ամենեքին շնան առ հաս-
„ տակ ժողովք արհամարհողաց : Եւ լարեցին զլեզուս
„ իւրեանց նման աղեղն սուտ . և ոչ հաւա-

» տուէք զօրացան ՚ի վերայ երկրի . զի ՚ի չարեաց ՚ի չա-
» րիս հանել . . . իւրաքանչիւր զբարեկամ իւր այսպա-
» նեն . և զճշմարտութիւն իւր ոչ խօսեացին , ուսան
» լեզուք նոցա խօսիլ զսուտ . զի վնասեցին և ոչ գա-
» դարեցան : Երեմ թ . 1—3—5 :

Ընդ՝ էէ որ Աստուած կը հրամայէ նզեկիէլ մար-գարէին , որ ողբայ առիւծանման գազանաբարոյու-թիւնը այն իշխանին Իսրայէլի՝ որ անիրաւեցաւ և չա-րացաւ որդւովք և ազատիօք իւրովք . այնքան Աստու-ծոյ անհաճոյ եղաւ որ անունը անգամ Աստուած չի կամեցաւ յիշել : “ Եւ դու որդի մարդոյ ողբա առ ՚ի
» վերայ իշխանին իսրայէլի , և ասասցես , զի՞ է զի եղև
» մայր քո ՚ի մէջ առիւծուց՝ բազմացոյց զկորիւնս
» իւր : Եւ զարդացաւ և կորիւն մի ՚ի կորեանց նորա
» առիւծացաւ , և ուսաւ յափշտակել զյափշտակու-
» թիւն , և եղև մարդակերանձ » : Եզէկ ԺԹ . 1—3 :

Ընդ՝ այս մարգարէներուն պէս չի՞ որ Դաւիթ մար-գարէն ալ կը նայէր անդարձ և անպատկառ մեղաւոր-ներուն , չարագործներուն և անգութ անօրէնն՝ ամբար-տաւան մարդկանց վրայ . ու կը տրամէր կ՚արտասուէր արտաքոյ հառաչանօք գիտելով անոնց կորստական վի-ճակը դատապարտութեան և անոնց բնական բարու-թեան աստուածային հնարքներուն կորուսաը » : Տըրտ-
» մութիւն կալաւ զիս ՚ի մեզաւորաց և այք թողին զօ-
» րէնս քո : Վտակք ջուրց իջին յաչաց իմոց , զի ոչ պա-
» հեցին զօրէնս քո : Ձայէի յանապատին և մաշէի ,
» զի զպատուիրանս քո ոչ պահեցին » . Սաղ . ճԺԸ . 53—136—158 :

Ընդ՝ ես կը սասանիմ գրելու և գիտեմ որ այս տե-ղս բարեպաշտ և մեծահաւատ ընթերցողներուն քա-ղցր արտերնին սաստիկ ապտակ մը չանշուշտ պիտի զգան , վասն զի կը բռնադատիմ յիշելու այն մեր վրկ-ջին Յիսուսի Քրիստոսի տակաւին հրեշտակաց և մարդ-

կան արտաստուածից լալը Երուսաղէմի մէջ բնակած ա-
նօրէն մարդկութեան վրայ, որ և Յիսուսի Քրիստոսի
մարդասիրութեան անօրինական խորհուրդը պատրաս-
տած հոգևոր վիրութեան չնորհքը և աստուածա-
կին ճշմարտութեան լոյսը մերժելին և ուրացան իրենց
կամապաշտութեամբը և չարագործութեամբը մոռք
կուրացած ըլլալով. ինչպէս կը գրէ սրբազան Պօղոս
առաքեալ։ "Եւ եղեւ իբրև մերձեցաւ՝ տեսեալ
" զքաղաքն եղաց 'ի վերայ նորա և ասէ. եթէ գիտէիր
" դու գոնէ յաւուրս յայսմիկ զխաղաղութիւն քո,
" բայց այժմ ծածկեցաւ յերեսաց քոց"։ Ղ.ԻԹ. 41։

Տեսէք Պօղոս առաքելոյն լուծը փափաքը որ Յի-
սուսի Քրիստոսի հետը ազգակից և արտաստուածից
ըլլալու համար ցաւալի արտև յաւիտենական կ'աւե-
րուի և կ'ոչնչանայ Յիսուսի Քրիստոսի խաչին չնորհք-
ներուն թշնամի անհաւատներուն՝ որկրամոլութիւն,
պերճութիւն սիրողներուն, և անամօթ լիրբ աշխար-
հասէրներուն անվախճան դատապարտութեանց և
յաւիտենական կորուստներուն վրայ. ըստ այնմ։
"Նայց արդ լալով խնդ ասեմ զքրիստոսէից խաչին Քր-
" իստոսի, որոց կատարածն կորուստ է, որոց Աս-
" տուած որովայնն է և փառք ամօթն իւրեանց, որք
" զերկրաւորս և եթ խորհին"։ Փիլ. Գ. 18։

Յիրաւի արտասուելու է ասանկ չար մարդկանց
վրայով, որ իրենց բնական բարութիւններին անգամ
կ'ապականեն և կը խանգարեն դնելով վիճաբերնուն մէջ
չար գաղափարներ, և այնուհետեւ իրենց արտաքին
զգայութիւններուն չար յօժարութիւնը և վատթար
բաղձանքը կը չանան ապատ կամքով համարձակ գործելու
համար, սաւանիներէն հարկաւ կը պակսի ճշմարիտ լոյսը
հաւատոյ և ուղղափառութեան, ինչպէս կը գրէ Պօ-
ղոս առաքեալը։ "Մարդ ապականեալ մոռք՝ անպէտ
" ասնք 'ի հաւատս"։ Բ. Տիմ. Գ. 8։

Ուսանիլ չար մարդիկ, որ իրենց բնութեանը սեպհականած բարիքը կը խափանեն, և բնական մուտց ցասերնին անգամ կը խաւարեցունեն իրենց չարախատավատ յօժարութեանցը հետեւելով և զգայական բաղձանքնին կատարելով՝ կը նմանին սաստիկ ծխով լեցված աչքի մը, որ իրեն պայծառ առաւութիւնը, սուբ նկատումը բոլորովին խափանած կ'ունենայ, ալ այնուհետեւ հեռաւոր բաները տեսնալու նկատելու և որոշելու կարողութիւն չունենար, և ոչ մերձաւոր եղածներն անգամ: Թէպէտ բնականապէս այս վատացեալ աչքը ունէր արտաեսութիւն, կը նկատէր կ'որոշէր սպիտակը սեւէն, կարմիրը կանաչէն, բայց այդ ողորմելի տեսութիւնը սաստիկ ծխով պաշարուած խաւարեցաւ և մթագնեցաւ: Այսպէս ալ մարդս Թէպէտ բարի է բնականապէս, բայց չար կ'ըլլայ, երբոր անոր աչքը կ'ելլան չար զգացմունքներու մոլեկան և խաւարաբեր մուտց խորհուրդներ, չտեսնար աստուծոյ օրինաց լոյսը, հաւատոյ ճշմարտութիւնը՝ չէ կարող յիշելու հանդերձեալ փառաց արքայութեան յաւիտենական երանութիւնը, և ոչ ալ կը տեսնայ իրեն առջևը եղած յաւիտենական կորստեան խորխորատը: Այսպէս ալ անկէց Աստուծոյ շնորհաց և ճշմարտութեան լոյսը արգելուած է իրեն չար գործքերուն պատճառաւ. ըստ այնմ: "Մերկեցին մարդիկ զիւրեանց զգեստս ըսելով, "զի էին գործք խրթեանց չարութեան: Ո՛վ աւուրնայն "որ զչար գործէ՝ ատեայ լոյս, և ոչ գայ առ լոյսն, "զի մի յանդիմանեսցին գործք նորա": Յօհ. գ. 19—20:

Ուրեմն պիտի ունենաս հիմակ և պիտի բաես մըտօքդ. ինչպէս կ'ըլլայ, որ բնական լուսով մուտց գարեւած մարդ մը լոյսը մերժէ ու չընդունի, ինքնիրեն խաւարի մէջ մնալը ախորժի: Վեցի մէկ բնական օրինակ մը տամ նախ և յառաջ. և ապա դու ինքնիրդ պիտի համոզուիս այս խօսքս ընդունելու: Որ օրինակ

մարդու մը աչք երբ բժաբեր ցաւոտ կ'ըլլայ՝ հարկաւ արեւու և ճրագի լոյսերը կ'ատէ և կը մերժէ լսա ամենայնի, և կը սիրէ խաւարի մէջ մնալը, մանաւանդ վարշամակաւ ալ կը վարագուրէ աչքը՝ որ բնաւ չընդունի լուսոյ շառաւիղը անգամ։ Ինչա այս մարմնաւոր օրինակաւ լմնցիր հոգեւորը։ Վասն զի չարագործներուն խլմնոանաց աչքը չընդունիր, կը մերժէ աստուածային օրէնքներուն իմանալի լոյսը. ապա որոնք որ Աստուծոյ մօտաւոր են, հաւատով և բարի գործով, հարկաւ անոնք ունին Աստուծոյ օրինաց և շնորհաց լոյսը։ «Ատակը առ տէր և ա» »ռէք զլոյս։ Սոփ. ԼԳ. ճ։ | »ոյս ծագեաց արդարոց, »ուղղոց սրտից եղև ուրախութիւն»։ Անդ. ՂՋ. 11։ Ու որոնք թերհաւատութեամբ և չարագործութեամբ հեռացած են Աստուծոյ օրէնքներէն և շնորհքներէն՝ անշուշտ մերժած են այն իմանալի և աստուածային լոյսը և կորստեան խաւարին մէջը կը խարխափին։ «Ահաւասիկ ոչք հեռի արարին զանձինս »իւրեանց՝ ի քէն, կորիցեն. սատակեացես զամենե» »սեան, ոչք պատառեալք եղեն՝ ի քէն։ Սոփ. Հբ. 20։ »Շշմափեսցեն զարմն, իբրեւ կոյրք, և իբրեւ զա »չացուս խարխափեսցին, և գլորեսցին՝ ի միջօրէի՝ »իբրեւ՝ ի հասարակ գիշերի։ Եսայ. ԽԹ. 10։ Այս եմ »լոյս աշխարհի, որ գայ զկնի իմ, ընդ խաւար մի գը »նասցէ, այլ ընկալցի զլոյս կենաց»։ Յօհ. Ը. 12։

Արդ՝ այս տեղս հարկ է մեզի բարի խորհրդածութիւն մը ընել և գիտնալ, եթէ Աստուած չուզեր, որ մարդիկ՝ որ ինքն բարի ստեղծեր է և յաւուրս սէր և խնամք ըներ է անոնց, յաւիտենական գաւառապարտութեան կորուստին մատնուին իրենց չարագործութիւնավը. որովհետեւ կը գրէ։ «Ո՛չ միոք մարդոյ հաս »տատեալ է՝ ի խնամս չարին՝ ի մանկութենէ իւրմէ» վասնորոյ իրեն անչափ մարդասիրութիւնովը կը գթայ

և կ՚ողորմի և կը կամի ամենուն ողորմութիւն ընե-
լու, և ամենուն սատանալը և ժառանգելը իրեն շնոր-
հաց անազօտ լսալը և յաւիտենական փառաց վայել
ջութիւնը և երանութիւնը: Ասոր համար է որ մար-
գարէներուն և առաքեալներուն բերնովը կը խոս-
տանայ և ամեն մեղաւորներու փրկութեան յոյս կու-
տայ, որպէս թէ ինքը պատրաստ է ներելու, և մեր
դարձին և ապաշխարութեանը կ՚սպասէ: « Նուիրէնն
» եթէ դարձցի յամենայն անօրէնութեանց իւրոց զոր
» արար, և պահեսցէ զամենայն պատուիրանս իմ,
» և արասցէ զարդարութիւն և զողորմութիւն. կե-
» ցէ, և մի մեռցի. ամենայն մեղք նորա զոր
» գործեալ էցէ, և ամենայն անիրաւութիւնք իւր՝
» զոր անիրաւեալ էցէ՝ մի յիշեսցին, այլ արդարու-
» թեամբ՝ զոր արար, կեցցէ: Եթէ կամելմի կամի-
» ցի՞մ զմահ անօրինին ասէ տէր տէր, որպէս դար-
» նալ նորա ՚ի չար ճանապարհէն և կենալ: Եզեկ. ԺԸ.
» 21—23: Դարձարուք արբեցարուք, ընկեցէք զչարիս
» ձեր յանձանց ձերոց առաջի աչաց իմոց. դադա-
» րեցէք ՚ի չարեաց ձերոց: Ուսարուք զբարիս գոր-
» ծել. խնդրեցէք զիրաւունս. փրկեցէք զզրկեալն.
» դատ արարէք որբոյն, և տուք զիրաւունս այրւոյն
» . . . եթէ իցեն մեղք ձեր իբրեւ զձանձախարիճ՝
» իբրեւ զձիւն սպիտակ արարից. և եթէ իցեն իբրև
» զորդան կարմիր՝ որպէս զսար սուրբ արարից. Եսայ.
» Ա. 16—18: Չգիտիցէք զի քաղցրութիւնն Աստուծոյ
» զքեզ յապաշխարութիւն ածէ. Հռով. Բ. 4: Ոչ
» յամեցուսցէ տէր զխոհան՝ որպէս ոմանք յամր
» համարին, այլ երկայնամիտ լինի առ ձեզ, քանզի ոչ
» կամի եթէ ոք կորիցէ, այլ ամենեցուն հասանել
» յապաշխարութիւն »: Բ. Պետր. Գ. 9:

Այս մարգարէական և առաքելական յորդորից
հասկերան ըստ ամենայնի կատարելութիւն և հաս

աստուածն կատարյալ ամենափրկիչ ուղղ Յիսուս Քրիստոս, յայտնելով մեզի Հօր Աստուծոյ մարդասիրական և բարերար կամքը և մեզմէ պահանջելով գործունեայ կեղծանի և կատարեալ հաւատք՝ ասէ "Այս են կամք "Հօր իմոյ զի ամենայն որ տեսանէ զՈրդի և հաւա"տայ ՚ի նա, ընկալցի զկեանն յաւիտենական. և ես "յարուցից զնա յաւուրն յետնում": Յով. Զ. 40:

Տեսար ով որ քրիստոնէական սուրբ և կենդանի հաւատքով ՚ի չար գործոց հրաժարելով զղջմամբ սրտի և առաքինի գործով բարեպաշտութեան զարդարուելով՝ յաւիտենական կենաց ժառանգ պիտի ըլլայք: Ո՞նչ կ՚ըսես, ալ, պէտք է մեզի, կամ արժան է որ հոգեշունչ մարգարէական և առաքելական մանաւանդ քրիստոսական անմխիթար խօսքերուն լսած ամենայնի հակառակ ձայներուն ականջ դնել և անոնց հետեւիլ երբեմն մը տախտակ. այլ ևս չարաչար մոլորամիտ չենք մի ըլլար, երբոր աստուածային ամենաճշմարիտ ուխտերը խոստանալը մխիթարով լսե և ես է ասել մտնալով, մարդկային խաբուսիկ խօսքերուն հաւատալ և սրտի մօտ անոնց անձնատուր ըլլալ և անոնց հաճելի ըլլալու փոյթ և չան ունենալ, եթէ խօսքով եթէ գործով և էթէ արտաքուստ ձեւով: Ա՛նիկա այս տեղս մարգարէական և առաքելական սուրբ վճիռները՝ մարդահաճոյներուն համար արուած. "Աստուած ցրուեցաւ զոսկերս մարդա"հաճոյից: Ամաչեցան և յամօթ լինին. զի Աստուած "անարգեաց զնոսա: Սաղ. ծԲ. 6.: Արդ մարդկա՞ն "հաճոյ լինիցիմ, թէ Աստուծոյ. կամ խնդրեցեմ մարդ"կա՞ն հաճոյ լինել. եթէ տակաւին մարդկան հաճոյ "լինէի, ապա Քրիստոսի ծառայ ոչ էի": Գաղ. Ա. 10:

Այո՛ մեկ մը, այս մարդկային ձայները որ կը լսես, բազմատեսակ աւետարանական աստուածային խոստմունքներուն հետը, սո՛ւտ և մի՛ հաւատար: Պապականները կը կարծեն մեկ կողմէն "թէ որ քրիստոնեայները

Հռովմայու Պապին հնազանդ և հպատակ ըլլան, և անոր հետը հոգեւոր հաղորդակցութիւն չունենան՝ փրկութիւն չունենան պիտի, և արքայութեան վա-
ւաց արժանի չեն, կորուստ են »։ Ինկալ կոլվին ալ նորալանդ և կամ բողոքական անունով քարոզիչները, ասոնք ալ օրինակ առնելով պապականաց դրութիւնը՝ համարձակ կը քարոզեն որ « Եթէ քրիստոնեայները մեր ժողովքին փոյթուած անձնատուր անդամ չըլլան, և եթէ մեր վարդապետութեանը չհետեւին՝ փրկութիւն չունին կորուստ են »։

Վասն այս խօսքերը բաղդատե Յիսուսի Քրիստոսի փրկչին մերոյ ամենապուս վճիռներուն հետը » Ա-
» մէն ամէն ասեմ ձեզ, զի որ հաւատայ ինձ, ընդունի
» զկեանս յաւիտենական։ Յօհ. Ջ. 47։ Ա՛յս են յաւի-
» տենական կեանք, զի ճանչցեն զքեզ միայն ճշմարիտ
» Աստուած, և զոր առաքեցեր զՅիսուս Քրիստոս։
» Անդ. ԺԷ. 3։ Բաղդատեցէք արդեօք աւետարանա-
կան ամենաճշմարիտ խօսքերը՝ մարդկային նորահնար
մտախաբ խօսքերուն հետը, թէ որ մարդասիրաց ըլլալ
կ՚ուզես՝ հարկաւ մարդկային ժողովը պիտի ճանչնաս,
և անոնց համագումած պիտի ըլլաս. սիրելի ուղղափառ
ազգէդ անդամ բաժնուելով և քրիստոնէական անբիծ
և ճշմարիտ հաւատով հաստատուած սուրբ եկեղե-
ցիդ ալ պիտի անարգես ու հալածես։ Մարդ զպարզա-
միտս որոշեն բաժանեն իրենց ուղղափառ ազգային
եկեղեցիեն, և Թող հալածեն նախատական խօսքերով
զմեզ, որ մեր վրայ ալ կատարուի և մեզի ալ սեպհա-
կանուի այն երանութիւնը Յիսուսի Քրիստոսի եթէ՝
» Երանի է ձեզ յորժամ նախատիցեն զձեզ մարդիկ,
» և յորժամ որոշիցեն և նախատիցեն զձեզ և հան-
» ցեն անուն ձեր զէնջ վասն որդւոյ մարդոյ, ուրախ
» լերջ յաւուր յայնմիկ և ցնծասջիք, զի վարձք ձեր
» բազումք են յերկինս։ Ղ-ի. Ջ. 22։

Վ֊իսէք բարեմիտ ընթերցողք. Հայոց եկեղեցին Թեպէտ կը համբերէ քրիստոսական երանութեան մը խիթարութիւնովը, բայց կը ցաւի Աստուծոյ ընդհակառակ դէմ մեղանչողներուն վրայ, վասն զի համաձայն է Հայոց եկեղեցին Պօղոս առաքեալին որ կ'ըսէ. "Այսուհետեւ որ զձեզ անարգէ, ոչ զմարդ անարգէ "գէ, այլ զԱստուած՝ որ եւ եւս զՀոգին իւր սուրբ "՚ի ձեզ"։ Ա. Թես. Դ. 8։

Վ֊իսէք մի Հայոց եկեղեցւոյն մեծ յանցանքը ի՞նչէ, բնաւ չանարգեր չի վատաբաններ ուրիշ քրիստոնեայ աղգերը, այլ կը սիրէ ամենքը, և կը գովէ և ամենուն համար աղօթք ալ կ'ընէ բարձրացման աղաղակելով։ "Վասն ամենայն անձանց քրիստոնէից և ասաց Հա "ւատացելոց, զսէր աղաչեացուք"։ ՚Ի Ժամ։ Այլ ոչ ալ սով բաւական կ'ըլլայ, այլ ամէն քրիստոնեայ աղգերուն սուրբ պատով Աստուծոյ հաճելի եղած ա ղօթքնին ընդունելով՝ անոնց բարեմաղթութիւնը և բեն նպաստ կ'առնէ Աստուծմէ խնդիրքներ ընելու ժամանակը. ինչպէս գրուած է յերկս արեւագալին։ "Յարեւելից մինչև ՚ի մուտս արեւու ընդ ամենայն "տեղիս քրիստոնէութեան. ուր և կարգան զանուն "տեառն սրբութեամբ՝ ունէր ալօթիւքնոցա և բարե "խօսութեամբ մեզ աղերսեցայն"։ ՚Ի Ժամ։

Կ'ուզեմ այս տեղս ուսանիլ, որ ինչու համար Հա յոց եկեղեցին ուրիշներուն պէս կրօնական խորու թիւն և բծախնդրութիւն ՚ի բան հաւատոյ չընէր մինա քրիստոնեայ աղգերուն վրայով քանակութեամբ դատաւոր նստելով ամենուն վրայ, երեն հը նազանդ և հետեւող ըլլալները աչքայութեան ժա ռանգ համարելով, և չհետեւող քրիստոնեայ աղգե րը դժոխքին մատնելով։ Այսպէս չի քանի մը պատճառ նեւով համոզուած է Պօղոս առաքեալէն, որ քրիստոն եայները պիտի ըլլան խոնարհութիւնով, հեզութիւ

նով, և երկայնմտութիւնով մեկամէկ սիրելով և խա-
զաղութեան տուրը Հոգիէն միաբանուած։ Ինչու որ
ամենքս մէկ մարմին եմք և ունինք մեզի գլուխ կեն-
դանարար Յիսուս Քրիստոսը, և ամենքս Հաւատոյ
տուրը Հոգիին ընդհանուր ընդունած, և անով մեր հո-
գին նորոգուած ու զարդարուած է, մէկ է Հայր Աստ-
ուածնիս, և նոյն ինքն է մեր խնամող և բարերար տէ-
րը, մէկ է հաւատքնիս, և մէկ է յոյսերնիս, մէկ է մե-
կնութիւննիս. ըստ այնմ։ "Ամենայն խոնարհու-
"թեամբ և հեզութեամբ և երկայնմտութեամբ՝ ան-
"սալ միմեանց սիրով, փութալ պահել զմիաբանու-
"թիւն Հոգւոյն, յօդիւս խաղաղութեան, մի մարմին՝
"և մի Հոգի որպէս և կոչեցար ի մի յոյս կոչման ձե-
"րոյ։ Մի տէր, մի Հաւատ, մի մկրտութիւն, մի Աս-
"տուած և Հայր ամենեցուն, որ ի վերոյ ամենայնի,
"և ընդ ամենեսին և յամենեսին ի մեզ"։ Եփես. Դ.
2—3—4—5—6։ Գործ. Ա. 22։ Նոյն Հաւատը է որ Պետրոս
առաքեալը քրիստոնեայ ազգերը ջրոշելով կը զատե-
լով, ամենը մէկ պատուով և արժանութիւնով Հաւա-
տարիքիս բռնելով կը գրէ։ "Այլ դուք ազգ էք ընտ-
"իր, թագաւորութիւն, քահանայութիւն, ազգ
"սուրբ, ժողովուրդ սեփհական, որպէս զի զձեր առա-
"քինութիւնս նուիրիցէք այնմ, որ զձեզ ի խաւարէ
"կոչեաց յիւր սքանչելի լոյս։ Ա. Պետ. Բ. 9։

Ներկայիդ՝ Հայոց եկեղեցին համոզուած է աւե-
տարանական ճշմարտութենէն, որ ամեն ուղղափառ
քրիստոնեայներըս մէկ և ազգաւ լեզուաւ որոշուած
և բաժնուած ըլլան, Յիսուսի Քրիստոսի Հետ
միացեալ են իբրեւ մէկ անդամ և մէկ մարմին։ Ինչ
պէս նոյն ինքն մեր Յիսուս Քրիստոսը օրինակաւ ալ
յայտնեց՝ ինքզինքը որթի նմանցընելով. և ամեն ճըշ-
մարիտ Հաւատացեալները իրեն Հետ միացած լուռ
օրինակեալ ըսաւ։ "Ես եմ որթ և դուք ոստ, որ

» հաստատեալ է յին՝ և ես ինձ, նա բերէ զպատուէ
» յայժ. զի առանց իմ ոչինչ կարէք առնել »: Յօհ.
ժե. ե: Այս նմանութիւնով յայտնի ըրաւ մեր տէր
Յիսուս՝ որ ճշմարիտ ուղղափառ քրիստոնեայները և
բեն հետ միացած են. և Պօղոս առաքեալը առաւել
յայտնի կը գրէ: « Ոչ գիտէք եթէ մարմինք ձեր ան
» դամք են Քրիստոսի: Այլ դուք մարմին Քրիստոսի
» է՛ք, և անդամք անդամոց նորա: Օ՛ւ անդամք եմք
» մարմնոյ նորա, ի մարմնոյ նորա և յոսկերաց նորա »:
Ա. կորն. ԺԲ. 15: ԺԲ. 27: Եփես. Ե. 30:

Այս աւետարանական և առաքելական ճշմարիտ
խօսքերուն հակառակ չէ մի խաբուսիկ խօսքերով ը
սելնին: « Մեր ժողովքին անդամ լեզուները փրկու
» թիւն չունին՝ կորուստ են »: Ոչ նորայուր հակա
ռակ տուրք Աւետարանի դրութիւն ամենասխալ:
Ոչ բարեվիճ ընթերցող, քանի Քրիստոս կայ, քանի
ընդհանրական կենդանարար գլուխ ունի Եկեղեցին
Քրիստոսի, մէկ անդամ մը կամ մէկ մարմին մը քանի
գլուխ կրնայ ունենալ: Այս տեղս Պօղոս առաքելոյն
զարմացական հարցումը պարտաւորեցայ յիշելու և
կրկնելու. մի թէ Քրիստոս բաժնուած է զանազան
աղգերու: « Իակ արդ բաժանեա՞լ ինչ իցէ Քրիստոս »:
Ա. կորն. Ա. 13: Ուրեմն Պապական համբաւեալ
ները կ՛ըսեն: « Քրիստոս մեր մէջն է, և աղքայու
» թեան բանալիները մեր ձեռքն են. մեզի անդամ ե
» ղողները միայն երկնից աղքայութիւնը մտնալու կա
» րող կ՛ըլլան »: Ու Յունաց քարոզիչներն ալ կ՛ը
սեն: « Քրիստոս մեր մէջն է, Քրիստոսով կը խօսինք
» Աւետարանը կը քարոզենք, Աւետարանի ճշմարտու
» թիւնը մեզի միայն յայտնուած է. ուստի մեր ժո
» ղովքին անդամ լեզուները՝ փրկութիւն չունին և
» աղքայութեան ժառանգ չեն »:

Ինչ կ՛ըսեք հիմա. այս խօսքերը բան ամենայնի

հակառակ չէ՞ն Քրիստոսի սեաւն մերոյ վրկարար կամքին և ամենակեցոյց շնորհքներուն, որ բնաւ ապէ՛ս չեզս չորոշելով՝ ամէն ուղղափառ և ճշմարիտ հաւատացեալները իրեն սեպհական ոչխարները ճանչնալով. և ինքզինքը ամենուն վրայ մի միայն հովիւ քահանայապետով կը վճռէ։ "Ես եմ հովիւն քաջ, և ճանաչեմ զիման, և ճանաչիմ յիմոցն։ Որպէս գիտէ զիս հայրն, գիտեմ և ես զհայրն. և զանձն իմ դնեմ ի վերայ ոչխարացն։ Ունիմք իմ ձայնի իմում լսեն, և ես ճանաչեմ զնոսա, և զկնի իմ գան, և ես տամ նոցա զկեանն յաւիտենական և մի կորիցեն յաւիտեան"։ Յով. ժ. 14—15—27։ Ի՞նչ ըսելք. Քրիստոս կ'ըսէ ես պիտի տամ յաւիտենական կեանքը. ըսել է որ՝ իմ փրկութեան շնորհքներուս պիտի գանաք երկնից արքայութեան յաւիտենական կեանքը և երանաւէտ փառքը։ Նայ երկու կոչմէն եկած ձայները ի՞նչ ազդեցութիւն կրնան պարզամիտներուն։ Այս հարցումը կը ջանան ընել, որ իրենց ժողովքներուն անդամ չեղողը՝ իրենց հետ հոգեւոր հաղորդակցութիւն չընողը փրկութիւն չունի, և չէ կարող երկնից արքայութեան փառքերը վայելել։

Տե՛ս բարեմիտ ընթերցող, ասոնց վրայքը ամէն քրիստոնեայ ազգերէն ժողովուրդ գոնէ և առանձ չէ միայն, այլ Քրիստոսի փրկչին մերոյ կամաւոր չարաչար տրդեամբը՝ ընդհանուր քրիստոնէից վրայ ունեցած ընդհանուր հոգեւոր հովութեան իշխանութեանը արժանութիւնը սեպհականելու կարծիք կրնան ամենուն։ Այլ երբոր կը կարդաս տուրբ Աստուածային այս տեղը՝ պիտի ըսես որ, առանձնութիւն խորհրդոյ համաձայնութիւնը մեր կանխապէս տեր Աստուած փրկչին կանխատես տեսնելով և գիտնալով ոչխարաց պատուհասով ուղիղ և ճշմարիտ հաւատով միայն իրեն ճշմարտութեանը հետեւող քրիստո-

ներայնեերը ։ « Յայնժամ թէ ոք ասիցէ ձեզ՝ ահաւա-
» սիկ աստ է քրիստոսն կամ անդ , մի հաւատայցէք ։
» Նայց դուք զգոյշ լերուք՝ յառաջագոյն ասացի ձեզ
» զամենայն » ։ Մատ. ԻԴ. 23 ։ Մարկ. ԺԳ. 23 ։

Այս սեղս յիշէ Պօղոս առաքեալն մարգարէու-
թիւնը , և ըսէ մօգդ որ հարկաւ այն երանելւոյն
մարգարէութիւնն ալ պիտի կատարուի . և ահա մէկ
տեսակին ալ սկզբնաւորութիւնը եղաւ վերջատանե-
րուդ գարէն . արդ՝ տեսանիք ուր պիտի վախճան տա-
նէ այն սրբազան առաքելոյն մարգարէութիւնը , որ
յայտնեց Տիմոթէոս սիրելի աշակերտին ։ « Գիտզի ե-
» կեսցէ ժամանակ զի ողջմտութեան վարդապետու-
» թեան ոչ անասցեն , այլ ըստ իւրաքանչիւր ցան-
» կութեանց կուտեսցեն իւրեանց վարդապետս՝ ըստ
» մարմանջելոյ լսելեաց իւրեանց » ։ Բ. Տիմ. Դ. 3—4 ։

Ապաքէն տեսար մի ըստ վկայութեանն Պետրոսի՝
« Ինչ մարդոյ հաստատեալ է՝ ի ինամս չարին՝ ի մահ
» կործանել իւրմէ » ։ Այսորոյ մարդիկ դիւրաւ կը
խաբուին՝ եթէ աչաց տեսողական և եթէ ականջաց
լսողական կարողութիւնովին՝ չընտրելով ներքին հո-
գեւոր և բարեխորհուրդ ուշադրութեամբ չարը բա-
րիէն՝ սուտը ճշմարիտէն՝ անիրաւութիւնը արդարու-
թենէն չեն զրոշեր , այլ միայն պզալի ազդեցութեանց
հետեւելով՝ մտախոհ կ՚ըլլան և կամքերնին ալ կու-
տան թերահաւատութեան և չար ու վատ գործքե-
րու . ասով կ՚ըլլան չար մարդ կամ չար քրիստոնեայ ։
Իսկ բարի մարդն և բարի քրիստոնեային՝ պիտի խորչի
հեռանայ գայթակղեցուցիչ և մոլորեցուցիչ խօսքերէն
և խարդախամիտ խորհրդատու մարդիկներէն , իրեն
մտացը առջևէն մերժելով մոլորական և մոլեկան խոր-
հուրդները լուսով իմաստութեան Յիսուսի Քրիստո-
սի , և մտքին իմացական զօրութիւնը արթուն և զու-
արթուն պահելով ։ Ասոր համար կը խնդրե Տէրհաւք

աուրբ Վարդապետին Յիսուսի Քրիստոսի իմաստու-
թեան ընտիրքը ազօթիւք հայցելով։ “Իմաստութիւն
» Հոր Յիսուս տուր ինձ իմաստութիւն զբարիս խոր-
» հիլ և խօսիլ և գործել առաջի քո յամենայն ժամ.
» ի քեզ խորհրդոց՝ ի բանից և ի գործոց փրկեա զիս »։

Նրբոր Պօղոս արբազան առաքեալը իմացաւ, որ հռովմայեցի քրիստոնեայներուն մէջ եկեր մտեր են անանկ մարդիկներ, որոնք արուարքուստ դուրսէն կ’ե-
ղեւցրնեն ինքզինքնին քարոզիչ աւետարանի և առա-
քելական պաշտօնեայ, բայց ի ներքուստ չար խոր-
հուրդ ունին քրիստոնեայներուն մէջ հերձուածողու-
թիւն, երկպառակութիւն և բաժանումն ձգելու, նորագիւտ վարդապետութիւններով գայթակղութիւն տալու անմեղ պարզամիտներուն, և անոնք իրենց հե-
տեւող ժողովուրդ սեպհականելու համար. անանկները գիտցիք որ Յիսուսի Քրիստոսի ծառայ չեն, այլ ի-
րենց կամացը կը ծառայեն, և անուշիկ խօսքերով և օրհնութիւններով պարզամիտները կը խաբեն. վասնորոյ յորդորանօք գրեց նոյն աուրբ առաքեալը այս թուղթը։
“Աղաչեմ զձեզ եղբարք, գիտել զայնպիսիսն՝ որ հերձ-
» ուածս և գայթակղութիւնս առնիցեն արուարքոյ վար-
» դապետութեանն՝ զոր դուքն ուսայք, և խորշեցարուք
» ի նոցանէ։ Ո՛ի այնպիսիքն սեռաւն մերում Քրիստոսի
» ոչ ծառայեն, այլ իւրեանց որովայնի. և քաղցրաբա-
» նութեամբ և օրհնութեամբ պատրեն զսիրտս անմե-
» ղաց »։ Հռով. ԺԶ. 17—18։ Այս աուն խրատը գը-
տելու վախճանական պատճառը այս է, որ կ’ըսէ. Թէ-
պէտ ձի հռովմայեցի քրիստոնեայք, ես ձեր վրայ ուրախ
եմ. բայց կը կամիմ որ դուք իմաստուն ըլլաք՝ բարին
ընտրելու և չարէն հեռի մնալու. որովհետև պիտի
անուանիք բարի մարդ և բարի քրիստոնեայ։ “Այս արդ՝
» ի ձեզ ուրախ եմ, բայց կամիմ զձեզ իմաստուն լի-
» նել ի բարիս՝ և անմեղս ի չարիս »։ Առ. ԺԶ. 19։

Վասն որ սասանկ համակոր մոլութեանցը երբ կը սեսնան ուղղափառ քարի քրիստոնեայներուն առաքելական ջերմեռանդութիւնը և քարեպաշտական արարողութիւնները և գործքերը, ծաղր ընելով աւելորդապաշտութիւն կ'անուանեն. ինչպէս բողոքականց քարոզիչներուն գրուածներէն և խօսքերէն կ'իմանանք ու կը լսենք: Սասանկ մոլի ցնորական խօսքերէն յայտնի կ'երեւայ իրենց Թերեհաւատութիւնը և քարեպաշտութիւնը և հակառակ քրիստոնէական քարեպաշտութեան ունեցած խորհուրդնին:

Սյսր օրինակը կը կարդանք տուրբ Սհեսարացին մէջ Յուդային ըրած չար խորհրդածութիւնը այն Սա րիամ անուն ջերմեռանդ կնոջ ըրած քարեպաշտութեանը վրայով, որ աղնիւ և մեծագին իւղով օծեց Յիսուսի վրիչքին մերկ աստուածային երկրպագելու ոտքը, և Յիսուս ալ ընդունեց այն կնոջը քարեպաշտական ջերմեռանդութիւնը, բայց Յուդային չարաչոժար արծաթասէր կամքին աւելորդապաշտութիւն և վատնում իւղոյն համարուեցաւ վասնորոյ համարձակեցաւ ըսելաւ "Սյդը ոչ իւղ այդ վաճառեցաւ "երեք հարիւր դեհնարի և տուաւ աղքատաց": Սյնանկ առաջարկութիւն մը ըրաւ այն բազմութեանը մէջ որ Յիսուսի աշակերտներէն ոմանք Յուդայի արծաթասէր սէր սրտին չարութիւնը չգիտնալով՝ ձայնակից եղան անոր ու ըսին, ինչպէս գրուած է. "Սյբրև տեսին աշակերտքն բարկացան՝ և ասեն, ընդէր է կորուստ "այդ իւղոյդ": Մաթ. ԻԶ. 8:

Տեսանք, որ չարը իր սրտին չարութիւնը ծածկելով չատն ալ կը թելադրէ իրեն հետ ձայնակից խորհրդակից ընելու: Թէպէտ Յուդան՝ Յիսուսի երկրպագելու տեսիլը ծանրագին իւղով օծուիլը աւելորդապաշտութեան գործ մը և իւղոյն մեծագին արժողութեանը կորուստ համարեցաւ, բայց սէր Յիսուս գովեց ըն

գտնեց այն կնոջը ջերմեռանդն և բարեպաշտական գործը և արարողութիւնը ըսելով. » Ով ի աշխատ » առնէք զկինդ, գործ մի բարի գործեաց դա յիս: » Մտթ. ԻԶ. 8. 10: Յօհ. ԺԲ. 5:

Թէպէտ հիմակ ալ բողոքական քարոզիչները արհամարհեն բարի գրիստոնեայներուն ըրած ջերմեռանդութիւնը և կրօնական բարեպաշտութիւնը, որոնք որ Աստուծոյ և Աստուածայնոյ կը մատուցանեն: Այլ Աստուած բնաւ չարհամարհեր ջերմեռանդ սիրով և բեն ամենակալ ուժովութեանը հաւատացեալներուն նուիրուած արտաքին բարեպաշտական գործքերը և արարողութիւնները, թէ և սուրբ գիրքերու մէջ Աստղարէից և Աստեղաց բերնով հրամայուած ալ չըլլայ, Աստուած սիրտերուն մէջ գտնուած աստուածսիրութեան բարեխորհուրդ զգացմունքներուն նայելով կ'ընդունի այն ամէն ջերմեռանդութիւնը՝ որ Քէ բանիւ և Քէ գործով եղած ըլլան:

Այս տեղ այն իւզաբեր կանանց արարողութիւնը օրինակ ըլլայ մեզի, որ կը վախապէին ՚ի գործ դնել Յիսուսի փրկարար մարմնոյն վրայ, ինչպէս սուրբ Աւետարանը կը պատմէ, բէրեցին Յիսուսի ինքնակալ յարութեան աւետալուր խոսումնքը, որ յառաջապէս քարոզած էր "Անանեայց է որպէս մարդոյ ՚ի ձեռս » ուրա մարդկան, և սպանցեն զնա, և յերկրի աւուր » յարիցէ: Մտթ. ԺԷ. 22: Այլ ինքնայորդոր սասկի ջերմեռանդութեամբ յաւիտենական անմահ կենդանութեան տէր Յիսուս Քրիստոսը երթալ ծեալու համար խունկ և օծելիք պատրաստեցին՝ բէրեցի ամեն ինքնաբուխ անմահութիւնը ինչպէս կը պրկաւետարանիչն Մարկոս. "Եւ երբեք էանց շաբաթն » Մարիամ Մագդաղենացի, և Մարիամ Յակոբոյ, և » Սողոմէ՝ գոպան պատրաստեցին խունկս զի եկեսցեն » և օծցեն զնա »: ԺԶ. 1:

Իւղաբեր կանանց ահիւ և երկիւղիւ լցած պատճառութիւնը և արարողութիւնը աւելորդ պաշտօնի մը անշուշտ պիտի երեւնար, որովհետեւ կենդանին և անմահն ընդ իշխանութեամբ մահու գրաւեալ և մեռեալ համարեցան. ինչպէս հրեշտակն ալ կը զարթուցանէր առնոյ մխոքը ըսելով, «Ո՛ւր խնդրէք զկենդանին ընդ մեռեալս» Ղ–ի. ԻԴ. 5։ Նայէ մէյմը ուրչափ հաճելի եղաւ Յիսուսի Յրիստոսի փրկչին մեղոյ այս իւղաբեր կանանց բարեպաշտական արարողութիւնը, որ մինչեւ անգամ տուրբ յարութեան աւետումը առին հրեշտակներէն, և Յիսուսի մեռեալ աշակերտացն աւանդեցին, որով և ամէն հաւատացեալներուն. և մանաւանդ Յիսուսը տեսնալու ու անոր երանաւէտ ոտքերուն ձայնը լսելու արժանի եղան և անոր առաւածային ոտքերը համբուրեցին. Մտթ. ԻԸ. 9։ Ղ–ի. ԻԴ. 9։

Տեսանք որ բարեպաշտ սրտէ բղխած ջերմեռանդութեան գործ մը կամ արարողութիւն մը, որ առաւած և առ Աստուածայինն կը վերաբերի, Աստուծոյ հաճելի է, և ոչ թէ աւելորդապաշտութիւն, ինչպէս վերոյիշեալ վկայութիւնները հաստատեցին.

ԳԼՈՒԽ Գ.

Ապագէն հարկ կը համարիմ ինձ այս տեղ աւետարանական ճշմարտութիւն անաղօտ և պայծառ լուսով քննել և իմանալ թէ՝ բողբոջական քարոզիչ անուանեալները, որունք աւետարանին Յրիստոսի քարոզիչ եմ կ'ըսեն և առաքելական պաշտօնեայ կը ձեւանան, և այս մեծ անունով կը պարծենան, և կ'ուզեն ամէն քրիստոնեայ ազգերուն մէջէն իրենց ժողովուրդ և հետեւող

ներ ունենալ, արդեօք սուրբ Կոռնեղիոսին հա
մեմատ գործք և վարք ունի՞ն և առաքելական է վա
րած պաշտօնին, համեմատելով քննենք այս տեզս։

Սուրբ Կոռնեղիոսն կը սորվի մեզ, որ մեր տէր Յի
սուսը կը հրամայէ իւրեն աշակերտներուն և առաք
եալներուն Թէ՝ բնաւ և չունենան աշխարհասիրու
թիւն՝ իսպառ մերժելով և հեռանալով աշխարհային
փառքերէն և մեծութիւններէն, որոշուած ըլլան
աշխարհականներէն կուսակրօնութեան հրեշտակային
վիճակի մէջ գտնուելով. ըստ այնմ, "Նէթէ ոք գայ
" առ իս՝ և ոչ ատեայ զհայր իւր և զմայր և զկին և
" զորդիս և զեղբարս և զքոյր, նաև զանձն իւր, ոչ
" կարէ իմ աշակերտ լինիլ" . Ղ՟ւկ. ԺԴ. 26։ Մտթ. ԺԹ
22։ Ըստ համան Պետրոս առաքեալը ամէն աշակերտ
ներուն և առաքեալներուն կողմանէ խոստովանեցաւ
ըսելով. "Ահա մեք թողաք զամենայն, և եկաք զկնէ
" քո" . Մրկ. Ժ. 28։ Ղ՟ւկ. ԺԸ. 28։

Ահա այս երանելի առաքեալներէն Կրիսոստոմ կա
մաւ յամենայնէ հրաժարեալ ըստ հրամանի տեառն
Յիսուսի՝ միայն կը պարապէին և կը ծառայէին Կռե
տարանի ծառայութեան և առաքելական մեծամեծ
պաշտաման, կուսակրօնութեան վիճակին մէջ իրենց
անձը ալքայութեան սիրով, և հնազանդելով հրամա
նին Կրիսոստոմի բարոյական ներքինի ըրած էին, ըստ
այնմ. "Կա՛ն են ներքինիք՝ որ զանձինս իւրեանց արա
" րին ներքինիս վասն արքայութեան երկնից" Մտթ.
ԺԹ. 12։ Կամ այնուհետեւ չեմք լսած և չեմք կար
դացած ոչ սուրբ գրքին մէջ և ոչ ալ եկեղեցական
պատմութենէն մէջ, որ առաքեալներէն մէկը ունե
ցաւ կին կամ որդիք և կամ թոռունք, և կամ այս ոք
առաքեալն կինը մեռաւ և նորէն կին մը առաւ։ Ա
րեմն մեկը որ կ'ըսէ, ես Կռետարանի քարոզիչ եմ, և
առաքելական պաշտօն ունիմ, և կամաւը չհրաժարիր

կին ունենալէն և որդիս յաւրուցանելէն, և եթէ կինը մեռանի՝ վերստին կ'ամուսնանայ ընդ այլում օրիորդի. վերջապէս առանց կնոջ չկարենը և չկամիր ճնալ, այն պիսին ոչ Աբեսարանի քարոզիչ է, և ոչ ալ առաքելական պաշտօնեայ. ինչպէս որ կը սեռնաս բողոքական քարոզիչները, որ Աբեսարանի քարոզիչ եմք կ'ըսեն և առաքելական պաշտօն ունիմք, բայց չեն ընդունիր կուսակրօնութիւնը և չեն յանձնառու ըլլար իրենց անձանցը վրայ Քրիստոսի այն անժխտելի հրամանը ցուցանել գործով: Ինանկ է նէ եկիր, համոզուէ, ըսէ, որ ատոնք անուանով միայն Աբեսարանի քարոզիչ են և դուրսէն առաքելական պաշտօնեայ կը ձեւանան բայց արտովնին և կամքովնին իրենց մարմնական և զգայական բաղձանքներուն կը ծառայեն, հակառակ աբեսարանական և առաքելական ծառայութեան: Յիշենք այս տեղս մեր տէր Յիսուսի Քրիստոսի բացատական հրամանը. "Ով որ կարէ երկուց տերանց ծա"ռայել" Մտթ. Զ. 24:

Ընանկներուն համար չէր որ Պօղոս առաքեալը կը րեց հռովմայեցի քրիստոնեայներուն, որ ամանկներէն զգուշանան. և գիտնան որ խարդախելու և խաբելու համար Աբեսարանի քարոզութեան և առաքելական պաշտօնի անուն առեր են վրանին, բայց վարքերնին և գործքերնին բնաւ համեմատ չէ Աբեսարանի և առաքելական պաշտօնի. "Ո՛վ այնպիսիքն տեառն մե"րոյ Քրիստոսի ոչ ծառայեն, այլ իւրեանց որովայ"նի, և քաղցրաբանութեամբ և օրհնութեամբ պատ"րեն զսիրտս անմեղաց". Հռով. ԺԶ. 18:

Ընայ կուսակրօնութեան վիճակին մէջ բարի վարքալ իրենց կեանքերնուն ընթացքը արդութեամբ ճանչնալները երկնից արքայութեան մէջ միջոցի մեծ փառաց արժանի ըլլալնին և միքան համարձակութիւն ունենալնին կ'ուզես իմանալ: Նայ Յովհաննու աւետա

*բանչին Յայտնութեան տուրբ գիւրքը կարդայ, ուր աեղ այսպէս գրուած է. " Եւ լուայ զձայն յերկնից՝ որ-
» պէս զձայն ջուրց բազմաց՝ և ձայն որոտման մեծի.
» և լուայ իբրեւ զձայն գ.քնարահարաց, զի հար-
» կանէին զքնարս իւրեանց: Եւ երգէին զերգս
» նորա առաջի աթոռոյն . . . և ոչ ոք կարէ գիտել
» զերգս նոցա՝ բայց միայն հարիւր քառասուն և չորս
» հազարքն, որք ազատեալ էին յերկրէ: Սոքա են՝ որք
» ընդ կանայս ոչ խառնակեցան, և են կուսանք. սոքա
» զկնի երթան գառինն՝ ուր և երթիցէ. սոքա ընտրե-
» ցան ՚ի մարդկանէ առաջի Աստուծոյ և գառինն ».
Յայտ. ԺԴ. 2—3—4:*

Տեսանք որ արքայական առաքելոց և աշակերտաց իւրոց հրամայեց Յիսուս Քրիստոս փրկչենիս՝ որ ամէն բանէ հրաժարին, այսինքն՝ հօրէ՝ մօրէ՝ կնոջէ՝ որդիներէ՝ եղբօրմէ և քրոջմէ և անձնական մարմնաւոր բաղձանքներէ, և սաւանիւղ լրեն եռեւէն երթան, և ով որ այս աշխարհային զուարճութիւնները և զբաղմունքները և մարմնաւոր կամաց ծառայութիւնը չը ձըպէր, և ամէն մէկը լրեն նեղութեան և համբերութեան խաչը չառնէր, և իմ եռեւէս չիպար՝ ինձի աշակերտ չի կրնար ըլլալ: Ղ-կ. ԺԴ. 26—27: Մաթ. ԺԹ. 22:

Այս հրամանը կատարելով ամէն առաքեալները, Պետրոս առաքեալն ալ անոնց բերնէն զուրկեց. Տէր, ահա մենք թողուցինք ամէնքը և քեզի հետեւեցանք: Մրկ. Ժ.28: Ղ-կ, ԺԸ. 28-29:

Հիմակ բաղդատէ այս խօսքերս Յայտնութեան մէջէն լսած խօսքերուդ հետը. ձի պիտի ըլլան այն Աստուծոյ գառին Յիսուսի Քրիստոսի եռեւէն գացողները. ահա տուրբ գիրքը բացայայտ լսաւ: " Սոքա են, որք ընդ կանայս ոչ խառնակեցան, և են կուսանք. սոքա զկնի երթան գառինն՝ ուր և երթիցէ.

» սքա ընտրեցան ՚ի մարդկանէ առաջի Աստուծոյ և
» պատուին : Ուրեմն ազէկ համոզուեցայ մի , որ աւե-
տարանի քարոզիչ ըլլոլները և առաքելական պաշտօնէ
մէջ գտնուողները հարկաւ կուսակրօնութիւն պիտի
ունենան ամէն բանէ հրաժարելով :

Այս տեղս մէկ ձեռնարկութիւն մը լրէ . ամենե-
սուն՝ որք են տեղը Աւետարանի քարոզիչ՝ և առա-
քելական ունին պաշտօն և չեն կուսակրօն , հակա
ռակ հրամանին Քրիստոսի են բանք և գործք նոցին :
Ուրդ՝ նորազանդ անուանեալներուն քարոզիչները կը
պարծենան , որ Աւետարանի քարոզիչ են և առաքե-
լական պաշտօն ունին , բայց բնաւ չեն հրաժարիր
յաշխարհայնոց և կը մերժեն կուսակրօնութեան վի-
ճակը . ապա ուրեմն վարք և գործք նոցա են բոլո-
վենայնի հակառակ և անհամեմատ հրամանաց և կա-
մաց տեառն Յիսուսի Քրիստոսի :

Վհատեմ , որ մտաքդ կը խորհիս հիմակ անշուշտ ,
ինչպէս Պօղոս առաքելոյն ժամանակը Կորնթացւոց
եկեղեցւոյն բարեպաշտ քրիստոնեայները խորհրդա-
ծութիւն կ՚ընէին , եթէ կուսակրօնութեան վիճակը
պիտենք , այն երկնից արքայութեան մէջ պատրաս-
տուած մեծամեծ փառաց և երանութեան յաւուրկ
պատկ ունի . բայց երկրի վրայ աւետարանական քա-
րոզութեան և առաքելական պաշտաման ինչ օգուտ
և ինչ նպաստ ունի : Ասոր Պօղոս արքեպիսկոպոսն առա-
քեալը անոնց տարակուսութիւնը լուծելով կը գրէ :
« Այլ կամիմ զձեզ անհոգս լինել . զի որ անկինն է՝
» հոգայ զտեառն , թէ որպէս հաճոյ լինի տեառն .
» և որ կանամբինն է՝ հոգայ զաշխարհիս , թէ որպէս
» հաճոյ լինի կնոջ իւրում » : Ա . Կորնթ . է . 32—33 :

Արդեօք ըսել կ՚ուզէ երանելի այս արքեպիսկոպոսն առա-
քեալը թէ ամուսնացեալները աշխարհի գործունէ-
ներէ անհոգ , և մարմնաւոր չարաչարութիւն բաղձանքնե-

րե ազատ չեն ձեռը. որով միայն ազատ և անպըտուղ աստուածային պաշտամունքներուն ծառայելու կարողանան։ Ասոր համար փրկիչն մեր տէր Յիսուս Քրիստոս կուսակրօնութիւնը սահմանեց առաւել Աւետարանի քարոզիչներուն և առաքելական պաշտօն վարողներուն համար, որ անպըտուղ մտօք ծառայեն իրենց Հոգեւոր պաշտաման, և երկնից մէջ ալ իրենց կուսակրօնութենէ և Հոգեւոր վաստակնուն փառաց պսակը ընդունին։

Ուրեմն ի՞նչ ըսենք. այս սուրբ գիրքերը չե՞ն կարդացեր այն նորաղանդ բողոքական անունով պըղտոզ ընդ ծով և ընդ ցամաք, ընդ քաղաքս և ընդ գիւղս բէս նորօրինակ քարոզիչները։ Ա՛յո կը կարդան՝ բայց ուզածնուն պէս ալ կը մեկնեն սուրբ գիրքը. անոր մէջ պարունակուած ամենապարզ միտքը մէկդի կը ձգեն իրենց կամքին յարմար մեկնութիւններ տալով։ Ինչպէս երբ բուն իսկ աւետարանական ճշմարտութիւնը ճանաչող և Յիսուսի Քրիստոսի իմաստութեան լուսովը լուսաւորեալ ուղղափառները կը հարցունեն. այս ի՞նչ ընթացք է, այս ի՞նչ վարք է, որ ձեր վրայ ունիք. ամէնքդ մէյմէկ աշխարհական հարուստ վաճառականի կենցաղավարութիւն ունիք. աշխարհի վայելչութենէն բնաւ հեռացած չէք. անկին մնալ չէք ուզեր. ապահով տեղուանք ծանրապին վարձքով գեղեցկաշէն տուներու մէջ բնակիլ կը խնդրէք, այս է ի՞ր առաքելութեան պաշտօնին և աւետարանական քարոզչութեան ընթացքը. այս է ի՞ր ձեր հոգեւոր ծառայութեան վիճակը։

Ա՛խտէք ի՞ր սիրելի ընթերցողք. ի՞նչ պատասխանի կուտան այս կուսակրօնութիւնը մերժողները։ Ասկից Պօղոս առաքեալն գրած թուղթը կը յիշեցունեն, և իրենց հետեւողներուն անգամ աշխարհաբառը գոյ ընել տուած են և կ'ըսեն. Պօղոս առաքեալը կը գրէ։ Ձառատարիմ է խօսքս. Թէ որ մեկը եպիսկոպոսու-

Թեան կը ցանկայ՝ բարի գործի կը ցանկայ. բայց պարտ է եպիսկոպոսին անարատ ըլլալ, մեկ կնոջ այր ևայլն։ “ Հաւատարիմ է բանս. եթէ ոք եպիսկոպո-
” սութեան ցանկայ՝ բարւոյ գործոյ ցանկայ։ Պարտ է
” եպիսկոպոսին անարատ լինել, միոյ կնոջ այր ևայլն ”։
Ա. Տիմ. գ. 1—2։

Կը տեսնայ ասոր վերծանութիւնը ինչ աղէկ կ’ըն-
նեն. և իրենց իմացականութեանը աոջեւ ինչպէս
հաստատուն կը նկարագրեն այս խօսքին գաղափարը.
“ Միոյ կնոջ այր ”։ Ինաւ չեն ուզեր իմանալ, եթէ
կուսակրօն պաշտօնեայն Քրիստոսի և կուսակրօնու-
թեան ջատագով երանելին Պօղոս կուսակրօնութեան
վրայով ինչ պատճառաւ այն ժամանակը կը գրէ այս
թուղթը այն իրեն սիրելի աշակերտին Տիմոթէոսի,
որ սա ևս էր կուսակրօն պաշտօնեայ Քրիստոսի։ Այն-
թէ այս երանելին Պօղոս այս մասին Քրիստոսի հրա-
մանը մերժելու համար գրեց, որ իրեն անձին վրայ
կուսակրօնութեան ընտրեալը կը փայլէր. վանորայ կ’ը-
սէր։ “ Կամիմ եթէ ամենայն մարդ լինէր իբրև զիս ”։
Ա. կորն. է. 7։ Նա կամ թէ մեկ տեղ մը համեմատու-
սութը Աստուածային կը խօսէր, և միւս տեղը հակա-
ռակ Աստուածային կը գրէր. ոչ բնաւ. այլ միշտ սուրբ
Աստուածով կը պարծենար, և սուրբ Աստուածին
համեմատ կը քարոզէր, վանորայ իրաւամբ կ’ըսէր։
“ Յուցանեմ ձեզ եղբարք զԱստուածն՝ որ աւետա-
” րանեցաւ մինէն ”։ Գաղ. Ա. 11։

Ուրեմն Աստուածային քարոզած կուսակրօնութեան
համեմատ սոխակեցաւ այն նամակը գրելու առաքեա-
լը. որովհետեւ Տիմոթէոս աշակերտը անշուշտ գիր
գրած էր իրեն, և նոյն գրին պատասխանն էր։ “ Նէթէ
” ոք եպիսկոպոսութեան ցանկայ՝ բարւոյ գործոյ ցան-
” կայ։ Պարտ է եպիսկոպոսին անարատ լինել, միոյ
” կնոջ այր ևայլն ”։ Յարկաւ գրած պիտի ըլլայ Տի-

մելիէոս՝ որ նորահաստատ հաւատացեալներուն մէջէն ցանկացողներ կան, յօժարութիւն ունին եպիսկոպոսական գործքերու մէջ գտնուելու, այցելու խնամաձու ըլլալու հաւատացեալներուն, մանաւանդ քրիստոնէական կրթութեան ուսուցիչ ըլլալով՝ անոնց վերայ հոգեւորապէս հսկել և հոգալ, որ է գործ եպիսկոպոսի։ Այեցաւ Պօղոս առաքեալը որ առանց բաղձանքը բարի է, բայց այս հաւատացեալները արդէն նոր են, մէջերնին կուսակրօնութիւն դեռ հաստատուած չէ, ամէնք ի հեթանոսութենէ եկեալ են, և ըստ սովորութեան իւրեանց ունին բազմակնութիւն, և կամ մէկը ձգելով և այլ միւս կին առած կ'ըլլան՝ և կամ մեռանելով առաջին կինն՝ վերստին ամուսնացած կ'ըլլան, նոյնպէս և ի հրէից դարձողները ունէին իրենց մէջը սովորութիւն արձակելու ունեցած կիներնին, և զայլ կին առնելու։ Տես. ԺԹ. 7։ Ու կամ կը գտնուէր մէջերնին որ կինը մեռած ըլլալով վերստին ամուսնացած ըլլային. առանց բոլորը կուսակրօնութեան վճռակին ըստ ամենայնի հակառակ էր։ Այդ Պօղոս առաքեալը կամեցաւ, որ նորահաստատ քրիստոնէից մէջէն այս եպիսկոպոսութեան ցանկացողներուն գոնէ ժամանակին յարմար առժամանակ եայ և ոչ մշտնջենաւոր անօրէնութիւն մը ընէ, որ հակառակ ջըլլայ սուրբ Աւետարանին, այլ մերձաւոր համարուի կուսակրօնութեան վճռակին, և այսպէս վճռելով սրբազան առաքեալը նորօրինակ օրէնք մը չհաստատեր, իբր թէ եկեղեցւոյ հոգեւոր պաշտօնեայները անպատճառ կին մը ունենան, այլ միայն ժամանակին յարմար ժուժկալ և անարատ ըլլալու պատուէր մը կուտայ, և ոչ թէ բացարձակ հրաման մը. ինչպէս ընդարձակ կը գրէ Ալեքսեան Նաւ ժ։ Վ յանորոյ կը պատուիրէ։ "Պարտ է եպիսկոպոսին ա "նարատ լինել, միոյ կնոջ այր"։

Նկատել է հետեւեալը, որ եպիսկոպոսները անպատճառ կին պիտի ունենան, այլ կը հետեւի որ բազմակին եղողները. անարատ չեն և ժուժկալութիւն չեն ունեցեր, և կրկին կինը ձգելով՝ և այլ կին առնողներն ալ նոյնպէս են, և ևս կինը մեռած և վերստին կարգուածը նոյնպէս չէ ունեցեր ժուժկալութիւն և չունի։ Յայտնի է որ՝ թէպէտ նեղ առիթներու մէջ ալ ըլլայ եկեղեցին՝ և կարօտ եպիսկոպոսներու, և ցանկացող ալ գտնուի եպիսկոպոս ըլլալու՝ հրաման չի տար առաքեալը եպիսկոպոս ընելու և այցելու եկեղեցւոյն։

Նման տեսար մի՝ բողոքական քարոզիչները առաքեալական պաշտօն ունինք կ՚ըսեն, Աւետարանի քարոզիչ ենք կ՚ըսեն, բայց Աւետարանի հրամանին և առաքելական պաշտօնի արժանաւորութեան համեմատ ոչ կուսակրօնութիւն և ոչ ժուժկալութիւն ունին, այլ կանամբի են իբրեւ զաշխարհականս, և ոչ հրաժարին ի կանանց իւրեանց, թէ և մեռանիցի, և շուտափոյթ զայլ կին ածելու կը հետեւին։

Ինչ սուրբ գիրքերը կը կարդանք կ՚ըսեն և կը խրատեն ըսելով. պէտք է սուրբ գիրքերը քննել։ «Քննեցէք գիրս»։ Յօհ. Ե. 39։ Այլ ինչո՞ւ իրենք իրենց համար չեն քններ սուրբ գիրքը. կարծեմ որ անշուշտ աշխարհասիրութեան հոգիով կը քննեն՝ և չեն իմանար. թէ որ սուրբ գիրքը հոգիով քննէին՝ ատոր պէս ալ ևս շատ իրենց հաւատոյ հոգեւոր թերութիւնները և մոլորեալ ընթացքին կ՚ուղղէին։

Ինչ կ՚ըսես սիրելի ընթերցող, այն յայտնի ապրեստամբութիւնը Պօղոս առաքեալին Դեմաս անուն աշակերտին չի՞ն մի կարդացեր, որուն համար գանկաս կ՚ընէ նոյն սրբազան առաքեալը գրելով Տիմոթէոս աշակերտին, կ՚ըսէ. շուտով ինծի գալու փոյթ ունեցիր. վասն զի Դեմասը ինծի թողուց և աշխարհը սիրեց ու գնաց ի Թեսաղոնիկէ։ «Գուցէ

» գալ առ իս վաղվաղակի. ղն Ղեմաս եթող զիս, և » սիրեաց զաշխարհս և գնաց ՚ի Թեսաղոնիկէ »: Բ. Տիմ. Դ. 9: Ի՞նչ ըսել կ՚ուզե երանելի առաքեալը. ճիշ էր այն Ղեմասը. իրեն սիրելի աշակերտն էր. այնչափ կը սիրէր, որ Ղուկաս աւետարանչին հետ ասոր ալ ողջոյն կը գրէր. անոր համար կը գրէր Կողոսացւոց եկեղեցւոյն: «Ողջոյն տայ ձեզ Ղուկաս » բժիշկ և սիրելի, և Ղեմաս »: Կող. Դ. 14: Ի՞նչ փիլեմոն անուն իրեն գործակիցն ալ կը գրէր: «Ողջոյն » տայ ձեզ... և Ղեմաս և Ղուկաս գործակից իմ »: Փիլէմ. Ա. 24:

Տեսանք մի Ղեմասը ճիշ է եղեր. Պօղոս առաքելոյն աշակերտը, առաքելութեան գործակից և Ջեւռանին պաշտօնեայ. բայց սիրեց աշխարհը, աշխարհասէր եղաւ. ըսել է որ՝ աշխարհականի վարք ստացաւ. վասն զի «սիրեաց զաշխարհս» ըսելով՝ կ՚իմացընէ երանելին Պօղոս իրեն Ղեմաս աշակերտին յառաջագոյն սիրովն Ջաւռնոյ կուսակրօնութիւն ունենալը. բայց յետոյ աշխարհի սիրով անոր մարմնաւոր ցանկութեան հետեւիլը:

Կարգա՛ աշխարհի սիրոյ սահմանը, որ կուտայ սրբ. բազան աւետարանիչն Յովհաննէս գրելով այսպէս: «Ընթէ ոք սիրէ զաշխարհս, ոչ է ՚ի նմա սէր Հօր. զի » ամենայն որ ինչ յաշխարհի է՝ ցանկութիւն է մարմ » նոյ. և ցանկութիւն է աչաց և ամբարտաւանու » թիւն աստի կենացս. որ ոչ է առ ՚ի Հօրէ՝ այլ յաշ » խարհէ աստի»: Ա. Յով. Բ. 16:

Տեսա՛ ողբալին Ղեմասը, որ երբ աշխարհի ջաղրգիւ սիրոյն հետեւեցաւ՝ Թողուց իր վարդապետը, հրաժարեցաւ իր հոգեւոր պաշտօնէն և մերժեց իրեն եկեղեցին և գնաց, ուր. ՚ի Թեսաղոնիկէ, որ այն ժամանակը բազմամարդ հարուստ քաղաքներուն մէկն էր, ըսել կ՚ուզէ որ Թողուց իրեն առաքելութեան հոգե-

եւ որ պաշտօնը, և աշխարհասիրութեան ոգւով յարեալ և հեռեւեցաւ վաճառաշահութեան. վասն զի աշխարհական կեանք վարելու կամք առաւ մերժելով հոգեւորական կենցաղավարութիւնը։

Ընդ այս առաքելական գանկատը Դեմետրին հաւանիլն արդէն լսելով՝ պէտք է ալ այսուհետեւ կամաւ կուրանալ և ժխտել մերժել կուսակրօնութիւնը, որ հարկաւորապէս պարտք է, և հարկ՝ ի վերայ կայ Եւետարանի քարոզչաց և առաքելական պաշտօնակալաց։ Այսպ սրբազան առաքեալը այն իրեն պատուէրովը առաել անոնցմէ անարատութիւն և ժուժկալութիւն կը պահանջէ, որունք եպիսկոպոսութեան բարձր աստիճանին կը ցանկային. վասնորոյ այն պատուէրը ըստաւ անոնց դիւրութիւն և յաջողութիւն գտնալու եպիսկոպոսութեան պաշտօնի հասնելու. այլ մանաւանդ լսելեայն արգելք մը եղաւ աշխարհասէր, կանամբի անժուժկալ անարժաններուն, այսինքն՝ այն պատուէրը՝ որ է. «Մի՛թէ ոք եպիսկոպոսութեան ցանկայ» կայ, բարւոյ գործոյ ցանկայ։ Պարտ է եպիսկոպոսին «անարատ լինել, միոյ կնոջ այր». Եւայլն։ Այդ որ չեց մերժեց՝ ըստ հեթանոսական սովորութեան բազմակին եղողները, և կամ ըստ հրէից կինը ձգող և զայլ կին առնողները, և թէ կինը մեռած և ուրիշ մը առնողները՝ որ ասոնք բոլորը կուսակրօնութեան ժուժկալութեան հակառակ են։ Վասնորոյ բնաւ չենք տեսնար գրուած ոչ՝ ի գործս և ոչ՝ ի Թուղթս սրբազան առաքելոց, և ոչ՝ ի վաւերական մատենագրութիւնս եկեղեցական պատմութեանց, որ առաքելոց և անոնց ժամանակակից դարերուն մէջ օրինաւոր եպիսկոպոս եղողներէն ունեցած էին կին և կամաւ էին հրաժարած։ Վասն զի սուրբ եկեղեցին Քրիստոսի հաստատ պահած է աւետարանական անժխտե-

լի պատուէրը կուսակրօնութեան առաքելական պաշ-

ած ունեցող, և Ա. Հռետորական քարոզիչ եպիսկոպոսանե-
րուն ընտրութեանը և կոչմանը վէջ կամ քնաւ՝ ի
կարգ աշխարհի չըմտած կուսակրօն ըլլալ, և կամ հրա-
ժարիլ կամաւ ունեցած կինջվէն համահաճութեամբ
միմեանց համեմատ կուսակրօնութեան վիճակին։ Ար-
պիսի էր Պետրոս սրբազան առաքեալը և միւս եպիս-
կոպոսները, որ երկոյնք ալ կ՚անուանին։ Մոպ. ԺԹ.
27։ Ա. Պետ. Ե. 1։ Փիլիպ. Ա. 1։

Յանկ կը գտնաս առաքելապատիւ մեծ հայրապե-
տըն և լուսաւորիչն մեր սուրբն Գրիգորիս, որ երբ
ծնաւ աստուածային անօրէնութեամբ, այն ժամա-
նակը Կեսարիայի կողմէն հնաւատացեալ քրիստոնէի
մը դուստր Սոփիա անուն, որ Խոսրովու կոչուած
պարսիկ առն կին եղած էր, և Կեսարիայէն Վաղար-
շապատ քաղաքը եկած էր. յանձնառու կ՚ըլլայ այն
երջանիկ մանկանը կաթնատու ըլլալու։ Երբոր Յնակ
սրբոյն Գրիգորի հայրը նենգութիւնով և խաբ-
դախութիւնով Հայրատ դաշտին մէջ մեռուց զի
Խոսրով հայր Տրդատայ արքային մերոյ. Խոսրովին
հոգեվարութեան մէջ ըլած հրամանովը իսկոյն Հա-
յոց նախարարներուն մեծ մասը և շատ մը արքու-
նական զօրք Երասխ գետին մէջ խեղդամահ ըրին
Յնակը իրեն ընտանեօքը և ծառայներովը։ Հրա-
ման ըրեր էր նաև Խոսրով, որ Յնակին բոլոր տունը
ազգը բնաջինջ ընեն, ուստի երբոր այն Թագաւո-
րական հրամանին գործադրութիւնը կ՚ըլլար, Յնա-
կին Սուրէն և Գրիգորիս անուն միայն երկու որ-
դիքը ձեւամբ սանտուխ կանանց փախուցին. առա-
ջինը՝ ի Պարսկաստան, իսկ երկրորդը որ Հայաստա-
նեայց Լուսաւորչին նախասահմանուեր էր աստուա-
ծային անօրէնութենէն, փախուց տարաւ՝ ի Կեսարիա
վերոյիշեալ Սոփիա անուն բարեպաշտ քրիստոնեայ
կինը. ուր մկրտել տալով՝ անունը դրին ըստ վերին

ուղեցուԹեան Վրիպորիոս, որ Թարգմանի արԹուն
կամ հակող. և այն տեղը երանելին Վրիպոր քրիս-
տոնէական հաւատոյ կատարելուԹեան և ուսման
մէջ կը զարգանար կը մեծնար չնորհիւն Ա՛ստուծոյ. և
երբ ՚ի չափ կատարելուԹեան հասակի ժամանեց՝ Ա՛ա
ւիԹ անուն հաւատացեալ բարեպաշտ մէկը անոր հո-
գեւոր և մարմնաւոր պէտքերը բարեմտուԹիւնները
տեսնալով՝ փեսայացոյց, տալով կին իրեն Ա՛արիամ ա-
նուն հոգեսէր և բարեպաշտուհի դուստրը: Երեք
տարուան մէջ ստացան երկու որդիք, մէոյն անունը
Ա՛րդանէս և միւսոյն Ա՛րիստակէս, և անմիջապէս
սուրբ Հոգին չնորհիւը հաստատուն ուխտ դնելով՝
մէկզմէկէ մեկնեցան միմեանց հաւանուԹեամբ. Ա՛ա-
րիամ իրեն մէկ տարեկան որդին Ա՛րիստակէսը հետը
առած գնաց կուսանաց վանքը մը. և անանց հետը
միայն հոգեւորուԹեան կը պարապէին: Ա՛իս որդին
Ա՛րդանէս անուն՝ յանձնեց անոր յաւակացեալ կաԹնա-
տու քրիստոնեայ բարեպաշտուհուն խնամոցը:

Իսկ սուրբն Վրիպոր գնաց Տրդատ Թագաւորին
քովը բնաւ ծածկելով իւր որդի ըլլալը Ա՛նակայ, և
ուզեց անոր ձառայելու իրեն հայրենական պարտա-
ւորուԹեանը համար ըստ խորհրդական բանից Խորե-
նացւոյն Վիպք Բ. 2: Ա՛այց սուրբ Հոգին Ա՛ստուած
զանի ընտրած և կանչած էր բոլոր ազգիս Հայոց Լու-
սաւորիչ քրիստոնէական հաւատոյ ըլլալու աւետա-
րանական քարոզուԹեամբ:

Ա՛յնպէս և սրբազան Հայրապետներէն ոմանք, որ
նախ միանգամ ամուսնացեալ էին, երբոր Ա՛ստուած
կանչեց անոնք նորին ազգեցուԹեամբ ՚ի քարոզու-
Թիւն սուրբ Ա՛ետարանի ՚ի պաշտօն առաքելուԹեան
յաստիճան եպիսկոպոսուԹեան, կամաւ և ուխտիւք
հրաժարեցան իրենց կնոջմէն միմեանց հաճուԹեամբ,
որով և գանուեցան համանման կուսակրօն վիճակին:

Այսու նման էր մեծն Խոսրով Արիփոր նարեկացւոյն հայրը, որ Ինձեւացեաց գաւառէն էր։ Այս երանելին իրեն մանկութեան ժամանակէն ուսումնասէր ըլլալով՝ Հելլենական՝ այսինքն Յունաց դպրութեանց մէջ ալ քաջավարժ գտաւ. և երբ հասաւ կատարելութեան, Նարեկայ վանքին ժամանակին առաջնորդը մեծանուն Անանիա վարդապետը սէր տալով այս բազմագէտ հոգեզգօն Անձին՝ կամեցաւ վերստացուցանել իրեն եղբօրը պարկեշտասուն և բարեպաշտուհի դուստրը տալով, և՝ ի միջոցի ջրից ամաց երկու որդիք ունեցաւ, մինն Յովաննէս անուն և միւսն Արիփոր։ Այլ երէկ լինքն մեծն Խոսրով և երէկ կինն ցանկացան աստուածային ընտրիւ միայն հոգևորական կեանք վարելու։ Ասաւ Խոսրով առաւ իրեն երկու որդիքը Յովաննէս և Արիփոր, գնաց՝ ի վանս Նարեկայ առ վերոյիշեալ մեծանուն և ընտրյատկերգ գիտնական Անանիա վարդապետն։ Ուր քիչ ժամանակի մէջ հանգեաւ՝ ի Քրիստոս բարեպաշտուհի կինն Խոսրովու, և լինքն Խոսրով ճգնողական վարուք կրօնաւորեցաւ ան. և զինի քանի մը ամաց ընտրեցին զնա եպիսկոպոս իրեն հայրենի գաւառին Անձեւացեաց։

Այսպէս հիմայ, որ շատերը այս օրինակ պիտի գտնան մեր նախնի սուրբը հարքէն, թէ որ բարեմասնութեամբ չձանձրանան ազգային ընդարձակ գրուածասուգապատում պատմագրութիւնները կարդալէն։

Այս սիրելի ընթերցող, գիտցիր որ բազմաքանի քարոզիչները քաջ գիտեն, որ այսպէս է. բայց կամաւ կը մեղանչեն, աշխարհասէր ոգիով կը հերքեն կատարելութեան վճռակը։ Զոր այս տեղս չիշեն կենարարին մերոյ Յիսուսի Քրիստոսի տուկալի վճիռը. "Ով որ գիտէ զկամս տեառն իւրոյ՝ և ոչ պատրաստէ՝ տեսցէ բազս կամաց նորա, արբցէ գան բազում" Ղ-ի. ԺԲ. 47։

Ընանիկ է նե այդ առաքելական պաշտօնը և Ընե տա
րանի քարոզչութեան անունը՝ որ իրենց վրայ են ա
ռեր ու պարծենալով կը պրտրտին քաղաքէ քաղաք,
գիւղէ գիւղ, դիւրաւ իրենց ժողովուրդ ոտասլու
համար, և մարդիկներուն պատուելի անուամբ փա
ռաւորելու համար։ Յօհ. Ե. 18։ Սուրբ Հոգին չը
նորհուած է իրենց, այլ ինքնիրեննուն իրենց վրայ
համարած են այսպիսի պաշտօնը և մարդիկներուն համ
բաւուած իբրեւ քարոզիչ Ընեսարանին և առաքելա
կան պաշտօն ունեցող։ Սրեմն պիտի հետեւցունես
որ սուրբ պաշտօնը և համարմունքը համեմատ սուրբ
գրոց չէ բնաւ։

Սակայն սմենեւին չի զարմանանք այս բոլորական
քարոզիչներուն, աւետարանական և առաքելական ան
ժխտելի աւանդութեանը և կանոնադրութեանը հա
կառակ՝ կուսակրօնութիւնը խստաւ մերժելով և ժըխ
տելով ուրանալնուն վրայով։ Սրովհետեւ Ընսուս ա
ռաջին հեղինակն նորադանդից՝ պարկեշտութեան և
ողջախոհութեան վարուց աստուածահաճոյ առաքէ
նութիւնը բոլորովին մերժեց, և անամօթ լիրբ չա
րախաւալաո կրնք հեշտախտութիւն և անժուժկա
լութիւն քարոզեց։ Սր այս ոչ միայն աստուածային
օրինաց հակառակ է, այլ և ընդդէմ է մարդկային բը
նական ամօթխածութեան և պարկեշտութեան, ո
րոնցմէ երկու սոսկալի բարբանջմունքը Թող յայտնուի
այս տեղ, որ լմայուի Թէ ինչպիսի չարաչար մոլորու
թեան և մեղութեան մէջ կամակոր պահպիժուած էր
Ընսուս։

Նախ աներկիւղ յանդուգն և անպատկառ ի մարդ
կանէ ինայն մեղուի և մեղսուի քարոզելով կ'ըսէր.
„Շունք և պոռնիկ կանայքն առաւել հաճոյք են Ընս
„ստուծոյ քան զկուսանան՝ որ առնեն զուխտ միանձնու
„թեան ի կրօնի, և Թէ՝ կին առլինաւեալ Թէպէտ և

» յաղօրինաւոր ևս յանկողնոյ, մարթի պարծիլ եթէ
» պարծ իւր հաճոյ լիցէ Աստուծոյ, քանզի պատուղ բերէ՝
» որ գլխովին պարծ է ձեռին Աստուծոյ, և զի նայն իսկ
» աստուածահրամանն բանէն: « Աճեցէք և բազմացա-
» րուք » իրաւացուցանեն զաւրինաւորութիւն նորա »:
'ի Նմանէ յազգս ամուսնութեան: Հատ. Ձ:

Եւ երկրորդն յոյժ քաջմեծել և ապրատիել. վասն
զի այս | ուսեր առաւել երեն վաստուտ կրեցը ծառա-
յելով՝ Թէպէտ կառավարութեան ուխտեալ քահա-
նայ էր, բայց ուխտադրուժ ըլլալով՝ կառաջնոյ վան-
քէ մը երեն կին բրաւ Կատարինէն Պօրէն: Այս եւ
զաւ չար օրինակ և այլոց կրօնաւորաց, վասնորոյ բան
չարախորհուրդ Թելադրութեան | ուսերի յամի տեա-
ւըն 1525՝ կրօնաւորներէն ինը անձինք որոնց գլուխ
էր | Հօնարդոսն Կոպերեան, վերոյիշեալ Կատարինէ
Պօրենին վանքը գացին առաջ ուրբաթ օրը, որ ամէն
քրիստոնեայ ազգաց մէջ Յիսուսի Խրիստոսի կամա-
ւոր և փրկարար չարչարանաց և խաչելութեան յիշա-
տակութիւնը կ'ըլլայ, և նոյն կառաջոյ վանքէն ինը
միանձնուհի յափշտակեցին և իրենց կին ընին:

Այս ինը կրօնաւորաց ըրած ստկալի ըլլութիւնը
հատարակութեանը մէջ աստիկ վրդովումն և գայ-
թակղութիւն պատճառեց. ամէնքը սկսան նախատել:
Այն տեղ | ուսեր ձառ մը խօսեցաւ հատարակու-
թեան ղպացմանը հակառակ, ինչպէս կը պատմէ Կո-
տաղս Ալբա. յեկեղ. Պատմ. Հատ. 6: Իբր նեղբող
այն չարաչար մոլեգնութեան ինը անձանց վրայ այս-
պէս խօսելով: « Այո՛ նախատեացեն զձեզ, այլ ես ա-
» սեմ ձեզ, եղերուք դուք աւարառուք ամենք երջա-
» նիկք և բարեբաստիկք, որպիսի սէրն Խրիստոս ե-
» ղեալ 'ի վերայ երկրի, յորժամ աւար հարեալ կող-
» ոտից յիշխանէն աշխարհի մահուամբ խրտիլ ըլլէն
» և զգաստ նոցա. և աս սպառնալ ընդ իւրս 'ի շուրջ յոյժ

» Թականին . զնոյն օրինակ և դուք նահատակեալ
» վրկեցեք զհոգիս զհիւպատեալդ այդոցիկ կուսանաց
» ի խիստ բանտէ բռնաւոր մարդկան : Ա՛ռ այս և
» յոյժ վայելչապոյնս գործեցիք զայդ ի Օ՛ատակին ա-
» ւուրս . ըստ որում և ինքնին տէրն ի նմին ժամա-
» նակի առ զաւազան և ազատեաց զհոգիան ի կապա-
» նէ խաւարին բանսի » : Ա՛յլ աստուածընդդէմ
ձեռնարկութիւնն և չարաչար բազդատութիւնն :

Օ՛ուինքլիանոս Ա՛ուտերի չարաչար ախտակրութիւ-
նը ունեցաւ , ըստ որում անոր աշակերտներէն էր ,
վասնորոյ ուխտազանց ըլլալով՝ որ յատաջագոյն կուսա-
կրօն քահանայ էր , աշխարհականի վիճակ մուտ ու
ամուսնացաւ :

Ա՛յսանկ հետզհետէ Ա՛ուտերի աշակերտները մեր
ժեղին աստուածահաճոյ ժուժկալութեան և ողջա-
խոհութեան վարուց մաքրութիւնը , և հեռեւեցան
չարաչար առիւծոք մարմնաւոր ցանկութեան և աշ
խարհասիրութեան : Ա՛յնքան մոլութեան և լրբու-
թեան մէջ զակատեցան , մինչեւ բարեպաշտ ժողովը-
դոց առջեւը անարդ և անուանարկ ըլլալնին բանի տեղ
չէին դներ , ինչպէս լրբութեամբ կ՛ըսէր Օ՛ուինքլիա-
նոս : " Օ՛տապ ցանկութեան մարմնոյն , որ ընդ մեզ
" մարտ ասատիկ եդ , ժխտել չկարեմք , որով և անուա-
" նարկ գոտաք մեք առաջի եկեղեցեաց " :

Ա՛յսքը բարեմիտ ընթերցողները , այս բողոքական
քարոզիչները հակառակ աւետարանական ճշմարտու-
թեան լրեցնց մարմնասիրութիւնը և աշխարհասիրու-
թիւնը յատաջ տանելու համար , Պօղոս առաքելոյն՝
Ա՛ղին տուրբէն յայտնուած տեսութիւնը վկայութիւն
կը բերեն , որ կը գրէ այսպէս : " Ա՛յլ Ա՛ղին տուրբ
" յայտնապէս ասէ . թէ ի ժամանակս յետինս քա-
" կեսցին ոմանք ի հաւատոցն , և հայեսցին յոգիս մո-
" լորութեան , և ի վարդապետութիւնս դիւաց , կեղ

» ծաւտրութեամբ՝ առաքանք , խարեալք իւրեանց
» խղճին մտաց , որ սրպելուցուն յամուանանալոյ , և
» մեկնիցեն ի կերակրոց՝ զոր Ուտուած հաստատեաց
» ի վայելել հաւատացելոց , և ոչ հասեալ լցեն ի
» ճշմարտութեանն վերայ » ։ Ա. Տիմ. Դ. 1—2—3—4—5 ։

Ասել է որ առջի Հոգին Ուտուած՝ որ կանխատեսէ ամենայն ապագայ եղելութեանց , յայտնի ըրաւ Պօղոս առաքելոյն , եթէ ապագայ ժամանակներուն մէջը ոմեր երեւան ելլան հաւատացեալներէն անանկ մոլորեալներ և մոլորեցուցիչներ՝ որ քրիստոնէական ուղղափառ հաւատքը և ճշմարիտ վարդապետութիւնը պիտի ձգեն , ու հետեւելու են ատոնց նայական չար ոգւոյն մոլորութեան , քարոզելով ատոնք խաբէական վարդապետութիւններ հակառակ աւետարանական և առաքելական ճշմարտութեան . և այս մոլորելոց վարդապետութիւնը կ'անուանէ վարդապետութիւն դիւական ։ « Ոչ հայեցին յայտս մոլորութեան , և ի վարդապետութիւնս դիւաց » ։

Ուրեմն առջի ատեն Հոգին յայտնեց առաքելոյն , որ ապանիները իրենց խղճմտանքը կուրացուցած են իրենց մոլորութեամբը . ինչպէս ոչ մի թէ որ խարեա , անշուշտ կայր կ'ըլլայ . վասնոյց ասէ . « Կեղծաւորութեամբ սուտքանք , խարեալք իւրեանց խղճիւն մի » ոսոց » ։

Ինչ այս ատեն Հոգին յայտնուած մոլորեցուցիչները կեղծաւոր սուտքան մտախոհ և անխիղճ հաւատացողները աւետարանական և առաքելական քարոզութեանց՝ այժմ կը տեսնուին և յայտնի կը լսուի համարձակ քարոզելնին , և իրենց հետեւող սուտքանները շատ սուակաւ կուգան , և իրենց նորահնար մոլորական վարդապետութեամբ շարադրուած գիրքերնին ամէն տեղ տարածուելու համար գրավաճառներ և քարոզիչներ հանած են լեցուն ամուսկաններով , և

ան պիտքերը շատերուն ձրի տալով, և շատերին քիչ առակ պահանջելով։

Անանիաս առաքելոց ժամանակն ալ եկեղեցւոյ վրայ էին, առ համար Պօղոս առաքեալը Եփեսացւոց եկեղեցւոյն երէցներուն խրատ կուտայ, որ անանկին պաշտանան արթուն կենան, և պաշտպանեն ամբողջին իրենց յանձնուած ժողովուրդը, որ չխաբուին և անոնց չհետեւին. և մանաւանդ իրենց տուած աւետարանական ճշմարիտ քարոզութիւնը չմոռնան. վասնորոյ կ'ըսէր. "Ո՛ղջ կացէք անձանց և ա-
" մենայն հօտիդ, յորում եդ զձեզ Հոգին սուրբ տե-
" սուչս՝ հովանալ զժողովուրդ տեառն զոր ապրեցոյց
" արեամբ իւրով։ Գիտեմ եա՝ եթէ յետ իմոյ
" մեկնելոյ՝ գայցեն գայլք յափշտակողք ի ձեզ, որ
" ոչ խնայեսցեն հօտին։ Եւ ի ձէնջ յարիցեն արք՝
" որք խօսեցին թիւրս ձգել զաշակերտսն զկնի իւր-
" եանց. վասն այսորիկ արթուն կացէք և յիշեցէք,
" զի զերկեամ մի զգայդ և զգերեկ ոչ դադարեցի ար-
" տասուք խրատել զմի ի իւրաքանչիւր »։ Գործ. Ի. 28—29—30—31։

Անանկ ալ Պետրոս առաքեալը այս օրինակ զգուշութիւն կը տրէ ճշմարիտ հաւատացեալներուն, իսկ քահանայական վարդապետութիւն ունեցող մարդկանց ներուն, և անոնց հետեւող մարդկանց համար։ "Ի լինելին և ասա մարդարէք ի ժողովրդեանն՝ որ-
" պէս և այժմ ի ձեզ լինիցին ասա վարդապետք, որ
" սպրդեալ մուծանեն հերձուածս կորստեան, և զեր-
" տերն գնեցաց վնասա, ուրացեալ՝ ածեն ի վերայ ան-
" ձանց զարագահան կորուստ։ Եւ բազումք անկեալ
" երթիցեն զհետ նոցա անառակութեանցն. վասնորոյ
" ճշմարտութեանն ճանապարհ հայհոյիցի »։ Եւ ապա-
" տատօք խրատել զմի մի իւրաքանչիւր »։ Գ. Պետ. Բ.

» և կորուստն նոցա ոչ նիրհեացէ » : Բ. Պետր. Բ. 1—2—3 :

Երանի թէ սասանկ սուրբ Հոգւով խօսուած խրատները մեզի ալ ազդէին , որ սասանկ նորազանգնե- րու կեղծաւորական և մոլորական քարոզիչներէն զգու- շանալնիս , և պարզամիտ ժողովուրդները զգու- շացնելնիս , և սուրբ Հոգւոյն նպաստաւոր ընտրեալը ա- նոնց կորստական խորհուրդին մէջը չինանալնիս :

Այլ սեա՛ մէկ անգամ քողքարական քարոզիչները և րեղց որովայնամոլ մարմնասիրութիւնը և աշխարհասի- րութիւնը ծածկելու , և աւետարանական կուսակրօ- նութեան վիճակը և պահեցողութեան օրէնքը հա- մարձակ մերժելու համար , ինչպէս ծուռ մեկնելով Պօղոս առաքեալին Հոգւոյն սուրբէն յայտնուած մո- լորեցուցիչներուն վարդապետութիւնը՝ ուղղափառ քրիստոնէից վրայ կը ջոջեն , և անոնց կուսակրօնու- թեան քրիստոսատիր վիճակը և պահեցողութեան աստուածատուր օրէնքը պահելնին մոլորութիւն կը համարեն այս վերոյիշեալ խօսքերովը : “ Որ արդ- » ելացուն յամուսնանալոյ , և մեկնիցեն ’ի կերակրոյ , » զոր Աստուած հաստատեաց ’ի վայելել հաւատացե- ալց » : Ընդէ՞ր որ անհաւատ մոլորեալները պիտի արգի- լեն ամուսնանալէն և կերակուրներէն պիտի հրաժա- րեցունեն :

Ահա այս խօսքերը քողքարական քարոզիչները կը բե- րեն , ուղղափառ քրիստոնեայներուն վրայ կը ջոջեն , զանոնք որ կուսակրօնութեան վիճակը և պահեցողու- թեան օրէնքը հաստատ կը պահեն սուրբ Աւետարա- նէն և առաքելական աւանդութենէն համոզուած ըլ- լալով : Որովհետեւ համարձակ կ’ըսեն որ՝ ահա մենք քողքարականքս պարտաւոր կերակուրներէն հրաժարիլը չենք պահեր , և կուսակրօնութեան վիճակը չենք ըն- դունիր , ուրեմն մեր վարդապետութիւնը սխալ է ,

այլ Յոգեւոյն սրբոյ յայտնած մելորութիւնը անունք ուներ՝ որոնք կուսակրօնութիւն և պահեցողութիւն կը քարոզեն ։

Ա՛ չարաչար և կամակոր մելորութիւն . ահա այս է հակառակ սուրբ գրոց մելրեցուցիչ և խարդախ մեկնութիւն՝ որ կուտան բողոքական քարոզիչները ։ Վասն զի Պօղոս առաքեալն սուրբ Յոգիէն եղած յայտնութիւնը չէ թէ կուսակրօնութիւնը և օրինաւոր ամուսնութիւնը կը մերժէ . և կամ աստուածադիր պահոց օրէնքը կը լուծէ , այլ յայտնի կ՚ընէ , որ անանկ մելրեցուցիչ ապականութիւններ պիտի յայտնուին . որոնք միայն քրիստոնէական անուն պիտի ունենան . քայց Պաւթապտրաս փիլիսոփային հնարած ազանդը սորվելով, որով և աւետարանական ճշմարտութիւնը ուրանալով, այս աստանայական մելորութիւնը պիտի քարոզեն , որպէս թէ պէտքը չէ օրինաւոր սուրբ ամուսնութեան լուծին տակը հնազանդիլ , այլ կանայք հաւատակից պարտ է ըլլալ անխտիր մերձաւորութեամբ ։ Վասն զի Պաւթապտրաս փիլիսոփային մարդկային բանականութիւնը հաստատ պահելու կարծիքով աստանկ մտացածին օրէնք մը հաստատեց , վասնորոյ այս օրէնսկ խելագիւր և անհեթեթ վէիճ մը ըրաւ ։ Ուարեկամից ամենայն ինչ հասարակաց ։ Այս կարճ խօսքով հաստատեց որ մարդկային բարեկամութեան մէջ մի և նոյն կալուածները դրամները , տուները , հանդերձները , մանաւանդ կանայք հասարակաբար ամենուն ըլլան (տես Թեսաւ . 575 . Վարք Ումատո 113) ։ Ուայց այս հնարած ծուռ օրէնադրութիւնը ընդունելի չեղաւ . որովհետև քաղաքական բարեկարգութեան և օրինաւոր ամուսնութեան կը հակառակի . և մեկալ՝ այն այս Պաւթապտրաս մելրեալ մտօք այս երկրորդ աղանդն ալ հնարեց հաւատալով , որ հոգեփոխութիւն կ՚ընէր , այսինքն երբ հոգին մարմինէն կ՚անջատի , ուրիշ մարմի

նի ամէն կը մոռնայ կամ մարդոյ և կամ անասնոյ : Ասոր համար սաստիկ կը քարոզէր մեզէն կերակուրներէն հրաժարիլ, ուստի և պղծութիւն կը համարէր թռչնոց ձկանց և ամեն տեսակ կենդանիներուն միսէն ուտելը : Վարք. Խմաս. 117 : Այս տեսակ մոլորութեանց վրայով կը գրէ Տնկիկ Կողբացի տուրը վարդապետ. Գիրք Գ :

Ահա այս Պետթագորաս փիլիսոփային կրկին մոլորութեան հետեւեցան քրիստոնեայներէն ոմանք և եղան երեւելի ալանդաւորք, որոնք կ'անուանին Ասմնեանք, Նբուիլեանք, Անիքեցիք, Նիկրատեանք եւայլն : Ասոնք էին, որ օրինաւոր ամուսնութիւնը խափան կը մերժէին քարոզելով հասարակաց լինել կանանց, և և կ'արգիլէին մեզէն կերակուրներէն, հոգեփոխութեան աղանդը ընդունելով : Ասոր համար կը գրէ տուրը Իգնատիոս աստուածազգեաց հայրապետն Փիղադելփացիներուն գրած Թուղթին մէջ, նոյնպէս և տուրը վարդապետն մեր Տնկիկ Կողբացի, և տուրը Յովհան ոսկեբերան Ա'առ ԺԲ :

Թէ որ բողոքական քարոզիչները տուրը Նոփով գրած և քարոզած ըլլային, չէին համարձակէին այն դիւական մոլորութիւը ուղղափառ քրիստոնեայներուն վրայ ջրջել, որ էարգիլել օրինաւոր տուրը ամուսնութենէն և հրաժարեցունել աստուածահաճոյ պահեցողութենէն : Ա՛ան ալ Քրիստոսի եկեղեցին կ'ընդունի աւետարանական կուսակրօնութեան հրեշտակային վիճակը, որուն վրայով վերը բացայայտ տեսնուեցաւ. և և տուրը պահկի ամուսնութեան խորհրդոյն աստուածադիր օրէնք ըլլալը խորհուրդ եկեղեցւոյ կը ճանաչէ. և այս երկուքին աստուածահաճոյ և բարի վիճակ ըլլալուն Պօղոս առաքեալը կը վկայէ, "Ով "եթէ ամուսնանայցես, ոչ մեղար, և եթէ ամուսնա "նայցէ կոյսն, ոչ մեղաւ . . . իսկ որ հաստատեալ է

» ՚ի սրտի իւրում և վտանգ լինչ ոչ էցէ նմա, ունի իշ-
» խանութիւն ՚ի վերայ կամացս իւրոց, և զայն ընտ-
» րեաց ՚ի սրտի իւրում, պահել զկոյս իւր բարւոք
» առնէ ». Ա Կոր. Է. 28—37։ Նա այս տանը մէջ յայտ-
նի կ՚ընէ կուսակրօնութեան վիճակին գերաշխարհիկ
կենաց երջանկութեան հանդէսը, որով կուսակրօնը
աստուածային կամաց հաճութեանը ազատափոյթ ծա-
ռայութիւն կ՚ընէ, և միշտ արթնութիւն մտաց կ՚ու-
նենայ իր հոգեւոր պաշտօնին մէջ, ըստ այնմ, « Ո՛վ ի
» որ անկինն է, հոգայ զտեառն, թէ որպէս հաճոյ լի-
» ցի տեառն »։ Նոյն վայրով ընդարձակ կը գրէ Պա-
կեբեան ՚ի ճառին կուսութեան, գլ. 14։

Նոյց աշխարհականները՝ որ օրինօք Նորուծոյ և
ուրբ պահօք ամուսնացեալ են, աշխարհի հոգերով
միշտ զբաղած կ՚ըլլան, վասն զի ընտանեկան ապրուստ
և կենակցութեան հարկաւորը պատրաստելու համար
հանապազ կ՚աշխատին և կը տառապին, որ չըլլայ թէ ա-
մուսնական սէրը առիթով մը պակսի և տեղի տայ
տեղի գոնայ, ըստ այնմ, « Նա որ կանամբին է հո-
» գայ զաշխարհիս՝ թէ որպէս հաճոյ լիցի կնոջ ի-
» րում » . Ա Տիմ. Է. 32—33։

Պարեան նախ՝ բարի է աստուածահաճոյ կուսու-
թեան վիճակը պահել, և երկրորդ՝ օրինաւոր ամու-
նութեան արգելք մը չի տալու է, բայց չար և մեծ
մեղքութիւն է կուսութեան վիճակը մերժել և չըն-
դունիլ, ինչպէս քաղքական քարոզիչները այս քրիս-
տոսատիր վիճակը չեն ընդունիր, և մեկ ալ հոգեկու-
թյա մեղքութիւն է Պաւղոս առաքեալին հրա-
նարած աղանդին հետեւելով և վերոյիշեալ հերձ-
ուածողներուն պէս՝ « Նմանայն լինչ հաստարակաց » հա-
մարելով և կանայք ալ հաստարակաց է ըսելով՝ օրինա-
ւոր ամուսնութեան վիճակը արգիլելը, ուրկէց
չնութիւն և պոռնկութիւն կը հետեւին։

Ինչ այս մելոտութենէ ազատ մնալու համար և Աստուծոյ հրամանը՝ որ է "Ընչեցէք և բազմացարուք" անխափան կատարելու համար Պօղոս առաքեալը կը գրէ. "Նարուք է մարդոյ ՚ի կին մարդ չմերձենալ, "բայց վասն պոռնկութեան իւրաքանչիւր ոք զկնր "կին կալցի, և իւրաքանչիւր կին զնր այր կալցի". Ա Կրն. է. 1—2։ Կլտեմանա, Պօղոս սրբազան առաքեալը ինչպէս գեղեցիկ կը բաղդատէ կուսութեան վիճակը ամուսնութեան հետ, ժուժկալութիւնը անժուժկալութեան հետ, վերջապէս "Նարուք է մարդոյ "՚ի կին մարդ չմերձենալ" ըսելով՝ երկու կերպ իմաստ կուտայ մեզի. մէկը՝ որ չնութենէ, պոռնկութենէ կը հրաժարեցուներ, և երկրորդ՝ կուսական վիճակը յարգել և ընդունել մեր միտքը կը համոզէ ժուժկալութեան սիրով։

Ա.րդ՝ գանք այն երկրորդ մելոտութեանը վրայ խօսիլ, որ կերակուրներէն կը հրաժարեցուներ, "Ու "մեկնիցեն ՚ի կերակրոց, զոր Աստուած հաստատեաց "՚ի վայել հաւատացելոց"։ Այս աղանդը վերը յիշած մայրանք, որ Պիւթագորաս փիլիսոփային հնարած հոգեփոխութեան աղանդէն յառաջ եկած է, որովհետեւ կ՚ըսէր թէ՝ հոգիները որ կ՚ելլան մեռած մարդիկներէն, ամէն տեսակ կենդանիներուն կը մտնան, և անոնցմէ ալ վերստին ելլալով՝ նոր ծնած տղայոց կուգան. ասանկով կ՚ըլլայ հոգեփոխութիւն. վասնորոյ կը հետեւցուներ թէ՝ ուրեմն կենդանիները որ տեսակէն ալ ըլլան՝ մեռցուներ և ուտել մեղք է, ուստի կը հրաժարեցուներ կենդանեաց միսը ուտելէն, մինչեւ անգամ քրիստոնէական շնորհքը առնողներէն ոմանք աւետարանական և տուրբ գրոց ճշմարտութիւնը մերժեին, կուրցուցին իրենց խղճմտանաց աչքը՝ հետեւելով սատանայական բազմատեսակ մելոտութենց, և ա և յարեցան Պիւթագորեան աղանդին հոգեփո-

խուԹեան մոլորուԹիւնը ընդունելով, վասնորոյ կը ստիպեցուն՝ կենդանեաց միսը ջուռել։ Ինչ առանց վրայ կատարուեցաւ Պօղոս առաքելոյն Հոգին սուրբ զէն յայտնուածը. «Ոչ մեկնիցեն ի կերակրոց»։

Ռոմէական քարոզիչները այս խօսքը սուրբ ուղղափառ եկեղեցւոյն վրայ չարաչար գարձնելով՝ պահեցողուԹեան աստուածադիր օրէնքը կ'ուրանան, և ըստ կամաց մեկնելով այս պարբերուԹիւնը. «Ոչ մեկնիցեն ի կերակրոց»։ Ինչ էն կամիր Պետրոս առանդովը մոլորեալներուն չարաչար դրուԹիւնը ուղղափառ սուրբ եկեղեցւոյ ընդունած պահեցողուԹենէն զանազանելու, և մանաւանդ չէն ուզեր մոլորուԹիւնը բարեպաշտուԹենէն որոշելու, վասնորոյ կը ջանան միշտ ջերմեռանդ հաւատացեալները դայթակղեցնելու, և մանաւանդ պահեցողուԹեան աստուածադիր օրէնքը խափան և համարձակ մերժելու համար։

Վասնեմ բարեմիտ ընԹերցող, հիմայ պիտի լսես, որ այս բողբոջական քարոզիչները սուրբ գիրք կը կարդան և սուրբ գիրքով կը խօսինք կ'ըսեն, չէն մի՞ իմանար սուրբ գիրքն, որ աստուածադիր օրէնք է պահեցողուԹիւնը, և աստուածահաճոյ բարեպաշտուԹիւն. չէ՞ն մի գիտեր, որ գրուած է Ովնդոց գիրքին մէջը այս պահեցողուԹեան աստուածային պատուէրը, որ նախատեղծ մարդոյն արուած է Աստուծմէ, հրամայելով որ Դրախտին մէջ գտնուած ամէն ծառերուն պտուղներէն ուտել, բայց ոչ այն ծառին պտուղէն՝ որ կը կոչուի ծառ գիտուԹեան բարւոյ և չարի։ «Ոչ պատուիրեաց աստ Աստուած Ադամայ՝ և ասէ. յամենայն ծառոց որք են ի Դրախտի, ուտելով կերիր։ յեւս. բայց ի ծառոյն գիտուԹեան բարւոյ և չարի մի ուտիցէք»։ ծնն. Բ. 16։ Հիմայ մարդկուԹեանս անհրաժեշտ պարտք չէ մի Աստուծոյ պահեցողուԹեան

պատուէրին հնազանդիլ՝ որ է օրինադրութիւն ա-
ռաջին ։

Ձե՞ն մի կարդացեր Նոյ նահապետին աստուածա-
հաճոյ առաքինութեանը համար սուրբ գրքին տուած
վկայութիւնը ։ “Նոյ եգիտ շնորհս առաջի տեառն
»Աստուծոյ . . . Նոյ այր արդար կատարեալ յազգի
»անդ իւրում, և հաճոյ եղեւ Նոյ Աստուծոյ »։ ծնն.
Զ. 8—9 ։ Ասել է որ Նոյ նահապետ այն ժամանակի ամ-
բարիշտ մարդկանց մէջ երեն աստուածապաշտութեան
կատարելութիւնը միօրինակ պահեց և անով Աստու-
ծոյ հաճելի եղաւ . վասնորոյ Ջրհեղեղին պատուհասէն
իւր ընտանեօքը փրկուեցաւ ։

Արդ ինչ էր այն ապստամբ և ամբարիշտ մարդ-
կանց չարագործութիւնը , որ խնամով՝ այսինքն մեծ
փութով երեսք երեսց սովորութիւն ըրած ամբարշտ-
ութիւնը յառաջ տանելու կը ցանկային ։ Ծննդոց
գրքին մէջէն այսքան կ’իմանանք ։ “Աշխարհն ոչ թո-
»ղեր ի սրտի իւրում խնամով ի չարիս զամենայն ա-
»ւուրս »։ Զ. 5 ։ Նոյց Յիսուս Քրիստոս յայտնի ը-
րաւ այն ամբարիշտներուն չարագործութիւնը , որ է
արկրամոլութիւն , արբեցութիւն և անժուժկալութի-
և սոնցմով հետեւաբար ունեցան շնութիւն և պոռ-
նկութիւն ։ “Ո՛վ որպէս էին յաւուրն որ յառաջ
»քան զջրհեղեղն . ուտէին և ըմպէին , կանայս առ-
»նէին և արանց լինէին »։ Մտթ. ԻԴ. 38 ։ Արդ յայտնի
եղաւ որ Նոյ նահապետ Աստուծոյ հաճելի հանդիսա-
ցաւ արկրամոլութենէ և անժուժկալութենէ հեռի
մնալով ։

Վարձեալ չե՞ն մի գիտեր այս բողոքական քարոզիչ-
ները , որ Աստուծմէ ապստամբելու և օտարանալու
չարագոյն նշան մի է պահեցողութիւն չունենալը և
մարմնապաշտութեան հետեւիլը . ինչպէս գրուած է
խրատչութեան ժողովրդներուն համար , որոնք Պաւլե-

ան և Ն՝Հարօնի դէմ ապստամբելոյն և հակառակե-
ցան, մանաւանդ մերժելով աստուածպաշտութեան
կրօնական՝ կռապաշտութեան հետեւելոյն.
սոսկ ալ սկսան յայտնել իրենց վրայ ամբարշտութեան
նշան իրենց տրկրամոլութեամբը և մարմնապաշտու-
թեամբը. ըստ այնմ՝ «Նստաւ ժողովուրդն յու-
»տել և լըմպել՝ և յարեան՝ ի խաղալ»: Ելք. ԼԲ. 6:
Ա՝Կոր. Ժ. 7:

Ըն՝ն յիշեր արդեօք այս բարեպաշտական պահե-
ցողութիւնը մերժողները այն Նինուէացւոց ապաշխա-
րութիւնը, որ նախ իրենց մէջը պահեցողութիւն և
պահօք ապաշխարութիւն քարոզելուն համար՝ Ն՝ա-
ստուծոյ հաճելի եղան, ինչպէս գրուած է: «Նր հա-
»ւատացին աստ Նինուէացիք Ա՝ստուծոյ, և քարո-
»զեցին պահս»: Յովնան. Գ. Ե:

Ըն՝ն մի կարդացեր որ Ն՝ստուծոյ հաճելի ծառա-
յութիւն մըն է պարարտացուցիչ կերակուրներէ հրա-
ժարիլը, տրկրամոլութիւնը մերժելով՝ պահեցողութի-
ւնը, ինչպէս սուրբ գիրքը կը յիշեցունէ Դանիէլ
մարգարէին և երեք մանկանցն Ն՝անանիայի Միսայէլի և
Ն՝զարիայի աստուածահաճոյ ծառայութիւնը, որոնք
յետոյ անուանեցան Խաղդասար, Մեդրաք, Միսաք և
Ն՝բեդնագով: Զի՞ որ այս երանելիները Նաբուգո-
դոնոսոր արքային ապստրած պարարտ կերակուրներէն
հրաժարեցան և չյօժարեցան բնաւ այն պարարտ կե-
րակուրներուն ուտելու, այլ երեք տարի չափ ընդե-
ղէն միայն ուտելով, և ջուր միայն խմելով պահեցո-
ղութիւն կ՝ընէին: Ն՝աստուած ալ անոնց ոչ միայն մարմ
նաւոր գեղեցկութիւն և զօրեղութիւն շնորհեց, այլ
և երկնային իմաստութիւն և հոգի մարգարէութեան.
և ասոնց վրայ յայտնեց իրեն ամենակարող զօրու-
թիւնը. վասնզոյ Խաբելոնեան բոլոքոքեալ հնոցին
սաստիկ բոցերը այս երանելիներուն չէին վնասեր

պրեալ. այլ իբրև ցօղապին հոգմ անանց կ'երեւային. ասանց համար գրուած է ։ Եւ առնոյր Սաղատատ » զընթերիս նոցա և զգինի լմնելոյ նոցա, և տայր նոցա » ուռնդս ջրհեղեղոյ մանկանց (այսինքն պատրաստ կերա» կուրները և գինին իրեն համար կը պահէր և ընդհակին միայն կուտար անոնց) Եւ եթ նոցա Սաստուած իմաս » տութիւն և հանճար յաւհնային դպրութեան՝ և իմ » մաստութեան, և Դանիէլ խելամուտ էր ամենայն » տեսլեան, և երազոց . . . Եւ իսկեցաւ ընդ նոսա » արքայն և ոչ գտան յամենայնի նման Դանիէլի և » Ընանիայ, և Միսայէլի և Ազարիայ, և կային առա» ջի թագաւորին ։ Եւ յամենայն բան իմաստութեան » և գիտութեան, զոր խնդրէր ի նոցանէ թագաւորն » գնոսա տասնապատիկ առաւել քան զամենայն գէտս » և զմոգս, որք էին ի թագաւորութեան նորա ։ Դան. Ա. 16—17—19—20 ։ " Եւ արար ի մէջ հնոցին իբ» րեւ զհոսանն, որ ցօղապին ընկնուկ՝ և ոչ մերձենայր ա» մենեւին հուրն ի նոսա, ոչ տրամեցուցանէր և ոչ » նեղէր զնոսա » ։ Անր. Գ. 50 ։

Ա՛յս աստուածահաճոյ պահեցողութեան ապա ցոյցները հին Կտակարանին մէջէն յայտնուեցան. բայց նոր Կտակարանէն ալ, այսինքն սուրբ Աւետարանէն և առաքելական կանոնական Թուղթերէն շատ վկայու Թիւններ ունինք, որոնցմէ պարզ և բացայայտ կը րուածները ասանօր յիշեմք ։

Ձէ որ Յիսուս Քրիստոս ինքնին հեղինակ եղաւ պահեցողութեան քառասուն օրս և քառասուն գիւ շեր ծոմապահութիւն ընելով, ինչպէս գրուած է ։ " Եւ պահեալ զքառասուն օրս և զքառասուն գի » շեր, ապա քաղցեաւ » ։ Մտթ. Դ. 2 ։

Ձէ որ Յովհաննու մկրտչին համար գրուած է ։ " Ո՛չ ուտէր և ոչ ըմպէր » ։ Եւ թէ՝ " Կերակուր նորա » էր մարախ, և մեղր վայրենի » ։ Անդ. ԺԱ. 18 ։ Գ. 4 ։

Ընծայք և պահք հալածիչ է դիւական թելադրութեանց և մոլութեանց և մոլորութեանց, և հաղորդող աստուածային բազմատեսակ շնորհաց, ըստ այնմ՝ « Այս ազգ ոչ ելանէ եթէ ոչ աղօթիւք և պահօք » Անդ. ԺԷ. 21։ Ինդ էր Ինննա դուստր Փանուէլի, որ » ոչ մեկնէր ի տաճարէն, այլ պահօք և աղօթիւք պաշ» տէր զԱստուած և զերկեակ, և սա ի նմին ժամու յարուց » եւ գոհանայր զտեառնէ » Ղ-ի. Բ. 36։

Ընդ ո՞ր գիտեր որ պահեցողներուն վարձք տուողը Հայր Ինստուած է. « Ինյլ դու յորժամ պահիցես, » օծ զգլուխ քո՝ և լուա զերեսս քո. զի մի երեւեսցին » մարդկան իբրև զպահող, այլ Հօր քումմ՝ ի ծածուկ. » և Հայրն քո որ տեսանէ ի ծածուկ, հատուսցէ քեզ » յայտնապէս » . Մտթ. Զ. 17։

Ընդ ո՞ր կարդացեր ըսենք արբազան առաքելոյն Պօղոսի թուղթերը, որ պահեցողութիւնը մերժողներուն և բազմախորհուրդ պարարտացուցիչ կերակուրներով յղփացողներուն և որովայնամոլներուն համար կը գրէ. « Ո՛ւ այնպիսիքն տեառն մերոյ Յիսուսի Քրիս» տոսի ոչ ծառայեն, այլ իւրեանց որովայնի » . Հռով. ԺԶ. 18։ Ինանք ուրիշ ջանք մը ընենին, քայց միայն պահեցողութիւնը և ժուժկալութիւնը առեալ՝ ուսանել և խոհել. և առավ ընդունայն կը համարին Քրիստոսի փրկարար խաչին զօրութիւնը. առանկներուն վախճանը յաւիտենական կորուստը պիտի ըլլայ կ'ըսէ Պօղոս առաքեալը. « Ինայց արդ լալով խօսեմ թշնա» մանաց խաչին Քրիստոսի, որոց կատարած կո» րուստ է, որոց Ինստուած որովայն իւրեանց է » . Փիլիպ. Գ. 18—19։

Ուրեմն հարկ է քրիստոնէից, որ օրինադրեալ և սահմանեալ պահոց օրերը սիրով և ջերմեռանդութեամբ պահեն և հրաժարին պարարտացուցիչ կերակուրներէն, որ Քրիստոսի շնորհքը և հաւատոյ

ջծրուԹեամբը ասիանայ հոգինին և Ա՛ստուծոյ հաճե-
ի ըլլան . “Ո՞ւ լաւ է ընդհօք հաստատել զխրատս և
» ոչ կերակրովք , որովք ոչինչ օգտեցան՝ որք այնպէս
» գնացին » . ԵԲՐ . ԺԳ . 9 :

Կարելի է որ ըսեն , ՚ի մեջաց հրաժարիլը մեծ պա-
հեցողուԹիւն է և ոչ Թէ կերակուրներէ հրաժարիլը :
Ա՛յս մասին Պօղոս առաքեալը Հերայեցւոց եկեղե-
ցին Յակոբ նահապետին եղբայր Հսաւը օրինակ կու-
տայ , որ երբ իր ստուերին յաղԹելու կարող չեղաւ ,
աւրիշ մեղքերուն ալ յաղԹել չկրցաւ . ուստի և ա-
սելի Ա՛ստուծոյ անուանեցաւ . “Ա՛ն որ պոռնիկ և
» պիղծ իբրեւ զՀսաւ , որ ընդ միով կերակրոյ զանց-
» րանկուԹիւնն վաճառեաց » . ԵԲՐ . ԺԲ . 16 . Հ-ՈՎ .
Թ . 13 :

Զըլլայ որ Յիսուսի փրկին մերոյ փարիսեցիներուն
համար խօսածը իրենց ստուերամոլուԹեանը վրայ առ-
նելով՝ պահեցողուԹեան օրէնքը հանդուգն մերժելու
պատճառ բռնեն , “Ա՛յն , որ ինչ մտանէ ընդ բերան
» պղծէ զմարդ , այլ որ ինչ ելանէ ՚ի բերանոյ՝ այն
» պղծէ զմարդ » . Մ-Ի . ԺԵ . 11 :

Ո՛պէս պիտանի որ փարիսեցիները Ա՛ստուածէր օ-
րէնքէն դուրս ձերոց աւանդուԹիւն մը ունէին , այ-
սինքն՝ ամեն տեսակ կերակուրներուն սկիզբը և վեր-
տեղը անմիջապէս ձեռքերնին պիտի լուային , ու այ-
նուհետեւ սկսէին կերակուր ուտելու : Սակայն Ք՛ր
իւտոսի աշակերտները ձերոց այս անօգուտ և ունայն
աւանդուԹիւնը չպահելով , ձեռքերնին չլուացած
հաց կ՛ուտէին , ինչպէս նոյն փարիսեցիները կ՛լսէին ,
“Ո՛նդ՚ի աշակերտքն քո անցանեն զաւանդուԹեամբ
» ծերոցն , զի ոչ լուանան զձեռս՝ յորժամ զհաց ու-
» տեն » . Մ-Ի . ԺԵ . 2 : Ո՛հա Յիսուս ձերոց այս ըն-
դունայն աւանդուԹիւնը մերժելով , այս խօսքը ըսաւ ,
չէ Թէ պահեցողուԹեան օրէնքը մերժելու համար ,

Նա և ջանայ որ Պօղոս առաքեալին խոտական օրէնքին համար գրածը աստուածահաճոյ պահեցողութեան օրէնքին յարմարցունելով՝ բարեպաշտ միտքերը պատճառեցունեն, ինչպէս գրուած է. "Ար ուտէն, զայն՝ որ ոչն ուտէ մի անարհատցէ, և որ ոչն ուտէ, զայն՝ որ ուտէն, մի դատատցի, քանզի Աստուած զնա ընկալաւ" կալաւ". Հռոմ. ԺԴ. 3։

Աստուածային այս խրատը հրամայելու և հետամտելու դարձող քրիստոնեայ ընտանեաց ուղղակի խրատ մըն է, որպէսզի հոն ալ խոտական օրէնք ունենան, որ հաստատակաբար, ամեն տեղ մտրթուած և մաքրուելնը չտրաշուած միսը չեն ուտեր, և այս խոտելնը քրիստոնէութեան մէջ ալ պահել կ'ուզեն. նաև հետամտելնէ եկած քրիստոնեայները բնաւ տանկ խոտութիւն մը չունենին, անխտիր և անտրոշ կ'ուտեն, անոր համար ատոնց և հրեաներէ դարձողներուն մէջ մեծ վիճաբանութիւն և կռիւ կ'ըլլար։ Աստոնց ընդունայն վէճը դադրեցունելու և քրիստոնէական խաղաղութիւնը հաստատելու համար սրբազան Պօղոս առաքեալը գրեց. "Ար ուտէն, զայն՝ որ
» ոչն ուտէ՝ մի անարհատցէ, և որ ոչն ուտէ, զայն՝
» որ ուտէն մի դատատցի, քանզի Աստուած զնա ընկալաւ
» զնա». Այն առաքեալը ատոր առաջ բացայայտը կը գրէ Կորնթացւոց եկեղեցւոյն. "Այլ կերակուր
» զմեզ առաջի Աստուծոյ ոչ կացուցանէ, ոչ եթէ չուեմք՝ պակասիմք ինչ, և ոչ եթէ ուտեմք՝ առաւելութիւն ինչ... վասնորոյ եթէ կերակուր գայթակղեցուցանէ զեղբայրն իմ, ոչ կերայց միս յաւիտեան, զի մի
» զեղբայրն իմ գայթակղեցուցից։ Ա. Կորն. Ը. 8—13։
» Այնոցիկ ինչ որ ի սպանդանոցի վաճառի, կերայք,
» և մի խուզէք վասն խղճի մտաց, զի աստուն է երկիր
» լիով իւրով, եթէ ոք կոչէ զձեզ յանհաւատից և
» կամիցիք երթալ, զամենայն ինչ՝ որ առաջի դնիցի,

» կերայք և մի խտրէք վասն իւրմէ մտայ » . Անդ . ա . 25—26—27 :

Ահա այս աւետարանական և առաքելական ճշմարտութիւնները ամենուն բացայայտ հասկանալի են, և ամեն ուշադիր քրիստոնեայներս այն ճշմարտութեանցը քաջ վերահասու ըլլալով՝ իրենց բարեպաշտութեամբը անձերնին Նազովց կը նուիրեն, սահմանուած պահոց օրերը ջերմեռանդութեամբ կը պահեն, և աւետարանական և առաքելական ասանդութիւններէն զատվելով գիտեն, որ պահքը աղօթքին հետ Նազովց հաճելի է :

Վասն, հիմայ պիտի ըսես սիրելի ընթերցող, քողարկեալ քարոզիչները, որոնք միշտ սուրբ գիրք կը կարդանք կ'ըսեն, և սուրբ գիրքով կը խօսինք, արդեօք չեն մի կարդար կուսակրօնութեան երանելի վիճակին և աստուածահաճոյ պահեցողութեան վերայով վերցդրեալ փոքր՝ի շատե բերուած վկայութիւնները : Այո՝ կը կարդան, բայց ուշադնուն պէս և իրենց մտայր գրութիւնը հաստատելու համար կ'այլայլեն սուրբ գիրքերուն ուղիղ միտքը, ինչպէս պիտի տեսնուի այս յետագայ գլխոյն մէջ :

ԳԼՈՒԽ Գ.

Տես բարեմիտ ընթերցող, այս քողարկեալ քարոզիչները միշտ իրենց էարտափառ և մոլար մտօք մերժելու ջնդունելու գրութիւններն հաստատելու համար, սուրբ գիրքերուն մէջ յայտնի գրուած վկայութիւնները ուղղափառ միտքը անպատմ կ'այլայլեն ծուռ և մոլորական մեկնութիւն տալով, զոր օրինակ ամենօրհնեալ սուրբ կուսին Նազովցացոյց մշտնջենաւոր կու-

սուրթիւնը չխոստովանելու համար սուրբ Աւետարանին մէջ գրուած այս խօսքերը՝ "Ու ոչ գիտեր զնա, "մինչև ծնաւ զորդին իւր զանդրանիկ". ծուռ մեկ նուրթիւն տալով չեն ուզեր ուղղափառ և բարեպաշտ քրիստոնեայներուն պէս խոստովանիլ Աստուածածնի Ա. յս ինչ բառը միայն ժամանակական կը մեկնեն, և չեն ուզեր ուզիղ մտօք իմանալ և ճանաչել, որ սուրբ գիրքերուն մէջ շատ տեղ ինչը յաւուժգականի և մշանջենաւորի զօրութիւն ունի. որպէս յայտնի ունիմք տեսանել աստանօր սուրբ գիրքերէն բերուած այս յետագայ վկայութիւններուն մէջ գրուածները. "Ու ապրատն "և անդրէն ոչ դարձաւ, մինչև յամոքել ջրոյն յերկ- "րէ" ծն. Ը. 7: Ա. յս տեղս ինչն յոյց չիտար որ ապրատը, որ Նոյ նահապետը տապանէն դուրս հանեց, յետոյ վերադարձ ըրաւ եկաւ տապանին մէջ, այլ յաւիտեան անդարձ մնալը կը յայտնէ:

Այսու պէս ալ կը կարդանք. "Ու Անգբողջ դատեր "Սաւուղոյ, ոչ եղեւ որդի մինչեւ յօր մահուան "իւրոյ". Բ. Թագ. Զ. 23: Ա. յս ինչ-վալ չիմացուիր որ Անգբողնն Սաւուղնն աղջկանը որդի եղաւ մեռնելէն վերջը. այլ կ'իմացուի որ բնաւ չեղաւ որդի անոր:

Գրուած է. "Այսպէս սէր ցաւեր իմ, նիստ ընդ աջ "մէ իմմէ, մինչև եդից զթշնամիս քո պատուանդան "ոտից քոց". Սղ. ճԹ. 1: Ա. յս տուն մարգարէու- թիւնը Պօղոս առաքեալը Յիսուսի Քրիստոսի վրայով կը մեկնէ, որ կատարեց իրեն վրկագործ անօրէնու- թիւնը յաղթելով սատանայի հոգեկորոյս բռնութեա- նը, և համբարձաւ յերկինս և նստաւ ընդ աջմէ յա- ւիտենական փառաց Հօր Աստուծոյ, իբրեւ մշանջե- նաւոր էակից և փառակից նորին. ԵԲր. Ա. 13: Մարկ. ԺԶ. 19:

Հիմայ տեսաք որ այն վերոյգրեալ Սաղմոսին ինչը մշտնջենաւոր է, և ոչ թէ առժամանակեայ։ Նմանկ ալ գրուած է. "Արդէս զի աչք ծառայի՝ ի ձեռս տե՛ր տանց իւրեանց. որպէս աչք աղախնոյ՝ ի ձեռն տիկ նոջ իւրոյ, այնպէս են աչք մեր առ քեզ տէր Աստուած մեր, մինչև ողորմեսցիս՝ ի վերայ մեր։ ՃԻԲ. 2։ Այս տեղս կարճա հետեւցունել որ, Աստուած մինչև երեն ծառայներուն ողորմի, անոնց ամենուն աչքը յոյսերնին Աստուծոյ առատապարգեւ ողորմութեան ձեռքին կը կարօտին, իսկ ողորմութիւնը առնելէն վերջը, ալ չպիտի կարօտին. որովհետեւ (մինչև ողորմեսցիս՝ ի վերայ մեր) կայ. հապա անշուշտ պիտի ըսես որ այն ինչնա մշտնջենաւորի տեղ դրուած է, և ոչ ժամանակաւորի։ Սաղ. ԻԴ. 12։

Կարդա տուրբ Երեսարանը. գրուած է, որ Քրիստոս կը խոստանայ երեն սիրելի աշակերտներէն մշտնջենաւոր չհեռանալ և անոնց հետ մնալ. "Ու ահա ես ամէն ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչև՝ ի կատարած աշխարհի"։ Մտթ. ԻԸ. 20։ Այս ինչով ըսել չէ, որ կատարած աշխարհի ըլլալէն վերջը պիտի Քրիստոս երեն առաքեալներէն բաժնուի, այլ յաւիտեան մշտնջենաւոր է Քրիստոսին առաքեալներուն հետը ըլլալը, թէ աշխարհիս մէջ և թէ արքայութեան մէջ։

Աստեն բողոքական քարոզիչները թէ որ ճշմարիտ և ուղղափառ տուրբ գրոց հետեւող ըլլային, մոլար մօտ հակառակ տուրբ գրոց վեհնութիւն չեսային այն տուրբ Երեսարանին մէջը գրած ինչ բառին որ վերը յիշեցինք, այլ ուղիղ մտօք այն ինչը այն տուրբ գրոց մէջ յաւիտենական և մշտնջենաւոր երեւցած ինչնե՛ր հետը բաղդատելով, անշուշտ երեսնք ալ պիտի համոզուէին ու խոստովանելու էին ամենեքեանեալ տուրբ կուսին Աստուածածնի մշտնջենաւոր կուսութիւնը։ Ինչպէս որ ամէն ուղղափառ ազգ քրիստոնէ-

եց կը խոստովանին ամենելջանիկ Մարիամ սուրբ կուսա-
ևին աստուածամայրութիւնը և մշտնջենաւոր կուսու-
թիւնը։

Ինչ ատոր համար մեր առաքելական և ուղղափառ
սուրբ եկեղեցին կ'երգէ. «Նորին խորհուրդս սոսկա-
» լիս ի քեզ սեամանի Աստուածածնին, յղութիւն ան-
» սերմնական, ծնունդ անարատ, կուսութիւն յետ
» ծննդեան միտով անապական»։

Վասնք, այս բողոքական քարոզիչները չե թէ միայն
ինչ բառին վրայ մոլար մեկնութիւն կուտան, այլ
և անդրանիկ բառին վրայով ալ ջարուչար խորհրդածու-
թիւն ընելով և հակառակ սուրբ գրոց մեկնութիւն
տալով գայթակղութիւն կուտան։ Այսան ալ աւետա-
րանիչը գրած է։ «Մինչև ծնաւ զորդին իւր զանդ-
» րանիկ»։ Մատ. Ա. 25։ Ղուկ. Բ. 7։ Այս անդրանիկ
բառին վրայով հոգեւորապէս պիտի խորհրդածու-
թիւն ընեմք և ոչ մարմնաւորապէս. վասն զի հոգե-
ւոր է սուրբ Աստուածածնին ամեն մեկ խօսքերը և ոչ
մարմնաւոր. վասնորոյ հոգևորապէս քննելու կը պար-
տաւորիմք, ինչպէս Պօղոս առաքեալն ալ կը խրատէ
մեզի։ «Այրդապետութեամբ Հոգւոյն Աստուծոյ
» հաստատեմք»։ Ա. Կորն. Բ. 13։ Օրօրինակ, թէ
որ մարմնաւոր անդրանկութեան իմանամք Յիսուսի Քրիս-
տոսի համար գրուած անդրանկութիւնը, պիտի հաստե-
մատեմք Յեսուէի որդւոյն Նաւեայի անդրանկութեա-
նը հետ, որ առաջնածին եղաւ իրեն միւս բնական
եղբայրներուն մէջ։ Ա. Թագ. ԺԶ. 10։ Նոյնպէս ալ
Նաւաս անդրանիկ որդի կը համարուէր Թահաթայ, և
Յակոբ եղբայր նորա կրնար. բայց Նաւաս մէկ ոտք
նահանի փոխարկելով՝ վաճառեց իրեն անդրանկու-
թեան իրաւունքը իրեն կրնար եղբօրը Յակոբայ։
Ծննդ. Իե. 31։ Նաև և Յակոբ նահապետին երկոտասան
որդւոց մէջ Ռուբէն անդրանիկ էր. վասն զի նախա-

ձին էր .բան զմիւս եղբարսն . ըստ այնմ՝ « Ռուբէն
» անդրանիկ իմ » : Ծննդ . խթ . 3 : Իսկ այս անդրանկու-
թեան փառքին և իրաւունքին մերժեցաւ Ռուբէն ,
վասնզի անօրինեցաւ առաջի Աստուծոյ , անիրաւութիւն
և յանդգնութիւն ընելով հօրը Յակոբ նահապետին .
վասնորոյ հայրը Ռուբէնին անդրանկութեան օրհնու-
թիւնը և բարութիւնը տուաւ Յովսէփ որդւոյն , որ
էր իրեն միշտ սիրելի և հնազանդ . ուստի անդրան-
կութեան վայելուչ օրհնութիւնը տուաւ անոր ասանկ
ըսելով . « Արդեակ աճեցեալ Յովսէփ . արդեակ աճեց-
» եալ նախանձելի , արդեակ իմ մատաղ՝ առ իս դար-
» ձիր » : Ծննդ . խթ . 1 :

Ահա այս ամենը մարմնաւոր և բնական անդրան-
կութիւն մը յայտնեցին մեզի , որ ըսել է . ով որ յա-
ռաջնածին որդի է ծնողացը՝ կ'անուանի անդրանիկ ,
միւս յետագայ ծնածներուն նայելով :

Բայց այս վերոյգրեալց օրինակներուն պէս չէ՝ և
բնաւ չի յարմարիր Յիսուսի Քրիստոսի վրկչին մերոյ
անդրանիկ անուանիլը . որովհետեւ անօրհնութեամբ և
ներգործութեամբ սուրբ Հոգւոյն էր անոր կատա-
կան պատնէշել սուրբ ծնունդը : « Որ ի նմանէն ծնեալ
» է՝ ի Հոգւոյն սրբոյ է : Մատ . Ա . 20 : Հոգին սուրբ
» եկեսցէ ի քեզ , և զօրութիւն Բարձրելոյն հովանի
» լեսցի ի վերայ քո » : Ղ-ի . Ա . 35 : Ուրեմն հոգեւոր
առաւելութեամբ և խորհրդաւոր անդրանիկ-ութիւն պիտի
ճանաչենք Յիսուսի Քրիստոսի անդրանիկ անուանիլը :

Ետ՝ սուրբ գիրքը մեզի յայտնի կը բացատրէ այս
անդրանիկ բառին խորհրդաւոր նշանակութիւնը , որ
շատ աեղ կ'անուանէ Յիսուս Քրիստոսը միածին .
« Տեսաք զփառս նորա , փառս իբրեւ զմիածնի : Հայր
» տուած ոչ ոք ետես երբէք յոչ միածին Որդի , որ
» է ի ծոց Հօր , նա պատմեաց մեզ » : Յով . Ա . 14—18 :
Ա . կոր- . Դ . 9 : Ուրեմն կ'ըսէ որ Յիսուս Քրիստոս

միածին որդի հօր Աստուծոյ՝ սուրբ կուսէն մարմնա-
նալով, կուսական հրաշալի ծննդեամբ ծնանելով, ա-
նուանեցաւ անդրանիկ որդի սուրբ կուսին։ "Եւ
"ծնաւ զորդին իւր զանդրանիկ"։ Ահա ևս նոյն միա-
ծին բառին նշանակութիւնը ունի։

Աստ համար սուրբ գրոց հետեւելով՝ կը գրէ Հնարհալին մեր այսպէս։ "Իսկ զինչ անդրանիկն ա-
"սել իմանի. ոչ իբրեւ զառաջին գալով՝ վերջին ծնե-
"ցեալ ըստ հասարակաց սովորութեան մարդկան. զի
"զայս լուծանէ միածինն անուն"։ Ի Մեկ. Մոփ. Գև. Ա։

Ահա ևս այս տեղ անդրանիկ բառը սուրբ գրոց հետ բաղդատելով՝ միածին բառին նշանակութիւնը ունե-
ցաւ. ըսել է որ անդրանիկ գրուելով՝ միածին պիտի ի-
մանալի. որ պիտի չունենայ ուրիշ եղբայր կամ քոյր. այլ մի միայն որդի՝ պարզ ըսելիք մի հապիկ ըսած. ինչ-
պէս որ Յիսուս՝ միածին և անդրանիկ որդի էր հօր Աստուծոյ համագոյ աստուածութեամբն, նոյն ինքն եղաւ մարդեղութեամբն միածին և անդրանիկ որդի ամե-
նեցուն սուրբ կուսին Աստուածածնի։ Աստ հա-
մար կը գրէ սուրբ Պետրոս Նարեկացի։ "Ան որդի
"Հօրն միայնոյ, և միածին անդրանիկ Աստուածա-
"մայր Տիրածին կուսին"։ Նարեկ. Ոդ. ճ։ Աստ մտօք կը գրէ Պետրոս Ակեւռացին երանելի վարդապետան մեր։ "Ի որդիութեան պատիւ, զոր անդրանիկն հօր՝
"անդրանիկ մօր լինելովն՝ մեզ սեպհականեաց"։ Ի Մեկ. Եփես։

Այլ ևս խորհրդաւոր նշանակութիւն ունի այս անդրանիկ բառը. որ ըսել է նմանը ոչ յառաջ գեանաւած և ոչ յետոյ։ Այս օրինակ անդրանիկ ըլլալը Յիսուսի՝ մարդ-
գործութեամբն Դաւթի կը յայտներ սուրբ Հոգին։ "Նա կարդացէ առ իս, հայր իմ ես դու և այլն։ Նա
"անդրանիկ արարից զնա, և բարձր քան զամենայն
"թագաւորս երկրի"։ Սաղմ. 88. 24—25։

Այլ, Յիսուս Քրիստոս բնական որդի ըլլալով հօր Աստուծոյ, ճշմարտապէս հօր Աստուծոյ անունը տալ լավ շատ անգամ յայտնի կ'ընէր, որ այս Աղբիւրը իրեն համար գրուած էր, ինչպէս "Ոհանամ զքեզն Հայր" "տէր երկնի և երկրի: Ընդունայն ինչ տուաւ ինձ ի "Հօրէ իմմէ: Հայր իմ եթէ հնար իցէ և այլն": Մատթ. ԺԱ. 25—27: Ի Ջ. 42: "Պատուեմ զՀայր իմ: Ես "և Հայր իմ մի եմք: Յայսմիկ փառաւորեցաւ Հայր "իմ, և այլն": Յով. Ը. 4: ժ. 30: ԺԵ. 8:

Ուրեմն "Ես անդրանիկ որդին ջնա" մարգարէութիւնը խակ և խակ Քրիստոսի վրայ էր. որ անդրանիկ եղաւ մի միայն ըլլալով. որուն բնական և իսկական նմանը ոչ երբեք եղաւ, ոչ յառաջ և ոչ յետոյ: Ընդ այս մարգարէութեան խորհրդական մտացը հետեւելով՝ Պետրոս վարդապետը կը գրէ՝ի մեկնութեան Գործոց Ա. 18: "Ընդրանիկ է այն՝ որ ոչ "յառաջ քան զինա ոչ ոք լինի. և ոչ յետոյ այլք եղեն "նման նմա": Պօղոս առաքեալ այս վերոյիշեալ մարգարէութեան միտքը բոլորովին բացատրելով Քրիստոսի վրայ, ու անդրանիկ բառով անոր աննման գերազոյն ոեղութիւնը և իշխանութիւնը յայտնելով կը գրէ: "Բանզի ում երբէք ասաց ի հրեշտակաց, որդի "իմ ես դու՝ ես այսօր ծնայ զքեզ, և դարձեալ թէ "ես եղէց նմա ի հայր, և նա եղիցի ինձ յորդի: Ընդ "յորժամ մուծանիցէ զանդրանիկն յաշխարհ "ասէ. երկրպագեսցեն նմա ամենայն հրեշտակք Աս "տուծոյ": Եբր. Ա. 5—6:

Տեսանեք, որ Յիսուս Քրիստոս ոչ միայն հօր Աստուծոյ է միածին անդրանիկ որդի էական, այլ և սրբոյ Կուսին գերբնական: Ընդ սուրբ գրոց համեմատ աքանչելապէս աստուածաբանելով կը գրէ սուրբ Գրիգոր Նարեկացի: "Ընարիչն յեղակարծումն մարդ եղով "ճշմարիտ սկզբնածին, ահա ոչ զկնի եղելոց երկրաս

» տեղիցս նմանութեան, այլ նոր և չքնաղ, Թագա-
» ւորացդ վեհափառ, որ ոչ ցուցաւ 'ի դարս, և ոչ
» գոյացաւ 'ի ժամանակս, անդրանիկ ըստ Պաղմոսին,
» քան զամենայն Թագաւորս երկրի » : Կոլ. Ա. 5 :

Պատճէն բարեվիս ընթերցող, Թէ որ քրոջական քարոզիչներըս ուղղափառ մտօք կարդային սուրբ գիրքը, Յոգին սուրբ կ'առաջնորդեր անոնց ալ՝ և կ'ուսուցանէր անդրանիկ բառին խորհրդական զանազան զօրութիւնները, կ'իմանային անունք ալ և կը քարոզէին խոստովանելով և, որ մեր Յիսուս Քրիստոս է անդրանիկ, այսինքն՝ առաջին և գլուխ և հրամայող 'ի մէջ նախասահմանեալ և ընտրեալ սրբոց արքայութեան երկնից ժառանգաւորաց. ինչպէս Պօղոս առաքեալ կը քարոզէ այս խորհրդական անդրանկութիւնը Յիսուսի այսպէս : " Ո՛ի զորս յառաջագոյն ճանաչէր, » յառաջագոյն և հրաւիրեաց կերպարանակից լինել » պատկերի որդւոյն իւրոյ. զի եղիցի նա անդրանիկ » 'ի մէջ եղբարց բազմաց » : Հռոմ. Ը. 29 : Կոլ. Ա. 15 :

Նա և Յիսուս Քրիստոս է անդրանիկ 'ի մեռելոց, այսինքն՝ առաջին և հեղինակ և պատճառ յարութեան ամենայն մեռելոց, որ պիտի յարութիւն առնեն անմահ կենդանութեամբ հոգւով և մարմնով 'ի վերջին աւուրն դատաստանի. և այս հաւատոյ յոյսը հաստատուն ունիմք Յիսուսի Քրիստոսի ինքնազօր և ամենազօր յարութեան շնորհիւն. ասոր համար կը գրէ Պօղոս առաքեալը : " Նա նա է գլուխ մարմնոյ եկեղեց- » ւոյ որ է սկիզբն, անդրանիկ 'ի մեռելոց, զի եղիցի » ինքն յամենայնի յառաջացեալ » : Կոլ. Ա. 18 : Տե՛ս Ա. կորն. ԺԵ. 20 :

Այս տեսակ խորհրդական անդրանկութիւնը Յիսուսի փրկչին մերոյ խոստովանելով կը քարոզէ ուղղափառ աւետարանը, որ ոչ ասոր միայն կը վերաբերի, այլ և ամենայն հաւատացելոց, որոնք ամենեքեան ալ անդրանիկներ կը կոչուին, ինչպէս Պօղոս առաքեալ կ'ըսէ. " Եկեղեցի անդրանկացն, որ գրեալ են յերկինս » : Եբր. ԺԲ. 23 : Ասոնք ալ կ'ըսուին անդրանիկներ, վասն զի ասոնք ալ Յիսուսի Քրիստոսի հետ միանալով հաւատքով և մկրտութեամբ, ինքն ալ անդրանիկ ըլլալուն համար, կը ստանան անդրանկութեան պատիւը, որ է ժառանգել երկնից արքայութիւնը, ինչպէս Յիսուս Քրիստոս ինքն ալ կ'ըսէ. " Ժառանգեցէք զպատրաստեալ ձեզ » արքայութիւնն յաշխարհէ » : Մատթ. Ի. 34 :

» րոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի, որ եղեւ պատուղ
» և անդրանիկ ամենայն ննջեցելոց » ։ Ի Գ.մա ։

Ընդ՝ սուրբ գիրքերուն վկայութիւններովը հաստատեցաւ անդրանիկ բառին զանազան իմաստները. ուրեմն արբազան աւետարանչին Մատթէոսի գրածը՝ “Մինչեւ ծնաւ զորդին » իւր զանդրանիկ », թէ որ սուրբ Հոգիով քննենք, և բաղդատենք սուրբ գրոց վկայութեանցը հետ, պիտի չիմանանք որ Յիսուս Քրիստոս անդրանիկ որդի եղաւ սուրբ Կուսին՝ և վերջը սուրբ Կոյն ունեցաւ այլ և այ որդիներ բնականապէս. և այս տեսակ մոլորական մտաց հետեւելով, չըրանամք պիտի ամենեցունեաւ արբոյ Կուսին մշտնջենաւոր կուսութիւնը, այլ ուղղախոհաւ մտօք պիտի դաւանիմք զնա Աստուածածին և միշտ կոյս ։

Վ.իտեմ, բողոքական քարոզիչները պիտի առաջարկեն. ինչպէս որ կը լսեմք, սուրբ Աւետարանէն՝ հետեւեալ գրուածները վկայութիւն բերելով կը պընդեն, որ Յիսուս իրեն բնական եղբայրներ և քոյրեր ունեցաւ. վասն զի գրուած է ։ “Մինչդեռ նա ընդ » ժողովուրդեան խօսէր, ահա մայր նորա և եղբարք » նորա կային արտաքոյ՝ և խնդրէին խօսել ընդ նմա » ։ Մտթ. ԺԲ. 46—47 ։ Մարկ. Գ. 31—32 ։ Ղ.ւկ. Ը. 19—20 ։ Նաև թէ՝ “Ամա ուստի է այս իմաստութիւն և զօրութիւն. » ոչ սա է հիւսանն որդի. ոչ մայր սորա կոչի Մարիա » ամ, և եղբարք սորա Յակոբոս՝ և Յովսէս՝ և Սի » մոն՝ և Յուդաս, և քոյրք սորա ամենեքեան առ մեզ » են. արդ ուստի է սմա այս » ։ Մտթ ։ ԺԳ. 54 ։ Մարկ. Զ. 3 ։ Ղ.ւկ. Դ. 16 ։ Այս եղբարք և քոյրք Յիսուսի ա նուանեալները չեն Յիսուսի համամայր կամ համահայր եղբարք, այլ մերձաւոր ազգականք ։ Որ օրինակ Աբրահամ նահապետը որդի էր Նաքովրայ, և Ղոտ որդի էր Ներանայ. և այս Ներանը եղբայր էր

ըսվ Աբրահամու՝ անոր եղբայր անուանեցաւ Լ֊ովտ, որպէս գրէ։ "Եւ երբեք լսաւ Աբրահամ թէ գերի
» վարեցաւ եղբայր իւր Լ֊ովտ . . . և զԼ֊ովտ զեղբայր
» իւր և զամենայն ստացուածս իւր դարձոյց »։ ծննդ.
ԺԴ. 14—16։ Ինչա սաոր պէս ալ Յակոբ նահապետին
մայրը՝ Լ֊աբանին քոյրը Ռեբեկան ըլլալով, Լ֊աբան
իրեն եղբայր անուանեց Յակոբ նահապետը։ "Ո֊վ
» ասէ Լ֊աբան ցՅակոբ . զի եղբայր իմ ես դու , ոչ
» ծառայեացես ինձ ձրի »։ ծննդ. ԻԹ. 15։

Ինչպա սուրբ գիրքը մեզի կը սորվեցունէ որ ազգա֊
յինք և ազգականք միմեանց եղբօր կ'անուանին. "Լրք
» եղբարք էք , ընդէր զրկէք զմիմեանս։ Եւ. Բ. 13։
» Գործ . Է. 26։ Ինարդարէ յարուսցէ ձեզ տէր Լ֊ստու֊
» ած ձեր յեղբարց ձերոց իբրեւ զիս , նմա լսիջէք։
» Բ. Օրէ. ԺԸ. 15։ Գործ . Է. 37։ Պատմեցից զանուն քո
» եղբարց իմոց։ Սաղ. ԻԱ. 22։ Ո֊վ ուխտիք խնդրէի
» ես իսկ ինքն նզով լինել ի Քրիստոսէ վասն եղբարց
» իմոց և ազգականաց ըստ մարմնոյ ». Հռով. Թ. 3։
Ինպա ուրեմն սուրբ գիրքերուն հեղինակութեանը թէ
որ հետեւին, անշուշտ պիտի համոզուին բողոքական
քարոզիչներն ալ ուղղափառ և բարեպաշտ քրիստոն֊
եայներուն պէս . որ Յիսուսի Քրիստոսի եղբօր և քոյր
կոչուածները Մարիամ սուրբ կուսին և սրբոյն Յով֊
սեփայ մերձաւոր ազգական էին . որովհետեւ Մարի֊
ամ Կղէոպասյ բսուածը . որ միւս Մարիամ կը կոչուի
սուրբ Աբեսարանին մէջ, Լ֊ստուածածնի մօրաքեռ
դուստրն էր , ըսել է որ՝ մօտաւոր ազգականն էր
սուրբ կուսին . ինչպէս կը գրէ սուրբ Լ֊եսարանիչը ,
եւ կայն առ խաչն Յիսուսի մայր նորա և քոյր մօր
նորա Մարիամ Կղէոպասյ։ Յօհ . ԺԹ . 25 . այսինքն կին
Կղէոպասյ։ Լ֊յս Կղէոպասին , որն որ եղբայր էր Յով֊
սեփ աստուածահօր , և Մարիամին զաւակներն են Ա.
Յակոբ եօթանասուններեքն մէկը և Լ֊րուսաղէմի ա֊

առջին եպիսկոպոսը, որ ընդհանրապես եղբայր սեաուն կ'անուանի. ասոր անունով երբեմն կը կոչուէր Անա բիամ իւր մայրը՝ Մարիամ Յակոբայ ։ Մտթ. ԻԷ. 56. Բ. Յուստոս կամ Յովսէս և կամ Բարսաբայ եօթանասուններէն մէկը, որ երկրորդ եպիսկոպոս եղաւ Երուսաղէմի. Գ. Սիմոն Կանանայի կամ Շմաւոն նախանձայոյզ կոչուած երկոտասաններէն մէկը, որ Երուսաղէմի երրորդ եպիսկոպոսը եղաւ. Դ. Յուդա կամ Թադէոս կամ Յուդա Յակոբեան. այսինքն եղբայր արդարոյն Յակոբայ երկոտասաններէն մէկը։ Ասոնց այս չորսը թէ տուրբ կոյս Աստուածածնին մօտ բաքրոջը դասեր ըլլալնին, և թէ Յովսէփ առաուածահօր մերձաւոր ազգական, այսինքն եղբօրորդիքը ըլլալով՝ եղբայր կ'անուանէին Յիսուսի, Սաղոմէն ալ աստղ քոյրը ըլլալով որ էր կին Զեբեդեայ և մայր Յոհաննու արբսալան Աւետարանչի և մեծ առաքելոյն Յակոբայ. Մտթ. Ի. 20. քոյր կը համարուէր ։

Աւրդ հիմայ այս տեղս կը հարցունեմք բողոքական քարոզիչներուն, որ այս չիշեալ ամէն ազգական մերձաւորները Մարիամու արբոյ կուսին՝ արդեօք չե՞ն մի համարուիր և կամ չեն մի՝ կոչուիր Յիսուսի Քրիստոսի եղբարք և քոյրք ըստ տուրբ գրոց. ևս և Յոհաննու Մկրտչի մայրը Եղիսաբեթ ալ տուրբ կուսին Աստուածածնի ազգական չէր մի. "Եւ ահա Եղիսաբեթ ՚ ազգական քո ՚. Ղուկ. Ա. 36։ Աւրեմն այս ալ քոյր Յիսուսի արժան էր անուանիլ ըստ տուրբ գրոց, ա հա տուրբ Աւետարանէն այս յայտնի եղած ազգականները մեր միտքը համոզած են, որ այն գրուած Յիսուսի Քրիստոսի եղբայր և քոյր անուանեալները իրեն մերձաւոր ազգականները էին, ինչպես վերը յիշեցինք. Մտթ. ԺԲ. 46—47 ։ ԺԳ. 54 ։ Մարկ. Գ. 31 ։ Ջ. 3. Ղուկ. Ը. 19 ։ Դ. 16 ։ Նաև Յիսուս Քրիստոս իրեն Աւետարանական քարոզութեանը հնազանդողները և հա

գեհենեայ պատուհասները կատարումները իրեն մայր եղբայր և քոյր՝ անուանեց. "Ո՞վ որ առնէ զկամս "հօր իմոյ որ յերկինս է, նա է իմ եղբայր՝ և քոյր՝ "և մայր": Մաթ. ԺԲ. 50:

Այլեւ կարելի է որ չհիշեք այս սեղս հնորհական պատուհասնիս. որով կ'անուանիմք պղեք հօր Աստուծոյ և եղբարք Քրիստոսի. "Նոյն ինքն Հոգին վկայէ հոգւոյս մերում, եթէ եմք պղեք Աստուծոյ "և եթէ պղեք, ապա և ժառանգք Աստուծոյ՝ և "ժառանգակիցք Քրիստոսի". Հռով. Ը. 16: Գաղ. Դ. 5: Ա. Յով. Գ. 1—2:

Ընդ՝ այս վերոյգրեալ վկայութիւններով իմացուցինք բոլոքական քարոզիչներուն. որ Յիսուսի Քրիստոսի եղբարք և քոյրք կը կոչուին իրեն մերձաւոր ազգականները և հնորհական պղեք հօր Աստուծոյ. և և իրեն սեպհականած քաղաքի դրացիքն և բնակակիցները անգամ եղբարք Յիսուսի կ'անուանին սուրբ Գրոց տարրանին մէջ, ինչպես ինքն Յիսուս Քրիստոս ծնաւ՝ ի Բեթղեհէմ, և անաւ՝ ի Նազարէթ, բայց բնակեցաւ ի Գալիլեայ՝ կոչեցաւ Գալիլեացի. ընթերցիր. "Մատ. ԻԱ. 11: ԻՀ. 69: Յով. Է. 41—52: Ու սա Գալիլեայի բնակակիցներն ալ Յիսուսի եղբարք կ'անուանէին համարեալ իբրեւ քաղաքական եղբայրութիւն, վասն որոյ գրուած է այս Գալիլեացիներուն համար, որ յամառեալ կը մնային իրենց անհաւատութեան մէջ իրենց սոսկալի կամապաշտութեամբը, և չէին համոզուեր Յիսուսի յայտնի ճշմարտութենէն և սքանչելի աստուածային գործքերէն. "Ու ասեն ցնա եղբարքն "նորա, գնա՛ աստի, և երթ՝ ի Հրեաստան և այլն": Ու թէ՝ "Բանկի և եղբարքն իսկ չէին հաւատացեալ "՝ի նա". Յով. Է. 3—5: Ընդ սա այս Գալիլեացւոց անհաւատութեանը օրոմնելով ըսաւ Յիսուս. "Ոչ "է մարգարէ անարգ, բայց եթէ՝ ի գաւառի իւ-

» լուսմ, և յաղագսոհմի և ի տան իւրում » . Մտկ . Ջ . 4 :

Ընդքէն այս ամեն անժխտելի տեղեկութիւնը սուրբ գիրքերէն առնելով պիտի հաստատէին բոլոր քանի քարոզիչները , և այսուհետեւ զղջալով և ապաշխարելով ջերմեռանդութեամբ պիտի խոստովանէին ամենեսեան սուրբ կուսին Աստուածածնութիւնը , և մշտնջենաւոր կուսութիւնը , և բնաւ չիպիտի հետեւէին ու հետեւցուներէին միամիտները սոսկալի մոլորութեան Հելվիդիոսի չարափառին , որ ասանկ կը բարբանջէր . սուրբ կոյս Աստուածածնին Յիսուս Քրիստոսը ծնաւ կուսութեամբ , բայց յետոյ ուրիշ որդիներ ունեցաւ ի Յովսեփայ , կ'ըսէր :

Այս չարաչար մոլորեալն երեւեցաւ չորրորդ դարուն մէջ , (տես Տիեզ . պատ : Բ . Հատ . երես 582) : Ու այսօրուան օրս այս մոլորութիւնը կը լսենք բողոքական քարոզիչներուն բերնէն ալ քարոզուած , վասնզի աստուածամայրութեան հետ մշտնջենաւոր կուսութիւնը կ'ուրանան և ուրացուներ կուտան իրենց հետեւողներուն :

Ասանկ տեղուանքը գիտեմ , բարեմիտ ընթերցողները խորհրդածութիւն կ'ընեն և իրաւունք ունին ըսելու , որ այս բողոքական քարոզիչները աւետարանական եմք կ'ըսեն և սուրբ գիրք կը կարդան ու կը քննեն , ինչո՞ւ համար համեմատ սուրբ գիրքին չեն քարոզեր և չեն համոզուիր բնաւ սուրբ գրոյ ըսածին ճանապարհը անխոտոր ընթանալու . այս տարակուսութիւնը կը լուծանէ սրբազան Պօղոս առաքեալը այսպէս գրելով . « Յաւիտեան ժամ ուսանին և երբէք ի » գիտութիւն ճշմարտութեան ոչ հասանին » : Իրաւի կը կարդան , բայց ոչ սուրբ Հոգիով կը քննեն , այլ շատ անգամ զանազան աղանդաւորներուն տուած մեկնութեանցը հետեւելով , սուրբ Հոգին Աստուծոյ չեն ունեներ իրենց առաջնորդ և ուղիղ ուղիը և

ձմարիտը իմանալու և քարոզելու. "Հոգին ճշմարիտ
"ուսմանց առաջնորդեսցէ ձեզ առնոյն ճշմարտու-
"թեամբ". Յով. ԺԶ. 13։ Այս սուրբ Հոգւոյն ներ-
քին ազդեցութիւնը ճշմարտութեան քարոզելով կ'ըսէ
Պօղոս առաքեալը. "Ուր որ կարէ ասել՝ սէր ջհետուս,
"եթէ ոչ Հոգւովն սրբով" Ա Կորն. ԺԲ. 3։

Իսկ այս սուրբ Հոգւոյն Աստուծոյ հնարհաց ազ-
դեցութիւնը ներշնչութիւնը անանկ միաբերան ու
սրտերուն մէջ բնաւ ներգործութիւն չունենար, որով
մոլորութեան և մեղքի կամակոր ընդունակ, և
մարդկային հնարած ազանդաւոր ուսմանց խաբուած
են, որ յայտնի ճշմարտութիւնը կը սուեն և յայտնի սը-
սութիւնը կը ճշմարտաբանեն, "Անչեա մոլորեցու-
"ցանել՝ թէ հնար ինչ եցէ և զընտրեալսն" Մտթ. ԻԴ. 24։

Աստ համար երանելին Պօղոս սրբազան առաքեալը
յաւուրս խրատ կը գրէ Տիմոթէոսի եկեղեցւոյն. որ
ջրլայ թէ խաբուին ազանդաւորներէն ու մոլորեցու-
ցիչներէն՝ փոփոխամիտ լլլալով ուղղոյ պէս այսպէս
պատուիրելով. "Ի յայտմհետէ եցեմք ոտիւք խոտել
"եալք և տատանեալք յամենայն հողմոց վարդապե-
"տութեան, խաբէութեամբ մարդկան. խորամանկ
"կութեամբ՝ ի խաբէութիւն մոլորութեան, այլ ճըշ-
"մարտեալք սիրով՝ աճեսցուք ի նա զամենայն, որ է
"գլուխ Քրիստոս". Եփես. Դ. 14—15։

10251982

ԳԼՈՒԽ ԺԲ.

ԱՅԴ՝ եկ մի՛ բարեմիտ ընթերցող, մեկ քննութիւն մըն ալ ըրե այս բողոքական քարոզիչներուն վրայով, որ քրիստոնէական հաւատով ըստաւրուած ապերուն վէջ կը մտնան կը շրջին ու կ՚ըսեն, առաքելութեան պաշտօն պիտի կատարեմ՛ք ձեղի տալը Աստուածը քարոզելով։ Ասոնց ինչ կը նմանի գիտէք. Աբիսախապես փիլիսոփային ցոյց տուած խեղացնար քժշկին ծ՚ի ծաղելի գործին կը նմանի, որ քնաւ չէր ուզեր հիւանդութեան այսքան թիւն ընել, անոնմէ հեռու կը փախչէր։ Այդ ամեն օր, ձեռքը՝ ծոյը՝ պրպտանը լեցուն դեղերով՝ առողջնալուն տունը կը վազեր ձեղի դեղ պատրաստելի ըսելով. ոմանց կ՚ըսեր, հարկաւ այսօր ձեղի արիւն առնել պէտք է. և մյսոց ալ՝ տասմնըս մաքրելու դեղեր կուտար, և շատերուն կը պատուիրեր երկար դարման ընելու. վերջապես ամենուն ծիծաղելի եղեր էր։ Այսորդ այս մտամոլար քժիշկը տեսաւ Աբիսախապես փիլիսոփային, ծիծաղելով անոր վրայ ըսաւ նրան մերձաւորութիւնը և աշակերտութիւնը. ահա տեսէք՝ գոյ քաղաքներուն ճարտար քժիշկին. որուն ճարտարութիւնը առաւել յայտնի կ՚ըլլայ առողջ անձանց վրայ՝ քան թէ ի վերայ ախտաւոր անձանց և հիւանդաց։

Այսս սկիզբն օրինակի՝ այս բողոքական քարոզիչներուն գործը ոչ թէ միայն բնական դրութեան է հակառակ, այլ և աւետարանական և առաքելական պաշտօնի իսկ և իսկ անհաւանութիւն։ Այսն ալ Աբիսախապէ վրկչին մերոյ է այս վճիռ։ "Ոչ է պիտոյ բժիշկ կատոյ, այլ հիւանդացն" ։ Մտթ. Թ. 12։ Այնպէս է նէ՝ այս բողոքական անուանեալ քարոզիչները ինչ բան ունին Աբիսախապական ուղղութիւն հաւատքով և վարուքեան շնորհիւ յաւիտենական կենաց ժառան-

գաւառ քրիստոնեայ ազգերուն մէջը։ Ձի որ մեր աչք Յիսուսը վճռեր է։ "Ար հաւատայ և մկրտեցի, "կեցցէ"։ Մարկ. ԺԶ. 16։ Ինանկ է նէ այս հաւատաց- եալները սանոց հաւատոյ քարոզութեանը կարօտ չեն, առողջ ոզջամիտ գործունեայ հաւատք ունին։ "Ալինչ "է քժիշկ ոզջոց"։ Անդ. Բ. 17։ Ալ հոգեւոր հի- անդներուն, անհաւատներուն, կռամոլներուն, հե- թանոսներուն միայն քարոզելու են։ Ալ ապաւանելի վարմունք հակառակ աւետարանական քարոզութեան։ Ալսաքեալներուն ինչ պատուիրեց Քրիստոս։ "Ինա- "ցէք այսուհետեւ՝ աշակերտեցէք զամենայն հեթա- "նոսս, մկրտեցէք զնոսա յանուն Հօր՝ և Որդւոյ՝ և "Հոգւոյն սրբոյ"։ Մատ. ԻԸ. 19։ Մարկ. ԺԶ. 15։ Ինչ է ար՝ աւաքելական պաշտօն ունեցողները պիտի Ա- ւետարանը քարոզեն քաղաքէ քաղաք, գիւղէ գիւղ հեռաւոր երկիրներ ընդ ծով և ընդ ցամաք անցնե- լով, բայց Աւետարանը չքարոզուած տեղուանք՝ ան- հաւատներուն, հեթանոսներուն մէջը։

Տէս, Պետրոս աւաքեալը անհաւատ հրէայներուն քարոզիչ ընտրուելով՝ աներկիւղ անոնց մէջը սկսաւ քարոզել։ Ալսքին քարոզը եղաւ Հոգին սուրբ ընդ դուներէն եռքը Երուսաղէմին մէջը ամեն կողմէն ժողվուած անհաւատ հրէայներուն՝ սանկ սկզբնաւո- րութիւն ընելով. "Ալրք հրէաստանեայք՝ և որ բնա- "կեալ էք Երուսաղէմ, ամենեքեան, այս ձեզ յայտնի "լեցի և ունկնդրեք բանից իմոց"։ Գործ. Բ. 14։

Ալս քարոզութիւնը արդիւնաւորեցաւ. որովհե- ետեւ երեք հազար հոգի չափ ընդունեցին քարոզու- թիւնը և մկրտեցան. ինչպէս գրուած է. "Ամանց յօ- "ժարութեամբ ընկալեալ զբանս նորա մկրտեցան. և "յաւելան յաւուր յայնմիկ ոգիք իբրեւ երեք հա- զարք"։ Անդ. Բ. 41։

Ալ Երանելի կը կարդանք որ Սողոմոնի տաճարին ա-

ժամին մէջը, ուր սեղ Պետրոս առաքեալն և Յով
հաննէս աւետարանչին հրաշագործութեամբ այն՝ ի
ծնեալ մուրացիկ մարդը Յեսուսի Քրիստոսի անու
նով բժշկուած էր. եկած ժողվուած էին անհաւատ
հրէայները, ու անոր վրայ նայելով կը զարմանային։
Ապառնոյ Պետրոս առաքեալը այն կաղին բժշկութիւ
նը յարմար առիթ մը ունենալով՝ անոր սեղը քա
րոզելու. "Արք Իսրայէլացիք, ինչ զարմացեալ էք ի
" վերայ այսորիկ", ըսելով շարունակեց իրեն ճշմարիտ
աւետարանական քարոզութիւնը, որուն մէջ երեւնին
ուսուա Յեսուսի Քրիստոսի գէմ ըրած իրենց ապի
րատութիւնը և ընդդէմ ճշմարտութեան ըրած յան
ցանքնին. "Դուք զսուրբն և զարդարն ուրացայք և
" խնդրեցիք զայր ի մահապարտս շնորհել ձեզ։ Իսկ զա
" ռաջնորդ կենացն սպանիք, զոր Աստուած յարոյց ի մե
" ռելոց, որում մեք իսկ վկայ եմք" ։ Գործ. գ. 14—15։

Թէպէտ այս աւետարանական քարոզութեան պատ
ճառով Պետրոս և Յովհաննէս երանելի առաքեալնե
րը հրէից քահանայապետներուն, իշխաններուն, ա
ռաջնորդներուն զայրանալով՝ բանտարկեալ եղան,
բայց այն քարոզութիւնը լսող հրէայներէն հաւատա
ցին հինգ հազարի չափ։ "Իսկ բազումք ի լսողաց
" բանին հաւատացին, և եղեւ թիւ մարդկան իբրեւ
" հազարաց հնգից" ։ Գործ. դ. 4։

Տեսանք առաքելութեան պաշտօնին վսեմակը, և
մանաւանդ Աւետարանի քարոզութեան արդիւնքը, որն
որ առաւել անհաւատներուն մէջը յայտնուեր է։
Հոգեբական քարոզիչները՝ սուրբ Հոգիով ընտրուած
եմք, առաքելական պաշտօն ունիմք, Աւետարանը պի
տի քարոզեմք կ'ըսեն, բայց ինչո՞ւ համար անհաւատ
ներուն մէջ չեն քարոզեր, քրիստոնէից մէջ մներ են։
Մի տակալն և տարտամելի խոստովանութիւն։ Սուրբ
Հոգւոյն առաւծոյ պաշտելի և երկրպագելի անունը

տալով իրենց խարդախութիւնը ծածկել կ՚ուզեն. բայց սուրբ Հոգւոյն ներշնչեալը լուսաւորուած միտքերը բնաւ չեն խաբուիր, և ջրհեղեղն. որով հետեւ Յովհաննէս սրբազան աւետարանիչէն համոզուած են, որ գրած է. "Սիրելիք մի ամենայն հոգւոյ հաւատայք, այլ ընտրեցէք զհոգին եթէ Աստուծոյ իցեն, զի բազում սուտ մարգարէք ելեալ են յաշխարհ: Յով. դ. 1:

Կ՚ուզեն իմանալ քարի քրիստոնեայ եղբայր, եթէ ալ ոք են սուրբ Հոգիով ընտրուած և Յիսուս Քրիստոսէն կանչուած Աւետարանին քարոզիչ և առաքելական պաշտօն ունեցողները: Անոնք են՝ որ նախ անհաւատներուն, հեթանոսներուն պիտի քարոզեն, և երկրորդ՝ իրենց քարոզութիւնովը ստացած հաւատացեալ ժողովուրդներուն մէջը պտըտին, այցելութիւն ընեն ընդ երկար՝ հաստատելով անոնք քրիստոնէական կրթութեան մէջ, և քարի վարք ուսուցանեն՝ որ ըլլան քարի քրիստոնեայ. ուրիշներուն քարոզութիւնովը ժողովրդոց մէջ պիտի չհամարձակին և չյանդգնին մըտնալու և քարոզելու նորանոր վարդապետութիւններ ընելով:

Այս երկու պաշտօնութեան և քարեմասնութեան նշանը չունեցողները յայտնի կ՚ըլլան որ՝ սուրբ Հոգիով ալ ընտրուած չեն, այլ խարդախութեան և փառամոլութեան չար ոգիէ ոստիւած են: Ու այս երկու առաքելական և աւետարանական նշանները կը հաստատեմ այս անժխտելի վկայութիւններով. նախ՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսը կը հրամայէ առաքելոց: "Երթայք, ահա առաքեմ զձեզ իբրեւ ոչխարս՝ ի մէջ գայլոց": Ղ-ի. ժ. 3: Այսու մեկնութիւն պէտք չէ. վասն զի բացայայտ է որ՝ գայլ անուանով պիտի իմացուին անհաւատները: (Տես Գործ. ի. 29): Նշանակ է նաև՝ Քրիստոսի հրամանը առաքեալներուն այս է որ՝

երբ հաւատքն գան անհաւատներըս, անոնց ձէջը ը
նած քարոզութիւնովքին, և ընդունին հաւատոյ
ճշմարտութիւնը, կենան անոնց մէջը, որ հաստատ
տուին քրիստոնէական կատարելութեան մէջ։ "Ւր ի
"նէն տան ապանիջնիք, ուսուիջնիք և ըմպիջնիք ի նոցա
"նէ, զի արժանի է մշակն վարձու իւրոյ, մի փոխէ
"ցիք տանէ ի տուն "։ Ղ՚ւկ. ժ. 7։

Այսպա մեր տէրը Յիսուս Քրիստոս հրամայելով այս պատուէրը, "Մի փոխիցիք տանէ ի տուն "։ Յարգէ ներ սրբազան առաքեալներըս քաղաքէ քաղաք և ամեն աշխարհի մէջ քարոզելու երթալէն, վասն զի այլուր կը հրամայէ։ "Ւմէն առեմ ձեզ, ոչ ատաւեսջիք զքա
"ղաքս իսրայէլի "։ Մտթ. ժ. 23։ "Ւրթայք յաշխարհ
"ամենայն և քարոզեցէք զԱւետարանն ամենայն ա
"րարածոց "։ Մարկ. ժԶ։ 15։ Հռովմ. ժԵ. 16։ Գործ. ԻԲ. 21։ Այսպա ինչպէս հաստատ կը պատուիրէ. "Մի փո
"խիցիք տանէ ի տուն "։ Ւրբ կը կարդանք Պօղոս առաքելոյն գրածը, կ՚իմանանք որ՝ Քրիստոսի պատուէրին միտքը այսպէս է. զըլաց թէ իւրաքանչիւրոյդ տեղական հաւատացեալներուն տունը ժողովը Թողուք ջարունակելով այն տեղ ձեր հոգեւոր տեսչութիւնը. և զըլաց թէ իւրաքանչիւրոյդ քարոզած հաւատացեալներուն ժողովքին մէջ գնալով փոխէք ձեր վարելու հոգեւոր պաշտօնը, որով պարտաւ ժամանակ անցուցած կ՚ըլլաք. և նմանաձ կ՚ըլլաք անանկ ներուն, որ պիտի գան և տունէ ի տուն փոխուելով՝ ձեր քարոզութիւնը նորանոր ուսմունքներով պիտի այլայլեն. և անոնցմով պէս պէս պայթակղութիւն ներ պիտի եղնոյ հաւատացեալներուն մէջ։

Վերջ բաղդատէ այս տեղս Պօղոս առաքելոյն գրածովը։ "Կանգի ի նոցանէ են՝ որ մտանեն տանէ
"ի տուն և գերեն զկանայս չեղջակուտեալս մեղօք,
"վարեալք ի պէս պէս ցանկութիւնս, որ յաւէտ

» ժամ ուսանին, և երբէք ՚ի գիտութիւն ճշմարտուե-
» թեան ոչ հասանին »: Բ. Տիմ. գ. 6—7: « Պանդխ բա-
» զումք են անհնազանդք, զրախօսք և մոռախաբք. մա-
» նաւանդ որ ՚ի թլփատուԹենէ անտի են: Որս պարտ
» է լմբերանել, որք զամենայն տունս կործանեն և
» ուսուցանեն զոր չէ արժան՝ վասն զշնաքաղուԹեան »:
Տիտ. ա. 10—11:

Տես, ահա Պօղոս առաքեալը այս իրեն ունեցած առաքելական երկու նշանովը իրաւամբ կը պարծենայ: « Յորժամ կամեցաւ Աստուած՝ որոշեաց զիս յորովայ-
» նէ մօր իմոյ, և կոչեաց ՚ի ձեռն շնորհաց իւրոց
» յայտնել զորդին իւր ինձ. զի աւետարանեցից զնա
» ՚ի հեթանոսս »: Գաղ. ա. 15—16: « Նդայ ես քարոզ
» և առաքեալ՝ և վարդապետ հեթանոսաց »: Բ. Տիմ. ա. 11: Նր ոչ այս մէկ նշանով բաւական կ՚ըլլայ երա-
նելին իրեն առաքելուԹիւնը յայտնելու, այլ և իրեն աւետարանական և առաքելական պարտաւորուԹեան նշանը՝ համեմատ գործոյն յայտնել կը փութայ. վասն-
զոր կ՚ըսէ. ուէ ելայ գնացի Նրուսաղէմ քաղաքը. ինչու
որ՝ այն տեղը ինձմէ առաջ գացեր էին առաքեալնե-
րը. և այն Նրուսաղէմայ աւաջին եկեղեցին Քրիստո-
սի ունէր հոգեւոր տնտես և վարդապետս հաւատոց.
անոր համար գնացի կ՚ըսէ, Ա՛րաբիա, և վերստին դար-
ձայ ՚ի Դամասկոս: « Նր ոչ ելի Նրուսաղէմ, առ որս
» աջապոյնքան զիս առաքեալքն էին. այլ երգայ Ա՛րա-
» բիա, և դարձեալ դարձայ ՚ի Դամասկոս »: Գաղ. ա. 17:

Նայն ինքն սրբազան առաքեալն Պօղոս իրեն առա-
քելական պաշտօնին պարտք կը համարի իրեն քարո-
զուԹիւնովը հաւատացեալ ժողովուրդը միայն երԹա-
լու այցելուԹիւն ընելու, և հաստատելու անոնց մէ-
ջը քրիստոնէական կրԹուԹիւնը: Նոր համար իրեն
հետը վաստակաւոր նոյն քարոզուԹեանը մէջ Դաւա-
նաբան առաքեալն բսաւ, երԹանք պատրաստենք եղբայր-

ներսն մէջը ամեն մէկ քաղաքը՝ որոնց մէջ քարոզե-
ցինք ուրոյնը խօսքերը, իմանանք թէ ինչպէս են։
Նառնաբաս կ'ուզէր որ Մարկոս անուն աշակերտը,
որ Յովհաննէս ալ կ'ըսուէր, իրենց հետ գոնուի. բայց
Պօղոս յորդորանօք ըսաւ Նառնաբասին, որ անիկայ
մեզմէ զատուեցաւ Պամփիւլիայէն. գործ. ԺԳ. 13։
Նայց մենք որ հիմայ պիտի երթանք այն ժողովուրդ-
մէջը՝ պէտք չէ Մարկոսին մեզի հետ գալը, որ մեր
քարոզութեան գործակից չեղաւ։ Այսով մինչեւ ան-
գամ Պօղոս առաքեալին և Նառնաբասին մէջը գժտու-
թիւն կամ վէճ մը եղաւ. ինչպէս գրուած է։ "Ետ
" յետ առաւրց ինչ ասէ Պօղոս ցՆառնաբաս. դարձ-
" ցուք և շրջեցուք զեղբարսըք ըստ ամենայն քաղա-
" քաց՝ յորս քարոզեցաք զբանն Տեառն՝ թէ որպէս
" ունիցին։ Նառնաբաս կամեր առնուլ և զՅովհաննէս
" զկոչեցեալն Մարկոս, բայց Պօղոս աղաչէր թէ զմեզ-
" նեալն ի նոցանէ ի Պամփիւլիայ, և զչեկեալն ընդ-
" նոսա ի գործն մի առնուլ ընդ ինքեանս։ Այլ եղեւ
" գժտութիւն, մինչև մեկնել նոցա ի միմեանց, Նառ-
" նաբայ առնուլ զՄարկոս՝ նաւել ի Կիպրոս "։ Գործ.
ԺԵ. 36—37—38—39։

Ինանանք՝ որ այս երանելի առաքեալը շատ զգու-
շութիւն ունէր, որ տեղ և որ ատեան մէջ ծաղկած
էր քրիստոնէական ճշմարիտ հաւատքը և աւետարա-
նական անճառելի լոյսը ծագած ուներ՝ ալ երեն վը-
րայ հարկ չէր համարեր վերստին այն տեղուանքը եր-
թալու և քարոզելու։ Ինչու համար. վասն զի կ'ըսէ.
ուրիշին չինած հաստատած քրիստոնէական հաւատ-
քին հիման վրայ չեմ համարձակիր շինք մը շինելու.
ուրիշին վաստակը և արդիւնքը յափշտակելու համար.
այլ մանաւանդ ինչպէս գրուած է Նայի մարգարէին
մարգարէութեան մէջ, ծբ. 15։ Նր ես կը յիշեմ
զայն մարգարէութիւնը։ Ինանց որ չէ պատմուեր ա-

քարոզեաւ Յիսուս Քրիստոսն՝ թող սեանան մարքն նին անոր ձեմարտուքիւնը, և անոնց որ չեն լսեր, թող լսեն ու խնայեան. ըստ այնմ՝ "Այնպէս առատացեալ "յաւետարանել, ուր ոչ անուանեցաւ Քրիստոս. զի "մի երբեք յայլոց հիման վերայ շինիցեմ. այլ որպէս "և գրեալ է, թէ որոց ոչ պատմեցաւ՝ վասն նորա "տեսցեն, և որոց ոչ լսեք լսեալ՝ ի միտ առցեն": Հռով. ԺԵ.20—21:

Այս բոլոքական քարոզիչներուն անիրաւ գործքեր նին ինչ կը նմանին. գողտուկ մը օտարի մշակած աղ խառած ապտրակին, արտին մէջ մտնալ, և հատած հունձը գարիի ըլլայ՝ և կամ ցորենի, երեն մանպաղը վը հնձել քաղել և ժողվել, ու երեն չտեմարանին մէջ համբարել. այս է յիրաւի առաւել անիրաւութիւն և յայտնի գողութիւն. ահա այս օրինակին պէս չէ՞ մի բոլոքական քարոզիչներուն վատակիլը՝ ուրիշ աւղղափառ եկեղեցիներէն ժողովուրդ գողնալ երենց ժողովին անդամ ընելով, երենց ժողովարանը լեցուներ և այլն: Այսր համար կը զգուշանային Աւետարանին ճշմարիտ քարոզիչները սրբազան առաքեալներ՝ որ չըլլայ թէ մէկզմէկու վատակին ու արդիւնքին մէջ մտնան, ու երենց սեպհականելով ուրիշին արդիւնքը իւրացուցանեն, ասոր համար կը գրէ Պօղոս առաքեալը Կորնթացւոց եկեղեցւոյն, որ երեն քարոզած եկեղեցին էր: "Նա ոչ այնչափս պարծիմք օտար վաստակօք, "և կամ թէ՝ ոչ օտար կանոնաւ ի պատրաստականա "ինչ պարծել": Բ. կորն. ժ. 15—16:

Այսր համար չէր՝ որ Անիկիա հոգեպուծառ ժողովին սրբազան հարք հնգեռատանեորդ և վեշտասաներորդ կանոնաց մէջը գրեցին համեմատ առաքելական սահմանադրութեան այսպէս: "Մի ոք եպիսկոպոս "կամ երէց կամ սարկաւագ իշխան լինի այսուհետեւ "քաղաքէ ի քաղաք փոխել, և եթէ յետ այսր սահ

10251962

» մանի սուրբ Աիւնհոդոսիս այսպիսի ինչ դիպեացի,
» կշտամբանօք արգելլի յանդգնութիւն գործոյն, և
» եկեալն յեկեղեցւոյ իւրմէ դարձուացի ՚ի նոյն: Ապ
» յանդգնին ՚ի բաց եկանել յեկեղեցեայ իւրեանց,
» մի ընկալցին յայլ եկեղեցի, և եթէ խրատեալ ոչ
» զգաստացին, պարտ է հատանել զնոսա ՚ի հաղոր-
» դութենէ »: ՚ի կանոնս Ագիդեայ փիլիպպեան սուրբ ծնդվեան:

Այս տեղս յիշել արժան է բուղգարական քարոզիչնե-
րուն զարմանալի սխամարութիւննին, որ իրենց գործը
կամ պաշտօնը սուրբ գրոց հակառակ ըլլալը իրենք և
րենց տպած գրքուկը յայտնի կ՚ընեն ու չեն զամօթի հար-
կանիր, մեյմը որ՝ կը քարոզեին ու կը պարծենային թէ՝
մենք միայն պարզ Աւետարանը կ՚ընդունինք, մեկնու-
թիւն վարդապետութիւն չենք ընդունիր. հիմայ նոր
բահնար վարդապետութիւններով և մեկնութիւնե-
րով լեցուած տետրակներ կը տարածեն. շատը ձրի և
շատն ալ դիւրագին: Այս գիրքերուն մեկուն ալ ճա-
կատը գրուած է: Վրիպոնեական վարդապետո-ւթ-ն,
որ տպուած է ՚ի Օ՚Միւռնիա ՚ի տպարանի Կուլիկեմա
Արիֆիմի: Այսր մեջը սուրբ գիրքէն շատ հետաւոր
մեկնութիւններ, վարդապետութիւններ տեսածնիս
մեկդի թողունք, այլ միայն զուրցածնին ու գրածնին
նայինք, ու մեկ՚՚ալ իրենց գրածնին իրենք ջընդու-
նելնին հաւկնանք ու զարմանանք և խարդախութիւն
նին յայտնի ըլլայ: Նորց պատասխանի կ՚ընեն այս գըր-
քին մեջ հարցունելով, երես 306: “ Արդ՞ նք են Աե-
» տարանիչները », պատասխան կուտան: “ Նոնք կ՚ը-
» սեն Աետարանիչ՝ որ Վրիստոս չգիտցուած տե-
» ղեանքը Աետարանը քարոզելու և նոր եկեղեցիներ
» հաստատելու համար, քալքէ քալքը կը պտըտին »:
Ես այս ճշմարտութիւնը հաստատելու համար Գործք
առաքելոցէն վկայութիւն կը բերեն: Ը. 8—35—40:
Նայց մի զարմանար սիրելի ընթերցող, յիշէ այս տեղը

Bayerische
Staatsbibliothek
München

Յիսուսի փրկչին մեծ սասանկութեան համար ըրած վճիռը։ "Այսօր եւոչ առնեն ։ Մտթ. ԻԳ. 3։

Տեսար բարեպաշտ քրիստոնեայ առաքելութեան պաշտօնին բարենշան սահմանը օրէնքը, ուրիշին հոգեւոր վաստակին եւ արդիւնքին ձեռնամուխ չըլլալ եւ չը յափշտակել փառասիրութեան եւ ագահութեան չար ոգիով։ Այսպէս յափշտակութիւն ուրիշին վաստակին եւ արդիւնքին վրայով ոչ միայն առաքելական պաշտօն ունեցողներուն, այլ եւ բարի քրիստոնեայներուն ալ չվայելեր, այլ միայն մեծ եւ փոքր անբան կենդանիներուն գործն է։ Ինչպէս կը գրեն բնագէտները կենդանիներուն վրայ խօսելով. իշամեղուն կը զննէ՝ ի հեռուստ, եւ երբ միջոց պարապ կը գտնայ՝ խակին կը յարձակի այն ազնիւ աշխատասէր մեղուներուն մեղաւորութեան փեթակին մէջ՝ պատրաստ վաստակք ժողովուրդին արդիւնքին պատուական մեղրը կը յափշտակէ եւ երթալ իրեն վաստակը եւ արդիւնքը հաւաքելով։

Այսպէս անիրաւ յափշտակութեան կը հետեւէին Ա-նակօսային կեղծաւոր պաշտօնեայները, դպիրները եւ փարիսեցիները. եւ առաջի իրենց խղճահար ժողովուրդներուն իրրեւ նախանձախնդիր Մովսիսական օրինաց երեւելով կը փառասիրէին։ Ո՞նչ էր ասոնց գործը, բնդ ծով եւ բնդ ցամաք պտըտիլ իրենց ժողովուրդը շատցունելու համար. որով իրենց ստասնորդները եւ նուէրքները բազմապատկին, ժողովրդոց արդիւնքները ուրիշները չուտեն իրենց սեպհականելով։ Այսոնց ներքին խարդախութիւնը եւ ագահութիւնը ծածկագէտ փրկիչն մեր Յիսուս Քրիստոս յայտնի սեանալով՝ արհամարհելովմը վայ կուտար։ "Ա՛յ ձեզ դպրաց եւ փարիսեցւոց կեղծաւորաց. զի չածէք բնդ ծով եւ բնդ ցամաք " առնել եւկամուտ մի. եւ յորժամ լինիցի՝ առնէք զնա " որդի գեհենի կրկին եւս քան զձեզ։ Մտթ. ԻԳ. 15։

Այսոնց խարդախութիւն ընելը՝ յափշտակութեան

և նեղութեան չար հոգիով վհատ ումեք՝ ուրիշներուն բարեացը ձեռնամուխ ըլլալով իրեն սեպհականել ուզելը միշտ հակառակ է ամեն օրէնքներուն, մանաւանդ բնական գրական և հնոտիական օրէնքներուն անգամ կը հակառակի։ Ըստ համար է որ՝ մեր տէր Յիսուս Քրիստոսը կը հրամայէ. «Ոչ ամ զոր միանգամ կամիջիք թէ » արասցեն ձեզ մարդիկ, այնպէս արարէք և դուք նոցա, » զի այն իսկ են օրէնքն և մարգարէքը»։ Մտթ. է. 12։

Ընանկ նեղութիւն և խարդախութիւն բնաւ յաւ ուսջ պիտի չկրպայ անոնցմէ՝ որոնց իմացականութեանը առջեւ բարի գաղափարներ կը գոնուին և բարեյօժար կամքի տէր են։ Այլ անոնք կ'ըսուին չար մարդիկ, ո րոնք պղտոր և չիմաց գաղափարներու տէր ըլլալով իմացականութիւնը խանգարող զգացմունքներ կ'ունենան, որով բարին չխորհելով՝ իրենց անձնական և ըզգայական բաղձանքը կատարելու կը փութան։ Ընանկ ներուն համար է վճիռը. «Անիծք մարդոյ հաստատ » եալ է՝ ի նմանս չարին՝ ի մանկութենէ իւրմէ»։ Ընչինքն՝ ի ստեղծմանէ անտի, զի մարդն նոր ստեղծման ժամանակը դրախտին մէջը, միաք տալով ստուգ նային չարաչար խաբէութեանը՝ անոր թելադրութեանը տուաւ իւր կամքը։

Ուրեմն չար գաղափարներու զգայմունք ունեցած մարդին միշտ խորհրդածութիւնն ալ չար կ'ըլլայ, և անոր գործին վախճանն ալ չարութեան կը նայի։ Անկ կը թէ որ իրեն վրայ դուրսէն բարի և մարդկանց հաճելի անուններ ունենայ, բայց երբ կը նայիս թէ անոր վախճանը չար է, մարդկանց միտս կուտայ, միթէ այն բարի անունը անոր յանցանքը կրնա՞յ ի ծածկել. զորօրինակ մարդ մը ըստ բերման բաղդին և ըստ վիճակին թագաւորական անուն ունենայ, այն համարումը անոր չարութեան գործը կարէ՞ ի ծածկել, երբոր ինքը եղեռնագործ և մոլի ըլլայ։

Նայէ Քրիստոսը մատնող Յուդան բարի անուն
ունէր, որովհետեւ Յուդայ էր անունը, որ գովու-
թիւն ու խոստովանութիւն կը թարգմանի, և Յա-
կոբ նահապետին երկոտասան զաւկներուն մէկուն ա-
նունը Յուդայ էր, ինչ օգուտ այս գեղեցիկ անու-
նին բարի նշանակութիւնը. այս մատնիչն Յուդայ ա-
ռաքելական պաշտօնին բարի վիճակին մէջն էր, որ ե-
կոտասան առաքեալներուն մէկը կը ձանչցուէր. բայց
երեն մտքին մէջ ունեցած չար գաղափարը աթոռա-
սիրութեան, երեն կամքը յօժարեցոյց մատնելու երեն
ճշմարիտ վարդապետը և տէրը խարդախութեան և
նենգութեան համբուրիւ։ Անիծ անոր անունը և
առաքելական համբաւը կարող և բաւական եղաւ ծած-
կելու անոր արծաթասիրութեամբ մոլորիլը, նենգու-
թեան համբոյրը, մատնութեան չարութիւնը։ Այն-
պէս է նէ, ինչ օգուտ է բարձրագոյն անուններով
պարծենալ, և ընդհակառակն պանծալի անուանն
գործել։ Ինչ չահ աստուածպաշտութեան Քրիստո-
նեայ անուն ունենալ, և Աստուծոյ հրամանին չը
հնազանդելով, աստուածային կամաց և օրինաց դէմ
հակառակ վարուիլ. "Ո՞ի կոչէք զիս տէր տէր և զոր
"ասեմն ոչ առնէք"։ Ղ-ի. Զ. 46։ Խոստանան գի-
"տել զԱստուած, և գործովք ուրանան.
"պիղծ և անհնազանդ և յամենայն գործս բարեաց ան-
"պիտանք"։ Տիտ. Ա. 16։

Աստ համար մեր տէր Յիսուս Քրիստոսը առաք-
եալներուն այս պատուէրը ըրաւ որ՝ չէ թէ առաքե-
լութեան և աւետարանական ճշմարիտ լուսովը մոլո-
րիլները լուսաւորելու պաշտօնը միայն ունենան, այլ
և առաքելական բարի անունին համեմատ ըլլայ գործ-
քերնին. "Այնպէս լուսաւորեսցէ լոյս ձեր առաջի
"մարդկան, որպէս զի տեսցեն զգործս ձեր բարիս և փա-
"ռաւորեսցեն զՀայր ձեր որ յերկինս է"։ Մատթ. Ե. 16։

Օրինակի համար խօսինք այս առեղծ. քոլոքական քարոզիչները աւետարանական քարոզիչ համարինք ըստ վկայութեան իւրեանց, բայց միւսանգամ քննենք նաև մինք՝ համեմատ Աւետարանին և քարոզութիւններին։ Առաքեալը ճշմարիտ քարոզիչներուն մէկ կանոնն ալ այս պիտի ըլլայ, որ միշտ ջանան պիտի ամեն մէկ ուղղափառ ազգի եկեղեցւոյն համազգի ժողովուրդը մէկ ըսմէկէ բաժնելու պատճառ չըլլալ, և անոնց սէրը միաբանութիւնը քակելու ամենևին տեղի չտալ և չքրուել անոնց քրիստոնէական հաւատով և սիրուն միաբանութիւնով ժողովրդը։ Ահա այս անունը մեծ պարծանագ նշան մըն է աւետարանական և առաքելական քարոզիչ ներուն։ Ասոր համար չըր որ՝ կը պարծենար Պօղոս Առաքեալը ու կը գրէր կորնթացւոց եկեղեցւոյն. «Օ՛ի թէ առաւել ևս պարծեցայց վասն իշխանութեան մերոյ՝ զոր ետ մեզ տէր ՚ի շինել և ոչ ՚ի քակել զձեզ»։ Բ Կորն. ժ. 8. ԺԳ. 16։

Ահա մը հոգիով և ինչ իրաւամբ բողոքական քարոզիչ անուանեալները ուղղափառ քրիստոնեայ ազգերուն մէջ մտած՝ եկեղեցիները ցրուելու և բաժանելու և իրենց կողմը ժողվելու սեպհականելու պաշտօն մը յանձնառուցած են, և կը տեսնաս որ՝ անոնց համար մեծ ծախս ընելով տեղ տեղ, քաղաք քաղաք, գեղ գեղ ժողովարանները կը հաստատեն, և ժողովներուն անդամները կը գրեն ազգային եկեղեցիէն բաժնուածները իրենց Թեսթրութիւնովը. կը տեսնաս որ՝ ազգէն բաժնուած և իրեն ազգային եկեղեցին հալածող և աւերող մարդու մը լեցուն ամսական կուտան, որն որ իրեն արհեստին մէջ աշխատէր, ամսուը գժուարաւ հարիւր կամ հարիւր յիսուն ղուրուշ կը շահէր, ատոնք կրնան պատիկը երեքպատիկը տալով իրենց նման քարոզիչ կը կարգեն, որ խարդախութեամբ և նենգութեամբ երթան իրենց համազգի հաւատոցեալներուն մէջը

գայթակղութիւն ձգելու ջանան, որպէս զի անոնք ցրուին և բաժանին իրենց ուղղափառ եկեղեցիէն. "Վա՛յ աշխարհի գայթակղութեանց. հարկ է գալ գայթակղութեանց, բայց վա՛յ մարդոյն այնմիկ՝ որոյ ձեռն "գայցէ գայթակղութիւն" ։ Մտթ. ԺԸ. 7։

Նկատ. այս առնուն վրայ խորհրդածութիւն մը ըրէ, սանոյ գործը առաքելոց գործին հետ բաղդատէ, մեկզմեկէ հեռի պիտի գտնես, ու պիտի ըսես որ՝ սանոյ գործը սուրբ Աւետարանին հակառակ է։ Նայց մի՛ զարմանար, որովհետեւ մեր տէր Յիսուս ըսաւ իրեն կանխապիտութեամբը. "Որ ոչ ժողովէ "ընդ իս, ցրուէ"։ Մտթ. ԺԲ. 30։ Նպատ ինչպէս որ "հարկ "է գալ գայթակղութեան, բայց վա՛յ մարդոյն այնմիկ "որ գայցէ գայթակղութիւն"։ Նսել է որ գայթակղութիւնը պակաս պիտի չըլլայ, բայց վա՛յ է այն մարդուն, որուն ձեռքովը գայթակղութիւն պիտի գայ հաւատացեալներուն, սանկ ալ ճշմարիտ և ուղղափառ հաւատքով և սիրով և միաբանութեամբ Քրիստոսով ժողովուած եկեղեցին հալածող քակտող և ցրուող պիտի գտնուին, բայց անունք ճանչնալու է, որ Քրիստոսի տեառն մերոյ սիրակարօտ և բարերար կամացն հակառակ են և ոչ համաձայն, ինչպէս որ ինքն վճռեց. "Որ ոչ է ընդ իս, հակառակ իմ է. և որ ոչ ժողովէ ընդ "իս, ցրուէ"։ Ղ-ի. ԺԱ. 23։

Ժողովը այս տեղս խմաստասիրելու բարեմիտ ուսումնական ընթերցողներուն, որ այս բողոքական քարոզիչները սուրբ Աւետարանէն և արբազան առաքեալներէն չունին հեղինակութիւն։ Քրիստոնեայ ազգաց մէջ մնալով՝ իրենց վարդապետութիւնը քարոզելով մասխաբ պարզամիտներուն և անոնցմէ ժողովուրդ ստանալով, և իրենց բողոքական անունը անոնց վրայ դնելով բողոքական անուանելը ուրկէց տրվեցան, որ հիմայ կը սեանան կը լսես անանկներուն։ Ես որ

հարցուներս, դու ինչ ես. բողոքական եմ, կ'ըսէ։ Զեն յիշեր այն առաքելական ժողովին վճիռը, որ Անտիոք քաղաքին մէջ հաւատացեալները քրիստոնեայ անուա նեցին։ Գործ. ԺԱ. 26։

Ձէ որ սրբազան Պետրոս առաքեալը կը գրէ բոլոր քրիստոնեայ աղգերուն, ոչ հաւատացեալներ, ոչ որ իբրեւ քրիստոնեայ կը չարչարուի ձեր մէջէն՝ թող չամչնայ բնաւ, հապա այս քրիստոնեայ անունովը թող փառաւորէ զԱստուած։ Ա. Պետ. Դ. 16։ Տեսար որ քրիստոնեայ անունը մեծ անուն է. հին հաւատացեալ ճշմարիտ քրիստոնեայները այս անունով կը պարծէնային, և այս անունով հոգեւոր Թշնամիներուն քաջ ախոյեան կը կանգնէին։ Գործ. Դ. 12։ Ե. 40—41։ Ուրիշ սորվեցան այս աստուածահաճոյ անունը մոռցուանել քրիստոնեայներուն, և անոնց մէջէն զատուելով որոշելով՝ ուրիշ անուն սուրբ գիրքերէն դուրս՝ Քրիստոսի եկեղեցին չճանչցած անուններըը անոնց վրայ դնել։ Ուրիշներու կը լսես մէկ տեսակ հաւատացեալներուն քերնէն, որ պարծենալով կ'ըսեն. մենք քրիստոնեայ ենք, և մեր կոչմի հաւատացեալներն ալ կը լսենք, եթէ մենք պապական ենք։ Ձէ որ քանի այս անուններըը ելեր են, ասոնք քրիստոնեայներուն մէջէն՝ Քրիստոսի անբիծ անարատ սուրբ սէրը պակասեր է. ատելութիւնը, խռովութիւնը, չարութիւնը տիրեր է. ոչ սերմանեց այս ատելութեան չարաբոյս որոմը Քրիստոսական ագարակին մէջը, այսինքն քրիստոնէից սրտին մէջը։ Ձէ որ քրիստոնէից վրկութեան Թշնամի խռովութեան և խաբէութեան չարագոյն ոգին հնարեց, որով այս պապականութեան և բողոքականութեան արտաքոյ սուրբ գրոց նորահնար բառերը վերցուցած, և ապա առնչմամբ ոխերիմ ատելութեան և հոգեկորոյս խռովութեան որոմն չարին յայտնեցաւ. ըստ այմմ. "Տէր՝ ոչ սերմն բարի սերմանեցեր յագա-

» բանիւն քուժ, արդ ուսում ունիցի զորութիւն. և նա ա-
» ւէտ ցնոտա, այր թշնամի արար » . Մաթ. ԺԲ . 27 :

Այս տեղ միտքս եկաւ որ մեր համազգի ուսումնական երիտասարդին մէկը բազդատական խորհրդածութեամբ մը լրած է Պօղոս առաքեալին առ Տիմոթէոս իր ընդհանրական ուսումնասիրութեան օրուան և հասարակաց յարութեան համար կը խօսի . « Արդէս Աստուած ա-
» մենեքեան մեռանին, նոյնպէս և Քրիստոսիս ամենե-
» քեան կենդանացին . իւրաքանչիւր յիւրում կարգի,
» նախ Քրիստոս . և ապա Քրիստոսեանք ի գալստեան
» նորա » . Ա . Կորն . ԺԵ . 22—23 :

Ով որ կ'ըսէ . այս Քրիստոսեանք, փառաւոր, ազնիւ և երանաւէտ բառը պատկան և բաղքական բառերուն հետ բազդատելիք՝ շատ բացորոշ կը գըտնանք անիկ : Առաքեալը Քրիստոսեանք ըսելով որքան առաքեալը, Քրիստոսի հնազանդութեան զարդարուած քրիստոնէական ճշմարիտ հաւատով Քրիստոսի հետ միացած իրրեւ բարոյական անդամ ճշմարիտ և կեն-դանարար և ընդհանրական գլխոյն Յիսուսի Քրիստոսի ուղղափառ և բարեպաշտ քրիստոնեայները ցոյց կուտայ : Գաղ . Գ . 27—28—29 : Աշխարհի պատկան և բաղքական անուններըս այս վերկարար Քրիստոսեան անունին զօրութիւններուն շատ ու շատ տարբեր և ամենաբին հեռաւոր են :

Կ'ըսէ վերոյիշեալ բարեմիտ երիտասարդը, Թէ որ պատկան և բաղքական անունով պարծենցողները հը-նարը գտնան, այս Քրիստոսեանք բառը պատկանի կամ բաղքականի կ'պլաբանեն, և կամ պատկան և բաղ-քական անունը մերժողները, և միանգամայն Քրիս-տոսով և Քրիստոսի անունով պարծենցողները խոպան պիտի համարեն, և արժանի ժամանակաւոր և յաւի-տենական մահու և դատապարտութեան պիտի դա-տեն, ինչպէս որ տարածած գրուածներով, տեսրակ

ձեռով և քարոզչներով յայտնի լուած են, որ բան ա-
ժենայնի հակառակ է աւետարանական և առաքե-
լական ճշմարտութեան: Նայ, կարդա: Մաթ. է. 1—2:
Ղու-կ. ԺԶ. 15: Հով-ղ. ա. 3—4: Փիլիպ. գ. 7—8—9:

Արդարեւ այս Ներկոսեանք անունին շնորհքը քա-
րոզիւնը յարդելու և տարածելու առիթը, մանկա-
նցու փառատէր մարդկանց անունը և նորահնար
վարդապետութիւնը կը քարոզուի և կը տարածուի,
որովհետեւ կը պարծենան մարդիկ որը Նոզեքական,
և որն ալ Պապական անունով: Մէկ է ճշմարիտ քրիս-
տոնէութեան քարոզը, որն որ առաքեալները կը քա-
րոզէին: "Մեք քարոզեցաք վհատեան Քրիստոս":
Ա. Կրն. ա. 23: "Ով ոչ եթէ զանձինս քարոզեմք,
" այլ զՅիսուս Քրիստոս տէր, և զմեզ ծառայս ձեզ
" վասն Քրիստոսի": Բ. Կրն. Դ. 5:

Մերն ուղղափառ քարի քրիստոնեայն բնաւ պիտի
ջընդունի ոչ Նոզեքական անունը՝ և ոչ Պապական ա-
նունը, այլ սուրբ և ճշմարիտ անունովն Քրիստոսի
պարծենալով պիտի ըսէ: "Ոչ ատելութիւնն մեր՝ զոր
" ունիմք ի Քրիստոս Յիսուս": Գաղ. Բ. 4: Այսինքն
սուրբ եմք Քրիստոսի Յիսուսի անունովը, չեմք ընդ-
դունիր, չեմք ծառայեր սուրբ գիրքերուն և քրիստո-
սական ուղղափառ եկեղեցւոյն խորհրդական աստ-
ղութիւնէն դուրս եղած նորահնար անուններուն.
վասն զի՝ "Մեք ի Քրիստոս Յիսուս հաւատացաք":
Գործ. Բ. 16: "Ոչ այնորոյ պարծիմք ի Քրիստոս Յի-
" սուս": Փիլիպ. գ. 3:

Նարի ճշմարիտ և ուղղափառ քրիստոնեայն՝ աս-
տուածային սուրբ գիրքերէն, երանելի և երջանիկ
առաքեալներէն և եկեղեցւոյ առաքելաշաւիղ կատա-
վարիչներէն, սուրբ գիրքը ուղիղ և ողջամիտ բացատ-
րութիւնն պիտի տրվի նրեն սուրբ հաւատքին ճշմար-
տութիւնը, համեմատելով Պօղոս առաքելոյն գրածին.

„ Յաւատք ձեր մի լցեն խնամոութեամբ մարդկան,
„ այլ զօրութեամբ Աստուծոյ „ : Ա. կորն. Բ. 5 : “ Փու-
„ թասլիր ընտիր կացուցանել զանձն քո առաջի Աս-
„ տուծոյ . մշակ առանց ամօթոյ , և ուղիղ համառօ-
„ տել զբանն ճշմարտութեան „ : Բ. Տիմ. Բ : 15 : “ Ա-
„ նկիս օրինակ ուղղութեան բանիցն , զորս լինէն
„ լսար հաւատովք և սիրով որ ի Քրիստոս Յիսուս „ :
Անդ . Ա. 3 :

Այս հաւատոյ ճշմարտութեան գալափարները երբ ունենանք մեր մտաց խնդացականութեանը առջեւ , Յիսուսի Քրիստոսի խնամոութեան անաղօտ լուսովը կ'ըլլանք բարի մարդ և բարի քրիստոնեայ , և մեր կամքին յօժարութիւնը կ'ըլլայ երբեք ծառ բարի , և այնուհետեւ կը բերէ առաքինական աստուածահաճոյ պտուղը ներ բարի գործոց :

Այսպէն բաւական համարինք այս մեր խորհրդաւոր ծուխիւնը այն աստուածային վճռոյն վրայով , որ գըլուած է : “ Անիք մարդոյ հաստատեալ է ի հնամն մեռանել իրաւք „ . Եւ ձեռնամուխ ըլլանք բոլորովին ապաւինելով ի հնարն աստուածային այն միւս բնաբանին վրայ խորհրդածելու , որն որ տէր մեր Յիսուս Քրիստոս վճռած է . “ Ձեք ոք բարի , բայց մի Աստուած „ :

ԳԼՈՒԽ Ը.

Աստենական հնքնաբուն բարի միայն Աստուած է . վանորոյ Յիսուս վրկիչն մեր ըսաւ . “ Ձեք ոք բարի , բայց մի Աստուած „ . Մտթ . ԺԹ . 16 : Մարկ . ԺԸ . 17 : Ղ-կ . ԺԸ . 19 : Արդեօք արդի ըսաւ այս խօսքը Յիսուս . այն իշխանին՝ որ գնաց մերձեցաւ իրեն քովը և հա-

ժարձակեցաւ փութելով հարցուանելու թէ՝ ինչ գործեմ որ յաւիտենական կեանքը, ալքատութեան վարդը ժառանգեմ. "Եւ եհարց զնա ոմն իշխան և ասէ. վար- "դապետ բարի՝ զինչ գործեցից զի զկեանս յաւիտե- "նական ժառանգեցից": Այս իշխանը հրեից ազգէն էր. և էր հաւատացեալ եթէ Յիսուս Նրիստոս է որ դի Աստուծոյ բարձրելոյ և ինքնաբուն բարի Աստուած ճշմարիտ՝ եակից Հօր և փառակից սուրբ Հոգւոյն. այլ միայն կը ճանաչէր ուսուցիչ իբրեւ վարդապետ ոմն՝ և մարդկանէ և մարգարէ, վասնորոյ ըսաւ. "Վարդապետ բարի": Բայց Յիսուս ալ կամեցաւ որ՝ անոր քիչ խոս- քով և կամ այս բարի անուն բառին միջոցաւը իրեն որդի Աստուծոյ ըլլալը փոքր ինչ յայտնէ, և անոր հա- ւատոյ նշոյլ մը պարգեւէ, անոր համար ըսաւ. "Ո՞ի "ասես զիս բարի. չիք ոք բարի, բայց մի Աստուած":

Աստ համառօտ խօսքէն կ'իմացուի որ՝ Յիսուս ա- նոր ըսել կը կամի. ինչու համար զիս բարի կ'անուանես, չգիտես որ միայն իմին բարի գործելու և բարի խօսելու և բա- րի ըլլալու, բայց չէ ինքնաբուն էական բարի, որ ըլ- լայ ինքնաբուխ աղբիւր բարութեան: Ասա եթէ գու զիս բարի կ'անուանես, մի ճանաչեր զիս իբրեւ լոկ

մեկը բարկ մարդիկներեն, այլ հարկ է քեզի որ հաւատաս ինձ, որ եմ Այտուած և որդի Այտուծոյ աղբիւր բարութեան, և չեմ բարեխոհ և բարեգործ մարդիկ ներուն պէս միայն բարի մարդ, այլ եմ իսկական ինքնաբուն բարի: Այսպէս եթէ ասանկ ըսաս ինքեան բարի եմ, ըսած պրտմ Այտուած և որդի Այտուծոյ, պարտ է քեզ հաւատալ և ճանաչել զիս իբրեւ զԱյտուած բարի և ոչ իբրեւ մարդ բարի, վասն զի. "Ձինչ ոք բարի, "բացի ի Այտուած": Աւրեմն մարդիկ չեն իբրեւ զԱյտուած էակին և ըսաս ինքեան բարի, այլ Այտուծոյ բարերար կամքն են առեղծեալ, և նորին բարութեան հաղորդեալ, և գործով և բանիւ բարի երեւեալ բարի մարդիկ:

Այսքեն ալ բարեմիտ ընթերցող. առաջ ի համառօտիւ, համոզել ուզեց մեր կենարար տէր Այտուած Յիսուս Քրիստոս այն իշխանը՝ որ եկեր էր փորձելով իմաստասիրելու Թէ՝ Ինչ գործով կրեն պիտի յաջողուի յաւիտենական կեանքը ժառանգելու. վասն զի բնաւ չէր ուզեր ըսաւորութիւն հաւատոյ՝ ապահովութեամբ մտեալ ըլլալուն համար, կրեն նախ պէտք էր հաւատոյ ճշմարտութիւնը ունենալ Քրիստոսի մարդեղութեան նը և փրկագործութեանը վրայով, և ապա անոր ա ռաքինի վարուք կատարեալ հաւատացեալ ըլլալ, ըսաւ րում Յիսուս ասանկ կը քարոզէր. "Ես եմ լոյս աշ "խարհի. որ գայ զիս իմ ընդ խաւար մի գնասցէ, "այլ ընկալցի զլոյս կենաց": Յով. Ը. 12: Ես Թէ. "Այս են կամք Հօր իմոյ, զի ամենայն որ տեսանիցէ "զՈրդի և հաւատասցէ ի նա, ընկալցի զկեանս յաւի "տենական": Անդ. Զ. 40: Ասոր այս անձը որ կը հարցնէ Յիսուսի. "Վարդապետ բարի, զինչ գործեցից զի զկեանս յաւիտենական ժառանգեցից", յե նէր Քրիստոսական հաւատոյ ճշմարտութիւնը, և

խոստովանութեամբ հաւատոյ էր ձանաչէր Յիսուս Քրիստոսը Աստուած և արդի Աստուծոյ, որ նոյն ինքն էր լուսով ճշմարտի իւրոց առաքնորդող՝ ի մշանջենաւոր փառս երկնից արքայութեան իւրոց և պարգեւէիչ բարութեան յաւիտենական կենաց։ Այսոքիկ ինքն նին Յիսուս մարդասիրութեամբն հաճեցաւ զգացուցանել սմա իւրեն աստուածային բարութիւնը նշոյլ մը հաւատոյ տալով սորին մուտ զգացմանը. ուստի բուռն վճռաբար. "Ձեր ոք բարի բայց մի Աստուած"։ Ոյց այս իշխանաւոր անձը առաջի մուտ իւրոց ապաշխարութեան ընդարձակութեան չար գաղափարներ ունենալով՝ անկարող եղաւ ընդունելու այն պարգեւը՝ որ էր հաւատոյ լուսափայլութիւնը։ Այլ մեք գիտեմք աւրբը հաւատոյ անաղօտ լուսով, որ միայն բուն ինքեան ինքնաբուն բարին՝ Աստուած է, որով ամենայն էակք ստեղծան և գոյացան, վասնորոյ կոչին բարիք։ Ա. Տիմ. Դ. 4։ Թէ որ բնաշխնութեան արհեստիւ քրիստեան՝ ամեն մէկ ստեղծուած էակներուն մէջ կը գտնան զանազան օգտաւէտ բարի զօրութիւններ. արեգակն է լուսաւորող տիեզերաց, և ամեն երկնային մարմիններ, լուսինը և աստղերը ունին պէս պէս օրինաւոր և օգտակար զօրութիւն. նոյնպէս և ամեն կենդանիները ունին մարդկան օգտակար պիտանաւորութիւն, որոնց մէ ոմանք արտքինթացութեամբ կը ծառայեն մարդկան, կէսք բարեհամ և զօրացուցիչ կենդանութեան խորակ կ'ըլլան. ոչ ապաքէն կարի անդադար է իւրն կովուց և կաթն մսակաց, մեղուք անուշահամ մեղը կը պատրաստեն մեզի։ Տեւս ծովային և ցամաքային կենդանիները և կամ թռչուններըը, ոմանք են անդադար զօրութեամբ՝ հարկաւոր ի պէտս մարդկային կենդանութեան, և ոմանք ունին զօրութիւն բժշկական դեղերու հարկաւոր և օգտակար։ Ոչ օր օրինակ կը պատմէ մէ աւրբը գիրքը որ Տօբիթայ կուրացած աչքը բուց-

ուեցաւ առաջացաւ Նահիյէլ հրեշտակին ազդեցու-
թիւնովը իրեն որդւոյն Տօբիային բռնած ձկանը փո-
քրէն հանած լեղիովը։ Տօբ. Զ. 9. ԺԱ. 14։ Աչսոր պէս
ալ կը սեանանք որ՝ խախտեալ անդամոց բժիշկները
նպատակաւոր կոչուած ձկան իւղովը իրենց սպեղանի
կը գործեն, որով շուտ կը բժշկուին խախտեալ
անդամք ոսկերաց, և ջիղերը կը զօրանան։ Ետ
կենդանիները կը սեանանք որ մարդկան բարոյական
կրթութեան և բարւոք կենցաղավարութեան ու-
սուցիչ կ'ըլլան. ոմանք կ'ուսուցանեն աշխարհի փոր-
ձութեան և խորամանկ մարդիկներուն որոգայթնե-
րէն զգուշանալ՝ արթուն խելքով պտըտիլ և կենդա-
ղավարիլ աշխարհի մէջ. ինչպէս այծեամին որ միշտ կը
նկատէ իրեն գնացած ճանապարհը հետևանց, թէ
որ կասկած մը ունենայ որոգայթի մը՝ իսկոյն կը փոխէ
իրեն ընթացքը։ Նայէ մրջիւնը փոքրիկ էնչին կենդանի
մըն է, բայց սեա ծոյլ և պղերգ մարդիկներուն նախա-
պատրաստուի իմաստուն կ'ուսուցանէ իրեն գործքովը,
ոչ ձեռաց ընդ. ճանապարհս նորա։ Եր իմաստնագոյն ևս

» քան զնա ։ Օ՛ի նորա ոչ գոյ երկրագործութիւն,
» և ոչ հարկադիր, և ոչ այն՝ որ տագնապիցէ, և ոչ
» ընդ տերամբ է ։ Եւ պատրաստէ յամարայնոյ զկե-
» րակուր, և բազում համբարս գնէ ՚ի հունձս ։ Կամ
» երէք աւր մեղանչեալ և ուսիր՝ զինծրդ գործունեայ է,
» գործ նորա որպէս պարկեշտութեամբ է, զորոյ զվաս-
» տակն թագաւորք և անանկք ՚ի բժշկութիւն մատու-
» ցանեն, ցանկալի է ամենեցուն և փառաւորեալ, զի
» թէպէտ և տկար է զօրութեամբ, պատուեաց զինամս
» առեալն և յարգեցաւ » ։ Ասաք. Զ. 4—5—6—7—8 ։ Թո-
ղում ասել զանապատն արմատներուն, բոյսերուն, տուն-
կերուն և ծաղիկներուն բարի և սպառակար ներգոր-
ծութիւններուն վրայով, որոնց համար ոչ միայն բու-
սաբանները կը նկատողեն, այլ և ճարտարապետ
դեղագործները փորձով իսկ կը վկայեն ։

Ընդ այս առեղ միտքերնիս բերենք և շատ մը խոր-
հինք այս ամեն բարիքներուն վրայ, որ ամեն մէկը մէյմէկ
առանձին բարութեան զօրութիւն և ներգործութիւն
ունին, և այս բարութիւններուն ներգործութիւնը
տուած է Ստուած ապարիչն երկնի և երկրի երե-
ւելեաց և աներեւութից, որ և նա ինքն է ինքնա-
բուն միայն բարի և յաւիտենական ամենակալ բարու-
թիւն, որուն նման ոչ գոյ այլ բարի. “Ոչք ոք բարի
» բայց մի Ստուած » ։ Ու ըստ սրբոյն Դաւիթի նա-
բերեալ, “Տէր իմ ոչ ոք ունիչ պարգեւաց, ինքնա-
» բուն բարի, ամենից սիրող հաւատապատիկս, միայն
» արարիչ զբնաւս յոչէից » ։ Գ. 1 ։ Ինչու և ինչ բանի
հարկաւորութեան համար այս բարի ստեղծուածները
յոչնչէ գոյացոյց Ստուած, և ամեն մէկուն մէյմէկ
առանձին զօրութիւն բարութեան շնորհեց ։ Ահա այս
հարցերուն պարզեւած բարութեան շնորհքներուն
ներգործութիւնը կը յայտնէ սուրբ գիրքը վկայելով.
“Ու եաես Ստուած զի բարի են » . ծն. ա. 25 ։

Վ՛իտեմ որ՝ ամեն աստուածապաշտները պիտի վկա-
յեն և ամենքը պիտի խոստովանին, որ այս բարի և
օգտակար և պիտանացու մարդկային կենցաղավարու-
թեան ամեն ստեղծուածները՝ Աստուած միայն մարդ-
կան համար գոյացոյց և պատրաստեց։ Նայէ Աստու-
ծոյ արարչագործութեան աքանչելի կարգը, նախ ամեն
բան՝ ստեղծեց Աստուած, և այնուհետեւ կամեցաւ
մարդուն ստեղծանիլը. "Եւ ասաց Աստուած, արաս-
"ցո՛ւք մարդ՝ ըստ պատկերի մերում և ըստ նմանու-
"թեան. և իշխեսցէ ձկանց ծովու, և թռչնոց երկ-
"նից և անասնոց և ամենայն երկրի, և ամենայն սող
"նոց՝ որք սողին ի վերայ երկրի"։ Ծննդ. ա. 26։ Այսմ
յայտնի ըրաւ Աստուած, որ այս ամենքը երկինքը և
երկրի վրայ տեսնուած յաչնէ գոյացեալ էակները մարդ-
կային վայելչութեան և պիտանաւորութեան համար
կը ծառայեն, վասն որոյ ամենէն վերջը արար զմարդն։
Սաղ. ը. 6—7—8։

Այժմ ով բարեպաշտ ընթերցող, խորհրդածու-
թիւնդ բարձրացուր, խորունկ մտածէ լաւագո-
տուածային հնարից. քննէ՛ իմացի՛ր այս ամենը Աստ-
ուած մարդուս աշխարհիս մէջ կենցաղավարութեանը
համար ստեղծեց. իսկ մարդը ի՞նչ բանի համար և
որո՞ ծառայելու և պիտանացու ըլլալու համար ըս-
տեղծեց, արդեօք անբան կենդանիներո՞ն պէս պիտի
ճնանիմք և մեռանիմք, և միայն այս աշխարհի վայել
չութիւնը, փառքը և հանգստութիւնը պիտի վա-
րեմք։ Ո՛չ այդպէս է սիրելի ընթերցող, մարդկան
պատիւը և փառքը մեծ է։ Սաղ. ը. 6. Ա. կրն. ժե.
19։ Առ հետեւ Աստուած մարդս ստեղծեց յաւուրս
իրեն անբաւ և յաւիտենական բարութեանը և փա-
ռացը հաղորդ ընելու համար, վասնորոյ շատ մեծա-
մեծ իրաւունք մարդկան վրայ ունենալը մարդ ա-
յսպէս արարչին Աստուած։ Նայ՝ այս խորհրդով.

“Ընտացուք մարդ ըստ պատկերի մերում և ըստ նը-
» մանութեան » : Ինաւ մէկ ստեղծուածէ մը համար
ստեղծագործութեան ժամանակը սուրբ Գրոցուց-
թեան մէջ այսպիսի խորհուրդ մը չեղաւ և չէ յայտ-
նուած , բայց միայն վասն մարդոյն :

Արդ՝ ինչ պիտի իմանանք այս աստուածային խօսքե-
րէն ! “Ընտացուք մարդ ըստ պատկերի մերում և ըստ
» նմանութեան » . այսպիսի փառք ու պատիւ չունե-
ցան հրեշտակները անգամ. վասն զի անոնց համար
գրուած չէ , որ հրեշտակները ըստ պատկերի և ըստ
նմանութեան Աստուծոյ ստեղծան . և կամ ըստ պատ-
կերի Աստուծոյ են , այլ միայն մարդոյն համար գը-
րուած է . “Աստուած ստեղծ յերկրէ զմարդն , և ըստ
» պատկերի իւրոյ արար զնա » . Սկիզ. ԺԵ. 1 : Ասոր
համար Դաւիթ մարգարէն կ’ըսէ . “Փոքր ինչ նուազուցեր
» արարեր զնա քան զհրեշտակս քո , փառօք և պատ-
» ուով պսակեցեր զնա » : Սաղ. Ը. 5 : Ահա յայտնի կ’ե-
րեւայ որ՝ Աստուած երկու կերպ յատուկ փառօք
պատուեց զմարդն իրեն անբաւ բարութեանը և յա-
ւիտենական վաստակը հաղորդ ընելու համար . վասն
որոյ ըսաւ . “Ընտացուք մարդ ըստ պատկերի մերում
» և ըստ նմանութեան » : Ինչպէս այս աստուածային
պատգամն և մարդաւորական խորհրդոյն վայելով Ձնոր-
հալն սուրբ Հայրապետանիս խորհրդածելով , սուրբ
Հոգւոյն շնորհքը այս տուն երգը կ’երգէ . “Ձհան-
» դուրժեալ բնութեամբ բարւոյն ունիլ միայն զան-
» ճառ բարին , այլ ստեղծեալ զմարդ յիւր պատկերին
» ’ի վեցերորդն առաւօտին ևայլն » : ’Ի Շարականէ :
Ուրեմն մարդոյս հոգեւոր բաղձանքը միշտ այս պիտի
ըլլայ , Աստուծոյ յաւիտենական բարութիւնը երկնից
պատուեց զմարդն իրեն անբաւ բարութեանը և յա-
ւիտենական վաստակը հաղորդ ընելու համար . վասն
որոյ ըսաւ . “Ընտացուք մարդ ըստ պատկերի մերում
» և ըստ նմանութեան » : Ինչպէս այս աստուածային
պատգամն և մարդաւորական խորհրդոյն վայելով Ձնոր-
հալն սուրբ Հայրապետանիս խորհրդածելով , սուրբ
Հոգւոյն շնորհքը այս տուն երգը կ’երգէ . “Ձհան-
» դուրժեալ բնութեամբ բարւոյն ունիլ միայն զան-
» ճառ բարին , այլ ստեղծեալ զմարդ յիւր պատկերին
» ’ի վեցերորդն առաւօտին ևայլն » : ’Ի Շարականէ :
Ուրեմն մարդոյս հոգեւոր բաղձանքը միշտ այս պիտի
ըլլայ , Աստուծոյ յաւիտենական բարութիւնը երկնից
արքայութեան մէջ ժառանգելու՝ և անոր հաղորդ
ըլլալու , և Աստուած ալ պարգեւելու հաճութիւն
ունի : Ասոր համար Պօղոս առաքեալը աղօթք կ’ընէր

ամեն ժամանակ՝ որ հաւատացեալները աստուածա-
յին երկնից արքայութեան յաւիտենական և անճառ
բարութեանը հանին, և Աստուծոյ մարդասիրական
հաճութիւնը կատարուի. «Զօթա առնեմք վասն
» ձեր յամենայն ժամ, զի զձեզ արժանիս արասցէ կոչ-
» ման ձերոյմ Աստուած մեր՝ մինչեւ լցցէ զամենայն
» հաճութիւն բարութեան և զգործս հաւատոցն զո-
» րութեամբ». Բ. Թես. Ա. 11։

Երկրորդ՝ Աստուծոյ շնորհաց և պարգեւաց պա-
տիւը և փառքը մարդկան՝ մեկն ալ այս էր որ աստր
գիրքը կը յայտնէ. «Ոչ ասեզ տէր Աստուած զմար-
» դն հող երկրէ, և վշեաց յերեսս նորա շունչ կեն-
» դանի, և եղեւ մարդն հոգի կենդանի». ՃՆՆ. Բ. 7։
ըսել է որ՝ վշելով նախաստեղծ մարդոյն երեսը պար-
գեւեց անոր բանական անմահ հոգին, որով եղաւ
մարդն զարդարուած կենդանի անմահ հոգիով. Իմաստ.
ԺԲ. 11. Ա. կրն. ԺԵ. 43։

Այս տեղս «վշեաց յերեսս» կարդալովք՝ մարդկո-
չեն մարմնաւորապէս փչումն պիտի չհամառատ, այլ մա-
նաւանդ Աստուծոյ պարգեւին ու շնորհքին Թափան-
ցիկ հեղումը և աչքանելի ներգործումը իմանալու է,
որ՝ ի ներքս մարդոյն բանական և անմահ հոգին տար-
բացոյց և Թափանցեց, որով աստցաւ մարդն իրեն
մարմնոյն մէջ՝ հոգի բանական և անմահ, և այս հոգ-
ւոյն պայծառ ներգործութիւնը բոլոր մարդկային
մարմնոյն մէջ տարածեցաւ, և աստր գիրքը՝ մարդ-
կային մարմնոյն բոլորին տեղը պատուական մասը այս-
ինքն երեսը առնելով կը գրէ. «Ոչ վշեաց յերեսս նո-
» րա շունչ կենդանի, և եղեւ մարդն հոգի կենդանի»։

Նայց, բարեմիտ ընթերցասէր, ես մեկ ծիծա-
ղելի բան մը կարդացի բողոքական քարոզիչներուն
գործ և նոքին արբապրուած վերոյիշեալ Ռէվափոնէական
վարդապետ-ին կոչուած գիրքին մէջ, որուն մէջ

հարց պատասխանիլ ձեռով սուրբ գիրքին չատ հե-
ռու և անհամեմատ այս անհեթեթ և անճոռնի դը-
րութիւնը ըրած են. " Հոգ. Երբոր Ադամ և Եւան
" ստեղծուեցան, չափահաս մարդիկ էին: Պոպա-
" խանի. Այո կատարեալ մարդիկ էին: Հ. Տէրը ա-
" նոնց բանական ու անմահ հոգի տուաւ: Պ. Հրա-
" մերես: Եւ Աստուած ստեղծեց մարդը երկրի հո-
" ղէն, ու անոր քթին ծակերուն փչեց շունչ կենդա-
" նութեան, և մարդը ապրող հոգի եղաւ ": Եւ այս
պէս տեսայ աշխարհաբառ տպուած Աստուածաշունչ
գիրքերնուն մէջ ալ գրուած:

Այս քթին ծակերուն փչելը ծերկէց առին. սուրբ
գիրքէն դուրս վարդապետութիւն չընդունող բոլո-
քական անուանեալ նորալանդ նոր քարոզիչներուն հոգ-
նիլը նայեցէք. սուրբ գիրքին ծայրէն կ'ակռանին նորա-
ձեւ, այլակերպ և անասլուր վարդապետութիւն ընե-
լու սուրբ գրոց վրայ, սուրբ գիրքին ազնուութիւնը
այլայլելու երեր են, սուրբ գիրքը երես կ'ըսէ. " Ո՛ր
" քեզ Տէրկրէն Եգիպտացւոց, բայց զբերան քո և լը-
" ցից զքա ": Սաղ. 2. 10: Եւ Դաւիթ մարգարէն
Աստուծոյ շնորհաց հոգին իրեն առանալը խոստով-
նելով կ'ըսէ. " Ո՛ զբերան իմ բացի և առի պՀոգի ":
Սաղ. ճԻԸ. 131: Թող մէկմ'ալ Եւսեբին մարգարէու-

թիւնը կարդային, տեսանային Աերոբէներուն դասէն
Նատուածմէ խրկուած այն հրեշտակը՝ որ Նատուծոյ
արքունթիւնը կայծակի նմանութիւնովը կը հալոցդեր
Նասի մարգարէին. սիրէ այն կայծակը անոր քթին
ծակերուն տարաւ, եթէ բերանին. նայէ ինչ կ'ըսէ
մարգարէն: "Աերձեցայց 'ի բերան իմ, և ասէ. ահա
» ետուիկ մերձեցաւ այդ 'ի շրթունս քո, և հանցէ
» զանօրէնութիւնս քո, և զմեղս քո սրբեսցէ 'ի քէն»:
Եսայ. Զ. 7: Թող մեկմ'ալ յիշեն անվեհեր համար-
ձակախօսութեան այն աստուածային ընորհքը, որ ա-
մենակալ Տէրը պարգեւեց Նրեմիա մարգարէին, բայց
ոչ քթին ծակէն ներգործեց, այլ ինչ. ահա Թող
կարդան Նստուածաշունչը՝ ուր գրուած է: "Նա ձը-
» գեաց ուէր զձեռն իւր առ իս՝ և մերձեցայց 'ի բե-
» րան իմ, և ասէ ցիս. ահա եառ զբանս իմ 'ի բե-
» րան քո»: Երեմ. Ա. 9:

Ինչ կ'ըսէք. կարելի է որ այս բողոքական քարո-
զիչները մեզի պատասխանեն. ինչ ճնաս, կամ բերա-
նը եղեր է, կամ քիթը և կամ քթին ծակերը... ծի-
ծաղելի շաղակրատութիւն. գիտէք արդեօք չըսուած
նոր պիտի ըլլայ, որ իրենց ըրած վարդապետութիւ-
նովը նորալանդ ըլլալնին, և սուրբ գրքին հակառակ
գրելնին և խօսելնին յայտնի ըլլայ ամենուն, որոց աչք
'ի գլուխ են:

Սուրբ գրքին այս յայտնի առակաց անգամ դիւրա-
հասկանալի խօսքը որ կ'ոչլայլեն և անյարմար բացատ-
րելով կը վարդապետեն. արդեօք սուրբ գրոց այն գր-
ժուարիմաց և ծանկեալ միտքերը ինչպէս ուզածնուն
պէս և կամ ինչպէս ծուռումուռ վարդապետութիւն
ներնուն յարմարցնելով կը խօսին, կը քարոզեն և կը
գրեն, և շատմը վկայութիւններու գլխոց և համա-
րաց Թիւերով կը լեցուանեն: Նայէ Պետրոս առաքելոյն
ժամանակն ալ սուրբ գրքին դժուարիմաց միտքերուն

կամակոր և չարախորհուրդ մարդիկ այլ ընդ այլոց վեր նուիրեն տալով՝ գայթակղութեան առիթ կ՚ընծայեն պարզամիտներուն : Անոնց համար գրեց ոգեշունչ հա- ւատացեալներուն Պօղոս առաքեալն գրուածքը մէջ առ մեղ մեղ դժուարիմաց միտքերը յիշեցնել. “Օ՛ր օրն » նաև և սիրելի եղբայրն մեր Պօղոս ըստ շնորհեալ իւ » մաստութեանն նմա յ՚Աստուծոյ՝ գրեաց ձեզ, որպէս » և յամենայն իսկ Թուղթսն իսօսի վասն այսոցիկ, յորս » գոյանի ինչ ինչ դժուարիմաց, զոր անուսմունքն և » յողղողքն կամակորեն, որպէս և զամենայն իսկ գիր » րըս առ իւրեանց անձանցն կորուստ » : Բ. Պետր. Գ. 10 : Անոնք ինչ չար հոգիով սուրբ գրքին միտքերը կը կամակորեն այն ժամանակը, ահա հիմակ ալ նոյն հո- գիով՝ այլայլողք Թուղթողք և կամակորողք են սուրբ գրքին միտքերը, և կը ջոջին քրիստոնեայ ազգերուն մէջ պարզամիտները գայթակղեցնելու :

Սուրբ հոգիով կը խօսինք կը գրենք կ՚ըսեն, բայց հո- գևորը մարմնաւորս և մարդկեղէն խորհրդածութիւնով բացայայտ ընել ձեռնպահ կը Թիւրեն կը ծռեն սուրբ գիրքին հոգեւոր միտքերը : Ջի որ սուրբ գիր- քը մեզի կը յայտնէ Թէ՝ հոգեւորը հոգեւորապէս պիտի իմանանք և ոչ մարմնաւորապէս : Տե՛ս, Աւետե- մոս հրէից իշխանը երբ Յիսուսի Քրիստոսի քովը ե- կաւ՝ Յիսուս անոր մկրտութեան խորհրդոյն վերաբերեալ հոգեւոր ծննդեան շնորհքը բառերով ըսելով. “Ոչ Թէ » ոչ ոք ծնցի վերանին ոչ կարէ տեսանել զարքայու- Թիւնն Աստուծոյ » : Այս Աւետեմոսը մկրտութեան վրկարար խորհրդոյն հոգեւոր վերանին ծնունդը, մարմ- նաւոր ծնունդ մը հասկցաւ՝ անոր համար ըսաւ. “Ան- » Թէ մարթ ինչ ևս է անդրէն յորովայն մօր իւրոյ կրկ- կին մտանել և ծնանիլ” : Յիսուս ալ անոր պատաս- խան տուաւ. “Ամէն ամէն ասեմ քեզ, եԹէ ոչ ոք » ծնցի ի ջրոյ և ի հոգւոյ, ոչ կարէ մտանել յարքայու-

» Թիւեղն Աստուծոյ : Ո՛վ ծնեալն ի մարմնոյ մարմին է ,
» և ծնեալն ի հոգւոյ՝ հոգի է : Զոր ոմն զարմանար թէ
» ասացի քեզ՝ թէ պարտ է ձեզ ծնանիլ վերուստին : Ո՛վ
» հոգմ ուր կամի՝ շնչէ և զձայն նորա լսես , այլ ոչ գիտես
» ուստի գայ կամ յո՛ երթայ . այնպէս և ամենայն ծնեալն
» ի հոգւոյն » : Յօհ . գ . 3—4—5—6—7—8 : Այս խօսքերով
համոզել կ՚ուզէր սէր Յիսուս Նիկոդեմոս
իշխանին մտքը , որ հոգեւորապէս պէտք
է լմնանալ ու հաւատալ Աստուծոյ հոգեւոր անեա-
նելի շնորհքներուն , և ոչ թէ մարմնաւորապէս հասկը
նալ ու քննել , մարդկային մտքի ու խելքի տակ ձգել .
ճշ որ գրուած է . " Հոգի է Աստուած » : Յօհ . դ . 24 :

Պէտք է նէ աստուածային շնորհքները և անեա-
նելի խնամքները հոգեւորապէս պիտի իմանանք , որ այս
կ՚ըլլայ սուրբ Հոգիով իմանալը , խօսիլը ու քննելը :

Այս տեղ մտիկ ընենք սուրբ Հոգիով խորհրդաժո-
ղովն ընող բարեպաշտ և գրոց Պօղոս առաքեալը որ կ՚ըսէ .
Աստուծոյ նեղքին կամքերը , գաղտնի հաճութիւնները և
մարդասիրական խորհուրդները մարդիկներուն և ոչ մէկը
կրնար գիտնալ , և կարող չէ ինքնիրեն գիտնալու , այլ
սուրբ Հոգին Աստուծոյ գիտէ և այն պիտի գիտցունէ
ամենուն . " Ո՛վ ոք զԱստուծոյն գիտէ , եթէ ոչ Հո-
գին Աստուծոյ » : Ա . Կոր . Բ . 11 : Պէտք սուրբ Հոգի-
ով խօսողը գրոցը հոգեւորապէս և հաւատքով իմանա-
լու է աստուածային հոգեւոր խորհուրդները , և ոչ
թէ մարդկեղէն մարմնաւորապէս իմանալով վարդա-
պետելու է . հոգեւորը հոգեւորին հետ համեմատե-
լով և կամ յարմարելով խօսելու և գրելու է : Ինչ
այս է ճշմարիտ աւետարանական քարոզչութեան յայտ-
նի նշանն , ըսես այսմ . " Ոչ զոր խօսիմք՝ ոչ եթէ
» մարդկեղէն ուսմամբ ճշմարտութեամբ բանից , այլ
» վարդապետութեամբ Հոգւոյն ըստ հոգևորս զհոգե-
» ւորն հաստատեմք : Կանխել չնչաւոր մարդ ոչ ըն-

» դուն զՀոգւոյն Աստուծոյ, զի յիմարութիւն է նմա,
» և ոչ կարէ գիտել եթէ հոգեպէս քննելի » : Ա. Կոր.
Բ. 13—14 :

Իմայ հարցուներնք այս Բրիստոնէական վարդա-
պետութիւնը գտալին և նոքին սրբագրոշներուն թէ
աստուածաշունչին այն խօսքը " փչեաց յերեսս նորա ",
հոգեւորապէս պիտի իմանայք եթէ մարմնաւորապէս,
այն փչումը աստուածային է, եթէ մարդկային : Հար-
կաւ պիտի ըսեն, անշուշտ աստուածային էր և հո-
գեւոր և ոչ մարմնաւոր կամ մարդկային : Այս դուք
ինչպէս կը համարձակիք և կամ ո՞ր հոգիէն ասիպուե-
ցաք գրելու և ոտելու մարմնաւորապէս բացատրե-
լով աստուածաշունչին հոգեւոր խօսքը թէ՝ " Այս-
» ուհետ ստեղծեց մարդը հողէն, և անոր քթին ծա-
» կեռուն փչեց շունչ կենդանութեան » :

Կարեմիտ ընթերցող, թէ ու տանք գրուած տես-
նային Աբեսարանին մէջը. " փչեաց յերեսս նոցա ».
փոխանակ գրուածին՝ " փչեաց ինոսա և ասէ առէք
» զՀոգի սուրբ » : Յօհ. Ի. 22 : Համեմատելով Ովննդոց
մէջ գրուածին հետ՝ անշուշտ պիտի ըսէին և գրէին
եթէ Բրիստոս առաքեալներուն քթին ծակերուն վը-
չեց ու ըսաւ " Ունէք զՀոգի սուրբ » :

Բայց եկէր միտքդ դարձու ուղղափառ և ճշմարիտ
վարդապետութիւններուն, աստուածային հոգեւոր
շնորհքներուն տպաւորութիւնը նայէ, ինչ բառե-
րով կը բացատրեն : Ինչպէս մեր սուրբ եկեղեցւոյ պար-
ծանք սուրբ Գրիգոր նարեկացին, այս աստուածային
փչմանը վրայով հոգեւորապէս խօսելով տպաւորեցու-
ցանել զարդարել և փայլեցուցանել կը գրէ. " Ով ա-
» րարեր զիս ի քո պատկեր պանծալի ի ձեռն վեհիդ
» տպաւորութեան զոկարս օժանդակելով : Զարդա-
» րեցեր բանիւ, փայլեցուցեր փչմամբ. մուրք ձոխաց-
» ցուցեր, իմաստիւք ածեցուցեր, հանճարով հաս-

» տառեցեր, և ի ընչականայն սրտիցեդ, հոգւով և
» մտածեաւ խառնեցեր». գԼ. ե. և թէ «Որ ի
» պատկեր առաքելոյ թեանդ քո զարդարեցեր զմարմ
» դըն առաջին»։ ի Շ ՟ր ։

Վասն սիսակ վիսակ վկայութիւն բերեն այս տեղս Յոբ երանելոյն խօսածը. «Ոչ թէ տակաւին կեայ չիս շունչ
» իմ և հոգի աստուածեղէն շուրջ զինեւ չունգունս։
» Ես խօսեցայն զթուանք իմ զանօրէնութիւն, և անձն
» իմ խորհեցայ զանիրաւութիւն». ՅԲ. ԺԷ. 3—4։

Ի՞նչ ըսել կ՚ուզէր այս խօսքով երանելին Յոբ. բա՛ց յայտ է միտք բանին թէ որ տակաւին շունչս իմ վըրայ է և աստուածային Հոգին ինձի բոլորութիւն է ուներ չունգունս, այսինքն ընչացս (քթիս) մէջ ունիմ շնչառութիւն որ է նշան կենդանութեան։ Այս խօսքերով ըսել ջանար աստուածային Հոգին քթիս մէջն է և քամ քթիս ծակերուն մէջը, այլ այս երանելին ըսել կ՚ուզէ թէ՝ որչափ իմ կեանքս չէ սպառուած և Աստուծոյ Հոգին ինձմէ չէ հեռացած՝ ինչն քերանս չի խօսիր անիրաւութիւն, և միտքս չի խորհիր անօրէնութիւն։

Ասոր թէ որ տուրբ պիտըը այս խօսքը Հոգւոյն սրբոյ չնորհին բարեմիտ ընթերցանութիւն ընելով քննեւ՝ պիտի գտնաս ըստ ճարտասանից իբր խեղամըտութեան կամ վոխակերպութեան ձեւ մը գործածած, այսինքն մարդ վոխանակ բոլորի դնելով, կամ թէ մասին համար խօսելով՝ բոլորը իմանալ։ Արդեւ կենդանական շնչառութիւնը քթէն կը յայտնուի որ բոլոր մարմնոյն մէջն է կենդանութիւնը. ուստի բոլոր մարմնոյն տեղը, մասը այսինքն ունգունքը դրեր է, ինչպէս գրուած է. «Ես մեռա ամենայն
» չարժուն ի վերայ երկրի, թռչնոց և անասնոց՝ և
» պատանոց, և ամենայն մարդ։ Ես ամենայն որ ունէր շունչ կեան

» ձանի յոնգուներս իւր, և ամենայն որ ինչ էր ՚ի ցամ-
» մային մեռաւ »։ Ծննդ. է. 21—22։

Ինչ կ՚ըսէք հոգեզգած մուրք ընդհերոյտ սիրելիք, մինչ Աստուած այն անբան կենդանիներուն բանա-կան անմահ հոգի չնորհած է. ջ ապաքէն միայն մար-դիկ այս աստուածային անմահ հոգիով զարդարուած են. բայց կենդանական և զգայական ոգիով մանա-տորապէս շնչաւորներուն ու անբաններուն նմանու-թիւն մը ունին մարդիկ։ Այսր համար կը գրէ առաք-գիրքը։ “Անեաւ ամենայն մարմին շարժուն ՚ի վերայ » երկրի . . . և ամենայն սողուն ՚ի վերայ երկրի, և » ամենայն . . . որ ունէր շունչ կենդանի յոնգուն-» քեր »։ Այս օրինակ է գրուածը և սուրբ գրքին մէջը։ “Ո՛վ իբրև զմսեղ է շունչ ՚ի յոնգունս մեր »։ Իմաստ. Բ. 2։

Վ՚իմաչք. սանկ արուսաց անհեթեթ վարդապե-տութիւններուն և թարգմանութիւններուն խա-բեութեամբը Աստուածաշունչին պարզ մտքեր միտքը ծռելով և շաեերն ալ պակսեցնելով վերցնելով, կամակոր մուք ինչ պատասխանի կուտան. երբայե-կան բնագրին մէջ էիզուանք, կամ այսպէս գուանք կ՚ըսեն։ Այս տեղս երկու զարմանալի բան կայ. մէկ մը որ այն արբատան Թարգմանիչները, որոնք ոչ թէ միայն քաջ լեզուագէտ էին, այլ և Հոգւով արբով լեցուած սիրտ և հոգի ունէին, որով Թարգմա-նեցին սուրբ գիրքը, և սուրբ ժողովքներու մէջ քննութեան առնց Թարգմանութիւնները, և ըն-դունուեցաւ բոլոր քրիստոնեայ ազգերուն մէջ, և հիմակ ալ ունին ամեն ազգային քրիստոնեայ ազգ, անպակաս և անթերի ընծայր և հաստատուն տպաւո-րութեամբ։

Միսյ այս բողբոջան Թարգմիչները միայն եւան, որ ազգային քրիստոնեայնեւրուն սուրբ ժողով-

ներսով ընդունած տուրը գինքը աղաւաղեն, պահանջուներն իրենց վարդապետութեանը յարմար չեկած տեղութիւնքը, ու այնպէս տուրը գինքը տային։ Ոչ ճըշմարտութեան հակառակ խորդախութիւն, կը տեսնա՞ որ չէ թէ միայն Թարգմանութիւնները աղաւաղեր են, այլ և տուրը գրքին մէջէն շատ բաները վերցուցած են։ Նոր ապացոյց այս տեղ նշանակեմք քանի մը հատը միայն, որոնք պիտի տեսնաս պակաս անոց տպած Կ. Տաւուսածաշունչէն. առջի տպածներէն սոնք պիտի գտնաս պակաս, իսկ 1853 ին տպածներուն մէջի պակասը յետ գրելոյս պիտի տեսնաս։

Գիրք Ա. Նգըտաց, ամբողջ Թ. գլուխը պակաս։

Գիրք Նահեմի, ա. գլխոյն 10 համարը, և ժԱ. գլխոյն 1 համարը պակաս։

Գիրք Յուդիթի, ԺԶ. գլուխը ամբողջ պակաս։

Գիրք Տոբիթայ, ԺԲ. գլուխը ամբողջ պակաս։

Գիրք Ա. Մակաբայեցւոց, ԺԶ. գլուխը ամբողջ պակաս։

Գիրք Բ. Մակաբայեցւոց, Ե. գլուխը ամբողջ պակաս։

Գիրք Բարուքայ, Ե. գլուխը ամբողջ պակաս։

Գիրք Դանիէլի, Գ. գլխոյն (Օրհնութիւն երից մանկանց) 70 համարը պակաս։ Ընդ, Ա. գլուխը ամբողջ պակաս (Շուշանի փրկութիւնը)։

Իսկ 1853 ին տպած Կ. տաւուսածաշունչէն պակասցուցանին յայտնի տես։

Նգըտաց Ա. և Դ. գիրքերը չիկայ։

Գիրք Տոբիթայ չիկայ։

Գիրք Յուդիթի չիկայ։

Նահեմէն վեց գլուխ պակաս։

Մակաբայեցւոց Ա. Բ. Գ. գիրքերը չիկան։

Գիրք իմաստութեան չիկայ։

Սիրաք չիկայ։

Գիրք Բարուքայ չիկայ։

Գիրք Դանիէլի երկու գլուխը պակաս։

Ուստի երեթալով առել պակասեցունելու են ամենքը անշուշտ, մինչև որ բոլոր սուրբ գիրքը աղաւաղեն պիտի. և ապա Վրիէդի և Վօլնէի ունեցած անկրօնութեան գաղափարնին պիտի յայտնեն: Ըհ նե ինչ օգուտ պիտի քաղեն սուրբ գիրքը աղաւաղելէն, պակաս ընելէն և իրենց ծուռ սխալ վարդապետութեանը յարմարեցուլ Թարգմանելէն: Ինկ մը որ իրենց նորահնար և կամակոր աղանդը դիւրաւ պիտի հաստատեն, բայց գիտնանք, որ պարտաւոր պիտի ըլլան և եղած են Քրիստոսի առաւն մերոյ ճշմարտութեանը և առաքելական կանոնը որ ըսաւ: "Ամէն համա"րիք եթէ եկի լուծանել զօրէնս կամ զմարգարէս, "ոչ եկի լուծանել, այլ լնուլ: Ամէն ասեմ ձեզ՝ մինչ "չեւ անցցեն երկինք և երկիր յոտն մի, որ նշանա"կեց մի է, ոչ անցցէ յօրինացն և՝ ի մարգարէից՝ մին"չեւ ամենայն եղիցի": Մտթ. ե. 17—18:

Սուրբ գիրքէն քան պակասեցունելու ժամանակնին և կամ կամակոր վարդապետութիւններնին յառաջ տանելու համար քանի եվրեցուներու համարձակելու միջոցը՝ չե՞ն մի յիշեր սուրբ Յովաննէս աւետարանիչին երկինքէն լսած Քրիստոսական պատգամը, թէ՝ "Ես Յի"սուս առաքեցի զհրեշտակ իմ վկայել ձեզ ես"կեղեցեացդ . . . վկայեմ և ես՝ ամենայնի՝ որ լսէ "զբան մարգարէութեան գրոցս այսմիկ, թէ որ յա"ւելցէ՝ ի սա, յաւելցէ Աստուած՝ ի վերայ նորա զեօ"ղն հարուածան՝ գրեալս՝ ի գիրս յայս: Եւ եթէ ոք "պակասեցուսցէ՝ ի բանից մարգարէութեան գրոցս այսմիկ, պակասեցուսցէ և հասցէ Աստուած զբաժին "նորա՝ ի ծառոյն կենաց՝ և՝ ի քաղաքէն սրբոց որ գըր"եալ է՝ ի գիրս յայս": Յայտ. ԻԲ. 16—18—19:

Իրենք ալ գիտնալով այս ամենը՝ կամայ ակամայ գըրեր են, են ինքնինքնին բարի մարդ և բարի քրիստոնեայ ձեւացունելու համար, նայէ իրենք գրած են. "Սա

» կալը բան է Աստուծոյ խօսքին վրայ բան եվ լինելոյ
» կամ անկէ բան պակսեցընող գոնուիլը » : Կանոն հա-
պոյ . երես . 39 : Տեսար գրածնին իրենք չէն բառներ :

Ես երկրորդ՝ սուրբ գիրքն իրենք իրենց ընտրու-
թիւնովը ամբողջ գլուխներ և այլուր մասնաւոր բա-
ներ պակսեցընելը , մեզի յայտնի նշանակ ցոյց կուտայ
իրենց հետի ըլլալնին ճշմարիտ Աստուածպաշտու-
նէ և քրիստոնէական ողջմիտ վարդապետութենէն
համեմատ Պօղոս առաքելոյն ըրած մարգարէու-
թեանը . « Ոյայս գիտասջիք , եթէ յաւուրս յետինս հկեսցեն
» ժամանակք չարք , պի եղիցին մարդիկ անձնասէրք ,
» արծաթասէրք , հպարտք , ամբարտաւանք , հայհոյիչք
» անհաւանք ծնողաց , անշնորհք , անսուրբք աննուէրք ,
» . . . որ ունիցին վկերպարանս աստուածպաշտու-
» թեան , և ի զօրութիւնէ անտի նորա ուրացեալ լիցին
» և խորշեսջիր ի նոցանէ : Քանզի ի նոցանէ են որ մը-
» տանեն տանէ ի տուն և գերեն վկանայս հեղձակուտ
» եալս մեղօք վարեալք ի պէս պէս ցանկութիւնս ,
» որ յամենայն ժամ ուսանին , և երբէք ի գիտութիւն
» ճշմարտութեան ոչ հասանեն : Այլ որպէս Յանէս
» և Յամբրէս հակառակ կացին Մովսէսի , նոյնպէս և
» սոքա հակառակ կան ճշմարտութեան , մարդք ապա-
» կանեալ մտօք՝ անպիտան ի հաւատս : Այլ ոչ երբէք
» յառաջ գայցեն ի լաւ անդր , քանզի անմտութիւն
» տոցա յայտնի լինիցի ամենեցուն , որպէս և նոցայն
» իսկ եղեւ » : Բ . Տիմ . գ . 1—2—5—6—7—8—9 :

Վերի մէկ նշանակ մի ևս ցոյց կուտան այս բուղ-
քական քարոզիչները , որ իրենք արդէն հաստատուած
չեն քրիստոնէական ճշմարիտ վարդապետութեան մէջ .
որովհետեւ սոյնք ամենքը կ'ըսեն , բուղքական եմք և
մէկ կրօնից ալ հետեւող պիտի ըլլան . մէկ առաքելա-
կան վարդապետութիւն ունիմք կ'ըսեն , և ամենքը ա-
ետարանական կը ձեւանան . բայց սեծ քանի բաժնը

ուած են, և ամեն մէկը մէյմէկ տեսակ քրիստոնէական վարդապետութիւն կը քարոզեն։ Որովհետեւ երբոր Յուդայ և Իսրայէլն պատկան իշխանութեանը դէմ բռնկեալ, այսինքն բողոքելով Յուդայեան եկեղեցիէն զատուեցան, ուրկէց բողոքականութիւնը ծագեցաւ, այնուհետեւ ասկան մէկմէկու անհամաձայն նորանոր կարծիքական վարդապետութիւններ ընելու, և մէկմէկէ որոշուելով՝ առանձին առանձին ժողովքներ կազմելու, և իրենց մտացածին և ըստ քմայ վարդապետութիւնը քարոզելով, մէկը մէկէ բաժնուեցան, և ամեն տեղի ժողովները իրենց հեղինակներուն անունովը որոշուեցան, Լուտերի վարդապետութեանը հետեւողք՝ Լուտերականք անուանեցան, և Կալվինի հետեւողք՝ Կալվինականք, և Զուինգլեայի հետեւողք՝ Զուինգլեականք։ Յանկով բազմատեսակ վարդապետութիւններով ձգուեցան զատուեցան մէկմէկէ, և մինչեւ հիմայ կը բաժնուին անվախան հերձուածողութեամբ։

Ես հիմայ իմ գտածներս ու որոշակի բաժնուած տեսածս կը յայտնեմ, որոնք երեսունէն աւելի վարդապետութիւններով բաժնուած ու մէկմէկէ որոշուած են անուններով. 1. Լուտերականք. 2. Կալվինականք. 3. Զուինգլեականք. 4. Եպիսկոպոսականք. 5. Երկեանք. 6. Անկինեանք. 7. Թոլեռանեանք. (վիջանոլք). 8. Լիթիթիւթինեռ (լայնականք). 9. Բաժանեանք. 10. Անկերեանք. 11. Հնոխֆեռանք (անուարբերք). 12. Հնոեբանոսանք. (անկախք). 13. Անաբաւեան եղբարք. 14. Ընտրեթիմք (կրկին մկրտուլք). 15. Ռենիվերսալիմք. (ընդհանրականք). 16. Փիւրիթանք. (մաքրականք). 17. Ռենիթեռեանք. (վիրապաւանք). 18. Սամարեանք. 19. Ընմենոսեանք. 20. Անհնծեանք. 21. Պոսիկեանք. 22. Ռիւզիկեանք. 23. Անթեոմարքիմք. 24. Քոնկրեկեյտոյալիմք. 25. Աւետա-

եան . 26 . Փաւէքր կամ Ներսիսեան . 27 . Հայհոյութիւն պօռկէնք կամ Հեռընպուխ . 28 . Ընդհանուր . 29 . Աքռամանդեա . 30 . Խափխիմ . 31 . Տայիճնալիսմէք . (հետեւողք մտաց իւրեանց . և այլն :

Տեսանք արդեօք՝ ինչպէս մեկմեկէ զանազան և նոր բանհնար օտարաձայն վարդապետութիւններով բաժնուած ըլլալով՝ այսպէս կ'ընեն , որ առաքելական անժխտելի կանոններուն հակառակ են , որ մերժեր են Պօղոս առաքեալին խրատը , որ Յիսուսի Քրիստոսի երկրորդ պատճառն անունովը կը յորդորէ ամեն քրիստոնեայներըը , որ բնաւ չունենան անմիաբանութիւն և տարաձայնութիւն վարդապետութեան քրիստոնէական ճշմարտութեան մէջ . « Ընդհեմ զձեզ եղբարք անուամբ » տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի , զի զնոյն բան » ունիցիք ամենեքեան և մի լիցեն ի ձեզ հերձուածք , » քանզի էիք հաստատեալք ի նոյն միտս , և ի նոյն » հանճար » : Ա . կորն . ա . 10 : Դարձեալ սոյն առաքեալը կը խրատէ մեզի այսպիսի օտար վարդապետութիւններէ հեռի մնալ , ոչ կամք և ոչ միտք տալու յօժարիլ , քան զի օտարաձայն ու բազմաեռակեն և չունին ճշմարիտ աւանդութիւն . անոր համար կը գրէ . « Յուսա » մանա պէտպէս և յօտարաձայնս մի դանդաչէք » : Եբր . ժգ . 9 :

Յիշենք այս տեղ Ընդբանդր Թուասն Խտալացի մատենագրին այն յօդուածը , որուն մէջ նորաղանդից ի հաւատս իրարմէ ունեցած տարբերութիւնները կը հաստատէ : Նկեղեցին կ'ըսէ , պէտք է մէկ ըլլալ , բայց նորաձեւութիւնը չէ թէ միայն բաժնուած է , հապա ամեն մէկ բաժանմունքներուն մէջ բազմապատիկ տեսակներ կը պարունակուին : Ընդբէն Ընգլիական ըսած եկեղեցին Լուտերականէն մաս մը չունի . Լուտերականն ալ Կալվինականէն բոլորովին անկախ է . նմանապէս ուրիշ ամեն աղանդները հաստատակօրէն իրարու

անհամաձայն են, և մեկմեկէ բոլորովին զատուած։ Այս ուրեմն նորաստանդութիւնը ուրիշ բան չէ, եթէ ոչ քրիստոնէութիւնը ստուգիւ քակել ու աւրել։

Հաւատքը՝ ինչպէս եկեղեցին ալ, պէտք է մեկ ըլլալ, բայց նորաձեւութիւնը հաւատոյ միաբանութեան տեղ տարաձայնութեանց և վէճերու անապատ աղբիւր մը բղխեցուց՝ ամեն մեկուն իրեն խելքին համեմատ գիրքերը քննելու թոյլտուութիւն ընելով, և իրեն դատումները բարի ու չար գործերը որոշելու և՛ գործ դնելու, ասոր համար նորաստանդներուն մէջ խիստ շատ է կարծեաց տարբերութիւն, և այդչափ տանդաւորները միմեանց հետ ամենեւին միաբան չեն։ Կրճնակնութիւնքները տանելիք կամ տան և ջրա տաղանդներու բաժնուած են։ Խորհրդապաշտութիւնը ինչ։ Համակերպելով քան և չորս։ Աւետարանի խոստովանութեան բոլորովին հակառակները վեց կամ եօթը. տանկ իմացիր ալոց համար ալ։

Ընմարտութիւնը կրճնքին ամենահարկաւոր անդամն է, սակայն նորաստանդներուն մէջ այդ բանը չգտնուիր։ Նորաձեւութիւնը ճշմարտութեան չառաջնորդեր՝ ոչ հեղինակութեան ձանապարհ, որն որ կը հերքէ, և ոչ տրամաբանական եղանակ, որ քիչերուն որուած է, և միշտ խաբող է։ Եւ թէ տուգութիւնը անանց մէջ պէտք է փնտռել։ Աւրբ խորհրդոց Թուոյն, արդարացուցման, շնորհաց, Քրիստոսի տեառն մերոյ մարդեղութեան, և գրեթէ հաւատոյ ամեն մասանց վրայ նորաստանդները մեկ մը սա կողմը՝ մեկ մը ան կողմը հոլմակոծեալ կը ծռին։ Եւ յիրաւի հարկաւոր գիտեցող մէջ տարակուսած միտքը մարդկային սիրտը անհանգիստ ընելու աղետալի վիճակն է։

Ուրանց խորհրդածութեան նորաստանդները մոլութեան մէջ կը թափառին. այն պէս չէ թէ միայն մի

մեանց հակառակախոս են, հապա ինքզինքնուն դէմ կը խօսին. մարդուԹիւնը միշտ հակասուԹեան մէջ կ'ինայ. և Պօղոսի նման բազմատեսակ կերպա րանքներու մէջ կը մտնէ։ Ինք հակառակին ճշմարտուԹիւնը ամեն ժամանակ մէկ է. միշտ անայլայլուԹիւն մը ունի իրեն մէջ։ Ա յուրին վրայ լոկ սուրբ հաղորդուԹեան համար երեսուն և եօԹն հակասուԹիւններ կը տեսնուին. ամեն օր ուրիշ ուրիշ միտքեր ցոյց կու տար. այսօր այն բանին կը հակառակէր, որն որ երէկ ընդունած էր. վաս օրը կը գտնար նորէն կ'ընդու նէր, որն որ առջի օրը կը ժխտէր. ապա ուրեմն ճըշ մարտուԹիւնէ բոլորովին հեռի էր, և ստուգիւ խա բեբայ մէկը, Պօղոս առաքելոյն բսածին համեմատ. "Օ՛ի եԹէ զոր քակեցի՝ զնոյն վաստանգամ շինիցեմ, "ապա յանցաւոր զանձն իմ ես ինձէն երեւեցուցա "նեմ"։ Գաղատացւոց Բ. Գլ. ԽԸ։

Ա՛յս բողոքականուԹիւնը որ եղեր է՝ արդէն երեք դար եղած չէ, և այնչափ սեռակ վարդապետուԹիւն ներով բաժնուած են, արդեօք ինչ կը մակաբերէք. կսպնեմ որ քրիստոնէական ճշմարիտ վարդապետու Թիւնը իրենց նորահնար և կամակոր վարդապետու Թիւններնուն մէջը բոլորովին պիտի կորնչուներն. քան այնմ, "Նա այլն անկաւ 'ի մէջ փշոց, եկին փուշքն և "հեղձուցին զնա, և պտուղ ոչ ետու"։ Մարկ. Դ. 7։ Ա՛ստ համար ընդհանրապէս ամենայն քրիստոնէից և հոգեւոր հալիւններուն իրաւ կատար արբսպան Պօ ղոս առաքեալը. "ԴայթակղուԹիւնս աւնիցեն արտա "քոյ վարդապետուԹեանն զոր դուքն ուսայք, և "խորշեցարուք 'ի նոցանէ։ Օ՛ի այնպիսիքն սեռան "մերում ոչ ծառայեն, այլ իւրեանց որովայնի, և "քաղցրաբանուԹեամբ և օրհնուԹեամբ պատրեն զը "սիրտս անմեղաց"։ Հռով. ԺԶ. 17—18։

Ա՛պաքէն, բարեմիտ ընԹերցող. մի զարմանար այս

բողոքականները սուրբ գիրքին մեծը ասանկ ծուռ բացատրելուն վրայով, որովհետեւ ասանկ որ ըլլեն՝ կարող պիտի ըլլան նրանց բազմաթեւակ վարդապետութիւնին յորմարցնելու, նոր աղանդնին հաստատելու։ Կ'ուզես բոլոր տպած գիրքերնին և աեւորակնին կարդա. ամենուն մէջը երկու խաբէական հնարք գործածեր են. մէկը որ՝ սուրբ գիրքին բացայայտ վկայութիւնները աշխարհաբառի թարգմաներ են և րնդ ուզածնուն պէս, և ոչ սուրբ գրքին մտացը հասկնալու. և երկրորդ՝ խօսածնին այլ, բերած վկայութիւնին այլ, նրանք ալ գիանալով անոնց հեռի և անհամեմատ ըլլալը սուրբ գրքին, անոր համար միայն թուահամարները դրեր են, և այն ալ մէկմէկէ շատ հեռու։

Ա. յս տեղս մէկ քեզի օրինակի համար յայտնեմ Պօղոս առաքելոյն սա խօսքը. "Ա.րդ՝ վասն Բրիսկայի "պատգամաւորիմք, որպէս և Ա.ստուծոյ բարեխօսու"թեամբ մեօք, աղաչեմք վասն Բրիսկայի՝ հաշտեցարուք ընդ Ա.ստուծոյ" Բ. կորն. ե. 20։ Ա.յս գրած խօսքը կարող է մէկ պարզ քերականութիւն սորվող տղայն աշխարհաբառի դարձնել, և այսպէս հարկաւ պիտի դարձնէ մտքը չտյալելով։ Հիմայ Բրիսկայի կողմանէ դեսպանութիւն կ'ընեմք, ինչպէս որ Ա.ստուծոյ կողմանէ մեր բարեխօսութեամբը, կ'աղաչեմք Բրիսկայի համար Ա.ստուծոյ հետ հաշտուեցէք։ Ա.յսր խակ նկարագրութիւնը չտյալելով բառական աշխարհաբառի թարգմանութիւնը այս պէսի ըլլայ։ Հիմայ նայէ այս բողոքականաց Բրիսպոնէական վարդապետո-ին- ը ըսած գրքին և իրենց աստուածաշունչին մէջ, մէկ քանչ ուշիմութիւնով մը կարդայ այս տունը Պօղոս առաքելոյն խօսքը աշխարհաբառի դարձուցանէին, կարդայ մէյմը որ՝ գործիական հոլով անունը "Խարեխօսութեամբ մեօք" Հիմայ բայի

են դարձուցեր, և այն բայն ալ Աստուծոյ տուեր են. Աբաքեանը մեր բարեխօսութիւնովը կ'ըսէ, սոնք գըրած են "Աստուած կը բարեխօսէր մեզմով" Ինծա նոյնը կը գրեմ այս տեղ, որ ալէկ տեսնաս. "Աւրեմն "Քրիստոսի կողմանէ դեսպանութիւն կ'ընեմք, իբ"րեւ թէ Աստուած կը բարեխօսէր մեզմով, կ'աղա"չեմք ձեզի Քրիստոսի կողմանէ հաշտուեցէ՛ք Աստու"ծոյ հետ": Կրես. 30—8: Ինչու համար բայացուցին այն յայտնի անունը "Բարեխօսութեամբ մեօք" որ ըսել է մեր բարեխօսութիւնովը կամ մեր բարեխօսելովը. որովհետեւ պիտի չընդունին սրբոց բարեխօսութիւնը, անոր համար անունը՝ քայ չինեցին, որ չըսուի, թէ սուրբերը կենդանի ըլլալով՝ աշխարհիս վրչ մեղաւորներուն համար բարեխօսութիւն կ'ընեն երբոյ սուրբ հոգիովը, մինչ երկինքը արքայութեան մէջ արժանի ըլլալնին կը դատուին այս բարեխօսութենէն: Հիմայ տեսար որ՝ ինչու համար է բոլոր սուրբ գիրքերը աշխարհաբառի դարձուննելնին, երբոյ ուզածին պէս թարգմանելու ու խօսելու համար:

Գեղի ուրիշ օրինակ մ'ալ, սուրբ Աւետարանին մէջը գրուած Յիսուսի Քրիստոսի այն անժխտելի խօսքը որ ըսաւ Հրեից ազգին համար, պիտի տեսնաս որ բողոքական քարոզիչները քաւ փոխելով միտքը այլայլելու հետեւեր են, ու աշխարհաբառ աստուածաշունչնուն մէջ համարձակեր են տպելու յամի տեառն 1853, 'ի Օ՛միւռն 'ի տպարանի Կուլիէլմոսի Լըլիֆֆիի:

Ասոնք քրիստոնեայ ազգ ու մենք սուրբ Աւետարանին մէջ սասնկ կը կարդանք. "Ան համարիք եթէ ես "հարսիոս ինչ իցեմ գալեմ գալենչ առ Հօր. գոյ որ հարսիոս "կայ գալենչ Անուսես յոր դուքն յուսացեալ էք". Յօհ. ե. 45:

Տես Աւետարանին մէջ ձիշտ գրուած "հարսիոսու-

թիւն » կը կարդաս , բայց այս խօսքը բողոքական քա-
րոզիչներուն աշխարհաբառ Թարգմանութիւնը մէջ
պիտի գտնաս ու կարդաս չարախօսութիւնը ամբաս-
տանութեան փոխուած ։ " Ալ կարծէք թէ ես ձեզի
» համար ամբաստանութիւն պիտի ընեմ Հօրը , կայ
» մէկը որ ձեզի համար ամբաստանութիւն կ'ընէ
» Մովսէս՝ որուն դուք յուսացած էք » ։

Թէ որ իրենց հարցունելու ըլլաս , ինչի՞ համար այն գրուած չարախօսութիւնը ամբաստանութեան փոխեր էք , թէպէտ երկուքին նշանակութիւնը մէկ կը համարուի , որ ըսել է դանգատ . սակայն կուտան որ՝ անոր համար չարախօսութիւնը ամբաստանութեան դարձուցինք որ հասարակութեան աւելի հասկնալի ըլլայ ։

Դարձ կը հարցունեմ հասարակութեանը , չարախօսութիւն բառը արդեօք ամենուն հասկնալի է դիւրաբար , թէ ամբաստանութիւնը ։ Կարծեմ որ ամենքը պիտի վկայեն եթէ ամբաստանութիւն բառը դժուարաբար կը հասկցուի աշխարհաբառի միայն ծանօթ եղող հասարակութեանը , քան թէ չարախօսութիւնը ։ Ապա ինչի՞ համար չարախօսութիւն պարզ հասկնալի բառը ամբաստանութիւնի փոխեր են . ինչպէս առանց այլայլած ու պակսեցուցած Աստուածաշունչ անունով տպեալ գիրքերնուն մէջը կը տեսնուի շատ տեղ չարախօսութիւնը՝ ամբաստանութեան Թարգմանուած ։ Մտթ . ԺԲ . 10 ։ Մարկ . Գ . 2 ։ Ղ–ի . ԺԱ . 54 ։ Յօհ . ԺԸ . 29 . և այլն ։ Արդեօք ամբաստանելին հակառակը՝ գովել , բարեհամբաւել կամ դրուատել պիտի ըլլայ . իսկ չարախօսելին հակառակը՝ անշուշտ կ'ըլլայ բարեխօսել ։

Ապա՝ թէ որ այս բողոքական քարոզիչները սուրբ Աստուածարանին մէջը գրուած այն չարաւիտ և մոլորեալ հրէից համար Մովսէսին՝ հոգւով երկինքը առ Հայր Աստուած չարախօսելը ուզիղ պարզ մտօք գրելու ըլլան՝

հարկաւ ուղղափառ քրիստոնեայներէն՝ ալիսի լսեն՝ որ եթէ երկինքը սուրբ հոգիները Աստուծով իմացած ըլլալով երկրի վրայ եղող հակառակ աստուածային քարեր կամաց շարժուլ մարդկանց համար չարախօսութիւն կ՚ընեն նէ առ Հայր Աստուած, ինչպէս սէր Յիսուս կը վկայէ. Յով. ե. 45. ուրեմն հաւատացեալ աստուածասէր և բարեպաշտ մարդիկներուն համար ալ, որ անոնց աստուածահաճոյ և աստուածամերձ ըլլալնին կը ճանաչեն, համարձակութիւն ունին [երկինքը առ Աստուած բարեխօսելու. ըսել է որ, եթէ երկինքը չարերուն համար սուրբերը չարախօսութիւն կ՚ընեն, ապա ուրեմն կը բարեխօսեն ալ: Այսր վրայով մեր Հանդիսարան ուղղափառութեան գրքին մէջը ընդարձակ գրուածը սես. երես 431:

Այս բողոքական քարոզիչներուն նորահնար վարդապետութիւնը երթալով երթալով՝ քրիստոնէութեան հիմը բոլորովին պիտի կործանէ. որովհետեւ կը սեպնուի գրածներնուն մէջը սուրբ Աստուածային ընդդեմ և հակառակ վարդապետութիւններ յայտնի և համարձակ գրուած: Թէ որ ամեն մէկը ժողովելու և հաւաքելու ըլլանք, կարծեմ որ՝ մեծ մատեան մը պիտի ըլլայ. բայց մենք այս տեղս այն Հրիպոնէական վարդապետութիւնները հակառակ սուրբ Աստուածային Հրիտոսի՝ իրենց նորագտնդ մեր վարդապետութիւններնուն մէկը յայտնի ընենք: Նայէ մեր սէր Յիսուսը՝ մարդկան յաւիտենական կեանց արժանի ըլլալու հարկաւոր միջոց, միրութեան վրկարար խորհուրդը ցոյց տուաւ. վասնորոյ ըսաւ. "Եթէ ոք ոչ ծնցի ի ջրոյ և ի հոգւոյ՝ ոչ կարէ մտանել յարքայութիւնն Աստուծոյ": Յով. գ. 4:

Ձէ որ քրիստոնէական ողջախոհ և կենդանի հաւատոյ խոստովանութիւնը և գաւանութիւնը կը պահանջէ հարկաւ անվիջապէս միրութիւնը, և նոյն սրբարար

մկրտութեան խորհուրդը հոգեւոր վերսին ծնունդ կը պարգեւէ սուրբ Հոգւոյն ընդհատ ներգործութեամբը մկրտելոյն հոգւոյն և սրտին, որով յաւիտենական կենաց ժառանգաւորի կ'ըլլայ այն մկրտեալ անձը. "Ով հաւատայ և մկրտեսցի՝ կեցցէ" : Մրկ. ԺԶ. 16:

Ուրեմն ինչը քրիստոնեայները այս մկրտութեան անհեռանալի հոգեւոր վերսին ծննդեան ընդհատին չը հաւատան և չյուսան. սուրբ Հոգւոյն ընդհուրը հոգւոց նորոգութեան և յաւիտենական կենաց ժառանգութեան: Այսր համար չէր որ Պետրոս առաքեալը հրէից ազգին համարձակ և յայտնի քարոզեց. "Ան" կըսեսցի իւրաքանչիւր ոք ի ձէնջ յանուն սեառն "Յիսուսի Քրիստոսի ի թողութիւն մեղաց, և ընդ "կալջիք զաւետիս Հոգւոյն սրբոյ" : Գործ. Բ. 38: Այս հաւատով և յուսով չէր որ երեք հազար հոգի անմիջապէս յօժարութիւնով ընդունեցին այս Պետրոս առաքելոյն քարոզութիւնը և մկրտուեցան:

Այսպս ուրեմն մկրտեալ քրիստոնեայները հաւատոյն յուսով պիտի հաւատան, որ Քրիստոսի հետ միացած են իրրև անոր բարոյական անդամները. և Քրիստոսի կամաւոր կենդանարար մահուանը ընդհանրեան և արդիւնքներուն հաղորդ եղած են: Այսր համար կը վկայէ Պօղոս արբազան առաքեալը: "Ան" միանգամ ի Քրիստոս մկրտեցայք, զՔրիստոս զգե" ցեալ էք, չիք խտիր. ոչ հրէի և ոչ հեթանոսի, ոչ "ծառայի և ոչ ազատի, ոչ արուի և ոչ իգի, զի ա" մենեքին դուք մի էք ի Քրիստոս Յիսուս" : Գաղ. Գ. 27: "Թաղեալք ընդ նմին ի մկրտութեանն, որով և "ընդ նմին յարեայք հաւատովք ազդեցութեանն որ "յարոյց զնա ի մեռելոց" : Կող. Բ. 12:

Ներկս հիմաց այս բոլոր աւետարանական և առաքելական բացայայտ ճշմարտութեանը դէմ յայտնի հա-

կառավարութիւնը տեա, որ բողոքական նորադարձք քարոզիչները ծուռ վարդապետութեամբ կը գրեն։ Ուրիշ պոնէական վարդապետութիւն ըսուած գիրքերուն մէջը հարց պատասխանի ընելով, Էրես 336։ "Հ. Տգէտ և խաբուած չէն ալ անոնք՝ որ կը կարծեն թէ մարմինը մի կըրօնութեան ջրով լուացուելով սրտի փոփոխութիւն կ'ըլլայ։ Պ. Այո տգէտ և խաբուած են անոնք, որ ձեզ ալ ան օրինակին պէս ակրօնութիւնը պիտի սպրեցնէ՝ չէ թէ մարմինին ալլսը մէկդի դնելով, հապա բարի խղճմտանքին վկայութիւնը առ Աստուած Յիսուսի Քրիստոսի յարութիւնովը"։ Ա. Պետ. գ. 21։

Ի՞նչ կ'ըսես՝ այս խօսքերը ըստ ամենայնի հակառակ Քրիստոսի հրամանին չէ՞ ալ, որ ինքը կրնէն տըլ նօրինութեամբը հաստատեց մկրտութեան սուրբ խորհուրդը, որուն նկատմամբ պիտի ըլլայ հարկաւ պարզ ջուր. ինչպէս կը կարդաս։ Մտթ. գ. 15։ Ղուկ. գ. 21։ Յովհ. գ. 22։ Դ. 1. Հիմայ այս կարդացածներդ սուրբ գիրքին հետ բաղդատէ՛ բողոքական քարոզիչներուն նորօրինակ նոր գայթակղութեան առիթ այս խօսքերուն հետ, և մեյ՛ալ աշխարհաբարի թարգմանեալ Պետրոս առաքեալին բերած վկայութիւններին ալ մէկ նկատէ։ Պետրոս առաքեալն ըրած վարդապետութիւնը այս է, որ մկրտութեան խորհուրդը սուրբ Հոգիով յաւիտենական կենաց ժառանգութիւն կուտայ, և հոգեւոր արքունիւն և նորոգութիւն կը պարգեւէ հոգւոց և սրտից մկրտելոց, անոր համար այսպէս կ'ըսէ. "Ուր և զձեզ ըստ ամին օրինակի կեցուցանէ մկրտութիւն, ոչ մարմնոյ աղտն՝ ի բաց ընկենուլ՝ այլ զբարուք մտացն հանդէս առ Աստուած՝ ի ձեռն յարութեան Յիսուսի Քրիստոսի"։ Ա. Պետ. բ. 21։

Այս երանելի առաքելոյն Պետրոսի խօսքովը պիտի իմանանք, որ Թէպէտ տեսնուած մկրտութեան ջուրը

մարմինը կը մկրտէ, բայց մկրտեալ անձին հոգին սուրբ Երրորդութեան անունին սրբապարծող զօրութեամբը կը մաքրուի ի մեղաց և բարի ընդունակութիւն կ'ունենայ. անոր համար մեր տէր Յիսուսը հրամայեց. "Մկրտեցէք զնոսա յանուն Հօր և » Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ »: Մտթ. ԻԸ. 19: Այս մկրտութեան զօրութիւնը նայելով, ոչ միայն Պետրոս առաքեալը գրեց, այլ Պօղոս առաքեալը աւաւել քան զնա բացայայտ կը գրէ. "Ոչ գիտէք զի որ միանգամ » մկրտեցայք ի Քրիստոս Յիսուս, ի մահ անդր նորա » մկրտեցայք: Թաղեցայք ընդ նմին մկրտութեամբն ի » մահ, զի որպէս յարեաւ Քրիստոս ի մեռելոց փա» ռաւք Հօր, նոյնպէս և մեք ի նորոգութիւն կենաց շրջեսցուք: Օ՛ի եթէ անկակից եղաք նմանութեան մա» հու նորա. այլ և յարութեան նորա լինիցիմք »: Հռով. Զ. 3–5:

Այս սրբարար մկրտութեան խորհրդաւոր շնորհացը վայել մեր Սարգիս շնորհալին առաքելոց ոճյամիա վարդապետութեան և աւետարանական ճշմարտութեան շատ յարմար կը գրէ. "Օ՛ր օրինակ երեւելի » Յորդանն զերեւելի մարմնին լուանայ և յարդարէ, նը» մանապէս և անտեսանելի Հոգին զնեղքին զսիրա» կան մարդն, այսինքն զՀոգին և զմիտան հրաշագոր» ծէ սրբէ և մաքրէ յաղտոյ մեղաց: Նորին աղաչա» Թուխ լինէ Թէ և տէր մեր հրամայեաց ծնանել ի » ջրոյ և ի Հոգւոյ, զի կրկին ունկնկիմք զծնողն որ» պէս ի մարմնականն ծննդեանն, զի երեւելին և » յայտնին վկայ լինիցի աներեւութին և ծածկեցեալ» ցըն »: ի ճառ. Ը. երես. 417:

Նայց Պետրոս առաքեալն ա խօսքը, որ վերը յիշուեցաւ, "Ոչ զմարմնոյ աղտն ի բաց ընկենուլ" յայտնի կը ցուցանէ, որ հին մովսիսական օրինաց ժամանակին հատուածուած Յորդանան մաքրութիւնը պէս չէ,

որ բոլոռանեռուն և այլ սեռակ մարմնաւոր արատաւոր
տուԹիւն ունեցողներուն միայն մարմինը կը մաքրէր.
ինչպէս գրուած է Ղեւ. ԺԴ. 8—9։ Թուոց. ԺԹ. 7—8—19։
Այս մարմնաւոր մաքրուԹիւնը ոչ միայն Պետրոս ա-
ռաքեալը կը յիշէ, այլ և Պօղոս առաքեալն ալ կը գրէ։
« Պէտպէս մկրտուԹեամբք՝ մարմնոյ սրպատրուԹիւնքն.
» որ մինչև ի ժամանակս ուղղուԹեան ի վերայ կային։
» . . . Օ՛ի եԹէ արիւն ցլուց և նոխազաց՝ և մոխիր
» երինջոյն ցանեալ՝ զպղծեալսն սրբէր առ ի մարմնոյ
» սրբուԹենէ »։ ԵԲր. Թ. 10—13։

Տեսանք մի ողջամիտ ընԹերցող, որ հոգիով ատնք
առջը գրքին միտքերը աշխատասէր կը դարձուներն.
երբեմն մելոտական մաքուր և խաբեբա հոգիով. Թէպէտ
գիրքերնուն մէջը նայիմ՝ առջը գրքին հին և նոր կտա-
կարանին վկայուԹիւններու Թուահամարներուն լեցուն,
բայց երբ վարպետուԹիւննին առջը գիրքէն բե-
րած վկայուԹիւններնուն շատ հեռու և անհամեմատ։
Բրիստոնեայներուն մկրտուԹեան խորհրդոյն վայ ու-
նեցած հաստատին և յայտերնին կը ծաղրաբանեն ու
կ՚անարգեն ըսելով։ « Ա. Տգէտ և խաբուած չէն մի
» անդք, որ կը կարծեն Թէ մարմինը մկրտուԹեան
» ջրով լուացուելով՝ սրտի փոփոխուԹիւն կ՚ընայ։ Պ.
» Այո՛, տգէտ և խաբուած են անդք »։ Ինչպէս այս
խօսքերնին վերջ յիշեցինք. և Պետրոս առաքեալն խօս-
քովը կ՚ուզեն հաստատել իրենց գայԹակղեցուցիչ
մոլար վարդապետուԹիւնը։ Այդ առաքելոյն գրածը
առաւել կը հաստատէ մկրտուԹեան խորհուրդը՝ օրէ-
նակ տալով այն աստուածային հրամանաւ չինուած
տապանը, որուն միջոցաւը ըսկեղեղին ժամանակը
ութն անձինք ապրեցան։ Ձեղի ալ նոյն օրինակաւ կը
փրկէ մկրտուԹիւնը՝ չէ Թէ մարմնոյ աղտը մաքրելով,
այլ բարի միտքերնուդ հաւատոյ հաստատուԹիւնը և
առաքինական գործերնիդ, որ առ Աստուած է նուի-

ընաձ, միջնորդութեամբ և հնարհիւ Յիսուսի Քրիս-
տոսի յարութեանն։ "Յաւուրս Նոյի, յորս տապանն
" կազմէր. յորում ներաղուկք՝ այսինքն ոգիք երբեք ուժ
" ապրեցան՝ ի ջրոցն։ Որ և զձեզ լսատ ամին օրինակի կե-
" ցուցէ մկրտութիւնն, ոչ զմարմնոյ աղտն՝ ի բաց ընդ-
" կենալ այլ զբարւոք մտացն հանդէս առ Աստուած՝ ի
" ձեռն յարութեանն Յիսուսի Քրիստոսի"։ Ա. Պետ.
գ. 20—21։

Վերը տեսանք, քաղաքական քարոզիչներուն Թարգ-
մանածը, հիմայ բաղդատէ՝ մեր Թարգմանութեանը
հետ, Թէ որ տուրբ Հոգիով լեցուած ըլլային՝ նախ
այս վկայութիւնով պիտի հաստատէին մկրտութեան
արբարար խորհրդոյն ներքին հոգեւոր շնորհաց ներ-
գործութիւնը, և ապա Հոգւով արբով պիտի Թարգ-
մանէին և գրէին այս խօսքը, որ բուռ առաքեալը.
"Այլ զբարւոք մտացն հանդէս առ Աստուած՝ ի ձե-
" ռն յարութեանն Յիսուսի Քրիստոսի"։ Այլ ինչ
պէս Թարգմաներ են. "Հապա բարի խղճմտանքին վը-
" կայութիւնը"։ Որտեղ տգէտ հանդիսին մէջէն խղճմը-
տանքի մը վկայութիւն հաներ են. ու անանկ Թարգ-
մաներ են. պէտք էր որ՝ Հոգւով արբով քննէին և ի-
մանային որ այս երանելի առաքեալը հանդէս բառով
ինչ կուզէր իմացուներ։

Նորոգ կարդային այն արբազան առաքելոյն Ա. Կոր.
Ա. Գլ. 1. համարը՝ կարդալ կ'ըլլային հանդէս բառին
մէջի քրիստոնէական հաւատքը նկատելու և տեսնա-
լու, ինչպէս գրուած է. "Ո՞ի հանդէս ձերոց հա-
" ւատոյն առաւել քան զոսկի կորստական պատուա-
" կան է"։ Թէ որ տուրբ Հոգիով գրած ու քննած
ըլլային՝ անոնց ալ այս ճշմարիտ տուրբը հաւատոյ հան-
դէսին դուռը բաց կ'ըլլար. անով Յակոբոս առաքե-
լոյն գրածն ալ կը տեսնային ըսած այնմ. "Վհատա՛լք
" ոմն հանդէս ձերոց հաւատոյն յօրինեալ գործէ ըզ

» համբերութիւն » ։ Յակ. ա. 3։ Իր տեանային նաև
Պօղոս առաքելոյն գրածը. “ Հանդիսիս պաշտամանա
» այտրիկ, վառաւարել զՆուռաց ի վերոյ հնազան-
» դութեան խոստովանութեան ձերոյ ՅԵսուսէնն
» Քրիստոսի, և առատութեամբ հաղորդութեան ի
» նոսա և յամենեսին » ։ Բ. Կրն. Թ. 13։

Վիտեմ, հոգեսէր և բարեպաշտ ընթերցող, պիտի
ըսես ինծի, Թէ որ աստիք Հոգւավ սրբով գրած ըլլա-
յին՝ այն Քրիստոնէական վարդապետութեան մէջը չպիտի հե-
քեին ու մերժեին Սրբութեան վրկարար խորհրդոյն
գօրութիւնը այս հարց պատասխանին ընելով “ Հ. Ի՞նչ
» պիտի ըլլայ անոնց որ վրկութեան համար յոյսը մկրը-
» տութեան վրայ կը դնեն ։ Պ. Ընդ պիտի կորսու-
» ին » ։ Երէս. 337։

Հիմայ այս խօսքը բաղդատե Յիսուսի Քրիստոսէ
ըրած վճռոյն հետ. “ Ուր հաւատայ և մկրտեցի, կեց-
» ցէ » ։ Ոգեղքական քարոզիչները չեմ գիտեր ինչ հո-
գիավ կը գրեն, Սրբութեան սրբարար խորհրդոյն վը-
րայ հաւատք յոյս ունեցողները կորստեան գրանը քով
կանգնած կորուստը կը խրկեն ։ Այց Յիսուս սէր
մեր յաւիտենական կենաց դուռը ըլլալով՝ հաւատով
Սրբութեան մօտեցողները արքայութեան յաւիտեանա-
կան փառաց արժանաւոր կը կացուցանէ ։ Այսէ սուրբ
Հոգիով Սրբութեան շնորհքները տեանողները և Ին-
քնիաւով խօսողները, գրողները և քարոզողները մկրը-
տութեան վրայ հաւատք յոյս կը քարոզեն, ինչպէս ե-
րանելին Պօղոս, “ Միով Հոգւով մեք ամենքին ի մի
» մարմին մկրտեցաք, եթէ հրեայք, եթէ հեթա-
» նոսք, եթէ ծառայք, եթէ ազատք, ամենեքին զմի
» Հոգի արբուք » ։ Ա. Կրն. ԺԲ. 13։ Այսու պէս Սրբու-
թեան վրկութիւն տալը կը յայտնէ երջանիկ առաք-
եալն Պետրոս, “ Ուր և զձեզ ըստ սմին օրինակի կե-
» ցուցէ Սրբութիւնն » ։ Ա. Պետ. Գ. 21։

Տեսար մի ահա յայտնի քեզի նշան, որ առանց խոշ-
ոաձը, գրաձը և վարդապետաձը անուանով միայն Ա-
ը բնագրական վերադրո-ւի-ն է։ Այլ իրօք՝ ե հակառակ
քրիստոնէական ճշմարտութեան, ապա սուրբ Հոգիով
չէ, այլ սուրբ Հոգիին հակառակ հոգիով է։ Այսր
համար է որ Պօղոս առաքեալն վկայութիւնը գլխա-
ւոր եւ համարաձուով Փիլիպեցւոց գրածը վկա-
յութիւն բերեր են այս խօսքին. «Հ. Ո՞ւչ պիտի
»ըլլայ անանց՝ որ փրկութեան համար իրենց յոյսը մը-
»կրտութեան վրայ կը դնեն, Պ. Այնպէս պիտի կորսու-
»ին»։ Փիլիպ. գ. 4—9։

Պօղոս առաքեալը հրէից ազգին փոփոխութիւնե-
համար կը գրէ այս թուղթը, որոնք կը պարծենային
Թլփատութեան վրայով, և ոչ Յիսուս Քրիստոսով։

Հիմայ այս վկայութիւն բերաննին այս առջև գը-
ուած առանձինգով՝ զարմանալի առանց խորհրդակցութեան
ու խաբէութեան ոչով գրածնուն վրայով, առաքե-
լին գրածը այսպէս է. «Ո՛չ եղբարք՝ ի՞նչ անոնց անոն
»պիտի եղերուք՝ ի՞նչ մշակաց անոն, պիտի եղերուք
»՝ի կրճատութենէ անոն, մի Թլփատութիւն մը-
»եմք, որ հոգւովն Աստուծոյ պաշտեմք, և պարծիմք
»՝ի Քրիստոս Յիսուս։ Եւ ոչ՝ ի մարմինն պանծաց-
»եալ եմք, Թէպէտ և ես իսկ ինձն վստահութիւն
»ունիմ՝ի մարմնի. եթէ ոք համարիցի այլազգ վստահ
»լինել՝ի մարմնի, առաւել ևս ես՝ Թլփատութեամբ
»ութօրեայ, յազգէ Իսրայէլի, ի ցեղէ բենիամինի, ե-
»բայեցի յԵբրայեցւոց, ըստ օրինացս փարիսեցի, ըստ
»նախանձայոյզն լինելոյ հալածէի զեկեղեցին, ըստ
»արդարութեան օրինացն լեալ անարատ։ Այլ որ ինձ
»ինչ շահն էր՝ զայն վնաս համարիմ վասն Քրիստոսի։
»Այլև համարիմ իսկ զամենայն վնաս՝ վասն առա-
»ելի գիտութեան Յիսուսի Քրիստոսի տեառն մե-
»ոյ, վասնորոյ զամենայնէ զկորուստ և համարիմ կըզ-

» կըսէանս, զի զՔրիստոս շահեցայց, և գտայց ՚ինձմա
» խբրեւ ոչ եթէ զիմ ինչ արդարութիւն՝ որ յօրինացդ
» անտի է՝ ունիցիմ, այլ զհաւատացն Քրիստոսի, որ
» յԱստուծոյ արդարութիւնն է » : Փիլիպ. գ. 2—3—
4—5—6—7—8—9 :

Ընդ՝ սիրելի ընթերցող, այս երանելի Պօղոս ա
ռաքելոյն խօսքին մէջը աղէկ նայէ, կը տեսնուի կ'երե
ւի մկրտութեան վերաբերեալ բան մը կամ խօսք մը,
միայն կրճատութեան կամ թլփատութեան վրայով
պարծենցողներուն համար գրուած է : Ըլլայ որ այս
բողոքական քարոզիչները թլփատութիւն և մկրտու
թիւնը մէկ բռնած ըլլան, երկուքը մէկ խորհուրդ
ճանչցած ըլլան : Ո՞նչ կ'ըսես, այո՛ ըսենք, եթէ ոչ,
թէ որ անոնց Վրիւպոնէական վերտապերո-ին ըսուած
գիրքը կարդացեր ես նէ՝ հարկաւ այս պիտի ըսես. ո
րովհետեւ անոր մէջ գրած են. « Մկրտութիւնը Աս
» տուծոյ եկեղեցիին մէջ մնալով հանդիսաւոր արա
» րողութիւն է հիմակուան տեղը, ինչպէս որ հին ա
» ռեղը թլփատութիւնն էր այն արարողութիւնը : Այ
» երկուքը մի և նոյն խորհուրդ է տարբեր արարողու
» թեամբ : Ո՞նչպէս կրնաս հաստատել, թէ մկրը
» տութիւնը և թլփատութիւնը մի և նոյն ատեմա
» նագրութիւնը կը սեպուին : Պ. Տանզի նախ՝ երկուքն
» ալ կը ցուցընեն արտի փոփոխութեան մը հարկա
» ւորութիւնը » : 337—340 :

Տեա՛ որ հին մովսիսական խորհրդոց օրէնքին Թլփ
ատութիւնը՝ որ աստուածպաշտութեան նշան մըն էր,
մէկ օրինակ կը դասեն նոր քրիստոնական օրինաց մը
կրութեան խորհրդոյն հետը. նախ՝ երկուքին ալ
խորհուրդ կ'ըսեն. աղէկ նայէ, և մէկ մ'ալ կարդա վե
րի գրածնին : Այս տեղս մի ըսդմանար, այլ ճանաչէ
սուրբ Հոգիին զօրութիւնը, ուր ան մարդկային
դիւրաւոտ միտք գրուած խօսքը հակառակ սուրբ գը

*ըստ կ՚ըլլայ, քայց սուրբ Հոգիին շնորհքներովը գրուած խօսքը համեմատ սուրբ գրոց է։ Այնոր համար կը պարտաւորենք պօղոս առաքեալը. "Հասնիս իմ և քարոզուս
» Թիւնն ձէ պատուիր քանիւք իմաստութեան, այլ արտա-
» գեամբ Հոգւոյն և զօրութեամբ, զի հաւատք ձեր
» մի լիցեն իմաստութեամբ մարդկան, այլ զօրու-
» Թեամբ Աստուծոյ։ Ա. կորն. Բ, 4—5։*

Թէ որ սուրբ Հոգիով գրած ըլլային՝ հարկաւ Թլփատութեանը համար խորհուրդ չէր պիտի գրէին. այլ նշան կամ նշանակ աստուածպաշտութեան, և մկրտութեան խորհրդոյն համար՝ պրպարար խորհուրդ. վասն զի Թլփատութիւնը նշանակ մըն էր, որով որոշուեցան անթլփատ ազգերէն Աբրահամ և որդիքն Աբրահամու երբեք ժողովուրդ Աստուծոյ, և աստուածպաշտութեան կրօնից տէր։ Ջի որ Թլփատութիւնը գըլխաւոր նշան մը եղաւ Աստուծոյ այն ուխտին, որն որ Աբրահամ նահապետին հետ եղաւ, զանիկայ հայր ազգաց բազմաց ընելու և անոր զաւակներէն աշխարհի Թագաւորները յարուցանելու, կարդա. ծն. ժէ. 2—5—7—10։ Վասնորոյ Հոգւով սրբով խօսողը և գրողը հաւատութեամբ սուրբ գրոց Թլփատութիւնը նշան կամ նշանակ պիտի անուանէ։

*Հիմայ այս բողոքական քարոզիչները ինչ կ՚անուանեն, խորհուրդ. և կը սպասենք որ մինք Հոգւով սրբով կը խօսինք սուրբ գիրքին համեմատ։ Տե՛ս Պօղոս առաքեալին գրածը. "Նշանակ առ զԹլփատու-
» Թիւնն, կնիք արդարութեան հաւատոյն, որ յանթլփ-
» փատութենէ անտի»։ Հռովմ. Դ. 11։*

*Պօղոս առաքեալին Հոգւով սրբով գրելուն մէկ նըշանն ալ այս է, որ Աստուծոյ՝ Աբրահամ նահապետին հետ հաստատած ուխտին համեմատ նոյն և նմանը կը պրէ. "Թլփատեսցի ձեր ամենայն արու, և Թլփատե-
» ջիք զմարմին անթլփատութեան ձերոյ և եղիցի նըշ-*

» հանակ ուխտին ընդ Քս և ընդ Հեզ » : Ծն. ԺԷ. 11 :

Այս խօսքերէն ահա կը զատուի, կ'որոշուի սըր-
բարար մկրտութեան հոգեւոր խորհուրդը Թլփատու-
թեան մարմնաւոր նշանէն : Այդ ինչպէս կը համար-
ձակին ասոնք ըսելու . « Այս երկուքը մէկ խորհուրդ
» է տալեր արտարտութեամբ » . և թէ՝ « Անկրտու-
» թիւնը և Թլփատութիւնը մի և նոյն սահմանադրու-
» թիւնը կը սեպուի » : Այս խօսքերը հիմայ համե-
մատէ Պօղոս առաքեալին այս գրածին հետ : « Ո՛վ ի՛ր
» Քրիստոս Յիսուս ոչ Թլփատութիւն ինչ է՝ և
» ոչ անթլփատութիւն , այլ նոր արարած » : Գաղ.
Ձ . 15 :

Նոր արարած ըսելով՝ մկրտութեան խորհրդոյն վե-
րաբերեալ ծնունդը կը յայտնէ , որ սուրբ Հոգին կը
ներդործէ մկրտելոյ սիրտերուն և հոգիներուն : Ինչ
պէս որ մեր տէր Յիսուս Քրիստոսը կը հրամայէ վերջ
նաբար : « Եթէ ոք ոչ ծնայի ՚ի ջուր և ՚ի հոգւոյ , ոչ
» կարէ մտանել յարքայութիւնն Աստուծոյ » : Յով.
Գ . 5 : Այս քրիստոնական վճռոյն հակառակ չէ մի այն
թաղնիւն հարց պատասխանի ընելով Թլփատութեան
համար սուրբ գրքին մէջ գրուածները մկրտութեան
վերաբերելով , որ ըսել է , Թլփատութիւնը մկրտու-
թեան հետ մի և նոյն համարելով Թուանշաններով
անյարմար վկայութիւններ կը ցուցուներն , ինչպէս գը-
րած են : « Ա . Ինանկ է նէ՝ ջուրով մկրտուած ըլլալը
» քեզ կը փրկէ : Պ . Չէ , քանզի մկրտութիւնը վերըս-
» տին ծնունդ չէ » : Քրիս . Վար . Երէս . 335 : Այս հարց
պատասխանին ուզեր են հաստատելու սուրբ գրքին
մէջէն մարմնաւոր Թլփատութեան վրայով խօսուած
ու գրուած վկայութիւններով : Ինչ քեզի քրիստո-
նէից միտքերը շփոթել , պարզամիտ հաւատացեալց
պայթակղեցուցիչ անուամբ ևեթ Քրիսպոնէական վարդա-
պետութիւն մը , որ կրճատական վարդապետութիւն ա-

ձուանել առաւել արժան է, ասել՝ ի Յովհաննիա՝ ի տպարանի Կուլիկեմոս Կրիֆիթի։

Ա՛րդ՝ սուրբ Հոգիով քննողները կ՚իմանան՝ որ մարմնաւոր Թլփատութիւնը չհիաբանիր մկրտութեան հոգեւոր խորհրդոյն հետ, և Քրիստոնէական վարդապետութենէն շատ տարբեր հետեւորութիւն ունի։ Տես Պօղոս առաքեալն սուրբ Հոգիով խօսած ու վճռած քարոզութիւնը։ "Ահաւասիկ ես Պօղոսասեմ "ձեզ, զի եթէ Թլփատիք, Քրիստոս ինչ ձեզ ոչ "օգնէ "։ Գաղ. Ե. 2։ Ինչքա՞ն հարկ եղաւ Պօղոս առաքեալն այս վճիռը տալու։ Որովհետեւ հրեայներէն անանկ անձինք եկան՝ որոնք հեթանոս հաւատացեալ ներսուն մէջ մնալով՝ կը խռովէին ժողովուրդը և կը քարոզէին որ՝ եթէ մովսիսական օրէնքին չհնազանդիք ու չթլփատիք՝ չկրնաք փրկուիլ։ "Ոչ ոմանք իջեալ "ի Հրէաստանէ՝ ուսուցանէին զեղբարս, եթէ ոչ "Թլփատիք ըստ օրինացն Մովսէսի՝ ոչ կարէք ապրիլ "։ Գաղ. ԺԵ. 1։ Ասոնք որ կը ջանային՝ կ՚ուզէին Թլփատութիւնը մկրտութեան հետ անտարբեր ճանչցուցնել։ Ասոր համար Պօղոս առաքեալը այն վճիռը ըրաւ. Թէ որ Թլփատիք՝ Քրիստոսի օգնութիւնը չպիտի ունենաք. Թէ որ Թլփատիք՝ Քրիստոսի փրկութիւնովը պիտի չապրիք, Թէ որ Թլփատիք՝ Քրիստոսի Հետացան բանը ձեզի պիտի չօգնէ, և Քրիստոսի շնորհքներէն բան մը չահելիք չունիք։ "Ահաւասիկ ես Պօղոս ա"սեմ ձեզ, զի եթէ Թլփատիք՝ Քրիստոս ինչ ձեզ "ոչ օգնէ։

Տե՛ս բարեմիտ ընթերցող, որչափ հեռաւորութիւն և տարբերութիւն ունեցաւ մարմնաւոր Թլփատութիւնը Քրիստոսի հոգեւոր շնորհքներէն. մինչ Թլփատութիւնը այս հոգեւոր երկնաստարած շնորհքները կը նեղցնէր հոգիներուն. նայէ՝ մկրտութեան շնորհքը Թողութիւն մեղաց կը պարգեւէ։ "Անկը

„ սեպի իւրաքանչիւր ոք ի ձէնջ յանուն տեառն Յիս„ ուսի Քրիստոսի ի թողութիւն մեղացդ „ : Գոր. Բ. 38 : Ակրտութեան աստուածաշնորհ վերատին ծնունդը Քրիստոսի կերպարանակցութիւնը կը ներգործէ մկրտեալներուն, և անոր աստուածային շնորհքներովը կը զարդարէ. “Ունք միանգամ ի Քրիս„ տոս մկրտեցայք, զՔրիստոս զգեցեալ էք „ : Գաղ. Գ. 27 :

Ակրտութեան հոգեւոր խորհուրդը՝ մկրտեալները ընտրհական որդի կընուիրէ հօր Աստուծոյ, և նորին աստուածային փառացդ երկնից արքայութեան ժառանգ գաւոր կ'ընէ. “Այսուհետեւ չես ծառայ, այլ որդի. „ եթէ որդի, և ժառանգ Աստուծոյ „ : Գաղ. Դ. 7 :

Հիմայ պիտի համոզուինք ըսելու, ուրեմն մկրտութիւնը վերատին ծնունդ է, և կամ թէ՝ այս երկուքը (Քրիստութիւնը և մկրտութիւնը) մի և նոյն խորհուրդ չէ տարբեր արարողութեամբ. և թէ՝ մկրտութիւնը և Քրիստութիւնը մի և նոյն ահմանադրութիւնը սեպուելու չեն : Ուրեմն այսպէս գրելով և տպագրելով տարածողները բարի մարդ և բարի Քրիստոնեայ չեն, որովհետեւ աւետարանական և բարի Քրիստոնեայի պէս բարի միտքէ բղխած՝ բարի խորհրդածութիւն չէ. “Ունարդ բարի՝ ի բարի գանձուց սրտի իւրոյ բղխէ զբարի, և մարդ չար ի չարէն բղխէ զչար „ : Ղ-կ. Զ. 45 : “Նայց զայս խղճէք „ աք իսկ՝ թէ գուցէ արատ ոք ինչ դնիցէ ի հաստատութեանս յայսմիկ՝ որ պաշտեցաւս ի մէնջ : Կան „ զի խորհիմք զբարիս՝ ոչ միայն առաջի տեառն, այլ „ և առաջի մարդկան „ : Բ. Կրն. Ը. 20—21 : “Նիթէ „ աղբիւր անդստին ի միոյ ականէ բղխիցէ քաղցր և „ դառն : Նիթէ մարթ ինչ լիցէ եղբարք իմ թզենւոյ „ ձէթ բերել, կամ որթոյ թուզ, և ոչ աղտաղտին „ տեղւոյ ջուր քաղցր առնել „ : Յակ. Գ. 11—12 :

Ընդ այս ուրեմն այս Քրիստոնէական վարդապետութեան վերստուգութեամբ տպուած գրքին անունը իրաւունք ունինք անուանելու քրիստոնէից միաքերը շփոթող և պայթակղեցուցիչ վարդապետութիւն։ Վնասեմ, որ ողջամիտ և ուղղափառ վերծանող սիրելի, ախոն ըսես հիմայ, Թողունք իրաւացան և ուղղադատ աստուածաբանութեան այլ ևս քննելու այդ անպիտան գիրքերը, մենք հետեւինք արդեան Պօղոս առաքելոյն յորդորացը որ մեզի օգտաւէտ և բարի քրիստոնեայ ըլլալու հարկաւորապէն իրատէ. "Այլ դու ով մարդ "Աստուծոյ, փախիր յայնցանէ՝ և երթ զհետ արդարութեան, զաստուածպաշտութեան, զհաւատոյ, "զսիրոյ, զհամբերութեան, զհեզութիւն։ Նր մարտիր "զբարւոք մարտն հաւատոյ, և բռնն հար զկենացն "յաւիտենականաց՝ յոր կոչեցարն, և դաւանեցեր ըզ "բարւոք դաւանութիւնն առաջի բազում վկայից"։ Ա. Տիմ. Զ. 11—12։

ԳԼՈՒԽ Ի.

Ասկէց առաջ գրածնիս բոլորը խորհրդածութիւն մըն էր՝ որ մարդս բնականապէս չար չէ, այլ մանաւանդ բարի. որովհետեւ արարչապարծեալ է յաւիտենաւոր արարչէն, որ է ինքնաբուն բարի։ Այս մարդիկ արտաքուստ դուրսէն կ'ստանան իրենց չարութեան գաղափարները՝ կամ չար մարդիկներուն հետեւութիւն ընելով, և կամ չար խօսքեր լսելով և չար գործքեր տեսնալով՝ կը հակամիտ ինքնալ անոնց չարութիւն, կ'այլայլէ իրեն բնութեամբ բարի ըլլալը, և այնուհետեւ կ'ըլլայ բարի մարդը՝ չարագործ և մոլի։ Որ օրինակ, զուտ մաքուր ոսկին և կամ արծաթին բնակա-

նապէս չունի պղինձ կամ կապար խոռնուրդ, և որչափ որոշուած կը ծնայ իր մաքուր բնութեանը հակառակ դուրսէն եկած նիւթերէն՝ իրեն մաքրութիւնը կը պահէ. բայց երբ կ'ընդունի դուրսէն եկած նիւթերուն մէկ կամ երկու տեսակէն՝ հարկաւ խառնուրդ ոսկի կամ արծաթ կ'անուանի, որ ըսել է թէ՝ իրեն մաքուր բնութենէն օտար՝ դուրսէն նիւթ խառնուրդ է իրեն մէջը, որ այնուհետեւ կը կարօտի այն խառնուրդ ոսկին կամ արծաթին զտուելու համար հալելն և մաքրիլ՝ ի բուն և ի քուրայս և որոշիլ՝ ի խառնուրդութենէն, որով իրեն առաջին յարդը և մեծագին արժողութիւնը կը գտնայ, և արժանապէս կ'ըլլայ այսպիսի ազնիւ չինուածոյ ձարտարապետուեան ոսկերչայ և արծաթագործայ:

Այսպէս ալ մեր արարիչը Աստուած ճշմարիտ՝ կը բաւէ չար դաղափարներէ որոշուած և զատուած մաքուր սիրտերը և միտքերը կ'ընդունի և իրեն շնորհք ներովը կը զարդարէ, ըստ այնմ: "Արդէս վտակ ի բուն արծաթ և ոսկի, նոյնպէս ընտրէ զսիրտս Աստուած": Առակ. ԺԵ. 3: Իմաստ. Գ. 5—6: Սաղ. ԿԵ. 10:

Աւրեմն մենք մեր սիրտը միշտ պիտի քննենք խղճմտանայ ուեստութիւնով, որ չըլլայ թէ մեր սրտին ու մտքին մէջը չար դաղափարներ՝ մոլութեան կամ մոլութեան հոգեկորոյս խորհուրդներ ունենալնիս հակառակ աստուածային ճշմարտութեանը, թէ որ գտնուի՝ շուտով պիտի խոստովանինք ըստ հրամանին Աստուծոյ. "Նայ եմ՝ ես եմ նայն, որ ջնջեմ զանօրէնութիւնս քո վասն իմ, և զմեղս քո այլ ոչ ես յիշեցից: Նայ քեզ յուշ լինի՝ և ընդ միմեանս դատիցուք, ասա դու նախ զանօրէնութիւնս քո՝ զի արդարացիս": Եսայի. ԽԳ. 25—26: "Նա քաղուիլ ի հաւատացելոցն գայիր, և խոստովան լինէիր, և պատմէիր զգործս իւրեանց": Գործ. ԺԹ. 18: Նայս և ապաշխարութեան զօրութիւ-

նոյ պիտի մերժենք մեր սրտին մէջ գոնուած չար խոր-
հուրդները, ու անօրէնութեան գաղափարներէն պիտի
մաքրենք մեր միտքը. ասոր համար տէրը գիտցէն կը
խրատուի նք. "Օ՛ դո՛յշ լեր անձին քում, զուցէ լինիս
" ցի քան ծածուկ անօրէնութեան՝ ի սրտի քում":
Բ. Օրէ. ԺԵ. 9: Պրոպհէտ Նաւուծոյ առջեւը բարի
մարդ և բարի քրիստոնեայ ըլլալու համար պիտի ջնդու-
նիմք մեր սրտին ու մտքին մէջը բան անօրէն և չար
խորհուրդներու գաղափարներ, որովհետեւ Նաւուած
միշտ մեր սիրտը և խորհուրդը կը քննէ՝ թէև մար-
դիկներէն ալ ծածուկ ըլլայ, ինչպէս գրուած է. "Ա՛ր
" քննէ զսիրտս և զերիկամունս, Նաւուած արդար":
Ա՛ղ. Ե. 11: Ի՞նչ օգուտ կ'ըլլայ մեր հոգւոյն, որ մար-
դիկ մեր արտաքուստ դուրսէն երեւցած փարիսեայ-
ութեան ու կեղծաւորութեան գործքերուն նայելով՝
արդարեւ բարի մարդ դատեն զմեզ, երբոր ի՛նչ եղբօ
արտերնուս մէջը Նաւուծոյ բարերար կամացը հակա-
ռակ չար խորհուրդներ ունենանք: Այն ժամանակը
չէ թէ փարիսեցիներուն կեղծաւորներուն տրուած
տակալի վայը մեր անձին վրայ ևս առած կ'ըլլանք, որն
որ կը կարդանք տէրը Աւետարանին մէջ. "Ա՛յ ձեզ
" դպրաց և փարիսեցւոց կեղծաւորաց, զի նման էք
" գերեզմանաց փուելոց, որք արտաքոյ երեւին գեղե-
" ցիկք, և ի՛ներքոյ լի են ոսկերօք մեռելոց՝ և ամե-
" նայն պղծութեամբ: Այնպէս և դուք արտաքոյ ե-
" րեւիք մարդկան արդարք, և ի՛ներքոյ լի էք կեղծա-
" ւորութեամբ և անօրէնութեամբ": Մտթ. ԻԳ. 27—28:

Յիշենք այս տեղս Կայենի սրտին մէջը ժողվուած
աստուածութեան չարագոյն խորհուրդը, որ ունէր իրեն
եղբօրը Աբելին վրայ. բայց շատ պզտուածութենով կը
պահէր կը ծածկէր դուրսէն չէր յայտներ. անոր հա-
մար արդարն Աբել բնաւ կասկած մը չէր ունենար Կա-
յենին վրայով, անոր դուրսէն ցուցցած եղբայրական

*սիրոյն խաբուեցուիը։ Ուստի երբոր Կայէն նեղնդու-
Թեան ոգւով լսաւ Ընդելին. եկար ճղբայր, երթանք
դաշտը, այնպէս կարծեց Ընդել որ զուարճալի դաշ
տին մէջ զբօսանք ընելու զինքը կը հրաւիրէ, և չգի-
տցաւ որ այս հրաւէրը դարանակալու Թեան և սպանու-
Թեան կ'առաջնորդէ. վասնորոյ միամտու Թեամբ գնաց
արդարն Ընդել, բայց Կայէն այն դաշտին մէջ անպո-
րոյն գազանու Թեամբ մը յարձակեցաւ անմեղ եղբօրը
Ընդելին վրայ ու այն տեղը սպաննեց զանի։ ծն. գ. 8։*

*Ցիշէ այս տեղս ԴաւԹի զօրապետ Յովաբին խար-
դաւանու Թիւնը, և առելու Թեան չար կիրքը, որն
որ ունէր ԴաւԹի քեռորդւոյն ու անոր զօրացը
իշխան Ընդեայեին վրայ։ Ընդիկայ դուրսէն սէր ցոյց
տալով Ընդեայեին, եղբայրաբար ողջունեց զանի համ
բուրիւ, և ծածկելով իր առելու Թեան կրից որ-
ինդրուածը գազանու Թիւնը, գաղտնի ձեռքին տա
կը պահած սուրը մեց անոր անակուջը, և սանկ
խարդաւանու Թեամբ և նենդու Թեամբ մեռցուց. խա-
բուեցաւ Ընդեայ Յովաբ զօրապետին երկու տեսակ
խաբէու Թեան ձեւերէն, մէյմը որ սիրոյ համբոյր կը
մատուցանէր, և մէկ մ'ալ եղբայր անուանելով կը բա-
րեւէր. "Ընդէ՞ ողջ իցես եղբայր"։ Բ. Թագ. Ի. 9—10։*

*Ցիշէ Յուդայ իսկարիովտացւոյն ալ խարդաւա-
նու Թիւնը և նենդու Թիւնը, որ արծաԹախրու Թեամբ
մոլորելով՝ մատնու Թեան սիրանենգ չարու Թեան խոր-
հուրդը գաղտնի պահած ունէր սրտին մէջը, որուն
արբազան առաքեալներն անգամ անծանօթ մնացեր է-
ին, և կարծիք ալ բնաւ չունէին անոր վրայ։ Վասն
որոյ երբ տէր Ցիսուս բերնէն լսեցին. "Ընդէն ամէն
ոսասեմ ձեզ, զի մի ոմն ի ձէնջ մատնելոց է զիս",
Ընդինքը տրտմեցան և անոնցմէ ամեն մէկը համարձակ
Ցիսուսի հարցունելու սկսան. "Միթէ ե՞ս իցեմ տէր,
և միւսը, միթէ ե՞ս իցեմ"։ Ցօհ. ԺԳ. 21։ Մարկ. ԺԴ. 19։*

Մաթ. ԻԶ. 20։ Ինչպէս ուէր Յիսուս իբրեւ սուտագէտ Նազովրեցի ճշմարիտ գիտէր, որ այն իրեն արծաթասէր խարդախ եւ նենգաւոր աշակերտը ալիսի վինքը մատնէ եւ սատանային Թեւադրութիւնովը անոր սիրտը այս չար խորհուրդին մէջն է. «Դիտէր Յիսուս՝ ի սկզբանէ, ում են այնպիսիկ ոչք ոչն հաւատան, եւ ում այն է՝ որ մատնելոյն է վնա»։ Յով. Զ. 65։ ԺԳ. 11։ Տեսանք չար մարդիկները, որոնց սիրտը սատանայի խորհրդարան մը եղած էր. ասոր համար երկրորդ օրինաց մէջ գրած կը տեսնանք ի զգուշութիւն մարդկան սրտի մաքրութեան համար։ «Ոչ դոյշ լեր անձին քումդ, գուցէ լինիցի բան ծածուկ անօրէնութեան ի սրտի քումդ»։ Բ. Օրի. ԺԵ. 9։

Ինպաքէն այս գգուշութիւնը թէ որ քրիստոնեայները չունենան՝ կ'ըլլան չար, և չար օրինակ քրիստոնեայ. անոնցմէ մէկը քեզի այս տեղ օրինակ բերեմ, որ շատ փառասէր ըլլալով՝ ու իրեն յոյսը իրեն հարստութեանց և ստացուածոցը վրայ դնելով՝ իրեն ընդունած քրիստոնէութեան հաւատքին ճշմարտութիւնը իրմէ հեռացուց։ Ան ինքն է Սիմոն մոգը։ Երբոր Փիլիպպոս առաքեալին քարոզութեանը ունկնդիր ըլլալով՝ հաւատաց ու մկրտուեցաւ, մօտեցաւ Փիլիպպոս առաքեալին, ու անոր Յիսուսի Քրիստոսի անունովը ըրած մեծամեծ հրաշքներուն նայելով կը զարմանար, ինչպէս գրուած է. «Այլ և ինքն Սիմոն հաւատաց, և մկրտեալ կանխէր առ Փիլիպպոս, տեսեալ զնշանս և զմեծամեծ զօրութիւնս. որք լինէին՝ զարմանայր»։ Գործ. ԺԸ. 13։

Այսինքն որ այս Սիմոն մոգը յուսացեր էր իրեն հարստութեանը և ստացուածոցը։ Այսու իրեն սրտին մէջ Աստուծոյ հակառակ ամէնաչար խորհուրդ մը ըստացաւ, որով Աստուծոյ շնորհաց պարգեւը առաքեալներուն ձեռքէն ընդհանք արծաթով տեսնելը

ասէից : Ընդ համար երբ տեսաւ որ՝ արբազան ա-
քաւելները ձեռք դնելով հաւատացեալներուն վրայ՝
սուրբ Հոգւոյն շնորհայ ընդունակ կ'ընեն, ուզեց
այս իշխանութիւնը ստանալ առաքեալներուն ձեռքէն,
չէ թէ ջերմեռանդութեամբ հաւատոյ և հոգեւոր
փափաքանօք, այլ առաքեալներուն արծաթ և ոսկի
մատուցանելով ըսաւ : " Տո՛ւք և ինձ զիշխանութիւնս
" զայս, զի յոյր վերայ դնիցեմ զձեռս, առցէ զՀոգի
" սուրբ " : Գործ. Ը. 19 : Ընդ համար աստեց յանդի-
մանեց անիկայ Պետրոս առաքեալը ըսելով. " Արծաթ
" քո ընդ քեզ լիցի ի կորուստ, զի զպարգեւան Աստուծոյ
" համարեցար ընչիւք ստանալ, ոչ գոյ մասն և վիճակ
" ի բանիդ յայդմիկ, քանզի սիրտ քո ոչ է ուղիղ ա-
" ռաջի Աստուծոյ " : Գործ. Ը. 18—19—20 : Ընդ այս
մարդն ալ սրտին մէջը Աստուծոյ հաճելի ուզիղ խոր-
հուրդ չունենալուն՝ չար և մոլորեալ քրիստոնեայ յա-
ռաջ համարեցաւ. և յետոյ զլկեցաւ քրիստոսական
վիրակարար շնորհքներէն :

Ընդունակ կը տեսնամ Հոգւոյն սրբոյ հակառակել Ա-
նանիա անուն քրիստոնեայ մ'ալ, որ կատարեալ սիրով
և հաւատոյն յաւտով քրիստոնէական ճշմարտութիւնը
սրտին մէջ հաստատուած չըլլալով՝ առաքելոց սուրբ
Հոգւովը խաբել ուզեց : Արդարեւ հաւատացեալ-
ները առաքելոց ժամանակը սրտից մէջը խորհուրդ ը-
ներն որ՝ ամենքը հաւատարակիւս կենցաղավարութիւն
մը ունենան, որպէս զի աղքատ հաւատացեալները
օրըստօրէական ապրուստի համար կարօտութիւն չու-
նենան : Այս աստուածահաճոյ խորհրդոյն համեմատ
ճշմարիտ հաւատացեալները, որ գիւղի կամ ագարա-
կի տէր էին, իրենց կալվը եղբայրութեան օրէնք
քով կը վաճառէին, և անոնց ամբողջ գինը կը բեր-
էին առաքելոց Հոգովին մէջ, որպէս զի անոնք ալ հա-
ւատարիմ ըլլան :

Ա՛յս Ա՛նանիա անուն քրիստոնեայն ալ Թէկլէա համեմատ հաւատացեալներուն կանոնին, գնաց ծախեց իրեն Սափիրա անուն կնոջը հետ ունեցած ագարակը, բայց գաղտնի խորհուրդ մը ըրին իրենց մէջը այն ագարակին գինը կիսելու, և մէկ մասը միայն այն հասարակաց դանձանակին տալու, որ առաքելոց քովը էր։ Նորեր այս սուտ Թեան խաբէութեան խորհուրդը դը սրտերնուն մէջը ունենալով տարին մէկ մասը առաքեալներուն տալու՝ սուրբ Հոգին յայտնեց սրբազան առաքեալներուն անոնց խարդախութիւնը։ Այսպէս որպէս սրբազան առաքեալը սաստեց յանդիմանեց ճշմարտութիւնը ասելնուն համար. "Ա՛նանիա, "ընդէր եղեց սատանայ զսիրտ քո՝ ստել քեզ Հոգւոյն "սրբոյ, և խորել՝ ի գնոյ գեղջն։ Ո՞չ ապաքէն մինչ "կայրն, քո էր, և ի վաճառելն ընդ քո իշխանութ "Թեամբ էր, զի՞ է դի եդեր ի սրտի քում զկրս զայս, "ոչ ստեցեր մարդկան, այլ Աստուծոյ"։ Գործ. Գ. 4։ Այս յանդիմանութիւնը լսելով՝ պէտքը չէր որ՝ խղճմտութիւնը արթննար, զղջումի գալով՝ իւր յանցանքը ճանչնար. այլ սատր հակառակը բանի տեղ չդրաւ այն յանդիմանութիւնը, իբրեւ անխօս և անլուր արձան մը ըլլալով՝ յանկարծ սատուածային վրէժխնդրութիւնը հասաւ իւր վրան, ձգեց փռեց գետնի վրայ, և իսկոյն մահացոյց։ Նոյնպէս անոր Սափիրա կինն ալ պատժեցաւ, այս խորհրդոյն անդեղջ սրտիւ ինքն ալ մասնակից ըլլալով։ Գործ. Ե. 1—2—3—4—5—6—7—8—9—10։ Տես քրիստոնէական սուրբ հաւատքով Թէպէտ բարի քրիստոնեայ կ'անուանի մարդ, բայց չար խորհրդով և չարախտաւատ կամքով կ'ըլլայ չար քրիստոնեայ։

Նոյնպէս կը տեսնամ քրիստոնեայ մը որ հոգեւորէն Թուլացած է, հոգեւոր գործքերու չհետեւիր, հոգեւոր խօսքեր և խրատներ լսելու փոյթ չունի, այլ միշտ իւրեն մարմնոյն կանայք կը տանի և միայն մարմնոյն հա-

ՃԵԼԻ և բաղձալի եղածները կ՚ուզէ յառաջ տանիլ, համառօտ ըսեմ, այն քրիստոնեայն որ մարմնաւոր է և ոչ հոգեւոր, այնպիսին չար քրիստոնեայ է և ոչ բարի, Աստուծոյ բարեպար կամացը հաճելի չէ, այլ բոլորովին հակառակ։ Ինչպէս կը վճռէ սրբազան Պօղոս առաքեալը, " Խորհուրդ մարմնոյ Թշնամութիւն է Աս" տուած, զի օրինացն Աստուծոյ ոչ հնազանդի, նաև " կարէ իսկ ոչ։ Ո՛յ որ մարմնաւոր են ; Աստուծոյ հաճոյ " լինել ոչ կարեն " Հռով. Ը. 7—8։

Անիկա այն քրիստոնեայն կատարեալ ճշմարիտ հաւատացեալ է ըսենք, որ իրեն անձին վրայքը միշտ կ՚ուզէ, իրեն անձը մեծարուելը իրեն պատիւ տուողները կը սիրէ, իրմէ հեռու եղող հաւատացեալները կ՚անարգէ կը մերժէ կը հալածէ, իսկ եթէ հարկը պահանջէ՝ խիստ անարգական խօսքերով բանիւ կամ գրով անոնց անունը կամ լաւ կ՚ուզէ ըսել կը զրպարտէ. Քրիստոսի փրկչին մեծ վճռովը պիտի ըսենք. այնպիսին ճշմարիտ հաւատացեալ և Քրիստոսի աշակերտ պիտի չըլլայ, այլ Քրիստոսի Թշնամի, և հաւատացեալները ատեցող վարիսեցիներուն ատելութեան չար ոգին ունեցած պիտի ըլլայ, որոնք իրենցմէ զատուող և հեռացող և Քրիստոսի մօտաւոր հաւատացեալները կը բամբասէին, գռեհիկ ասմունք և ոգեւ և մինչեւ անգամ նզովեալ կ՚անուանէին։ " Մինչեւ յիշ" խանայն ոք հաւատաց՞ ի նա, կամ՝ ի վարիսեցւոց։ " Այլ այն խաժամուժ ամբոխ՝, որ ոչ գիտէ զօրէնս, " և նզովեալք են " . Յօհ. է. 48—49։

Տէս, սիրելի ընթերցող, մեր Տէր Յիսուս Քրիստոս ինչպէս կամեցաւ որ առաքեալներուն մտքին մէջ ատելութեան չար ոգին տեղի չգտնայ, վասնորոյ չուզեց որ առաքեալներուն ատելի ըլլան անունք, որ բոլոր մէկը միայն Յիսուսի անուանովը՝ գեղերը կը հալածէր, բայց առաքեալներէն հեռու կը պոռտէր։

առաքեալներուն էր ուրձենար։ Ասոր անունը ալ արդիւնքին զանի և կամեցան որ Յիսուս Քրիստոսէն հրաման առնեն իսպառ արդիլելու և մերժելու այն պաշտօնէն։ Բայց Յիսուս չուռաւ այս հրամանը, այլ ըսաւ, մի՛ արդիլէք զանի որ մեզի հակառակ չէ, մեր կողմն է, քանաւ մեկը չիկայ, որ իմին անուանուն զօրութիւն գործէ և ինձի հակառակելով անարգէ զիս, ըստ այնմ։ Պատասխանի եաւ նմա Յովհաննէս և ասէ, "Վարդապետ "պետ, տեսաք զմեզ որ յանուն քո դեւս հանէր՝ և "զմեր կնի ոչ չըլէր, և արդելաք զնա։ Նա նա ասէ, "մի՛ արդելուք զնա, զի ոչ ոք է, որ առնէ զօրութիւնս "յանուն իմ և կարկուղ հայհոյել զիս։ Զի որ ոչն է "ընդ մեզ հակառակ, ՚ի մեր կոյս է "։ Մարկ. թ. 37—38—39։ Ղուկ. թ. 49։

Տեսաք մի, Աեր անուն Յիսուսը քնաւ չուզեր որ իրեն առաքեալները և ամեն հաւատացեալները ունենան աստուածութեան չար ոգին։ Ասոր համար է որ՝ Պօղոս արքային առաքեալը Եփեսացոց եկեղեցւոյն մէջ գանուող հաւատացեալներուն ունեցած հաւատքը կը գովէ, որով ամեն հաւատացեալներուն հետ սէր ունէին և ոչ աստեղութիւն, և ամեն քրիստոնեայները սուրբ անուանով կ՚անուանէին։ Ասոր համար կ՚ըսէ, երբոր լսեցի ես ձեր հաւատքը՝ որն որ Տէր Յիսուսի վրայ ունիք, և ձեր սէրը՝ որն որ ամեն հաւատացեալներուն հետ ունիք՝ չեմ դադարիր ձեզի համար գոհանալու, և զձեզ յիշելու իմին աղօթքիս մէջը։ "Վասն այնորիկ և ես լսեալ զհաւատսն ձեր՝ "որ ՚ի Տէր Յիսուս, և զսէրն՝ որ ընդ ամենայն սուրբս, "ոչ դադարիմ ՚ի գոհանալոյ վասն ձեր՝ յիշել զձեզ "յաղօթս "։ Եփես. Ա, 15—16։

Ահաւասիկ լմնցանք որ՝ հաւատքը քրիստոնէական սիրով կը յաջողի ու կը ճշմարտի, անանկ է նե մեկը թէ որ ըսէ, քրիստոնեայ եմ և քրիստոսական սուրբ

և ուղղափառ հաւատքը ունիմ, բայց օտարազգի լե-
զուաւ, ծխով, և արարողութիւնով ողջամիտ ուղղա-
փառ հաւատացեալները մերժելու, առելու ըլլայ նէ՝
ճշմարիտ քրիստոնեայ չէ այնպիսին, թէպէտ բաւական
ուղղափառութիւն ալ ունենայ ի հաւատս. բայց հեր-
ձուած և բաժնուած է քրիստոսական սիրոյն մէջ։

Ի սեց սրբազան առաքեալն Պօղոս որ՝ հաւատաց-
եաններուն մէջը փոխանակ սիրոյ առելութիւն և խռո-
վութիւն մտեր է, որ սոսկալի հերձուածողութիւն
մը կը սեպուի, և ատոր պատճառն ալ իրեն անունը ե-
ղած է. որովհետեւ հաւատացեալները մէյմէկ կողմ
մէյմէկ անունով զատուեր էին, ոմանք կը պարծենա-
յին Պօղոս [առաքեալին անունովը, ոմանք Ապողոս ա-
նուն՝ Պօղոսի աշակերտին անունովը, և ոմանք ալ Պետ-
րոս առաքելոյն անունովը, քիչ մնացեր էին Քրիս-
տոսի անունովը պարծենցող հաւատացեալները. բայց
առելութիւնով խռովութիւնով մէկզմէկէ բաժանե-
ները շատցեր էին, գրեց այս ամենազգու նամակը
Կորնթացւոց՝ աղաչելով Յիսուսի Քրիստոսի մարդա-
սիրական անունովը. "Աղաչեմ զձեզ եղբարք անուամբ
» տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, զի զնոյն բան
» ունիցիք ամենեքեան, և մի իցեն ի ձեզ հերձուածք.
» քանզի էիք հաստատեալք ի նոյն միտս և ի նոյն
» հանճար. ապ եղեւ ինձ եղբարք ի քղուայեցւոց ան-
» սի, թէ հակառակութիւնք են ի ձեզ։ Այս արդ ա-
» սեմ իսկ, եթէ իւրաքանչիւր ոք ի ձէնջ ասէ՝ ես
» Պօղոսեան եմ, և միւսն եթէ ես Ապողոսեան, և
» միւսն եթէ ես Կեփայեան, և միւսն եթէ ես Քրիս-
» տոսեան։ Իսկ արդ բաժանեալ ինչ իցէ Քրիստոս,
» միթէ Պօղոս ի խաչ եւեալ իցէ վասն ձեր, կամ յա-
» նուն Պօղոսի մկրտեցայք »։ Ա. կորն. ա. 10—11—12—15։

Նայէ Ակիլաեան հայր Վարբիկը Պօղոս առա-
քեալին գրած ճշմարտութենէն սոսկալի կը գրէ որ՝

քրիստոնէութեան հաւատքը ուրիշ հաւատոցեալներ-
ուն վրայ ունեցած սիրովը կը ճշմարտի, չէ նէ կ'ըսէ
փրկութեան համար թերի է միայն հաւատքը, ուրիշ
հաւատացեալներէն սիրով որոշուած ըլլալով. "Ի դուր
" դըս դնէ զհաւատս և զսէրն միաբանական առ այլ
" հաւատացեալս, վասն զի յերկուցն միաւորութենէ
" գոյանայ ճշմարիտ քրիստոնէութիւն. հաւատք ու-
" ղիղ՝ թերի են առ փրկութիւն, յորժամ զաւուց-
" եալ է ոք ի սիրոյ այլոց հաւատացելոց, և չէ բա-
" ւական լինել ուղղափառ ի հաւատս, և հերձեալ
" ի սէրն ": ի Մեկն. պօղոս. հպ. Բ. երես. 494:

Կ'իմանանք սուրբ Աւետարանէն որ՝ Պետրոս առաք-
եալը երկու անգամ առաւել սխալեցաւ հակառակ
Քրիստոսի կամացը խօսելով, բայց չէր այնքան մեղա-
բեալ, որովհետեւ արդէն կատարելութիւն ընդհայց
սուրբ Հոգւոյն չուներ: Առաջին սխալիքը եղաւ Թա-
փօրական լեռը Յիսուսի Քրիստոսի պայծառակեր-
պութեան ժամանակը, որ երբ տեսաւ Քրիստոսի առ-
տուածային լուսափայլ պայծառութիւնը, փառքը, ու-
զեց որ՝ ինքն և իրեն հետ միայն եղողները Յակոբոս և
Յովհաննէս արգիլէն Օ՛երեթեայ վայելեն, չդիտեց այն տե-
ղը այն միս մնացեալ Քրիստոսի աշակերտները և հաւա-
տացեալները, այլ ըսաւ, ծվոռեր, բարւոք է մեզի այս
տեղը մնալը: Ասոր համար Մարկոս աւետարանիչը
կ'ըսէ. "Գանգի ոչ գիտեր, զի՞նչ խօսէր ": Մրկ. թ.
ճ: Վասն զի փրկութիւնը և արքայութեան ժառան-
գութիւնը միայն իրեն համար և իրեն հետ այն տեղ
գտնուողներուն համար կը խնդրէ վայելելու: Նայց
երբ Հոգւով սրբով լեցուեցաւ, իմացաւ որ այն Քրի-
ստոսի արքայութեան փառքը ամեն հաւատացեալ
ներուն համար պատրաստուած է, հաւատով կանչու-
ածներն և բարեպաշտութիւնով ընտրուածները պիտի
ժառանգեն երկնից արքայութեան այն վայելչութիւնը,

ոչ մանաւանդ թէ ախորհական լեռը յայտնուածին պէս, այլ առաւել եւս կատարեալ երանութիւնով, ա-
նոր համար երեն յաւաջապոյն սխալիլը ուղեց քարո-
զելով. "Նզբաթը իմ առաւել փութացէք՝ զի բարեա-
" ցըն գործովք հաստատուն զձեր կոչումն եւ ընտ-
" րութիւն պահիցէք, զայս արարեալ՝ ոչ երբէք յան-
" ցանիցէք: զի այսպէս առատապէս շնորհեսցի ձեզ
" մուտ ի յաւիտենական արքայութիւն տեառն մերոյ
" Յիսուսի Քրիստոսի": Բ. Պետ. Ա. 10—11:

Նկատիր՝ Պետրոս առաքելոյն սխալիլը այս եղաւ. ուր մեր Յիսուս Քրիստոս այն գիշերը որ պիտի մատ-
նուէր, ըսաւ աշակերտներուն, զուք այս գիշեր ա-
մենքդ ինձմէն պիտի գայթակղիք, ու ինձմէ պիտի հե-
ռանաք: Պետրոս առաքեալը այս տեղը յանձնապատ-
ան ըլլալով՝ երեն զօրութեանը յաւալով՝ առաքեալ-
ներէն որոշուելով զատուելով՝ և ինքըզինքը ամենէն վեր
բանեալով պարծանքով մը ըսաւ. "Թէպէտ և ամենք-
" եան գայթակղեսցին ի քէն, սակայն ես ոչ գայթակ-
" ղեցայց": Յիսուս ալ անոր մեծամտութեանը և միւս
եղբայրներէն որոշուելով մը ինքըզինքը արդարացու-
նելուն համար, երեն վրայ գալու ուրացութիւնը փութա-
թիւնը յայտնեց. "Ամէն ասեմ քեզ. զի յայսմ գիշերի
" մինչեւ հաւու խօսեալ ևցէ, երիցս ուրասցիս զիս":
Մտթ. ԻԶ. 34: Այս ատեն այս Պետրոս առաքեալը շատ
աղէկ լաւ իմացաւ որ մեծամտութեան խորհուրդը,
անձնապահ ըլլալով հպարտանալը՝ կը հեռացունէ մար-
դս աստուածային նպաստարար շնորհքներէն, և չարա-
չար կը գահավիժէ փորձութիւններու մէջ, և հոգեւոր
պատիւս կը սխալեցունէ. անոր համար երբեւ փորձա-
ւալ կը պատուաստէ այս խրատը գրելու. "Ամենեքեան
" ընդ միմեանս զխոնարհութիւն ունիցիք, զի Աստուած
" ամբարտաւանից հակառակ կայ, ապ շնորհս խոնարհ-
" հայ": Ա. Պետ. Ե. 5:

Ընդհակառակն է նէ՝ մեկ քրիստոնեայ մը որ աստիճանէ կ՚ուզէ Թոզ ըլլայ, իրեն Թէ հոգեւորական և Թէ աշխարհական վարքը ու պատիւը խնդրելու եաեւէ է, անանկը Քրիստոսի ճշմարիտ հետեւողը չի կրնար ըլլալ: Արդհետեւ իրեն ուղղութեան և անմոլար հաւատքին ընթացքին առաջնորդող զօրացուցիչ աստուածային շնորհքը իրմէն հեռացուցած է, Թէև Քրիստոսի ճշմարտութեանը մանաւորապէս ծանօթ ալ եղած ըլլայ, հաւատոյ ճշմարտութեան լոյսը անանկին սրտին մէջը լաւ ամենայնի ներկործած չըլլար:

Ընչ խօսքերուս վկայ ունիմ Յօհաննէս սրբազան աւետարանիչը, որ ընդարձակ կը գրէ. "Ու այնչափ
"նշանս արարեալ էր առաջի նոցա, և նոքա ոչ հաւա-
"տային ՚ի նա, զի լցցի բանն Եսայեայ մարգարէի
"զոր ասացն. տէր, ո՞ հաւատաց ՚ի լուր մեր և բազուկ
"տեառն ո՞մ յայտնեցաւ: Վասն այնորիկ ոչ կարէին
"հաւատալ, զի միւսանգամ ասէ Եսայի, Թէ կուրա-
"ցոյց զաչս նոցա, և ապչեցոյց զսիրտս նոցա զի մի
"տեսցեն աչօք, և խմացին սրտիւք, և դարձցին և բը-
"ժշկեցից զնոսա: Այս ասաց Եսայի, զի տեսանէ զը
"փառս նորա, և խօսեցաւ վասն նորա: Բայց սակայն
"և յիշխանացդ անտի բազումք հաւատացին ՚ի նա, այլ
"վասն փարիսեցւոցն ոչ յայտնէին, զի մի ՚ի ժողո-
"վրդենէն ելանիցեն: Քանզի սիրեցին զփառս
"մարդկան առաւել քան զփառսն Աստուծոյ": Յօհ.
ԺԲ. 37—43:

Ո՛չ լսենք առանկ հպարտութեան փառասիրութեան չար խորհուրդները ունեցողը, բարի քրիստոնեայ կրնայ մի ըլլալ. Քրիստոսի եկեղեցին մէջ պաշտօնատարութիւն մը կրնայ մի ունենալ, առաքեալներէն յաջորդ կրնայ մի ըսուիլ. ոչ բնաւ: Վասնզի է նէ արժան և հարկ է որ՝ աշխարհային փառքերէ ու պատիւներէ առնեն բարի քրիստոնեայ որչափ կարելի է

վախչի՝ սրտովը, մտքովը, կամքովը մերժելով այն ամեն աշխարհի փառքերը։ Նմանապէս եկեղեցականները և հոգեւոր հովիւները՝ որ արժանապէս հոգեւոր հովիւ կ՚անուանին Քրիստոսի բանաւոր հօտին. ապա թէ ոչ միշտ կը սխալին, ու կը մոլորին իրենց աշխարհային փառքերէն ու պատիւներէն. ինչպէս հեռեւեալ գլխոյն մէջ պիտի տեսնուի։

ԳԼՈՒԽ Ը.

Ա՚ՊԱՓէն վերոյիշեալ մարմնաւոր փառասիրութիւնը պիտի մերժեն, մանաւանդ աշխարհական իշխանութիւն պիտի չունենան հոգեւոր հովիւ անուանելները, աշխարհի կայսերական թագը իրենց գլխոյն չդնելու, թէ որ այն ամենիշխան և յաւիտենական քահանայապետին փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի ճշմարիտ հեղինակութիւնը ունին. որով ըսաւ. "Թագաւորութիւն իմ չէ աստի"։ Յով. ԺԸ. 36։ Ա՚ան զի Յիսուսի թագաւորութիւնը յաւիտենական և անմահ է, ըստ այնմ։ "Թագաւորութիւն նորա վախճան մի լինի"։ Ղուկ. Ա. 33։ Ուրեմն Քրիստոսի եկեղեցւոյ մէջ քահանայապետ հանդիսացողները, աշխարհի զօրք և զօրապետ պիտի չունենան, և իրենց անհնազանդ եղողներուն սրով վրէժ առնելու կարողութիւն ստանալու կամք պիտի չունենան, 'ի միտ բերելով Յիսուսի ազդու յանդիմանութիւնը՝ որ տուաւ Պետրոս առաքելոյն, երբոր սրով վրէժ առնել ուզեց ոխրանենգ և ճշմարտութեան թշնամիներէն ստակալի մատնութեան դիմելը։ "Յայնժամ ասէ ցնա Յիսուս. դարձո՛ զսուր քո 'ի տեղի "իւր, զի ամենեքեան՝ որ սուր առնուցուն՝ սրով ան-

» կանխյին » ։ Մաթ. Ի. 52։ Զի որ հոգեւոր կառա-
վարիչներուն հոգեւոր սուրը պիտի ըլլայ բանն Ա-
ստուծոյ. ըստ այնմ։ « Առէք զսաղաւարտն փրկու-
» թեան և զսուսեր հոգւոյն՝ որ է բանն Աստուծոյ »։
Եփես. Զ. 17։ Ասոր համար սրբազան առաքելոյ ըստ
ամենայնի առել եղաւ մարմնաւոր զէնք առնելը,
այլ անանց հոգեւոր սուրը և զէնքը Աստուծոյ ամե-
նազդու և անժխտելի օրէնքները և պատուիրանքնե-
րը, և սուրը Հոգւոյն ընտիրքները եղան, և անանց-
մով կը պարծենային. ինչպէս ամենուն քերնէն Պօղոս
առաքեալը կը խօսի պարծենալով։ « Ո՛չ զինուորու-
» թեան մերոյ ոչ է մարմնաւոր, այլ զօրաւոր Ա-
» ստուծոյ, առ ի քակելոյ զամուրս, զխորհուրդս քա-
» կեմք, և զամենայն բարձրութիւն հպարտացեալ ի
» վերայ գիտութեանն Աստուծոյ, և գերեմք զամե-
» նայն զխիտս ի հնազանդութիւն Քրիստոսի »։ Բ.
Կոր. Ժ. 4—5։

Արդ վերոյիշեալ քրիստոսական ամենապաշտելի հը-
րամաններէն և առաքելական աստուածահաճոյ հեղի-
նակութիւններէն մերժած և բարձի թողլ ըրած չըլ-
լար, կամաւ և յօժարութեամբ աշխարհային փառաց
հետ, և ոչ և հոգեւորը մարմնաւորի հետ միացընել
և ընդունել եկեղեցւոյ հոգեւոր կառավարիչներէն
մէկը, և կամ կարո՞ղ է արդեօք համարձակիլ ըսել.
ես Քրիստոսի աշակերտ եմ և առաքելական պաշտօն
ունիմ. կ'ուզենք բուն Պետրոս առաքելոյն նստած ա-
թոռին վրայ բազմեալ ըլլայ, Պետրոս առաքելոյն հե-
ղինակութիւնն և օրինաւոր յաջորդութիւնն և բարե-
մասնութիւնն ջունեցնալով՝ ինչ մնաւի պարծանք ե-
ղած կ'ըլլայ, և ինչ արհամարհելի իշխանութիւն։
Տես, դպիրները և փարիսեցիներն ալ Մովսէս մար-
գարէին գահակալութիւնը և իշխանութիւնը ու-
նեցան, ու անոր անունովը կը պարծենային, բայց

ահէր Յիսուս վրկիչն մեր անոնց սրտին փառասիրու-
թիւնը գիտնալով բսաւ ։ “ Յաղթուն Մովսէսի նաւան
” գպիղքն և փարիսեցիք և այլն ։ Սիրեն գյատաջագա-
” հլս յընթրիս , և գնահատուս ի ժողովուրդս և զոզ
” ջոյնս ի հրապարակս ։ Եւ կոչել ի մարդկանէ՝ ռաբ-
” բի ռաբբի ։ Բայց դուք մի զոք կոչէք վարդապետ ,
” զի մի է ձեր ուսուցիչ , և ամենեքեան դուք եղբարք
” էք ” ։ Մտթ . ԻԳ . 2—6—7—8 ։

Պետրոս առաքելոյն ըր բարեմասնութիւնը կը հա-
ւատայ այժմեան պապերուն ընթացքին . Պետրոս ա-
ռաքեալը հանդարձակեցաւ տեառն մերոյ Յիսուսի ը-
սելու ։ “ Ես հաւատիկ մեք Թողաք զամենայն և եկաք զը
” նի քո ” ։ Մտթ . ԺԹ . 27 ։ Այժմեան պապերը պիտի
ըսեն անշուշտ . ահաւասիկ մեք ընկալաք աշխարհային
արքայական Թագ , և ունիմք զօրք և սուր վրէժխնդ-
րութեան , և գամք զինի քո ։ Պետրոս առաքեալը ըսա
հրամանին Քրիստոսի , Ղ-ի . թ . 3 արձանագրու-
թիւն չունէր , վասնզոյ չգայնի կը պարծենար . “ Ար-
” ծաթ և ոսկի ոչ ունիմք ” ։ Գործ . Գ . 6 ։

Իսկ մինչեւ դարէն սկսեալ պապերը կը պարծին ի-
րենց անուանով ոտնաձայ ոսկիովը արծաթովը և ունե-
ցած փոխերանոցով ։ Պետրոս առաքեալը , տես , ինչ
պէս կ’անարդէ զօշաքաղութիւնը , որ է արծաթ-
սիրութիւն և ագահութիւն . ասոր համար կա-
նոնական խրատ կը գրէ երէցներուն , եկեղեցւոյն
Քրիստոսի հոգեւոր հովիւներուն , որ չըլլայ թէ
զօշաքաղութեան չար և մոլեկան ոգին ունենան .
“ Հրաժեշտք որ ի ձեզ հօտ է Աստուծոյ , վերա-
” հսկող լինել՝ ոչ ի բռնութեամբ , այլ կամաւ ըստ
” Աստուծոյ . ոչ զօշաքաղութեամբ , այլ յօժարու-
” թեամբ . ոչ իբրեւ տիրելով վիճակացն , այլ լինել օրի-
” նակ հօտին ” ։ Ա . Պետ . Ե . 2—3 ։

Այժմեան պապերը այս զօշաքաղութիւնը կը պատ-

ուեն ու կը պաշտպանեն այնչափ՝ մինչեւ չեն շատա-
նար ներողութեան յատուկ գրեր հրատարակելով ար-
ծաթ եւ ոսկի հաւաքելու ։ Այսու ծրչափ ժողովուրդ
գայթակղեցան լրենցմէ, որոնք ու այսօրուան օրս Կ'նդ-
գիտ, Կաղվինյ, Կերմանիոյ մէջ անթիւ ժողովուրդ-
ներ կը գտնուին, որոնք կը վկայեն՝ թէ այսու պատ-
ճառաւ երկու կողմանէ ծրչափ անձինք սրոյ ճարակ ե-
ղան ։ Կ՚ասն գի պատպականները անհնայ սրով վրէժ
կ՚առնէին քողքականներէն եւ քողքականները նոյն օ-
րինակ՝ ի սուր սուսերի կը մաշէին պատպական եղոյնե-
րը. սասնկով երկու կողմի մէջ փոխանակ քրիստոնէա-
կան ճշմարտութեան եւ սիրոյ՝ սոսկալի բռնութիւններ
եւ սրոյ սասսիկ հարուածներ կը տիրէին ։

Տեսար մի զօշաքաղութեան ապահութեան չարա-
չար հետեւանքները. սոր համար է որ՝ մեր Տէր
Յիսուս Քրիստոսը սասսիկ պատուիրեց աշակերտաց.
"Տեսէք եւ զգոյշ լերուք յամենայն ապահութենէ."
Ղուկ. ԺԲ. 15 ։ Ընդ Պետրոս առաքեալն ալ հոգեւոր հո-
վիւներուն յորդոր ուսաւ. "Ոչ զօշաքաղութեամբ."
ինչպէս վերը տեսար եւ կարդացիր ։ Այդ հիմակուան
պապերը ըսինք որ կը պատուեն կը պաշտպանեն այս
զօշաքաղութիւնը ։ Սոր համար է՝ որ այս Թ. Պիոս
պապը նոր հրատարակած համառօտագրին մէջ՝ որ
տպուած է (յամի 1854 Փետրուար 3 ։ 4 Թղթահամար.)
այն արբասան առաքելոյն Պետրոսի սուած ու մերժած
զօշաքաղութիւնը կը ծածկէ, երբ հաս կէտ դնելով
միայն կ՚անցնի, որ ջըլլայ Թէ՝ իրեն հետեւող պար-
զամիտ ժողովուրդը այն արբասան առաքելոյն մերժած
զօշաքաղութիւնը ուսանելով ու կարդալով պարզմտու-
թիւններին դպծնայ եւ արթննայ, ու իրեն համարձա-
կին ըսելու. սե՛ս, Պետրոս առաքեալը կ՚ասէ ու կը
մերժէ զօշաքաղութիւնը, դուք ինչո՞ւ կը սիրէք. ու-
րեմն հակառակ է ձեր վարդը Պետրոս առաքելոյն վար-

քին, սրտով և կամքով բաժնուած էք սրբազան Պետրոս առաքելոյն կանոնական սահմանէն։

Այսպա, ով բարեմիտ ընթերցող, էմ պարտ զարմանալ այն միջին դարէն սկսեալ եկած գացած պապերուն մարդկօրէն սոսկալի սխալմունքներուն և առեղծուածին կիրքերուն վրայով, և արժան չէ այնքան աղմկիլ և քամնիլ, որոնք ճշգրիտ անկեղծութեամբ կը պատմեն նոյն իսկ Հռովմայ եկեղեցւոյն պատմիչները, կարդայ՝ ի պատմութիւնս պապից, և կը զարմանայ. մանաւանդ թէ կը զարհուրիս միջին դարէն յետոյ եկած պապերուն ունեցած աշխարհային շուայտութեամբ և բռնաւորութեամբ մոլի և գայթակղեցուցիչ վարք ունենալուն վրայ։

Յիշէ մեզմէ ապ տեղս Օգոստինոսի մեծ վարդապետին Հռովմայու տուած օրինակը, աշխարհի կորըստական փառքերով լեցուած հոգեկորոյս անձանց համար, «Խիստ արբեալ գինով մարդը կ'ըսէ իրեն ոտից » քայլը ուղիղ չէ կարող առնելու, չկրնար և բնաւ ուղիղ » խօսիլ, և չամչնար իրեն խենդութենէն զուրցած խօս» քերէն, և երբէք չի պատկառիր իրեն մոլեկան զըզ» ուելի գործքերէն. այլ իբրեւ պարծանք կը համարի » իրեն ծուռումուռ ընթացքին մէջը սայթաքիլը գը» լորիլը, մանաւանդ անյարմար և անյարիր խօսքե» րուն մոխիկ ընող ըլլայ չըլլայ, ինքնին կը բանդագուշէ » և իր վատ անշահ բասրելի գործքերը իրեն ամենե» ւին չեն երեւիր, բայց բարի քրիստոնեայներուն » զգաստ և զգօն միտքերը զանի կը ճանաչեն ու կը » քննեն և անոր վրայ կը ծիծաղին»։

Այսպէս չըն Հռովմայու այն պապերը, որոնք փառասիրական արբեցութեան և շուայտութեան մէջ գինովցածի պէս են եղեր. ուստի և չեն ճանաչեր և ամենևին իրենց չերեւնար մերժելի գործքերնին։ Ասոր համար է որ ազգիս Հայոց ուղղափառ մեծ

մասը և հոգեզգօն եղողները զղուելով՝ անոնցմէ հե-
ռի մնալը մեծ երջանկութիւն և երանութիւն կը հա-
մարին, համոզուելով Պօղոս առաքելոյն խրատէն, որ
կը գրէ Տիմոթէոս սիրելի աշակերտին. «Իսկ եթէ ոք
» այլազգ ինչ ուսուցանիցէ և ոչ անսայցէ ողջմտու-
» թեանն բանից տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, և
» ըստ աստուածպաշտութեան վարդապետութեանն,
» այնպիսին հպարտացեալ է, և ոչինչ գիտէ, այլ տա-
» պի՛ ի նդիրս և՛ ի բանս հակառակութեան, ուստի
» լինին նախանձ, հեռ, հայհոյութիւն, կարծիք չար-
» եաց, խարդախութիւնք, ապականելոց մտաց մարդ-
» կան՝ և օտարացելոց ի ճշմարտութենէ անտի, որ
» շահավաճառ համարին զաստուածպաշտութիւնն,
» բայց դու մերժեալքիր յայնպիսեացն» ։ Ա. Տիմ. Զ.
3—4—5 ։

Հպարտութիւնը և փառասիրութիւնը յիրաւի քը-
րիստոնէից ատելի և մերժելի է, վասն զի Աստուծոյ
հնազանդողներուն հեռի են այնպիսիները, և սուրբ Հոգւոյն
ընդունարան պիտի չըլլան, և քրիստոնէական հաւատոյ
ճշմարտութեան լոյսը կարող պիտի չըլլան ընդունելու՝
ըստ՝ անժխտելի վճռոյն Յիսուսի. «Ո՞ւմպէտ կարէք
» դուք հաւատալ, զի փառս ի միմեանց առնուք և
» զփառս զոր ի միոյն ոչ խնդրէք» ։ Յօհ. Ե. 44 ։

Նայէ Պետրոս սրբազան առաքեալը ամեն մէկ հո-
գեւոր իշխանութիւնը և փառքը հօր Աստուծոյ կու-
տայ, և Որդւոյն միածնի Յիսուսի Քրիստոսի, ուր-
կէց առինք մեր փրկութիւնը ու զանազան շնորհքներ
ու անով ունինք հաղթելու պէս պէս փորձութեան,
ու անով կը զօրանամք քրիստոնէական ուղղափառ հա-
ւատքին մէջը. ասոր համար կը գրէ. «Նա Աստուած
» ամենայն շնորհաց՝ որ կոչեաց զձեզ յիւր ի յաւիտե-
» նական փառսն Քրիստոսիւ Յիսուսիւ, որում փոքր
» մի եղերութ չարչարակից՝ք, նա կազդուրեսցէ կարո-

» ղացուցէ հաստահիմն արուցէ, նմա իշխանու-
» թիւն և փառք յաւիտեանս »: Ա. Պե. Ե. 10—11:

Ա.յս երանելի Պետրոս սրբազան առաքեալը չէ թէ միայն լոկ բանիւ կը քարոզէր հեղութիւն, խոնարհութիւն և հնազանդութիւն, այլ և ինքնին իրեն վրայ ալ կը յայտներ: Ինչ ատեն բարեմիտ ընթերցող, Պետրոս առաքելոյն հեղութեան, խոնարհութեան և հնազանդութեան հանդէսը: Այն ի երբ որ Աստուածայ մէջը ժողվուած առաքեալները լսեցին որ՝ Սամարիայի մէջ գտնուող հրէայները Աստուծոյ ընդունեցին Փիլիպպոս առաքելոյն քարոզութիւնը և Բրիստոսի հաւատացին, պէտք եղաւ որ այն բաղմութեանը երկու հատ առաքելոց մէջէն իրենց անունց հոգեւոր այցելութիւն ընելու համար: Առաքելոց ժողովը անօրինեց Պետրոս և Յովհաննէս առաքեալները, և անոնք ալ գնացին: "Երբոր լսեան որ Աստուածմ առաքեալքն էին, թէև ի
» Սամարիա բնակեան ղբանն Աստուծոյ, առաքեցին
» առ նոսա զՊետրոս և զՅովհաննէս »: Գործ. Ը. 14:

Հիմայ այս առեղ խորհրդածութիւն մը ընէ, հրամայողը ովն ուզէ՝ եթէ հրամանակատարը. առաքողը իրկնողը ովն ուզէ՝ եթէ առաքուողը իրկուողը. հարկաւ հրամայողը իրկողը մեծ պիտի համարուի քան զհրամանակատարը և իրկուողը: Ուրեմն Պետրոս թէ որ հիմնական պատերուն վրա առաքելութեանը և հովուապետութեանը ոգին ունենար՝ պիտի ըսէր, ես ձեզի պիտի հրամայեմ, դուք ինձի կը հրամայէք ով ժողով, չէ որ ես ձեր պարագլուխն եմ, և ձեր մէջը ծերունին եմ: Այլ գիտեր Պետրոս սրբազան առաքեալը, որ ինքն միւս առաքեալներէն ամենեւին առաւելութիւն չունէր, հոգեւոր իշխանութեան և մեծութեան պանապանութիւնն ալ չունի, այլ միայն առաքելոց դասին դասապետութիւն եղաւ: Այսու համար հնազան-

դեցաւ միւս առաքեալներուն մնօրէնութեանը, և գնաց Սամարիա Յօհաննէս առաքելոյն ընկերակցութեամբ։ Պետրոս միշտ կը յիշէր Յիսուսի Վրիատոսի խրատը. "Ալեւնելին դուք եղբայրք էք . . . Եւ մեծն » ի ձէնջ եղիցի ձեր ապառաւոր։ Ու բարձրացուցանէ » զանձն՝ խոնարհեսցի. և որ խոնարհեցուցանէ զանձն՝ » բարձրասցի՚» ։ Մաթ. ԻԳ. 8—11—12։

Ալժմեան պատերը ինչո՞ւ չեն յիշեր այս Յիսուսի Վրիատոսի արբազան առաքելոյ դասուն տուած հաստատակեաց իշխանութեան սահմանադրութիւնը, ուրանք ամենքը երկնից մէջը պահեցին, ու ինքզինքնին օրինակ տուին երկնից ապագայ օրինաւոր յաջորդներուն, և օրինաւոր յաջորդները ամենայն երկիւղածութեամբ պահեցին և կը պահեն առաքելական հեղինակութիւնը. և ով որ այս հեղինակութենէն կամակոր կը բաժանի՝ կ'ըլլայ հերձուածող և հերետիկոս։ Ալան զի փառասիրութեամբ և կամապաշտութեամբ՝ յայտնի կը հակառակի առաքելական սահմանադրութեան, ինչպէս արբազան առաքեալն Պետրոս աւանդներուն համար կը պրէ։ "Ալ՝ լինիմ և աւտա մարդ » պարիք՝ ի ժողովրդեանն, որպէս և այժմ՝ ի ձեզ լի» նիցին աւտա վարդապետք, որք սպրդեսցեն մուծանեն » հերձուածս կորստեան, և զերս տէրն գնեաց, զինսա » ւրացեալ՝ ածեն՝ ի վերայ անձանց զարագահան » կորուստ » ։ Բ. Պետ. Բ. 1։

Ասկէ ոչ ապաքէն ընդհանուր և աննեղոտ գլուխն եկեղեցւոյ Յիսուս Վրիատոս իր անձը օրինակ տալով հրամայեց։ "Ալատրուք յինէն, զի հեզ եմ և խո» նարհ սրտիւ » ։ Մաթ. ԺԱ. 29։ Եւ թէ՝ "Եւ զիտաս » ի մարդկանէ ոչ առնում » ։ Յօհ. Ե. 41։ Ալ որ Յիսուս աշխարհային փառքերէն, մեծութիւններէն, մինչև անգամ թագաւորութեան անունէն խոյս կուտար կը հեռանար. ինչպէս գրած է ։ "Յիսուս երբե

» պիտաց, եթէ գալոց են յանիշտանակել զնա, զի արասցեն
» զնա թագաւոր, գնաց դարձեալ ՚ի լեառն միայն » ։
Յօհ. Ձ. 15։ Ընդ ուրեմն հակառակ է Յիսուսի Քրիս-
տոսի աքանչելի խոնարհութեանը և հեզութեանը, ա-
ռեն սեսակ մեծամտութեան չար խորհուրդները ։

Վասն զի քեր բաղդատե Հռովմայոց այժմեան պա-
պերուն ունեցած մեծամտութիւնը և գահասիրու-
թիւնը, որով Յիսուսի Քրիստոսի փրկարար աշեսմբը
հասատուած, և անոր փրկութեան անուանը սեպ-
հականուած եկեղեցւոյն մէջ աւեն մէկ առաքելոյ յա-
ջորդներէն վեր բարձրապահ նասելով, և գլխաւորու-
թեան անունով կ՚ուզեն վսասաւորել ՚ի մարդկանէ,
և մանաւանդ Յիսուսի Քրիստոսի պէս անսխալ, և
ընդհանուր հրամայող աւեն հաւատոցեալներուն վրայ
բացարձակ իշխող հանդիսանալու. ահ սոսկալի վսաս-
մոլ հեսեւոլութիւն ։ Կարդայ աոոնց հրասարակած
համառօսագիր թերթերը. և մանաւանդ Թ. Պիոս
պապին այս սարուան վերուստ ՅԻՆ հրասարակած
գրութիւնը, որուն մէջ առաջին սկսուածէն յայտնի
կ՚ընէ իրեն ննասպարծութիւնը և վսասասիրութիւնը՝
լաւ ևս ասել համարձակութիւնը ։ Աոովհետեւ բո-
լոր սուրբ եկեղեցւոյն Քրիստոսի ընդհանրականու-
թիւնը կաթուղիկէութիւնը, մի միայն իրեն Հռով-
մայոս մասնաւոր եկեղեցւոյն վրայ առնելով՝ աւեն
քրիստոնեայ ազգերը իրեն հպատակ ընելու կը ջա-
նայ, և ինքն ալ աւեն ազգաց քրիստոնէից եկեղեցւոյն
ընդհանրական գլուխ, Քրիստոսի նման հանդիսանալ
կ՚ուզէ, և աւենուն իշխելու և հրամայելու կը հա-
մարձակի. չիշեր որ առաջ հօր Աստուծոյ սահմանածը
մերժել է, որ այս հօր Աստուծոյ սահմանին համար
կը դրէ Պօղոս առաքեալը ։ “ Ո՛չ զամենայն ինչ հնա-
» զանդ արար ՚ի նեղութեան սակաւ նորա, և զնա եղ գլուխ
» ՚ի վերայ ամենայն իրիք եկեղեցւոյ, որ է մարմին նո-

» րա , լրուծին՝ որ զամենայն յամենայնի լնու » ։ Եփես. Ա. 22։ Եւ Յիսուսի Քրիստոսի ընդհանրական ամենազօր գլուխ ըլլալը Նայի մարգարէին վկայութիւնովը հաստատելով կը վկայէ Պետրոս առաքեալը ։ « Քանզի կայ խակ ի գրի, թէ ահաւասիկ դնեմ ի » Սիոնի վէմ ընտիր՝ գլուխ անկեան պատուական, և » որ ի նա հաւատայցէ , մի ամաչեսցէ » ։ Ա. Պետ. Բ. 6 ։ Եսայի. ԻԸ. 6 ։

Պատճառը ինչ է որ՝ Յիսուս Քրիստոս պիտի ըլլայ միայն ընդհանրական գլուխ իւր եկեղեցւոյն. առաջին պատճառն է այս. որովհետեւ Յիսուս Քրիստոս է եկեղեցւոյն փրկիչը, և եկեղեցւոյն յոյսը անոր փրկութեանը վրայ է. ասոր համար է որ կը գրէ Պօղոս առաքեալը. « Քրիստոս գլուխ է եկեղեցւոյ, և ինքն » է փրկիչ մարմնոյ իւրոյ » ։ Եփես. Ե. 23 ։ Եւ երկրորդ պատճառն է այս. որովհետեւ Քրիստոս է մի միայն գլուխ եկեղեցւոյ. ւան զի եկեղեցին՝ այսինքն հաւատացեալք բարոյական մարմին և անբաժանք Քրիստոսի են. ըստ այնմ ։ « Դուք մարմին Քրիստոսի էք՝ և » անդամք անդամոց նորա » ։ Ա. Կոր. ԺԲ. 27 ։

Ահա այս ամեն վկայութիւնները Հռովմայոց այժմեան պապերը մերժելով և բնաւ չընդունելով, իրենց հաւատք կը համբաւեն, իբր թէ ընդհանրական գլուխ եկեղեցւոյն Քրիստոսի ։ Վասն եա այս տեղս պիտի յիշեմ շեմ Պօղոս առաքեալին զարմացմամբ հարցումը. միթէ Քրիստոս բաժնուա՞ծ է. քանի՞ Քրիստոս կայ ։ « Խակ » արդ բաժանեալ ինչ ունի Քրիստոս » ։ Ա. Կոր. Ա. 13 ։ Որովհետեւ մէկ մարմին եմք ամենքս Քրիստոսի, ապա միայն նոյն Յիսուս Քրիստոսը պիտի ունենանք և ճանաչենք մեզի գլուխ, որ ամենքս մեր ընդհանրական գլխոյն հետ միացած ըլլալով ըլլանք կաթոլիկ ընդհանրական եկեղեցւոյն անդամք ։ Նոյնպէս մէկ քրիստոնեայ ապշ մը չպիտի կարողանայ ըսել, որ

ես միայն կ՚անուանիմ կաթուղիկե եկեղեցի, և կամ ինձ հետ միացողը կ՚անուանի կաթուղիկե եկեղեցւոյ մասը։ Այսպէս կը համարձակի Հռովմայոյ պապը ինքնինքը և իրեն ժողովքը միայն կաթուղիկե կամ ընդհանրական եկեղեցի անուանել, ահա ամենասխալ վարդապետութիւն, մանաւանդ աւետարանական և առքելական ճշմարտութենէն և ճշմարտութենէն բաժանեալ յայտնապէս հերձուածողութիւն։

Թէպէտ շատ տեղ կարդացեր էինք անչափ և անհեղի հանդարձակութիւններ, բայց այս տարուան վերջերուայ 3 ին Թ. Պետ պապին տարածած հռովմայական պիր Թերթին Ա. երեսը սկսաւածէն կը նորոգէ այս սխալ դատումը սանկ գրելով. " Վ՚իտէք դուք ամեն " քրիստոնեայ, յարգապատիւ եղբարք և սիրելի որդիք, թէ " մեր նախորդ Հռովմայ քահանայապետները ինչ հայ " րական սիրով նայեր են միշտ հնուց՝ ի վեր՝ առ ձեր " շատ կերպով պայծառ Հայոց ազգին, և որչափ վեր " Թավ առ ազգը՝ ի կաթուղիկե միութիւն դարձնելու " ջանացեր են։ Վ՚իտէք և թէ՝ Պետրոս Օգնակա " նութեամբը՝ նոյն նախորդներուն ինչ պատուիներ " քարեր են առ ազգիդ վրայ լրած ջանքերնէն, և " ինչ ուրախութիւն ունեցեր են. երբ որ յաջողեր " է իրենց որ կաթուղիկե միութեան դաւանութեա " նը դարձած շատ Հայեր՝ անոր մէջ հաստատուն և " անշարժ մնան "։

Այնէ սիրելի ընթերցող. ամեն հաւատացեալ ազգ Բրետոան Յիսուսի հետը ուղղափառ հաւատով յա տակ և սիրով միացած՝ ըլլալով՝ ամեն մէկը քէ՞ հանարիր կաթուղիկե եկեղեցւոյ մնան, որով ամենքը կը միա նան՝ ի Բրետոս Յիսուս. ըսել է որ՝ այս կաթուղի կե եկեղեցւոյն կեդրոնը Յիսուս Բրետոս է և այս ճշմարտութիւնը կը հաստատուի Յիսուսի Բրետոսի անմոռանալի խոստմանը։ " Արդեօք ես ու ես՝ ի միջ, որ

„պէտ ուրն՝ ոչ կարէ պատուղ բերել յանձնէ իւրմէ,
„եթէ ոչ լոկ հաստատեալ յորթն, նոյնպէս և դուք՝
„եթէ ոչ յիս հաստատեալ լոկէք „: Յօհ. ԺԵ. 4: Ա՛յս
օրինակաւ Յիսուս յայտնի ըրաւ որ ինքն է կեդրոն ժո-
ղովոյն. ինչպէս որթը իրեն վրայ հաստատուած ունի
ուռենը, որ անոնց զօրութիւն կուտայ պատուղ բերե-
լու, սանկ ալ քրիստոնեայները ողջմիտ հաւատով,
աներկբայ յուսով և կատարեալ սիրով հաստատուն
մնալու պիտի ըլլան Քրիստոսի հետ, որով առաքինի
և բարեգործ կը հանդիսանան:

Ուրեմն մեք ամենքս գիտնանք որ մասնաւորապէս
Քրիստոսի խորհրդական մարմին եմք միաւորեալ՝ինոյն
ինքն Քրիստոս, որ է ընդհանրական և ամենազօր գլուխ
անդամոց իւրոց, թէ որ ըսենք ընդհանրական կաթո-
ղիկէ եկեղեցւոյ մասն եմք, ըսել է որ ամեն մէկ ուղ-
ղափառ քրիստոնեայ ազգ՝ Քրիստոսի խորհրդական ան-
դամ ըլլալով՝ կաթուղիկէութեն և ընդհանրականութեն
հնարքը սրտօնութիւնը Քրիստոսէն առած են: Ա՛յս
ողջմիտ վարդապետութիւնը կը հաստատէ Պօղոս առա-
քեալը. "Խաղաղեմք ի մարմին եմք՝ի Քրիստոս, այլ
„իւրաքանչիւր միմեանց անդամք եմք „: Հռով. ԺԲ. 5:

Տեսանք ի Յիսուս Քրիստոս եղած հաստատող
կաթուղիկէութեան այսինքն ընդհանրութեան, որ ա-
մեն աշխարհք տարածուած հաւատոյ ճշմարտութիւ-
նը և ամեն ազգ հաւատացելոց՝ պիտի միացեալ ըլլան
Քրիստոսի հետ, վասն զի ամենուն փրկութեանը և
ճշմարիտ հաւատոյ կատարելութեան, և ամենուն մի-
ութեանը կեդրոնը Յիսուս Քրիստոս է, ինչպէս Քրի-
ստոսի այս ճշմարտութեան իսկին համեմատ կը
գրէ Պօղոս սրբազան առաքեալը, որ ամեն հաւատաց-
ելոց ողջմիտ հաւատքը, հաստատուն յոյսը, և կա-
տարեալ սէրը ի Քրիստոս Յիսուս պիտի հաստատուն
հայեցողութիւն ունենայ. վասնզոր ասէ. "Հայե-

» ցարուք ՚ի զօրագլուխն հաւատոյ և ՚ի կատարիչն
» Յիսուս » : ԵԲՐ . ԺԲ . 2 :

Այս բնաբանին վրայով հայր Դաբրիէլ Վ . Ա-
տիքեան՝ ուղղասեռ մեկնութեամբ և հետեւելով
Ոսկեբերանի առանկ կը գրէ . “Դրիստոս է կատարիչ
» մեր՝ պատարագաւ խաչին արդարացուցանելով, և վե-
» րածելով ՚ի կատարեալն երանութիւն յերկինս , կամ
» կատարէ զմեզ յինքեան իբրեւ գլուխ զանդամս , զի
» եղիցի եկեղեցին լուսոյ այնր՝ որ զամենայն յամե-
» նայնի ընու » : Մեկն . Պօղոս . Գ . երես . 321 :

Հիմայ մնաձէ , որ Հոգւոյն սրբոյ ընորհիւը և մկըր-
տութեան խորհրդով ՚ուրիէց սկզբնական մեղքէն ազա-
տութիւն կը գտնամք . Հռովմայու աթոռէն , պապե-
րէն , եթէ Դրիստոսէն . կամ թէ Հռովմայու պապե-
րուն անուանիլը մի կը մկրտուինք . ՚ի ապաքէն Յիսու-
սի Դրիստոսի անուանովը , ինչպէս Պօղոս առաքեալն ալ
իրեն անուանովը պարծենցողներուն սաստելով գրեց :
“Յանուն Պօղոսի մկրտեցարուք » : Ա . կորն . Ա . 13 : Ձէ
որ ամենքս Յիսուսի Դրիստոսի անուանովը մկրտուած
եմք ըստ Պօղոսի առաքելոյն : “Ոչ միանգամ՚ի Դրի-
» ստոս մկրտեցարուք , ՚ի Դրիստոս զգեցեալ էք ,
» չէք խաւար . ոչ հրէի՝ և ոչ հեթանոսի , ոչ ծառայի՝
» և ոչ ազատի , ոչ արուի՝ և ոչ իգի , զի ամենեքեան
» դուք մի էք ՚ի Դրիստոս Յիսուս » : Գաղ . Գ . 27—28 :

Ընդէ՞ նայէ այս սրբազան առաքելոյն ցոյց տուած
քրիստոնեայներուն միութեանը ամենահաստատ և ա-
մենաժողով անսխալ կեդրոնը , որ է Յիսուս Դրիստոս .
նայէ մէյմ՚ալ պապերուն ցոյց տուած անհիմն և սխա-
լական կեդրոնը՝ որ Հռովմայու ժողովքը պիտի ըլլայ :
Այս դրութիւնը չէ որ հակառակ է քրիստոսական և
առաքելական ճշմարտութեան և հաւատոյ կատարե-
լութեան , ուրեմն պապերուն այս դրութիւնը յայտ-
նի սխալմունք է :

Ի՛մայ վերստին կը հարցընեմ. ապաշխարութիւն եթէ որին անուանուելը և որին ընծայուիլը պիտի ընդունելի եղայ, և կատարեալ ապաշխարութիւն համարուի. յոյսերնիս ձեր պիտի հաստատեինք. Ի՛սկայս ապաքէն տարածուած ներողութեանը վրայ. և ա նոնց անուանուիլը ընդունելի պիտի ըլլայ. կամ անոնք ձանձնալուընիս. Թէ որ մէկը ըսէ այո՛, ինքզինքը կատարեալ հերձուած պիտի ընէ Յիսուսի Քրիստոսի այն ճշմարիտ քարոզութենէն, որ զինի սուրբ յարութեան ինքնին իրեն համար աշակերտաց խօսեցաւ. "Թէ այսպէս պարտ էր չարչարիլ Քրիստոսի և յա"նել 'ի մեռելոց յաւուր երրորդի, և քարոզել յա"նուն նորա ապաշխարութիւն և թողութիւն մեղաց "յամենայն ազգս, սկսեալ Երուսաղէմէ": Ղ՚ւկ. ԻԴ. 46—47:

Ի՛մայ հասկցաք որ՝ Յիսուսի Քրիստոսի անուանը կ'առնեմք թողութիւն մեղաց. իսկ ամեն հոգեւոր հովիւները միջնորդ և մատակարար կը հանդիսանան այն սրբարար և փրկագործ խորհուրդներուն, և այս հոգեւոր իշխանութիւնը Յիսուս Քրիստոս իրեն ամեն աշակերտներուն հաւատար պարգեւեց. Յ՚Վ. Ի. 22—23:

Վերան կը հարցունեմ քեզի, վերջին դատաստանի օրը յարութիւն մեռելոց պիտի ըլլայ, և այնպէս կը հաւատամք. բայց որո՞ն զօրութիւնովը մեռեալ ները յարութիւն պիտի առնեն. Թէ որ բարի և ուղղափառ քրիստոնեայ ես՝ հարկաւ խոստովանելու ես ըսելով, Յիսուսի Քրիստոսի հրամանաւը և զօրութիւնովը. ինչպէս սուրբ Աւետարանը կը վկայէ: "Ահա ժամանակ, յորում՝ ամենեքին որք 'ի գե"ղմանս կայցեն՝ լսիցեն ձայնի նորա, (այսինքն "Քրիստոսի"): Յօհ. Ե. 28:

Ուրեմն այս տեղս ալ պապերը բան մը չունին:

Վերջը այս տեղս ալ կը հարցունենք, ընդհանրական դատաստանը ի՞նչ պիտի ընէ, վէիս արդարոց և մեղաւորաց ի՞նչ պիտի տայ. չէ որ Յիսուսի Քրիստոսի որդեան Աստուծոյ յանձնուած է. "Ա՛ր հայր դա՛տ ոչ ոեւէ զոք, այլ զամենայն դատաստանն եւս Որդւոյ »իւրոյ. » Յով. ե. 22։

Այս ուրեմն ուղղափառ հաւատացեալները, որք են Եկեղեցի Քրիստոսի, բոլորովին հաւատքնին, յոյսնին, սիրերնին ունին Քրիստոսի վրայ, որով կ'ըլլայ ինքն Յիսուս Քրիստոս մի միայն կեդրոն կամուղիղութեան Եկեղեցւոյն, որ ընդ ամենայն աշխարհ տարածուած է և իրեն հետ միացած է, և այս տարածումը կ'ըսուի Տիեզերական կամ Ընդհանրական, ինչու որ սրբազան առաքեալներուն քարոզութիւնովը ընդ ամենայն աշխարհ սփիւռ տարածեցաւ։ Ասոնի այսպէս կը խոստովանինք հաւատոյ հանգանակին մէջ, "Հաւատամք ի մի միայն ընդհանրական և առաքելա »կան Եկեղեցի, ի մի մկրտութիւն, յայտաշխարհու »թիւն, ի քաւութիւն և ի թողութիւն մեղաց, ի »յարութիւն մեռելոց, ի դատաստանն յաւիտենից »հոգւոց և մարմնոց, յարքայութիւնն երկնից և ի »կեանն յաւիտենական։

Ինչու համոզուեցար մի, որ Յիսուսին Քրիստոսին, և կամ Յիսուսի Քրիստոսի հետը միանալով՝ ամեն ուղղափառ և բարեպաշտ հաւատացեալները մէկ տեղ առնելով՝ կ'ըլլան մի միայն կաթուղիկէ Եկեղեցի, և ամենուն վրայ մի միայն իշխող և հրամայող է միայն Տէրն քաղ Յիսուս Քրիստոս, ինչպէս որ հրամայեց։ "Ես ձայնի նմամ լսեցեն, և եղիցին մի հօտ և մի »հովիւ »։ Յով. ժ. 16։ Տեսար մի, ճշմարիտ կ'ըլլայ կոր Եկեղեցին Քրիստոսի կաթուղիկէ, մի կարծեր որ Հռոմայոց պապերուն մտրիկային խորհրդով և ոչ Հռոմայոց սրբով հնարած իշխանութեանը մէջ պիտի գըտ-

նաս, և ոչ թէ Հռովմայու եկեղեցին կ'ըլլայ կեդրոն հաւատոյ և կաթուղիկէ, այլ Յիսուս Քրիստոս է ա՛ մեն ապրելէն առ ինքն ժողովել, և անոր աւետարանական ճշմարտութիւնը է հոգեւոր փարախ իրեն բանաւոր հօտին, և ինքն ալ միայն Հովիւ քաջ և ընդհանրական գլուխ, ատոր համար ըսաւ. "Ոչ ամենայն զոր "ոտայ ինձ Հայր, առ իս եկեսցէ, և որ գայ առ իս, "ոչ հանիցեմ արտաքս": Յօհ. Զ. 37:

Տեսանք որ ամեն ուղղափառ հաւատացեալները կը միանան 'ի Քրիստոս Յիսուս, և անով կ'ըլլան մի, տուրբ, կաթուղիկէ, և առաքելական եկեղեցի. ատոր համար է որ՝ Պօղոս առաքեալը գրեց. "Ընդ ամենեքեան դուք մի "էք 'ի Քրիստոս Յիսուս": Գաղ. Գ. 28: Ընդ այս քրիստոնական և առաքելական ճշմարտութեան քաղցրութիւնը կուտայ սուրբն Խոտրով արքեպիսկոպոսն Ընձաեացեաց: "Եւ զինչ է կաթուղիկէն, սիրե"լեաւք: Ի մի ամենայն եկեղեցիք ուղղափառաց՝ որ "ընդ սիրելեաս են, մի են. մի Քրիստոս յամենայն եկեղեցիս է. որ ըստ առաքելոյն հաւատոյ չինի, զոր "և առաքելական կոչեմք: Ար զի թէ և բաժանին ըստ "տեղեաց՝ այլ ոչ եթէ ըստ ժողովրդոց, զի 'ի ծագաց "մինչև 'ի ծագս երկրի, ուր և հասանի ճշմարիտ հա"ւատացեալն յեկեղեցիս ուղղափառաց՝ նա՛ եւ եկեղե"ցի է, և ոչ որոշէ զնա՝ ոչ աշխարհն, և ոչ լեզուին "օտարութիւն, այլ ընդունի որպէս մայր 'ի գիրկս "սատիկ սիրով": 'Ի Մեկն. ժամ. երես. 78:

Հիմայ այս ճշմարտութիւններուն հետը բաղդատե Թ. Պետ պատգին համառօտագիր տեարակին մէջ գրուածները. վերը առաջին երեսը կարդացիր, մէ՛ալ եօթներորդ երեսը նայէ, որ մեր ուղղափառ եկեղեցին բաժնուած խղճահար պարզամիաներուն կը գրէ, և երկնաւոր աստուածային շնորհքը իրեն ա՛ տելութեան ոգւոյն և խաբէական դարանակալու-

թեանը օգնական կը կանչէ. բայց մենք պիտենք որ՝ սուրբ Հոգին Աստուած ճշմարտութեան հոգի է, և ճշմարտութիւն կ՚ուսուցանէ, և ճշմարտութիւն սիւրոցներուն օգնական կ՚ըլլայ, խարդախ ու խաբէական խոհուրդներու մէջ պէտք է խարդախութեան և խաբեութեան հոգի ուներդները օգնական ըլլան. զի անանկներուն պաշտօնն է, անոնց տրուած է հոգի յիմարութեան: Եսայ. ԻԹ. 10: Երեմ. ԺԱ. 8: Աչք ունենան պիտի աչք, և չի տեսնան պիտի ճշմարտութիւնը, և ունենան պիտի ականջ, բայց չլսեն պիտի ուղղափառութեան Հայոց սուրբ և բարեպաշտ եկեղեցին ձայնը, այլ մարդահաճութիւնով խարդախութեան և խաբէութեան պաշտօնեայ պիտի հանդիսանան. այս բաներս պիտի երեւնայ, թէ որ կարդանք այն տեսութիւնն Յոյց տուած եօթնեերորդ երեսը, որ գրած է: "Նա երանի թէ բոլոր ազգերնիդ երկնա-
"ւոր շնորհացը անապալով՝ մեղքութիւնները ուրանա-
"լով՝ հլութեան և միութեան հոգւով՝ ի մի միայն
"Քրիստոսի փարախը դառնար, ուսկից բոլորովին հե-
"ռու է. ավ որ չի միաբանիր այս Պետրոսի սուրբ ա-
"թոռից հետ, յորմէ առ ամենեսին կը ծաւալին պե-
"րամեծար հաղորդութեանը իրաւունքը, որում ընդ-
"ծայելի է ամենայն հնազանդութիւն և պատիւ, և
"առ որ բոլոր եկեղեցին. այսինքն ամեն դիէն հա-
"ւատացեալք՝ պէտք է որ գան միանան ժողովին՝
"իրեն պերապոյն գլխաւորութեան համար: Ընդարձ
"անհաւատալի մխիթարութիւն կ՚ըլլայ մեզի, և բո-
"լոր եկեղեցին մեծաւ ուրախութեամբ կը ցնծար,
"թէ որ բովանդակ ազգերնիդ ի կաթուղիկէ միու-
"թիւն դառնար: Ընդհէց ասոյգ կ՚իմանաք յարգապա-
"տիս եղբայրք, և սիրեցեալ որդեակք, թէ ոչ միայն
"ձեզ կրնար մեզ հաւնիլ անոնց բռնած ճամբուն՝
"որ դառն և խիստ եղանակաւ սովոր են վարուիլ

» ձեր ազգին հերձուածոլից հետ՝ և անոնց վայլած
» նկատմունքը չեն ըներ, այլ և սաստիկ բոլորովին կը
» հերքենք զանոնք՝ որ ոչ սիրով և քաղցրութեամբ,
» հապա դառնութեամբ և խստութեամբ կը վարուին
» նաև անոնց հետ, այլ որ՝ ՚ի մահաբեր հերձուածոց
» ՚ի կաթուղիկէ մուտքիւն դարձած են » ։

Ով սարսափելի առելութիւն. Հայոց ազգին վրայ
ինչ մոլորութիւն, ինչ անհնազանդութիւն, և ինչ
անմիաբանութիւն հաւատոյ ոեսերէ, որ կը համար-
ձակի այս թ. Պետ պատը իրեն պէսերուն հետ միա-
տեղ ցոյց տալու. մեր ուղղափառ սուրբ եկեղեցիին
բաժնուած համազգի եղբայրներուն խռովութեան
առելութեան հոգի վիճելով, թշնամութեանց չար ո-
րոճն ցանելով անոնց սրտին մէջը, կը գրէ անոնց ։
“ Նրանք թէ ազգերիդ երկնաւոր չնորհացը անսա-
» լով, մոլորութիւններդը ուրանալով, հլութեան և
» և միութեան հոգւով՚ի մի միայն Քրիստոսի վարա-
» խը դառնար » ։

Համազգի եղբայրներ. գիտէք, Հայոց եկեղեցին
ինչէն է որ մոլորեալ կը ճանաչուի այժմեան պատե-
րուն առջեւը. վասն զի սուրբ Հոգւոյն չնորհիւը
Յիսուս Քրիստոսը միայն կը ճանաչէ ընդհանրական
ամենազօր ամենիշխան տէր և գլուխ իւր եկեղեց-
ւոյն, և ամեն ուղղափառ հաւատացեալներուն. ինչ
պէս վերը գրուեցաւ ։ Ալ մենք չենք կրնար հօր Աս-
տուծոյ նախատահմանութիւնը ապրել, այլայլել և ու-
րանալ ։ “ Ոչնա եղ գլուխ ՚ի վերայ ամենայն իրիք եկե-
» ղեցւոյ, որ է մարմին նորա » ։ Եփես. Ա. 22 ։ Հայոց
եկեղեցին չկրնար ուրանալ անջարժելի հաստատուն
հիմն հաւատոյ Յիսուս Քրիստոսը լսա ամենազօրու
քարոզութեան Պետրոսի առաքելոյն ։ Ա. Պետ. Բ. 7 ։
Ես չկրնար Քրիստոսի ամենակալ զօրութիւնը մերժե-
լու և հերքելու, որ միանգամայն վրկիչ է՝ և գլուխ ա

ժենայն քրիստոնէից, որոնք որ իրեն բարոյական մարմին կը համարուին: Կղ. Ա. 18: Ասոց եկեղեցին էն խաբ բուխր անանկ մոլորեցուցիչ և խարդախ խօսքերէն, որ այժմեան պապերուն իրենց խորհուրդներէն կ'ելլայ. վասն զի շատ աղէկ համոզուած է Պօղոս առաքեալն, որ ասանկ քարոզութիւններու չվստահելու համար կը գրէ: "Սի ոք զձեզ խաբեսցէ, որ կամելն »խոնարհութեամբ և կրօնիւք հրեշտակաց, զոր չիցէ »տեսեալ զրահետ վարիլ՝ տարապարտ հպարտացեալ »'ի մտաց մարմնոյ իւրոյ, և ոչ ունելցի զչլուխն Քրիս»տոս, ուստի ամենայն մարմինն յօդիւք և խազլաւօք »տարաբերեալ և խառնեալ՝ աճէ զաճումն Աստուծոյ»: Կղ. Բ. 18—19:

Ասոց ուղղափառ սուրբ եկեղեցին իրեն հաւատքը՝ յոյսը՝ և սէրը չկրնար բաժանել Յիսուս Քրիստոս փրկիչէն, և կամ այն սէրը որ միայն Քրիստոսի կը վայելէ բոլորովին՝ չի կրնար նուիրել Հռովմայու պապերուն, կ'երկնչի և կը սոսկայ Պօղոս առաքեալին նզովքէն, որ կը գրէ Կորնթացւոց եկեղեցւոյն. "Եթէ ոք »ոչ սիրէ զտէր Յիսուս, եղիցի նզովեալ, մարանա»թայ.» Ա. Կորն. ԺԶ. 22: Հիմայ հասկցուեցաւ մի Հայոց եկեղեցւոյն բարեպաշտութիւնը և ժողովրդոց բարի քրիստոնեայ ըլլալը, որ քրիստոսական և առաքելական ուսմունքներէն չեն մոլորած, բայց այժմեան պապերը կը հեռեւին մոլորեցունել, ուրանալ տալով քրիստոսական և առաքելական ճշմարիտ հեղինակութիւնները, և իրենց հնազանդեցնելով Քրիստոսի միութենէն բաժանել և իրենց խարդախութեան փարախին մէջը ձգել: Խարդախութեան փարախ ըսի, որովհետև Քրիստոսի փարախը մարմնաւոր տեղերով չափուի հասկընալէ, այլ հոգեւորապէս հմանալու ենք. ուրեմն Յիսուսի Քրիստոսի խորհրդական փարախը մէկն երկնից արքայութիւնն է, որ

իւր բանաւոր հօտը՝ ուղղափառ և բարեպաշտ հաւա-
տացեալները պիտի այն տեղը ժողովէ. "Երթեւ հո-
"վիւ մի հավատացէք զնաշինս իւր և բաղկաւ իւրով
"ժողովեցէք զգառինս, և՝ ի ծոց իւր կրեացէ զնոսա":
Եսայ. Խ. 11: "Դայց ասեմ ձեզ, զի բազումք յարեւե-
"լից և յարեւմտից եկեսցեն՝ և բազմեսցին ընդ Ա-
"բրահամ և ընդ Սահակայ, և ընդ Յակոբու յար-
"քայութեան երկնից." Մատ. Ը. 11: "Որ կոչեացն
"զձեզ յիւր արքայութիւնն և՝ ի փառս." Ա. Թես. Բ. 12:
Ի՛ սուրբն Կիւրեղ երկնից արքայութիւնը կը նմանե-
ցունէ գաւթի ոչխարաց փարախի. "Ո՞րպէս եղիցի
"հաւատար գաւթից յերկինս". Ի գործս Գանձ.:
Այս ճշմարտութիւնը անպատրուակ կը խոստովանի
Սոբիանոս վարդապետն Այգունց՝ աբբայն Անիւթա-
բեանց այս բնաբանին վրայով: "Ո՞գոյշ լերուք մի
"արհամարհիցէք զմի՝ ի փոքրկանցս յայսցանէ, ասեմ
"ձեզ զի հրեշտակք նոցա յերկինս հանապազ տես-
"նեն զերեսս Հօր իմոյ որ յերկինս է":

Այս տեղս երկնից արքայութիւնը Կրիատոսի փա-
րախ անուանելով կը գրէ. "Ջկ պարտ կորուստ ժա-
"մանակի համարիլ, եթէ դաստիարակեն և ածեն՝ ի
"փարախն Կրիատոսի՝ զմի միայն մանուկ կամ զտխմար
"ոք կամ զմեղաւոր, որ չունելով ընտրութիւն բանի
"և հասակ կատարեալ մտքիմով կամ մտօք, չըլլի մըտ-
"բական և կարօտ է առաջնորդի և խնամակալութ:
"Ո՞այս ձեռնարկութիւն մեկնէ օրինակաւ հով-
"ուի, որ ունելով հարիւր ոչխար, թողու զիննասուն
"և զինն՝ ի լերինս յարօտս, ուր ինքն աճ գնասա, և եր-
"թայ խնդրէ զհարիւրորդ զպակասեացն կամ զմոլո-
"րեալն յանապատի, և եթէ գտանիցէ, առաւել ու-
"րախ լինի՝ ի վերայ նորա. քան՝ ի վերայ այլոց որք չէ-
"ցեն մոլորեալ." Տէսո. Ներ կոպ. հատոր. Բ. էրէս. 43:

Այս երկրորդն է Կրիատոսի հնուհատան օրէնքը և

հաւատոյ ճշմարտութիւնը. Յով. ժ. 16։ Իւր առաքեալներուն ալ սուրբ Հոգեւորականն է, որ երբ հնազանդելով սուրբ Հոգեւորականին, և Քրիստոսի շնորհական օրէնքներուն պատուէրներուն, Քրիստոսի հաւատոյ ճշմարտութեանը մէջ կը գանուինք, Քրիստոսի փարաքլեթն մէջը եղած կ'ըլլանք, և անկէց ալ երկնից աթոռոյ ուղիղ յաւիտենական կենաց մէջ մտնելու արժանաւոր կ'ըլլանք։ Ինչպէս ըսաւ մեր տէր Յիսուս Քրիստոսը. "Ամէն ամէն ասեմ ձեզ, զի ես եմ
» դուռն ոչխարաց։ Ամենեքեան որ յառաջ քան զիս
» էին՝ գողք էին և աւազակք, այլ ոչ լուան նոցա
» ոչխարքն։ Ես եմ դուռն, ընդ իս եթէ ոք մտանիցէ,
» կեցցէ, մտցէ՝ ելցէ, և ճարակ գտցէ.» Յով. ժ. 7—8—9։
"Ամենայն որ յանցանէ և ոչ կայ 'ի վարդապետու-
» թեանն Քրիստոսի, զԱստուած ոչ ճանաչէ, որ կայ
» 'ի վարդապետութեանն, նա՝ և զՀայրն և զՈրդին ունի
» դուն։» Բ. Յով. ա. 9։

Այսպէս այս սուրբ Հոգեւորականի ճշմարտութենէն դուրս մնացողները անհնազանդութեամբ, անշուշտ պիտի դատապարտուին. ինչպէս կը գրէ Պօղոս առաքեալը. "Ի բաց հրոյ առնուլ զվրէժս յայնոցանէ, որ
» ոչ ճանաչեն զԱստուած, և որ ոչ հնազանդին Ա-
» ւետարանին տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ
» տայցեն զվրէժս 'ի սատակումն յաւիտենից՝ յերեսաց
» Տեառն, և 'ի փառաց զօրութենէ նորա.» Բ. Թես. ա. 8—9։

Հիմայ տեսանք Քրիստոսի փրկչին մերոյ հոգեւոր փարաքլեթները, որովհետեւ Յիսուս Քրիստոս ճշմարիտ և յաւիտենական Հօրմէ է, ապա անոր փարաքլեթն ալ պիտի ըլլայ ճշմարիտ և յաւիտենական։ Աւրեմն մէնք պիտի խաբուինք Հռովմայու այժմեան պապերուն աշխարհային թագաւորութիւնով պերճացեալ իշխանութիւնին Քրիստոսի փարաքլեթ ճանչնալու, առանց մտքը Քրիստոսի ճշմարտութենէն հեռացուցնել, և

իրենց հնազանդեցուցանել կ'երեւի։ Այսոց եկեղեցին Քրիստոսը մեկ կը ճանաչէ՝ մի միայն Աստուած Հայր, և Աստիւ քաջ բանաւոր հօտին, որ եղ զանձն իւր ՚ի փրկութիւն ամենեցուն. Թող այժմեան Հռոմ մայոս պատերը աշխատին խաբէական բառերով և ձեւերով պարզամիտները ամեն տղդէն, մանաւանդ Այսոց տղդին մեկ փոքրիկ մասը իրենց պատկանութեան, և մարմնաւոր Թագաւորական իշխանութեան մարդկային հնարքով վնասը հրաւիրել։ Նայց Այսոց ուղղափառ մեծ մասը միշտ արթուն և պատ է. վասքուիր անանկ ձայներէն, ու տղին անդին ջնտուեր սէր Յիսուս Քրիստոսը, այս սեղէ քրիստոսը կամ ան սէրն է ըսողներուն չհաւատար. վան ալ Քրիստոսէն տրված է. "Յայնժամ թէ ոք "ասիցէ ձեզ՝ ահաւասիկ աստ է քրիստոս, կամ անդ, "մի հաւատայցէք"։ Մտթ. ԻԴ. 23։

Այս սեղս մեր բարեմիտ ընթերցասէրները առաջարկելու իրաւունք ունին ըսելով, ո՞չ ապաքէն նիւթական եկեղեցին կ'անուանի տուն Աստուծոյ, յարկ արքունեան, սեղի առ Աստուած փառաբանութեան և երկրպագութեան, ևս և խնդարան ուղղափառ և բարեպաշտ հաւատացեալներուն, և յարմարական անունով ալ կ'ըսուի փարախ բանաւոր ոչխարացն Քրիստոսի ըստ Հոլոբին Յիսուսի, ինչպէս անուաներ են նախնի տուրբ հարք, Ակլեքեարան, Յօհ. ա. 22։ Նա այլք, ո՞րոնցմէ և տուրբ հայրն մեր Սուքէս Խորենացի, պրպ. գ. կը. Սրգ. Շնորհ. ա. պեփ. զ։

Նայց այս յարմարական մուօք կ'ըսուի փոխն և ոչ խորհրդականապէս, որովհետեւ ուղղափառ և բարեպաշտ հաւատացեալ քրիստոնեայ, ամեն ազգ, իրենց նիւթական եկեղեցւոյն մէջ կը ժողովին, ըստ սէրուն նախան և առաքելական սահմանադրութեան միաբան միախորհուրդ և միակրօն աղօթելու փառաբանելու

և երկրպագութիւն մատուցանելու առ ամենասուրբ Երրորդութիւնն, և փրկարար և արբապուրծ խորհուրդները կատարելու, և Աստուծոյ հաճոյացեալ սուրբեր յիշատակաց արժանի ծնողութիւնը հանդիսացնելու : Մտփ. ԺԱ. 13 : ԺԸ. 20 : Հռով. ԺԲ. 6 : Ա. կորնթ. ԺԱ. 18 : ԵԲր. ԺԳ. 17 :

Այսպէս ըստ ինքեան այժմեան Հռովմայեցի մայրապետքն սուրբ գրոց և նախնի սրբազան հարց եկեղեցւոյ աստուածութեանց քարոզելու տեսրակներով և քարոզիչներով, որպէս թէ Քրիստոսի վարդապետութիւն միայն Հռովմայեցւոց գահը և եկեղեցին Ճանչցուի ամեն քրիստոնեայ ազգերէն : Այսով կը ջանան ամեն քրիստոնեայ ազգաց ժողովուրդները իրենց սեպհականելու, և մանաւանդ իրենց ունեցած մանաւոր և հոգեւոր իշխանութիւնը ընդհանուր երեւցնելով, կարկառուն խօսքերով ամենայն քրիստոնէից տիրելու երբեմն մի միայն գլուխ եկեղեցւոյ Քրիստոսի, ընդհանուր հաւատացեալներուն ընդհանրապես իշխելու և հրամայելու համար :

Ով տարօրինակ վիճակամոյն և նորօրինակ համարձակութիւն. հակառակ ոչ միայն սուրբ գրոց, այլ և աստուածային նախատահմանութեան : Ձի՞ն մի կարգացեր, կամ բանեւնուն ձեռք չիոտար կարդալու այս սրբազան առաքելոց վճռաբար քարոզութիւնները. Պետրոս սրբազան առաքեալը կը քարոզէ, որ այս ընդհանուր իշխանութիւնը ամենակալ տէր Յիսուս Քրիստոսը ունի միայն, այսպէս. "Ո՛բան առաքեաց » սրդեցոյն իսրայէլի աւետարանել զխաղաղութիւն ՚ի » ձեռն Յիսուսի Քրիստոսի, սա է ամենայնի տէր » : Գործ. Ժ. 36 :

Այսպէս ալ Պօղոս առաքեալը շատ տեղ ամեն հաւատացեալներուն վրայ Քրիստոսի ունեցած ընդհանուր իշխանութիւնը բացայայտ քարոզէ, "Ո՛վ ոչ

» զոյ խաղը հրէի և հեթանոսի, քանզի նոյն տէր է
» ամենեցուն, բաւական յամենեսին, որք կարդան առ
» նա »: Հռով. ժ. 12: “ Ի վախճան աւուրցս այսոցիկ
» խօսեցաւ ընդ մեզ Որդւովն, զոր եդ ժառանգ ա-
» մենայնի »: Եբր: Ա. 2: “ Նա զամենայն լինչ հնազանդ
» արար ՚ի ներքոյ ոտից նորա, և զնա եդ գլուխ ՚ի վե-
» րոյ ամենայն իրիք եկեղեցւոյ, որ է մարմին նորա,
» լրումն՝ որ զամենայն յամենայնի լնու »: Եփես. Ա. 22—23:

Այս առաքելական յայտնի վկայութիւններուն և առաջածային անժխտելի ոնօրինութեանը մոռնալ ըլլալով՝ մանաւանդ նախնի աւրը հարց և Ալեքսանդրեան բացատրութեանց հետեւելով՝ ճշմարտութիւնը անվեհեր և անպատրուակ գրելու կը բարեհաճի Ե. Գաբրիելեն Ազեռլեան ՚ի մեկնութեան Թղթոյն Պօղոսի, որպէս զի Յիսուս Քրիստոս միայն ունի ընդհանրական իշխանութիւն և գլխաւորութիւն ամրեցուցանելու՝ այլոցն հանդերձ, և ոչ ոք կարող է այն ընդհանուր իշխանութիւնը և գլխաւորութիւնը իւրոյ անձին տեսիականել. վանորոյ ասէ: “ Նոյն ինքն
» Քրիստոս ՚ի սահմանելոյն Աստուծոյ և փրկանօք ար-
» եան իւրոյ է տէր ամենայն մարդկան՝ ազատիչ ՚ի մե-
» ղաց և ՚ի գերութենէ սատանայի, որով իրաւունք
» եղեն նմա զամենեսեան միօրինակ գթով ընդգրկել,
» և զամենայն յուսացեալս իւր տիրաբար ինամել
» իբրեւ զծառայս հաւատարիմ, արդարացուցանելով
» զնոսա և վրկելով ՚ի կարդալն առ նա »: Հռոմ. Ա. 360:
Այսպէս գրէ և ս: “ Կարգեաց Աստուած եկեղեցւոյ
» գլուխ զՔրիստոս ՚ի վերոյ ամենայնի՝ որք անկ են
» և պէտք եկեղեցւոյ, առ ՚ի նախանամել եկեղեց-
» ւոյ զամենայն բարիս, առ ՚ի կատարել նմա զամենայն
» մատակարարութիւն որ ճշմարիտ գլխոյ վայելէ, ոչ
» պակասեալ իւրեք ՚ի մի ինչ իրս, այնինքն է լուսաւո-
» րել զեկեղեցի, պաշտպանել զօրացուցանել զարդա-

» րել՝ ընտիրօք և փառաւք, ուղղել և դասել, կամ այս
» պէս կարգեաց զնա գլուխ ընդհանրական և ինքնիշ
» խան լստ ամենայն գործոց, և տեղւոյ և ժամանա
» կի, ծայրագոյն կառավար, և հրամանատար միահե
» ծան, որում այլք ամենեքեան են փոխանորդ կամ
» պաշտօնեայ »: Հպտր. Բ. 507:

Աստուծմ առաւել զրաբանութիւն է, և արտաքոյ կարգի և կրօնի քրիստոնէութեան՝ փառասիրութիւն Թ. Պիոս պապին այն համառօտապէր տետրակին մէջը գրած պահանջմունքը արեւելեան եկեղեցիէն և ա մեն քրիստոնեայ ազգերէն առանկ գրելով. ինչպէս վերն ալ յիշեցինք, և անոր եղծուծիւ ալ տեղը գրոց վկայութեամբ տուինք, Թողլ այս տեղս ալ տեսնուի այն անհիմն խօսքերը, որ կը գրէ երես 7: « Ուրեմն
» Արեւելցւոց, որով մարդասիրապէս և փութաջան
» յորդորեցինք զնոսա որ ի կաթուղիկէ վարդապե
» տութեան գառնալու ջանան, փութան: Ու
» րանկ Թէ բոլոր ազգերուն երկնաւոր հնարքները
» անսալով՝ մերոյ Թիւններէն ուրանալով հլուԹեան
» և վարդապետութեան հոգւով ի մի միայն Քրիստոսի վա
» րդապետ գառնար, ուսկից բոլորովին հեռու է. ով որ
» չի վարձանիր այս տեղը Պետրոսի աԹոռից հետ,
» յորմէ առ ամենեսեան կը ծաւալին գերագոյն հա
» զորութեան իրաւունքը, որում ընծայելի է ամե
» նայն հնազանդութիւն և պատիւ, և առ բոլոր ե
» կեղեցին՝ այսինքն ամեն դիէն հաւատացեալք պետք
» է որ գան, միանան ժողովին իրեն գերագոյն գլուխ
» հաւատոյն համար »:

Այս գիտեմ համարձակ սիրելի ընթերցող, դուն ալ պիտի ըսես ինձի, Թէ որ այս հրաւիրանաց ձայները կ'առնեմք. հերյո-ած և հերեթիկոս անուն կու տան մեզի: Չեմ մի գիտեր սիրելի. մարմնոյն ցաւը

գլուխը կ'ըսէ, մարմնոյն անարգութիւնը գլխոյն կը վերաբերի. սէս մեր եկեղեցւոյն գլուխ Յիսուս Քրիստոսը կ'ընդունինք. ապա մեր եկեղեցւոյն հալածմունքը և անարգութիւնը անշուշտ առ Քրիստոս կը վերաբերի: Յիշէ, Սաւուղն Քրիստոսի եկեղեցին հալածած ժամանակը այն հալածմունքը Յիսուս իւր վրան առնելով կ'ըսէր. "Սաւուղ Սաւուղ, ընդ հալա՞ ես զես զիս": Գործ. թ. 4: Այսն ըլ այն ժամանակները անանկ մէկ յարաբերութիւն մը չունէր եկեղեցւոյ էր սեանուերը, ոչ առաքեալներէն և ոչ առաքելոց աշակերտներէն, այլ միայն Քրիստոս Յիսուս կը ճանաչէին ընդհանուր եկեղեցւոյն առնակալ և առնակալ գլուխ, և ըլ միայն հովիւ քաջ բանաւոր հօտին. վասնորոյ հաւատացելոց հալածուիլը, նեղուիլը, չարչարուիլ և անարգուիլը՝ Յիսուս իրեն կ'ընդունէր:

Արդ՝ քանաւ չորսմիր և ջրաւիր Հայոց ուղղափառ եկեղեցին անանկ հնարուած հերձուածողութեան ձայներէն, որ Հռոմայոյ այժմեան պապերէն եկած կ'ըլլայ. վասն զի Յիսուսի Քրիստոսի միրելի աշակերտներն ալ, և հրէից ազգէն ճշմարիտ հաւատացեալները կը լսէին անանկ ձայներ, ինչպէս կը կարդանք Գործք առաքելոց սուրբ գրքին մէջը. ինչու որ երբ Պօղոս առաքեալը յայտնի քարոզել սկսաւ Յիսուսի Քրիստոսի ճշմարտութիւնը՝ բոլոր հեթանոսական ճշմարտութեանը հակառակողները, քահանայապետները, դպիրները և փարիսեցիները Հռաքելոյն վրայ, որով կ'ուզէին մեռցունելու վճիռ առնել. անոր համար Հնանիա քահանայապետը ժողով մը կազմեց փարիսեցիներէն կեղծաւորներէն և դպիրներէն, և ատոնք հետը առաւ և Տերտուղիանոս ճարտասանոյն ալ ընկեր առին՝ ու ներկայացան Փեղիքս դատաւորին առջեւը և սկսան դանդատիլ և բողոքել Պօղոս առաքելոյն համար, մանաւանդ արժանի դատելով՝ ըսպասրատեցին, որ մեր հրէայ

ազգը կը խոտվէ, և ամենուն մոռքերը կ'այլայլէ, և այն խօսքն ալ ըսին այն լերը .զսպարտաղնելը, որ այս պօ- ղոսը առաջնորդ եղած է նազովեցնելուն հերձուա- ծողութեանը: Այս խօսքավ Քրիստոսի աշակերտները հերձուած բաժնուած անուանեցին. ինչու համար, վասն զի այն հրէայները որ հաւատացին Քրիստոսի, արբազան առաքեալներուն քարոզութիւնովը սուրբ Ա- ստուածին ճշմարտութեանը հետեւեցան, ըստ ամե- նայնի բաժնուեցան հին օրինաց քահանայապետներէն և անոնց բռնակալութենէն, մանաւանդ մերժեցին ա- նոնց անպիտան խրոխտ իշխանութիւնը, վասնզոյ ա- նոնց առջեւը հերձուած անուանեցան, ինչպէս որ ը- սին Պօղոսի համար. "Քանզի գոտաք զայրս այս ապա- "կանիչ և խռովիչ ամենայն հրէից՝ որք են ընդ ամե- "զերս, և առաջնորդ նազովեցելոց հերձուածոյն": Գործ. ԻԴ. 5:

Թէպէտ անունք հերձուած անուանեն, բայց մեր աեր Յիսուս Քրիստոսը այն հաւատացեալները իրեն ճշմար- տութեանը աշակերտ կ'ընդունի, և իրեն հոգեւոր և յաւիտենական փրկութեան ազատութեան շնորհա- ցը հաղորդ ընել կը խոստանայ. "Եւ ասէր Յիսուս "առ հրէայն հաւատացեալս, եթէ դուք կացջիք ի "բանի իմում, ճշմարիտ աշակերտք իմ էք, և ծանիջիք "զճշմարտութիւնն, և ճշմարտութիւնն ազատեսցէ "զձեզ": Յօհ. Ը. 31—32:

Այս օրինակ դասուն մէն է այժմեան Թ. Պատ- պասին ըրածն ալ, զինքը ճանչցողը իբրև անխախտ հը- բամայող և ընդհանրական գլուխ եկեղեցւոյն Քրիստո- սի, ու իրեն հնազանդողները ուղղափառ կ'անուանէ. բայց չընդունողը չճանչցողը հերձուած և հերետիկոս կը հռատարակէ, որ ըստ ամենայնի սուրբ Աստուա- նին հակառակ է, որմէն սուրբ Աստուածին ժէջը տասնեակ մեկ դարութիւն մը չտեսնուիր Յիսուս Քը-

բիատոսէն և սրբազան առաքեալներէն ասանկ մէկ ան-
տեղի վարդապետութիւն մը չը լսուիր, որն որ այս
այժմեան պապերէն միայն կը լսեն ուղղափառ քրիս-
տոնեայները՝ մանաւանդ Հայոց ուղղափառ եկեղեց-
ւոյն բարեպաշտ ժողովուրդը այսօրուան օրս այս ա-
ռենախօսը դատումը։ Ընդէն այժմեան Հռովմայու
պապերը սխեզերական սուրբ ժողովքները անգամ բը-
նաւ չեն նկատեր՝ թէ որոնց կ'ըսուի հերձուած և մո-
լորեալ։ Սուրբ ժողովները անոնց կ'ըսէին հերձուած
և մոլորեալ, որ քրիստոնէական սուրբ հաւատոյ ու-
ղափառութեանն, աւետարանական և առաքելական
բացայայտ ճշմարտութեան և ուղղափառութեան կը
հակառակէին. ինչպէս մէկ քանին դնենք այս տեղ՝
որ ճանչնան հիմակուան Հռովմայու պապերը հեր-
ձուածները հերետիկոսները։

Նիկիոյ սխեզերական սուրբ ժողովին մէջ հերձուած
և հերետիկոս անուանեցաւ չարաչար ամբարշտեան
Արիոս, վասն զի ուրացաւ Յիսուսի Քրիստոսի համա-
գոյ աստուածութիւնը և յաւիտենական ծնունդը.
վասնորոյ չէր դաւաներ զնա որդի Աստուծոյ հաւա-
սար համագոյակից Հօր և սուրբ Հոգւոյն, այլ կը
բարբանջէր Յիսուսի Քրիստոսի համար՝ օտար մէկը և
արարած մը։ Ասոր համար պիղծն Արիոս և հետեւող-
նորին՝ Արիանոսեանք, հերձուած, հերետիկոս և մո-
լորեալ վճռուեցան սխեզերական սուրբ ժողովին մէջը
և նզովիւք դատապարտեցան։

Այսպէս ալ հոգեմարտն Մակեդոն՝ ուրացաւ Հոգ-
ւոյն սրբոյ աստուածութիւնը. չէր խոստովաներ հա-
մագոյակից Հօր և Որդւոյ զսուրբ Հոգին Աստուած.
այլ օտար աստուածային բնութենէն և ստացական և
ծառայ և պաշտօնեայ, ևայլն։ Ասոր համար կոստան-
դնուպօլսոյ սխեզերական սուրբ ժողովին մէջը իրա-
պէս հերձուածող և հերետիկոս և մոլորեալ վճռուե-

ցաւ հոգեմարտն Ստեփանոսի և հետեւողք նորին մխ
լորութեանն։

Այսանկ ալ Նիկեասի սիեզերական սուրբ ժողովին
մէջ հերձուած, հերետիկոս և մոլորեալ դատապարտ
տեցաւ իրաւամբ ժանտախորհուրդն Նեստոր, որ ու
րացաւ վրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի իսկապէս
որդի Աստուծոյ և որդի մարդոյ ըլլալը, վասն զի չէր
խոստովաներ Յիսուս Քրիստոսը ճշմարիտ Աստուած,
և որդի Աստուծոյ, այլ աստուածային մարմնին Յի
սուսի՝ միայն բնակարան աստուածութեանն կը բար
բանջէր. վասնորոյ սուրբ կոյսն Մարիամ չէր խոստո
վանէր Աստուածածին՝ այլ Քրիստոսածին և մարդա
ծին, ինչպէս որ հիմակ ալ նորագանդ բողոքականները
սուր աղանդին ընտանութիւն և պաշտպանութիւն ը
նելով՝ Աստուածածին չեն ըսեր, Ամեներանելալ սուրբ
կուսին Մարիամու համար, որով գաղտնի Նեստորա
կան ըլլալնին յայտնի կ'ընեն, և այս ալ քարի և ուղ
ղափառ քրիստոնեայները կարող պիտի ըլլան իմանա
լու և խորշելու անոնցմէ։

Սոցին նման երեւեցաւ ամբարիշտն և պիղծն Եւ
ոիքէս, որ վճռեցաւ յայտնի հերձուածող հերետիկոս
և մոլորեալ. վասն զի այս հերետիկոսապետը ուրա
ցաւ Յիսուսի Քրիստոսի աստուածային և մարդկա
յին երկու բնութիւնը և անշփոթ միաւորութիւնը։

Վասնորոյ և մեք ձայնակից եղեալ սուրբ ժողովոց
կը հերքեմք և կը մերժեմք այս ամեն հերձուածները
և հերետիկոսները, աղանդապետները և անոնց չա
րահնար աղանդները և հետեւողները. և կ'ընդունիմք
սուրբ և սիեզերական ժողովներով հաստատուած ու
ղափառութիւնը և անմոլար կը հետեւիմք անոնց քա
րեպաշտութեանը, որոնք մեղի վարդապետեցին և ու
սուցին, աստուածաշունչ սուրբ գրովք հաստատելով.
ինչպէս մեր ուղղափառ սուրբ եկեղեցւոյն բերնէն կը

Խօսի Վրիտորիս հոգեելոյ կաթուղիկոսին, որ յիշեալ
սուրբ ժողովները սասանկ կ'սկսի գրել ։ "Վասն այնորիկ
» և համարձակութեամբ նզովեմք զսա 'ի նոցանէ նը-
» զովեալ հերձուածոցն, զոր՝ որ ոչ սասց զՎրէ-
» 'ի բնութենէ Հօր, զԱկեդոն՝ զի հայհոյեաց զՀո-
» գին սուրբ. զՊօղոս Շամշտացին և զնեստոր՝ նորին
» հերձուածոյն նորոգիչ, որ մարդ դուզնաքեայ սաս-
» ցին զաստուածն մեր, և զսէր Յիսուս Քրիստոս,
» յարակայութեամբ և հաճութեամբ շարայարեալ
» Անստուած և ոչ անճառ և աքանչելի միաւորու-
» թեամբ ։Նզովեմք և զամբարիշտն Նեստորէս՝ որ զմի
» ութիւն աստուածութեանն և մարմնոյն չխոթմամբ
» դաւաներ, և ոչ յատկութեամբ 'ի հայեցողութիւն
» բնութեանց. ընդունիմք իսկ և երկակիսմք սուրբ
» և աստուածազգեաց հարցն՝ որք այսոցիկ հերձուա-
» ծոցս մահու չափ ճգնեալ հակառակ կացին և զուզ
» զափառ հաւատ աստուածաշունչ վարդապետու-
» թեամբն իւրեանց եաուն մեզ, զորս առեալ ընկա-
» լաք, և միշտ ընթերցմամբ 'ի նոցին աշակերտու-
» թիւնն փութամք գտանել անմոլար » ։ Ընդհան. Տիպ.
պօլս. երես. 113։

Չհամակ թող տրվին այժմեան պապերը, թէ ոմ որ
կ'անուանին հերձուած, հերետիկոս և մոլորեալ, ա-
նոնք՝ որ կը մոլորին և կը սխալին 'ի բանս հաւատոյ,
և կը հերքեն կը մերժեն աստուածային և առաքելա-
կան ճշմարտութիւնը՝ յայտնի հակառակելով, և տիե-
զերական սուրբ ժողովքներուն մէջ ալ ոխտի քննուին,
և երբոր յամառեալ մնան նոյն ազանդին և մոլորու-
թեանը մէջ յայնժամ պիտի անուանին իրաւամբ հեր-
ձուած, հերետիկոս և մոլորեալ։

Թող տրվին սրբազան առաքեալներէն Հռոմայու-
այժմեան պապերը. աշխարհային բռնութեան չար ո-
գին մերժելով իրենցմէ՝ մոխիկ ընեն Պօղոս առաքելին,

որ կը գրէ Տիտոս աշակերտին. « Յառնէ հերձուա-
» ծողէ, յետ միանգամ և երկիցս խրատելոյ՝ հրաժա-
» րեալիր » : Տիտ. գ. 10 : Կը հարցունեմ պապերուն, և
կամ այս Թ. Պետս պապին. արդեօք այս հերձուած-
ները որոնք էին, և կամ ով կրնան ըլլալ, մինչէ կա՞ր
այն ժամանակը պապականութիւն, մինչէ սրբազան
առաքեալները տասնկ մէկ չինծու քրիստոնէական մի-
ութեան կեդրոն Հռովմայոմ մէջ հաստատած ունէին,
և կամ հիմակուան պապերուն պէս աշխարհի Թագա-
ւորութեան Թագ գլուխնին դրած, զօրք և զօրապետ
և սուր՝ ի ձեռին՝ առաքեալներէն մէկը կա՞ր ի, Հռով-
մայոմ մէջ բազմուած նստած ու պարծենցող, Թէ ես
եմ ընդհանուր տիեզերական եկեղեցւոյն Քրիստոսի
ընդհանրական գլուխ և ամենուն վրայ իշխող հրամա-
յող և տիրող, և կամ սրբազան առաքեալները մինչէ
կը քարոզէին, որ Հռոմ է մայր հաւատոյ, հեռեւա-
բար Թէ հերձուած և հերետիկոս են անոնք որ Հռո-
մայոմ այսպիսի իշխանութեանը հնազանդ չեն, և
կամ չեն ընդունիր: Ինեմ որ անշուշտ պիտի ըսեմ որ
ատանկ անոսի վէճեր չիկար այն ժամանակը. ապա
որոնց կ'ըսէին հերձուած և կամ հերետիկոս. սուրբ
Ժողովներուն և սրբազան առաքեալներուն մտիկ ը-
նենք նէ՝ պիտի լսենք և ըսենք, որ անոնք կ'ըլլային և
կ'անուանէին հերձուած և հերետիկոս, որ մոլորեալ
էին ի բանս հաւատոյ և ուրիշներն ալ կ'ուզէին մոլո-
րեցունել, և չէին հնազանդ ուղիղ վարդապետու-
Թեան առաքելոց: Ինչպէս փարիսեցի հաւատացեալ
ներէն քրիստոնէական շնորհաց և աւետարանական
ազատութեանը ըստ ամենայնի հակառակ, կը պնդէ-
ին որ՝ Թլփատութիւնը հաստատեն, և Մովսիսական
խորական ծանրաբեռն օրէնքները պահուին ըստ այնմ,
« Յարեան ոմանք ի հերձուածոյն փարիսեցւոց հա-
» ւատացեալ, և ասեն՝ Թէ պարտ է Թլփատել զդա-

» ատ, և պատուիրել պահել զօրէնսն Մովսէսի » . Գործ. ԺԵ. 5։ Եւ հաւատացեալներուն մէջը Պաղուկեցիները տեսնելը մեռա տաքելոց ժամանակը, ու շատերը սկսան մոլորեցունելու ի քրիստոսական ճշմարտութենէն հաւատոց, որ կը քարոզէին թէ՝ ոչ վերջին պատաստան կայ, և ոչ ալ յարութիւն մեռելոց. ինչպէս Պօղոս առաքեալը համառօտ և ազդու քարոզութիւնով կը խրատէր զանոնք ասանկ սկսելով. « Արդ » եթէ Քրիստոս քարոզի, եթէ ի մեռելոց յարուցեալ է, զիա՞րդ ասեն ոմանք ի ձէնջ թէ՝ յարութիւն » մեռելոց չկայ։ Եթէ յարութիւն մեռելոց չկայ, ապա » և Քրիստոս չէ յարուցեալ » ։ Ա. Կորն. ԺԵ. 12։ Անոնք կ'ըսուէին իրական հերձուածք ի բաց հաւատոց և մոլորեալք. ասանկները կ'ուսուցանէին ընդդէմ և հակառակ վարդապետութեան առաքելոց և աւետարանական ճշմարտութեան. ասանկներէն հեռու մնալու համար աղաչելով կը գրէր Պօղոս առաքեալը բարեպաշտ հաւատացեալներուն։ « Աղաչեմ զձեզ եղբարք » զգուշանալ զայնպիսիսն՝ որ հերձուածս և գայթակղութիւնս » ի հակառակ վարդապետութեանն՝ զոր » դուք ուսարուք, և խորշեցարուք ի նոցանէ » ։ Հռով. ԺԶ. 17։

Պարզ այս ալ տրվին, որ հերձուած և հերետիկոս որո՞նք կ'ըսուին. անոնք պիտի անուանին հերձուած և հերետիկոս՝ որ առաքելոց քարոզութեանը և վարդապետութեանը յայտնի հակառակելով՝ գայթակղութիւն կուտան հաւատացեալներուն. ինչպէս որ բազան առաքելոց ժամանակը անգամ ասանկներ երեւեցան, որոնցմէ հեռու մնալու և հաղորդակցութիւն չընելու աստիկ պատուէրներ կուտային հաւատացեալներուն առաքեալները։ « Եթէ ոք գայցէ » առ ձեզ և զվարդապետութիւնս զայս ոչ ունիցի, » մի ընդունիցիք զնա ի տուն, և մի ողջոյն տայցէք

» նմա, և որ ասասցէ նմա՝ ողջոյն, կցորդ լինի չար-
» եաց գործոց նորա »: Բ. Յօհ. Ա. 10: Այսր պէս ե
պօղոս աւաքելոյն պատուէրներն ալ: Տիտ. Գ. 10:
Հռովմ. ԺԶ. 17:

Այդ՝ ասանկ աղանդապետները և աղանդաւորնե-
րը կ'անուանին հերձուածք և հերետիկոսք և մոլոր-
եալք, որոնցմէ մէկ քանին հարկ կ'ըլլայ մեզի ցոյց
տալ այս տեղս ներկայ դարերուս պատերուն, որ
ճանչնան հերձուածները, հերետիկոսները և մոլոր-
եալները, որպիսիք էին՝ Հիմենոս և Փելետոս, Հե-
մենեանք և Փեղիտեանք, որք ուրացան Յիսուսի Քր-
իստոսի վերջին դատաստանը, և մեռելոց ընդհանրա-
կան յարութիւնը. վասնորոյ բանադրուեցան պօղոս
առաքեալէն: Ա. Տիմ. Ա. 20. և Բ. Տիմ. Բ. 17: Կախարդ
Սիմոն և Սիմոնեանք, որ Աստուծոյ ճշմարտութիւնը
և ամենակարողութիւնը դիւական հնարքներով մեր-
ժել և մոռցունել կ'ուզէին հուսատացեալներուն, որ-
պէս զի ամենքը իրենք զիրենք՝ և իրենց մոլորութիւ-
նը պաշտեն: Կերինթոսի և Նեստորի, Կարպոկրա-
տէսի և Նարկիսոսի, որք միոյն Աստուծոյ ամենակա-
լին արդարութիւնը և բարերարութիւնը խանգարե-
լու և եղծանելու ժպրհեցան, և քրիստոսական սուրբ
հաւատոյ ճշմարտութիւնը խախտանելու և անարգե-
լու յանդգնեցան, և յայտնի հակառակելով աստուա-
ծաշունչ սուրբ գրոց՝ համարձակ անկրօնութիւն կը
քարոզէին:

Ենսիղիպէս և Սաղենտինոս. այս հերետիկոսա-
պետները դառնապէս անօրինելով՝ մոլեգնաբար բազ-
մաստուածութիւն հնարեցին, երեսուն յաւիտենա-
կաններ ստեղծաբանելով երեսուն աստուածք շաղ-
փաղփեցին. այս ամենը այլովքն հանդերձ կը գրէ
սուրբն Կիւրեղ Նշտուսաղէմայ հայրապետն ի կոչուածն
ընծայութեան գԼ. Զ:

Ընտրեալ Թող համոզուին այժմեան պատերը, ճանչնալու աղանդապետները և աղանդաւորները, և երբ անոնց վրայով խօսելու և գրելու ըլլան՝ իրաւամբ կրնան անուանել զանոնք հերձուած, հերետիկոս և մոլորեալ, մանաւանդ այս Թ. Պետ պատը համառօտ տագիր սեռրանիներ ցրուելէն յառաջ պէտք էր որ՝ Ոչմը կարդար և սորվէր Հռովմայու եկեղեցւոյն մեծ վարդապետ Օգոստինոսին հերձուածոց և հերետիկոսաց համար գրածը և ըրած քննութիւնը, որուն մէջ յայտնի կ'ընէ Թէ՝ որոնց կ'ըսուի հերձուած և հերետիկոս. ինչպէս որ Սիմոնեաններէն կ'սկսի մինչև Պելիգեաններուն կուգայ. Օգոս. Նաւ յաղագս հերձուածոց՝ առ Կուսդվուլտդէոս։

Հայց կարծեմ որ՝ Օգոստինոսի, Ընթանասի, Բարսղի, Տրիգորի Նիւսացւոյն, Վիկտորինոսի Տիրիկեցւոյն և Տիդիմոսի գրած ճառերը հերձուածոց և հերետիկոսաց համար վերստին կարդալու ըլլայ այս Թ. Պետ պատը, չի պիտի համարձակի հերձուածողութեան և հերետիկոսութեան սլաքներովը և նետերով վը Հայոց եկեղեցւոյն համբերատար սիրտը վիրաւորելու։ "Նետք տղայոց՝ եղեն վէրք նոցա, տկարացան "ի նոսա լեզուք նոցա, և խռովեցան ամենեքեան, "որք հայէին ընդ նոսա "։ Սաղ. ԿԹ. 8։ Հայց այս ուրիշ պատճառաւ չէ, այլ իրեն ժողովուրդ որսալու համար, և ինքզինքնին մեծցունելու, և Քրիստոսի փրկարար արեամբը գնեալ բոլոր հաւատացեալներուն վրայ իշխելու և տիրելու համար իբրեւ նոյն ինքն Յիսուս Քրիստոս. ահ անտանելի ժպրհութիւն. որով մեծամեծ գայթակղութիւն կը պատճառի. արդեօք այս պապերը չե՞ն մի հեղինակ ըլլար ուղղափառ քրիստոնեայներուն մէկմէկու թշնամութեան և ատելութեան աչք նայելու, համազգիք զհամազգիսն, եղբայրք զեղբարս, բարեկամք զբարեկամն հերձուած և

հերետիկոս կանչելու։ Ա. այս աստեղութեան չար ոգին
չէ որ կենարարին մերոյ Յիսուսի Քրիստոսի եղբայր-
սիրութեան պատուէրը և հրամանը խանգարել և
մերժել կուտայ. և ով որ այս աստեղութեան չար ոգին
ունի՝ հարկաւ աստեղութիւնը հաստատել՝ և քրիստո-
սական սէրը մերժել կը նայի։ “ Պատուիրան նոր տամ
” ձեզ, զի սիրեսջիք զիմեանս, որպէս սիրեցի ես ըզ
” ձեզ, զի և դուք սիրեսջիք զիմեանս ”։ Յօհ. ԺԳ. 34։

Ինչու համար այս Թ. Պետ պապը կը հակառակի
Քրիստոսի հրամանացը և պատուիրանացը, ու ասով
պարտաւոր կը գտնուի ամեն քրիստոսական օրէնքնե-
րուն. ըստ այնմ։ “ Ով որ զամենայն օրէնսն պահիցէ
” և միով իւրիք գթիցէ, եղեւ ամենայն օրինացն պար-
” տապան ”։ Յակ. Բ. 10։

Ինչու համար է որ՝ հեղինակ և օրինակ չունենար
իրեն մտացը առջեւը Պօղոս և Պետրոս սրբազան ա-
ւաքեալները, որոնք որ կը պատուիրեն։ “ Ես մի ու-
” մեք պարտապան գտանիցիք, բայց զիմեանս սիրե-
” լոյ, զի որ սիրէ զընկերն՝ զօրէնսն կատարէ։ Հռով.
” ԺԳ. 8։ Նախ քան զամենայն՝ սէր սերտ ունել ընդ
” միմեանս ”։ Ա. Պետ. Դ. 8։

Վնասէք բարեմիտ ընթերցողք, թէ որ այժմեան
պապերը իրենց հեղինակ ունենան Պօղոս և Պետրոս
սրբազան առաքեալները, հարկաւ պիտի ստանան ա-
նարատ մաքուր սիրտ, որ եպիսկոպոսի, Ա. տուածոյ տա-
նը տնտեսի կը վայելէ. պիտի չունենան յանդգնու-
թիւն, խրոխտ հոգւով բարձրամտութեամբ փառաց
ցանկանալու՝ յամառեալ մնալով իրենց թիւր և ծուռ
դատմանը վրայ. պիտի չըլլան թշնամանող՝ նախատե-
լով ուրիշ ուղղափառ քրիստոնեայները, որ զիրենք չեն
պաշտեր իբրեւ զՔրիստոս, չըլլան պիտի հարկանող
և սպանող գաւազանաւ կամ լեզուաւ առանց քննու-
թեան կշռամբեելով, հերձուած և հերետիկոս անուա

նելով. չունենան պիտի զօշաքաղութիւն, որ է ցանկութիւն անյագ արծաթ և ոսկի հաւաքելու։ “Ո՛վ
» պարտ է եպիսկոպոսին անարատ լինել, որպէս և Աստուծոյ տուծոյ անտեսի, մի յանդուգն, մի բարկացող, մի
» թշնամանող, մի հարկանող, մի զօշաքաղ»։ Տիտ. Ա. 7։
Այժմեան պապերուն ընթացքը ըստ աւետեայնի հակառակ է այս առաքելական բարուք և ուղիղ կանոնադրութեանց. նայէ, մաքուր սրտին խաղաղութեան, քաղցրութեան և սիրոյ մաքուր խորհուրդները պիտի յառաջ գան, և ոչ թէ դառնութիւն չար կրից, նախանձու, փառաց, աւերութեան և խռովայոյզ բագդիտ խորհուրդներ, որով Աստուծոյ ճշմարտութիւնը կը խափանի, և այս վատ խորհուրդներուն մէջ չքնաղիկը Աստուծոյ հեզութեան և ճշմարտութեան սուրբ Հոգին, այլ երկրաւոր, զնչաւոր և դեւական չար ոգին կը սիրէ. ըստ այնմ։ “Որ ունի նախանձ և հանճարեղ ի ձեզ, ցուցցէ ի բարուք գործոց զգործս իւր հեզութեամբ իմաստութեանն։
» Այլ եթէ նախանձ և դառնութիւն և հակառակութիւն ունիցիք ի սիրտս ձեր. մի պարծիք ստութիւն զճշմարտութիւնն, ոչ է իմաստութիւնդ այլ իջեալ ի վերուստ, այլ երկրաւոր զնչաւոր և դիւական է»։ Յակ. Գ. 14—15։

Հիմայ նայէ այս Թ. Պիոս պապին պղտոր և վատ խորհուրդներուն պտուղը՝ որ ճաշակողները պիտի ըզգան նորանոր աւերութեան, խռովութեան, և զըրպարտութեան դառնութիւն մը, տես սաոր մեծ յանդգնութիւնը, որ Հայոց ազգին ընդհանուր մեծ մասին եռեւէ ինկած է, և կը ջանայ որ ինքզինքը պաշտել տայ Յիսուսի Քրիստոսի պէս, և իրեն Հռովմայեցի մանաւոր եկեղեցին կ'անուանէ ընդհանրութեան հաւաքող և կաթուղիկէ սիեզերական, իշխող ի վերայ ամենայն ազգաց եկեղեցեացն Քրիստոսի, որ

այս ընդհանուր սիեզերական իշխանութիւնը, որ կա
ծուղիկեսութիւն ալ կ'ըսվի, միայն Յիսուսի Քրիստոսի
վրայ է, և հայր Աստուած նախասահմաներ է այսպէս,
ինչպէս կը կարդանք առաքելոյն, և ասանկ
համոզուած պիտի ըլլան ուղղափառ և բարեպաշտ
քրիստոնեայները. "Հայր՝ հասեալ է ժամ, փառաւո
"րեա զորդի քո, զի և որդի քո փառաւորեսցէ զքեզ:
"Որպէս եռուր իշխանութիւն ի վերայ ամենայն
"մարմնոյ": Յով. ԺԷ. 1—2: Թող այս մասին աղէկ մը
լուսաւոր մտաց աչք նային մեր հայազգի պապական
եղբայրները, ինչպէս որ մենք մեր ուղղափառ աչք կը
նայինք, և սիեզերական ընդհանրական կաթուղիկէ
ութեան կատարեալ իշխանութիւնը ի վերայ աստուա
ծային վրկարար անձին Յիսուսի Քրիստոսի կը խոս
տովանինք, այն ընդհանուր իշխանութիւնը կ'ըսեմ,
որով պիտի դատաստան ընէ. "Եւ իշխանութիւն եւ
"նմա դատաստան առնել, և զի որդի մարդոյ է":
Յով. Ե. 27: Այս ընդհանուր Յիսուսի Քրիստոսի իշ
խանութեանը համար չէ որ՝ Նոյի մարգարէացած
էր, և Պօղոս առաքեալը անկէց վկայութիւն բերելով
կը գրէ Հռովմայեցւոց. "Եւ դարձեալ Նոյի ասէ,
"եղիցի արմատն Յեսեայ, և որ կանգնելոցն է իշխան
"հեթանոսաց, և ի նա հեթանոսք յուսասցին":
Հռով. ԺԵ. 12: Եսայ. ԺԱ. 10: Պետրոս արքայական ա
ռաքեալը այս ընդհանրական իշխանութիւնը Յի
սուսի Քրիստոսի յատկացեալ ըլլալուն համար կը գրէ
բացայայտ. "Եւ Աստուած ամենայն շնորհաց, որ
"կոչեցան զձեզ յիւր ի յաւիտենական փառսն Յի
"սուսիւ Քրիստոսիւ, նմա իշխանութիւն և փառք
"յաւիտեանս": Ա. Պետ. Ե. 11: Քրիստոսի այս փրկու
թեան իշխանութիւնը չէր որ՝ առաքեալներուն
քարոզութիւնովը և սուրբ Աւետարանին ճշմարտու
թեամբը քարոզեցաւ ամեն աշխարհի մէջ, և ամենքը

կը հրաւիրուէին հաւատով, յուսով և սիրով միաւորիլ ՚ի Քրիստոս Յիսուս, որ է մի միայն հոլիւ քաջ, որ իւր անձը իւր ոչխարացը վերայ դրաւ ։ Յօհ. ժ. 11 ։ Կը հրաւիրուին ևս Յիսուսի Քրիստոսի ճշմարիտ և հոգեւոր փարախը, որ է անոր աւետարանական ճշմարտութիւնը երկրի վրայ, և երկինքը՝ անոր աւետեանցական կալի փարախը, այսինքն է ուղղափառ և բարեպաշտ հաւատացեալներուն համար պատրաստուած արքայութիւնը, ինչպէս վերերը ասոր վկայութիւնները կարդացիր ։ Ընանկ է նէ այս քրիստոնէական ուղղափառ հաւատքին և աւետարանական ողջամիտ և ճշմարիտ վարդապետութեանը փարախէն դուրս մընացողները դատապարտութեան մէջ կորսուած են, ասոր համար կարօտ չենք ուրիշ տեղէ վկայութիւն բերելու. բաւական համարուած են մեր ուղղափառ Հայոց եկեղեցւոյ բարեպաշտ և հաւատարիմ անդամները Յիսուսի Քրիստոսի հրամանէն, որ տուաւ հաւատար ամենայն առաքելոց և աշակերտաց իւրոց ։ “ Երթայք յաշխարհ ամենայն, և քարոզեցէք զԱ- „ ւետարանն ամենայն արարածոց, որ հաւատայ և մկրտե- „ տեսցի կեցցէ, և որ ոչն հաւատայ, դատապարտեա- „ ցի „ ։ Մարկ. ԺԶ. 15—16 ։

Քրիստոսի փարախը թէ որ մարմնաւոր տեղով պիտի իմանանք՝ ինչ պէտք է Հռովմայու հեռաւորութիւնը երեւակայել, և շատ մը խօլական ցնորմունքներու մէջ թարթափիլ ու թափառիլ. թէ որ սուրբ Աւետարանին նայինք և հետեւինք, ուղղակի պիտի գտնանք մարմնաւոր տեղական փարախը Քրիստոսի սուրբ տնօրինական տեղեացը, այսինքն Երուսաղէմի մէջ առաջին Քրիստոսի փարախը կրնամք անուանել Ընթլեհէմի մսուրը, ուր տեղ մոգերը և հովիւները եկան երկրպագութիւն մատուցին Յիսուսի ։ Մտթ. Բ. 11 ։ Ղուկ. Բ. 20 ։ Իսա և սուրբ Սիօն վերնատունը՝

ուր տեղ ժողովեց սրբազան առաքեալները, և իրեն խրատները և հաղորդութեան խորհուրդը անոնց ա
ւանդեց։ Ցոհ. ԺԳ. 14—15—16։ Աւրեմն եթէ Նրուսա
ղէմը մարմնաւոր վարագ Քրիստոսի կոչեմք, քնաւ
չեմք սխալիր, վասն զի ինքն Յիսուս վկայեց որ պա
տիւ տամք Նրուսաղէմի "Ո՛վ քաղաք է մեծի արքայի"։
Մտթ. Ե. 35։ Թէ որ ասանկ վկայութիւն մը Նրուսա
յու վրայ ունենային այժմեան պապերը, Նրուսայու
հողերը և քարերը պիտի պաշտել տային մեզի, որ այն
մեծ Աքքան ալ իրենք իրենց վրայ պիտի մեկնէին։

Աւր եղաւ առաքելոց և հաւատացելոց առաջին
ժողովները. Նրուսաղէմ։ "Նա դուք նստարուք՝ ի
"քաղաքիդ Նրուսաղէմ, մինչև զգեստուցուք զօրու
"թիւն՝ ի բարձանց"։ Ղ-ի. ԻԴ. 49։ "Դարձան Նր
"րուսաղէմ ուրախութեամբ մեծաւ։ Անդ. ԻԴ. 52։

Աւրկէց սկսան առաքեալները աւետարանել Յի
սուս Քրիստոսը, և վկայել անոր փրկութիւնը, յա
րութիւնը և համբարձումը։ "Սկսեալ Նրուսաղէմէ
"Ղ-ի. ԻԴ. 47։ Նղիջիք ինձ վկայք Նրուսաղէմ"։
Գործ. Ա։ 8։ Թէպէտ արժան է տալ պատիւ Նրուսա
ղէմի, զի է տեղի փրկագործ անօրէնութեան տեառն
մերոյ Յիսուսի Քրիստոսի, բայց չենք համարձակիր
խոստովանիլ փարախ Քրիստոսի և կեդրոն փրկու
թեան մերոյ. ապա ճիր մնաց Հռոմայու գահը փա
րախ Քրիստոսի և փրկութեան կեդրոն ըլլալու։ Ա
րեւմն ըստ ամենայնի սխալ է պապերուն այս դրու
թիւնը, և միայն պարզամիտները որսալու, և իրենց
ժողովուրդ շահագործելու համար չինուած. որովհե
տեւ սուրբ գիրքերուն լուսաշաւիղ ճանապարհէն
դուրս ելլալով՝ գրած է Թ. Պետ պապը այն համա
ռօտագիր հանած տեսրին, երես 7. յիշելով առաջին
հանած համառօտագիր տեսրը։ "Դուք Նրեւելք Նրեւելք
"ուց, որով մարդասիրապէս և փութաջան յորդորե

» ցինք ղևրենք որ ՚ի կաթուղիկէ միութեան դաւա
» նութեանը դառնալու ջանան փութան։ Եւ երա
» նի թէ՝ բոլոր աղգերնիդ երկնաւոր Հնորհացը ան
» սալով՝ մոլորութիւններըը ուրանալով, հլութեան և
» միութեան հոգւով ՚ի մի միայն Քրիստոսի փարախը
» դառնար, ուսկից բոլորովին հեռու է. ով որ չմիա
» բանիր այս Պետրոսի սուրբ աթոռիս հետ, յորմէ
» աս ամենեսեան կը ճանալին գերագեծար հաղորդու
» թեան իրաւունքը, որում ընծայելի է ամենայն հը
» նազանդութիւն և պատիւ և աս բոլոր եկեղեցին այս
» ինքն ամեն դիէն հաւատացեալք՝ պէտք է որ գան
» միանան, ժողովին իրեն գերագոյն գլխաւորութեանը
համար »։ Այս անհիմն խօսքերուն մէջ ինչ գաղափար
նեը կը տեսնաս, թէ որ համառօտես, երկու տեսակ
քստմնելի գաղափարներ պիտի գտնաս, երկուքն ալ աս
տուածային բարերար կամացը շատ հակառակ. մէկը
փառասիրութիւն անչափ, և միւսը զրպարտութիւն
յայտնի. որ այս երկուքն ալ մեղք են մահացու։

Ա՛յինք անչափ փառասիրո՛ւն. որովհետեւ կը տեսնաս
որ Հռովմայու աթոռը անչափ բարձրացուցեր է, մին
չեւ Քրիստոսի աստուածային շնորհաց և փառաց աթո
ռին մօտեցուցեր է մի լսեմ, և կամ թէ հաւատարե
ցուցեր է. թէ որ գրածին նայինք, անշուշտ պիտի ը
սեմ որ՝ հաւատարչական բարձրացուցեր է, որովհետեւ
կը համարձակի այս թ. Պետ պատը ըսելու որ՝ “Յորմէ,
» այսինքն՝ (Հռովմայու աթոռէն) աս ամենեսեան կը
» ծաւալին գերագոյն հաղորդութեան իրաւունքը,
» որում ընծայելի է ամենայն հնազանդութի և պատիւ »։

Նայէ մէյմը այս խօսքը ուշադիր կը հակառակի Պօղոս
սրբազան առաքելոյն քարոզութեանը. վասն զի այս
երանելի առաքեալը մեզի ցոյց կուտայ և ամեն հաւա
տացեալց կը ներկայացընէ մեծ և յաւիտենական Քա
հանայապետին Յիսուսի Քրիստոսի աստուածային փա

ուաց և ընդհաց աթոռը. միայն անկէց պիտի ծաւալին կ'ըսէ, ու պարգեւին ամենուն սրբութեան, ընդհաց և փառաց աքանչելի և գերամեծար հաղորդութիւնը, և այն ընդհաց և փառաց աթոռին առջեւը յայտնուելու է ամեն քրիստոնեայներուն հնազանդութիւնը։ Ասոր համար նոյն երանելին պօղոս կը հրաւիրէ իրեն ճշմարիտ քարոզութիւնովը՝ մօտենալու հաւատով ճըշմարտութեամբ և համարձակութեամբ, և հաղորդ ըլլալու այս ընդհաց և փառաց Աթոռին ըսելով. "Ա՛ » ուիցո՛ւք այսուհետեւ համարձակութեամբ առաջի ա» թոռոյ ընդհացն նորա, զի ընկալցուք զողորմութիւն » և գտցուք ընդհա՛ ի դէպ ժամանակի օգնականու» թեան ». ԵԲր. Դ. 16։ "Ուր թէ այնպիսի ունիմք » քահանայապետ՝ որ նստաւ ընդ աջմէ մեծութեան » աթոռոյն յերկինս, սրբութեանցն պաշտօնեայ, խո» րանին ճշմարտութեան, զոր տէրն կանգնեաց, և ոչ » մարդ ». ԵԲր. Ը. 1—2։

Արդ՝ տես այս սրբազան Հաւքելյն ցոյց տուած Քրիստոսի փառաց և ընդհաց աթոռին մեր տալու պատիւը և հնազանդութիւնը հաւատով, յուսով և սիրով. այժմեան պապերն կ'ուզեն որ իրենց մարդկային խորհրդով բարձրացուցած աթոռին ընծայեմք, և այս սխալ պահանջմունքներուն համար համարձակութեամբ կը գրեն այս պարբերութիւնը։ "Յորմէ » առ ամենեսեան կը ծաւալին գերամեծար հաղորդութեան իրաւունքը, որում ընծայելի է ամենայն » հնազանդութիւն և պատիւ »։

Այս խօսքերը Յիսուսի Քրիստոսի սեպհականած երկնային ընդհածաւալ աթոռին փառքը և մեծութիւնը Հռովմայու աթոռին վերաբերելու յանդուգն ջանքերէ յառաջ եկած չէ՞ մի, այո՛ և յայտնի փառամոլութիւն և յանդուգն դժոխոց գահավիժման բարձ րամտութիւն։ "Ուր դու կափառնայուսմ, մի՛ մինչեւ

» յերկինս բարձրացիս՝ այլ մինչեւ ՚ի դժոխս իջցես »։
Մտթ. ԺԱ. 23։ “ Եւ դու ասեիր ՚ի մտի քումմ, եթէ յերկինս
» ՚ի վերոյ քան զաստեղս երկնից՝ արկից զաթոռ իմ,
» նստայց ՚ի լերինն բարձու, ՚ի վերոյ լերանցն բար-
» ձանց հիւսիսոյ, եւ ՚ի վեր քան զամպս, եղէց նը-
» մանող բարձրելոյն։ Բայց աւադիկ՝ ՚ի դժոխս իջցես,
» եւ ՚ի հիմունս երկրի »։ Եսայ. ԺԴ. 13—14—15։

Նայեցէք, տեսէք, համազգի սիրելիք, սրբազան առաքեալները կը քարոզէին, և ամենուն միտքը կը ջանային համոզել Յիսուսի Քրիստոսի հնազանդեցու-նելու և Աւետարանին ճշմարտութեանը հպատակ ը-նելու։ “ Ո՛խորհուրդս քակեմք, և զամենայն բարձ-» րութիւն հպարտացեալ ՚ի վերոյ գիտութեան Աս-» տուծոյ, և գերեմք զամենայն միտս ՚ի հնազանդու-» թիւն Քրիստոսի »։ Բ. Կորն. Ժ. 4—5։ “ Նկեղեցին » հնազանդ լինի Քրիստոսի »։ Եփես. Ե. 24։ “ Նա իբ-» րեւ կատարեցաւ՝ եղեւ ամենայն հնազանդելոց ի-» րոց պատճառք փրկութեան յաւիտենից և անուա-» նեցաւ Աստուծոյ քահանայապետ յաւիտենից ըստ » կարգին Մելքիսեդեկի »։ Եբր. Ե. 9—10։ “ Ի բոց հը-» րոյ առնուլ զվրէժս յայնցանէ՝ որք ոչ ճանաչեն զԱս-» տուած, և որ ոչ հնազանդին Աւետարանին տեառն » մերոյ Յիսուսի Քրիստոսի »։ Բ. Թես. Ա. 8։ “ Պա-» տասխանի եւս Պետրոս և այլ առաքեալքն՝ և ասեն, » հնազանդիլ պարտ է Աստուծոյ առաւել՝ քան մարդ-» կան »։ Գործ. Ե. 26։

Համակ այս տեղս ալ բաղդատեցէք, սիրելի հա-մազգի ընթերցողք, այս սրբազան առաքեալներուն փոյթը և ջանքն էր ամեն հաւատացեալներուն հնա-զանդութիւնը ընծայել Յիսուսի Քրիստոսի, ինչու որ լսած և տրւած էին Քրիստոսէն, եթէ “ Ո՛ր » ոչ հնազանդի Աստուծոյ, ոչ տեսցէ զկեանս, այլ բար-» կութիւն Աստուծոյ մնայ ՚ի վերոյ նորա »։ Յով. Գ. 36։

Իսկ այժմեան պատերը, մանաւանդ այս թ. Պետ պատը կը գրէ իրեն Հռովմայու աթոռին համար. « Ի րում ընծայելի է ամենայն հնազանդութիւն և պա տիւ »: Ընդ՝ Հայոց ազգին մէկ փոքր մասին պարզա միտները հաճեցուցեր են իրենց հնազանդեցունելու, բայց օրհնեալ է Աստուած, Հայոց ազգին մեծ ընդ հանուր մասը այս կուրօրէն հնազանդութենէն և մարդկային սխալական ծառայութենէն ազատ մնացեր են և կը մնան շնորհիւ սուրբ Հոգւոյն. ամենքը միայն Յիսուսի Քրիստոսի աւետարանական ճշմար տութեան լոյս ամենայնի կը հնազանդին, վասն զի հա մոզուած են սուրբ Աւետարանէն և սրբազան առա քեալներէն:

Ամանաւանդ Հայոց ազգը իրենց հոգեւոր հովիւ ներուն ուսնկեդիր և հպատակ կ'ըլլայ, որոնք որ քա րոզներ են և կը քարոզեն միշտ հնազանդ ընելու ա մենքը Յիսուսի Քրիստոսի և սուրբ Աւետարանին ճշմարտութեանը:

Այս մեր հոգեւորական հնազանդութիւնը առ Աստուած՝ ուսուցին մեզի սրբազան հայրապետք մերս եկեղեցւոյ. որպէս սուրբն Կիպրիան լուսաւորիչն մեր կը խրատէ: « Ունք ցուցցուք ի նեղութեան և յան » դորդու զհանդէս մաերմութեան մերոյ առ տէր, » և նա աննուազ զիւր պարգեւան շնորհէ մեզ, զի զա » մենեցուն զկեանն կամի, և ժառանգաւորն լինիլ ա » նանց փառացն և մեծութեան՝ որ ի Քրիստոս Յի » սուս ի տէր մեր »: Ցաճախ. ճառ. Զ:

Ու սուրբն Ներսէս շնորհալին մեր կը պատուիրէ առ դասս աշխարհական իշխանաց « Նոյնպէս և դուք » վասն զի բնութեամբ ծառայ էք Աստուծոյ, ծառա » յեցէք սեառն երկիւղիւ և հնազանդութեամբ, » զի մի պատուհասիցիք երբեք զապստամբեալս ի » սեառնէ, այլ որպէս զմաերիմ ծառայս պատիւ ընդ

» դուն ինձի յերկնաւոր Թագաւորին » ընդհանր : Եւ Սարկաւագն հնարհալին յորդորէ : “Ո՛վ որպէս յայնժամ » յերկնից յերկիր խոնարհեցար վասն անհնազանդու- » թեան և յերկիր կենցաղ մէջք մեր, նմանապէս և » այժմ դարձեալ յերկրէ՝ և ի մահկանացու վայրէս » յերկինս ելցուք, սակս պատուիրանացն Աստուծոյ » հնազանդութեան, և զանմահական կեանս առաք » ցուք և անցաւորքն զյաւիտենականն ժառանգես- » ցուք կենդանութիւն » : Ի մեկ . Ա . պեփ . ճ՟ . է . ցՂէ :

Եւ այսպէս ամենայն հոգեւոր հովիւք առաքն և աւղղափառ եկեղեցւոյն մեր՝ կը քարոզեն հնազանդիլ Աստուծոյ և աւետարանական ճշմարտութեանն Յիսուսի Քրիստոսի փրկչին մերոյ : Լերեմի Հայոց ոչխարին միտ և բարեպաշտ ազգը այս հոգեւոր և աստուածայայտ հնազանդութիւնը չկարեր փոխել և դարձնել աւ պապս Հռովմայու . միանգամ հրնազանդեր է Յիսուսի Քրիստոսի կոչմանը : Մտթ . ԺԱ . 28—29 : Եւ անոր ամենաքաղցր Աստուածային լուծին ծառայելու համոզուեր է . այլ այնուհետեւ Հռովմայու պատերուն ականջ դնելիք չունի , և ծառայութիւնը վատնելու կամք չունի . վասն զի քրիստոսական և առաքելական անժխտելի վկայութիւնը ընդունած և պահած է սրտին և մտքին մէջը , ուսուի մեկ Տէր , մեկ Փրկիչ , և մեկ Յիսուս Քրիստոս կը ճանաչէ : “Ոչ ոք կարէ » երկուց տերանց ծառայել , կամ զմին ատեայէ և զլ » միւսն սիրեայէ , կամ զմին մեծարեայէ , և զմիւսն արհ » համարհեայէ » : Մտթ . Զ . 24 : “Ո՛վ որ ի տէր կոչեցաք » եալ է ծառայն՝ ազատ տեառն է , նոյնպէս և որ ա » զատն կոչեցեալ է , ծառայն Քրիստոսի է , գնոց գլ » նեցայք , մի լինիք ծառայք մարդկան , խրատեանչիւր » ոք՝ յոր կոչումն կոչեցաւ՝ եղբարք , ի նմին կացցէ » առաքեալն Աստուծոյ » : Ա . կորն . է . 22—2 —21 :

Թ՝ոզ վատասիրութիւնով տեսրակները թերթերը լե-
ցուներն այժմեան պապերը անձնահաճ հպարտու-
թեամբ իրենց խաստութեանը վստահանալով՝ աւետա-
րանական և առաքելական ճշմարտութիւնները մեր-
ժելով, բայց ուղղափառ Հայոց եկեղեցին անարգ
պեղով՝ ինքնատեղծ հերձուած և հերետիկոս անուա-
նարկ խօսքեր հրատարակելով՝ չեն կրնար Հայոց ողջա-
միտ և բարեպաշտ ազգը խաբել, Թէպէտ և անոր
համազգի պարզամիտները մանաւանդ կարողացեր
են խաբելու. մանաւանդ որ՝ իրենք զիրենք և իրենց
ժողովքը խաբած պիտի ըլլան անշուշտ, Թէ որ կար-
դան և յիշեն Պօղոս սրբազան առաքելոյն գրածը, որ
այս պատերուն պէս անձնապարծ խրոխտացողներուն
համար կը գրէ. "Եթէ համարիցի ոք լինել ինչ և չի-
ցէ, զանձն իւր խաբէ" ։ Գաղ. 3։

Ետ՝ Թ. Պիտս պատկին գրած Թերթին մէջը եր-
կու տեսակ վատանշան գաղափարներուն ահա մէկուն
ծանօթ եղանք, որ էր հակառակութիւրը գրոց և առա-
քելական պաշտամանն ընտ ամենայնի անվայելուչ ան-
պարծութիւն ։

Միտ երկրորդ գաղափարն ալ նայինք, որ է զրպար-
տութիւն սուտալի, հակառակ ճշմարտութեան Հոգ-
ւոյն սրբոյ. ըստ որում անարատ և ուղղափառ Հա-
յոց եկեղեցին կ՝անուանէ հերձուած հերետիկոս և
մոլորեալ ։ Ձի յիշեր արդեօք Նասյի մարգարէին յան-
դիմանութիւնը. "Վ՝ոյ այնոցիկ՝ որք ասեցեն զչարն
" բարի և զբարին չար, որք դնեցեն զլոյս խաւար, և
" զխաւարն լոյս, որք դնեցեն զդառն քաղցր, և զքաղցրն
" դառն" ։ Եսայի. ե. 20։ Ձարաչար և կամակոր զրպար-
տութիւնը և ընդդէմ Հոգւոյն սրբոյ մեղանչութիւն
չէ մի այս դատումը. ջէ ապաքէն ասոր համար ըսած
եր տէր Յիսուս Քրիստոս փարիսեցիներուն. "Ամե-
" նայն մեղք և հայհոյութիւք Թողին մարդկան, բայց

» պհոպւոյ հայհոյութիւն մի թողուն » : Մարկ. ժբ. 31 :
Որոնք Յիսուսի համար չարաչար յանդգնելով կը զրպարտեին : " Նայց փարիսեցիքն իբրեւ լսեան՝ ասեն.
» ոչ իւիք հանէ դա զդեւս՝ եթէ ոչ Ներհեղզեբուղաս
» իշխանաւն դիւաց » : Մարկ. ժբ. 24 :

Նման սոսկալի զրպարտութիւն ընել տրված էին վնասունները՝ որոնց խրատ տուաւ տուրբ Յովաննէս Ոսկրափչիկը, երբ եկան անոր առջեւը և հարցուցին թէ՝ մենք ինչ բարի գործ ընենք. այն ալ լսաւ անոնց :
" Ոչ զոք խուիցէք և մի զոք զրպարտիցէք » : Ղուկ. գ. 14 :
Նախ շատ իրաւունք ունեցեր է Ղաւիթ մարգարէն աղօթիւք խնդրելու Նստուծմէ, որ զինքը փրկէ մարդկանէն զրպարտութենէն : " Փրկեա զիս 'ի զրպարտ-
» ութենէ մարդկան » : Սաղմ. ճԽԸ. 134 :

Ընդ՝ նայէ այժմեան պատերազմն ըրած մեծ զրպարտութիւնը, որով Հայոց ուղղափառ եկեղեցին անխիղճ հերետիկոս կ'անուանեն՝ ընդհանրական ժողովը ներով քննուած ու վճռուած հերետիկոսներուն կարգը դասելով և ամենքը դժոխքը կը խրկեն. պատճառը իրենց կուրծքին հնազանդութիւն չընծեղնին է : Ուր անոնք որ զինքնք կը պաշտեն իբրեւ անսխալ իշխող և միմիայն գլուխ ընդհանրական եկեղեցւոյն Քրիստոսի, անարգել ուղղակի կը խրկեն երկնից պքտյութիւնը :

Ընչինչ պէտք է Քրիստոսի դատաստանին սպասել, ահա ընդհանրական եկեղեցւոյն Քրիստոսի գլուխ ձեռացեալ Հռովմայու պապերը կարուզասցեր են ընդհանրական դատաստան ընելու, որը պքտյութիւն կը խրկեն, և որն ալ դժոխքը. կ'ուզէ մէկը կը խնամալ՝ որ պքտյութեան արժանի եղած է, և թէ դժոխային է, կարող կ'ըլլայ խնամալու՝ թէ որ հարցունէ Հռովմայու պապին, այն ալ երկու բան պիտի առաջարկէ, նախ զինքը ճանաչել միայն գլուխ ընդհանրական եկեղեցւոյն Քրիստոսի և յետեն հնա-

զանդիլ, և երկրորդ՝ իրեն ժողովը և վճիռը անսխալ իրաւասութիւն ճանաչել, ալ ուրիշ բան պէտք չէ։ Այսանկ ճանաչողը կ'երթայ ապքայութիւն, և չճանաչողը դժոխք. ուրեմն մերժուած մեկդի կը մնայ Քրիստոսի հրամանը » . Ար հաւատայ և մկրտեցեալ » կեցցէ » . Մարկ. ԺԶ. 16։ և թէ "Այս են յատուկ » նշանակներ, որ ճանչցեն զքեզ միայն ճշմարիտ » Աստուած, և զոր առաքեցեր զՅիսուս Քրիստոս » . Յօհ. ԺԷ. 3։

Այսանկ մեկ ընդհանուր կամակար մոգք դատաստան ընելու, այսինքն՝ որը ապքայութիւն, որը դժոխք խլելու կելու իշխանութիւնը ձեռքէց առած են, կամ ձեռքէց տրվեցան։ Ասոր Աբեսարանը մեզի կը տրվեցուննէ, որ այս ընդհանուր դատաստան ընելը միայն որդւոյն Աստուծոյ Յիսուսի Քրիստոսի փրկչին մերոյ է յատուկ սեպհական։ "Ձեմեկ Հայր դատէ զոք՝ այլ զա » մենայն դատաստան եւս Որդւոյ իւրոյ, զի ամենե » քեան պատուեսցեն զՈրդի որպէս պատուեն զՀայր » Յօհ. Ե. 22։

Այսքէն պատճերը Քրիստոսի այս պատիւը իրենց անձին վրայ սեպհականելով, կամ լաւ ևս է ասել յափըշտակելով՝ ոչ քննութի և ոչ արդարութի կը ճանաչեն, այլ միայն իրենց անձնական փառք ու պատիւը կը խընդրեն, և իրենց փառք պատիւ տուողները միայն կ'ըլլան ուղղափառ և ապքայութեան որդի և չտուողները կը համարուին հերձուած հերետիկոս և դժոխային։

Այց նայէ, որչափ հակառակ կը գտնուս առանց անկրաս դրութիւնը ճշմարիտ անաչառ դատաւորին փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի արդար դատաստանին որ կը հրամայէ. "Ձ կարեմ ես յանձնէ առնել » և ոչ լինչ, այլ որպէս լսեմ դատեմ, և դատաստանն » իմ արդար է, զի ոչ խնդրեմ զկամս իմ, այլ զկամս » այնորիկ որ առաքեացն զիս » . Յօհ. Ե. 30։

Ընդ՝ ինչու համար Հռովմայու պատերը անձնապանծ անախտաւութիւնը ձգելով չեն կարդար և չեն ուսանիր Պօղոս արբազան առաքեալէն. "Նայուհե-
» տեւ մի յաւաչքան ժամանակն գաւիք, մինչեւ ե-
» կեսցէ Տէր, որ լուսաւոր առնիցէ զպատանիս խա-
» ւարի, և յայտնիցէ զխորհուրդս սրտից. և ապա ի-
» րաքանչիւր գովեստիւն եղիցի Նուստածոյ »: Ա. կորն. Դ. ճ: Նչանկ սուրբ գրոց հակառակ դրութեան պաշտպան, սանկ զգպարտութիւն ընողներուն կամակից՝ ոչ կրնայ ըլլալ, ոչ այլ ոք, եթէ ոչ մարդահաճութիւնը ընդունող անձինք պիտի ըլլան, Սաղմոսին մէջ այս գրուածին վրայ խղճիւ մտաց խորհրդածութիւն չընողը պիտի ըլլայ: "Նոր երկիցեն վերկիւղ, ուր ոչ էցէ
» երկիւղ, զի Նստուած ցրուեսցէ զոսկերս մարդա-
» հաճոյից: Նմաչեսցեն և յամօթ լինին, զի Նստուած
» անարգեաց զնոսա »: Սաղմ. ծբ. 7—8:

Ի՞նչ ըսենք, Նկնիթարեան պատուելիները սուրբ գիրքերէն չե՞ն մի համոզուած, և կամ խղճմտանքնին մարդահաճութեան խոր ննջմանն մէջ ձգեր են, և կամ Սարգիս ընտրհալին չե՞ն մի կարդացեր, որ կը գրէ: "Ձար է մարդահաճութիւն, չար և կորուսիչ հոգ-
» ւոց, չար է և աչառելն ումեք յանիրաւի, և ըստ
» պատեալ են յաստուածային գրոց, մանաւանդ թէ
» ընդ մեծամեծ դատաստանօք անկեալ. ըստ այնմ:
» Նստուած ցրուեսցէ զոսկերս մարդահաճոյից, և թէ
» տակաւին մարդկան հաճոյ լինէի, ապա Քրիստոսի
» ծառայ ոչ էի: Տեսանեմ զլեծուիթիւն չարին, և որ
» ի Քրիստոսի ծառայութենէն. պիտէ ստրապիր
» առնել»: Ի Մտի. Յոհ. բ. 1: Ճառ. զ: Ձի չէ այն պէս. այլ ի վերայ այսր ամենայնի լրենց անձանց դիւ-
րութիւնը շահախնդրութիւնը և ժամանակաւոր հան-
գստութիւնը պաշտպանելու համար պատրաստ կոյր
ծառայութիւն ընելով՝ այս օրհան օրս անխիղճ լրենց

բուն իսկ ազգային ուղղափառ և տուրբ եկեղեցին մերժելով, հալածելով և անարգելով՝ յատուկ գիր տուած են Թ. Վիտա պատին, որ ան ալ իրեն նոր հանած հաստատագիր տեարակին մէջ անոնց տուած արժանաւոր պարծանքը երկիւղիւ և մարդահաճութեամբ պաշտպանող ցուցանելով՝ կ'ըսէ։ «Ի՞նչ կենսական նշանակութիւն Ալխիարեան միանձանց վարդապետութեանը » ուղղափառ Ալխիարեան միանձանց վարդապետութեանը » վայելք ամենայն հակաճառութիւն և կասկածը վերացնելու համար, կ'ուզենք որ գիտնանք թէ՝ նոյն » կրօնաւորները իրենց ուղղափառ հաւատքին և վարդապետութեան լուսապայծառ դաւանութիւնը և » յայտարարութիւնը պէտք եղած ստորագրութիւնե » ներով մեզի խաւրեցին, որ մեզի ծայրագոյն վսեմ » թարգութիւն տուաւ, և մեր բաղձանքը լիուլի հա » ճեցաւ։ Այն չի ոչ միայն ճոխ բանիւք և մտա » դիւր յօժարակամ սրտիւ կը խոստովանին և կ'ընդու » նին Ընդհանուր քահանայապետներէն և տուրբ ժո » ղովքներէն եւած կամ ելլելու վճիռներն ու կար » գադրութիւնները, և մանաւորապէս անոնք որ » հերձուածողաց հետ յաստուածայինս հաղորդակցու » թիւնը կ'արգիլեն, հապա նաև բաց և անպատ » րուակ կը յայտնեն, (ըսելով կ'ըսէի Ալխիարեանց » գրածը յատաջ բերելով կրկնել թէ) Ընդհանուն մեկ » մասը՝ որուն բարեացը և օգտին առաւելապէս միայն » կարգեալ է իրենց կրօնքը, խեղճաբար բաժանեալ » կը գտնուի ի կաթուղիկէ առաքելական հռովմէա » կան հաղորդութենէ, ուստի կը յայտնեն թէ՝ որոնք » որ տուրբ հռովմէական առաքելական եկեղեցին է » րեն որդիք կը ճանչնայնէ, իրենք ալ զանոնք իրենց » եղբայր կը ճանչնան ու կ'ընդգրկեն, և հերձուածող » Հայոց մելութիւնները դատապարտելով՝ կը խոս » վանին, որ անոնք Յիսուսի Քրիստոսի ճշմարիտ եկե

» ղեցիէն դուրս են, և կը խոստանան, որ ոչ երբէք
» պիտի դադարին աղօթելու, քարոզելու, և քանիւք
» և արդեամբք և գրովք հոգալու, որ ան մոլորեալք
» ՚ի մի միայն Յիսուսի Քրիստոսի փարախը դառնան,
» ուրանայ միայն գերապոյն հովիւ գլուխ և կեդրոն է
» Էուովմայ քահանայապետը, առաքելապետին Պետ-
» րոսի յաջորդը »:

Կը տեսնամ Անիթարեանց կամակոր և անխիղճ մտօք ճշմարտութիւնը մերժելնին, արդարև չէին ա-ռնք այնքան ամօթապարտ և քաջմնելի, թէ որ ան-ծանօթ չըլլային Էայոց Եկեղեցւոյն ուղղափառու-թեանը և բարեպաշտութեանը, ինչպէս որ կան ա-նանկներ, որոնք միայն սորված են զրպարտելու Էայոց եկեղեցին՝ հերձուած և հերետիկոս չաղխաղխելով. բայց այս Անիթարեանք քաջ գիտեն որ՝ Էայոց եկե-ղեցին ՚ի սրբոյն Կրիգորէ Լուսաւորչէն ունի հաս-տատուն պահած զնարհիւ տուրը Էոգւոյն Կրստուծոյ, և անխախտ կը պահէ մինչև ցայսօր ողջամիտ վարդա-պետութիւնը և ամեն խորհրդաւոր աստնդութիւն-ները, որ համեմատ է տուրը Կրեստարանին և առաքե-լական վարդապետութեան և աստնդութեան: Կը-այս Անիթարեանք մեր ուղղափառ տուրը եկեղեցւոյն հարց սրբոց և շնորհալի վարդապետաց պանչելի մա-տենագրութիւնները՝ ոչ թէ միայն կարդացած են, այլ և շատերն ալ տպագրած են և իրենք ալ ատոնց ողջամիտ վարդապետութիւնը կը գովեն, և իրենց վանքին մէջ նոյն իսկ մեր Էայոց եկեղեցւոյն չարակա-նով և ժամադրքով, ծէսով և արարողութիւնով ժա-մերգութիւններին կը կատարեն, և պիտի պահեն այս ամենը, թէ որ Անիթար Կրբայրն ահմանադրու-թիւնը և կտակագիրը չեն խարդախած և կամ այլայլած:
Կրեմն այն տուած գրերնին այս թ. Պետ պատճէն՝ ի-րենց բուն իսկ ձանչցուած և ընդունած ճշմարտու-

թեանը հակառակ է և յայտնի մարդահաճութիւն։

Արդ կը պարտաւորիմ հարցունելու այս տեղս որ մէկ եկեղեցւոյն ուղղափառութիւնը և բարեպաշտութիւնը ձերկէց պիտի իմացուի։ Ձի որ իրեն ընդունած և խոստովանած վարդապետութենէն յայտնի պիտի ըլլայ, թէ որ հաւատմամբ է տուրբ Աւետարանին և առաքելական վարդապետութեան և աւանդութեան՝ ուղղափառ է և բարեպաշտ. ապա թէ ոչ, հերետիկոս է և մոլորեալ։ Այսր համար չէ՞ որ կը գրէ Յօհաննէս աւետարանիչը. "Ամենայն որ անցանէ՝ և "ոչ կայ՝ի վարդապետութեան Քրիստոսի, զԱստուած "ոչ ճանաչէ, և որ կայ՝ի վարդապետութեան, նաեւ "զՀայրն և զՈրդին ընդունի։ Եթէ ոք գայցէ առ ձեզ՝ "և զվարդապետութիւնս զայս ոչ առնիցէ, մի ընդու"նիցէք զնա՝ի տուն, և մի ողջոյն տայցէք նմա։ Եւ "որ ասացէ նմա ողջոյն՝ կցորդ լինի չարեաց գործոց "նորա։" Բ. Յօհ. Ա. 9—10—11։

Ասկէն յայտնի իսկ է ողջամիտ վարդապետութիւնը և ուղղափառ խոստովանութիւնը Այսց եկեղեցւոյն՝ իրենց աւանդուած քրիստոնէական ճշմարիտ հաւատոց ուղղափառ վարդապետութիւններէն անխախտ և առանց այլայլելու պահելովը, զորոնք եկեղեցական գիրքերովը հանդիսացուցեր է և կը հանդիսացնէ, և բնաւ երբէք չէ ընդուներ և չընդունիր հակառակ տուրբ Աւետարանին և առաքելական վարդապետութեանց և աւանդութեանց նորահնար վարդապետութիւն մը։ Ուրեմն ճշմարտասէր և բարեմիտ աստուածաբաններուն վճռովը այսօրուան օրս Այսց եկեղեցին ուղղափառ է և բարեպաշտ. իսկ Անիւթարեանք այն ամենահերքելի գրովին, որ գրած են առ Թ. Վրս պատճ՝ արդարեւ կարի անիրաւութեամբ զրպարտութիւն ըրած են մարդահաճութեան պատճ։

Ա՛յս տեղս երեւելի տրանց այն առաձնելը կը յիշ
էեն Հայոց եկեղեցւոյ հարուստս որդիքը, ու մեծա
մեծ ուրախութեան և մխիթարութեան պատճառնե
ր կ՚առնեինան անոնցմով. “Ջատանէ ինչ մեզ և ոչ
» մի հակառակութիւն, եթէ չտիրեսցէ և ոչ մի յան
» յաւորութիւն։ Ընտեղութիւնն ոչ ուսանէք երկնչի։
» Անոք անխիղճ և ուղղասէր՝ աներկբայ այնպէս ըն
» դունի զառաւ զըպարտութիւնս, որպէս վէմ ապա
» ռաժ զալիս ծովու, սա վըրդովի նա անշարժ կայ։
» Յամօթ արայ զհամբաւն զհակառակն գործելոյ համ
» բաւոյն. Տիե. Աոած. եր. 93։ Հոգբևոյին քեզ զայն
» սիսկ դատմանց, որք կարող են բարի կամ չար գբեզ
» առնել։ Օ՛ր ինչ ասիցէ գքէն մարդ որ ՚ի մարդկա
» կանէ, խուլ ականջօք զանց արա, չարք՝ քայլու իւր
» եանց չափեն զայլս։ Ձիք որ պատրաստական ՚ի դատել
» որպէս զայնոսիկ, որք կարօտին անաչառ դատաւո
» րին ». Աե. եր. 96։

Ուրեմն Անիթարեանք մեր համազգի պատուելիք և եթէ օտար ազգի սիրելիք, Թող մարդահաճութիւնով և կամ թշնամութիւնով անարգեն և զրպարտեն մեր Հայոց ուղղափառ եկեղեցին հերձուած և հերետիկոս անուանարկ խօսքերով, գրերով և տետրակներով։ Բայց Հայոց եկեղեցին քնաւ իրեն վրայ ամօթ չհամարիր, և համբերատար ոգւով կը տանի անոնց հալածմունքները և անարգութիւնները. իրեն ուղղափառ հաւատքը, աներկբայ յոյսը և կատարեալ սէրը հաստատած է ՚ի վերայ անփոփոխելի և յաւիտենական ճշմարտութեան հօր Աստուծոյ և Որդւոյն միածնի Յիսուսի Քրիստոսի և Հոգւոյն սրբոյ։ Վասն որոյ Հայոց եկեղեցին իրաւամբ ձայնակից ըլլալով Պօղոս առաքեալին հետը կ՚աղաղակէ։ “Վանորոյ և
» զայս չարչարանս կրեմ, այլ ոչ ինչ ամօթ համարիմ,
» քանզի գիտեմ յո՛ հաւատացեալ եմ, թէ կարող է

» զաւանդն իմ պահել յօրն յայն » ։ Բ. Տիմ. Ա. 12 ։

Ի՞նչ ըսենք, Անխիթարեան պատուելիները միթէ չունի՞ն կարողութիւն նախնի դարերու մէջ գտնուած յիշատակաց արժանի առարկին պատկերուն վաղքերնին և առաքելական հոգեւոր վաստակներն և արդիւնքնին, մինչեւ հիմայ եկած պատկերուն վարուց և հակառակ առաքելական պաշտաման և վարդապետութեան գործոցը հետ բաղդատելու ։

Այո՛, քաջ գիտեն և ծանօթ են. բայց իրենց անձնց դիւրութեանը և վանական հանգստութեանը, և աշխարհի մէջ համարձակ ըլլալու իրենց անձանց շահուն և օգտին համար բաղդատելը իրենց բանին ձեռք չիտար. թէ որ ճշմարտասէր հոգւով այժմեան պատկերուն վարքը և գործքը բաղդատեն առաջին դարուց պատկերուն յիշատակաց արժանի վարքերուն հետը, պիտի իրենք ալ համոզուին մերժելու այժմեան պատկերը, բայց չեն կրնար. վասն զի ըստ առածին ։ « Ինչպա՞ս լռէ՝ ի խօսելոյ ճշմարտութիւն, որոյ կամք » զհետ է խնդրել զանձին դիւրութիւն » ։

Թո՛ղ յայտնեն այս տեղնախնի պատկերուն առաքելական վայելչութիւնը, խնամարհալիտ և անփառասէր ընթացքնին, իրաւասէր խորհրդածութիւննին՝ ընդ ա մենայն քրիստոնէից անխախտ սիրակցութիւննին իբրեւ զեպիսկոպոսական ժողովուրդ Քրիստոսի ճանաչելով՝ և իբրեւ զանառաւոր հօտ երկնաւոր Հօտապետին համարելով, որոնցմէ էր սուրբն Ղինոս, որ շատ տարի Հռոմայոց գահին քահանայապետութիւնը վարեց ճշդնողական վարքով, և Վեսպիանոսի օրովը նահատակեցաւ ։

Այս երանելին սրբազան Պետրոս առաքելոյն պէս հաւատացեալները կը յորդորէր և կը քաջալերէր, որ ճշմարտապէս բանաւոր սկիսար ըլլան ճշմարիտ հօտապետն Յիսուսի Քրիստոսի. անոր աւետարանական

խրատներուն և երանաւէտ կոչմանը հետեւելով՝ հաւատայ այս անսխալ ճանաչուժը կը հաստատէր Պետրոս առաքեալն խօսքովը։ "Բանդի հիք իբրեւ զմեղարս "մոլորեալս, այլ այժմ դարձարուք առ հովիւն և տես "սուբ ոգւոց ձերոց "։ Ա. Պետ. ա. 25։ Կը տեսնա՞ս, ինչպէս համեմատ է այս ուղիղ վարդապետութիւնը Յիսուսի Քրիստոսի անժխտելի հրամանին։ "Ես "խաղաղ իմ ձայնի իմում լսեն, և ես ճանաչեմ զնոսա "և գան ինձ իմ գան և ես տամ նոցա զկեանն յաւիտե "նական, և մի կորիցեն յաւիտեան, և մի ոք յա "փշտակեսցէ զնոսա ի ձեռաց իմոց "։ Յով. ժ. 27։

Այս երանելին Յիսուս իրեն ձեռնադրած եպիսկոպոսներուն և երէցներուն խրատ կուտար որ իրենց հովիւ պետ հովուութեանը հաստատ Յիսուս Քրիստոսը ճանչնան, և անոր ոչխարները, որք են հաւատացեալք, ողջամիտ վարդապետութիւնով արածեն, և անոնց վրայ յոժարութեամբ Աստուծոյ կամացը յարմար հոգեւոր վերակացութիւն ընեն, և ջրլայ որ անոնց վրայ կամաւ մարմնաւոր իշխանութիւն բանեցունելով՝ տիրեն, այլ հոգեւորապէս բարի օրինակ ըլլան ամենուն՝ որ հովուապետ Յիսուս Քրիստոսէն յաւիտենական փառքերով պսակուին։ Այս խրատները համեմատ էին Պետրոս առաքեալն յորդորանացը՝ որ կը գրէր երէցներուն. "Որերիցս աղաչեմ՝ իբրեւ երիցակից և վկայ չարչարանացն Քրիստոսի, և որ հանդերձեալ "փառացն հաղորդ. արածեցէք որ ի ձեզ հօտ. է "Աստուծոյ, վերակացու լինելը, մի իբրեւ ակամայ՝ "այլ կամաւ ըստ Աստուծոյ, մի զջշաքաղութեամբ, "այլ յօժարութեամբ, մի իբրեւ տիրելով վիճակա "ցըն, այլ լինել օրինակ հօտին. զի յերեւիլ հօտա "պետին՝ ընդունիջիք զանթառամ փառացն պսակ "։ Ա. Պետ. ե. 1։

Յիշենք սուրբն Կղեմէս, որ Հռոմեականաց կաթողիկոս

արքային բառնութեանը իբրեւ քաջ ախոյեան Քրիս-
տոսի արիացեալ համբերելով դառն չարչարանաց մար-
տիրոսացաւ ծովամոյն խեղդամահ կատարուելով։

Ընդդէմ նման երանելի հանդիսացաւ սուրբն Սահ-
ուանոս հայրապետն Հռոմայոց, որ անօրէն արքային
Վալերիանոսի բառնութիւնովը նահատակեցաւ ի Հռո-
մ քահանայիւքովը սարկաւագներովը և ժողովուրդ-
ներովը, որունք որ Հայոց Տրդատին կը ծանիք։ Այլ
պէս և Բահատոս Բ. որ յաւուրս ամբարիշտ արքային
Դեկոսի անուանելի չարչարանաց կատարեցաւ ի Քրիս-
տոս։ Յիշենք նաեւ սուրբն Մեղեստրոս, որուն
ճգնողական աղօթիւքը շատ ախտաժէտներ և հի-
ւանդներ բժշկութիւն կը գտանային. սա՝ Կոստանդիա-
նոս կռապաշտ արքայն քարոզելով դարձոյց ի հաւատս
Քրիստոսի. այս երանելին չէր որ կ'ըսէր միշտ։ «Իմ
» հոգեւորական փառաց Թագս իմ հոգեւորական պար-
» ծանքս անունք են՝ որ ընդունած են քրիստոնէական
» ճշմարտութիւնը և կը խոստովանին Յիսուս Քրիստո-
» սը փրկիչ աշխարհի և անոր Աւետարանին հրամայած
» և սրբական առաքեալներով քարոզուած հաւատով
» ու գործով զարդարուած են»։ այս ըսելով կը կրկնէր
Պօղոս առաքեալն խօսքը. «Բանվի մի է մեր յոյս
» կամ խնդութիւն կամ պսակ պարծանաց մերոյ, ե-
» թէ ոչ դուք ի տէր՝ առաջի տեառն մերոյ Յիսուսի
» Քրիստոսի ի նորա գալստեանն։ Ո՛վ դուք էք փառք
» մեր և խնդութիւն». Ա. Թես. Բ. 19—20։

Ընդ այս երանելիները քրիստոսական սիրով և
հեզութիւնով ամեն քրիստոնեայ ազգերուն հետ սի-
րակցութիւն և հոգեւոր խնդակցութիւն կ'ընէին։
Թող կարդան այժմեան պապերը ատոնց ճիշտ վարուց
պատմութիւնները. որովհետեւ այս առաջին դարե-
րուն մէջ եկող պապերը վերցուցեալ սուրբ հայրապետ-
ները իրենց հեղինակ և օրինակ ունենալով՝ բարի և

առաքելական գովելի ընթացք ունեցան : Ի՝ առնոյց ամեն քրիստոնեայ ազգաց սիրել և մեծարել կ՚ըլլա՝ յին , և ամենէն արժանաւոր գովութիւններ կ՚լսուա՝ նային : Ի՝ ման զի չունէին արծաթասիրութեան զջութե՝ լութեան , փառասիրութեան կիրք , միշտ կ՚ապրէին աշ՝ խարհային փառքերը պատիւները , չէին ուզեր մեծ ձանչցուիլ ՚ի մարդկանէ , մարմնաւոր Թագաւորաց պէս չունէին արքայական պատկ գլուխնին , չունէին զինուորներ , չունէին և մեծամեծ պալատներ , և ոչ փողերանոց , մանաւանդ երկիրներու ծառայներու ուէր չէին . համառօտ ըսենք , ինքզինքնին պահել չէին տար , և անոնց մտքէն բնաւ չէր անցներ՝ որ զի՝ րենք չպահողը՝ ո՛ր քրիստոնեայ ազգերէն որ ըլլան՝ պիտի անուանին հերձուած և հերետիկոս : Ի՝ ման զի պիտէին որ՝ ՚ի բանս հաւատոյ մոլորեալ չեղոյնները և բարի վարք ունեցողները բարի քրիստոնեայ են , և ընդ՝ հանրական յաւիտենական կենդանի և կենդանարար գլխոյն եկեղեցւոյ Յիսուսի Քրիստոսի բարոյա՝ կան անդամք են , և նոյն Յիսուսի Քրիստոսի ընդ՝ հանրական և յաւիտենական առաւելական իշխանու՝ թեան հովանաւորութեանը տակը ըլլալով՝ ամենքը կամուղիկէ եկեղեցւոյ մտան կ՚անուանին , և ամենքը Քրիստոսի հաւատոյ , յուսոյ և սիրոյ միութիւնը ու՝ նենալով՝ մի եկեղեցի Քրիստոսի կը կազմուին , և Յիսուսի Քրիստոսի սրբարար շնորհքներուն հաղորդ ըլլալով՝ սուրբ եկեղեցի կը յորջորջուին , և սրբոյն առաքելոյ ոչնամիտ վարդապետութիւնները և եթէ բանիւ և կամ գրով աւանդութիւնները և անընդ՝ հատ յաջորդութիւնը ունենալով՝ ամեն ազգ քրիս՝ տոնէից կ՚անուանին Առաքելական եկեղեցի : Ընդ՝ հանար անունք չէին հանարեր Հռովմայու գահը կեդ՝ րոն միութեան հաւատոյ , և չէին պարծենար լրութ՝ գահովը , այլ սրբոյն առաքելոյն պէս կը պարծենա՝

յին Նյստուծոյ հանդերձեալ արքայութեան վստ-քո-
վը, և ոնոր վրկատար և հաշտարար շնորհքնեւրովը.
ըստ այնմ. « Պարծիմք յուսով փառացն Նյստուծոյ:
» Ոչ ոչ այնչափ միայն, այլ և պարծիմք ևս Ա՛ստ-
» ուած ի ձեռն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի,
» որով և զհաշտութիւնն իսկ ընկալաք: » Հռով. ե.
2—12:

Բայց նայէ, հիմակուան պատերը ինչ խաբէական դրութիւն հաներ են. ընդհանրական պլուս ընդհանրական եկեղեցւոյն Քրիստոսի, այսինքն բոլոր քրիստոնեայ ազգերուն ընդհանուր հրամայող չմանաչողները և չընդունողները հերձուած և հերետիկոս կը համարեն, և այս դրութեան միջոցաւը յոյս ունին որ՝ իրենց բռնութեամբը, արծաթախրութեամբը և փառասիրութեամբը կտրանցուցած ձեռքէ հանած բազմաթիւ ժողովրդոց տեղը՝ Յունաց, Հայոց, Նյստուոյ և այլոց քրիստոնէից ազգերէն պիտի լեցուներն, ինչպէս որ հրաւիրանաց գիրերովին յայտնի կ'ընեն, և քարոզիչներով կը խնդրեն կ'ուզեն գողանալ յափշտակել ամեն ազգի եկեղեցւոյ ժողովուրդներէն. ինչ կ'ըսէք, իրենց ազգային և իրենց Հռովմայոս եկեղեցւոյն սեպհական ժողովուրդներուն հոգեւոր գիտութիւն և խնամատարութիւն և հոգրական սէր ընողը, ի՞նչ տուր տաւարի մատնողը մի թէ ալ ուրիշ ազգաց պիտի խնամք գութ և սէր ընէ: Ցեմ ուզեր այս տեղս Հաքրեթիւլ անուն Հռովմայեցի երեւելի պատմիչին կրօնից պատերազմ անուն գիրքին Բ. հատորին մէջ յառաջ բերած միջին դարու պատերուն արիւնըռուշտ անգթութեան սոսկալի նկարագրութիւնը կրկնել, որ այսպէս կը խօսի. « Պատերուն իրենց հա-
» գեւորէն զատ մարմնաւոր իշխանութիւն մ՚ալ հաս-
» տատելու համար ըրած անկրաւ ջանքերը այն տա-
» տիճան հասած է, (կ'ըսէ), որ իրաւամբք կրնամք

» լսել թէ՝ բոլոր Նէրոտիոյ մէջ՝ ի գործ դրուած ա-
» բիւնըռուշտ պատերազմները՝ այս մարմնաւոր իշխա-
» նութիւնին ձանձցնելու և ընդունել տալու համար
» եղած է . . . և ոչ միայն այժմ, այլ գուցէ և առ-
» յատյան շատ նմանօրինակ դէպքեր պիտի սեանուի
» այս հոգեւոր իշխանապետութիւն՝ որն որ իրենց ինք-
» նակոչ սիւղոսն է : Ընդասին կ'երեւակայեմ Փարիզ
» քաղաքի մէջ սուրբ Բարթուղիմէոսի օրուան եղած կո-
» տորածը . տակաւին կը նշմարեմ գրեթէ առ աչք .
» վաթսուն հազարի չափ եղկելեաց արիւնաթաթախ
» դիակները՝ որոնք կը թաւալին վերջին շունչերնին և
» իրենց ռնգատյը մէջ : Կը նշմարեմ և . Կղեմէսի և ու-
» րիշ շատերուն արբաքինութեան առեանին հուրը՝ որ
» Նաբեղոնի հնոցի բոցէն աւելի լափլիզող է , և որուն
» մէջ ոչ սակաւ անձինք իրենց աճիւնը Թաղեցին ,
» ոչ եթէ ուրիշ բանի մը համար՝ այլ միայն աւետարա-
» նեալ վրկիչ Յիսուսի Քրիստոսի օրինաւոր գլխոյն և
» կեղեցւոյ պատուականը յափշտակողներուն մարմ
» նաւոր իշխանութիւնը չճանչնալնուն համար . ասոնք
» զանազան կեղծ սիւղոսներով կը պանծան , և իրենց
» անդամանդ սրտերնուն անողոքելի խղճիցը բնաւ զօ-
» րութիւն և ազդեցութիւն մը ունեցած չէ—Թա-
» գաւորութիւն իմ չէ ասոր պղտիկ ձայնը ,—բայց
» գարմանք չէ , (կ'ըսէ) , Թէ ուր ասոնց հարուած
» մը բնաւ հոգիէ զուրկ մարմնոյ մը զգացում չի պատ-
» ճառեր » :

Ընժան կը համարէի նաև աստանօր՝ այժմեան Թ . Պոսի իւր աշխարհի գործութիւնը չի ճանչցողներուն քանի մը տարի առաջ ըրած պերճանքները և դատապար-տութիւնները նկարագրել , Թէ որ սահմանափակ գը-րութիւն մը բռնած էրլըսի այս գլխոյս մէջ , և Թէ որ նպատակս մի ըստ միջէ այժմեան պատերազմն գայ-Թակղութեան առիթ տուող ընթացքը պատմել ըլլալ ,

որոնց համար արդար իրաւամբ ըսած է Խաքալ Իւր նամակին մէջ թէ՝ «Պատերազմն և անոր արբանեակ »ներուն անցքը գրել ուզած ժամանակս ոչ բաղդս կա »և ոչ գրիչս շարժելու յանձն կ'առնուն, որովհետև »սաժանելի սպարէզ մը պիտի մնան, մանաւանդ »թէ մի ըստ մէջէ թռուել բազմահատոր գրեանց »պէտք են, կամ լաւ և աս է ասել՝ անհնարին է որդ »ուց մարդկան»: ԺԶ. Դամակ:

Վ.իտեմ, համազգի մեր բարեմիտ սիրելիները լրա ւումնք ունին ինձի ըսելու, որ ինչու կ'աշխատիս այս Թ. Վիոս պատմին հասկցունելու և իմացնելու որ՝ նախնի երանելի պապերուն քարոզութեանը և բար ուք ընթացիքը հակառակ է այժմեան ունեցած պա պական հոգեւոր իշխանութեան դրութիւնը: Անոնք անփառասէր էին և մեծութեան անունը անգամ կը հեռքէին կը մերժէին. թէ անոնց հեղինակութիւնը և խրատները աստնց ուղղութեան կանոն և ապրե ցութիւն մը չեն տուեր, մինչ ձեր գրիչը կարող պի տի ըլլայ աստնց համոզում մը տալ և խելամուտ տա նել. չի որ առաջին Վ.րիպոր երջանիկ պապն իրեն բա րի վարքովը՝ և արբայեան առաքելոց շաւղացը հետե ւելովը հեղինակ պիտի ըլլայ այժմեան դարուս պա պերուն, և ոչ թէ միայն բարի վարքովը՝ այլ և գրա ւոր աւանդութիւն ալ ունի՝ որ կ'ըսվի կանոն հովւապե րուն մէջ Յիսուս Վ.րիստոսը օրինակ տալով՝ հոգե ւոր հովիւներուն իրատ կուտայ աշխարհի մարմնա ւոր փառքերը և արբայական Թագը մերժելու չըն դունելու համար: «Սորին աղաչաւ, (կ'ըսէ) և ինքն »միջնորդն Աստուծոյ և մարդկան իայն եղեալ յանձն առ »նուլ Թագաւորել՝ ի վերայ երկրի, այն որ գեր՝ ի վերոյ »գլխով քան զիշխութիւնն և զիմաստութիւն վեհի

» տաց՝ եթէ գալոց են յաւիշտակել զնա, զի արուսցեն
» զնա թագաւոր, խոյս եա անդրէն ՚ի լեառն միայն.
եբէա. 6։

Ընդ այս ազդու խրատս լսելով՝ ալ պիտի է որ լսենք պատերազմն համար եթէ՝ այս ինչ օր այս ինչ պատին թագադրութեան փառաւոր հանդէսը կատարուեցաւ, և համ այս ոք պատ հաստատեց Հռովմայու ազգին սահմաններուն մէջ իրեն ինքնիշխան տէրութիւնը, և Եւրոպիոյ ամեն տէրութեան հետ դաշնակցութիւն մը ըրաւ իւր ինքնիշխան տէրութիւնը անվըտանգ ճնալու համար, և համ զինուորութիւնը զօրացոյց, զինուորական և քաղաքական օրէնքներ և սահմանադրութիւններ տպել տուաւ։ Կարդա Դրիզոր վեցտասաներորդ պապին համար գրուածը Սրբազան պատմութիւն կոչուած գրքին մէջ որ տպած են Սխիթարեանք, Հատոր. Բ. եբէա. 510—511։

Դիտեմ, պիտի ըսես. սիրելի ընթերցող, որ սոսկ այս գրութիւնը չէ թէ միայն նախանձ ընտիր պատերազմ հեղինակութեանը կը հակառակի, այլ և քրիստոսական անժխտելի վճռոյն անգամ, ինչպէս գրուած է, Յիսուս կանչեց աշակերտները իր քովը, ու ըսաւ անոնց, գիտէք որ հեթանոսներուն անունով իշխանները անոնց կ՚իշխեն, և ան իշխաններուն մէջէն մեծամեծները անոնց կը տիրեն, բայց ձեր մէջը անոնց պէս չըլլայ պիտի, այլ ձեր մէջէն մեծութեան ցանկացողը՝ պիտի ըլլայ ձեզի պաշտօնեայ, և թէ որ ձեր մէջէն առաջին գլխաւոր ըլլալ ուզող կայ նէ՝ պիտի ըլլայ ձեզի ծառայ, ահա այս հրամանաւը մերժեց արդեօք Յիսուս առաքելոց միտքէն մեծութեան խորհուրդը՝ և խոնարհութիւնը հաստատեց. « Եւ Յիսուս կոչեաց զնոսա առ ինքն և ասէ ցնոսա, գիտէք՝
» զի որ յանուանէ իշխանք են հեթանոսաց, տիրեն
» նոցա և մեծամեծք նոցա իշխեն նոցա։ Ոչ նոյնպէս

» ելէ և ՚ի ձերում միջի, այլ որ կամիցի ՚ի ձէնջ մեծ
» լինել, եղիցի ձեր պաշտօնեայ, և որ կամիցի ՚ի ձէնջ
» առաջին լինել, եղիցի ամենեցուն ծառայ ». Մարկ.
ժ. 42—43։

Այսպէս է նէ՝ առաքելական պաշտօն ունեցողները հոգեւոր հովիւները երբոր գլխաւորութեան, մեծութեան անուն ստանալու կը հեռեւին, կը հակառակին սուրբ Աւետարանին, որով չպիտի կոչուին և անուանին Յիսուս Քրիստոսէն ծառայ քարի և հաւատարիմ. ինչպէս ահա վերերը յայտնի եղաւ։ Այժմեան պապերուն աշխարհի թագաւորութեան փառասիրութիւնը ունենալով՝ մեծ և գլխաւոր ըլլալու հեռեւելով՝ և ամեն քրիստոնէից վրայ ընդհանուր իշխանութիւն բանեցունելու անիրաւ պահանջմունքը շարունակելով՝ նախնի ընտիր պապերուն դրութենէն մերժուած են, և Յիսուսի Քրիստոսի անժխտելի հրամանին հակառակ շարժելով՝ անկէց ալ բաժնուած հերձուած են։ Աւրեմն կը հեռեւի որ՝ առաքելական ճշմարտասիրութեան, անշահասիրութեան և քրիստոսանման խոնարհութեան բարուք ընթացից հակառակ է այժմեան պապերուն պահանջմունքները և հետեւողութիւնները. ըստ որում սրբազան առաքեալները միշտ ասանկ աշխարհային մեծութիւնները փառքերը, արծաթասիրութիւնը և պարծենկոտ հպարտութիւնը ըստ ամենայնի կ՚ատէին։ Ինչպէս Պօղոս սրբազան առաքեալ իբրեւ ամեն առաքեալներուն կողմանէ համարձակ կը խօսի Թեսաղոնիկեցւոց եկեղեցւոյն։
« Օ՛ի ո՛չ երբեք բանիւք ողբանաց եղեաք առ ձեզ, որ
» պէս և դուք իսկ գիտէք, և ոչ ՚ի պատճառս ագահ
» հութեան, որպէս և Աստուած վկայէ, և ոչ խընդ
» րեաք փառս ՚ի մարդկանէ, ոչ ՚ի ձէնջ և ոչ յայլոց։
» կարող էաք իբրեւ Քրիստոսի առաքեալս ծանրա
» նալ, այլ եղաք հեզք ՚ի միջի ձերում, որպէս և դայ

» եակ մի՝ որ անուշանիցէ մանկունս, նոյնպէս և մեք
» գնայաք ՚ի ձեզ, հաճոյ թուէր մեզ տալ ձեզ ոչ մի-
» այն զԱւետարանն Աստուծոյ, այլ և զանձինս մեր,
» քանզի սիրեելիք մեր եղեր՚ք» . Ա. Թես. Բ. 5—8 :

Ահա այս աւետարանական և առաքելական ճշմա-
րիտ աւանդութիւնը և կանոնը ուղղափառ մտօք կըր-
ռադատելով՝ այս միջին դարերուս Հռովմայու պա-
պերուն սխալ և նորաձեւ դրութիւններուն և անի-
րաւացի պահանջմունքներուն հետը բաղդատելով՝
փառք կուտայ Աստուծոյ ուղղափառ եկեղեցին Հա-
յոց, որ այս օրուան օրս իրեն հարազատ և բարե-
պաշտ որդիքը պապական չեն և ՚ի նեղբոյ պապերուն
ինքնահնար աշխարհական պետութեան իբրեւ գերի
ընկճուած նուաճուած չեն պարզամիտ յիմարու-
թեամբ, այլ քրիստոսական շնորհիւ և ճշմարտու-
թեամբ իսկ և իսկ ազատ են, Յօհ. Ը. 36. վասնորոյ
ուղղափառ և բարի քրիստոնեայ են :

Հայոց եկեղեցին մարդապաշտութիւնը և մարդա-
հաճութիւնը կը մերժէ Պօղոս առաքեալին խօսքովը.
“Արդ մարկդա՞ն հաճոյ լինիցիմ, թէ Աստուծոյ. կամ
» խնդրեցեմ մարդկա՞ն հաճոյ լինել. թէ տակաւին
» մարդկան հաճոյ լինէի, ապա Քրիստոսի ծառայ ոչ
» էի » . Գաղ. Ա. 10 : Հայոց Սինհեդրեան պատուելի
ները թող ՚ի նոյնհուկս պապական մարդահաճութեան
բացայայտ գրով Թ. Պիոս պապին անպատրուակ խոս-
տանան այս մեր ուղղափառ եկեղեցւոյն բարեպաշտ ժո-
ղովրդոց հետը յաստուածայինն հաղորդակցութիւն
չընելու : Թող գիտնան այս պատուելիները, որ Հայոց
եկեղեցին ոչ միայն կը մերժէ մարդահաճութիւնը,
այլ և մարդահաճոյ անձանց խարդախ և դաւաճան
հաղորդակցութիւնը բնաւ չընդունիր : Թող գիտնան
որ Հայոց եկեղեցւոյն հարազատ մանկունքը աստուա-
ծային նոյնհայց և փառաց հաղորդակցութիւնը կ՚ընդ-

դուն՝ եկեղեցւոյ քրիստոսադիր սրբարար և փրկաբար խորհուրդներուն միջոցաւը, որ կը մատակարարի աստուածահաճոյ և ուղղափառ առաքելաշաւիղ եպիսկոպոսաց և երիցանց միջնորդութեամբը։

Աւրեմն այս մասին Թոմ չշահատին Անհիմարեանք խաբելու վրեղ, և պապական մարդահաճութեան լուծին մէջ ձգելու և ընկճելու, որովհետեւ մեր ուղղափառ եկեղեցւոյ հաւատարիմ և հարազատ բարեպաշտ որդիքը համոզուած են սուրբ գիրքերէն, որ Յիսուս Աստուծոյ ամենակալին և ամենակարողին կենդանի հաւատով հաճոյանալ պէտք է, վասն զի իրատուած է Պօղոս առաքեալէն եթէ՝ «Առանց հաւատոյ »անհնար է հաճոյ լինել Աստուծոյ»։ ԵԲՐ. ԺԱ. 6։ Նե գիտեն որ՝ հաւատարիմ է Յայր Աստուած ճշմարիտ, և անսուտ են խոստմունք նորա, որ միշտ կը հաճի լրեն ճշմարիտ և բարեպաշտ հաւատացեալները հաղորդակից ընել լրեն միածին որդւոյն Յիսուսի Քրիստոսի աստուածային շնորհաց և փառաց, ըստ սրբազան Առաքելոյն բանի։ «Հաւատարիմ է Աստուած, որով »կոչեցարուք ի հաղորդութիւն որդւոյ նորա Յի»սուսի Քրիստոսի տեառն մերոյ։ Ըղձեմ զձեզ եղ»բարք անուամբ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, »զի զնոյն բան ունիցիք ամենեքեան, և մի լիցեն »ի ձեզ հերձուածք, քանզի էիք հաւատաեալք »ի նոյն միտս, և ի նոյն հանճար»։ Ա. ԿՐՆ. Ա. 9—10 ՄԱՓ. Ե. 23։

Ասոի համազգային սիրելիք, աստուածային շնորհաց և փառաց հաղորդ ըլլալու յոյսերնիս պիտի հաւատաս ունենանք Յօր Աստուծոյ կոչմանը և նախասահմանութեանը ըստ Առաքելոյն։ Այս Թէ որ մէկը մեր այս հաստատ յոյսը այլայլելու ըլլայ կամ շարժելու՝ օտարաձայն ուսուցիչ մը եղած կ'ըլլայ և քրիստոնէական վարդապետութեանով

անմիաբանութեան և երկպառակութեան փոխած կ'ըլ-
լայ, հակառակութեան ոգոմնացան կը համարուի, և
ուր տեղ կը քարոզուի այս հակառակ վարդապետու-
թիւնը՝ յայտնի հերձուածողութիւն է, ըստ Պաւղո-
ղոս վերոյգրեալ ազդարարութեան։ "Եւ մի՛ իցեն ի՛
"ձեզ հերձուածք, քանզի էիք հաստատեալք ի՛ նոյն
"միտս և ի՛ նոյն հանճար"։

Ուրեմն այս հերձուածողութեանը հաղորդ չենք
կրնար ըլլալ, եւ մանաւանդ ողջամիտ վարդապետու-
թեամբ սրբոց հօրն մերոյ Կիրիպոլի լուսաւորչի և
սրբազան գրոց համոզուած միաբերնիս այն Անի-
թարեան համազգայինք մեր չեն կարող և չպիտի կա-
րողանան յեղափոխել ի՛ նոյն հերձուածողութիւն։
Այս թողունք այս գլխուն մէջ պապական և Անի-
թարեան հակառակախօս ունայնաբանութիւնները և
բեռց միայն հաճելի, և անցնինք ի՛ նպատակն մեր ի՛
բարի մարդն և ի՛ բարի քրիստոնեայ։

ԳԼՈՒԽ Թ.

Այս տեղս համառօտիւ արժան կը համարիմ քննել
և իմանալ թէ՝ ինչ միջոցաւ մարդիկ պիտի ըլլան բա-
րի մարդ, և քրիստոնեայները ո՞ր ընթացքով անուանին
պիտի բարի քրիստոնեայ։

Մարդիկ թէ որ բնականապէս ունեցած իրենց
բարոյականութեան լոյսը անառակ վարքով մոլու-
նով չխաւարեցուն են, և պայծառ պահեն բարոյական
առաքինութիւնը անխափան գործածելով կ'ըլլան
բարի մարդ, ինչպէս Աւրիստոտէլ կ'ըսէ։ "Առա-
"քինութիւնն է միայն բարի և արժանի պատուոյ,
"որպէս և միայն մոլութիւնն է չար և արժանի ա-

» նարգուԹեան » ։ Այսոր նման կը գրէ տուրքն ՚Աեզ-
սէս Ի ամբրոնացի ։ “ Ընդ բարիք լինիցաք , եԹէ զհետ
» բնական օրինաց լինիցաք » ։ ՚Ի ՄԷն . Սաղ ։

Այս բնական օրէնքը իբրեւ լոյս մտաց Աստուած
մեր բնուԹեանը մէջ տպաւորեր է , որ անով մեր բնա-
նական բարոյականուԹիւնը հաստատուն պահենք և
մոլորուԹեան մեզաց որոգայԹներէն ազատ ճնամք .
այս բնական աստուածատուր օրէնքը սրտերնուս կամ
քերնուս մէջ ԹէԹ որ միշտ պահած ունենանք , և ա-
սոր կանոնով խորհինք ու խօսինք , խորհուրդնիս խօս-
քերնիս և գործքերնիս բարի ըլլայ , մենք ալ բարի ե-
ղած կ՚ըլլանք ։ Այդ այս բնական աստուածատուր
օրէնքին օգուտը նկարագրելով կ՚ըսէ ԴաւիԹ մար-
գարէն ։ “ Ուրան արդարոյ խորհի զիմաստուԹիւն ,
» և լեզու նորա խօսեսցի զիրաւունս ։ Օրէնք Աստու-
» ծոյ իւրոյ են ՚ի սրտի իւրում , և մի գայԹակղեսցին
» գնացք նորա » ։ Սաղ , ԼԷ . 29—30 ։

Ինչու համար այս օրէնքս կ՚անուանի բնական և
աստուածային . վասն զի մեր բնուԹեանը մէջ ՚ի բնէ
տպաւորուած է , վասնորոյ կ՚ըսուի բնական , որովհե-
ւեւ արարիչն մեր Աստուած յատկապէս շնորհած է
այս բնական օրէնքին լոյսը մեզի , վասնորոյ կ՚անուա-
նեմք աստուածային լոյս ։

ՀեԹանոսները այս բնական օրէնքին լուսովը կ՚ընտ-
րեին չարը բարիէն , և բարոյական առաքինուԹիւն
ներ կը գործէին , սակայ հաճար կ՚ըսէ Պօղոս առաքեա-
լը ։ “ Այլ յորժամ ՀեԹանոսք՝ որ զօրէնս ոչ ունին ,
» բնուԹեամբ զօրինացն գործէին , նոքա որ զօրէնս
» ոչ ունին , անձանց իւրեանց իսկ են օրէնք ։ Ոլք ցու-
» ցանեն զգործս օրինացն գրեալ ՚ի սիրտս իւրեանց
» վկայուԹեամբ մտաց իւրեանց . Հռովմ . Բ . 14—15 ։

Այս բնական օրէնքը , որ Աստուած մեր սրտին մէ-
ջը գրած ու տպաւորած է , արդեօք ինչ ազդեցու-

թիւն, և սրպիսի լոյս մտաց կուտայ. ահա Յիսուս Քրիստոս իրեն աւետարանական օրէնքին ամենահար-
կաւոր կանոնը այս ըրաւ։ "Ո՛ամենայն զոր միանգամ
" կամիջիք, թէ արասցեն ձեզ մարդիկ, այնպէս արա-
" րէք և դուք նոցա "։ Մտթ. է. 12։ Ինչ որ դուք ձեր
անձին համար կ'ուզէք ու կը կամենաք, անանկ ալ
դուք ամենուն համար կամեցէք ու ըրէք անոնց ամե-
նուն։ Ա՛հա բնական օրէնքին համառօտութիւնը։ Ա՛յս
բնական օրէնքը կը յիշեցուներ Տովբիթ իրեն որդւոյն
Տուբիայ։ "Ո՛որ դու ատեաս, և ումեք մի՛ առնէ
" յես "։ Տօբ. Դ. 16։

Կուզէ՞նք որ ամենուն սիրելի պատուելի և յար-
գելի ըլլամք, ուրեմն պէտք է որ մենք ալ ամենքը սի-
րեմք պատուեմք և յարգեմք. կ'ուզէ՞նք որ՝ մեր կա-
րեւոր պիտոյքը ամենէն հոգացուի, ապա հարկ է որ՝
մենք ալ կարօտեալներուն օգնութիւն և ձեռնտու-
թիւն ընեմք. կ'ուզէ՞նք որ բնաւ մէկուն երեսէն
վնաս և չարութիւն մը չտեսնամք ու չկրեմք, մենք
ալ մէկու մը վնաս և չարութիւն մը չհատամք ու չի
հասցունեմք. վերջապէս ինչ բան որ կ'ուզեմք մեր
անձին համար, և ինչ բան որ չեմք ուզեր կ'առեմք,
այնպէս պիտի կամենամք ամենուն համար։

Ա՛յս բնական օրինաց կանոնը հեթանոս փիլիսո-
փայները արդարութեան և իրաւանց գրքերու մէջ ալ
գրած ունէին այս օրինակ։ "Ա՛ան քո զոր ինչ կամիս
" առանձին, հատուսցես և արասցես զայն և քում ըն-
" կերին, և զոր չկամիս ընդունիլ յայլոց, և դու զայն
" մի՛ կամիցիս տալ այլոց "։ Ա՛յս բնական օրէնքին զօ-
րութիւն և արտափայլութիւն կուտայ գրական տաս-
նաբանեայ օրինաց մէջ այն աստուածային հրամանը,
որն որ մեր փրկիչ Յիսուս Քրիստոսը կրկնեց հրամա-
յելով. "Ամենայնիւ զընկեր քո՝ իբրեւ զանձն քո "։
Մտթ. ԻԲ. 39։ Ղեւտ. ԺԹ. 18։

Ա.յս աստուածընտիր բնական և գրական օրինաց պայծառութիւնը կը նեմացուն է և ըստ ամենայնի կը խափանէ մարդկային այն չարաշրջիկ նախանձու չարախոտավատ կիրքը։ Ա.յս ներքին դժնդակ ախտը նախանձոտին սիրտը խըրեւ հիւծական հիւանդութիւն մը միշտ կը հալէ ու կը մաշէ. որովհետեւ նոյն նախանձոտը լսելով ու տեսնելով ընկերին յաջողութիւնը և բարեւթիւնը, անօրինակ տրտմութիւն մը և սաստիկ տխրութիւն մը զանի պաշարելով՝ երեսին գոյնը անգամ կ'այլայլի խըրեւ մեկ մեծ վնասի մը հանդիպած։

Յիշենք այս տեղս Մուսիոս անուն այն նախանձոտ մարդը, որուն նախանձելուկ բարուցը վրայով կը պրէ Լմաստասէրն Թեսաւրոս, Տրեա 331։ Ա.յս նախանձաբեկ Մուսիոսի հանդիպեցաւ օր մը Պոպիոս բանաստեղծը, և տեսաւ որ տխուր դէմք մը կը ցուցնէր, և սիրտը վշտացած էր մեծ վնասի կամ չարագոյն դիպուածի մը հանդիպածի պէս. Պոպիոս իրեն հետ եղկնելուն ետեւ զարմանալով մը. ո՞ Մուսիոսը կամ չար բանի մը հանդիպեր է կամ ուրիշ ներուն բարին լսեր կամ տեսեր է։ "Ն.ահաբէ. կամ "չար ինչ պատահեաց Մուսիոսի. կամ այլոց բարի "ինչ"։

Նախանձու այս չարագոյն կիրքը նայէ, ինչպէս աստուածային բնական օրէնքին ձիրքերը մերժեց ու խափանեց Կայենի սրտին մէջ սիրելով երբոր եղբօրը Հաբելին Աստուծոյ հաճելի ընծան իմացաւ, ասոր չէ թէ միայն անոր սիրտը տրտմութեան խաւարով պատեց։ "Ն.ա տրտմեցաւ Կայէն յոյժ "Ծն. Դ. 5։ Ա.յլ և եղբայրական բնական սէրը մահաւիժ տեսլութեան մը փոխեց։ "Յարեաւ Կայէն 'ի վերայ Հաբէլ "եղբօր իւրոյ և սպան զնա"։ Ան. Դ. 9.

Նախանձու չար մարդկանց օրինակ և հեղինակ է

սկզբնաչարն սատանայ , որ նախանձեցաւ նախասահմ մարդոյն եդեմական դրախտին մէջ Աստուծոյ հնարհաց վտառքերը վայելելուն համար , և անոր խաբուելուն և Աստուծոյ հրամանէն մոլորեցունելուն հնարքը խոր րամանկեց , ու անով այն անմահական վտառաց վայելչ ջութենէն զրկուելուն պատճառ եղաւ , և զանի անոր հետագայ ծննդովքը մահուան դատապարտութեան մէջ գլորեց : “Նախանձու բանսարկուին եմուտ մահ ” յաշխարհ ” : Իմաստ . Բ . 24

Ընդեօք մի՞ եղաւ Հայաստանու խաղաղութիւնը վըդովելու և նախարարներուն մէջ ծածուկ խորամանկութեամբ սոսկալի խռովութիւն ձգելու , և արտաքին թշնամիներուն ձանապարհ ցոյց տալով Հայաստանու մէջ համարձակ մտնալու , և Խոսրովեանց հարիւր վաթսուն տարուան ծաղկեալ թագաւորութիւնը անհնայ կործանելու պատճառ , և այն մեր Ընի ցանկալի մեծ քաղաքը որ՞ն չարախորհուրդ նենգութեամբը մատնուեցաւ Կոստանդին Անտոնիոս Մեքայէլ Յունաց կայսեր : Ընդհանակէս Հասիլեոսցի և Սամթէոս Ուռհայեցի պատմիչները Վ. Հատ Սարգիս անուանեալ անօրէն իշխանը ցոյց կուտան , որ նախանձոտ սրտովը և չարակամ խորհրդովը անօթ և գործի սատանայի երեւցաւ :

Այս Վ. Հատ Սարգսին չարակամութիւնը յայտնեցաւ , երբոր Դ . Հոտ Թագաւորին Յովհաննէս եղբայրը մեռաւ , որ քան տարիի չափ Խաղբատունեաց Թագաւորութիւնը շարունակեց , և իրեն Թագաւորութեանը ժառանգ որդի չունենալովը՝ իրեն եղբօրը այսինքն Հոտ Թագաւորին որդին Գագիկը՝ որ էր երիտասարդ իմաստուն , հզօր քաջասրտութեամբն և ազգասիրութեան սիրով վառվռուն , իբրեւ օրհնաւոր ժառանգ Խաղբատունեաց տոհմին Թագաւորութեանը , բարեմիտ և ազգասէր իշխանաց միաբա-

նուիրեամբը և Վահրամ Պահլաւունի իշխանին խոր-
հրդակցութեամբ Հայաստանու Թագաւոր դրաւ։

Որովհետեւ այս Վահրամ Պահլաւունի ստարա-
պետը ընտիր և բարեգործ վարք ունէր, և մանա-
ւանդ ազգասիրութեամբ, արդարադատ անաչառու-
թեամբ և չեմուեռանդ կրօնասիրութեամբ շատ իշ-
խաններուն բարի օրինակ եղած էր, և բարեաց հե-
տեւող քրիստոնէական հաւատոյ ճշմարտութիւնը
պաշտպանող և ազգասիրութեան ոգին ունեցող իշ-
խանները այս Վահրամին ունկնդիր և խորհրդակից
կ'ըլլային։ Նոր գովելի վարուց սակաւ ինչ տեղեկու-
թիւն ունենալու համար, յիշենք այս տեղս մեր և
մաստաղեր իշխանին մեծի Վրիգորի Մագիստրոսի
գրութիւնը, որուն այսքանիկ համառօտ վկայութիւ-
նը բաւական համարինք, որ կը գրէ առ Յովհաննէս
արք եպիսկոպոսն Սիւնեաց, որուն մէջ իւր խօսքը
դարձունելով առ նոյն Վահրամ մեծ իշխանն կ'ըսէ։
« Ունկնդիր վարուք և ողջախոհութեան յանգեալ ըստ
» քում նախնւոյն՝ մերոյ Վրիգորի լուսաւորչի և ծնողի,
» հայրենասէր և աշխարհաշէն ըստ մերոյն Նրսամայ,
» քաջահանճար և ուշիղ, խոհաստուն և խոհեմ, հեզ
» և հանդարտ, արդարադատ և անաչառ, առատ
» և զուարթ մարդասէր և օտարասէր, անոխակալ և
» անյիշաչար, անապատասէր և կրօնասէր, և ամենայն
» բարեաց օրինակ»։

Իսկ ասոր ըստ ամենայնի հակառակ անիրաւ և
չարագրգիռ ազգատեաց և նախանձոտ Վեստ Վարգիս
իշխանը կ'ուզէր որ զկնի մահուան Յովհաննէս Թա-
գաւորին ինքը ժառանգէ Հայաստանու Թագա-
ւորութիւնը։ Վասնորոյ իրեն պէս չարամիտ խորհրդա-
կան իշխաններով գաղտնի նենգութեամբ ծածուկ
թշնամութիւն կ'ընէր Վաթիկ Թագաւորին, թէև ե-
րեսանց բարեկամ կը ձեւանար, կը խորհէր հնարքով

մը Հայաստանու թագաւորութեան հարստութիւնը յափշտակել և այն Ընի մեծաշէն բարեզարդ ցանկալի քաղաքը մատնել Կոստանդին Մոնոմախոս կայսեր Յունաց։ Իւր սրտին մէջ ծածուկ կը պահէր նախանձու կրից չարակամութիւնը Յուդայ մատնիչին պէս, և Դաւիթ մարգարէին գրածին նման։ « Ընդիծիւք և » դառնութեամբ և նենգութեամբ լի է բերան նորա, » և ի նեղքոյ լեզուի նորա ցաւք և վաստակք, նստի » դարանեալ ընդ մեծամեծս ի գաղտնիս սպանանել » զամբիծն »։ Սաղ. թ. 23։

Տեսաւ որ Դաւիթ իրեն խորհրդակից ունի ոչ միայն քաջն Աւահրամ Պահլաւունի մեծ իշխանը, այլ և ունի իրեն կուսակից և անձնադիր սիրելի՝ ըստ ներքողելոյ Ընորհալի տուրք հայրապետին մերոյ առտուածային ընորհք լցեալ, իմաստութեամբ պայծառացեալ իմաստասէր և ազգասէր քաջախորհուրդ մեծ իշխանն Դրիգոր Մագիստրոս, վանորոյ նախ ընկաւ միշտ անարգել և առելի ցուցանել ազքային առնոր այնպիսի մեծ իմաստուն բարեկամը, մինչեւ որ անոր քովէն հեռացուց, և այնուհետեւ սկսաւ թշնամութեան որոմը հոգեւորին կողմն ևս սերմանել։ Որովհետեւ Պետրոս երանելի կաթուղիկոսն՝ որ և Դեռատարձ կ՚անուանի, կը սիրէր յոյժ զԴաւիթ Թագաւորն՝ անոր ազգասիրութիւնը գիտնալով և ինքը անհկայ Թագաւոր օծելուն համար, վանորոյ նախանձոտ Վեհ Սարգիսը նոր իմն չարայոյզ նենգութեամբ սկսաւ քստութիւն և բանսարկութիւն բանեցունել երանելի կաթուղիկոսին և Դաւիթ ազքային մէջ. վանզի երբ կը մտեներ երջանիկ կաթուղիկոսին քով՝ իբրեւ հաւատարիմ ծառայ և բարեպաշտական սէր ցոյց տալով՝ չարախօսութիւն կ՚ընէր ազքային վրայով, և կը դառնար կը մտնար ազքային քով իբրեւ մտերիմ անձնատո մատոյց բարեկամ ձեւանալով երանելի կաթուղիկո

սին համար շատ մը պարտաւանքներ խօսելով՝ երկու քին մէջը մեծ ատելութիւն սերմանեց և մեկզմեկու վրայ սրտերնին խառնեց, թէպէտ ինքն երկուքին մը տերիմ սիրելի ձեւացաւ, բայց երկուքը մեկզմեկու հետ թշնամի և ատելի ըրաւ։

Ցանկ ծածուկ թշնամութիւն ձգելով կաթուղիկոսին և Թագաւորին, իշխանաց և նախարարաց մէջ միաբանութեան և սիրոյ շաղկապը ամենուն սրտէն խզեց խորտակեց բաժանեց, և պատճառ եղաւ Նապրատունեաց Թագաւորութեան հարստութիւնը, ուժը և քաջութիւնը վերջացնելու, և այն մեծաշէն և Թագաւորանիստ Անի քաղաքը մատնելու ի ձեռս կոստանդին Մոնոմախոսի և Մ՝ելքայէլ կայսերց Յունաց։ Այնուհետեւ սիրեց Հայաստանու վրայ ողբալի Թշնամութիւն մը. ամեն կողմէն անագորոյն Թշնամի ներուն յարձակման առպարէզ մը ձեւացաւ Հայաստան. այնուհետեւ Թշնամիք այն բազմամարդ գեղեցկաշէն ամուր քաղաքները և ցանկալի գաւառները աւերակ և անապատ դարձուցին, հրով և սրով անխնայ ջարդ ու աւեր տալով՝ անօգնական ժողովուրդը գերի վարեցին։ Նաւական չէ այս տեղս միայն օրինակ բերել Տրեմիա մարգարէին ողբը ու ըսել. "Ո՛վ քաղաք " զատաւ՝ նստաւ մենացեալ քաղաքն բազմաժողով՝ և " եղեւ իբրև այրի լցեալ տրտմութեամբ "։ ՈՂԲ. ԵՐՄ. Ա. 1։ Այլ Աբիստակէս Հայոց աստիւերտացւոյն կարի աղէտալի արտաշարժ ողբերգութիւնը կարդալու է. որն որ ժամանակակից ըլլալով Յորդանոս արտասուօք գրած է քան Թէ մեկնաւ այս Նապրատունեաց Թագաւորութիւնը վերջանալուն համար։

Տեսար մի, նախանձոտ սրտի մը չարակամութենէն ինչ մեծամեծ վնաս, ինչ մեծամեծ քաղաքներու կորստանք, և ինչպէս մեծ Թագաւորութեան մը վերջին Թշուառութիւնը յառաջ բերաւ. անանկ մեկ նա

խանձոտ սրտի մը պատճառաւ ինչ ցաւալի տեսարան ներ բացուեցան, երկիրներուն երեսը դիակներով լեցուեցաւ, մարդաշէն քաղաքները աւերակ եղան, իմաստուն քալ թագաւորներով փառաւորուած ժո ղովուրդ մը անտերունչ գերի վարեցաւ։

Ուրեմն ասանկ վնաստ Սարգիսներու պէս նախանձալուկ սիրտ չունենանք, մերժենք, առնք, չընդունինք մեր սրտին մէջը չարակամութեան նախանձու և առելութեան մեր հոգւոյն մահաբեր դժնդակ կիրքերը։

Թող մեր սրտին մէջը Աստուծոյ հնարհիւր սերմանուի աստուածահաճոյ եղբայրսիրութեան և ազգասիրութեան սերմը, և փոյթ մեծ ունենալու եմք, որ ըստ առենային արմատանայ և պտղաբերի. վասն զի առավ հանդիսանալու եմք առաջի սրտագէտին Աստուծոյ բարի մարդ և բարի քրիստոնեայ. ասոր համար կը խրատէ սրբազան Պետրոս առաքեալը. "Նախ քան զառենայն՝ սէր սերտ ունել առ միմեանս". Ա. Պետ. Դ. 8։ Որը է այս հաստատ կայուն և եռանդնոտ եղբայրսիրութիւնը և ազգասիրութիւնը, որ գտնալու եմք արդեօք. պետք է գիտնալ որ նախանձով հպարտութիւնով, յանդգնութիւնով և փառասիրութիւնով կաշկանդեալ և պարսաւանդեալ սրտերուն մէջ տեղի չունի մնալու այս եղբայրական և ազգային սիրոյն վայելչութիւնը։ "Ո՛ւ թէ քաղցե՞ն՝ ի վշտ խաղողոյ, կամ՝ ի տատասկէ թուզ". Մտթ. է. 16։ "Ո՛ւ թէ կը պտղաբերէ ապառաժ քարը, թէև սերմանեանը հանը անոր վրայ բարի սերմ յանէ". Մտթ. ԺԳ, 5։ "Անթէ կը բղխի աղտաղտին տեղէ մը ջուր քաղցր և բարեհամ". Յակ. Դ. 12։ Այսանկ ալ թող չի կարծուի Հայաստանցուն նախանձոտ սրտէ մը տեսնուիլ և վայելել եղբայրսիրութեան և ազգասիրութեան հաճելի Աստուծոյ և մարդկան ակնիւ և պատուական արդիւնք

և գործ մը, վան զի աստուածահաճոյ սէրը բնաւ
չընդունիր և կը մերժէ իսպառ նախանձը և չարա-
կամութիւնը. ինչպէս կը վկայէ Պօղոս առաքեալը.
«Սէր ոչ նախանձի» ա. Կոր. ԺԳ. 4։ Ուրեմն ուր
տեղ որ հաստատուի և թագաւորէ ազգային և եղ
բայրական սէրը, այն տեղը նախանձու, չարակամու-
թեան և ատելութեան չարախտալատ և սատանայա-
կան կիրքը պիտի չտիրէ, խռովութեան դժոխային
չարադէմ ոգին անկէց պիտի հալածի. խաղաղութեան
և բարեկամութեան սուրբ և բարի հոգին կ'առաջ
նորդէ այնուհետև կատարեալ եղբայրասէր և ազգա-
սէր ըլլալու. ասանկ սուրբ սիրով լուսաւորեալ սիրտը՝
միշտ ուրախ կ'ըլլայ իրեն եղբօրը և կամ ազգին ունե-
ցած բարութեանը երջանկութեանը և փառքերուն
վրայով, և կ'ուզէ որ իրեն օգուտը և բարիքը հասնի
անոնց վրայ։ Ու նմանապէս պիտի ցաւի ու տրտմի՝
երբոր տեսնայ կամ լսէ իրեն եղբօրը կամ ազգին պա-
տահած չարադէպ թշուառութիւն և անարգութիւն
մը. վասնորոյ իսկոյն առաջնորդութեամբ բարի ոգ-
ւոյն պիտի ստիպուի պատճառ ըլլալու իրեն եղբօրը
կամ ազգին պատահած թշուառութիւնն ու անար-
գութիւնը մերժելու, և բարեվիճակ երջանկութեան
և փառաւորութեան մէջ հանդիսացունելու, որով
ինքն ալ պիտի անուանի տիրապէս և ոչ պիտակաբար
եղբայրասէր և ազգասէր։

Ո՛նչ երջանիկ կ'ըլլան այս սիրակցութեամբ միա-
բանուած եղբայրութիւն մը և ազգ մը. հարստու-
թիւն և երջանկութիւն պիտի թագաւորէ անոնց
մէջը, երբոր ամենքը մէկ սիրտ մէկ հոգի և մէկ անձն
համարուին. իմ, քո ըսելով՝ ամենքը մէկզմէկու ան-
դամ, մէկզմէկու օգնական և բարեաց պատճառ ըլլա-
լով։ Օրինակ ունենանք այս տեղս ժամացոյցը որ
այն միշտ հոլովուած անխնայրուն մէկին երբ պա-

տահի խանգարումն և աւերումն, այնուհետեւ կը տկարանայ իրեն պատշաճաւոր գործողութիւնը անվնաս կատարելու, այլ կամ խոտորնակ կ'ընթանայ և կամ խափան կը դադարի: Նման ալ երբոր ընկերութիւնը եղբայրական և ազգային համաձայն և միակամ սիրոյ ընթացակից չըլլան՝ կը դադարի բարեկարգութիւնը և կը տիրէ հոգևոր և մարմնաւոր անկարգութիւնը. Նշած է աստուածաբաններուն. "Երկպա"ռակութեամբ կորուսեալ տեսանելիք զբաղմապատիկ "կամ զվեցամեծ պտուղն հոգւոց, զորս ունէր պըտ"ղաբերել միաբանութիւնն":

Նոյն համեմատ է Պլինիոս իմաստասիրին բարոյական առածը. "Իրք մեծամեծք երկպառակութեամբ "կորնչին, և միաբանութեամբ հաստատին": Այդ մեծ մեն այս ընկերական եղբայրութեան գովութիւն կ'ընծայէ. "Եղբայր յեղբօրէ օգնեալ իբրև զքաղաք "ամուր, և հզօր է իբրև զհաստատեալ թագաւո"րութիւն": Առակ. ԺԸ. 19:

Ընդհակառակն անհամաձայնութեան և անմիաբանութեան աւերութեան չար ոգւոյն պըտուղը և գործը մեր տէր Յիսուս Քրիստոս փրկչական յայտնի ըրած է. "Ամենայն թագաւորութիւն բաժան"եալ յանձն՝ աւերի, և տուն բաժանեալ յանձն՝ կոր"ծանի": Ղուկ. ԺԱ. 17:

Այսքէն չար և անօրէն է այն մարդը՝ որ իր ազգին մէկ մասը կը համարուի, անոնցմէ իրեն օգուտը կը նայի քաղել, և կ'ուզէ որ իրեն ազգային ընկերներն եղբայրները միշտ իրեն օգուտ ունենան, իրեն բարութեանը համար աշխատին. երբոր իր ազգային ընկերներէն մէկու մը երեսէն իրեն անձին վնաս մը տեսած կ'ըլլայ, այնուհետև կ'ակի բոլոր իրեն ազգը ատելու և անարգելու, մինչև անգամ կրօնքով ալ բաժնուելու ձանապարհ մը կ'ընտրէ:

Խարի խորհրդածութիւն չընել մոլորելով մտաց

կուրութեամբ և անզգամութեամբ կամայ, անխիղճ կ'ակսի իրեն ազգին վրայ հազարումէկ չարախօսութիւններ կարկատել և բիւր բամբասանքներ կուտալ, և օտար ազգայ առջևը հաճելի ըլլալու և քամահրելի ջըլլալու համար ինքը զինքը կ'արդարացունէ, և բոլոր իրեն հայազգայինքը մեղապարտ և դատապարտելի ընելու կ'աշխատի: Ըսաւ որ լսողները Պօղոս առաքելոյն խօսքովը կը յանդիմանեն զինքը. "Եսկ եթէ "սկիզբն սուրբ է՝ և զանգուածն, և եթէ արմատն, "ապա և ոստքն". Հռով. ԺԱ. 16: Ասիա նոյն իրեն խօսած անարգութեանը հազորդ եղած է ինքնին, ըսած որուն՝ այն հայրենական զանգուածէն և արմատէն չատաչ եկած է, իսկ աննախանձ և բարեվիճակ անձը, որուն սիրտը ազգային ազնիւ սիրոյն անօթ եղած է, միշտ իրեն ազգին բարի չատաչդիմութիւնը և հոգևոր ու մարմնաւոր փառաւորութիւնը կը կամի Պօղոս առաքելոյն պէս. "Ես ինդրեմ զանձին "օգուտ, այլ զբազմաց զի ապրեսցին". Ա. կորն. ժ. 33: Ասոր համար է որ սոյն երանելի Աբրահամը կը պատուիրէ ամեն հաւատացելոց: "Իբրաքանչիւր ոք ընկե"րին հաճոյ լեցի վասն շինութեան": Հռով. ժե. 2: "Այլ ոք զանձին և եթէ ինդրեսցէ, այլև զընկերին": Ա. կորն. ժ. 24:

Այս տեղս նախանձութեան սիրտ չունեցողներէն, բայց ազգասիրութեան ազնիւ և սուրբ հոգի ունեցողներէն մէկը մեզի կը յայտնէ աստուածաշունչ սուրբ գիրքը, որուն անունն է Յովնանի որդի արքային Ասուրաց. նայէ, այս քարեվիճակ անձը հօրը թագաւորութեանը ժառանգ պիտի ըլլար, բայց խորհրդածեց որ իրմէն աւելի արժանի էր թագաւորելու Նաւէի մարգարէն. որովհետեւ կը տեսնար որ հանճարեղ էր և խմաստուն, հզօր և քաջայաղթ, անոր թագաւորելը ազգին օգուտ պիտի ըլլար. անոր

համար ըսաւ Դաւիթ մարգարէին բարեմիտ ազգաց յորդին ազգասիրութեան անհնախանձ արտիւ ։ “ Կ՚ը ” դու թագաւորեսցես ՚ի վերայ իսրայէլի ” ։ Ա · Թագ · Ի Գ · 17 ։

Ընտանքին պատմութիւններէն վերահասու եղած եմք որ Ընթենայիք ժամանակաւ ունեցան հանճարատիս իմաստուն միշտ հասարակաց օգուտը մտածող թագաւոր մը , որուն անունն էր Կեկրոպ Աքքուպ Եգիպտացի ։ Ասոր իմաստուն թագաւորը այնչափ հասարակութեան բարին ու օգուտը կը խորհէր , մինչեւ կտակաւ ալ աւանդեց , որ յետ մահուան իւրոյ չընտրուի թագաւոր իրեն հարազատ որդին ժառանգն թագաւորութեան , այլ ուրիշ մէկը , եթէ առաւել քան իւր որդին արժանաւորութիւն ունենայ խելքով ու քաջութեամբ , որպէս զի թագաւորութիւնը առաւել բարի և օգտակար ըլլայ Ընթենացւոց հասարակութեան ։

Տեսաւ որ բնական օրինաց լուսովը ինչ բարի խորհուրդ ունեցաւ վերյիշեալ թագաւորը , հասարակաց օգուտը իր որդւոյն փառքէն աւելի սեպեց ։

Ինչու այս տեղս մենք չենք յիշեր մեր մեծանուն Վաղարշակ թագաւորը , որուն ազգասիրութեան արդիւնքները սրբազան հարց մերոց Մովսէսի Խորենացւոյն և Յովհաննէս կաթուղիկոսի ղարմանալի և գեղեցկատող գրիչներուն մէջ կը փայլին ։ Ասոր ազգասիրական արդիւնքներուն մէջէն այս տեղս երեք տեսակ բարի խորհուրդներուն վրայով համառօտիւ խօսինք ։ Նըբոյ բազմեցաւ իրեն թագաւորական գահը՝ առաջին գործը ըրաւ իրեն իշխանութեանը տակ եղած Հայաստանու երկիրները իր արհւական քաջութեամբը և զարմանալի խոհեմութեամբը բարեկարգելու և ընդարձակ սահմանները պայծառացընելու , վասն որոյ արքայավայել կարգեր կանոններ սահմանեց ։ Ասոր երկ-

բորդապէս սկսաւ հետազօտել փնտռել, որ Հայոց ազգը և անոր նահապետները նախարարները և իշխանները ծերկէց յառաջ եկած են, և ինչ կարգ կանոն ունեցած են։ Ես երբոր Հայաստանու մէջ չգտաւ գրաւոր աեղեկութիւն մը իրեն այս բարի խորհուրդին յարմար, խորհրդակից առաւ մէկ իմաստուն մարդ մը ազգաս Ասորի, որուն անունն էր Մար Աբաս Կատինա։

Ասկէց իմացաւ որ Անինուէ քաղաքին արքունական դիւանին գրքատունը մէջ Հայկազանց ցեղին պատմութիւնը կը գտնուի. խրկեց աղերսագրով մը այս իմաստուն անձը իրեն մեծ եղբօրը Ասրշակ Թագաւորին. այն ալ տեսաւ գրած նամակին միջոցաւը իրեն հարկաւոր եղբօրը ազգասիրական բաղձանքը և գովելի հետազօտութեան խնդիրը՝ շատ ուրախացաւ ու հրամայեց որ՝ Անինուէի արքունական դիւանը գրքատունը բանան. գտաւ հոն Մար Աբաս անանկ մեծ մատեան մը, որուն մէջը յայտնուեցաւ Հայկազեան մեծ տոհմին ճիշտ պատմութիւնը։ Կը բերէ զայն առաջաբերն Ասղաշէս, որ երբ տեսաւ, լեցուեցաւ ուրախութեամբ ազգասիրական բաղձանքը կատարուելուն. վասն որոյ իրեն առաջին մեծ գանձը համարեց ըեց՞այն ընտիր մատեանը, որ յունարէն և ասորերէն գրուած էր, ինչպէս կը գրէ սուրբն Մովսէս Խորենացի պատմիչն մեր։ Ա. գէր. Ը. Թ։

Այս երկրորդ բաղձանքն ալ կատարուելէն վերջը կամեցաւ որ իրեն Թագաւորական ծանր պաշտօնին մէջ հակառակ իրաւանց և արդարութեան բան մը ըրած չըլլայ. վասնորոյ երկու իրաւապէտ, ընտիր և իմաստուն մարդիկ պաշտօնի դրաւ և անուանեց զանոնք յիշեցուցիչ, որոնք միշտ իրեն քովը կը գտնուէին, ինչպէս կը պատմէ երանելի Յովհաննէս կաթողիկոսն պատմաբան։ Անոնց մէկը՝ երբոր Թագաւորը անիրաւ

հրամանն մը կամ դատաստան մը ընելու ըլլայ, իակոյն երաւունքը գրով պիտի յիշեցուներ։

Իսկ մեսսը՝ երբոր ազգայն դատաստանին մէջ իւր հրամանաւ յանցաւորը պատժելու և անմեղը արդարացուներու անհոգ ըլլայ արդարութեան կշիռը չխեղանեցուներով, իակոյն պիտի գրով յիշեցուցանէր անմեղը ազատելու, և մեղապարտը դատապարտելու արդարութեան պահանջմունքը։ Տեսաւ որ այս աղգասէր Վաղարշակ Թագաւորը՝ իր կամքը և փառքը մէկդի ձգելով ազգին հասարակաց օգուտը ընտրեր, և ամենուն վրայ տալով իւր սէրը՝ ամենուն բարիք խորհեր է։

Ասկից պէտք է որ ամեն իշխանաւորներ և ազգին հոգևոր և մարմնաւոր պետութիւն ունեցողները պատուղ քաղեն և ազգասիրութեան և բարեպաշտութեան փոյթ և ջանք ունենան։

Ուրեմն ազգային և եղբայրական սէրը երբոր մեր սրտին մէջ կը թագաւորէ, այնուհետև ոգետանջ և աստանդական նախանձու չարադրդիռ կիրքերնիս կը չաղթահարէ, և այն գժոխային նախանձու հուրը մեր սրտին մէջը նիւթ առերութեան չգտանալով՝ բոլ բոքիլ չունենար, բոլորովին կը մարի։

Այնուհետև չարաթրամիր ու վնասդրեր ուրիշներն իրեն իրեն անձնական փառքը և պատիւը, չհեռեւիլ ամենէն բարձր երևնալ այլանդակ մարդախանձ գազանի պես յոխորտալով, անոր առը վրայ չարաձակիր, ազնուական բարի սրտերը չխորեր չխոցել առերութեան սրով, վասն զի սիրոյն զօրութիւնը առնք ամենը կը մերժէ. որովհետև այս սէրը ունեցողին միտքը վսեմ երկայնմտութեամբ կը համբերէ ամեն կողմէն եկած չարախօսութիւններուն, և չը գայրանար, վրէժխնդրութիւն չըներ իրեն առերութիւն և թշնամութիւն ընողներուն, և իրեն վնաս

անձն քաղցրաբարոյութեամբը կը բարեխառնէ ուրիշներուն դժնեայ դառն վարմունքները։ Այսոր հասմար է որ երանելի Պօղոս սրբազան առաքեալը այս աստուածային անժխտելի օրինաց քարոզած եղբայրսիրութիւնը աղգասիրութիւնը սահման կը սահմանէ. «Ակը երկայնամիտ է, քաղցրանայ, ակը ոչ նախանձի, » ոչ ամբարհաւաճէ, ոչ հպարտանայ, ոչ յանդգնի, » ոչ խնդրէ զիւր, ոչ գրգռի, ոչ խորհի զչար »։ Ա. Կորն. ԺԳ. 4—5։ Ուրեմն հպարտ անձը այս բարեմասնութիւնները չունի, երկայնամիտ և բարեբարոյ չէ, յանդուգն է. սահմանները խոհեմութիւնով իւրեանց անձին չափը կարողութիւնը կշռելու մտախոհ չեն ըլլար, այլ մանաւանդ մեկենիմեկ ինքնահաւան խրոխտաբանութեամբ կը խօսին, և յանձնապաստանութեամբ կը խրոխտան և ամեն բանի և գործի մէջ մտնալու կը յանդգնին. սահմաններուն համար հանճարեղ Պաղէս իմաստասէրը այն բարոյական առածը, որ ամեն մարդկային հասակի և պաշտօնի գործողութեան և խորհրդածութեան կարևոր և պիտանացու է. «Ծանիր զքեզ». այս բարոյականը այնքան գովելի հանդիսացաւ իմաստուն խորհրդականներուն առջեւը, մինչև ոսկեղէն տախտակներու վրայ փորագրուեցաւ և ամենուն հաճելի եղաւ։

Ո՞նչ օգուտ կ'ըլլայ այն մարդուն, որ շատ իմաստութիւնով լեցուն միտք ունենայ, և ազնուական տոհմէ և ազգէ յառաջ եկած ըլլայ, ու այս բարոյական առածը սրտին մէջ չունենայ՝ անշուշտ կատարելութեան հանճարով զարդարուած չհամարուիր ըստ առածին. «Ա՛յս շատ գիտէ, և քալ գիտէ, որ » զանձն իւր գիտէ »։ Ահա այն է իմաստուն քայլագէտ, որ իւրեն անձին չափը և բաւականութիւնը կը ճանչնայ, ինչի կարող է, և ինչի կարող չէ. միշտ կը չափէ կը կշռէ ինքզինքը, այնուհետև կ'ակսի խօսքի

և գործքի մէջ մտնալու, յանդգնութիւն չըներ ամեն խօսքի և գործքի մէջ գտնուելու։

Ի՛ն ժամանակը Հռովմայեցի դատաւորները երբ կը վճռէին դատաստանաւ յանդուգն մարդու մը պատիժ տալ, անոր ալ ձեռքէն արիւն կ՚առնէին այս իրաւունքով, որ միանգամայն իրեն յանդգնութեան ախտին դարման մը ըլլայ, և իրեն մեծ ամօթոյն նախատական պատիժ. վասն զի յանդգնութիւնը բնաւորապէս մարդուն մէջ Թոքին արեան սաստիկ բորբոքմանէն յառաջ կուգայ։ Վ՚ասն որոյ սասանկ յանդգնութեան ախտը առաւել երիտասարդները կ՚ունենան. ինչպէս օրինակ է մեզի Շիպիոն որ Սկիպիան կ՚անուանի մեծանուն զօրավարն Հռովմայեցւոց, սա մինչ էր երիտասարդ՝ մեծ համարձակութիւն մը ըրաւ ըստ բերման հասակին՝ որ յանդգնութիւն էր, քանզի երկու նաւակաւ պատերազմելու գնաց իրեն հայրենեացը մեծ դժնդակ Թշնամւոյն Սիփակայ դէմ, որ բազմախումբ քաջ զօրքերով և պատերազմական սոսկալի պատրաստութեամբ կը հալածէր Հռովմայեցիները։ պէտք էր Շիպիոնի մեծամեծ պատրաստութեամբ և արի զօրքերով ելլալ անոր դէմ, այս Շիպիոնի համարձակութեան գործը անմիտներուն գոլվելի երեւցաւ, բայց իմաստուններուն դատումը վճռեց որ ստգտանելի յանդգնութիւն էր, վասն զի հասարակութեան փրկութիւնը առաւել մեծ վտանգի մէջ ձգեց քան թէ ազատելու անանկ մէկ խրոխտ և զօրաւոր Սիփակայ բռնութենէն. ինչպէս կը գրէ իմաստասէրն Թեսաւրոս եէե, 89։

Այս անձին չափը ճանաչելու մտաց բարի ունակութիւնը մեզի կը տրվեցընէ սուրբ Աւետարանը, վասն զի մեր Տէր Յիսուս փրկիչը քրիստոնէական կատարելութիւնը բարոյական խոհեմութեան օրինակաւ հաստատել ուզեց մեր մտաց մէջ ասանկ օրինակ տա-

լով. «Ո՞վ ոք ի ձէնջ կամիցի շինել աշտարակ, և ոչ
» նախ նստեալ համարիցի զծախան՝ եթէ ունիցի բա-
» ւական ի կատարումն։ Ո՞վ գուցէ երբեմն արկանիցէ
» հիմն և ոչ կարիցէ կատարել, ամենեքին որք տեսա-
» նիցեն, սկսանիցեն ծաղր առնել զնա, և ասել թէ՝
» այս այր սկսաւ շինել և ոչ կարաց կատարել։ Կամ
» ո՛ր թագաւոր երթեալ տայցէ պատերազմ ընդ այ-
» լում թագաւորի, և ոչ նստեալ նախ խորհիցի, եթէ
» կարող իցէ տասն հազարաւ զդէմ ունել զայնորիկ,
» որ գայցէ ի վերայ նորա քսան հազարաւ։ Այլապա թէ
» ոչ՝ մինչդեռ հեռագոյն իցէ հրեշտակութիւնս առա-
» քեալ աղաչեսցէ ի խաղաղութիւն»։ Ղ-ի. ԺԴ. 28—32։

Տեսաք չափ անձին չճանաչելու անխոհեմութիւնը, ամեն ժամանակ կը պարսաւուի ու կը յաղթահարի ու շուտով երեւան կ'ելլայ իրեն յանդգնութիւնը։ Ինչ մարդ մը եթէ գիտցածէն ու տրվածէն առաւել քա-նի մը ու գործի մը ձեռնամուխ ըլլայ, ոչ այն քառնած գործը կը կարողանայ յառաջ տանելու, և ոչ ալ գո-վեստի մը արժանի կ'ըլլայ։

Այս տեղս յիշենք առակիսօս իմաստունին այս զուարճալի պատմութիւնը։ Ինչ ոգէտ անխոհեմ մարդ մը արհեստիս կարկատիչ, նայեցաւ որ և բնն արհեստէն շահած ստակովը կարող պիտի ըլլայ ընդարձակ ապրելու և հարստանալու, խորհեցաւ որ իրեն տրված արհեստը փոխէ, միտքը պղտցուց ա-նոնց արհեստաւորներուն վրայ, տեսաւ որ՝ բժիշկնե-րը հարստութիւն և միանգամայն յարգութիւն ու-նին։ Ինչ մը ժամանակ սկսաւ ճարտար բժիշկներու տունը մտնել ու ելլել, և քանի մը հատ ալ բժշկու-թեան վերաբերեալ գրքեր առացաւ, ու միշտ կը կրէր գրպանով իրեն հետը, և հարցունողներուն կ'ըսէր. բժշկութիւն տրվեցայ, վասն որոյ ձգեցի իմ արուեստս. քանի մ'ալ բժշկական բառեր սերտելով՝ շատ պար-

զամիտներ ասոր խոսքերուն նայելով՝ հաւատացին բժիշկ ըլլալուն և չատերուն անանկ ձանչցուեցաւ։ Ա՛յս յանդգնութիւնը և բժշկական արհեստին անձանօթ ըլլալը իրեն չատախօսութիւնովը կը ծածկէր, օտարականներուն և անմիտներուն անանկ կը ծանուցանէր իրեն դեղերուն զօրութիւնը, և իր վարդապետութիւնը անանկ կը ձեւացուներ, որպէս թէ ոչ ինքն կը սխալի և ոչ դեղերուն ներգործութիւնը։ Որ մը զինքը աղէկ ճանչցող խորամանկ մերձաւորին մէկը ուզեց որ այս ձեւացած բժշկութեան յանդգնութիւնը ծաղր ընէ, ուստի յաւուկ մէկը խրկեց, ու հրաւիրեց իրեն տունը, երբոր եկաւ առաջին անգամը պատուով ընդունեց ու յետոյ ըսաւ, սաստիկ գլխացաւութիւն մը ունիմ, անոր համար կանչեցի ձեր յարգութիւնը, այն ալ սկսաւ անոր տուտ հիւանդութեանը վրայ խրթին ճչմարիտ՝ բաղմապատիկ պատճառներ տալով խօսիլ, վերջապէս ըսաւ. Թէ որ կը կամիս այդ սաստիկ գլխացաւութենէն ազատիլ ու փրկիլ, շուտով ինձի յանձնուէ. ուրիշէն դեղ մ՚առներ, ապաւինէ միայն իմին հոգաբարձութեանս և դեղերուս։ Ինչ մը համբերելէն վերջը այս հիւանդ ձեւացեալ խորագէտ անձը ծաղրաբանելով մը ըսաւ անոր, ով կարճամիտ յանդուգն բարեկամ, ես ինչպէս վստահիմ յանձնելու քեզի իմ գլուխս, որ ունքիս մէկ մասը անգամ քեզի չեմ հաւատար, գնա՛ այդ յանդգնութեան արհեստդ անոնց ծախէ, որոնք որ քեզի պէս կարճամիտ և յիմար են։

Տեսար յանդգնութեան պարսաւանաց պտուղը, ո՞րչափ դառն է, ո՞րկէց ծնաւ այս յանդգնութիւնը, ասոր մայրը ով համարեցաւ. ամբարհաւաճ հպարտութիւնը։ Ասոր համար Պօղոս սրբազան առաքեալը յաւուրք կը դնէ ամբարհաւաճութիւնը և հպարտութիւնը, և ապա կը յիշէ յանդգնութիւնը։ "Վէր եր-

» կայնամիտ է, քաղցրանայ, աէր ոչ նախանձի, ոչ ամբ
» բարհաւաճէ, ոչ հպարտանայ, ոչ յանդգնի »: Ա. կորն. ԺԳ. 4:

Ըստ այս անզգամ յանդգնութիւնը ամբարհաւաճ հպարտութեան չարագոյն ծնունդ ըլլալը յայտնի վկայեցաւ. գիտնանք որ այս չարածնունդ կիրքը, որ սրտին մէջը կը թագաւորէ կը տիրէ, այնուհետեւ չէ թէ միայն մտաց խոհեմութեան լոյսը կը խափանէ, այլ և բարի և հոգեւոր մարդիկներուն հոգեւոր խըրատները և բարոյական խօսքերը կ'առէ ու կը մերժէ. անոնց դէմ խստաւ կը խստանայ յանդգնութեամբ պարսաւանդուած այնպիսի սիրտը:

Յիշելով մը անցնինք այս տեղս այն բռնաւոր փաթաւոն ազգային խստացեալ և գոռոզացեալ յանդգնութիւնը, որ բնաւ չհամոզուեցաւ Մովսէսի և Ահարոնի ազգու խօսքերովը և աքանչելի նշաններովը, որոնք որ յաւուրկ Ելսուածոյ կողմանէ իրեն խրկուած էին: եել. ե. 1:

Զանց կ'առնենք այս ամբարտաւան խրոխտ յանդգնութեան ժանտարմատ ծառէն տեսնուած դառնագոյն պտուղները, որ երբեմն մեր ողորմելի դժբաղդ Հայաստանը քաղեց անոր ժանտահամ ամենադառն պտուղը, որով մահացաւ Ս. Լուսաւորչեայ թագաւորութիւնը, որուն վրայ կոծեցին ողբացին մեծն Ահակ երջանիկ սուրբ կաթուղիկոսն իւր ընտիր եպիսկոպոսներովը, վարդապետներովը, և քահանայներովը, և սուրբն Ներսէս իրեն հոգեընտիր աշակերտներովը, և մեծ քերթողահայրն Մովսէս Խորենացին իրեն երջանիկ և ընտրեալ ընկերներովը: Ո՞վ՝ ոը տեղ սերմանեցաւ և արմատացաւ այս յանդգնութեան ժանտաբոյս սերմը: Զի՞ որ այն Ս. Լուսաւորչեայ թագաւորութեան ժամանակին գտնուած մեր նախարարներուն և իշխաններուն խստացած սրտերուն մէջը. անոնցմէ քաղուեցաւ

այն մեր մեծ թագաւորութեան մնահացուցիչ պատ-
նադատն պտուղը :

Որովհետեւ ամեն բան թէ բարի և թէ չար մէկ պատճառէ մը յառաջ կուգայ, ահա այս նախարարաց ներուն խրոխտ յանդգնութիւնը որ երեւեցաւ սրբոյն Սահակայ երանելի կաթուղիկոսին մերոյ առջեւը, պատճառ ունէր ան Ներսէս թագաւորին անառակ վարքը. ասոր համար եկան այս յիշեալ նախարարները և իշխանները առ մեծն Սահակ սրբազան և երջանիկ կաթուղիկոսն և սկսան բողոքել ու գանգատիլ թագաւորին համար, և կ'ուզէին որ իրենց հետը միանայ, ու երթան Պարսից թագաւորին, Ներսէսին համար չարախօսեն ու ամբաստանեն, և անկէց խնդրեն որ իրենց համազգի թագաւորը հանէ, և Պարսիկ իշխան մը դնէ Հայոց վրայ : Սուրբն Սահակ այս անկարգ խնդիրին կատարելու յանձն չառաւ, ու շատ մը հաւմոզիչ ազդու խօսքերով անոնց յայտնի ըրաւ որ՝ այդ ձեր ունեցած խորհուրդը Հայոց ազգին շատ վնասակար հետեւմունքները պիտի ունենայ. այնուհետեւ ազգը և բոլոր Հայաստանը բաւ ամենայնի գերի պիտի ըլլայ հեթանոս Պարսից իշխանին տակը, վասն որոյ Ներսէս թագաւորին համար բաւ երանելի կաթուղիկոսը. "Թէպէտ ախտացեալ է՝ բայց ոչխար "մեր է". ինչպէս կը պատմէ սուրբն Մովսէս Խորենացին. "Եւ նոքա (նախարարքն) ոչ կամէին, այլ "ջանային համախորհուրդ զնա (զսուրբն Սահակ) իւ- "րեանց առնել: Ել նա ասէ, ինձ քաւ լիցի մատ- "նել գայլոց զնմ մոլորեալ ոչխար, և ոչ պատել զբե- "կեալն կամ զհիւանդացեալն, այլ գահավէժ առնել: "Ո՛վ եթէ էր հաւատացեալ թագաւորի՝ առաջի "փուքային և ո՛չ յապաղէի յուսալով զկանգնումն գլո- "րելոյն, այլ հեթանոսաց՝ յառաւել կործանումն ոչ "առնում յանձն, քանզի թէ մի մասանէր գազա-

» նաց զանձն խոստովանող քեզ. քանզի դրոշմեալ է
» աւազանաւն, թէպէտ անառակ է, պոռնիկ է, այլ
» քրիստոնեայ է, գիմացեալ է մարմնով, այլ ոչ ան-
» հաւատ հոգւով, զեղխ է վարուք, այլ ոչ կրակա-
» պաշտ, տկար է ՚ի կանայս՝ այլ ոչ ծառայ է տարերց:
» Ն՚ւ զիաՀրդ լինիցի այդ, փոխանակել զիմ ախտացեալ
» ոչխարն ընդ առողջ գազանի, որոյ առողջութիւնն է
» մեղ պատուհաս »: Գ. Գէրմ. ԿԳ:

Ն՚րանելոյն այս սրտառուչ խրատը ջազդեց այնչափ դուգն նախարարաց խստացեալ սիրտերուն, այլ ամենքը միաբանեցան և իրենց խորհրդական առին Ն՚րծկէցի Մուրման անուն փառամոլ և մարդահաճոյ ջար երէցը, որովհետեւ անոր խոստացած էին սրբոյն Ահակայ տեղը զինքը Կաթուղիկոս դնել. վասն որոյ այս ջարը ջաբակամութեան նոցին առաջնորդ ըլլալով՝ գնացին մտանեցին Ա՚ղամ արքային Պարսից, ոչ միայն Ն՚րտաշէս Թագաւորը՝ այլ և իրենց բոլոր Ն՚րշակունեաց Թագաւորութիւնը, հայրապետութիւնը, և այն ալ բռնի բերել տալ իրեն առջեւը Թէ տուրբ Ահակ հայրապետին և Ն՚րտաշէս Թագաւորին մէջ. և Ն՚րշակունեաց հարըստութեանը և Կաթուղիկոսարանին մէջ ինչ որ կար բոլորը յափշտակեց իրեն առաջ, և իրեն կողմանէ Պարսիկ Վ՚ՀՀ Մինհրջապուհ անուն մարզպան մը իրկեց Հայաստան, և այն Մուրման անուն փառամոլ ջար երէցը Կաթուղիկոս դրաւ փոխանակ սրբոյն Ահակայ մեծի հայրապետին, ազգային հարստութեան և Թագաւորութեան Թշնամանաւբ և անագորոյն յանդուգն նախարարներուն. և իշխաններուն մեծամեծ պարգեւներ տուեցան, զորոնք անխիղճ

ընդունեցին իբրեւ վարձք անօրէնութեան և անիրաւութեան, ապա այնուհետեւ գերի եղաւ Հայաստան Պարսից ձեռքը և բոլորովին ողբալի վիճակի մէջ ինկաւ, որուն նկարագրութիւնը կ'ընէ քերթողահայրն մեր Մովսէս Խորենացին այսպէս սկսելով. "Ողբամ զքեզ, Հայոց աշխարհ, ողբամ զքեզ, հանուրց հիւսիսականաց վեհապոյն, և այլն: Գ. Գէր. Կը:

Տեսար մի, ինչ չարագոյն և ամենաթշուառ վախճան ունեցաւ ինքնահաւան և չարամիտ համազգի մեր նախարարներուն և իշխաններուն խրոխտ յանդգնութիւնը. վասն զի երկար չխորհեցան իրենց ընեալ գործին վրայ խոհեմութեան լուսով, որով կարող պիտի ըլլային ճանչնալու յետագայ չարիքը, թագաւորութեան կործանումը և Հայաստանու թշուառութիւնը, եւս և պաշտպանելու կարող կ'ըլլային ունեցած բարիքնին, այսինքն թագաւորութիւննին և բաւական ազատութիւննին և հասարակաց հանգըստութիւննին: Այս առանց խոհեմութեան եղած խորհուրդը կամ գործը չար վախճան կ'ունենայ. խոհեմութիւնը մարդուս մտացը կատարելութիւն է. թէ որ սար խորհրդածութիւնովը միտքը չշարժի, հարկաւ կը սխալի և բանին վերջը չար վախճան կ'ունենայ: Խոհեմութիւնը խորհուրդ կուտայ մտացը, որ կամքը կը համոզէ երկայնամիտ և համբերող ըլլալու ամեն բանի մէջ, մէկէն ի մէկ ջատիպուխր կատաղած կրիւքը խօսքի մէջ ներտուելու, բանին վերջը չմտածելով յանդգնութիւն մը ընելու, խոհեմութիւնը մեզի կը յիշեցնէ Սողոմոն իմաստունին խրատները. "Խոր-
» հուրդ բարեաց զգուշացի զքեզ, և միտք տուրբք
» պահեսցեն զքեզ: Ո՛ի խոտորեացիս յալ և մի յահ-
» եակ, զարձի զոտն քո ի ճանապարհէ չարէ».
Առակ. Բ. 11. Դ. 27:

Ուրեմն խոհեմութիւնը առաջնորդ ունեցող միտ-

քին տէրը բարեխորհուրդ և բարեգործ ըլլալու կա-
րողութիւնը միջոցը կ'ունենայ. որով բարի մարդ
կ'ըլլայ այնպիսին. խոհեմութիւն ունեցողը միշտ ա-
ղէկ կը խորհի, ամեն բանի մէջ երկար քննութիւն
ընելով, այնուհետեւ ձեռնամուխ կ'ըլլայ բան մը ը-
նելու և գործելու, ժամանակին պարագայները կը
նկատէ և իրեն խօսքը և գործը անոր կը յարմարէ.
խոհեմապարտ միտքը ինքնահաւանութեան չարագոյն
կիրքը պիտի չունենայ միայն իրեն կարծիքը և դա-
տումը հաստատելու համար, այլ միշտ հարցնելով
քննելով լաւ մը ամեն բանին խնդութիւնը, տոյգը և
ճշմարիտը իմանալու հետեւի, յետ այնորիկ համար-
ձակի ըսելու և խօսելու թէ այս այսպէս է, և այն
այնպէս է: Այլ, վայրենի ծառերուն պտուղները
տխիպ թթու են և անպիտան, բայց երբ կը պատուա-
նին իրենց համեմատ ընտանի ծառերուն, կը փոխեն
իրենց բնական դառնութիւնը և կուտան պտուղ քաղ-
ցր և բարեհամ: Այնպէս ալ մարդիկ թէ որ կը թողուն
ինքնահաճութիւնը և կամակորութիւնը և կը հե-
տեւին բարի խրատ առնելու, կամ բարոյական գիրք
կարդալով, և կամ առաքինի բարեմասնութիւն ունե-
ցող մարդկանց հետ տեսութիւն և հաղորդակցու-
թիւն ընելով կը կարողանան քաղցրաբարոյ և ազնիւ
մարդ ըլլալու. սոր համար մեզի սերտել կուտան և
մաստուննները այս բարոյական առածը. "Լրջափ առա-
»ւել իմաստուն է ոք, այնչափ առաւել դիւրալուր է
»բանաւոր վաստի». Ցաւօք փոր. 3:13: Ինքնահաւա-
նութիւնը միշտ կը հակառակի խոհեմութեան աղե-
ցութեանը, վասն զի ինքնահաւանութիւնը կը գըր-
գռէ միտքը, ինչ բանի որ կը հաճի ու կը կամի շու-
տափոյթ ընել, արագ զոր կամիս: Իսկ խոհեմութիւնը
կը ջանայ համոզելու, խրատ կու տայ, որ նախ և յա-
ռաջ երկար խորհի ընելու և խօսելու բանին վրայ,

և ապա սկսի խօսելու և ձեռք ձգէ ընելու. "Նախ
» խորհեայ և ապա խօսեայ. նախ խելամուտ լեր՝ի
վերայ առնելի իրաց և ապա գործեայ »:

Ինքնահաւանութիւնը յանդուգն և լրբեցնի հա-
մարձակութիւն մը կուտայ լեզուին անզուսպ և ան-
սանձ խօսիլ. ասով շատ միսս իր անձին կը բերէ, և
վատահամբաւ կ'ըլլայ ամենուն առջևը. "Որ պահէ
» զբերան իւր և զլեզու, պահէ՝ի նեղութենէ զանձն
» իւր ». Առակ. ԻԱ. 23: "Լեզու փոքր ինչ անդամ է
» և մեծամեծս բարբառի, ահա և սակաւ ինչ հուր
» զմրսխոխ անտառս հրդեհէ ». Ցակ. Գ. 5:

Իսկ խոհեմութիւնը միշտ կը համոզէ միտքը, որ
ժամանակին և պարագային համեմատ յարմարցունէ
խօսիլը և չըխօսիլը, լռելու տեղը չըլլայ որ խօսի, և
խօսելու տեղը չըլլայ որ լռէ. "Ժամանակ լռելոյ և
» ժամանակ խօսելոյ ». Ժող. Գ. 8: "Ընդէ որ բանիւ
» ոչ յանցանիցէ, նա է մարդ կատարեալ ». Ցակ. Գ. 3:

Ինքնահաւանութիւնը միշտ հաճելի ցոյց կուտայ
իրեն խորհածը խօսածը և գործածը. ասոր համար
է որ ինքնահաւան ամբարիշտ մարդ մը ինքզինքին
հաւնելով, չուզեր և չընդունիր բարի մարդկունե-
րէն խրատ առնելու, աւաքինի անձերէն օրինակ առնե-
լու, իրեն կարծիքը իբրև ճշմարտութիւն հաստատ
կ'ընդունի, ուրիշին բարկութը խափանել կ'ուզէ, չու-
զեր որ մէկ արդիւնքով մը կամ բարի անունով մը
մէկը համբաւեսլ ըլլայ և գովաբանուի: Ցանկները
կընծայեն Ոդիլոս անուն ամբիոնական հռետորին.
ան՝ ամեն ժամանակ ամեն ժողովքներու մէջ կը պար-
ծէր կընախատեր երդիծանելով իմաստուններուն
գրուածները, և փիլիսոփաներուն արդիւնքները, ինչպէս
որ Պղատոնին, Սոկրատին և Հոմերոսին գրուածոց
վրայով հեգնական ձեւերով ոտանաւորներ շինած էր,
որ յանդգնեցաւ ալ զայն կարդալու Պողոսեոս ինքիք

տացուց գրասէր արքային պատկառելի ներկայութեանը. վասն որոյ անոր առջեւէն մեծ անարգութեան թիւն կրելով մերժուեցաւ: Այս Օձելոսի անունը իմաստուններէն երբ կը լուէին, շուն կատաղի կ'անուանէին և հասարակաց թշնամի: Անկ օր մը լրեն մերձաւորներուն մէկը հարցուց ասոր. դուն ինչո՞ւ համար կը համարձակիս պարսաւելու Պղատոնի և Արիստոտելի գրուածները, որ առ հասարակ ամեն իմաստուններէն կը գովեն ու ամենագեղեցիկ արդիւնք մը կը համարին անոնց գրուածները. լրբութեամբ պատասխանեց թէ, Ուրիշեւս կարող չեմ այն գրողներուն չարիք մը հասցնելու, վասն որոյ անոնց գրուածներուն համար չար կը խօսիմ կը վատաբանեմ. "Չար խօսիմ զգրուածոցս, զի չեմ կարող չար հա" "տուցանել գրողաց". ինչպէս կը պատմէ Թեսաւրոս, երես. 229. Ճանօլուիւն, 160:

Այսոր նման էր Արիստարքոս Սամոթրակեցին, որ միշտ կռուայոզ էր և երգիծաբան, որով միշտ հե" տամուտ կ'ըլլար պախարակելու և ծաղրելու իմաս" տուններուն գրուածները լրեն ինքնահաւան բնու" թեամբը: Այդ խոհեմութիւնը ատնք ամենը կը մերժէ ու խրատ կուտայ. ինքըզինքդ իմաստուն մի՛ ճանչնար, սէրտիդ երկիւղ ունեցիր ու մէկդի կե" ցիր ամեն տեսակ չարութիւններէ. "Մի՛ լինիր իմաս" "տուն յաչս անձին քո, այլ երկիր՝ի տեառնէ և "խուսափեաց յամենայն չարէ". Առակ. գ. 7: "Մի՛ "ամբարտաւանիք, այլ ընդ խոնարհս զիջանիցիք, մի՛ "լինիք իմաստունք յանձինս ձեր". Հռովմ. ժբ. 16:

Այս տեղս պէտք է որ ինքնահաւանութիւնը ա" տողը մերժողը, և խոհեմութիւնը մեծարող սիրողը՝ չէ թէ միայն չիշէ, այլ և սերտ՝ի բերան ընելու փոյթ ունենայ այն եօթը իմաստուններուն խրատները, որ խոհեմութեամբ զարդարուած բարի մարդ ըլլալու

կարճ և համառօտ կանոններ են, որոնց համար իմաստուններըը լսեր են. Սկզբո՛ւնք խոհեմո՛ւթեան:

Ա. Թալէս իմաստասէրը կ'ըսէր որ եթէ հրամայող իշխան ես, ամենէն առաջ դուն զքեզ ուղղէ. «Եթէ իշխան ես, անձամբ զանձն քու ուղղեա՛ք». և և կ'ըսէ ալ թէ պէտքը չէ որ գործենք այն բանը, որն որ երբ ուրիշներուն վրայ կը տեսնանք կը քամահրենք ու կ'անգոանեմք. «Չէ՛ պարտ գործել, զորս յայլս պա՛ » խարակեմք»:

Բ. Սոլոն իմաստասէրը ըսաւ այս առածը. «Պարտ » է յամենայնի զչափ ունել». այսինքն՝ պէտք է ամեն բանի մէջ չափ մը ունենալ, չափաւոր խորհելու է, որչափ մտացդ կարողութիւնը կը տանի, անկէ վեր հետամուտ ըլլալու չես. չափելով, կշռելով խօսելու ես խօսքդ, որ եաքը խօսածդ քեզի ամօթ չբերէ. զուգակշիռ կարողութեանդ չարմար գործի մէջ գտնուէ. անանկ բեռան տակ մտիր որ կարող ըլլաս տանելու:

Գ. Պիտտակոս իմաստասէրը կը խրատէր. «Երբ » կամիցիք առնել ինչ, մի երբէք պանծասջիք ընդ այն, » զի թէ ըստ ձախողակ իմն արկածից ոչ մարթասջիք » ՚ի գլուխ հանել զայն, յայնժամ լինիք յամօթ նախա» տանաց». ըսել է որ երբոր բարի բան մը կամք կ'ընես սկսելու, ջոլլայ որ գործը չաւարտած՝ պարծե՛ նաս, վասն զի կարելի է որ ձախողակ դիպուածք մը վրայ գալով կարող չըլլաս կատարելու այն սկսած գործդ, որով յետոյ ամօթ ու նախատինք կ'ըլլայ քեզի:

Դ. Պերիանդրոս իմաստասէրը այս խոհեմութեան լսսը կուտայ մեզի ըսելով. «Երբժան է չափաւոր լի» նել ՚ի յաջողուածս, և ՚ի ձախողակս ղպօն». ըսել է որ՝ անչափ վստահութիւն մը չունենանք յաջողութեան մէջ, և եթէ ձախողակ դիպուածի հանդիպե՛ լու ըլլամք՝ մեր մտայ արիութիւնը յուսահատութիւնով չխանգարենք. այլ պէտք է ոչ յաջողութեան

յուսալ՝ և ոչ ձախորդութեան առեն յուսահատիլ. որչափ աշխարհի մէջ ենք՝ յաջողութիւնը ու ձախորդութիւնը անընդհատ յաջորդութիւն ունին մեզի համար. ինչպէս հիւանդութիւնը և առողջութիւնը մեր անձին վրայ կուգայ ու կ'երթայ։

Ե. Կղեոբուլոս իմաստասէրը այս անվերապելի կանոնը կուտայ ըսելով. "Սակաւ խօսեցիր և լաւ բան ըրիր". ըսել է որ շատ սորվիլ ըսելով և քիչ խօսիլ հարկաւոր ժամանակին. որովհետեւ ուր տեղ քիչ է խօսքը՝ այն տեղը աւելի կը փայլի խոհեմութիւնը, ինչ որ շատ կը խօսի, իրեն ունեցած յարգը կը կորսընցնէ։ Նայէ Աստուծոյ բնութեան երկու ականջ տուած է, այն ալ մէտաքացը, բայց լեզու միակ. և այն շրթամբ փակուած. ահա քեզի նշանակ պարտաւորութեան սակաւ խօսելու և շատ լսելու։

Զ. Ինչպես իմաստասէրը խոհեմութիւնը անկորուստ պահելու համար այս մարդկային կենաց օգտակար խրատը ուսանեցաւ. "Աստմունութիւն և գահավէժ խորհուրդ։ Երկուք այսոքիկ հակառակ են խոհեմութեան։" Եան ինչ աստմունութիւնը բարկութիւնը շատ չարիքներու պատճառ կ'ըլլայ, ու ամեն բարիքները կը մերժէ, բարկացող մարդը բերնէն ելած հայհոյութիւններովը երբեմն կը շառագունի և երբեմն կը թալկանայ, ոտնգներէն բարկութեան ծուխ արձակելով, շրթունքները դողդոջալով, մարդկութեան կերպարանքէն կ'ելլայ, հրէշ ճիւաղ գազանի մը նմանութիւն կը բերէ վրան։ Եան ինչ կը գոչէ կը բառանչէ ցուլի նման, կը մռնչայ իբրեւ զառիւծ, և վիշապի պես կը շչէ. իբրեւ շուն կատաղի կը յարձակի ամենուն վրայ անխտիր բարեկամաց և թշնամեաց. արջի նման ոտքը գետինը կը զարնէ սաստիկ բարկութեամբ. ամենքը կը սասանեցունէ։ Ուրեմն բարկացողը էր մարմնոյն կերպարանքը կ'այլափոխէ. սաղ հա-

մար Պղատոն փիլիսոփայն կը խրատէր ամեն մարդ, որ բարկացողին հայելի մը տանին, որ իրեն այլանդակ կերպարանքը տեսնայ անոր մէջ, ինքը իրմէ զարհուրի. բարկութիւնը չէ թէ խոհեմութեան մահ է, այլ կեանց ժանտախտ յանկարծ մահաբեր: Ասոր համար է որ ճարտար բժիշկները խրատ կուտան տեղի չտալ բարկութեան, ինչպէս կը գրէ Հիպոկրատես: "Բար" կութիւն և տրտմութիւն սաստիկ՝ յանկարծահաս "մահուան է առիթ:" Այս բարկութիւնը չէ որ՝ երբ բեմն ընդ երկար հիւանդանալու ժամանակ չի տար մարդուս, այլ իբրեւ անողորմ գահիճ մարդը կեանքէն կը վերջացունէ. բարկութիւնը մարդուս միտքին խոհական մտածմունքները կը խանգարէ, խոհեմութիւնը բոլորովին կը մերժէ, մէկէն՝ ի մէկ մտքին եւ կածը ընել կուտայ, անոր համար ըսաւ Հիսս խնայուն. "Արտմութիւն և գահավէժ խորհուրդ:"

Բարկութեան կիրքը մտաց աչքը կոյր կ'ընէ, վասն որոյ չկրնար որոշել բարեկամը թշնամիէն, պարտաւորը անպարտէն, մեծը պզտիկէն, որ կողմը ըլլայ կը գայ հալիւժի, կը տեսնայ որ բարկացող մը իրմէ մեծէն վեր բայ յանդգնութիւնով կը յարձակի, անկէց ինչ մեծ մեծ վնասներու կը հանդիպի, այնուհետեւ չափ անձին ձին ճանաչել կուտան իրեն կամ անարգելով բանիւ կամ արժանաւոր պատիժ տալով: "Մի կապեր ընդ "սուն հզօրի, մի գուցէ անկոխ՝ ի ձեռս նորա:" Սիր. ԻԳ. 1: Կը տեսնայ որ բարկացողը իրմէն վար եղող ատոր անզօր մարդիկներուս կ'ակսի մարտնչիլ. չամչնար իրեն տկարութենէն, այլ իբրեւ հաւասարին հետ կը մտքտուի, որ չէ թէ միայն շատ մեծ ամօթապարտ կ'ըլլայ և իրեն վնհանգստութեան յարդը կը կորսընչացունէ: "Այր բարկացող նախատէ զկռիւս, իսկ երբ "կայնամիտն և զհանդերձեալն ցածուցանէ:" Առակ. ԺԵ. 18: Բարկացողը երբեմն իրեն բարեկամաց վրայ կը

խրոխտաց, սրտմտութեան նեաւթը արձակելով անոնց սիրտը կը վերաւորէ. ևեծ ապերախտութիւն ըրած կ'ըլլայ. որովհետեւ բարեկամը երբեմն բարւոյն կասեցուցած է. իսկ բարկացողը անոր բարեկամութեանը վտանգ ապերախտութեամբը չարիք կը հատուցանէ: "Հատուցին ինձ չար փոխանակ բարւոյ,ատելութիւն "փոխանակ սիրոյ իմոյ:" Սաղ. ճԸ. 5: "Ով հատու- "ցանէ ղչար փոխանակ բարւոյ, չար չ'ուտանէ նորա "մի պակասեսցի": Առակ. ԺԷ. 13:

Ուրեմն բարի մարդը և բարի քրիստոնեայն բարկութեան կիրքը միշտ պիտի երեսն երկայնմտութեամբը և խոհեմութեամբը անձնահարէ, ջընջայ որ բարկութեան սրտմտութեան կրիցը հեռուելով գահավիժի անիրաւութեան խորխորատներուն մէջը, և մանաւանդ Աստուծոյ արդարութեանն դատաստանին պարտաւոր դանուի: "Բարկութիւն մարդոյ զարդարութիւն "Աստուծոյ ոչ գործէ:" Յակ. Ա. 20:

Ուրեմն, սիրելի ընթերցող, այս տեղս եօթնեորդ խմատսակրին Պիղծին համառօտակի և ազդու առած իյնինք: "Պարտ է անձամբ յանձնէ զգուշանալ". հարկ է մեզի ոչ թէ միայն մեր բարկութեան կիրքը խոհեմութեան զօրութիւնով յաղթելու փոյթ ունենալ, այլ կարող պիտի ըլլանք չարադրգիռ ղպայտկան բաղձանքներնիս զսպելու, ջընջայ որ մենք մեր անձին չար յօժարութեանցը բաղձանացը հեռուելով սիրելի վերնայինք վերնայինք, առաքինութեան ուղիղ և լուսաշաւիղ ճանապարհէն ելլենք ու մոլութեան խաւարային կրատեան ճանապարհին մէջ թաղթափիլնք: "Ո՛անապարհք "արդարոց իբրեւ զլոյս ծագին և առաջնորդեն՝ և "լուսաւորին, մինչեւ ուն ծագեսցի: Ո՛անապարհք "ամբարշտաց խաւարինք, և ոչ գիտեն ուր անկցին "թակղին:" Առակ. Դ. 18—19:

Այժմ մարդ զգուշութիւն արթնութիւն մտաց

պիտի ունենայ իրեն անձին վրայ, որ ամեն մէկ զգայութիւնը պահպանէ ամօթխածութիւնով, մանաւանդ Աստուծոյ երկիւղիւը, որպէս զի չունենայ ջարդութիւն, մեղայ սովորութիւնը, որ այս սովորութիւնը երթալով կ'ըլլայ երկրորդ բնութիւն, այնուհետեւ անձելը կ'ըլլայ դժուարին: Աստ համարէ որ Ներսէս Շնորհալի սուրբ հայրապետնիս այս տուն աղօթքը մեզի սովրեցուցած է: "Աւետնական տէր, դիր
" պահապան աչաց իմոց զերկիւղ քո սուրբ, ոչ եւս
" հայիլ յարատս. և ականջաց իմոց՝ ոչ ախորժել լսել
" զբանս չարութեան, և բերանոյ իմոյ՝ ոչ խօսիլ զսուտ
" լեզուն, և արուի իմոյ՝ ոչ խորհիլ զչարութիւն, և ձեռաց
" իմոց՝ ոչ գործել զանիրաւութիւն, և ոտից իմոց՝ ոչ
" դնալ 'ի ճանապարհս անօրէնութեան, այլ ուղղեա'
" զշարժմունս սոցա լինիլ միշտ ըստ պատուիրանաց
" քոց յամենայնի:"

Աստ պարտք է մեզի թէ որ ուզենք բարի մարդ և բարեպաշտ քրիստոնեայ ըլլալու, մեր մտաց ներքին խորհուրդը պիտի քննենք անձին առանձին, որ ջըլլայ թէ՝ մեր մտաց չիշողութեան պահարանին մէջը գաղտնի պահուած ըլլան անօրէնութեան և անիրաւութեան մեղաց խորհուրդներ, թէ որ գտնանք զանոնք, իբրեւ թշնամի հոգւոյ և մարմնոյ մերոյ՝ իսկոյն հարկ պիտի համարինք մեզի Աստուծոյ նպաստաւոր շնորհքներուն յուսալով՝ մաքրելուս գուրս հանելու մերժելու և աւերելու: "Ո՛գոյշ լեր անձին քումմ, գուշ
" ցե լինիցի բան ծածուկ անօրէնութեան 'ի սրտի
" քումմ:" Բ. Օրին. ԺԲ. 9: "Լթէ զանձինս քննէաք
" ապա ոչ դատապարտիէաք:" Ա. Կոր. ԺԱ. 31:

Այս տեղս չիշենք մեր հոգւոյ լուսաւորչին՝ սրբոյ հօրն Գրիգորի բազմերախտ հայրապետին մերոյ բանական խրատը, որ մեզի աւանդեց: "Որպէս լոյս
" ոչ փոխի 'ի խաւար. այլ զխաւարն լուսաւորէ, և ոչ

» կեանք ՚ի մահ , այլ զմահացեալսն կենդանութիւն ՚ի տէր ։
» Այսպէս կամք բարի՝ զանարգսն Թողու և զլսաւան
» մեծարէ ընտրօք Աստուածն » ։ Լ֊ս ։ ճ֊ ։ Զ ։

Աստ պէտք է գիտնալ Թէ , սուր տեղ կը զօրանայ չար մոլեկան խորհուրդները՝ որ միտքերուն մէջ տեղի կը գտնայ ։ Իմաստունները լսեր են որ դատարկաշրջիկ անձը , որ անգործ անաշխատ է մտօք և կամօք , և ինքն է պատանի և երիտասարդ , վատախորհուրդ չարութեանց կ՚ելլայ միշտ ենթակայ ։ Աստր համար անգործ կեանք անցուցնող մարդը վատթար է քան զանբան կենդանիս , Թէպէտ կը ծնանին իբրև մարդ , բայց դատարկաշրջիկ անգործ ճեալով՝ ժամանակնին կ՚անցունեն ոչ իբրև զմարդ գործունեայ , այլ իբրև անասուն ուտել և ննջել և շրջիլ աստ և անդ դատարկ և պարապարդ ։

Իմաստուններուն և աստուածաբաններուն է այս առածը ։ » Աստր դատարկութիւն , անդ աւենայն ախտ « և մոլութիւն » ։ և Թէ ։ » Դատարկութիւնն է մայր » աւենայն չարեաց » ։ Զի որ տենք Աստ մարդիք եմք , մեր հայրենի ժառանգութիւնը չպիտի մոռնանք , որ է ։ » Պրտամբ երեսաց քոց կերիցես պհաց ք֊ » ։ Ջմուռնանք առաքելական խրատը ։ “ Թէ որ ոչն կամիցի » գործել , կերիցէ մի ։ » Բ ։ Թես ։ գ ։ 10 ։ Ինչ չուտով աւելնալութիւն պիտի ընէ դատարկաշրջիկ մշակը վարձք խնդրելու այդիին տիրոջմէն , Թէ որ բնաւ ինքը չէ աշխատեր այդիին մէջը ։ Այեւս կը համարուի այն մարդը քան Թէ կենդանի , որ Թէպէտ աշխատելու համար ծնած է , բայց ծոյլ պղերգ անգործ միսացած է ։ Ճ֊ատ բնական օրինակներ ունիմք , որ զմեզ աշխատելու և գործելու կը հրաւիրեն իրենց չարժելովը և գործելովը ։ Ինչպէս արեգակը կը դառնայ իրեն առանց֊քին վրայ , աստեղները կը հոլովին ։ երկիր միշտ չարժուելի ունի ։ Ջուրը միշտահոս է , եթէ անգործ մնայ մէկ տեղ մը , կը հոտի կը նեխի ։ Ասոնց ալ

առանցմէ օրինակ առնելով՝ գիտայ պիտի ու իմաս տասիւռ որ իւրեն կեանքը գործելով պիտի պահէ . Թո պունը դրսի օրինականները . մինչ մեր վրայ մտածենք , կենսական շնչառութիւննիս շարժումն կենալու ըլ լայ՝ կենդանութիւննիս կը պակսի . անանկ է նէ՝ առ նախշուտ և մահառիթ կեանք կը վարէ այն մարդը , որ անգործ դատարկ մնացեր է , ոչ մուտաւորական աշ խատութիւն ունի և ոչ մարմնաւոր , ոչ աղատական և ոչ ծառայական արուեստի կը պարապի :

Այս թշուառութիւնը նկատելով Սողոմոն իմաս տունը կը խօսի . « Անչև յերը անկեալ կաս ոմ վատ , » համ ճրը ի քնոյ զարթիցես : Փոքր մի ննջիցես , փո » քրը մի նամիցիս , փոքր մի նիրհիցես , փոքր մի » հանգուցանիցես զձեռն քո ի վերայ լանջից քոյ : » Այլա այնուհետեւ հասանիցի քեզ իբրեւ զչար ճա » նապարհորդ աղքատութիւն , և կարօտութիւն իբ » րեւ զմիր սուրհանդակ . ապա թէ անդանդաղ լինիս » ցիս , եկեսցէ իբրեւ զաղբիւր ամառն քո , և կա » րօտութիւն իբրեւ զայր մի չար ինքնահալած լինիս » ցի » . Առակ . Զ . 10—11 :

Այս բարոյական խրատներով՝ արդեօք ոմանց դիւ րին պիտի երեւայ հաստատելու . անշուշտ անանք , որ ընդ երկար մտերմութեան մէջ չեն մնացեր , չար կիրքերը իբրեւ իրենց բնական սովորութիւն մը չեն ըրած , շուտով պիտի հաստատին : Իսկ անանք որ՝ սովորութ ըրած են մտերմութեան հետեւիլը , իբրեւ բնական բեր մունք բնութեան կը գործեն , շատ դժուար է սանկ ներուն մտքին մէջը բարոյական առաքինութեան բարի սերմը սերմանել , ու անկէց պտուղ քաղելու յոյս մը ունենալ , մինչ սպառած քարը բոյս կը բողբոջէ . սոր համար իմաստունները ըսեր են . « Ընդերկար » սովորութիւն փոխի յերկրորդ բնութիւն » :

Այսանիներս կը յանդիմանէ Աստուած Իրեմիա մար

պարէտալ. «Նէթէ փոխիցէ հնդիկ զմորթ իւր, և ինձ »զևայտուց իւր, և դուք լինիջիք կարողք պարծել »զբարի ուսեալքդ զչարիս». Երէմ. ԺԲ. 23։

Նայ անկարելին, այսինքն նոյն առվտրութիւնը՝ որ երկրորդ բնութիւն եղած է, բնականապէս անհնարին պիտի ԹուԻ մեզի չար բարուց բարիի փոխոութիւնը. եթէ բնականապէս խորհինք, հարկաւ պիտի ըսենք. «Նէթէ քաղիցէն 'ի փշոց խաղող, և 'ի տատասկէ »Թուզ»։ Նայց երբոր մարքերնիս ՋերմեռանդուԹեամբ, կատարեալ յուսով հաստատենք աստուածային ամենաբաւական շնորհքներուն ներգործուԹեանը վրայ, մենք ալ Քաջերուել հրեշտակին հետ ձայնակից ըլլալով պիտի ըսենք. «Ո՛չ ոչ տկարացայն առ Նո՛ »տուծոյ ամենայն բան»։ Ղու՛կ. ԺԸ. 27։ Վ՛րան զի վճիռ է քրիստոսական. «Նմինայն ինչ հնարաւոր է »այնմ որ հաւատայն։ Մարկ. Թ. 22։

Նէթէ բնականապէս կը հաւատացուի արդեօք որչափ վայրեայ գաւազանը մէկէն 'ի մէկ գալարի ծառկի, և պտուղ բերէ. բայց սուրբ գիրքը կը վկայէ որ աստուածային շնորհաց ներգործուԹիւնը Նհարոնի այն չոր վայրեայ գաւազանը ծաղկեցուց, և ընկոյզ ալ պըտղաբերեց։ Թուոց. ԺԸ. 8։ Եբր. Թ. 4։

Նրդեօք յուսալի է որ ապառաժ քարէ մը բարեհամ ջուր բղխի, բայց Նստուծոյ հրամանին շնորհիւը Քարեբ լեռը Մովսէս մարգարէն երբ գաւազանաւ զարկաւ Նստուծոյ ցոյց տուած վէմին՝ անկէ ջուր բղխեցաւ. ինչպէս կը պատմէ սուրբ գիրքը։ Ելք. ԺԷ. 6։ Աղ. ՃԺԳ. 8։ Ա. Կոր. Ժ. 4։

Տեսանք որ բնականի հակառակ եղած բանը աստուածային զօրուԹեան ներգործուԹիւնը կարելի կ'ընէ. մնաց բնականապէս խորհիլ թէ ինչպէս կարելի կ'ըլլայ Պօղոս առաքեալին դարձը, չարագործուԹիւն չէր մի եղած անոր Քրիստոսի եկեղեցւոյն ատենակ թշնամուԹեամբ հալածել և հալածել

ելլալը, և քրիստոնեայներըն չարչարելը, բանտերու մէջ
նետելը: Գոր. Թ. 1—14: Տիմ. Ա. 13: Այսու երկրորդ
բնութիւն եղած չարաչար սովորութիւնը և ճշմար-
տասէրց բարքը մի վոխեց քիչ ժամանակի մէջ. ա-
պաքէն աստուածային շնորհաց ամենազեօրիկ ներ-
գործութիւնը, այս շնորհքին լուսավը ճանչցաւ ճըշ-
մարտութիւնը. ասով Քրիստոսի եկեղեցւոյ հալա-
ծիչը բանին կենաց քարոզիչ եղաւ. ասով Պօղոսը Պօ-
ղոս անուանեցաւ. ինչպէս ինքն ալ կը վկայէ. "Շնոր-
" հօքն Աստուծոյ եմ ինչ և իցեմ, և շնորհք նորա
" որ յիս՝ ընդունայն ինչ ոչ եղեն": Ա. Կոր. ԺԵ. 10:

Ձի որ ասով մաքսաւորները և մեղաւորները մա-
քրութեան և մեղաց ընտելացեալ չար սովորութիւննին
վոխեցին, ու Քրիստոսի հետեւելու արժանացան,
յաւիտենական փրկութեան հասին. այս գերբնական
շնորհաց աստուածային պարգեւին համար կը գրէ
Պօղոս առաքեալը. "Օ՛ն արդարացեալք շնորհօքն եղե-
" ցուք խաղաղութիւն յաստուած ունիմք յՅիսուսէ Քրիս-
" տոսէ Տեառնէ մերմէ": Հռոմ. Ե. 1:

Աստուած մեղաւորները, մոլիները և մահաւանդ մի-
սիոնները Թող յաւակուր չըլլայ, այլ խնդրեն Աս-
տուծմէ այս շնորհքը, որով չարութեան ունակու-
թիւննին, մոլեկան բարքերնին դիւրաւ պիտի վոխ-
ուի: Աստուածային շնորհաց աղբիւրը միշտ բաց է,
միտահաս է, իրեն կը հրաւիրէ. "Եթէ ոք ծարաւի
" իցէ, եկեսցէ առ իս և արբցէ": Յովհ. է. 37:

Ձըլլայ որ այն մոլորեալ և մոլի եղբայրները կամա-
պատրաստութեամբ այս աստուածային շնորհաց աղբիւ-
րէն հեռացած ըլլան և աշխատասիրութեամբ ապա-
շխարութեամբ և անձնասիրութեամբ այն ճրիա-
ւոր շնորհքները ընդունելու անպատրաստ անձն
պահակ սիրտ ունեցած ըլլան. առանձնաբար համար
Երեմիա մարգարէին բերնով Աստուած մեղադրեալ

պանդատ կ'ընէ. "Արկաւ էարէս գործեաց ժողովուրդ
» իմ, զիս Թողին զաղբիւր ջուրց կենաց, և փորեցին
» իւրեանց գուբս ծակոտս, որք ոչ կարացին ունել
» զջուրս » : Երեմ. Բ. 13 :

Ահա այս տեղս շատ օրինակներ ունինք տուրք գիր-
քեն իրենց էարտնթեանը մէջ յամառեալ յանդուգն
մեղապարտները, որպիսիք են, Կրկս, Դատան և Աբի-
րօն, որունք պատժեցան Աստուծոյ բարկութեամբը :
Թուոց. ԺԶ. 32 : Սղմ. ՃԵ. 17 : Սաւուղ Թագաւոր,
ուրկէ հեռացաւ Հոգին տուրբ : Ա. Թագ. ԺԶ. 14 :
Յերոբովամ, որ Աստուծոյ ընտիրացը ազգեցութիւնը
նորը մերժեց իրեն կամապաշտութիւնովը, ու չկա-
խեց իրեն չար բարքը : Գ. Թագ. ԺԳ. 33 :

Ջեմ ուզեր յիշելու ընտիազուրկ արձամարհու-
թեամբ մոլեան Յուդայ իսկարիովտացին, որ մոլոր-
ցաց և մոլորեցուցչաց պարապուսխ դասելի է : Զի մոռ-
նանք, զանցառութիւն չընենք այս տեղս Ներսեփէս
ըսուած էարը, որ հակառակեցաւ աւետարանական
ճշմարտութեան և առաքելական վարդապետութեան
և ապանդութեան, որ միշտ էարաչար բանակռիւ ըլ-
լալով կը յանդգնէր առաքեալներուն հետ վիճաբա-
նելու, և առաքելոց հաստատած եկեղեցւոյ մէջէն
պարզամիտ ժողովուրդները կը հանէր, իրեն ալանդին
դարձնելու կ'աշխատէր, սոր համար կը գրէ Յօ-
հաննէս աւետարանիչը. Գ. Կաթ-ղիէայ Թու-ղին ՌԸ:
Ա. 9—10 :

Տեսնէր ընտիազուրկ Թշուառ հոգիները, հիմակ
այս տեղս արտաքին պատմութիւններէն մէկ քարե-
պաշտ աստուածասէր ծերունի մարդու մը աոահակ
ամենալաւ և կարի ապիկար որդւոյն համառօտ պատ-
մութիւնը պիտի լսես : Նախ քաղաքին մէջը կը բնա-
կէր այն վերոյիշեալ բարեպաշտ ծերը, Թէպէտ ինքը
ծեր, բայց սրտին մէջը եղած աստուածպաշտութեան և

բարեպաշտութեան ոչին վտավտուն և քաջարթուն
էր. ուստի իրեն մէկհատիկ զաւակը շատ փոյթ ունէր
որ ըլլայ յառաջադէմ բարոյական ուսմանց մէջ և հա-
գեւորին ջերմեռանդ, վասն որոյ միշտ իր առջևը կը
կանչէր և քաղցրաբանութեամբ կ'ըսէր. Արդեօք իմ
սիրելի, դուն այս իմ ծերութեանս մխիթարութեան
առիթ պիտի ըլլաս, ահա ես հայրական գթութեամբ
քեզի պարտական եմ խրատ տալու, դուն ալ պարտա-
կան ես արդիական հնազանդութեամբ ունկնդիր ըլ-
լալու ինձի, որ բարոյականութեան և աստուածպաշ-
տութեան գիտութիւնով զարդարուած՝ Աստուծոյ հա-
ճելի ըլլաս, և այս մուտաւորական պատուիրանդ չի-
կտրընցուներս, մանկ ըլլե Սողոմոն իմաստունին խը-
րատը. "Արդի խրատեալ իմաստուն եղիցի, և ան-
» միտն 'ի ճառայութիւն վարեսցի »: Առակ. ժ. 5:
Արդեօք, այս երիտասարդական հասակիդ մէջ նայէ որ
միտքդ զարդարես Աստուծոյ օրէնքներովը, պատու-
րանքներովը, որ քուկին կեանցդ ընթացքը չըմոլորի
չըպայթակղի. առաքինութեան ուղիղ ճանապարհնե-
րու մէջ գտնուիս. յիշէ՛ արդեակ, Դաւիթ մարգա-
րէին այս խօսքը. "Ո՞ւր ուղղեսցէ երիտասարդ զճանա-
» պարհս իւր, այլ 'ի պահել զբանս քո »: Սաղ. ճԺԹ. 9:
Տե՛ս, արդեակ, երիտասարդութիւնը՝ թէ որ ամօթ-
խածութիւնը և համեստութիւնը, խոնարհութիւնը
և պարկեշտութիւնը իրեն հետ միշտ սիրելի ընկեր
չընէ՝ խելագարներուն կարգը կը դասուի, ու շատ
վտանգներու մէջ կը գահավիժի: Երիտասարդ մը թէ
որ մըլի, յանդուգն, լկտի և անպատշաճ ընկերներու հետ
սեռութիւն ընէ՝ իրեն հայրական պղնծութիւնը և
բարի ժառանգաւորութիւնը կորստեան կը մատնէ:
Այլ, տե՛ս, արդեակ, մարդս ընկերներէն կը ճանչ-
ցուի, գիտե՞ս որ Պղատոն փիլիսոփային օր մը մէկ
երիտասարդ պայազատ մը հանդիպեցաւ ու հարցուց

անոր. եւ քանկին իմաստութեան համբաւը լսեր եմ, անոր համար եկայ այս խնդիրը ընելու. պիտցիր, իմացիր, եւ քանի մարդ եմ, թէ չար. այն ալ պատասխանեց. այո, կարող եմ պիտանալու, թէ որ իմանամ ընկերներուդ սիրելին, ինչ տեսակ երիտասարդներու հետ չաճախ կը նստիս ու տեսութիւն կ'ընես. թէ որ ընկերդ բարի և առաքինի են, անշուշտ հաղորդած կ'ըլլան քեզի նրանց բարի ունակութիւնը, դու ալ հարկաւ բարի և առաքինի եղած կ'ըլլաս, իսկ եթէ չար և մոլի բնաւորութիւն ունեցող են՝ աներկբայ կ'ըսեմ որ՝ դու ալ չար և մոլի ես. ըսաւ պրուտ. "Ուման ընծանն սիրէ": Ընկեր միայն աս, մարդեակ, այս փիլիսոփային ձեռնարկութիւնը: Յիշէ Դաւիթ մարգարէին բարի դիտաւորութիւնը, որ կը յայտներ ըսելով. "Ընտեղի ես զժոխոց չարաց, և ընդ ամբա-"րիշտս ես ոչ նստայց". Սաղմ. ԺԶ, 5: Ուրեմն պի քանի պիտէր այս երանելի Նարգարէն. որ մեկը առաքինութեան մէջ յառաջադիմութիւն չնկատար ունենալ, գո-վելի վարուց տէր չըլլար, թէ որ տեսութիւն ըրած ընկերները չար բարքերու մոլեկան վարքերու տէր եղած ըլլան, միթէ կարելի է, որ մեկը չարչախ թա-թաւի ձիւթով և չարտեղանայ չիպղծի անոր անձը: Անկ ըրէ Իմաստունին խօսքը. "Որ շօշափէ զձիւթ" "պղծեացի՝ ի նմանէ, և որ կցորդի ամբարտաւանի" "սիրացանի զամբարտաւանութիւն": Սիրաք. ԺԳ. 1:

Ան ըսեր, որդեակ, ես կ'պտուշանամ չեմ հաղոր-դիր անոնց չարութեանը, իմին բարոյականութեանս աղնուականութեան վնաս չիգար տեսութիւն ընե-լէն. մեկ ըրէ Պօղոս առաքեալն խրատն ալ, ես իմ հայրական պարտաւորութենէս ստիպեալ խօսած բա-րոյական խրատներս տալ կնքեմ. "Ան խաբէք, տպա-"կանեն զբարս բարեսուն բանք չարք": Ա. Կորն. ԺԵ. 33:

Ուրա ծն սրի որդեակ, ահա գրով տալեցի այս

*փոքր թերթիկ՝ վրէ գրուած կարճառօտ խրատս, նա-
յէ որ առանց վատ խորհրդածութիւն ընես, բարոյա-
կան կատարելութիւն ունենաս, առաւածպաշտու-
թեան կրթութիւնով հմտանաս ըլլաս, որ աւետ բա-
նի վրէ օգտակար է, յաւիտենական երանութեան ա-
ւետիս ունի, կատարեալ առաւածպաշտութեամբ
մեղ երկնից արքայութեան ամենագանկալի փառաց
պիտի հասցունէ. "Օ՜ի մարմնոյ կրթութիւն առ աս-
"կաս ինչ օգտակար է. իսկ առաւածպաշտութիւն,
"առ ամենայն ինչ օգտակար է, և զաւետիս կենաց
"ունի ներկայիս և ղհանդերձեալոյն": Ա. Տիմ. Դ. 8:*

*Ընդ՝ սիրելի ընթերցող, այս խրատները որ կա-
տար առաւածասէր և բարեպաշտ հայրը իրեն որդ-
էյն, և որդին ալ մտիկ ընելէն վերջը և Թուրքին
թերթերը կարդալէն յետոյ ինչ կ'ըսես, պէտք չէր որ
որդիական հնազանդութեամբ խոնարհ ակնածութիւ-
նալ մը երախտապարտ շնորհակալութիւն մը ցոյց
տար, և այս խրատաբանութիւնը իբրեւ գանձ հայրե-
նի ժառանգութեան պահէր և մտացը մէջ գանձէր:
Օ՜ինչ, ոմ քամնելի յանդգնութեան և անառակու-
թեան բարուց տոհակ և սպիրտատ որդւոյն, որ վա-
խանակ շնորհակալութեան լրբութեամբ պատասխան
տուաւ, կը խնդրեմ կ'աղաչեմ հայր, ըսաւ, ինչու
համար պարապ աշխատեցար, ինչու պարապ տեղը
կը հոգնիս, այս փափաքովդ շատ դրամ ծախս ըրիր,
յաւուրկ ուսումնական իմաստասէր ուսուցիչներ կալ-
եցիր ինծի համար, ամեն օր կ'աշխատէին որ ես
ուսումնական և բարոյականութեան տէր ըլլամ, ա-
ռանձնակի սենեակ, և անոր մէջն գրատունը տեսակ
տեսակ թանկագին գրքերով լեցուցիր, որամադրու-
թիւն մը ընդունակութիւն մը չունեցայ անոնցմէ
բան մը գանձելու մտքիս մէջը, այդ տուած բարոյա-
կանութեան և առաւածպաշտութեան լոյսերուդ*

զեմ վախուած դողուած կը սեանամ իմ յիշողութեան մտացս ընդունակութեան պատուհանները։ Ինչ որ կ'ուսուցանէին իմ խնամատարք ուսուցիչներս վարժարանեաս, ես ժամացուցին կը նայէի, որ երբ զբօսանաց ժամանակը գայ ժամանէ պիտի, որ ես ընկերներուս հետ ծաղկազարդ բուրաստանին մէջը առանձնացած ուրախ ըլլայի նարտ կամ Թուղթ խաղալով։ Իմանալ այն սենեակը որ գրքատունով զարդարուած կը սեանամ, ներքնատուներուն տապնագ մը կը պաշարէ արտիս մէջը, բայց երբեմն այն նարտ կամ Թուղթ խաղացող ընկերներս կը սեանամ՝ այնչափ ուրախ կ'ըլլամ որ եթէ անոնց հետ առաւօտէ մինչեւ երեկոյ նստիմ և դիշերին մինչեւ ցառաւօտ, յիրաւի կ'ըսեմ. բնաւ չեմ դղուիր, ասանկ խաղերու զբօսանքներու և ասոնց պէտք հետեւողներու հետ առաւել հետեւիլ ախորժելի և ցանկալի է ինձ հայր իմ, քան Թէ այդ խօսած ու գրած բարոյականիդ միտք տալու, զբօսանքը և խաղը և բնութեան բերմանց հետեւիլը ինձի ուղղակուրիեն եղած է, այս ընդարձակ ու համարձակ կենցաղավարութեանս սովորութիւնը չեմ կարեր փոխել։

Այս խօսքերով ըստ ամենայնի յուսահատ եղաւ բարեվիս հայրը այս տղային յանդուգն և լիրբ պատասխանատուութեանը վրայ, և կտրած պտոյտ և տխրած դիմօք դարձաւ տո ապատամբ և տոհակ որդին և ըսաւ, ահա յայտնի ըրիր քուկին անհնազանդութիւնդ և ապիրատութիւնդ, ապա տրտմութեամբ պիտի իջնամ՝ի հող մահու. վասն զի գրուած է «Որդի անվիտ տրտմութիւն է մօր»։ Ա՛լ գիտցայ որ դու նախատինք բերես պիտի իմին անուանս, ինչպէս գրուած է։ «Ամօթ հօր որդի անվիտ»։ Առակ. ԺԵ. 20. ԺԹ. 13։ Այս ցաւալի խօսքերը լսեալ մերժեց առջեւէն ինքնահաւան և մոլի տոհակ որդին. և երկար տարիէն ետքը մեռաւ. և մնաց որ-

դին ուխտել Տայրենական ժառանգութեան : Այլ ա-
ռանց քրտանց և աշխատութեան սեպհականեր էր
այն ամեն հարստութիւնը, վասն որոյ մոլի և զեղխ
բանքոլը սկսաւ իրեն պատուաստոյծ և փոխարէութ էար
ընկերննեռոլը վասնել ամենքը՝ խաղերու զեղխութեան
և անառակութեան մէջ, սակայն յետոյ այնպէս յետին
Թշուառութեան մէջ ինկաւ, որ մինչեւ անգամ
կը խնդրէր ծառայութեան մտնել, բայց և ոչ ոք կ'ըն-
դունէր զանի, ըսելով Թէ իրեն հայրենի ժառանգու-
Թիւնը վատնողը միԹէ այլոց հարազատութիւն կրնայ
նայ ընել, ըստ այնմ. "Ուր ինքեան չար է, որպ ու-
" րուք բարի եղիցի " : Սէրա. ԺԴ. Ե : Այս Թող օրի-
նակ ըլլայ ատոր Թշուառութիւնը այլոց սոսկակ և
անառակ որդւոց, որ զգուշանան ինքնահաւանութեան
և յանդգնութեան չարախաւսական կխրթերէն, և ուն-
կընդիր ըլլան սրտի մօտք առաքինի անձանց բարի և
օգտաւէտ խրատներուն, որով ըլլան բարի մարդ և
բարի քրիստոնեայ, ըլլայ որ վերջը մարմնաւոր և հո-
գեւոր բարիքներու կարօտանան, ատոր համար խրատ
կուտայ երիտասարդներուն Սողոմոնեան առակը :
"Որդ՝ որդեակ լսէր լինիս, և մի ապախտ առնիցես
" զբանս իմ, հեռի արա՛ ի նմանէ զձանապարհս
" քո, և մի մերձենար ի դրունս տանց նորա : Որ
" մի մատնեսցես օտարաց զկեանս քո, և զտարեաց
" ծլս քո անողորմից : Որ մի լցցին օտարք ի զօրու-
" Թենէ քումմէ և մի մացեն վաստակք քո ի տուն
" այլոց : Եւ զղջանայցես յետոյ, յորժամ մաշիցին ան-
" դամք մարմնոյ քո : Եւ ասիցես Թէ զիա՞րդ ատեցի
" զկրթութիւն, և ի յանդիմանութենէ խոտորեցաւ սիրտ
" իմ : Ոչ լսէի ձայնի խրատուի իմոյ, և ուսուցչի ի-
" մոյ ոչ դնէի զանկն իմ : Սակաւիկ մի և աս անկանէի
" ի մէջ ամենայն չարեաց, ի մէջ եկեղեցւոյ, և ժո-
" ղովրդոց " : Ա-ոկ. Ե. 7—14 :

Ա. Ա տայետագայ գլխուն մէջ տրուինք թէ՝ ինչ միջոցաւ տուիք կրնանք ունենալ մեր բնաւորութեան արմատը մեր սրտին մէջէն բոլ ամենայնի խլելու և իւրաքան մերժելու, որ այնուհետեւ տեղի չունենան մեր սրտին մէջը անկարգ աշխարհի ցանկութիւնները, անոնց և ընդունայն բաղձանքները, ինքնահաւան փառասիրութիւնը ու մոլորական և մոլեկան շար կիրքերը։ Եւ

ԳԼՈՒԽ Ժ.

ԱՊԱՒԻՆ բնական օրհնքի լուսով զգօնացեալ շատ քարի մարդիկ կը գտնուին աշխարհի մէջ, կը տեսնաս որ հաւատարիմ են բարեկամութեան՝ և պաշտպան ազգասիրութեան՝ և եղբայրսիրութեան կանոններուն, և պատրաստ են միշտ քաջութեամբ յայտնելու ընկերութեան և ազգայնութեան սիրոյն պարտաւորութիւնը գործով և արդեամբ. կը տեսնաս որ համեստ և քարի վարք ունին, և անկեղծ սիրով հասարակութեանը բարերար և օգտամատոյց կը հանդիսանան, առատաձեռնութեամբ մխիթարիչ կ'ըլլան աղքատաց, բարեկրթութեամբ խոհական և քաջալաւ տանուտէր եղած են և բարեկարգող գերդաստանի իւրեանց։ Ահա ասանկ բնական լաւութիւն և բարեմոյն բնաւորութիւն ունեցողները կ'անուանին քարի մարդիկ աշխարհի, որ միայն բնական օրհնաց առաջնորդութեամբը քարի վարուց մէջ կը գտնուին։ Հռովմ. ը. 14։ Այս բնական օրինաց լոյսը առնակարող արարիչն Աստուած մեր բնութեանը շնորհեր է. որ սուր կանոնովը վարէ մարդս իւր կենացը ընթացքը ուղիղ և անմոլար, մանաւանդ զգուշանայ խօսքի և գործի մէջ էն սխալիլ։ Յակ. Գ. 2։

Այս նակ է բնական դատողական մարդկային մտաց, որ կ՚ուսուցանէ և կ՚առաջնորդէ մարդուս ջորը քա-
լել ուղիղ ուրչել, պարտաւորը դառել և անպարտը պաշտ-
պանել, ժիր և նախանձաւոր ըլլալ բարեգործութեան
և վուԹաջան, մերժել և անարգել չարագործու-
Թիւնը։

Այս տեղս շատ ապացոյցներ ունիմք տալու, բայց
անոնց մէջէն բաւական կը համարիմ յիշելու մեր նա-
հապետներէն քաջասիրտն և ողջախոհն Աբրա գեղե-
ցիկը որդին Աբրամայ քաջին, արդարեւ գեղեցիկ ոչ
միայն արտաքին տեսլեամբ զարմանալի գեղաւոր, այլ
և ներքին բնաւորութեամբն քաջալաւ և բարոյական
լուսով շքեղապանծ. այս գովելի վսեմ բնաւորու-
Թեանը չքնաղութիւնը հանդիսացոյց ողջախոհ քա-
ջութեամբ դէմ կենալով վախճառս ցանկութեան Շա-
միրամայ Նինոսի Ասորւոց Թագաւորին չարախառակ
կնոջը. վասն զի երբոր այս Շամիրամ Նինոսի մեռ-
նելէն ետքը նստաւ մեծ Թագուհի Ասորեստանի մէջ,
և անուանեցաւ Թագաւոր Ասորեստանի, լսեց Աբրայն
պատմել գեղեցկութիւնը, սիրաւ չարաչար տուփանօք
ցանկալ. այնուհետեւ մեծամեծ և ծանրագին ընծայ-
ներ և յաւուրկ մարդ խրկեց, որ Աբրայն գեղեցիկ հա-
մոզուն հաճի գնալու առ Շամիրամ և անոր հետ ա-
մուսնանալու, և կը խոստանար որ բոլոր Նինոսի եր-
կիրները իրեն տայ, որ անոնց վրայ Թագաւորէ։ Շա-
միրամին այս առաջնոյ կամքը մերժեց Աբրայն գեղեցիկ
ըստ ամենայնի դէմ կենալով յանձը չառաւ կատարե-
լու անոր չար կամքը. ասոր համար աւասիկ բարկացաւ
Շամիրամ և պատերազմ բացաւ Աբրային վրայ, ու ե-
կաւ մինչեւ Ասորւոց երկրաւս մօտ գաշտին քովը, ու
այն տեղը Աբրայն ալ իրեն զօրքերովը պատրաստուեցաւ
պատերազմիլ, բայց աս քաջասիրտն Աբրամ՝ Շա-
միրամայ Ասորւոցն վրայ անիրաւ յարձակմանը հա-

մար իրաւամբ առաւիկ բորբոքուած ըլլալով՝ իրեն բա-
նակին գլուխը անցաւ, ու կամեցաւ ինքնին մարտնչիլ
իրեն թշնամւոյն հետ, և յանկարծ հանդիպելով անոնց
սրոյն դիւցազնական մահուամբ մեռաւ. ինչպէս կը
պատմէ Յօհաննէս կաթուղիկոս պատմիչը: Տեսնը
բարոյական գեղեցկութիւնը և բնութեան բարեբա-
ւութիւնը, որ թէպէտ մեռաւ, բայց իր քաջալա-
ւութեան և վեհանձնութեան անմահ յիշատակը թո-
ղուց:

Այս բնական օրինաց կշռուելը և չափուիլը կենցա-
ղավարիլ, և աշխարհիս մէջ բարեկեցիկ ըլլալ կը վարդա-
պետէր Սոկրատ իմաստասէրը, որ մեկուկ ձգեց ամեն
փիլիսոփայական հետազօտութիւնները ու բնաղինա-
կան քննութիւնը, միայն բարոյական իմաստասիրու-
թեան հետեւեցաւ, և կը պարապէր երիտասարդնե-
րուն սորվեցունել կրթութիւն ունենալ, բարի և ա-
ռաքինի վարուց և առաքինութեան հետևիլ: Պլէտոն
կը հաստատէ Տասկուլեան ինդրոց երրորդ գլխին մէջ,
որ Սոկրատ եղաւ նախկին ուսուցիչ բարոյական իմա-
ստասիրութեան Յունաց ազգին Աթենքի մէջ:

Այս իմաստասէրը դժբաղդ ժամանակի հանդիպե-
ցաւ. վասն զի այն ժամանակները Աթենքի մէջ բար-
բարոսական երեսուն բռնակալներ բացարձակ իշխա-
նութիւն կը վարէին: Անոնց ըրած և գործած անօրէ-
նութիւնները կը հակառակէին բնական օրինաց բա-
րոյական իմաստասիրութեան, որն որ կ'ուսուցանէր
Սոկրատ: Որ մը տեսաւ որ սոնց քովը գթութիւն
չկայ՝ անգթութիւնը տիրեր է, սոնց մէջ ամբար-
տաւանութիւնը, անժուժկալութիւնը, անամօթու-
թիւնը, անիրաւութիւնը կը շարունակուին, որով խըղ-
ճալի հատարակութիւնը սոնց բռնակալութենէն կը
հարատահարի կը տապնոպի կը ջարջարի, շատ կը ցա-
ւէր, կ'ուզէր որ սոնց անօրէն գործոցը համար հա-

մարձակ տեճնաբանութիւն մը ընէ անոնց բռնակալութիւնը զգաստացնելու համար։ Այսպէս երբ որ Աթենացւոց մէկ երեւելի ժողովքին գոնուեցաւ՝ անոնց մէջը ներկայացաւ Սոկրատ և ազատ համարձակ ըսաւ, Մէկ Աթենացիք մեծամեծք և փոքունք, լսած ըսածը ինձ, համաձօտ բանիւ օրինակ մը ունիմ տալ ձեզ բարոյականութեան։ Մէկ անդէորդի մը յանձնեցին շատ մը անդեայք որ խնամ տանի պահպանէ ու սրածէ. սրդ՝ թէ որ այս անդէորդը երբոր խնամելու տեղը՝ այն կենդանիները անհնամ թողու և օրէ օր նիհարացուննէ և անոնց թիւերը պակսեցուննէ. ինչ կ'ըսէք, հարկաւ պիտի խոստովանիք, որ այն անդէորդը անշուշտ չար ու վատ մէկն է. այսչափ լսաւ ու լռեց։ Այն տեղը կային այն երեսուն բռնաւորներէն երկուքը Կրիտիաս և Քարիկլէս, հասկըցան որ իմաստասիրին այս լսած այլաբանութիւնը իրենց համար էր, վասն որոյ իսկոյն նոր օրէնք սահմանեցին՝ որ Աթենքի մէջ չլսուրվեցրնեն մէկու մը ազատ խօսելու արուեստը. իմացաւ Սոկրատ որ իրեն համար հակառակութեամբ սահմանեցաւ այս օրէնքը բռնաւորներէն, որպէս զի ինքն ալ արգելուի ազատօրէն ատրվեցուննելէն բարոյական իմաստութիւնը, որուն քովը կը ժողվուէին երիտասարդները և ինքն ալ կ'ուսուցանէր։ Այս երկու օրէնսդիրներուն քովը մօտեցաւ Սոկրատ, իբրեւ յանգէտս արգելման պատճառը հարցուց, ինչէն հարկաւորեցաւ այդ նոր օրէնքը սահմանելու, այդ ձեր հրամանը ինչ իմաստ ունի։ Երբոր անպատասխանի մնացին երկու բռնաւորները Կրիտիաս և Քարիկլէս, Սոկրատայ իմաստութեամբ լսած խնդրոյն բռնաւորական իշխանութեամբ յանդգնեցան պատասխանելու. քեզ ասելք, այսուհետեւ չըլլայ որ քու քովդ ժողովներ աշակերտներ, և ուսուցանես. այլ և համարձակ կ'ըսենք քեզի, չժողովին պիտի քու քովդ ուսանողներ,

և դուն ալ ուսուցիչ պիտի չըլլաս մէկուն մը անգամ։ Օ՜արմանալի յանդգնութիւն, գիտեմ, սիրելի ընթերցող, ոմն էր աս Արիստիա բռնաւորը, ժամանակաւ յաւաջ Սոկրատայ աշակերտներուն մէկն էր, որ իրեն ամբարտաւան վատ և ժանտ բնաւորութեանը հակառակ երեւցաւ Սոկրատայ բարոյական վարդապետութիւնը, վասն որոյ չէ թէ միայն հրաժարեցաւ աշակերտութենէ, այլ մեա բռնաւորներուն հետ միացաւ ու իրեն առաքինի և բարոյական վարժապետին հակառակեցաւ ու եղաւ ոխերիմ թշնամի։

Այս բռնաւորներուն ժողովը շատ նեղութիւն և տագնապ կուտային Սոկրատին բազմատեսակ նախատանօք, որ չըտրվեցուներ բարոյական իմաստասիրութիւնը, բայց այն ամենը մէկդի ձգելով՝ կը շարունակէր իրեն համարձակախօսութիւնը առաքինական վարքը օրինակ ըլլալով ամենուն։ Ինոր համար նորէն այն բռնաւորները զրպարտեցին Սոկրատայ վրայ այս երկու բանը, մէկ մը որ կ՚արգիլէ հասարակութիւնը մեր աստուածոց (կուռքերուն) պաշտօն մատուցանելէն, ու նոր աստուածներու պատիւ տալով՝ անունք պաշտել կը տրվեցուներ. երկրորդ զրպարտութիւննին էր այս. Ընթերցողց երիտասարդներուն վարքը վատ ընելու ապականելու խրատ կուտայ։

Այս երկու ջարաչար զրպարտութիւնը Անիտոս Սոկրատայ ոխերիմ թշնամին հնարեց, որ անիրաւ ճարտարախօսութիւնովը և ճոռոմաբանութեամբը համոզեց չատերուն միտքը ու մահապարտ դատեցին Սոկրատը, որ միայն իրեն կողմը ունէր իրեն անմեղութիւնը և ճշմարտութիւնը ու անով կը մխիթարուէր։

Ես այն անիրաւ բռնակալներուն ժողովին մէջ հանդարձակ և անվեհեր խօսեցաւ Սոկրատ՝ այսպէս. գիտէք, ով Աթենացիք, որ ես բնաւ պատիւ և փառք չէի ընդուներ մէկ մը բարոյական վարդապետու-

թեան համար։ Այս ալ յայտնի է որ իմ նախանձոտ չարախօս թշնամիներս, որչափ որ իմ վրայ սխակալու թիւնով զինուորած են, բնաւ չեն կրնար պատրաստ կամ յանցաւոր ընել զիս յայտնի վկայութեամբ մը, վասն զի իմ բռնկեալ գործս, վարդապետութիւնս և խրատս այս էր ամենուն միանգամայն ծերերուն և երիտասարդներուն մարմնաւոր պիտոյական բաղձանքներու չընդհատելիս, աշխարհի անցաւոր և խաբուսիկ սիրով չվսեմանալիս, այլ հանպոյն բաղձանաց բարոյական առաքինութեան հետեւիլ և անոր սիրովը վառուիլ։ Ա՛վ Աթենացիք, ես ձեզի ոչ բնաւ վարդապետեցի որ առաքինութենէն չընծայուիր մարմնաւոր ճոխութիւնը և հարստութիւնը, այլ միշտ ընդ հակառակն ուսուցի խօսեցայ, որ մեծութիւնները յառաջ կուգան առաքինութենէն և անկէց ծնունդ կ՚առնեն ամեն մտաւոր և մարմնաւոր բարիքները։ Արդ՝ թէ որ այս օրինակ խօսքերս երիտասարդներուն մտացը և վարուցը վնաս և ապականութիւն կը բերէ, ապա ես ինքնին կը խոստովանիմ, ոչ Աթենացիք, որ ես իսկ մեղապարտ եմ և դատապարտութեան և մահուան պարտաւոր։

Ասատանի ըրէք, ինչպէս որ կը համձիք, գիտցէք, որ ես բնաւ չպիտի ստրջանամ, չպիտի փոխեմ իմ վարդապետութիւնս բարոյական ուսմանց վրայ, իմ ձեռքս չէ այս ուսման ընթացքէն դուրս ելլելը, և կամ այս կերպ վարժելու պաշտօնս ձգելը, վասն զի այս պաշտօնին մէջ կարգեց զիս Աստուած, (1) Ան ինքն բորբոքեց իմ սրտիս մէջը այս բարոյական ուսման եռանդը, որով պիտի վարժեմ հրահանգեմ իմ սիրելի քաղաքակիցներս, եթէ այժմ ինձի համար պատրաստուած գառն մահուան երկիւղը սասանութիւն տայ՝

(1) Սոկրատ իրեն բարոյական խնամատարութեան լուստը խնացաւ որ արարիչ աշխարհի կայ, և այն է Աստուած, որ և անուանից վերնախնամ տիրութիւն։

ու Թողում այս բարոյական ուսմունքը, որն որ յանձ
նեց ինձի վերնականաւ առաջնութիւնը, և պատուիրած
է մատակարարել հայրենեացս: Ոչպէն վատագործ
և դատուելու արժանի կ'ըլլայի անօրէնի մը պէս, և
աստուածային հաւատոյ պահանջմունքէն մերժուած:
Վխտեմ ձեր մտքին մէջը հաստատ դրեր էք գիս
խրատելու որ լուռ կենամ այսուհետև և ըստ ամե
նայնի դատարկ բարոյական ուսմունք ստրվեցունելէն,
այս մասին ձեզի իմ պատասխանիս այս է, ով Աթե
նացիք, կը պատուեմ կը մեծարեմ զձեզ, և իբրեւ իմ
սիրելի հայրենակիցներս կը սիրեմ զձեզ, բայց քաջ
համոզուած եմ որ շատ բարի է և լաւագոյն Աստու
ծոյ հնազանդ ըլլալ քան թէ ձեզի, որչափ կենդանի
եմ չպիտի լռեմ, հարկ և պարտք է ինձի խմաստասէ
րել և պիտի յորդորեմ զձեզ, որ հետեւիք ուսանիլ,
մի յուսաք ինծմէ, ով Աթենացիք, որ մահուանէ պիտի
երկնչիմ, ու ձեզի պիտի ստպատանիմ և ձեզմէ իմ
փրկութիւնս պիտի խնդրեմ այս դատաստանին մէջ
որ ամբարիշտ և անիրաւ մարդու մը պէս կը զրպարտ
ուիմ ու կ'ամբաստանուիմ Մելիտոսէն: (1) Այսանկ քա
ջասիրտ և լջլամիտ խորհրդով և վեհանձն դիմաք հրա
պարակեաս առեներեսութիւն ըրաւ Սոկրատ, իւրեն
իրաւունքը և հաստատուն մտաց խորհուրդը յայտ
նելով ամենուն, և ամենքը թէպէտ ալ ի բերան եւ
զան, բայց այն անապրոյն բռնաւորաց յանդուգն նա
խանձը և ժպիրհ սրտմտութիւնը առաւել ևս զայրա
ցաւ և բորբոքեցաւ յետին թշնամութեամբ. ան
իրաւ դատաստանաւ վճռեցին Սոկրատայ անպարտա
կան մահ, որն որ ընդունեց անվրդով և անխռով ոգ
ով: Այն տեղը գանուեցաւ հաւատարիմ աշակերտ

(1) Այս երկուքը՝ Անիտոս և Մելիտոս ախերիմ թշնամիներն էին Սոկրա
տայ, առնք առնելի մէջ զրպարտութիւն և ամբաստանութիւն ըրին
Սոկրատայ վրայ, մինչեւ հանեցին անիրաւ վճիռ մահուան:

ներէն մէկը Ա՛պողոթոդոս անուն, և աղեխարսխ սրտիւ աղաղակեց բարձրաձայն այն անկրաւ ժողովին մէջը, ահա անպարտ մեռանի Սոկրատ, որ դարձաւ անոր քաղցրալիր դիմօք ու ըսաւ, սիրելիդ իմ, ինչ կ՚ուզէիր, կը խնդրէիր որ ես մեղապարտ մեռանէի, դիտցիր, որ Ա՛նիտոսը ու Մելիտոսը զիս կը մահացուննեն իրենց ամբաստանութեամբը և զրպարտութեամբը, բայց ինաս մը չկայ այս տեղս։ Ա՛նանկ անվրդով և անվհատ քաջասրտութեամբ կը խօսէր, և ամենուն իրեն արհամարհանքը կը հանդիսացուցանէր և կը զարմացուներ մինչեւ վերջին շունչը, որն որ ապառեցին մոլեխինդ դեղ մահու արբուցանելով։

Ա՛յս գերահռչակ իմաստասիրին Սոկրատայ դիւցազնական արհամարհանքը քաջահմուտ են ուսումնասէրները, որոնք որ կարդացեր են Պուլենի հնախօսութիւնը։

Ա՛պաքէն տեսար որ այս Սոկրատ իմաստասէրը ինչպէս եռանդուն էր բարոյական իմաստասիրութեան հոգւով, որով կը փութար և կը հոգար միշտ Ա՛թենացիները կրթելու և բարոյական ընելու, որպէս զի ամենքը ըլլան բարի վարուց տէր և բարի մարդ. աշխարհի։

Իմաստասիրին այս աշխոյժ և վառվռուն ոգին ոչ ոք կարողացաւ խափանել և կամ հնձուցանել, մանաւանդ վատթարագոյն չարասէր կրնաք բարոյական ազնիւ կրթութիւնը աւերողները բարբարոս սուգ թշնամիները բնաւ երբէք կարող չեղան այս վեհանձն և բարենախանձ իմաստասէրը ապառնալիքներու երկիւղ ներով արգիլելու, և կամ հրաժարեցունելու իր մեծացը հասատատուն դիտաւորութենէն, որ էր միայն անխտիր ուսուցանել ամենուն բարոյական իմաստութիւնը։

Ա՛րդ՝ այս տեղս, ո բարեմիտ ուսումնական սիրելի,

կշռադատեմ մուքդ բաղդատելով հոգեւորը մարմնաւորին հետը, և ապա սկսիր իրաւամբ ըսելու, թէ որչափ առաւել քան զՈկրատ իմաստասէրն փութաջան վաստակասէր էին և քաջապէն արիացած քրիստոնէական հաւատոյ ճշմարտութիւնը քարոզող սրբազան Հայրապետները և վարդապետները. վասն զի առանց քարոզութեան պաշտօնը գերազանց էր քան զպաշտօն իմաստասիրին. ասոր կրթութեան ուսմունքը մարմնաւոր էր և բնական օրինաց կը հետեւէր, իսկ անոնցը հոգեւոր էր և չնորհական և աւետարանական օրինաց կը ծառայէր: Վ'իտենք որ բարոյական գիտութիւնը մարդս ըստ աշխարհի քաղաքական և աղնուական բարի մարդ կ'ընէ, բայց հոգւոյն երջանկութիւնը կարող չէ տալու, որ է Աստուծոյ չնորհացը և փառաց ժառանգ ընել, որով պիտի ընդմէջ բարի մարդ Աստուծոյ, բայց և այս կ'ընայ աստուածպաշտութեան կրթութիւնով: Աւրեմն բարոյականին հետեւողը կ'անուանի միայն բարի մարդ աշխարհի, իսկ աստուածպաշտութեան հետեւողը միանգամ կը կոչուի բարի մարդ Աստուծոյ. ինչպէս այն գերապոյն և վեմ վերատութիւնը կուտայ Պօղոս առաքեալը կատարեալ աստուածպաշտութեան, ուղղափառ քրիստոնէական հաւատոյ ճշմարտութեան հետեւողներուն այս օրինակ շքեղ անուանակոչութեամբ: "Այլ դու » ով մարդ Աստուծոյ փախիր յայնցանէ և երթ զհետ արդարութեան, աստուածպաշտութեան զհաւատոյ »: Ա. Տիմ. Զ. 11:

Բարոյական գիտութիւնը մարդուս չար ու մոլի կիրքերը կը յաղթէ ու կը մերժէ և վարքերը կ'ուղղէ բարի ընելու. իսկ կատարեալ քրիստոնէական կրթութիւնը անկրօնութեան մոլորութիւնները և սատանայական չարանիւթ թելադրութիւնները կը յաղթէ

ու կը մերժէ մարդուս կամքէն միտքէն ու սրտէն, և աստուածային շնորհաց ձիրքերով կը զարդարէ և աւետիս յաւիտենական կենաց կը պարգեւէ. ապա ըստ առաքելոյն. "Արմնոյ կրթութիւն առ ամենայն ինչ "օգտակար է, իսկ աստուածպաշտութիւնն առ ամե"նայն ինչ օգտակար է, և զաւետիս կենաց ունի զար"դիս և զհանդերձելոցն": Ա. Տիմ. Դ. 8:

Նարեկական գիտութեան լոյսը կուտայ բնական օրէնքը՝ որն որ աստեղաց նուազ լուսաւորութեանը կը համեմատէ Մակեբերանը, իսկ կատարեալ աստուածպաշտութիւնը կը լուսաւորի քրիստոնէական հաւատոյ ճշմարտութեան պայծառագոյն լուսովը, որ կը համեմատի ըստ Մակեբերանին արեգական համատարած լուսափայլութեանը: Յօհ. ԺԲ. 36—46:

Նարեկական մարմնաւոր կրթութիւնը մարդս հոգեւոր և մարմնով կատարեալ բարի և Նստուածոյ հաճելի կարող չէ ընելու, բայց քրիստոնէական ճշմարիտ հաւատոյ բաւական հոգեւոր կրթութիւնը հրահանգութիւնը կատարեալ բարի կ'ընէ մարդը և Նստուածոյ հաճելի. ըստ այնմ. "Որ մէջն քարոզեմք, և "խրատեմք զամենայն մարդ, և ուսուցանեմք զամե"նայն մարդ կատարեալ ի Քրիստոս Յիսուս": Կող. Ա. 28: "Նրանց հաւատոյ անհնար է հաճոյ լինել "Նստուծոյ": Եբր. ԺԱ. 6:

Նրդ՝ թէ որ այսքանիկ համառօտիւ մը խնդացանք որ շատ զանազանութիւն կայ բարոյական մարմնաւոր ուսմունքին և քրիստոնէական հոգեւոր կրթութեան մէջ տեղը, ապա այս Նրեւտարանի ճշմարտութեան հոգեւոր ուսուցիչներուն և քրիստոնէական ողջամիտ վարդապետութիւնը տարածող քարոզիչներուն հաստատակամութիւնը, անվեհեր արիութիւնը և երկայնութիւնը շատ սքանչելի պիտի ըլլայ բարոյական խմաստութիւնը տրվեցուածոյ Սոկրատէն և ուրիշ ի-

մատաստէրնեերէն։ Այսան զի վերին իմաստութեան անե-
լատուեր և անսպառ լուսով փայլուն զարդարուած
էին. «Ո՛ իմաստութիւն խօսիմք ընդ կատարեալս, զի-
» մաստութիւն ոչ աշխարհիս այսորիկ, այլ խօսիմք
» զիմաստութիւնն ծածուկ խորհրդով»։
Ա. կորն. Բ. 6։

Սուրբ Հոգւոյն Աստուծոյ ամենակարող անյաղ-
թելի զօրութեամբը պրկացած էին. «Ակն ոչ եթէ
» զհոգի աշխարհիս առաք՝ այլ զՀոգին որ Աստուծոյ»։
Ա. կորն. Բ. 12։ Ու Յիսուսի Քրիստոսի հաւատոյ
ճշմարտութեան սիրովը սաստիկ վառուած էին. «Որ
» մեկնեսցէ զմեզ ի սիրոյն Քրիստոսի, նեղութիւն,
» թէ անձկութիւն, թէ հալածանք՝ թէ սով՝ թէ մեր-
» կութիւն՝ թէ վիշտք՝ թէ սուր. որպէս և գրեալ է,
» վասն քո մեռանիմք զօրհանապազ, համարեցաք իբ-
» րեւ զոչխար ի սպանդ»։ Հռով. Ը. 35։

Անհաւանդ առաւել արիութիւն ունէին հաւա-
տոյ ճշմարտութիւնը, աւետարանական ողջախոհ վար-
դապետութիւնը քարոզելու համարձակ և աներկիւղ.
որովհետեւ անջնջելի տպաւորուած է իրենց յիշողու-
թեանը մէջ և հաստատուն ներգործած այն Յիսուսի
Քրիստոսի անփոփոխելի և ամենազօր խոստումնքը.
«Ո՛վ ի ես տայց ձեզ բերան և իմաստութիւն, որում ոչ
» կարիցեն կալ հակառակ կամ տալ պատասխանի ամե-
» նայն հակառակորդք ձեր»։ Ղուկ. ԻԱ. 15։

Աւրեք ունկնդիր ըլլալնէ այս համարձակ քարոզիչ
ներուն սրբազան Աւետարանիչներուն և Առաքեալ
ներուն և առաքելական սրբազան Հայրապետներուն
և վարդապետներուն, որ աւրբը աւետարանը ողջամիտ
վարդապետութիւնով, աւրբը գիրքերուն հեղինակու-
թիւնովը կը քարոզեն, և ուղղափառ քրիստոնէական
հրճնքին լուսաշաւիղ ճանապարհին կ'առաջնորդեն, և
աստուածային հնարհացը և փառաց արժանաւոր կ'ը-

նեն. այս տեղս հեռանալ վկայութիւններուն ալէկ
մը մեր մտաց խորհրդածութիւնը տանիք. «Ա՛յլ ոչ
» վասն նոցա միայն աղաչեմ, այլ և վասն ամենայն
» հաւատացելոց բանիւն նոցա յիս» : Ցօհ. ԺԷ. 20 :
«Ո՞վ ի ամենայն որ կարդասցէ զանուն տեառն, կեցցէ :
» Իսկ զնիմդ կարդասցեն, յոր ոչն հաւատային, կամ
» զնիմդ հաւատասցեն, որոմ ոչ լուան, կամ զնիմդ
» լուիցեն առանց ուրուք քարոզելոյ : Հռոմ. Ժ. 13—14 :

Ա՛յս ուղղափառ հաւատոյ ճշմարտութեան և փրկութեան ուսմունքը մարդկային մտաւարժութեամբ և բնական գիտութեամբ ստացուած արդիւնքնիս չէ, այլ աստուածային ներքին շնորհաց յայտնութեան և ներշնչութեան ձրի պարգեւն է, որ կը շնորհի Աստուծոյ անսահման մարդասիրութենէն, և զերբնական նպատակս կը լուսաւորէ խոնարհութեամբ և սրբութեամբ սրտի ընդունողներուն միտքը, որով կարող կ'ըլլայ հաւատոյ ճշմարտութիւնը ըստ ամենայնի ընդունելու և սրտի մօտ ճանչնալու ու այնուհետեւ մոլորութեան ու անհաւատութեան կորստապատիր գաղափարները միտքէն մերժելու և անհետ ընելու. ասոր համար կը գրէ Պօղոս առաքեալը : «Ո՞վ շնորհ նօրա էք փրկեալք ի ձեռն հաւատոյն, և այս » ոչ ի ձէնջ, այլ Աստուծոյ պարգեւ է » : Եփես. Բ. 8 : Ա. կորնթ. ԺԲ. 9 :

Ա՛յս աստուածային ներգործական շնորհաց պարգեւը արդեօք ում արժանի կ'ըլլայ առնելու և արդիւնաւորելու սրտին ու մտքին մէջը, անշուշտ ան որ Աստուծոյ երկիւղը ունի սրտովը և պարզութեամբ մտաց կը կարդայ, կամ մտիկ կ'ընէ աստուածաշունչ սուրբ գիրքերը, և անոնց ողջամիտ վարդապետութիւնը լսելու և սորվելու կը հետեւի, որով կ'ըլլայ կատարեալ հաւատացեալ և բարի քրիստոնեայ բարի վարք ունենալով. և առնցմով բարի մարդ Աստուծոյ, այս իսա

քերուս հետ կշուտադատե բաղդատիլ երանելի Պօղոս ա-
ւաքելոյն գրածը ։ “Ի՝մենայն գիւղք աստուածաշունչք
» և օգտակարք ի՝ վարդապետութիւն են, և ի յան-
» դիմանութիւն և յուղղութիւն, և ի խրատ արդա-
» րութեան, զի կատարեալ եղեւ մարդն Ի՝ստուծոյ,
» յամենայն գործս բարութեան հաստատեալ» ։ Բ.
Տիմ. գ. 16—17 ։ Ի՝սոր ապացոյցը կ՝ուզեմ տեսնալ, կար-
դամ Պօղոս առաքելոյը, որուն մէջ կը տեսնաս, որ յա-
տուկ աստուածային պզտեցութիւն մը եղաւ Փի-
լիպպոս առաքելոյն, որպէս զի երթայ Երուսաղէ-
մի հարաւային սահմանակողմը, որ կ՝ըսուէր Պաղա
կամ անապատ, իսկոյն եւս գնաց Ի՝նաքեալը այն
կողմը, և տեսաւ որ անկէց կառքովը կ՝անցնէր այն
աստուածավախ անուանի հոգը նեղքինի մարդը, որ
Աղամնեան տաճարին երկրապետութիւն ընեէլէն ետեւ
Երուսաղեմէն վերադարձ կ՝ընէր, և այն կառքին մէջ
նստած Ի՝սայի մարգարէին գիրքը կը կարդար. նոյն
ժամայն վերատին Ի՝ստուծմէ պզտեցութիւն եղաւ Փի-
լիպպոս առաքելոյն այսպէս, մօտեցիր ու էլ այդ կառ-
քիդ մէջ. մօտեցաւ Ի՝նաքեալը նեղքինիին կառքին,
և նայեցաւ որ կը կարդար Ի՝սայեայ մարգարէութիւ-
նը, մէկէն ի՝ մէկ հարցուց անոր. արդեօք կը հասկը-
նաս այդ կարդացածդիդ միտքը, այն ալ պատասխանեց,
ինչպէս կարող կ՝ըլլամ գիտնալու իմանալու. թէ որ
մէկը չառաջնորդէ ըստուվեցուն է ինծի, և այս ըսելով
հրաւիրեց Փիլիպպոս առաքեալը իրեն կառքը ու իրեն
քովը առաւ, և կարդացած Ի՝սայեայ մարգարէու-
թեան գիրքին տեղը այս բացուած էր ։ “Իբրեւ ոչ-
» խար ի՝ սպանդ վարեցաւ, և իբրև զորոյ առաջի
» կտրչի անմռունչ, այնպէս ոչ բանայ զբերան իւր.
» ի՝ խոնարհութեան նորա դատաստան նորա բարձաւ,
» և զազգատոհմն նորա ո՞ պատմեսցէ, զի բառնին յերկ-
» րէ կեանք նորա ։ ” Եսայ. ԽԳ. 7 ։

Ա՛յս տեղս մատուռ[թ]եամբ մը կարդալով նեղբէ[ն] նին սկսաւ խնդիր ընել Փիլիպպոս առաքեալին, կ՚ա[ռ]ջեմ քեզի ըսաւ, Նայի մարգարէն այս խօսքը որո՞ւ համար կ՚ըսէ, իրե՞ն համար, եթէ ուրիշ մէկու մը համար: Ա՛յնուհետեւ Առաքեալը խօսելու սկսաւ ու քարոզեց անոր, որ այս խօսքերը մարգարէութի[ւն] է Յիսուսի Քրիստոսի մարդեղութեան ու չարչարուելուն և խաչուելուն վրայ՝ և թէ Յիսուս Քրիստոս է Որդի Աստուծոյ և փրկիչ աշխարհի:

Ա՛հա տեսա՛ր, որ երկիւղած Աստուծոյ բարեմիտ նեղբինին կարդալով աստուածաշունչ տուրը գիրքին Նայեայ մարգարէութիւնը, և անոր վրայ խորհելովը Աստուծոյ կողմանէ խրկուեցաւ իրեն Փիլիպպոս առաքեալը, և անոր ողջամիտ քարոզութիւնը լսելով՝ և մասցը մէջ գանձելովը վերստին աստուածային Հրիա[կ]ան ընտրհաց հանդիպեցաւ և քրիստոնէական հաւատոց պարգեւին մասնակից եղաւ, և ՚ի ձեռն նոյն առաքելոյն Փիլիպպոսի մկրտեցաւ, և զօրացուցիչ արդարացուցիչ ընտրհաց տուրը Հոգւոյն Աստուծոյ արժանացաւ, ինչպէս գրուած է. "Նըցաց Փիլիպպոս զբերան
» իւր և սկսեալ ՚ի գրոցս յայտնէ՝ աւետարանեաց նմա
» զՅիսուս: Իբրեւ երթային զճանապարհայն, եկին ՚ի
» ջուր ինչ, և ասէ նեղբինին, ահաւասիկ ջուր՝ զի՞նչ
» արգելու զիս ՚ի մկրտելոյ, և ասէ ցնա եթէ հաւա
» տաս բովորով սրտիւ քով, մարթ է: Պատասխանի ետ
» և ասէ, հաւատամ եթէ Յիսուս Քրիստոս է Որդի
» Աստուծոյ: Նա հրամայեաց կացուցանել զկառան՝ և
» իջին երկոքեան ՚ի ջուրն, Փիլիպպոս և նեղբինին, և
» մկրտեաց զնա: Նա իբրեւ ելին ՚ի ջրոյ անտի, Հոգին
» սուրբ եկն ՚ի վերայ նեղբինեայն": Գործ. Ը. 26—29:

Ա՛հա այս է աստուածային գերբնական իմաստութեանէն հաւատոյ ճշմարտութիւնը սորվելու միջոցը և կերպը, և անկէց լուսաւորուելուն հնարքը. ըստ

այնմ. “Կրեալ է ի մարդարէս, և էզնցին ամենե-
» քեան ուսեալք Աստուծոյ, ամենայն որ լսէ ի
» Հօրէ և ուսանի, գայ առ իս»։ Յով. զ. 45։ Նրանի
» քեզ Սիմոն որդի Յովնանու, զի մարմին և արիւն
» ոչ յայտնեաց քեզ՝ այլ Հայրն իմ, որ յերկինս է»։
Մատ. ժզ. 17։ Այս աստուածային շնորհաց պարգե-
ւին հանդիպեցաւ այն Աստուծոյ երկիւղած Լիդիա
անուն կինը, որ երբոր Պօղոս առաքելոյն քարոզու-
թիւնը լսելով դնաց, ու պարզ մտօք և երկիւղածու-
թիւնով մոտիկ կ’ընէր, աստուածային նեղբին շնորհքը
ծագեցաւ անոր սրտին մէջը՝ որով արժանաւորեցաւ
քրիստոնէական հաւատոյ ճշմարտութեան աստուա-
ծային պարգեւը ընդունելու և մկրտուելու Պօղոս
առաքելոյն ձեռքովը. ինչպէս գրուած է. “Կին ոմն
» անուն Լիդիա ծիրանավաճառ՝ ի Թիւատիրէ քա-
» ղաքէ, երկիւղած Աստուծոյ՝ լուաւ, զորոյ աէր էակ
» եբաց զսիրտ անսալ ասացեալսն Պօղոսի»։ Գործ։ ժզ. 14։

Այսպա այս երանաւէտ հաւատոյ ճշմարտութիւնը
մեզի ճշմարիտ և բարի քրիստոնեայ պիտի ընէ, վասն
որոյ այս ուղղափառ հաւատոյ դաստիարակութիւնը
և կրթութիւնը մեզի աստը եկեղեցին Քրիստոսի
աւետարանական լուսով, և մանաւանդ աստը գրոց
հեղինակութիւնով կը մատակարարէ այն աստուա-
ծային հաւատոյ՝ շնորհքները ողջամիտ և անարատ
վարդապետութեամբ. ասոր համար կը գրէ Պօղոս
առաքեալը իրեն սիրելի Տիմոթէոս աշակերտին, որ
հաստատուն պահէ ողջամիտ վարդապետութեան այս
անարատ գաղափարը որ իրմէն լսեր ու տրվեցուցեր էր.
“Ունիցիս օրինակ ողջմտութեան բանիցն, զորս յինէն
» լուար՝ հաւատովք և սիրով որ ի Քրիստոս Յիսուս»։
Բ. Տիմ. ա. 13։

Այս աւետարանական ողջամիտ վարդապե-
տութեան մէջ պիտի զօրանայ ամէն մեր աստուածահաճոյ

առաքինութիւնը օր լսա օրէ, և մեր անձը հոգեւոր
երջանկութեան և բարեկաւութեան մէջ գտնուելով՝
սուրբ Հոգւոյն Աստուծոյ շնորհքներէն պիտի պաշտ-
պանուի, և ուղղափառ հաւատով և մաքուր սրտով
Աստուծոյ մերձաւոր և հաճելի պիտի ըլլայ»։ Այս
էր որ մեզի քարոզեց մեծ հայրապետն մեր սուրբ
Գրիգոր լուսաւորիչն, ըսելով. «Պատշ է միշտ դաս-
» տիարակութիւն աւետարանին՝ ի հրահանգել զմեզ
» ի լաւութեան կարգս, զի յանձանձեալք՝ ի շնորհաց
» սուրբ Հոգւոյն, ճշմարտութեամբ ամենայնիւք
» զվաստակս արդարութեան սուրբ սրտիւ և ուղղա-
» փառ հաւատով Աստուած»։ Ի ճառ. Բ. Ցածախ։

Այսպա պարտ է մեզի միշտ զգուշանալ, որ չըլլայ
թէ հակառակ ողջամիտ վարդապետութեան աւետա-
րանական ճշմարտութեան, և սուրբ գրոց վկայու-
թեանը անհամեմատ՝ նորահնար խաբէական մարդկա-
յին դիւրաճաշակ մտացը հաճելի, և մարմնաւոր ախորժ
ակաց ընդունելի, և աշխարհային ցանկութեան չար
մարուաւոր մոլար վարդապետութեան ուսմունքը ըլլա-
լով՝ ատելօղ և մերժող գտնուինք ուղղափառ հաւա-
տոց ողջամիտ վարդապետութեանը. վասն զի Պօղոս
առաքեալն սուրբ Հոգին ազդեց, և այն ալ մարգա-
րէացաւ ու Տիմոթէոս աշակերտին գրեց թէ՝ ժամա-
նակ պիտի ըլլայ, որ հաւատացեալ մարդիկներէն մեկ
պիտի չընեն ուղղափառ հաւատոց ողջամիտ և անարատ
վարդապետութեան, և հակառակին պիտի սուրբ ե-
կեղեցւոյն Քրիստոսի միակերպ և ուղիղ և ճշմարիտ
քարոզութեանը, այլ կողմնակցութեամբ մեկզմեկ
բաժնուելով՝ ամեն մեկ կողմը իրենց կամացը հաճելի
և լսելեացը ախորժելի քարոզիչներ պիտի ունենան, և
Քրիստոսի ճշմարտութենէն պիտի հեռանան. «Քանզ
» զի եկեսցէ ժամանակ, զի ողջմտութեան վարդապե-
» տութեանն ոչ անասցեն, այլ ըստ իւրաքանչիւր

» ցանկութեանց կուտեացեն իւրեանց վարդապետս,
» ըստ մարմանջելոյ լսելեաց իւրեանց, և ՚ի ճշմար-
» տութենէ անտի դարձուցանիցեն զլսելիս և յա-
» ռասպելս կործանեացին»: Բ. Տիմ. Դ. 3—4: Այս ան-
միաբանութիւնը և բազմատեսակ բաժանումը և վար-
դապետութեան անհամաձայնութիւնը հակառակ չէ
մի աւետարանական ճշմարտութեան և առաքելական
ողջամիտ քարոզութեան: Այլ պիտի ըսես, թէ որ
աւետարանական և առաքելական ճշմարտութեան
ուղղափառ մտօք հետեւող ես, վասն զի Յիսուս
Քրիստոս ինքնին յայտնեց, որ իրեն բարեբար կամացը
հակառակ իսկ է անմիաբանութիւնը և քրիստոնէից
բազմատեսակ բաժանումը, ասոր համար յայտնի և
ամենուն լսելի խնդրուած ըրաւ առ Հայր Աստուած,
որ ամեն հաւատացեալները հաւատոյ, յուսոյ և սիրոյ
միութեան մէջ մնան, զանազան վարդապետութիւն և
բազմատեսակ քարոզիչներ չունենան և այլայլութիւն
չբերեն քրիստոնէական ողջամիտ և ուղիղ հաւատոյ
միութեանը մէջ. ըստ այնմ. «Այլ ոչ վասն նոցա մի-
» այն աղաչեմ, այլ և վասն ամենայն հաւատացելոց
» բանիւն նոցա յիս. զի ամենեքին մի լիցեն, որպէս
» դու Հայր յիս՝ և ես ՚ի քեզ... Եւ ես զփառսն զոր
» ետուր ինձ՝ ետու նոցա, զի լիցեն մի, որպէս և
» մեք մի եմք»: Յով. ԺԷ. 20—21: Այլ, տե՛ս, քննէ,
Քրիստոսի եկեղեցին չէ որ այս համակամ և համամիտ
միաբանութենէն աճեցաւ զօրացաւ և բազմացաւ:
«Եւ ՚ի կատարիլ աւուրցն պենտեկոստէից էին ամե-
» նեքեան միաբան ՚ի միասին: Եւ բազմութեան հա-
» ւատացելոցն՝ էր սիրտ և անձն մի»: Գործ. Բ. 1. Դ. 32:

Տե՛ս, Պօղոս առաքեալը քրիստոնէական խորհրդա-
կան միաբանութիւնը անխուռով և հաստատ պահելու
համար ունեցած անժխտելի պարտաւորութիւննիս,
ինչպէս ճշմարիտ ու ճիշտ պատճառներով կ՚երեւա-

քանէ ։ « Փութա՛ պահել զմիաբանութիւն հոգւոյն
» յօդիւ խաղաղութեան » ։ Եփես. Դ. 3 ։ Ամենեւեւ
ամենքս մէկ սեպհական ժողովուրդ Քրիստոսի եմք,
և ամենքս հոգեւոր և խորհրդական մարմին Քրիս-
տոսի եմք, և մէնքն է ամենուն ընդհանրական գլուխ
կենդանարար և զօրացուցիչ ամենեցուն ։ Եփես. Ա. 22.
կողս. Ա. 18 ։

Նոյս և ամենքս մէկ հօտ պիտի անուանիմք Քրիս-
տոսի և մէկ աւետարանական ճշմարտութեան հոգե-
ւոր փարախին մէջ ժողվուած, և ամենուս վրայ մէն-
նիչեան միմիայն հովիւ քալ և հովուապետ ամենա-
նանամ մէնքն Յիսուս Քրիստոս է իսկապէս ։ Յօհ. Ժ.
11—14—16 ։ Գործ. Ի. 28 ։ Եբր. ԺԳ. 26 ։ Ա. Պետ. Ե. 2—3 ։

Նպատ մէնչպէս որ ընդհանրական և կենդանարար
գլուխնիս մի և նոյն Քրիստոս է, և ամեն ուղղափառ
և բարեպաշտ քրիստոնեայներըս անոր խորհրդական մար-
մին կ'անուանին, հաղորդուած ըլլալով անոր սրբարար
շնորհացը և փրկագործ զօրութեանը, և միանգամայն
ամենքս անոր սեպհական բանաւոր ոչխարներն եմք,
և այն իսկ է ամենուս վրայ ամենանանամ և ամենիշ-
խան հովիւս, և ամենուս յոյսը մէկ է հաստատուած
աստուածային պարգեւներուն վրայ, որով կանչուած
եմք յորդեգրութիւն Հօր Նստուածոյ ի ժառանգու-
թիւն յաւիտենական կենաց և երջանիկ փառաց ար-
քայութեան երկնից, ուրեմն մէկ է տէրերնիս Յի-
սուս Քրիստոս, որ իրեն փրկագործութեան իրաւուն-
քովը ամենքս ստացած է իրեն սեպհական ժողովուրդ,
և ամենքս անոր տրվեցուցած ճշմարիտ և կատարեալ
մի և նոյն հաւատքը պիտի ունենանք, որ նա մէնքն է
առաջին հեղինակ և նախկին հաստատիչ և պարգեւիչ
մերոյս ուղղափառ և կատարեալ հաւատոյ ճշմարտու-
թեանը ։ Եբր. ԺԲ. 2 ։ Նոյս և ամենքս ունինք անոր
հաստատած հոգեւոր և խորհրդաւոր ծնունդը սրբա-

րար և հոգեւնորոգ մկրտութեան. «Ի մարմին և ի
» հոգի, որպէս և կոչեցարուք ի մի յոյս կոչման ձերոյ.
» մի է տէր, մի հաւատք, մի մկրտութիւն: Եփես. Դ.
4—5—6: Ի յայս պատճառաներով չի որ ամեն զանազան
այլազգութ քրիստոնեայ ազգերը հոգեւոր խորհրդա-
ծութեան մէջ միաբան միաձուր և համակամ ըլլալու
համար, որբազան առաքեալներուն ժողովքը ամենուն
միանգամայն այս ամենավսեմ և գերամեծար անունը
տուին, կոչելով Քրիստոնեայ. «Ու եղեւ նոցա զամն
» ողջոյն ժողովել յեկեղեցին, և ուսուցանել ժողո-
» վուրդ բազում, և անուանել նախ յԱնտիոք զաշա-
» կերտան քրիստոնեայս»: Գործ. ԺԱ. 26: Ո՛նչ պան-
ծալի անուն է այս, չի որ այս քրիստոսաշնորհ անու-
նով զօրացաւ եկեղեցին Քրիստոսի, մարտիրոսներ
նահատակներ այս պաշտելի անունով արիացած կ'ելլ-
ային կռապաշտ բռնաւորներուն առեւանը, այս ա-
նուան սիրովը վառուած կը համբերէին ամաոիկ տան-
ջանքներու և կը դիմէին դառն մահուան, այս շնոր-
հապարգեւ և երջանկազարդ անունով կը զօրացունէր
կը հաստատէր հաւատացեալները Պետրոս առաքեալը:
Ա. կոր. Գ. 15—16:

Ընդ՝ ձեր է մնացեր այս ամենավսեմ երկնաշնորհ
քրիստոնէական անուան շքեղութիւնը, որ միայն
սուրբ գրքին մէջ կը տեսնուի, իսկ քրիստոնէից սըր-
տին ու մտքին մէջ ինչպէս ջահիտ լիապաւորէ և ջը-
ւիաւառորուի. ինչու համար քրիստոնէական ա-
նունին սիրոյ, միաբանութեան և խաղաղութեան ա-
մենապայծառ բարեճաճանչ շառաւիղները քրիստոն-
եայ ազգաց մէջը խափանուած ու արգելուած պիտի
երեւին. յիրաւի միայն անունին լսելով սուրբ գիր-
քէն և երբեմն քարոզիչներուն բերնէն կ'զմայլիմք և
երանութիւն կուտանք այն առաջին դարերուն մէջ
գտնուած քրիստոնեայներուն, որոնց մէջը քրիստո-

նեական սէրը, միաբանութիւնը և խաղաղութիւնը կը տիրէին, հիմակ անոր հակառակը կը տեսնուի աստ-
ղութիւն, անհաւանութիւն և խռովութիւն. ամենքը Ա-
ւետարանը կ'ընդունին եւ աւետարանական ճշմար-
տութիւնը կը ճանաչեմք կ'ըսեն, բայց այս է զար-
մանք, որ Ա-ւետարանով քրիստոնեայ ազգաց մէջ բա-
նակռուութեան հարցմունքներ հանելով, հակառակ
ողջամիտ վարդապետութեան սուրբ Ա-ւետարանին՝
նորահնար պէս պէս վարդապետութիւն հնարելով,
ուղղափառ քրիստոնեայները ստակով և աշխարհային
մարմնաւոր ազատութիւններ խոստանալով, պարզա-
միտները որսալու կը հեռեւին դայթակղեցունելով և
բաժանելով իրենց ազգային ուղղափառ և անարատ
Ա-կեղեցին, իրենց կողմը դարձունելու և իրենց ժո-
ղովուրդ շատցունելու կ'աշխատին, չեն բնաւ աշխա-
տիր այն աւետարանական քրիստոսաձիր սէրը, միաբա-
նութիւնը և խաղաղութիւնը սերմանել քրիստոնեայ
ազգաց մէջ, այլ ըստ ամենայնի բանակռուութիւն, ա-
տելութիւն, վրդովմունք, բաժանմունք, քրիստոնեայ
հայրը քրիստոնեայ որդիէն, քրիստոնեայ գերդաստան
մը իրեն միւս մօտաւոր ազգային քրիստոնեայ գեր-
դաստանէն. այն կ'ըսէ, քրիստոնէական ճշմարտու-
նը և փրկութիւնը իմ կողմս է. նոյնպէս և միւսը, ահա
սանկ սուրբ Ա-ւետարանին ճշմարտութեան և բարե-
մասնութեան հոգեւոր սերմունքը՝ ատելութեան,
բանակռուութեան, խռովութեան և վրդովման փո-
շերու մէջ ինկնալով հեղձուած անպտուղ կը մնայ. " Ա-
" այլն անկաւ 'ի մէջ փշոց, եւին փուշքն և հեղձուցին
" զնա " : Մտթ. ԺԳ. 7 : Ա-պա մենք մեր սրտին մերժենք
մաքուր պահենք մեր միտքը բանակռուութեան, ատե-
լութեան, խռովութեան փշատեսակ չար կիրքերէն,
նորահնար և օտարաձայն վարդապետութիւններէն և
ուսուցիչներէն և ուսմունքներէն հեռի կենանք, որ-

պէս պի լբրեւ. երկիր բարի ընդունինք աւետարանա-
կան ճշմարտութեան և քրիստոսական վարդապետու-
թեան սերմանելը, հոգեւոր արգասիքներ արդիւնաւո-
րելու և պտղաբերելու, ըստ այնմ. "Եւ այլն անկաւ
" յերկիր բարի, և ասյր պտուղ, էր որ հարիւրապատիկ և
էր որ վաթսնաւորս, և էր որ՝ երեսնաւոր »: Մտթ. ԺԳ. 8:
Նա և նորահնար վարդապետութիւնին օտարա-
ձայն նոր և հակառակ սուրբ Աւետարանին ըլլալը այս
նշանով յայտնի ըրած են իրենք, որ իրենց մէջ իրենց
հնարած վարդապետութիւնը մէկ տեղի կայանք չեն
տուած, այլ միմեանց հակառակ մէկ մէկէ տարբեր,
իրենք իրենց մէջը բաղմաւեսակ եղած են. ասանկ օտա-
րաձայն վարդապետութենէ միտքերնիս ազատ պահե-
լու համար գրած է Պօղոս առաքեալը. "Յուսամնեա
" պէսպէս և օտարաձայնս մի դանդաչէք »: ԵԲՐ. ԺԳ. 9:
Նա այս խօսքին յառաջ ալ մեր միտքը անանկ օտարա-
ձայն և պէսպէս պայթակղեցուցիչ ուսմունքներէ
վարդապետութիւններէ ազատ և անարատ պահելու
միջոցը և կերպը տրվեցուց մեզի նոյն առաքեալը իր-
բասելով. "Յիշեցէք զառաջնորդս ձեր, որք խօսեցան
" ձեզ զբանն Աստուծոյ, հայեցեալք յելս գնացից նո-
" ցա, նմանիլ եղերուք հաւատոցն »: ԵԲՐ. ԺԳ. 7: Ան
ըսել է, բնաւ միտքերնիդ մի հեռացունէք ձեր հո-
գեւոր առաջնորդներէն, որոնք որ ձեզի քարոզեցին
Աստուծոյ աւետարանական ճշմարտութիւնը, և ձեզի
հաւատոյ առաջնորդ եղան և հաւատոյ լուսով լու-
սաւորեցին ձեր միտքը, անոնց առաքինութիւնը և
հոգեւոր երախտիքը մի մոռնաք, մանաւանդ նայեցէք,
որ անոնց ձեզի քարոզած հաւատքին ճշմարտութիւնը
անխափան պահէք, ուրիշ դուրսէն օտարաձայն վար-
դապետութեան ականջալուր չըլլալով բնաւ:
Ասկա սրբազան Առաքեալն այս հոգեշահ խրատէն
կը յորդորուինք ու կ'ամրապնդինք միշտ մեր սրբազան

հայրապետները յիշելու և անոնց մեզի թարգման հաստատ ճշմարտութեան լուսաշաւիղ ձանապարհէն դուրս չելլելու, ուրիշ օտարաձայն վարդապետութեան չհետեւելու, որպէս զի չըլլայ թէ ապերախտութեան չար անունը ժառանգած ըլլայնք, և Աստուծոյ արդար դատաստանին պարտաւոր գտնուինք. ասոր համար է, որ մեր Հայոց ուղղափառ սուրբ եկեղեցին, մեր քրիստոնէական հաւատոյ առաջնորդ՝ և ա եւտարանական ճշմարտութեան քարոզող՝ բազմերախտ մեծ հայրապետն մեր սուրբն Գրիգոր լուսաւորչին յիշատակելով ջմռնար անոր հոգեւոր երախտիքը, որ աստուածային նախասահմանութեան ընտրութեամբը և կոչմամբը մեզի սիրապէս մատակարարեց քրիստոնէական հաւատոյ լոյսը, սուրբ Հոգւոյն շնորհաց պարգեւները և աւետարանական ողջամիտ վարդապետութիւնը, որով կոչեցաք և անուանեցաք որդիք լուսոյ, եկեղեցի Քրիստոսի: Ահա այս երախտապիտութիւննիս յայտնի կ'ընեմք, ոչ թէ միայն Հօր Աստուծոյ զօրութեամբը՝ սուրբ Հոգւոյն շնորհիւը՝ և Յիսուսի Քրիստոսի կամքը անոր հաստատած ուղղափառ եկեղեցին երբէք չդաժնուելով անձամբ և արիւ, և անոր քարոզած հաւատոյ ճշմարտութիւնը, ողջամիտ և ուղղափառ վարդապետութիւնները և առաքելական վաւերացեալ աւանդութիւնները, խորհրդաւոր և վայելուչ ծէսերը ու արարողութիւնները, իբրեւ հաւատարիմ աւանդապահ ամենայն զգուշութեամբ պահած եմք ու կը պահեմք շնորհիւն Աստուծոյ, այլ և կը յիշատակեմք անոր արթուն և պանծալի հոգեւոր հովուութեան մեծահռչակ անունը, հրաշալի բազմաթեակ հոգեւոր արդիւնքները, ոչ թէ միայն արիւ և մօք այլ և եկեղեցական երգօք վերապատուելով. ըստ որմէ. "Աչքը զիմանալի լուսոյն ծագումն՝ ի խաչ ելոյն նայեցաւ, զԳրիգորիոս սուրբ Հայրապետն,

» եկայք վերապատուեցուք : Այսօր զանազան
» Հոգւոյն պարգեւս բաշխող որդւոց Թորգոմայ,
» յորդիս լուսոյ նոսին ծնեալք եկայք վերապատուե-
» ցուք : Այսօր զաստուածային բանին պատմող ՚ի
» Հայաստան աշխարհի՝ աշակերտեալ նմա մանկունք,
» եկայք վերապատուեցուք : ՚ի Շարականն :

Արդ՝ թէ որ կշռադատէք բազմարդիւն հայրապե-
տին մերոյ սրբոյն Գրիգորի լուսաւորչի՝ մեր վայ ու-
նեցած հոգեւոր երախտիքը, բազմաեռակ պիտի գըտ-
նաք. ապա ուրեմն մենք ալ անոր երախտապէտ ընդ-
հատարտ ըլլալու կը պարտաւորինք շատ ու շատ.
“Ամենայնի՝ որում շատ տուաւ, շատ խնդրեսցի ՚ի
» նմանէ » : Ղուկ. ԺԲ. 48 :

Այս երախտապիտութիւննիս յայտնի ըլլած ենք և
կ՚ընենք ամենակարող ջօրութեամբ և շնորհիւ Յիսու-
սի Գրիստոսի. որ սուրբ Լուսաւորչի քարոզութեամբը
հաստատուած ուղղափառ Գրիստոնէութեան որոշուած ու
զատուած ենք գայթակղեցուցիչ խօսքերէ այլայլելով
կամ վրդովելով և օտարաձայն բանակռուութենէ գըր-
գռուելով և համոզուելով, աստուածութեան կրնք պճա-
ղիս ատելով և մերժելով, և ապահաստիրտ արծաթա-
սիրութեան ոգւով մոլորելով, բնաւ մէկ կողմէ մը
չենք կարող մեր հաստատուն միտքը թեւլատրել ու հրա-
պուրել, որ այս մեր ազգային եկեղեցական ամբողջու-
թենէն և միութենէն յիմարաբար և ապերախտու-
թեամբ բաժնուինք և որոշուինք : Վասն զի Վաղա-
տայեց եկեղեցւոյն ժողովրդոյը պէս ճանճաղամիտ
ու դիւրախաբ ենք, որ վտիտիմք և յարիմք այսօր
այս կողմը, վաղը այն կողմը, որոց վրայ մեծապէս զար-
մանալով կ՚ըսէր Պօղոս առաքեալը. “Զարմանամ զի
» այդպէս վաղվաղակի փոխիմք յայնմանէ որ կոչեացն
» զձեզ ՚ի շնորհն Գրիստոսի՝ յայլ աւետարան » : Գաղ.
Ա. 6 : Իւ Կորնթացւոց եկեղեցւոյն ալ կըգրէ որ բնաւ

վախճանելու չըլլան լրեցնց հոգեւոր և անձնական պաշտօնատարութեան մէջը անգամ. “Խրատանչիւր »ոք յոր կոչումն կոչեցաւ եղբայր, ’ի նմին կայցէ »առաջի Աստուծոյ »: Ա. կորնթ. է. 24: Աւասիկ երանելի տագէտ և հաւատարիմ կը գտնուինք մեր լուսաւորչին բազմերախտ հայրապետին սրբոյն Գրիգորի, որ այն աստուածատուր ձրիատուր պարգեւը քրիստոնէական հաւատոյ անկապուտ գանձը որ մեզի աւանդեց քարոզելով: “Գանձ անկապուտ են հաւատք, որք զբա»րին ’ի մեզ ամբարեն»: ’ի Յովհ. ճառ. ժԱ: Այս աստուածապարգեւ հաւատոյ գանձը անկորուստ և անսպառելի պահելինք այնքան հալածմունքներ հարկաւորութիւններ կրելով քրիստոնէութեան թշնամի անպատրոյն բռնաւորներէն, ևս և սեպհական հայրենիքնիս գաղթական ըլլալով մարմնաւոր հարստութիւնէն մերկացած, աճեն կերպով ու աճեն կոլմանէ վնասներնեղութիւններ, քան Գրիգորին. “Ա՛խտս ’ի գե»տց, վիշտս յաւազակաց, վիշտս յազգէ, վիշտս ’ի հե»թանոսաց, վիշտս ’ի քաղաքի, վիշտս յանապատի, վիշտս »’ի ծովու, վիշտս ’ի սուտ եղբարց“: Բ. կոր. ԺԱ. 26:

Ահա այս բազմատեսակ հալածմունքներուն և վիշտերուն մէջ առաւել գովութեան արժանի են Հայոց Եկեղեցւոյ հարազատ և հաւատարիմ անդամները հոգեւորականները և աշխարհականները, որոնք ոչ միայն անպակաս և անկորուստ պահեցին այն աստուածատարպէս հաւատոյ գանձը, այլ և աստուածահաճոյ ջերմեռանդն բարեպաշտութիւններով և առաքինական բարեմասնութիւններով բազմապատկեցին: Ըստ ասեղարանական առակին եթէ այն ծառայն՝ որ իր տիրոջը իրեն յանձնած քանքարին (առակին) կրկնատ-

Ընդ ուրեմն մեր Հայոց Եկեղեցւոյ ազնիւ և հաստատիմ հարազատ որդիքը խորհրդաւոր բարեպաշտութիւնով և առաքինական բարեմասնութիւնով հան ու վաստակ ունենալովնին համեմատ աստուածապարգեւ հաւատոյ անկապուտ գանձին, այսօրուան օրս ազնիւ ծառայ Յիսուսի Քրիստոսի են, և հաւատակիմ Եկեղեցւոյն բարի քրիստոնեայ: Ուրեմն ըստ երանելոյն Պօղոսի առաքելոյն, ոչ մարմնաւոր ճոխ հպարտութեամբ և փառաք և բնական գիտութեամբ ունին պարծիլ, այլ քրիստոսական և սուրբ ուղղափառ կենդանի հաւատով. "Պարծիմք 'ի Քրիստոս Յիսուս" և ոչ 'ի մարմին պանծայեալ եմք": Փիլիպ. Գ. 3:

Ընդունելն շատ ու շատ առաւել արժան է քրիստոնէին իրաւամբ պարծենալ քրիստոսական հաւատոյ ճշմարտութեամբը, որուն բազմատեսակ պատճէնն և իմանալի ներգործութիւնները գիտնալով և խոստովանելով արժան և հարկ է միշտ յիշել Պետրոս առաքելոյն այս քարոզած խրատը. "Ուրախ լինիջիք՝ որ այժմ "սակաւիկ ինչ ըստ պատշաճի իրացդ տրտմեալ էք 'ի "պէսպէս փորձութիւնս, զի հանդէս ձերոյ հաւա "տոյն առաւել քան զոսկի կորստական պատուական "է, որ հրով փորձեալ՝ գտաւ 'ի գովութիւն և 'ի "փառս": Ա. Կաթող. Ա. 6—7:

Ընդ այս առաքելոյն խօսքերուն մէջ յայտնի կ'երեւին քրիստոնէական հաւատոյ պատճէնի ներգործութիւնները, որ ջերմեռանդ և ուղղափառ հաւատացեալը հոգւով պիտի ըզգայ այն ամենը: Նախ ուրախութիւն մխիթարութիւն մը աշխարհային տրտմութիւններու և զանազան փորձութիւններու մէջ, վասն զի քրիստոնէական ճշմարիտ և ուղիղ հաւատքին զօրութիւնը սրտին մէջ հաստատուն պահող հաւատացեալը չպիտի յուսահատի աշխարհի ձախորդութեան և տրտմութիւն դիպուածներու և զանազան փորձութիւններու

հանդիպած ժամանակը, այլ միտն ամենուն յաղթէ հաւատով համբերատար և երկայնամիտ ըլլալով. "Օ՛ն "ամենայն որ Ա՛ստուծոյ ծնեալ է յաղթէ աշխարհի, "և այս է յաղթութիւնն որ յաղթէ աշխարհի հա- "ւատքն մեր: Ո՞ւ միւ ոյ է որ յաղթէ աշխարհի, եթէ "ոչ որ հաւատայցէ՝ եթէ Յիսուս է որդի Ա՛ստուծոյ": Ա. կաթող. Յօհ. ե. ՟ե—ը: Ուրս և հոգեւոր մեծամեծ և անկողոպտելի հարստութիւն է և ամենավեմ փարթամութիւն բարեպաշտ քրիստոնէից ուղղափառ հա- ւատքը, որ աստուածային յաւիտենական և երանաւէտ փառացը հաղորդ կ՛ընէ մեր հոգին. վասն որոյ ըսաւ առաքեալն Պետրոս. "Ուրախ եղէք զուարճի կորստական "պատուական է": Ա. Պետ. Ա. 7: Վասն զի այս ամե- նայն աշխարհի մեծութիւնը և հարստութիւնը անցա- ւոր է, և ունայնութիւն, իսկ աստուածայինն յաւի- տենական է, և ճշմարտութիւն. "Օ՛ն մեծ է որ՝ի "ձեզդ է քան զայն որ յաշխարհի էր": Ա. Յօհ. Դ. 4: Ա՛ստուծոյ մարդասիրութիւնը կը կամի որ այս երեք ան- ճառ փառաց մեծութիւնովը փառաւորուիք: Մաթ. ԺԲ. 21: Բ. Կորն. Ը. 9: Ա՛յս աներեւոյթ իմանալի աստուա- ծային փառաց ժառանգութեան շքեղութիւնը, երկնա- ւոր և անպատում հարստութեան առատութիւնը և զօրութիւնը հաւատոյ լուսով պիտի ճանչնանք, և այս աստուածային հաւատոյ պարգեւին յոյսը պիտի առաջ նորդէ մեզի արժանապէս ժառանգելու երկնից արքա- յութեան այն հանդերձեալ անճառելի փառքը. և այս անցաւոր կեանցը մէջ ալ պիտի ճանչցունենն մեր մտացը այն ամենացանկալի երանութեան զօրութիւն- ները ու վայելչութիւնները, որով յոյսերնիս պիտի աներկբայ հաստատուի, և սէրերնիս մշանջենաւորա- պէս զօրանայ և բորբոքի. աստր համար Պօղոս առաք- եալը ալօթիւք կը խնդրէր, որ Հայր Ա՛ստուած սուրբ Հոգիով ներփորձէ հաւատացեալներուն մտացը մէջ

ուղղափառ քրիստոնէական հաւատոյ անաղօտ լոյսը, որ կատարեալ գիտութիւն և ծանօթութիւն ունենան ամենքը աստուածային հանդերձեալ փառաց վրայ, և միշտ հաւատոյ լուսով գիտուն ու իմաստուն ըլլան հոգւով, ըստ այնմ. "Ես դադարիմ ի գոհանալոյ "վասն ձեր, յիշել զձեզ յաղօթս, զի Աստուած Տեա "ռն մերոյ Յիսուսի Քրիստոսի Հայրն փառաց՝ "տայէ ձեզ զՀոգին իմաստութեան և յայտնութեան "գիտութեամբն իւրով. լուսաւոր առնել զաչս սրտից, "առ ի գիտելոյ մեզ՝ զինչ է յոյս կոչման նորա, և "զինչ մեծութիւն փառաց ժառանգութեան նորա "ի սուրբս, և զինչ է առաւելութիւն մեծութեան "զօրութեան նորա ի մեզ հաւատացեալս": Եփես. Ա. 16—17—18—19:

Այսպա այս ճշմարիտ և ուղղափառ հաւատոյ, գիտութեան և իմաստութեան ամենապայծառ լոյսը չունենալը, և առավ մտաք լուսաւորուած չեղողը արդէն խաւարի մէջ է, և չէ կարող տեսնալու աստուածային աներեւոյթ զօրութիւնները, հնարհաց ներգործութիւնները, հանդերձեալ փառաց վայելչութիւնը, և բնաւ չունենար հաստատ ակնկալութիւն և աներկբայ յոյս ժառանգելու այս ամենը, բնաւ չի գտնար վարուելի անանկներուն միտքին մէջը հաւատոյ ճշմարտութեան ստորագրական սահմանը, որ տուած է Պօղոս առաքեալը. "Ո՞զինչ են հաւատք, եթէ ոչ "յուսացեալոց իրաց հաստատութիւն և յանդիմանու "թիւն որոց ոչն երևին": Եբր. ԺԱ. 1: Իսկ հաւատոյ լոյսը երկնային իմաստութիւնը և Հոգւոյն սրբոյ շնորհաց գիտութիւնը ունեցողները, սուրբ գիրքերուն առաջնորդութիւնովը ծանօթ եղած կ'ըլլան աստուածային բարերար կամացը և Հոգեւոր պարգեւներուն, Հոգւոց փրկութեան և փառաւորութեան աստուածային պանապան խորհուրդներուն և անօրէնութեան

ցը։ Ոչ ոք համար վարդապետաց մեղմ մեծ հայրապետն
մեր և լուսաւորիչն հոգւոց մերոց սուրբն Գրիգոր.
“Ձշմարտութիւն հաւատոյ լոյս է աչացն մտացն հարժ-
» մանց՝ խորհրդոյն յիշատակաց, զգեցեալ զլոյն գի-
» տութեան և իմաստութեան ընտիրացս սուրբ Հոգ-
» ւոյն, որ զառաջնորդական զկերպն լուսաւորէ, և
» գրավք սրբովք յանդիման կացուցանէ զանեղեւոյթ-
» սըն, իբրեւ ի տեսիլ աչեգականն լոյս»։ Ի Յաճախ.
ճաո. գ։

Ուրեմն երանելի է հաւատոյ լուսով պայծառա-
ցեալ մտաց աչերը առաւելքան զայնոսիկ, որոնց միտքը
աշխարհային տեսակ տեսակ գիտութիւններով զանա-
զան լեզուաց ծանօթ ըլլալով՝ զարդարուած են, բայց
անգէտ են և չեն հետեւիր հաւատոյ ճշմարտութեան
աստուածային գիտութեան ճշմարիտ լուսով լուսա-
ւորուելու։ Նարեկ խօսեր է Մակեբերան. “Օ՛ինչ
» օգուտ է մարդկային բազմատեսակ հանճարներով
» գիտութիւններով զարդարուիլ մոքը, և աշխարհի
» մէջ պայծառ անուն ունենալ, և մոլորեալ մոլի վար-
» քով ախտաւոր էար կրկին հոգեկորոյս խաւարի մէջ
» հոգւով խարխափիլ»։ Ի ճաո. Հ—ափ։ Ո՞ինչ կընամանիք և
տեսս բարեմիտ ընթերցող. մարդ մը թագաւորական հա-
րստութիւն ունենայ աշխարհի մէջ. երեւելի և նա-
խանձելի վաճառքերու և պատիւներու տէր ըլլայ, մե-
ծամեծ անուանի գերդաստան ունեցած ըլլայ, հարըս-
տութեան ու վաստայ անունը հռչակուած ըլլայ բոլոր
աշխարհի մէջ, բայց անձը հիւծական հիւանդու-
թեամբ ախտացեալ ըլլայ, որ անով օրէ օր կենսական
զօրութիւնը կ՚ակսի հաշիլ ու մաշիլ, վատիլ ու վաս-
ծարիլ. Ո՞ինչ օգուտ այն ունեցած աշխարհային մարմ
նաւոր հարստութենէն ու փառքերէն, աշխարհալուր
համբաւէն և փառաւորութենէն իրեն նեղքին ունե-
ցած ախտաւորութեանը։ “Օ՛ինչ օգուտի մարդ՝

» Թէ զաշխարհ ամենայն շահեսցի, և զանձն իւր տու-
» ժեսցէ. կամ զի՞նչ տացէ մարդ փրկանս ընդ անձին
» իւրում »: Մտթ. ԺԶ. 26: Զի՞նչ օգուտ է արտաքին
գիտութիւններով պայծառանալ, մոլի ու մոլեկան կիր-
քերով խաւարանալ: Ա՛պաքէն բարի ու պերճապոյն
օգուտ է հոգւոյ բարեպաշտ քրիստոնէից, որ ջերմե-
ռանդ սրտով, և առաքինական սիրով կը ճանաչեն հա-
ւատոյ ճշմարտութիւնը, իսկ գերապոյն չար է և
վնասակար անոնց հոգւոյը, որոնք որ փութաջան սի-
րով կը հեռեւին միայն գանձելու և ստանալու իրենց
մտացը մէջը երկրաւոր մարդկային իմաստութիւնները
և գիտութիւնները, բայց սրտովին կամակոր հեռա-
ցած են հաւատոյ ամենապայծառ լուսաւորութենէն:
Ա՛պա թող չգիտնան որ այն արտաքին գիտութիւնը և
իմաստութիւնը իրենց հոգւոյ աչացը լոյս է, և թող
չսպարծին որ լուսաւորուած բարի մարդ Ա՛ստուծոյ և
բարի քրիստոնեայ են, այլ մանաւանդ այն իրենց լու-
սաւորութիւն մտաց կարծածնին քրիստոնէական հա-
ւատոյ ճշմարիտ լուսոյն քովը խաւար է սուրբ Ա՛ետա-
րանին վճռովը. «Լոյսդ որ ՚ի քեզ է՝ խաւար է»:
Մտթ. Զ. 23:

Ա՛պա այս վերոյիշեալ քրիստոնէական հաւատոյ ան-
աղօտ լուսովը պայծառացած՝ Յիսուսի Ք՛րիստոսի
փրկարար շնորհքներուն արժանացած սրբազան աշա-
կերտները և առաքինաշարժ քրիստոնեայները իրենց
վերջի սուրբ Ա՛ետարանին մէջը գրուած Յիսուս
Ք՛րիստոսէն վճռուած հաւատոյ ճշմարտութեան գե-
րագոյն և ամենավսեմ անուններով կը սեպհականեն ու
կ՚ուտանան, զոր օրինակ. հաւատոյ ճշմարտութիւնը կ՚ան-
ուանի լոյս իմանալի, որովհետեւ աստուածային ձրիա-
տուր պարգեւ է. վասն զի Ա՛ստուած է իմանալի և
անաղօտ ճշմարիտ լոյս: Յօհ. ա. 9: Եբր. ա. 3: Յակ.
ա. 17: Ա. Պետ. բ. 9: Ա. Յօհ. ա. 9: Վ՚ասն որոյ սուր-

բերը՝ առաքեալները ու ամեն բարի քրիստոնեայները այս աքանչելի լուսոյն ուղղափառ հաւատով, և բարի գործով հաղորդ ըլլալով այս ամենացանկալի անուանովը կը կոչուին. “Դուք էք լոյս աշխարհի: Ընդհակառակն լու- »սաւորեսցէ լոյս ձեր առաջի մարդկան, որպէս զի »տեսցեն զգործս ձեր բարիս և փառաւորեսցեն զՀայրն ձեր, որ յերկինս է»: Մտթ. ե. 14—16: “Ո՛վ »Թէոփէ և էիք խաւար, արդ լոյս էք ի տէր: Եփես. ե. 8:

Ընտրաճաշակութիւնը սուրբ գիրքը սանկ վեմ վերուա- ռութիւնով աստուածային մարդասիրութենէն պատ- ուասիրած ցոյց կուտայ աստուածահաճոյ սուրբ անձ- ինքները, որ Ընտրոց զանազան շնորհքներուն հա- ղորդ ըլլալով, աստուածային բարերար կամացը հա- րազատ ու հաւատարիմ ծառայութեան պաշտօնը կա- տարելով Ընտրոց միայն իսկապէս յատկացած աքան- չելի անուններուն շքեղութիւնովը փառաւորուած ու գովաբանուած են: Ընտրոց օրինակ. Ընտրած է միայն բարի: “Ձեք ոք բարի, բայց մի Ընտրած»: Նոյն բարե- պաշտական ոգւով Ընտրոց կամաց ծառայութիւն ը- նողներն ալ բարի կ՚անուանին. “Ընդհարձ ծառայ բարի »և հաւատարիմ»: Ղուկ. ժթ. 17: “Արդ բարի ՚ի քա- »րի գանձուց սրտի իւրոյ հանէ զբարիս»: Մտթ. ժբ. 35: Հռովմ. ժբ. 2. գ. Յօհ. ա. 11: “Ընտրած է միայն սուրբը»: “Սուրբ է տէր Ընտրած մեր»: Սաղմ. ՂԸ. 10: Եսայ. Զ. 3: Յօհ. ժէ. 18: Սուրբերը և բարի քրիս- տոնեայները աստուածային սրբութեանը հաղորդ ը- ըլալով՝ անունք ալ կ՚անուանին սուրբ: “Նրմամ Նրու- »սաղէմ պաշտել զսուրբսն»: Հռովմ. ժէ. 25: ԺԶ. 15: Բ. կորն. ա. 1: ԺԳ. 12: Եփես. ա. 1: Բ. 19: Ա. Պետ. ա. 15—16: Ընտ- րած է միայն երանելի: “Ո՛ր չիւր ժամանակ ցուցցէ »երանելին, և միայն հզօր, Թագաւոր Թագաւորաց »և տէր տերանց»: Ընտրոց ծառայներն ալ երա-

նեվլի կ'անուանին։ "Լրանելի են ծառայքն այնոքիկ "։ Ղ-կ. ԺԲ. 38։ "Լթէ զայս գիտէք երանելի եւս էք, "եթէ առնիցէք զայս "։ Յօհ. ԺԳ. 17։ Սաղ. Ա. 8։ ԺԳ. 14։ ՃԺԸ. 1։ Նուռաճ բառը զօրութիւններով միայն արարչին ամենայնի ամենակարողին և ամենակալին յատկացած է։ Ծնն. Ա. 1—7—19։ Եւայլն. "Ի նմա իա "րայէլ ասէր Նուռաճ քո ասէր մի է "։ Բ. Օրին. Զ. 8։ ԼԲ. 4—10։ Ելէյ. Գ. 6։ Սաղ. Հ. 20։ ՃԲ. 1։ Նայց Նուռածոյ հրամանը կատարող սուրբերը այս մեծ պաշտելի աստուածային անունը կրելու և ստանալու արժանացան։ "Նա ասէ տէր ցՆովսէս, ահա եսու զքեզ "Նուռաճ փարաւոնի "։ Ելէյ. Է. 1։ Ա. Թագ. ԻԸ. 13։ "Նուռաճ եկաց ի ժողովս աստուածոյ։ "Նա աստցի "թէ աստուածք կոչէք "։ Սաղ. ՃԱ. 1—6։ Յօհ. Ժ. 34։

Նայնպէս է նէ մարտիրոսները նահատակները արժանապէս կը կոչուին երկինքին դուռը, արքայութեան ճանապարհը, կրկին արժանաւորութեամբ։ Նախ Քրիստոսի փրկչին մերոյ հաւատոյ լոյսը սեպհականած էին, և անոր ճշմարտութիւնը անվեհեր համարձակ կը խոստովանէին, ապա անոնց արիւնն մէջը ներգործած ու պրոշմուած էր Յիսուսի Քրիստոսի յատկացած այս անուններուն զօրութիւնը, որ ըսած էր իրաւամբ։ "Նա եմ ճանապարհ "։ Յօհ. ԺԴ. 6։ Նայս երկնից արքայութեան ճանապարհը ոչ թէ միայն ճանաչեցին ըստ մարգարէին Դաւթի ըսելով։ "Ցուցեր զճանապարհս "քո կենաց, լցուցեր զիս ուրախութեամբ երեսաց "քոց "։ Սաղ. ԺԵ. 11։ Նայլ և այս արքայութեան ճանապարհին մէջը գտնուելով իրենց կենաց ընթացքը մարտիրոսական մահուամբ կատարեցին, ապա իրաւամբ սեպհականած են այս արքայութեան ճանապարհին վեմ անունը։

Նէս և փրկիչն մեր՝ դուռն յաւիտենական կենաց Յիսուս Քրիստոսը չէ թէ մարգարէական հոգւով հե-

ռուէն տեսնալով Դաւիթ մարգարէին պէս կ՚երգէին։ «Ընթէ այս գործն տեառն է, և արդարք մոտանեն ընդ »սա»։ Ընդ և հաւատով յուսով և սիրով առաւել վերձաւոր եղան, և մարտիրոսական մահուամբ այս յաւիտենական կենաց դրան ընորհիւը համարձակ արքայութեան մէջ մտնալու հոգեւոյ արժանացան, վասն որոյ այն յաւիտենական կենաց դրան Քրիստոսի փրկչին մերոյ անուանովը կը յիշուին դուռն կենաց։ Ընկերդ՝ սուրբերը, բարի քրիստոնեայները աշխարհի մէջ Քրիստոսի ցոյց տուած նեղութեան, տառապանքներու և չարչարանքներու անձուկ և նեղ դռնէն և ճանապարհէն կ՚անցնին, ու արքայութեան յաւիտենական կենաց կը հասնին ու կը ժառանգեն»։ Ասէ՛ք ընդ »նեղ դուռն, քանզի ընդարձակ է դուռն՝ և հա»մարձակ ճանապարհն՝ որ տանի՝ ի կորուստ, և բա»զումք են, որ մտանեն ընդ նա։ Քանզի անձուկ է »դուռն և նեղ ճանապարհն՝ որ տանի՝ ի կեանս, և »սակաւք են որ գտանեն զնա»։ Մտթ. է. 13—14։

Ասպա այս նեղ և անձուկ տառապանաց նեղութեան և չարչարանաց ճանապարհէն և դուռնէն մտնող ու անցնող բարի քրիստոնեայները, մարտիրոսները, երանելի նահատակները արժանի իսկ են անուանելու դուռն երկնից և ճանապարհ արքայութեան, որովհետեւ Յիսուսի Քրիստոսի աւետարանական քարոզիչ հրամանը կատարեցին գործով և արդեամբ։ Այնպէս բարեպաշտ քրիստոնեայները կ՚անուանին զինուորեալ եկեղեցի Քրիստոսի՝ ի վերայ երկրի։ Որովհետեւ անյաղթելի զէնքերով աւետարանական օրինաց զօրութիւնովը և քրիստոսական անպարտելի ընորհաց լուսովը զինուորուած ու զօրացած են. ասով ոչ թէ միայն տառանեայական մեղսութիւններու դէմ կը կենան, և մարմնաւոր ցանկութիւններն կը զսպեն, այլ և աներեսյական զօրագլուխ Յիսուս Քրիս-

տոսը օգնական ունենալով իրենց՝ արդարեւ քաջ ախոյեան մարտիրոս յաղթող եղան ընդդէմ քրիստոնէական ճշմարտութեան հակառակողաց բարբարոս անհաւատից հոգեւորապէս պատերազմելով, որոնց յաղթեցին ըսելով. «Օ՜ն զինուորութեան մերոյ ո՛չ է մարմնաւոր, այլ զօրաւոր Աստուծոյ առ՝ի քակելոյ զամուրս» ըստ։ Բ. Կոր. ժ. 4։ Եւ սասանկով կատարեցան մարտիրոսական մահուամբ, որով պաշտպանեցին քրիստոնէական հաւատոյ ճշմարտութիւնը, վասն որոյ ա նոնց հաւատով, յուսով և սիրով զօրանալը և արիանալը հոգեւոր՝ զէն մը եղաւ իրենց, և հաւատացելոց ալ անոնց մարտիրոսական մահը յուսադրութեան ու քաջալերութեան զէն մը եղաւ անվեհեր մնալու անհաւատ բարբարոսներուն մէջը և համարձակ խոստովանելու քրիստոնէական ճշմարտութիւնը։ Ասոր համար է որ Պօղոս առաքեալը հաւատացեալներուն զէն յուսոյ և քաջալերութիւն տալու համար, երանելի մարտիրոսներուն և նահատակներուն յիշատակութիւնը կ՚ընէ. «Ասյսուհետեւ և մեք՝ որ այսչափ » շուրջ զմեզ մածեալ ունիմք զբազմութիւն վկայից, » զհպարտութիւն զամենայն՝ ի բաց ընկենցուք, և » զմեզ կարեւորս, համբերութեամբ ընթացցուք՝ ի » պատերազմ, որ առաջի կայ մեզ»։ Եբր. ժԲ. 1։

Ասյս հոգեւոր պատերազմին մէջը վահան ամրութեան և պաշտպանութիւն հոգւոյ ունեցան աստուածապարգեւ հաւատոյ ճշմարտութեանը Քրիստոսի զինուորները, երանելի մարտիրոսները, երջանիկ նահատակները, և ամեն հաւատացեալներուն ուսուցիչ եղան, որ միշտ ունենան այս հաւատոյ վահանը, որով աղատ մնան սատանայական փորձութեան նետաձըգութենէն և անհաւատներուն աուած հալածանաց չարչարանաց բռնաւորութենէն, ըստ Պօղոսի. «Ասրդ՛ք զվահանն հաւատոյ, որով կարող լինիջիք զա-

» մեռնայն նեաւս մուխս չարին չինջուցանել » : եփես . Ջ . 16 :

Ուրեմն սուրբ գիրքերուն վկայութիւններուն համաձայն և շատ յարմար խորհրդածութիւնով շարադրեր է Ընտրհալն սուրբ հայրապետն մեր այս տուն շարականը սրբոյն Սարգսի քաջայաղթ վկային համար, որ սանդկ գրուած է . « Այս արուեստիք պիշատակ » սրբոյն Սարգսի զօրավարին, որ է դուռն երկնից, և » ճանապարհ արքայութեան, և մեզ զէն յուսոյ, վահան » հաւատոյ » : Որ ըսել է յիշատակենք այս տեղս մեր սուրբ եկեղեցւոյ մէջ սրբոյն Սարգսի զօրավարին վկայական մահը, որ եղաւ իրեն երկնից դուռն և արքայութեան ճանապարհ, և ասոր մարտիրոսութիւնը՝ ի սէր քրիստոսական ճշմարտութեան, արդարեւ հաւատոյցս քաջալերութիւն և յուսոյ զէն մը եղաւ, և ասոր անվեհեր և անդրդուելի խոստովանութիւնը և հաւատոյ ճշմարտութեան ազանչելի վկայութիւնը առաջի կուապաշտ Ցապուհ արքային Պարսից, որուն ներկայութեանը նոյնպէս չարեբաստան վիճուսունեաւ րուն քրիստոնէական ճշմարտութիւնը քարոզելը՝ և անոնց միաբերան աղաղակելնին՝ եթէ քրիստոնեայ եմք, արդարեւ Հայաստանու բարեպաշտ հաւատացելոց հաւատոյ ամրութեան վահան ընտրեցաւ աստուածային անօրէնութեամբը :

Ուրեմն անալի չէ այս տուն շարականը ըստ շաղակրատ բանից ոմանց, և առանց խորհրդաւոր բանից չէ շարագրուած . ով ոք կը համարձակի զրաբանելու այս տուն շարականին վրայ, յայտնի կ'ընէ իրեն սուրբ գիրքին վրայով ունեցած տգիտութիւնը : Որովհետև ամենքը գիտեն որ Հայոց ուղղափառ Եկեղեցւոյ մէջ եկեղեցական ընթերցմունքները՝ եթէ երգերը՝ եթէ աղօթքները և մաղթանքները ամենքը խորհրդաւոր և համեմատ սուրբ գրոց են : Արժան կը համարիմ այս տեղս, համառօտիւ ծանօթութիւն մը տալ սուրբ

Արդի վերջ։ Այս երանելին քաղաքաւ Կեսարացի էր, և Կոստանդիանոս Թագաւորին քով և արի զօրավար ըլլալով՝ Կապադովկացւոց աշխարհին մէջ մեծ Աստուածալատ զօրապետ կարգուած էր, բայց կարի նաև նանձախնդիր ըլլալով քրիստոսական ճշմարտութեանը և հաւատոյ պաշտպանութեանը կը փափաքէր որ քրիստոնէական ճշմարիտ հաւատքը և աւետարանական լոյսը ամեն տեղ տարածուի և սփռի։

Վասն որոյ ուր որ կը հանդիպէր, քրիստոնէութիւնը կը քարոզէր, ու կռապաշտութիւնը կը մերժէր, որով շատ կռատուններ կործանեց ու շատ կռապաշտներու սրտին քարոզութիւնովը պատճառ եղաւ հաւատացեալ ըլլալուն։ Վասն որոյ երբ չար և ուրացող Յուլիանոս Թագաւորեց ու սկսաւ հալածել քրիստոնեայները, և երբ մօտեցաւ Կապադովկացւոց աշխարհին, երկնային ազդեցութիւն մը եղաւ երանելոյս, որ ելլայ իրեն երկրէն, վասն որոյ իրեն Վարուխրաս անուն որդին առնելով հետը՝ եկաւ Հայաստան մեր Բ. Տիրան ազգային քովը. ժամանակ մը ճնաց այն տեղը. տեսաւ որ պիղծն Յուլիանոս այն կողմերուն մօտեցաւ, անկէց ալ եկաւ գնաց Հայոց Պարսից ազգային քովը, որն որ տեսնելով սուրբ արիասիրտ քաջասրտութիւնը, կարգեց զօրապետ իրեն զօրքերուն վրայ, ու խրկեց Յուլիանոսի վրայ, որ եկած էր պատերազմելու Պարսիկներուն դէմ։

Այս երանելին կը տեսնար որ Պարսից զօրքերը Յուլիանոսի կողմը եղած զօրքերուն շատութիւնը տեսնալով զարհուրած կը Թուլանային պատերազմելու, ան նոյն քաջայայտ և համարձակ կը քարոզէր Քրիստոսի ամենայաղթ զօրութիւնը ու կը քաջալերէր։ Այսով շատ մը յաղթութիւն ըրին և յաղթութենէն գինի հաւատացին ի Քրիստոս զօրքերուն շատերը։ Նոյնպէս ետեց ասոնց յաղթութիւնը և զօրքերուն քրիստոնեայ

ըլլալը իսկոյն կրակապաշտ Տ. ապուհ Թագաւորը, հրաւիրեց զանի իրեն աջևը, ու առաջին անգամը յարգաւ նօք պատուեց և հետեւաբար հրամայեց, որ երթայ կռատուանը ու զոհ մատուցանէ պաշտած կրակին ու կուռքերուն։

Բայց երանելին անարգեց Թագաւորին այս հրամանը՝ կրակապաշտութիւնը և կռապաշտութիւը, և համարձակ Քրի ճշմարտութիւնը և կատարեալ աստուածպաշտութիւնը կը քարոզեր։ Տրամեցաւ Տ. ապուհ Թագաւորը ու հրամայեց բռնութեամբ կռատուանը տանիլ, կուտեցան երանելւոյն վրայ քրմերը և քրմապետները, և կ'ստիպէին որ երկրպագութիւն ընէ ու պաշտէ կրակը և կուռքերը, բայց անօգուտ։ Անյն տեղը Անտիրոս անուն որդին իւր հօրը առջեւը մեռցուցին, որ սիրտը գալարի և ստիպուի զոհելու կուռքերուն, բայց նա երբ տեսաւ իրեն սիրելի որդւոյն Անտիրոսին Քրիստոսի նահատակիլը, փառք ու գոհութիւն տուաւ Աստուծոյ, որ իրեն որդւոյն Քրիստոսի հաւատոյ ճշմարտութեան նահատակիլը տեսաւ, իրեն վրայ ալ ժողովեցան զինքը նահատակելու. Տ. ապուհ Թագաւորը արգիլեց, յոյս ունենալով որ բանտի մէջ արգիլելով միտքը հաճեցուննէ. վասն որոյ հրամայեց որ այս երանելին կապեն երկաթի շղթաներով ու խաւարային բանտի մը մէջ դնեն, ու զանազան տանջանքներով նեղեն. բայց նա ուրախ սրտիւ գոհութիւն ու փառք կը մատուցաներ Յիսուսի Քրիստոսի, ու կը խնդրեր որ մարտիրոսական մահուամբ արժանի ըլլայ երանութեան պսակին։ Վասն որոյ երբ կրկին անգամ բերուեցաւ Թագաւորին առջեւը՝ շատ ստիպեց խոստանալով փառքեր ու պատիւներ, մեծութիւններ և հարստութիւններ, որ ուրանայ Քրիստոսի հաւատոյ ճշմարտութիւնը ու դառնայ ի կրակապաշտութիւն, բայց երանելին միշտ հաստատ համարձակ կը խոստովանէր

Յիսուսի Բրիստոսի զօրութիւնը և ճշմարտութիւնը, ու կ'աղաղակէր Պօղոս առաքեալն պէս. «Ինձ կեանք » Բրիստոս է և մեռանիլ շահ »։

Ապա այնուհետեւ հրամայեց Թագաւորն որ սրով գլխատեն, և սանկ վկայական մահուամբ կատարեցաւ սուրբն Սարգիս, որուն հետ չորեքտասան խոստովանող զինուորներն ալ մարտիրոսացան և արժանացան երկնից արքայութեան երանական փառաց պսակին։ Այս վկայական մահուան նոցին վճիռն եղաւ ի Տապուհ արքայէն յերեսաներորդ աւուրյունվար ամսոյ։ Այն որոյ զկնի ծննդեան առաջաւորաց պահոց շաբաթ օրը կը կատարէ տօնախմբութիւնը սուրբ Նիկեղեցին մեր Հայոց։ Նայց Յունաց ազգէն մեր ազգին համար տգիտաբար զրպարտութիւն ընողներ եկան սուտ չինծու անտեղի խօսքեր հնարելով, որպէս թէ այս սուրբ Սարգսի տօնը, որն որ Հայոց Նիկեղեցին կը կատարէ՝ կախարդ Սարգսի մը յիշատակութիւն է, և անոր ակունդին (ֆինոյ չանը) պատիւ, որ իրեն առջեւէն կ'երթար ուր որ երթալու էր ինքը, և ասոր համար Հայք առաջաւորաց պահք կ'անուանեն այն շաբթուան պահքին անունը, այն կախարդ Սարգսին առջեւէն գնացող՝ շունը անգամ պատուելով։ Այս զրպարտութիւնը և անտեղի չինծու անարդութիւնը տուողներուն համար գրեց սուրբն Ներսէս Շնորհալի հայրապետն մեր առ կիւս Ամանուել կայսրն Յունաց, ստոյգ ծանօթութիւն տալով մեր առաջաւորաց պահքին վրայ, և մերժելով այն Յունաց տգիտաբար լրած զրպարտութիւնը՝ այսպէս ակսելով։

« Ընտացուք և փութը լինչ վասն առաջաւորացն 'ի » մէնջ անուանեալ պահոցն, զոր հայհոյէք տգիտաբար, » Սարգսի ուրումն ասելով կախարդի, էշ և ակունդ » ոչնոզի, 'ի յապատամբելոցն 'ի հաւատոյս մերոյ՝ ա- » ռասպելաբանելով 'ի զանազան երս՝ վասն սորին, և

» պատմելով ստայօղ բանիւ՝ առաջի ձեր, քայց առ
» մեզ՝ այսպիսւսմ Սարգսի յիշատակ՝ անգոյ է առա
» ւել քան զեղջերուաքաղն անուանեալ, զի նա թէ և
» գոյութիւն ոչ ունի անուան պատահեցաւ. իսկ Սարգ
» գիսա այս՝ ոչ գոյութիւն ունի յազգս մեր, և ոչ անուն։
» Ո՛ր թէ և ոք ուրեք, թէպէտ և մեզ անյայտ է, նզովէ
» զնա կաթողիկէ Եկեղեցի և զէշ նորա, և զկուռնդ,
» և զգիտող նորա և զընդունող, զի զանուն նորա չէ
» ոք լսեալ յազգս մեր բայ ՚ի Հռոմոց, որ ասեն
» զրպարտելով զմեզ։ Ընդ մեք վկայութեամբն Աս
» տուծոյ՝ յայտնապէս գրեացուք զճշմարտութիւնն
» վան սորին իրացդ, զի մի ոք սոփտութեամբ հայ
» հոյեսցէ, և միսա գործեսցէ անձին իւրում»։

» Ընդ՝ Ընդաջաւորք ասի սա. վասն զի առաջին
» պահք է Հայաստանեայց, և պատճառն է այս ինչ»։

» Սուրբն Գրիգոր լուսաւորիչն մեր՝ յորժամ եկ
» ՚ի վիրապէն, և ժողովեցան առաջի նորա թագաւորն
» Հայոց Տրդատիոս պատուհասեալ ՚ի Աստուծոյ ՚ի
» կերպարանս վարազի եղեալ, և իշխանքն ամենայն և
» զօրք այսաւուրեալք, եդ ամենեցուն առ հասարակ
» պահս հնգօրեայ անսուաղութեամբ, զի մի ինչ ճա
» շակեսցեն, որպէս Ընինուեացիքն, որով եղեւ բժըշ
» կութիւն նոցա ՚ի ձեռն նորա, և զայս պահս որ
» վան այսր պատճառի յառաջագոյն եդաւ ՚ի սրբոյն
» Գրիգորէ, նոյն ինքն Լուսաւորիչն աւանդեաց յեկե
» ղեցիս Հայաստանեայց, զնոյն պահել վերստին յա
» ւէնային աւի շրջագայութեան, որպէս զի մի մոռաս
» ցին երախտիքն Աստուծոյ եղեալ առ նոսա»։ Ընդ
հանրական։

Տեսար սիրելի ընթերցող Հայոց Եկեղեցւոյն վրայ
սիրոյ աչօք բարեմտութեամբ նայողները պիտի կա
րող լլլան անոր անարատութիւնը, ճշմարտութիւնը
և բարեպաշտութիւնը տեսանելու և ճանչնալու և վը

կայելու. բայց երբոր այն Հայոց ուղղափառ Եկեղեցին աստելութեան ոգւով կը հետանան ու հետուէն աստելութեան աչք կընային, ծուռ ու մուռ և չար ու վատ դատում՝ կ՚ընեն անոր վրայ, բայց պէտք չէ որ ասանկ անիրաւ դատաստան ընողներուն վրայ զարմանանք ու վշտանանք. վասն զի կամ կամակար մտօք տգիտութեամբ է խօսացնին ու գրածնին, և կամ աստելութեան չարափրփիւռ կրկնք, ապա հարկաւ ուղիղ և ճշմարիտ ընարութիւն և դատումն չեն կարող ընել. վասն զի մութ ու նեմ կը տեսանան պաշարուած ըլլալուն տգիտութեան կամ աստելութեան խաւարտաւ. "Համասանց աչք՝ ի գլխոյ իւրում, և որ անմիտն է "ընդ խաւար գնայ": Ժողվ. Բ. 14: "Դանդի վկայեմ "նոցա, զի ընախանձն Աստուծոյ ունին, այլ ոչ գի"տութեամբ: Զի տգէտ են Աստուծոյ արդարու"թեանն, և զիւրեանցն խնդրեն կացուցանել": Հռով. Ժ. 2–3: Այս է խաւարային տգիտութեան յամառութիւն մտաց, որով կ՚աշխատին ու կը ջանան իրենց անհիմն կարծիքը և թիւր դատումը իբրեւ ճշմարիտ և ուղիղ ընտրութիւն հաստատել: Ինչ այս դառն արդասիքները ունին աստելութեան չարաչար կիրքերուն խաւարտաւ պաշարուած սիրտերէն բղխած խորհրդածութեան խօսքերը և դատումները. "Ու "որ ատեայ զեղբայր իւր՝ ի խաւարի է, և ընդ խա"ւար կ՚երթի": Ա. Յով. Բ. 11:

Այսպէն մենք չունենանք կամակար տգիտութիւն մտաց և անձնահաճ կամապաշտութիւն խաւարամած, այլ աստուածապարգեւ և հաւատոյ լուսով զարդարուած ու պայծառապոյն լուսաւորուած ըլլան միտքերնիս ու սրտերնիս. "Ու լայս յաշխարհ եկի, զի ամե"նայն որ հաւատայ յիս՝ ՚ի խաւարի մի՛ մնասցէ": Յով. ԺԲ. 46:

Բայց այս ալ գիտնանք որ այս աստուածային հա-

եաւոյ լսյսը չի ձառագայթեր և չի ներգործեր այն միաքերուն և այն սրտերուն մէջը, որոնք մարդկային մարմնաւոր իմաստութեամբ կը պարծին, և մարմնաւոր քաջութեամբ ու հարստութեամբ, և աշխարհային իշխանութեամբ ու մեծապէպ ազնուական ըլլալով՝ կը հպարտանան ու կ'ամբարտաւանին. ահա ասանկ չար խորհուրդներէ միաքերնին ու սրտերնին մաքուր պահելու համար գրեց Պօղոս առաքեալը Կորնթացւոց եկեղեցւոյն. "Թէպէտ և ձեր կոչումնդ »տեսէք եղբարք, զի ոչ բազում իմաստունք ըստ »մարմնոյ, և ոչ բազում հզօրք, և ոչ բազում ազ »նուականք, այլ զխմարս աշխարհիս ընտրեաց Աստ »ուած՝ զի յամօթ արասցէ զհզօրս. և զանտոհմս աշ »խարհի և զարհամարհեալս ընտրեաց Աստուած՝ և »զոչինչսն, զի զէսն իմն խափանեսցէ, որպէս զի մի »պարծեսցի ամենայն մարմին առաջի Աստուծոյ»:
Ա. Կոր. Ա. 26:

Աղերսեմն հեզութեամբ և խոնարհութեամբ ընդու նելու և պահելու փոյթ ունենանք մեր ուղղափառ հաւատոյ ճշմարտութեան լոյսը, որ չըլլայ թէ մեր հպարտութեամբը և ամբարշտութեամբը միաքերնուս և սրտերնուս գայ սիրէ Թերահաւատութեան և մըտախաբ մոլորութեան հոգեկորոյս խաւարը. "Տնա »ցէք վինչդեռ զլոյսն ունիք, զի մի խաւար ձեզ »հասցէ»: Յօհ. ԺԲ. 35:

Այս հաւատոյ լուսափայլութիւնը ու պայծառութիւնը կը մշանջենաւորէ, թէ որ աստուածսիրութիւն նիս ու եղբայրսիրութիւննիս կատարեալ հաստատութի՛ւն կ'ունենայ մեր սրտին ու կամքին մէջ. ասով պիտի յա ջողին հաւատոյ արդիւնքնիս ու աստուածահաճոյ գործքերնիս լսած վկայութեան Աստուածոյն. "Հաւատք »սիրով յաջողեալ»: Գաղ. Ե. 6:

Այսպէս զի հաւատքնիս սիրով ունի արդիւնաւորել

բարեգործութիւնները, այսինքն համեմատ մեր քրիս-
տոնէական ճշմարիտ հաւատոյ աստուածպիրութիւնիս
և եղբայրսիրութիւնիս պիտի յայտնեմք աստուածա-
հաճոյ բարեպաշտութիւնները և առաքինութիւնները
գործելով, և մեր հաւատակից եղբայրներուն օգուտը
փառքը և հոգեւոր ու մարմնաւոր բարութիւնը կա-
տարելով և կատարելով. ահա ասոնցմով հաւատքնիս՝
սիրով գործած մեր բարեպաշտութիւնով և առաքի-
նութիւնովը պիտի արդիւնաւորի, և հաւատոյ ճշմա-
րիտ և իմանալի լոյսը մեզի պարգեւող Հայր Աստ-
ուած պիտի փառաւորի, ըստ այնմ. «Ինչպէս լու-
» սաւորեսցէ լոյս ձեր առաջի մարդկան, որպէս զի
» տեսցեն զգործս ձեր բարիս և փառաւորեսցեն զՀայր ձեր որ յերկինս է»: Մտթ. Ե. 16: Ու այս առա-
քինութեամբ զարդարուած հաւատքնիս զմեզ ոչ թէ
միայն բարի մարդ Աստուծոյ և կատարեալ բարի քրիս-
տոնեայ կ'ընէ, այլ և աստուածային յաւիտենական
փառաց և բազմաւեսակ շնորհքներուն պատուաւո-
րութեանը արժանի կ'ընէ, ըստ այնմ. » Փառք պա-
» տիւ խաղաղութիւն ՚ի վերայ ամենայնի՝ որ գործէ
» զբարի»: Հռովմ. Բ. 10:

Արդ հաւատոյ լուսով կը ճանաչենք աստուածային
ճշմարտութիւնը, մեծութիւնը և բարութիւնը և
մարգասիրական անօրէնութիւններուն խորհուրդները:
Իսկ անոր անժխտելի հրամանները ու պատուէրները
գործով կատարելնիս յայտնի կ'ընէ որ կատարեալ աստ-
ուածապաշտ ու աստուածասէր եմք: Ապա թէ սուրբ
գիրքերով հրամայած պատուէրները երբեն կամացը հա-
մեմատ չկատարենք գործով, զանցառութիւն, ծու-
լութիւն և կամ կամապաշտութիւն ընելով, այն ժա-
մանակը կ'ըլլանք սուտ և խաբեբայ աստուածապաշտ և
աստուածասէր, ինչպէս կը վկայէ Յոհաննէս աւետա-
րանիչը. «Ու յայտնիկ գիտեմք եթէ ծանեաք զնա,

» եթէ զպատուիրանս նորա պահիցեմք։ Որ ասիցէ՝
» եթէ ծանեայ զնա և զպատուիրանս նորա ոչ պահիցէ,
» սուտ է և ճշմարտութիւն ՚ի նմա ոչ պտ։ Իսկ որ
» պահիցէ զբան նորա, արդարև ՚ի նմա կատարեալ
» է սէրն Աստուծոյ »։ Ա. Յով. Բ. 3—5։

Հաւատացեալ քրիստոնեայն ինչո՞վ պիտի յայտնէ, որ իրեն սրտին մէջը հաւատոյ ճշմարտութիւնը կատարեալ սեպհականած ու պահած ունի, և անոր անաղօտ լուսովը հոգւոյն միտքը լուսաւորուած է, կարծեմ որ սուրբ գիրքերուն լսածին նայելով ուրիշ կերպով կարող չըլլար հաստատելու, այլ միայն իրեն բարեպաշտական և առաքինական գործքերովը, որոնք պիտի ըլլան վկայ հաւատարիմ։ Ասոր համար կը գրէ Յակոբոս առաքեալը, Աբրահամ նահապետն ալ օրինակ բերելով. « Ո՞ւնչ օգուտ ՚ի քէն եղբա՛րք իմ, » եթէ ասիցէ ոք հաւատս ունել՝ և գործս ոչ ու» նիցի, միթէ կարիցո՞ն հաւատքն ապրեցուցանել » զնա . . . Կամիս գիտել ով մարդ անտի, զի հաւատք » առանց գործոց դատարկ են։ Աբրահամ հայր մեր » ո՞չ ապաքէն ՚ի գործոց արդարացաւ՝ հանեալ ՚ի սե» ղան զորդին իւր զԻսահակ՝ պատարագ։ Տեսանե՞ս » զի հաւատքն եղեն գործակից գործոց նորա, և ՚ի » գործոց անտի հաւատքն կատարեցան »։ Յակ. Բ. 14—20—22։

Այս տեղս պէտք է որ նկատենք, ուրկէց պիտի յորդորուինք, ով կ՚ըլլայ մեզի չարժառիթ՝ բարեպաշտութիւն և առաքինական բարեգործութիւններ ընելու. չէ որ սուրբ գիրքերուն վկայութեամբը կը հաստատուի և մեր հոգեւոր ներքին պատմութիւնքներս նիս ալ կը յայտնէ, որ մեր քրիստոնէական ճշմարիտ հաւատոյ հետ Թեւակից և զուգակից եղած աներկբայելի յոյսերնիս է, որով կ՚ստիպինք բարեգործութեամբ և բարեպաշտութեամբ ածիլ և պաղատիլ

ըլլալ առաջի Աստուծոյ, և ապա պարտ է ակնկալել պատրաստուիլ հանդերձեալ փառաց երկնից արքայութեան, ժառանգել զայն իբրու վարձ առաքինական գործոց մերոց, ըստ այնմ. "Արդեւ լուսաք զհաւատան "ձեր որ ի Քրիստոս Յիսուս ի սէր մեր, և զսէրն "որ ընդ ամենայն սուրբս ունիք, վասն յուսոյն որ "պահի ձեզ յերկինս, զորմէ լուարուք բանիւն ճշմ"մարտութեան Աւետարանին որ եհաս առ ձեզ, "որպէս ընդ ամենայն աշխարհս աճէ և պտղաբերէ, "որպէս ի ձերում միջի": Կող. Ա. 4—6: "Աթէ ու"րուք գործն, զոր շինեաց՝ կացցէ, վարձս առցէ": Ա. Կորն. Գ. 15: Եբր. ժ. 34—36. Մաթ. Ե. 12: Մարկ. Թ. 40: Ղ-կ. Զ. 35:

Այս աստուածաբանական յոյսը բազմատեսակ բա ժանմունքներու տակ կը ձգեն աստուածաբանները, բայց մենք այս տեղս երկու գլխաւորը անունցմէ առնելով՝ յիշենք: Առաջինն է յոյս փրկութեան հոգւոյն, և երկրորդն՝ յոյս հանդերձեալ կենաց և փառաց ժառանգութեան. առաջինը կ'ըսուի յոյս արդարացուցիչ, և երկրորդը յոյս երանացուցիչ:

Յոյն է առաքինութիւն աստուածաբանական, որ է ակնկալութիւն ապագայ աստուածային խոստացեալ բարեաց, որով մարդուս ներքին բաղձանքը կ'ըսպասէ ի հասեալ ժամանակին առնալու և ընդունելու Աստուծմէ այն պատրաստուած և խոստացած գերբնական բարիքը: Ասոնի բարեպաշտ անձը կը համբերէ անդորր կամօք այն հաստատուն յուսովը, մինչեւ որ այն իրեն խոստացեալ ծանուցեալ բարիքը ժառանգէ. ասոր համար կ'ըսէ Առաքեալը. "Յոյս տեսանելի չէ "յոյս, զի զոր տեսանէ ոք, զի՞ և յուսայ: Ապա թէ "զոր ոչն տեսանեմք՝ յուսամք, համբերութեամբ ակն "ունիմք": Հռով. Ը. 14—15:

Այս մարդկային հոգւոց առաջին յոյսը ակնկալու-

Թիւնը Յիսուսի Քրիստոսի մարդեղութեան վրայ էր, որուն գալստեանը կ'սպասէին նահապետները և մարգարէները. վասն որոյ մարգարէական հոգւով կը գուշակէին կը քարոզէին իրենց խոստացուած փրկութիւնը, Աեսիայ փրկիչ Յիսուս Քրիստոսը. "Ի պակասեցի իշխան Յուդայ, և մի պետ յերանաց նորա, "մինչեւ եկեսցեն նմա հանդերձեալքն և նա է ակն"կալութիւն հեթանոսաց: ծնն. խթ. 10: Ընդաւասիկ "ստուած իմ, փրկիչ իմ տէր, և յուսացեալ եղէց "ի նա, և փրկեցայց նովաւ, և ոչ երկեայց, զի փառք "իմ և օրհնութիւն իմ ի տէր, և եղեւ ինձ ի փրկու"թիւն: Եսայ. ժբ. 2: Լուր մեզ Ընդաւուած փրկիչ "կիչ մեր, յոյս ամենայն ծագաց երկրի: Սաղմ. կդ. 6: "Ո՛վ ի սոյն իսկ վաստակեմք, և նախատինս յանձն "առնումք, զի յուսացեալ եմք Ընդաւուած կենդանի, "որ է փրկիչ ամենայն մարդկան, մանաւանդ հաւա"տացելոց": Ա. Տիմ. Դ. 10:

Ընդհանուր հասկցանք որ մարդկային հոգւոց առաջին յոյսը իրենց փրկութեանը համար աստուածային մարգարէութենէն պարզուած խոստացեալ Աեսիան էր, որ է մեր տէր փրկիչը Քակից և փառակից սուրբ Հոգւոյն և Հօր աստուծոյ Արդին միածին, որ եղաւ ամենաս յոյս փրկարար և արդարացուցիչ. "Քանզի "կատարած օրինացս Քրիստոս է յարդարութիւն ա"մենայն հաւատացելոց: Հռով. ժ. 10: Ընդար փրկու"թիւն ժողովրդեան իւրում": Ղուկ. Ա. 68:

Ընդպաքէն գանք երկրորդ ունեցած երանաւէտ յոյսերնուս վրայ փոքր ինչ խորհրդածելու. որուն համար կը գրէ Պօղոս առաքեալը. "Ընկնակացուք երանելի "յուսոյն և յայտնութեան փառաց մեծին Ընդաւուծոյ, "և փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի": Տիտ. Բ. 13: Ա. Ընդյս երանացուցիչ աստուածապարգեւ յոյսերնիս կը յորդորէ զմեզ բանիւ երանացուցիչ ճշմարտապոյն

վարդապետութեան Յիսուսի Քրիստոսի փրկչին մեր
ոյ՝ աշխարհային հարստութեան ջյուսալ և փառասի
րութեան չհետեւիլ, այլ սրտով ու կամաւ աղքատ
ըլլալ, որ երկնից արքայութեան աստուածային փառ
քերը վայելելու արժանի ըլլամք. « Նէրանի՛ աղքատաց
» հոգւով, զի նոցա է արքայութիւն երկնից » : Բ. Կը
խրատէ որ գործած մեղքերնուս վրայ խոստովանիմք,
ղղջամք և ապաշխարեմք, և ապաշխարութեան սուգը
ունենանք մեր սրտին մէջ, և աշխարհիս անցաւոր և
ընդունայն ուրախութենէն չյափշտակուինք, որ երկ
նային երանաւէտ մշտնջենաւոր ուրախութիւնը վա
յելենք. « Նէրանի՛ սգաւորաց, զի նոքա մխիթարեա
» ցին » : Գ. Կ'ուսուցանէ քաղցրաբարոյ ըլլալ հեզ ու
խոնարհ առաքինութիւնով զարդարուած, որով երկ
րին կենդանեաց վերին Նէրուսաղէմի մշտնջենաւոր
հանգստութեան երանութեանը ժամանեմք : Սաղ.
ԼՋ. 16. « Նէրանի՛ հեզոց, զի նոքա ժառանգեսցեն
» զերկիր » : Դ. Կը խրատէ մեզի որ բնաւ չի պակա
րինք արդարութենէն, այսինքն՝ բարեգործութիւն
առաքինութիւն գործելէն, այլ միշտ ինչպէս քաղցեա
լը անօթին հացի կերակուրի եռեւէ կ'ըլլայ, և սաստիկ
ծարաւածը ջուր կը խնդրէ, ասանկ ալ քաղցեալ և ծա
րաւած ըլլանք ու փափաքինք, խնդրենք արդարութիւն
առաքինութիւն ստանալ, և անով մեր վերջին երջա
նիկ վախճանին հասնելով՝ արքայութեան մէջ աստուա
ծային փառքերը վայելելով յաւիտենամք լիանամք Սաղ.
ԺՋ. 15. վասն զի այս աշխարհային փառքերը, մեծու
թիւնները և հարստութիւնները մեր հոգին չեն կա
րող յագեցունել. որովհետեւ մեր հոգւոյն խնդրած
ու փափաքած փառքը և մեծութիւնը չեն, այլ մեր
հոգւոյն խնդրածը աստուածային երանաւէտ փառ
քերուն վայելչութիւնն է. « Նէրանի՛, որ քաղցեալք և
» ծարաւիք եղեն արդարութե՛ն, զի նոքա յագեսցին » :

Ե. Կը հաճոզէ ողորմածութիւն ընել կարօտեալից, զի թուլթիւն ընել անօգնական խղճալեաց, ամենողորմ մարդասիրութեանն Հօր աստուածոյ գթութեան և ողորմութեան նմանակցելու. Ղ-կ. Զ. 36. և որովհետեւ այս գթութիւնը և ողորմութիւնը առ Աստուած Յիսուս Քրիստոս կը վերաբերի. Մտթ. ԻԲ. 40. ապա ասով՝ի հանդերձեալն անշուշտ բայց գանալու եմք աստուածային ողորմութեան դուռը և երանութեան պսակով պսակուելու եմք. "Երանի՛ ողորմածից, զի նոքա ողորմութիւն գտցեն": Զ. Կարթընցուննէ խղճմտանքնիս՝ որ զգօն և զգաստ գանուի սիրտը մաքուր պահելու բազմատեսակ մեղաց խորհուրդներէն իբրեւ ջինջ մաքուր հայելի, որով աստուածային ամենացանկալի տեսութեանը արժանաւորըլլայ. "Երանի՛ այնոցիկ որք սուրբ են սրտիւք, զի նոքա զԱստուած տեսցեն": Է. Կը քաջալերէ որ խաղաղասիրութեան բարի հոգի ունենանք. որով արժանապէս պաշտօնատար Քրիստոսի համարուիմք, որ "Խրատ զխաղաղութիւն արեամբ խաչին իւրոյ, որ "ինչ յերկինս և որ ինչ յերկրի": Կղ. Ա. 20: Նա այս խաղաղասիրական առաքինութեամբ պիտի արժանապէս անուանիմք որդիք Աստուծոյ, և մանաւանդ փառաց նորին էական որդւոյն Աստուծոյ Յիսուսի Քրիստոսի ժառանգակից լլլանք. "Երանի՛ խաղաղարարաց, զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին": Ը. Ամեր երանացուցիչ յուսոյն մեկ յորդորմունքն ալ է համբերել նախատանաց անարգանաց և հալածանաց, երկնից արքայութեան սիրովը՝ բարեպաշտութիւն և առաքինութիւն գործելնուս համար, որուն հակառակելով անհաւատները բարբարոսները և չար մարդիկները, հալածանք և նախատինք և մահաբեր տանջանք կուտան. և այս հալածմունքներուն և նեղութիւններուն ամենայն սիրով համբերելով՝ պիտի սեպ

հականեմք երկնից արքայութեան յաւիտենական հանգըստութիւնը երանական վիճակ և արդարութեան պսակք զարդարուած . « Նրանք ոչք հալածեալք էին վասն արդարութեան , զի նոցա է արքայութիւնն » երկնից » : Մաթ . ե . 3—4—5—6—7—8—9—10 :

Ոչ պակէն արդար և առաքինազարդ հոգիները փառաւորող և երանացուցիչ յոյսերնիս աստ և ՚ի հանդերձեալն՝ ոչ մարդկային մտացածին հանճարով և ոչ երկրաւոր վերնական իմաստութիւնով , այլ բուն խոկ աւետարանական բանիւ ճշմարտութեան միշտ կ՚ուսուցանէ մեզի երանելի ըլլալու միջոցը , որով մեր հոգւոյն յոժարութիւնը և բաղձանքը առաւել կը զօրանայ հասնելու ժամանելու այն երկնային ակնկալեալ և հանդերձեալ աստուածային փառաց :

Ո՛յս մեր հոգւոց նեղքին բաղձանքները կատարող երանաւէտ յոյսերնուս ճշմարիտ և անսխալ ուղիղ տեսակ վարդապետութեանը մէջը կը գովանդակին ու կը պարունակին սուրբ գիրքերով հաստատուած բազմատեսակ ցանկալի երանութիւնները , վասն զի աստուածային ծայրագոյն երանութեան աղբիւրէն , այսինքն Յիսուսէ Քրիստոսի տեսան մերոյ Հնորհազեղ և կենդանաբաշխ աստուածային բերանէն բղխեցաւ այս լիակատար ուղին կերպ երանութիւնը . ինչպէս բացայայտ գրած է Մատթէոս սրբազան աւետարանիչը . « Եւ տեսեալ զժողովուրդն , ել ՚ի լեառն , և իբրեւ » նստաւ անդ՝ մատեան առ նա աշակերտքն նորա , » և բացեալ զբերան իւր ուսուցանէր զնոսա և ասէր : » Ե . 1—2—3 :

Ուրեմն բարի քրիստոնեայն երբոր սրտին ու մըտքին մէջը հաստատ ունի այս երանաւէտ յոյսը , իրեն երջանկութեանը վախճանին կը փափաքի , ինքըզինքը աշխարհիս մէջը պանդուխտ և անցաւոր ներգեհ ճամբորդի մը տեղ կը դնէ , Սաղմ . ԼԸ . 14 . Ա . Պետ .

Բ. 11։ Իրեն երանութիւնը երջանկութիւնը հանգըս-
տութիւնը այս աշխարհի անցաւոր ունայն փառքերու
վայելչութիւններու և հարստութիւններու մէջ չի
փնտռեր, մարմնով միայն աշխարհի վրայ եղած կ'ըլլայ,
բայց հոգւով և մտօքը յուսոյն առաջնորդութիւնովը
միշտ կ'ուղեւորի ու կը ցանկայ հասնելու 'ի յաւիտե-
նից պատրաստեալ երկնային իմանալի գաւառին մէջերն
ջենաւոր քաղաքն Նստուծոյ։

Նման ամեն սուրբերը յուսալիր փափաք ու-
նէին, անոր համար կ'անարգէին աշխարհային վա-
յելչութիւնները ու երկրաւոր հայրենիքնին սիրով կը
ձգէին, ու աշխարհի մէջ պանդուխտի նման կը շրջէ-
ին, չարչարանքներու նեղութիւններու կը համբե-
րէին, միշտ կը փափաքէին հասնելու երկնային հայ-
րենեաց արքայութեան երկնից, և համարձակ կ'ըսէին.
"Քանզի ոչ եթէ ունիմք քաղաք որ աստէն ճնալոց
"իցէ, այլ զհանդերձեալսն խնդրեմք"։ ԵԲՐ. ԺԳ. 14։
ՓԻԼԻՊ. Գ. 20։

Նոյա յոյսը սրտին մէջը հաստատուն չունեցող
քրիստոնեայն այս աշխարհային վայելչութեան և
փառքին հետը սրտով ու մտքով կապուած ըլլալով
բարի քրիստոնեայ չանուանիր, և իրեն մահկանացու
և անցաւոր կեանց մէջ ըլլալը չզգալու պէս մահը
իրեն մօտ չըսեպեր, հոգւոյն երջանկութեանը չփա-
փաքիր, որ պիտի ստանայ գանայ արքայութեան մէջ,
Նստուծոյ յաւիտենական փառաց հաղորդ ու ժառանգ
ըլլալով։

Բարի քրիստոնեայն կատարեալ հաւատով Նստու-
ծոյ ճշմարտութիւնը կը ճանչէ, և աւետարանական
ողջամիտ վարդապետութիւնները կը խոստովանի և ա-
ռաքելական պրով և կամ բանիւ աւանդութիւնները
չ'մերժեր, այլ սրտի մտօք կ'ընդունի։

Նոյնհետեւ հոգւոյն բաղձանքը և փափաքը ե-

բանաւէտ յուսովը կ'ուղղէ դէպ 'ի երկնային հանդերձեալ աստուածային փառքերուն, և անոր հասնելու կը յօժարի ու կը ջանայ, այս երջանկաւէտ յոյսէն կ'առանայ կատարեալ աստուածսիրութիւն, և ասով աստուածային կամացը հաճելի բարեպաշտութեամբ և առաքինութեամբ կ'արդիւնաւորի. և պտուղ հաւատոյ ունեցած կ'ըլլայ: Վասն զի քրիստոնէական ճշմարիտ հաւատքը պտուղներն պիտի ճանչցուի, որք են բարեպաշտական և առաքինական գործք: Թէ որ հաւատքնիս երանաւէտ յուսով զարդարուած ու հաստատած չըլլայ, և բարեպաշտական առաքինի գործքերով պտղաւէտ արդիւնաւորուած չըլլայ, աստանական եղած կը համարուի և ոչ քրիստոնէական: Այս տեղս մտիկ ընենք Յակոբոս սրբազան առաքեալն օրինակաւ հաստատած ողջամիտ վարդապետութիւնը. "Դու հաւատաս զի մի է Աստուած, բարի առնես, և դեւք հաւատան և սարսին: Կամիս գիտել զի մարդ մնոտի, զի հաւատք առանց գործոց մեռեալ է: Աբրահամ հայր մեր ոչ ապաքէն 'ի գործոց արդարացաւ՝ հանեալ 'ի սեղան զորդին իւր զԻսահակ՝ պատարագ: Տեսանե՞ս զի հաւատքն եղեն գործակից գործոց նորա, և 'ի գործոց անտի հաւատքն կատարեցան: Եւ կատարեցաւ գիրն՝ որ ասէ, հաւատաց Աբրահամ Աստուած, և համարեցաւ նմա յարդարութիւն, և կոչեցաւ բարեկամ Աստուծոյ: Տեսանէ՞ք զի 'ի գործոց արդարանայ մարդ՝ և ոչ 'ի հաւատոյ միայն":

Այս ճշմարիտ վարդապետութիւնը ընելով, նայէ՛ ինչպէս մեր միտքը համոզելու համար մեզի մօտ դիւրին օրինակաւ մ'ալ կը վարդապետէ ըսելով: "Որ օրինակ մարմին առանց հոգւոյ մեռեալ է, այսպէս և հաւատք առանց գործոց մեռեալ են": Յակ. Բ. 19—22—24—26:

Այս ուրեմն հաւատոյ ճշմարտութիւնը, յուսոյ հաստատութիւնը և սիրոյ կատարելութիւնը համաչափ և զուգապատիւ համարելու եմք, մէկզմէկէ անբաժանելի պահելու եմք. ինչպէս Առաքեալն ալ կը քարոզէ. "Բայց արդ մնան հաւատք, յոյս, սէր, սո-
"քա երեքեան": Ա. Կոր. ԺԳ. 13: Ըսել է որ այս ե-
րեք աստուածաբանական առաքինութիւնները մէկըզ-
մէկ չբաժնուելու շարունակ կապակցութիւն մը
ունին:

Այս երեքը թէպէտ այլ և այլ ներգործութիւն
ունին, բայց մի և նոյն է առարկանին, այսինքն՝ մի և
նոյն Աստուծոյ ճշմարտութիւնը և բարութիւնը:
Վասն զի հաւատով՝ Աստուծոյ մեզի յայտնած ճըշ-
մարտութիւնները կ'իմանանք. յուսով անոր խոստա-
ցեալ երկնային արքայութեան բարութիւնները վայե-
լելու ակնկալութիւն և փափաք կ'ունենանք. սիրով՝
այն աստուածային հանդերձեալ բարիքները ժառան-
գելու համար արժանաւոր բարեպաշտական առաքի-
նական գործոց արդիւնքները կ'ստանանք:

Այս զարմանալի դասաւորութիւնը աստուածա-
բանական առաքինութիւններուս, այսինքն՝ հաւա-
տոյ, յուսոյ, և սիրոյ, երբեակ Թուոյն կատարելու-
թիւնը ողջմիտ աստուածաբաններուն հետեւելով,
արժան է որ նուիրենք աստուածային երեք անձանց,
հաւատքը առ Հայր Աստուած, յոյսը առ Որդին Աս-
ուած, և սէրը առ Հոգին սուրբ Աստուած: Որով
հետեւ հաւատոյ ճշմարտութեան անաղօտ լոյսը իբ-
րեւ պարգեւ կատարեալ մեզի շնորհուած է, ու կը
շնորհուի Հօր Աստուծմէ, ըստ այնմ. "Ամէն և
"արիւն ոչ յայտնեաց քեզ, այլ Հայր իմ որ յերկինս
"է": Մատ. ԺԶ. 17: "Ամէն տուրք բարիք և պարգեւք
"կատարեալք՝ ի վերուստ են իջեալ առ՝ ի Հօրէն
"լուսոյ": Ցակ. Ա. 17:

Ընանկ ալ յոյսերնիս հաստատուած է ՚ի Քրիստոս Յիսուս, որ է յոյս մեր փրկութեան և երանելի կեանքի փառաց երկնից արքայութեան. որովհետեւ յոյս փրկութեան և յոյս երանութեան Աղաչեն Ընտրեալքն Յիսուս Քրիստոսէն պարգեւեցաւ և միշտ կը պարգեւի. "Աղոց կամեցաւ Ընտրած ցուցանել, "թէ որչափ մեծութիւն փառաց խորհրդոյ նորա ՚ի "հեթանոս, որ է Քրիստոս ՚ի ձեզ յոյս փառաց": Կող. Ա. 27: "Ընդունելութիւք երանելի յուսոյն, և յայտ"նութեան փառաց մեծին Ընտրածոյ՝ և փրկչին մերոյ "Յիսուսի Քրիստոսի": Տիտ. Բ. 13:

Պերբենական սիրոյ աղբիւր է Հոգին սուրբ Ընտ ուած. անկէց պարգեւեցաւ ու կը պարգեւի կատարեալ հաւատով և հաստատ յուսով զարդարուած հոգիներուն այն աստուածային սիրոյ զօրութիւնը, ինչպէս կը վկայէ Պօղոս առաքեալը. "Սէրն Ընտրածոյ "սփռեալ է ՚ի սիրտս մեր ՚ի ձեռն Հոգւոյն սրբոյ "որ տուաւ մեզ": Հռոմ. Ե. 5:

Ընպաքէն աստանօր մեր այս "Խարի մարդ և բարի քրիստոնեայ" անուամբ ակատած գրաւոր գործերս նուա վերջաբանութիւնը տանք, այս երեք տեսակ աստուածաբանական միջոցաւ: Աղովհետեւ հաւատոյ յուսոյ և սիրոյ ներգործութեամբ և արդիւնաւորութեամբը բարի մարդ և բարի քրիստոնեայ ըլլալու եմք, և աստիցմով աստուածային շնորհքներուն և բարութիւններուն արժանաւորելու եմք, և մանաւանդ երկնից արքայութեան ամենացանկալի փառաց երանելի վայելչութեան հաղորդ և ժառանգ ըլլալու եմք:

Աւրեմն կնքեցին բանք մեր և նուիրեցին ՚ի փառս պաշտելի և երկրպագելի անուան ամենասուրբ Երրորդութեան Հօր և Աղոյ և Հոգւոյն սրբոյ, որոյ միանական փառաւորելի միութեան զուգաթիւ գա

՝ներ Հաւատոյ ճշմարտութիւնը, և յուսոյ երանութիւնը, և սիրոյն երջանկութիւնը, սուրբ Վրիպոր նահատակին՝ ողջամիտ և աքանչելի վարդապետութիւնով, խորհրդաւոր վերջաբանութիւն կ'ընէ Նարեկ անուանեալ աղօթագրոյն տաննեւորդ ճառին մէջ այսպէս գրելով.

„Երրորդութեանն փառաւորելի անուամբն պատ-
„ուեալս Հաւատոք՝ ընդ սիրոյն դասեալ և յուսոյ:
„Օ՛ն Թէ և զերիան հատուածս առանձնաւորական
„՛ի մի և՛ ինոյն խորհուրդ դիտեցեալ, յաւէտ մե-
„ծացեալ նոքօք՛ ի Հ՛աստուած, քանզի Թէ հաւատաս
„՛ինա և սիրես, որով և յուսաս աներեւութից պար-
„գեաց նորին: Նմա փառք յաւիտեան: Ամէն „:



„Անօրենաբար նիւթեն զջարիս, զողորմութիւն և զճշմարտութիւն նիւթեն „բարիք„։ Առակ. ԺԲ. 22։

„Հաւատարիմ է բանս, և՛ ի սոյն կամ „միմ զքեզ հաստատուն լինել, զի փոյթ „արասցեն գործոց բարեաց վերակացու „լինել հաւատացեալքն Աստուած, զի „այն է բարի և օգտակար մարդկան„։ Տիտ. Գ. 8։

10251982

ՑՈՒՑԱԿ
ԿԱՐԵՒՈՐ ՆԻՒԹԻՑ
ՊԱՐՈՒՆԱԿԵԼՈՑ Ի ՄԱՏԵՆԻՍ

Էջ

Ադամեան աղանդաւորք 126
Աղգասիրութիւն 229
Աղգասէրութիւն 225
Աղաւաղութիւնք Սուրբ Գրոց, աղանդաւորներէն . . . 121—124
Անարգելն զԿրիստոնեայ, առ Աստուած վերաբերի 36
Անապատիթիթ անուանեալ աղանդաւորք 125
Անգործութիւնն՝ ամենայն չարեաց մայր է 252
Անդրանիկ ի՞նչպէս կ'լսուի Կրիստոսի . . . . . 78—83
Անմիաբանութիւնն՝ հոգեւոր և մարմնաւոր վիճաստց պատճառ է . 231
Անմիտ որդի ամօթ հօր 260
Աշխարհասիրութիւն 30
Առաջաւորաց պահք 298
Առաքելական յաջորդաց պարտաւորութիւնը 157
Առաքելական պաշտօնեայք որոց քարոզելու են Աւետարանը . 90—103
Աստուածաբանական առաքինութիւնք . . . ի Ցաոաջաբանութիւն
Աստուածային անձինք երեք են, այլ մի են բնութիւն, իսկութիւն և այլն . 4
Աստուած չուզեր մեղաւորին կորուստը . . . . . 32—35
Աստուծոյ պատկեր է մարդ 6
Աստուծոյ շնորհքները և խորհուրդները միայն հոգեւորապէս քննելի են 117
Արտ գիղեցիկ 263
Արիս և Արիանոք 185
Արիստակէս Սամոսատակեցի 246
Արմենական աղանդաւորք 125
Արշակ Թագաւոր Պարսից 234
Արտաշէս Թագաւոր Հայոց 141
Աւետարանի հրահանգը պէտք է ամեն Կրիստոնէից 277
Բաժանմունք աղանդաւորաց 124
Բաժնեան աղանդաւորք 125
Բարեխօսութիւն Սրբոց . . . . . 129—132
Բարեպաշտական գործքերը միշտ հաճելի են Աստուծոյ և են աւելորդապաշտութիւն . 42—44
Բարի մարդ և բարի քրիստոնեայ ի՞նչպէս կ'լսուի մարդ . . 309—310
Բարկութիւն 248--450
Բարոյական վիճաբանութեան օգտութիւնը . ի Ցաոաջաբանութիւն և 262--271

Բարեաց մտայն հանդէս ըսելով, ի՞նչ ըսել կ՚ուզէ Առաքեալը . 137
Բխեզնեանց աղանդաւորք 125
Բնական բերմունք բնութեան մարդոյ բարի է . . ի Յառաջաբանութիւն
Բնական գիտութեան օգուտները . . ի Յառաջաբանութիւն և 263
Բնական լսելով կամ օրինքով ի՞նչ կ՚ըլլայ մարդ . . . 221—223
Գագիկ բագրատունի Թագաւոր Հայոց . . . . . 225—228
Գլուխ եկեղեցւոյ ո՞վ է . . . . . 164—167—215
Գրիգոր Ա. Պապ Հռոմայ 216
Գրիգոր Ծ. Պապ » 217
Գրիգոր մագիստրոս 226
Դրանպլէօս աղանդաւորք 126
Երոփեան աղանդաւորք 65
Եկեղեցին պարտի ըլլալ մի հօտ և մի հովիւ 277
Եկեղեցւոյ մէջ սիրապետութիւնը միայն Առաւածոյ է . . 211--215
Եկեղեցւոյ պաշտօնեայք աշխարհի իշխանութիւներ չպիտի ունենան 158--161
Եղբայրք և քոյրք Քրիստոսի ո՞վ էին 83
Ենկրատեան աղանդաւորք 65
Եպիսկոպոսականք 125
Երիցեան աղանդաւորք 125
Երկաւոր գիտութիւնք առանց Առաւածային գիտութեան չեն առաջնորդեր յերկնային փառս . . ի Յառաջաբանութիւն և 289
Եւտիքեայ հայհոյութիւնք 186
Զինեալ եկեղեցի 293
Զոյնս բանաստեղծ 245
Զուինգլեան աղանդաւորք 125
Ինոկբանտան հերետիկոսք 125
Ինոկֆէնտան հերետիկոսք 125
Ընդհակառակ սովորութիւնը երկրորդ բնութիւն կ՚ըլլայ մարդուս . . 251
Թարգմանութիւնք Սուրբ Գրոց . . . . . 114—121
Թլփատութիւնը խորհուրդ չէ . . . . . 140—144
Թլփատութիւնը ու Մկրտութիւնը մի և նոյն խորհուրդ մը չեն 140—144
Թոնդրակեան աղանդաւորք 125
Իմաստուն ոմո՞նք կ՚ըսուին տիրապետ . . . ի Յառաջաբանութիւն
Իւնիթէոեան և Իւնիվէռսալիտ անուանեալ աղանդաւորք . . 125
Լուսիմիտ անուանեալ աղանդաւորք 126
Լինոս Պապ Հռոմայ 210
Լուտերական հերետիկոսք 125
Խորհիլ պարտիմք օտարախորթ ընթերցուածներէ . . . 20 -23
Ծնունդ վերուստին . . . . . 134—144
Կալվինական հերետիկոսք 125
Կեղտոտ Սիքրատ Եպիսկոպոսի Թագաւոր Ա[illegible]նացւոց 253
Կերպարանեալ հովիւներէն պարտիմք զգուշանալ . . . 41—92

Կղեմէս Ա. Պապ Հռոմայ 211
Կոմարեան հերետիկոսք 125
Կոստանդին մանամասն կայսր Յունաց 219
Կուսակրօնութիւնը ի՞նչ օգուտ ունի աւետարանական քարոզութէ 45—49
Կուսութիւնը Աստուածածնին մշանջենաւոր է . . . . . 75—86
Կրիտիաս Թշնամի Սոկրատայ 265
Հայոց եկեղեցին բնաւ չեղած չ'է յուղափառութենէ . 219—221
Հայոց եկեղեցին բոլոր քրիստոնէից համար աղօթք կ'ընէ . . . 36
Հայոց եկեղեցին կրօնական խորութիւն չ'ունի . . . . . 36—38
Հայոց եկեղեցին հաւատարիմ է իւր վաղեմի հաւատքին վարդապետութեանը 285
Հաւատքը ի՞նչ է 286
Հաւատքը գործքէն կը ճանչցուի . . . . . 301—303
Հերքնպուէ հերետիկոսք 126
Հերետիկոս և հերձուած որո՞ց կ'ըսուի 182 190
Հիմնոս, Հիմնեան հերետիկոսք 190
Հռոմայ Պապերուն և արքայն Պետրոսի մէջ եղած տարբերութիւնները 159—165
Մակեդոնի հոգեմարտին հայհոյութիւնք 185
Մանիքեցւոց հերձանուտական սկզբանց ցրուին 2-4-65
Մար Աբաս Կատինայ պատմագիր Ասորի 234
Մարդիկ բնականապէս բարի ստեղծուած են 1
Մարդիկ ի՞նչ բանի համար ստեղծուած են . . . . . 112—114
Մարդիկ ի՞նչպէս կը հաւատարին անանուշ անբանից 11
Մարդիկ ազատ կամօք կը մեղանչեն 6-10
Մարդիկ իրենց զգայութեանցը առարկաներուն կը հետեւին . . 13—25
Մարդիկ ի՞նչպէս Աստուած անուաներ են 292
Մարդկան պիտոյից համար ստեղծուած է ամէն բան 109
Մարկիոնէականց հերձանուտական սկզբանց ցրուին 2-4 65
Մարմնաւորը չէ բարի քրիստոնեայ 181
Մարտիրոս որդի արքայն Սարգսի զօրավարին 267
Մեծամեծի անուանեալ աղանդաւորք 125
Մելիտաս Թշնամի Սոկրատայ 266
Մեծամտութիւնը մարդս փորձութիւններու մէջ կը ձգէ . . . 156
Մհերեան անուանեալ աղանդաւորք 125
Միաբանական աէր 229
Միմնեանց հերետիկոսք 125
Մինչեւ ծնաւ զորդին իւր զանդրանիկ, ի՞նչպէս իմանալու է . 76—83
Մխիթար Այրիվանեցի իւր մանդրանիկ, ի՞նչպէս իմանալու է . 25—32
Մխիթարեանք . . . . . 205—221
Մկրտութեան վերայ . . . . . 132—144
Մորմոնեան եղերական 125

Մուտիս նախանձոտ 224
Յեռմիք ամանք արգելուցան յամուսնանալոյ խօսքը, ինչպէս
իմանալոյ զ . 60—67
Ցոյս 304--310
Ցուսոյ բաժանմունք 304--308
Ընտրոյն հայհոյութիւնը 186--187
Ընտրական է, որ չկամաւորվինիր զսուրբ կոյն Աստուածածնին
կամ Աստուածամայրը . 186
Ներողութիւն 161
Շամիրամ Թագուհի Ասորեստանեայց 263
Շապուհ Թագաւոր Պարսից 295--298
Վիպին զօրավար Հռոմայեցւոց 257
Ոսկենաքնապօռկէս հերետիկոսք 126
Որդիք Աստուծոյ որո՞նք կ'լսուին . . . . . 86—144
Ո՞րք են առաքելական պաշտօնեայնիրը 92
Ուվէզեան աղանդաւորք 125
Չարակամն անձին բարեկամ չըլլար ընկերին 261
Չար բնաւորութիւնը ի՞նչպէս խլելու է ատկէն 287
Չարն է պակասութիւն բարւոյ 5
Չափաւորութիւն 241
Չիք ինչ ստեղծուած 'ի բնէ չար 1
Չիք ոք բարի խօսքը, ի՞նչպէս իմանալու է 106
Պահեցողութիւն 66--75
Պապին գերագահութիւնը 166
Պարծանքը մարդս ամօթով կ'ընէ 247
Պարծել արժան է հաւատոյ ուղղափառութեան վրայ . . . 286
Պարտ է եպիսկոպոսին լինել միոյ կնոջ այր, ինչ կը ժ.կ.նսւ . 50--55
Պետրոսի գլխաւորութեանը վրայ 163
Պետրոս հաւասար էր Առաքելոց հետ իշխանութեամբ . . . 164
Պիւթագորեան աղանդ 64
Պոպիոս բանաստեղծ 224
Պրաքեան հերետիկոսք 125
Սահակ կաթուղիկոս Հայոց 240
Սարգիս զօրավար 295
Սարգիս վէտ 225--229
Սարսամանեթէս հերետիկոսք 126
Սէրն է հաւատքը արդիւնաւոր ընող 301
Սիմոնեան հերետիկոսք . . . . . 65—190
Սիմոնի Պետրոսի 186
Սկիպիոն զօրավար Հռոմայեցւոց 257
Սոկինեան հերետիկոսք 125
Սոկրատ փիլիսոփայ 264

Սուրբ գիրքը աղաւաղելու դէմ Աստուածային ապառնալիք . . 123
Սուրմակ անարժան կաթուղիկոս 242
Ստեփաննոս Դռավմայ հայրապետ 212
Վահրամ պալհաւունի իշխան Հայոց 229
Վաղարշակ թագաւոր Հայոց 233--235
Տայիճնալիսթ հերետիկոսք 126
Փարախ Քրիստոսի 177--180--195
Փիւրիճան հերետիկոսք 125
Քէշաց յերեսս նորա շունչ կենդանի խօսքը ինչպէս իմանալու է . 114--121
Քիչ խօսիլ ու շատ լսել 248
Քուէքր անուանեալ աղանդաւորք 126
Քրիստոնեայ անուամբ պարծիլ արժան է աստուածատաչէից 103 105--272
Քօնկրեկեյնոցալիսթ հերետիկոսք 125



10251962

ՎՐԻՊԱԿԱ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ.


ՍԽԱԼ	ՈՒՂԻՂ	ԵՐԵՍ	ՏՈՂ.
Հանէծն և Համրէս	Ցանէն և Ցամրէս	24	6—7
Էթէ	Եթէ	40	21
Լուսաւորիչն	Լուսաւորիչ	55	30
Ուսեալ	Ուսեն	60	27
Զէ թէ	Զի թէ	147	19
Զառ 'ի միոյն	Զառ 'ի միոյն Աստուծոյ	168	23
Մէջ առաջին	Մէջ Առաջին	195	30
Հայրական	Հայրենական	257	29
Խրատուէ	Խրատուէ	264	30
Ա.ՔՒԸ	Ա.ՔՒԸ	297	2

Bayerische
Staatsbibliothek
München


10251982

10251982

10251982



10251902



10251982